

ՀՐԱՄԱՆԱԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

**ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

CATHOLICOSATE OF ALL ARMENIANS

"MATENADARAN" MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**CATALOGUE OF THE CATHOLICOS ARCHIVES
OF THE MASHTOTS MATENADARAN**

VOLUME I

Documents 1-413
(folders 1-7)

By:

A. A. MALKHASYAN, N. M. MARTIROSYAN, A. R. ASATRYAN, L. G. STEPANYAN

Edited by:

ARMEN A. MALKHASYAN

Publishing House of Mother See of Holy Etchmiadzin
Holy Etchmiadzin – 2023

КАТОЛИКОСАТ ВСЕХ АРМЯН

“МАТЕНАДАРАН” ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА

**КАТАЛОГ КАТОЛИКОСКОГО АРХИВА МАТЕНАДАРАНА
ИМЕНИ МАШТОЦА**

ТОМ I

Документы 1-413
(папки 1-7)

Составители:

A. A. МАЛХАСЯН, Н. М. МАРТИРОСЯН, А. Р. АСАТРЯН, Л. Г. СТЕПАНЯН

Под редакцией:

АРМЕН А. МАЛХАСЯНА

Издательство Первопрестольного Святого Эчмиадзина
Св. Эчмиадзин – 2023

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՑՈՒՑԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՒԱՆԻ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՈՒԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՐԽԻԻԻ

ՀԱՏՈՐ

Ա

Վաւերագիրք 1-413
(թղթապանակք 1-7)

Կազմեցին

Ա. Ա. ՄԱԼԽԱՍԵԱՆ, Ն. Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Ա. Ռ. ԱՍԱՏՐԵԱՆ,
Լ. Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Խմբագրութեամբ
ԱՐՄԷՆ Ա. ՄԱԼԽԱՍԵԱՆԻ



ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱԾԻՆ

2023

ՀՏԳ 27
ԳՄԳ 86.37
Յ 991

*Տպագրուում է երաշխաւորութեամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի եւ
Մաշտոցի անուան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ*

ՅՈՒՅԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՒԱՆԻ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՈՒԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ԱՐԽԻԻ
Յ 991 / Կազմողներ՝ Ա. Ա. Մալխասեան, Ն. Մ. Մարտիրոսեան, Ա. Ռ. Ասատրեան, Լ. Գ. Ստեփանեան;
Խմբ.՝ Ա. Ա. Մալխասեան: – Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչութիւն, Ս. Էջմիածին, 2023.–
1060 սիւնակ, 532 էջ:
Հտ. Ա, Սբ. Էջմիածին, 2023 թ.:
Հտ. Ա, խմբագրութեամբ Արմէն Ա. Մալխասեանի, 2023 թ.:

Մաշտոցի անուան Մատենադարանի արխիւի Կաթողիկոսական դիւանի Յուցակի այս՝ Ա հատորում նկարագրուած է 413 վաւերագիր՝ № 1-413 (թղթայ. 1՝ վաւ. 1-45, 48-54, 56, 58, 63-67, 69-81, թղթայ. 2՝ վաւ. 1-24բ, թղթայ. 3՝ վաւ. 1-20, թղթայ 4՝ վաւ. 1-46բ, թղթայ. 5՝ վաւ. 1- 35, 37-62, թղթայ. 6՝ վաւ. 1-190բ, թղթայ. 7՝ վաւ. 3, 5-6):

ՀՏԳ 27
ԳՄԳ 86.37

Տպագրուում է մեկենասութեամբ
«ՍԱՐԳԻՍ ԳԱՔՐԻԷԼԵԱՆ» հիմնադրամի

ISBN 978-9939-59-308-1

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2023
© Մ. Մաշտոցի անուան Մատենադարան, 2023

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Սոյն հատորով սկիզբ է դրում Մաշտոցի անուան Մատենադարանի արխիվում պահուող «Կաթողիկոսական դիւանի» (այսուհետ՝ ԿԴ) հայերեն հաւաքածուում գտնուող շուրջ չորս տասնեակ հազար¹ վաւերագրերի Յուզակի հրատարակութեանը: Այստեղ վաւերագիրը նկարագրութեամբ հաւասարեցուած է ձեռագիր մատենան՝ զանազանուելով իրեն բնորոշ առանձնաշատկութիւններով: Ճիշտ է, ԿԴի վաւերագրերի համար գոյութիւն ունեն մեքենագիր համառօտ (անոտացիոն) ցուցակներ, որոնցում, սակայն, նկարագրուած տեղեկութիւնները լաւագոյն դէպքում թերի են²: Ներկայ հրատարակուող բազմահատորեակի միջոցով

¹ ԿԴի պարունակած վաւերագրերի միաւորների քանակի վերաբերեալ ունենք 3 տարբեր տուեալներ. ըստ Լ. Խաչիկեանի՝ 35.761 (տես Լ. Խաչիկեան, Մատենադարանը անցեալում եւ խորհրդային իշխանութեան տարիներին, «Բանբեր Մատենադարանի», № 4, Երեւան, 1958, էջ 18, ծնթ. *1: Նոյնը՝ Աշխատութիւններ, հ. Գ, Երեւան, 2008, էջ 1012, ծնթ. 2), ըստ Մատենադարանի արխիւի ցուցակների ցուցակի՝ 36.456, ըստ Արխիւի վարիչ Ա. Աղամեանի՝ 42123 (տես Ա. Աղամեան, Մատենադարան հիմնարկի արխիւային ֆոնդերը (անտիպ աշխատութիւն), Երեւան, 1978, էջ 3, Մատենադարանի արխիւային բաժին): Հետեւապէս ներկայ հրատարակուող Յուզակի պատրաստման աշխատանքների բուն նպատակն է նախ՝ հաշուառումը, ապա՝ մշակումը եւ վերջում միայն՝ նկարագրումը:

² Քանի որ Մատենադարանն ամբողջ աշխարհում յայտնի է որպէս ձեռագրերի խոշոր կենտրոն, այդ իսկ պատճառով արխիւային նիւթերի ուսումնասիրութիւնն անհրաժեշտ ծաւալներով չի իրականացուել: Դրանից բացի, երկար ժամանակ տիրել է այն մտայնութիւնը, որ վերադաս մարմինների կարգադրութեամբ արխիւային այդ նիւթերը մի գեղեցիկ օր կյանձնուեն մէկ այլ հաստատութեան, ինչպէս օրինակ՝ 1836 թ. ստեղծուած «Սինոդի արխիւային ֆոնդը» Մատենադարանում պահուող Գեորգեան ճեմարանի, Սայաթ Նովայի 150-ամեակի ֆոնդերի եւ այլ նիւթերի հետ միասին յանձնուեցին Հայաստանի ազգային արխիւին, իսկ Շերեւնցի, Մանուէլեանի, Բակունցի, Թոթովեցի, Վանանդեցու, Ատրպետի ձեռագրերը, հայ գրողների նամակները, ինչպէս նաեւ Չիթունու եւ Համբարձում Առաքելեանի արխիւային ֆոնդերը յանձնուեցին Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանին եւ այլն:

գիտական շրջանառութեան մէջ կդրուեն ամբողջական ու մանրամասն տեղեկութիւններ: Այս նկատառումից ելնելով՝ սոյն հատորում ներկայացուած են Մատենադարանի արխիւի գոյացման պատմութեան ընդհանուր ուրուագծերը եւ հրատարակուող բազմահատորեակի հիմքում դրուած սկզբունքները:

Յայտնի է, որ Մատենադարանի ինչպէս ձեռագրերի, այնպէս էլ արխիւային վաւերագրերի հաւաքածուների հիմքում ընկած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նախկին գրատան հաւաքածուն: Ի տարբերութիւն ձեռագրական հաւաքածուի ստեղծման պատմութեանը³, արխիւային փաստաթղթերի հաւաքման մասին տեղեկութիւններն իսպառ բացակայում են: Դա պայմանաւորուած է այն հանգամանքով, որ գրագրութիւնը եւ դրանց օրինակների հաւաքումը առօրեայ աշխատանքի մի մասն է կազմել: Ինչպէս գիտենք, Ե դարի նշանաւոր պատմագիր Ղազար Փարպեցու (442-510 թթ.) մարզպան Վասակ Մամիկոնեանին գրած «Թղթում» նշուած է «գհոռում» գրերի մասին⁴, որն անուղղակի վկայութիւն է էջմիածնի վանքին կից մատենադարանի գոյութեանը, որտեղ պահուել են ձեռագրեր եւ, բնականաբար, դրանց հետ եղել են նաեւ արխիւային փաստագրեր, որոնք դարերի ընթացքում տեղի ունեցած պատերազմների, գաղթի, արշաւանքների, տեղահանութիւնների պատճառով մեծ մասամբ մատնուել են կորստի ու ոչնչացման եւ մեզ է հասել միայն մի շնչին մասը⁵: 1441 թ. Հայրապետական Աթոռը Սսից տեղափոխուած է Սուրբ Էջմիածին: Սիմէոն Երեւանցի կաթողիկոսը գրում է. «Ի ՊՂ (1441) թուոջն մերում, ըստ ամենից ճշմարտապար-

³ Մանրամասն տես Օ. Եգանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները, Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, Երեւան, 1965, էջ 13-214:

⁴ Տես Թուրթ Ղազարայ Փարպեցույ, Մատենագիրք Հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2388:

⁵ Տես Ա. Աղամեան, նշ. աշխ., էջ 2:

տում պատմագրաց, յայտնեցաւ սուրբ աշն Լուսաւորչին ի չէմիածին, ուր եւ ժողովեցան բոլոր իշխանք, ժողովորդք եւ վանականք աշխարհիս Հայոց ի տուլութենէ Աստուծոյ, յորգորեցեալք ի բազմապիսեաց հրաշից, հաստատեցին զՍուրբ էջմիածին վերստին Աթոռ Հայրապետական ազգիս Հայոց»⁶: Այդ ժամանակաշրջանից պահպանուել է Գրիգոր Թ Մուսաբէկեանց կաթողիկոսի (1439-1441 թթ.) 1441 թուակիր կոնդակը Մխիթար վարդապետին Ստեփանոս Նախավկայի վանքի հոգեւոր առաջնորդ կարգելու մասին⁷: Ժէ-ԺԲ դարերում արդէն հանդիպում ենք էջմիածնի վանքի եւ այլոց կողմից 1620-1745 թթ. ընթացքում գնուած տների, այգիների, ջրաղացների եւ այլ գործարհների մասին գրառումների⁸: Այդպիսի գրառումների է անդրադարձել նաեւ Սիմէոն Երեւանցի կաթողիկոսը (1763-1780 թթ.) իր «Ջամբո» աշխատութիւնում, որի առաջաբանում, խօսելով Մայր Աթոռի կաթողիկոսների մասին, նշում է. «Այլեւ զի՛նչ ունիլն սորին, զո՛րպէս եւ զե՛րբ ունիլն, այսինքն՝ նուիրակականն, առաջնորդականն եւ զայլ արդիւնաբեր տեղիսն որպիսութեամբքն իւրեանց՝ զմլ՛ատու⁹ գեօղորայսն, զմուլփն, այսինքն՝ զայգիս, զջրաղացս, զդիւնկս, զտունս, զխանութս, զսերմանելի տեղիսն, զշուրս եւ զառուս եւ զայլս այսպիսիս՝ հանդերձ իւրաքանչիւր տաճկական եւ հայկական դաբալայական¹⁰, վախմական¹¹, վկայական եւ վիճուական գրովքն իւրեանց, եւ թէ ե՛րբ եւ որո՞ց ձեռօքն: Այլ եւ զթագաւորական, զբռնակալական եւ զդատաւորական գրեանսն սորին՝ հանդերձ պարագայիւքն իւրեանց եւ, մանաւանդ, զմազաֆութիւն¹² սորին, թէ ո՛րպէս, ո՛րքան, եւ ե՛րբ, այլովք պարագայիւքն»¹³: ԺԹ դարից պահպանուել է տեղեկութիւն արխիաշին պատմական արժէք ներկայացնող բազմաթիւ փաստաթղթերի ոչնչացման մասին: «1821 թուականին,- գրում է Լ. Խաչիկեանը,- երբ եփրեմ կաթողիկոսը գտնուում էր Հաղբատի վանքում, Ներսէս Աշտարակեցու կարգադրութեամբ էջմիածնից Հաղբատ են տարուում

երեք բեռ փաստաթղթեր: Դրանց «արժեքաւորումն» ու «ընտրութիւնը» հանձնուում է մի քանի երիտասարդ սարկաւազների (որոնց թուում նաեւ Մ. Թաղիադեանին). նրանց յանձնարարուում է ընտրել ու պահել միայն պարտամուրհակները, կալուածագրերը եւ նման կարգի թղթերը, որոնք տնտեսական նշանակութիւն ունէին («յորս գտանէաք զթիւ ու զհնչիւն դրամոց»), իսկ ողջ մնացածը, տարիներ յետոյ դառնօրէն ու մեծ ափսոսանքով չիշում է Մ. Թաղիադեանը, «ժողովեալ ի հուր՝ յաճիւն դատէաք»¹⁴: Սակայն մէկ օր յետոյ աշխատանքից ձանձրանալով, առանց կարդալու, փաստաթղթերն անպիտան համարելով՝ այրում են: Մ. Թաղիադեանը, որ եփրեմ Ա Ջորագեղցի կաթողիկոսի (1809-1830 թթ.) հետ մի շարք ամիսներ անց էր կացրել Արցախի Շուշի ֆաղաֆում, այնուհետեւ՝ Գանձակում եւ Հաղբատում¹⁵, դառնացած գրում է. «Յանցանել աւուրց ինչ եւ ի տաղտկանալ գործոցն ի վերայ պարագասէր որեւոյս՝ բազում այն էր, զի եւ առանց ինչ ի նմա նշմարելոյ՝ յանպիտանիս դատէաք: Եւ այսպէս զսակաւ ի սակաւուցն ընտրելով, զվերաբերեալս դրամական մտից Աթոռոցն, զայլովքն բոլորեքումբք զաշս կափուցանէաք: Ոչ կարեմ զսպել աստանօր զմտածութիւնն. թէ դիցուք թէ մեք մանկունք կամ մանկամիտք ամենեքին՝ անփոյթ արարաք զայնքան հինատուրց թղթովք, ուստի մարթ էր հաւաքել վճիտ անցս ժամանակացն եւ փարթամացուցանել զպատմութիւն եւ զգիտութիւնս ազգին, տեսնն ներսեսի իմաստնոյ եւ ազգասիրի զի՞ եղև արդեօք, որ թոյլ ետ այնմ»¹⁶: Օգտագործելով նամփոռական գրառումները՝ Մ. Թաղիադեանը նկարագրում է 1819, 1821-1823 թթ. հայաստանեան շրջապայութիւններից ստացած իր տպաւորութիւնները: Յետագայ նկարագրութիւններում, թուարկելով Մայր Աթոռում կաթողիկոսից յետոյ եկող տասնվեց պաշտօնների եւ պարտականութիւնների յաջորդականութիւնը, կարեւորում է նաեւ հայրապետական կոնդակների գրագրի եւ ծաղկարարի պաշտօնները՝

«...ԳՐԱԳԻՐ - է շարագրիչ եւ գրիչ կոնդակաց եւ գրոց Հայրապետին եւ Խորհրդարանին¹⁷ սրբոյ:

⁶ Սիմէոն Երեւանցի, Ջամբո: Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873, էջ 8:
⁷ Տէն ԿԴ, թղթա. 244, վաւ. 340:
⁸ Տէն ԿԴ, թղթա. 4, վաւ. 34:
⁹ Միւլք – կալուածք, երկիր, արդիւնք եւլն:
¹⁰ Ղապալայ – կալուածագիր:
¹¹ Վազֆ – կալուած, ժառանգութիւն, կտակեալ ինչք քարեպաշտական յօգուտ հասարակաց եւլն:
¹² Մու՛աֆ – ազատ, ազատութիւն եւլն:
¹³ Տէն Սիմէոն Երեւանցի, նշ. աշխ., էջ 3:

¹⁴ Լ. Խաչիկեան, Մատենադարանը անցեալում եւ խորհրդային իշխանութեան տարիներին, Աշխատութիւններ, հ. Գ, Երեւան, 2008, էջ 1006 (այսուհետ նկատի ունենք այս հրատարակութիւնը):
¹⁵ Տէն Մ. Թաղիդեանց, Ուղեգրութիւններ, յօդուածներ, նամակներ, վաւերագրեր, Երեւան, 1975, էջ 12:
¹⁶ Մ. Թաղիդեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. Ա, Կալկաթա, 1847, էջ 333-334: Նոյնի՛ Ուղեգրութիւններ..., նշ. աշխ., էջ 177-178:
¹⁷ Խորհրդարան կամ սինիոդոս հոգեւորական կա-

*ԾԱՂԿԱՐԱՐ - է ծաղկիչ կամ նկարիչ կոն-
դակաց Հայրապետին՝ յո՛յժ յարգի համարեալ
ի ժամանակի մերում»¹⁸:*

1832 թ. օգոստոսի 15ի նոր Նախիջեանի հայոց հոգեւոր կառավարութեան՝ Ներսէս Աշտարակեցուն (1770-1857 թթ.) ուղղուած գրութիւնից տեղեկանում ենք, որ ստացուել է նրա հրամանը, համաձայն ուսական Սինոդի որոշման, եկեղեցական երամուտի հաշիւները կնքուած ժապաւինեալ մատեանով պահելու մասին¹⁹:

Ի դարի սկզբի տարբեր գրագրութիւններից տեղեկանում ենք, որ ձեռագիր մատեաններին զուգահեռ Մայր Աթոռ են տեղափոխուած նաեւ արխիւային փաստաթղթեր, նոյնիսկ՝ ուղարկուած ուսումնասիրութեան: 1901 թ. յունիսի 21ին Թիֆլիսից Գիւտ Բն Աղանեանցը (1856-1920 թթ.) խնդրում է իր «Գիւտ հայոց պատմութեան» ժողովածուի համար էջմիածնի մատենադարանից իրեն ուղարկել Սիմէոն (№ 749), Գուկաս (№№ 752, 753, 755), Դաւիթ (№№ 760, 762) կաթողիկոսների կոնդակների պատճենները: Յետագայում, 1910 թ. մայիսի 4ին, բացատրագիր է յղում մատենադարանապետ Մեսրոպ եպս. Տէր-Մովսիսեանին (Մագիստրոս)՝ մատենադարանից ստացած վաւերագրերի վերադարձման եւ այլ հաշիւներ շունեալու մասին, որից տեղեկանում ենք, որ այդ պատճենները տարբեր ժամանակներում վերադարձրել է, միայն № 753 է թիրխացաբար մնացել Ներսիսեան դպրոցի հոգաբարձական դիւանում, եւ նա 1910 թ. ապրիլի 29ին դիմել է Հոգաբարձութեանն՝ այն վերադարձնելու էջմիածնի մատենադարանին²⁰: 1910 թ. ապրիլի 2ին էջմիածնի դիւանապետ Բագրատ վարդապետի՝ Մայր Աթոռի մատենադարանապետ Մեսրոպ եպիսկոպո-

նավարութեան համօրէն Հայաստանեայց. տէս Մ. Թաղիդեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, նշ. աշխ., էջ 108:

¹⁸ Մ. Թաղիդեանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, նշ. աշխ., էջ 110: Նոյնի՝ Ուղեգրութիւններ..., նշ. աշխ., էջ 78-79:

¹⁹ Տէս ԿԴ, թղթայ. 74, վաւ. 329ա: Հաւանաբար սրանով է պայմանաւորուած հաշուեմատեանների եւ այլ գրութիւնների թելակարով եւ զմուտով ամրացուած լինելը:

²⁰ Տէս Մատենադարանի արխիւ, «Մատենադարանի հիմնարկի արխիւային ֆօնդ», թղթայ. 74, վաւ. 38: 1910 թ. յունիսի 11ի № 1507 գրութեամբ դիւանապետ Բագրատ վարդապետը մատենադարանապետ Մեսրոպ Տէր-Մովսիսեանին գրում է ետ ընդունել Տիֆլիսի Ներսիսեան թեմական հոգեւոր դպրանոցի Հոգաբարձութեան «*տարւոյս մայիսի 10ի, № 211 գրութեամբ եր ուղարկած ԺԸ դարի վերջին կաթողիկոսների ձեռագիր բնագրերի մի կապոց № 753...*» (տէս անդ, թղթայ. 74, վաւ. 42):

սին ուղղուած գրութիւնից տեղեկանում ենք պարսից շահերի հրովարտականի թարգմանութիւնները Մայր Աթոռ ուղարկելու մասին. «Ազգիս Վեհափառ հայրապետն ստանալով Դարբանտու տ. Աբրահամա. (այսպէս է – Ա.Մ.) քահանայ Սպանտունու տարւոյս մարտի 22ի խնդրի հետ մատուցած՝ Դաւիթ խան Ծատուրեան Մելիք-Շահնազարեան դէ Շափուրից մնացած պարսից շահերի հրովարտականի թարգմանութիւնը եւ Կ. Պօլսի հանգուցեալ ս. Յակովբ պատրիարքի ձեռագիր Քարոզգիրը, բարեհաճից հրամայել դիւանիս գրովթեանս հետ ուղարկել Ձեր գերապատուութեան՝ զետեղելու Մայր Աթոռի մատենադարանում: Դիւանապետ՝ (ստորագրութիւն) Բագրատ վարդապետ»²¹:

Մինչեւ 1910 թուականը Մայր Աթոռի մատենադարանի Գետրգեան հաւաքածու մտած անհատական արխիւների բանակ յիշատակուած է 8 միաւոր²²: 1910-1915 թթ. հաւաքածուի մասին գրելիս Օ. Եգանեանը նկատում է, որ այդ ժամանակաշրջանը թէեւ չափազանց կարճատեւ է եղել, բայց եղել է խիստ արդիւնաւէտ: Այդ տարիները համընկնում են Մեսրոպ Տէր-Մովսիսեանի (1906-1913 թթ.) եւ Յուսիկ արքեպս. Մովսիսեանի (1913-1916 թթ.) մատենադարանապետութեան ժամանակաշրջանին, երբ էջմիածնի գրատանը կենտրոնացել են 911 (914) նոր եւ արժէատու ձեռագրեր, 19 արխիւային նիւթեր. («Անհատական արխիւներ, թղթ. 80, վաւ. 17, 19-22, 24-30, 37, թղթ. 145, վաւ. 429, Կաթողիկոսական դիւան, թղթ. 236 թ, 236 ժա, 237բ, 248»)²³: Այնուհետեւ, նշելով 1915 թուականի փետրվարի 3ի դրութեամբ էջմիածնի Մատենադարանի 4660 ձեռագրերի արդիական համարները, հաշուառել է արխիւային եւս 8 նիւթեր, որոնք անկախ են Անհատական արխիւներին, ընդհանուրը՝ 27 միաւոր (Անհատական արխիւների ֆօնդ, թղթ. 80, վաւ. 11-30, 37, 38, թղթ. 145, վաւ. 429, Կաթողիկոսական դիւան, թղթ. 236 թ, 236 ժա, 237 բ, 248): 1910-1915 թթ. հաւաքածուի ցանկում մէջբերելով Խ. վրդ. Դաղեանի 126 ձեռագրերի զոյգահամարները՝ Օ. Եգանեանը նկատում է, որ ձեռագիր 9346ը մինչեւ 1950 թուականը գտնուած էր Մատենադարանի արխիւային բաժնի Անհատական արխիւների ֆօնդում՝ թղթ. 78, վաւ. 27²⁴:

Վասպուրականի հաւաքածուի՝ երկրորդ անգամ բերուած ձեռագրերի ցուցակում, որը կազմել է Դանիէլ վրդ. Զատոյեանը Վանում 1916 թուականի յուն-

²¹ Անդ, թղթայ. 74, վաւ. 37:

²² Օ. Եգանեան, նշ. աշխ, էջ 66:

²³ Անդ, էջ 74:

²⁴ Անդ, էջ 87:

վարի Յին, յիշատակում է նաև 1 կոնդակ²⁵, իսկ Վասպուրականից եւ Մուշից բերուած ձեռագրերի «Գագրիկեան» ցուցակում յիշատակուած է 1 սուլթանական ֆերման²⁶: Այնուհետեւ խօսելով Գագրիկ Ներսիսեանի կազմած ցուցակի մասին՝ Օ. Եգանեանը ձեռագրերի շարքում առանձնացնում է արխիւային 3 նիւթեր, որոնք, ըստ այդ ցուցակի, ունեն հետեւեալ գոյհանամարները՝ №№ 710, 1498, 1526. դրանցից 1ը Վասպուրականից բերուած ձեռագրերի մէջ է եղել, 2ը՝ Մուշից²⁷:

Պահպանուել է 1917 թ. յունվարի 23ից 1918 մայիսի 17 (վերջին ստորագրութիւնը՝ սեպտ. 3, Սամուել Ռշտունի) էջմիածնի մատենադարանում պարսկապոլսերի ցուցակը՝ հումորային գրառումով, որտեղ սկզբնական շրջանում (մինչեւ 1917 թ. մայիսի 8ը), որպէս ընթերցողներ, «Նկատողութիւն» խորագրով սիւնակի տակ, անուն ազգանունից յետոյ, նշուած են ընթերցողների կարգավիճակները՝ «ուսանող» (Ղեւոնդեան Գէորգ...), «գաղթական» (Օհանէս Պարոնիկեան, Սարգիս Ճարօեան...), «ճեմարանի սան» (Բուդաբէսեանց), «ուսուցիչ» (Տիգրան Շահինեան), «աշակերտ» (Ճանի Կոյասարի, Ոսկան Տէր-Յովսէփեանց...), «ծառայ ճեմարանի» (Գուլումեան Հրաչեայ, իսկ 5ա թերթին նրա անուան դիմաց նշուած է «իշի մոռութ»)՝²⁸:

* * *

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը շրջադարձային եղաւ բոլոր ասպարեզներին

²⁵ Անդ, էջ 103:

²⁶ Անդ, էջ 107: «Մուշից բերուած այս նիւթը,- գրում է Օ. Եգանեանը,- որ սուլթանական մի ֆերման է, ժամանակին մոծուած է Մարտենադարանի արխիւ, սակայն ցուցակում նշում չի կրելու պատճառով դեռ հնարատր չի եղել պարզելու, թէ ինչ համարի տակ է գրանցուած» (տե՛ս անդ, էջ 108):

²⁷ Անդ, էջ 110:

²⁸ Տե՛ս Մատենադարանի արխիւ, «Մատենադարան հիմնարկի արխիւային ֆօնդ», թղթայ. 74, վաւ. 81, թերթ 1ա-8ա: Նոյն ֆօնդում (տե՛ս թղթայ. 74, վաւ. 86ա-գ) 1919 թուականից պահպանուած 3 փաստագրերից տեղեկանում ենք հետեւեալը՝ ա) Գարեգին եպս. Յովսէփեանը դիմում է մատենադարանապետ Մեսրոպ սրբազանին (Մագիստրոս) տրամադրելու ձեռագիր 1247ը, բ) Վկայագիր՝ տրուած 6-րդ Լեոնային զորամասի (батарей) շտաբակապիտան Լիսիշին առ այն, որ նա տեղակայուած է Կարսի եւ Ալեքսանդրապոլի շրջաններում ծառայութեան գործերով (ստորագրուած է՝ «Командующий батареей Шт.-Капитанъ Саркисян») եւ գ) 22.09.1918 թուականի մեքենագիր ռուսերէն գրութեան մի մասը (թերատ)՝ տրուած Քիշինեի նոտար Ն. Տաուշոշովիչի կողմից, որը յետագայում գրանցուած է 28 նոյեմբերի 1919 թուին (№№ 3075-3076):

համար՝ այդ թում նաև արխիւային գործի բնագաւառում: «Բուն իմաստով արխիւային հաստատութիւններ, արխիւային համակարգ, արխիւային գործ ստեղծուեցին... խորհրդային կարգեր հաստատուելուց յետոյ,- գրում է Ս. Ամիրեանը:- ...Նախկին Ռուսաստանի կայսրութեան տարածքում ստեղծուած խորհրդային բոլոր հանրապետութիւններում, այդ թուում՝ նաև Հայաստանում, արխիւային գործի կազմակերպման երկարաժամկետ գործողութեան ծրագիր եւ հիմք հանդիսացաւ խորհրդային Ռուսաստանի կառավարութեան՝ ՌԽՖՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի (ժողկոմխորհ) ընդունած «ՌԽՖՍՀ-ում արխիւային գործի վերակառուցման եւ կենտրոնացման մասին» 1918 թ. յունիսի 1ի դեկրետը (լատ. որոշում): Դեկրետի հիմքում դրուած էին երեք հիմնական սկզբունքներ՝ ազգայնացում, կենտրոնացում, դեմոկրատացում»²⁹: Հայաստանի յեղափոխական կոմիտէի 1920 թ. դեկտեմբերի 17ի №3 դեկրետով, որը հոգեւոր հաստատութիւններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկութիւնների պետականացման մասին է, Հայաստանի կուլտուր-լուսատրական միւս օջախների թում պետականացում են նաև Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի մատենադարանն ու նրա արխիւի մի մասը: Դեկրետի ծանօթագրութիւնում նշուած է. «էջմիածնի վանական ճեմարանը, հնագիտական եւ ազգագրական թանգարանները, մատենադարանն ու տպարանը, որպէս ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող հիմնարկութիւններ, Հայաստանի աշխատատր ժողով[ու]րդների սեփականութիւն դառնալով՝ ենթարկ[ւ]ում են անմիջապէս Լուսատրութեան ժողովրդական կոմիսարիատին եւ վերակազմուած վերջինիս կողմից նշանակելիք կոմիսարի ղեկավարութեամբ: Լուսատրութեան Յովհաննիսեան»³⁰: 1920 թ. դեկտեմբերի 22ին, համաձայն ՀՍԽՀ Յեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17ի №3 դեկրետի, պետականացում են նաև Զուարթնոցի վանահայր Խ. վրդ. Դադեանի հաստատած հնագիտական նիւթերը, այդ թում նաև ձեռագրերի երկրորդ հարուստ հաստատում, որը բովանդակում էր 101 ամբողջական ձեռագրեր, բազմաթիւ պատատիկներ եւ արխիւային նիւթեր, որոնք Խ. Դադեանից ընդունել, ցուցակագրել եւ մատենադարանին են յանձնել Ստ. Լիսիցեանն ու Լ. Թահիրեանը³¹: 1921 թ. փետրուարի 5ի դեկրետով

²⁹ Տե՛ս Ս. Ամիրեան, Արխիւագիտութիւն, Երեւան, 2018, էջ 45:

³⁰ Տե՛ս Մատենադարանի արխիւ, «Մատենադարան հիմնարկի արխիւային ֆօնդ», թղթայ. 74, վաւ. 91ա, թերթ 2:

³¹ Տե՛ս Օ. Եգանեան, նշ. աշխ., էջ 113:

յանձնարարում է Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատին վերակազմել Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատութիւնների պետականացման ցանցը (մատենադարան, թանգարան, տպարան եւ այլն) եւ հիմնել Էջմիածնում կուլտուր-պատմական ինստիտուտ³²: 1921 թ. յունվարի 21ի Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանի հրամանով Լ. Լիսիցեանը 1920 թ. դեկտեմբերի 20ից նշանակուել է Էջմիածնի պետականացրած կուլտուր-կրթական հիմնարկութիւնների կոմիսար³³, իսկ 1921 թ. յունվարի 31ի հրամանով՝ 1920 թ. դեկտեմբերի 20ից Սեն. Տէր-Յակոբեանը նշանակուել է Էջմիածնի կուլտուր-պատմական Մատենադարանի վարիչ³⁴: 1921 թ. յունվարի 31ի հրամանով Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի կոմիսար եւ վարիչի պաշտօնակատար է նշանակուել Լ. Սարգսեանը, իսկ Լ. Լիսիցեանը նշանակուել է Էջմիածնի կուլտուր-պատմական թանգարանի վարիչ³⁵: 1921 թ. ապրիլի 19ի Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանի գրութեամբ՝ կուլտուր-պատմական ինստիտուտի կոմիսար եւ վարիչ է նշանակուել Սեն. Տէր-Յակոբեանը³⁶:

Սկսուել են նաեւ արխիւային ֆօնդերի կարգաւորման աշխատանքները: 1921 թ. յունվարի 17ի № 27 գրութեամբ՝ Էջմիածնի կուլտուր-կրթական հիմնարկութիւնների կոմիսար Լ. Լիսիցեանը յանձնարարում է մատենադարանապետ Սեն. Տէր-Յակոբեանին մատենադարանում գտնուող Տիրայր եպիսկոպոսի արկղերը բացել եւ բովանդակ գրքերը մացցնել մատենադարանի ցուցակների մէջ՝ համարելով այդ այսուհետեւ ժողովրդական սեփականութիւն: Թանհրեանին եւ Գր. Մկրտչեանին յանձնարարում է բացել այդ արկղերը վանական միաբանութեան կամ այլ երկու վկաների ներկայութեամբ, եւ այդտեղ գտնուած ընդհանուր արժէք ներկայացնող իրերը պետականացնելու մասին կազմել արձանագրութիւն³⁷:

³² Տեն Մատենադարանի արխիւ, «Մատենադարանի հիմնարկի արխիւային ֆօնդ», թղթայ. 74, վաւ. 91ա, թերթ 1:

³³ Տեն անդ, թղթայ. 74, վաւ. 91բ:

³⁴ Տեն անդ, թղթայ. 74, վաւ. 92, թերթ 5:

³⁵ Տեն անդ, թղթայ. 74, վաւ. 92, թերթ 2, 3, 4:

³⁶ «Էջմիածին: Սենեքերիմ Տէր-Յակոբեանին: Լիւզօրում եմ Ձեզ ժամանակաորակա սրանձնել կուլտուր-պատմական ինստիտուտի կոմիսարի եւ վարիչի պաշտօնը եւ անել համապատասխան կարգադրութիւններ: Շուրջ կուղարկի Ձեզ ասանս: Մահրեսի Յակոբեանը արձակած է իմ կարգադրութեամբ, նշանակեցէք նոր վարիչ: Խնդրում եմ ընդառաջ գնալ Թորոմանեանի բոլոր ձեռնարկներին: Լուսժողկոմ՝ Յովհաննիսեան»։ տեն անդ, թղթայ. 74, վաւ. 91ա, թերթ 3:

³⁷ Տեն անդ, թղթայ. 74, վաւ. 113, թերթ 1 (բնագիր,

1921 թ. փետրվարի 4ին Մայր Աթոռի դիւանապետ Ազարիայ եպիսկոպոսը գրում է Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի կոմիսար Լ. Սարգսեանին ուղարկուած փաստաթղթերի մասին. «Ի պատասխան Խորհրդային Հայաստանի լուսաւորութեան ժողովրդական կոմիսար պ. Աշոտ Յովհաննիսեանի ամսիս 3 № 115 գրութեան, Հայրապետական Դիւանս սորա հետ ուղարկում է Առաջին Հայրապետական Դիւանի ամսիս 2ի № 20 գրութեան պատճէն ուղղուած լուսարարապետ տ. Գէորգ եպիսկոպոսին: Երկրորդ՝ Հայրապետական Դիւանում գտնուած եւ գործին վերաբերող բոլոր մատեանները եւ գործերը ըստ այսմ.

1. Մայր տաճարի ժապաւինեալ մատեանը՝ բաղկացած 142 թերթից:

2. Հայրապետական Դիւանի 1914 թ-ի № 74 գործը «Մայր Աթոռի թանգարժէք իրեղէնները Մոսկույ տեղափոխելու մասին»՝ բաղկացած 66 գրուած թերթերից:

3. Մինօզի ներքին գանձարանից դուրս տուած Հայրապետական շնորհաբաշխութեանց մատեանը՝ բաղկացած 96 թերթերից:

4. Վեհափառ Հայրապետին աւանդ տրուած եւ Մայր տաճարում պահուող Տաճկահայաստանի եւ ուրիշ վայրերի վանքերի եւ եկեղեցիների սրբութիւնների եւ սպասների վերաբերեալ Դիւանի հետեւեալ գործերը.

Ա. 1915 թ., թ. 11 «Ատրպատականի եւ այլ թեմերի Հայոց եկեղեցիներից Մայր Աթոռ բերած անօթների մասին»՝ բաղկացած 9 գրուած թերթերից:

Բ. 1915 թ., թ. 58 «Վանայ շրջանի վանքերի, անապատների, եկեղեցիների ձեռագրերի եւ եկեղեցական հնութիւնների պահպանութեան մասին»՝ բաղկացած 219 գրուած թերթերից:

Գ. 1916 թ., թ. 27 «Էրզրումի գրաման մասին»՝ բաղկացած 363 գրուած թերթերից:

Դ. 1916 թ., թ. 49 «Մուշ գնացող յանձնաժողովի եւ նրա պարտաւորութեան մասին»՝ բաղկացած 106 գրուած թերթերից:

Ե. 1918 թ., թ. 39 «Երնշակի վանքի մատուցների եւ արծաթեղէնի մասին»՝ բաղկացած 5 գրուած թերթերից:

Զ. 1920 թ., թ. 3 «Մայր տաճարի վերաբերեալ գրագրութիւնների մասին»՝ բաղկացած 62 գրուած թերթերից:

Իսկ Մայր տաճարի «Ապասուց Մեծ մատեանը եւ Մատենադարանի ձեռագրների ցուցակները», ինչպէս երեւում է Դիւանի 1914 թ. թ. 74 գործից, որ ուղարկուել է Ձեզ, այնպիսիները ուղարկուած են իրեղէնների հետ Մոսկույ:

ձեռագիր):

Վանականների մօտ գտնված իրերի մասին նրանց կենդանութեան ժամանակ տեղեկութիւն չի լինում Գիւանումս:

Գիւանս խնդրում է կարեւորութիւն անցնելուց յետոյ ուղարկածները վերադարձնել Գիւանս»³⁸:

1921 թ. փետրվարի 2ին տեղի է ունենում էջմիածնի կուտուր-պատմական ինստիտուտի անդրաւանի կազմակերպչական նիստը՝ Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանի նախագահութեամբ: Նախագահողը յայտնում է, որ էջմիածնի կուտուր-պատմական ինստիտուտի կոլեգիայի անդամ են նշանակուած Լ. Սարգսեանը, Ե. Տէր-Մինասեանը, Սեն. Տէր-Յակոբեանը եւ Լ. Լիսիցեանը: Լ. Սարգսեանն առաջադրուած է կոլեգիայի նախագահ, իսկ Ե. Տէր-Մինասեանը՝ գիտնական ֆարտուղար: Նիստին մատենադարանապետ Սեն. Տէր-Յակոբեանը զեկուցում է արխիւի կարգաւորման ու ցուցակագրման մասին՝ նկատելով, որ դժուար գործ լինելով՝ լուրջ եւ պատասխանատու աշխատակիցներ է պահանջում³⁹: 1921 թ. փետրուարի 11ի կոլեգիայի №3 նիստին նախագահ Լ. Սարգսեանն արխիւի նիւթերն ի մի հաւաքելու, դասաւորելու եւ ցուցակագրելու համար անհրաժեշտ է համարում յատուկ պատրաստուած մարդ ունենալ, իբրեւ մատենադարանապետի օգնական արխիւի մասի, եւ այդ պաշտօնի համար առաջարկում է նախկին սենատոր Արշակ Բարխուդարեանի թեկնածութիւնը: Որոշում է հրաւիրել Արշակ Բարխուդարեանին որպէս մատենադարանի արխիւի բաժնի վարիչ⁴⁰: 1921 թ. մայիսի 25ի կոլեգիայի №5 նիստին նախագահ Կ. Մելիք-Օհանջանեանը զեկուցում է արխիւի ներկայ դրութեան եւ նրա կարգաւորութեան համար կառավարիչ ունենալու անհրաժեշտութեան մասին: Որոշում են յունիս ամսուայ 1ից հրաւիրել, արխիւի կառավարչի պաշտօնում, Գիւս ծ. վրդ. Տէր-Ղազարեանին, նրա վրայ պարտք դնել կարգաւորել եւ ցուցակագրել արխիւը՝ անհրաժեշտ ցուցումներն ստանալով մատենադարանի վարիչից⁴¹: 1921 թ. մայիսի 25ի № 48 հրամանով⁴² Տէր-Ղազարեան Գիւս ծ. վարդապետը նշանակուած է մատենադարանի արխիւի բաժնի կառավարիչ 1921 թ. յունիսի 1ից: 1921 թ. մայիսի 28ին արխիւի նորանշանակ վարիչ Գիւս ծ. վրդ. Տէր-Ղազարեանը Մատենադարանի վարիչին դիմած գրութեամբ ներկայացնում է հետեւեալ պահանջները. «Ամսուայ 27ին, ստանալով էջմիածնի ինստ-ի վարչութեան 25/V թ. 104 գրութիւնը, որով իսկ առաջարկուած են Մատենադարանի արխիւի բաժինը կարգաւորել, պարտք եմ համարում յայտնելու, որ արխիւի կարգաւորման աշխատանքները սկսելու համար հարկաւոր են նախօրոք հետեւեալ խնդիրները լուծել, որից յետոյ հնար կլինի աշխատանք անելու.

I. Արխիւի համար ունենալ մի դահլիճ կամ սենեակ, քանի որ այժմեան սենեակը փոքր է եւ այնտեղ աշխատելը հնարը չէ:

II. Պէտք են նոր պահարաններ, որով(հետեւ) եղած պահարանները կոտորուած են ու անյարմար. եթէ նոր պահարաններ հնար չլինի գտնել, գոնէ 1-2 հատ պահարան պէտք է տրուի արխիւին, որով(հետեւ) թղթից գործերը շատ են խիտ խիտ դրուած արխիւում եւ շատերն էլ դուրս են մնացել դարակլիներից]:

III. Հարկաւոր են թղթապանակներ՝ վաւերագրերը, արխիւի թղթերը մէջերը դնելու եւ բոլոր թղթերը թղթապանակներում պահելու:

IV. Հարկաւոր են՝ մի գրասեղան արխիւի վարիչի համար եւ մի մեծ սեղան թղթերը, գործերը դասաւորելու համար: Այլ թուղթ, կարմիր եւ սեւ թան[ա]ք, գրիչներ ու մատիտներ:

V. Արխիւը ցուցակագրելու՝ վարիչի համար հարկաւոր է եւ մի երիտասարդ աշխատող, որը համարդրի, թւագրի գործերը, երբեմն արտագրի եւ այլ ազ[//] տայ վարիչին աշխատանքը արագ ու արդիւնաւետ դարձնելու համար:

Սկզբնական աշխատանքների համար առայժմ այսքանը»⁴³:

1921 թ. յուլիսի 21ին Գիւս ծ. վրդ. Տէր-Ղազարեանը էջմիածնի մատենադարանի վարիչ Սեն. Տէր-Յակոբեանին ուղղուած գրութիւնում, թուարկելով արխիւում գտնուող նիւթերի մասին, ներկայացնելով արուած աշխատանքները, արխիւի ցուցակագրման

³⁸ Տէն անդ, թղթայ. 74, վաւ. 137, թերթ 133 (բնագիր, ձեռագիր):

³⁹ Ե. Տէր-Մինասեանի առաջարկութեամբ, յատկապէս արխիւի կարգաւորութեան եւ տեղաւորման համար, որոշում է հանրակացարանի շէնքում յատկացնել երկու սենեակից բաղկացած մի բնակարան, որովհետեւ, նշում է նա, որ ներկայումս, օրինակ՝ Սինոդի պատմական եւ այլ տեսակէտներով արժէքաւոր արխիւը անխնամ եւ անկարգ թափուած է տպարանի մեծ դահլիճում...: Տէն անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 1ա-բ, 3բ, արձանագրութիւն №1 (բնագիր, ձեռագիր):

⁴⁰ Տէն անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 7ա, արձանագրութիւն №3 (բնագիր, ձեռագիր):

⁴¹ Տէն անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 10ա, արձանագրութիւն №5 (բնագիր, ձեռագիր):

⁴² Տէն անդ, թղթայ. 74, վաւ. 99, թերթ 13բ (ձեռագիր):

⁴³ Տէն անդ, թղթայ. 74, վաւ. 136, թերթ 10-11 (բնագիր, ձեռագիր):

հետ կապուած խնդիրներ լուծումը, բաժնում կատարուած հսկայածաւալ աշխատանքները՝ նշում է. «Արխիւի ցուցակագրութեան համար անհրաժեշտ եղած նախնական աշխատանքները, սկսած պաշտօնի մտած օրից, յունիսի 1ից ս.թ. մինչեւ յունիսի 21ը՝ թեթեակի աշակցութիւն ունենալով երկու աշխատակիցներէցս: Նախնական աշխատանքը հետեւեալն է եղել.

1. Արխիւի վաւերագրերը զատել ենք ըստ լեզուների:
2. Կազմած տումարները, մատեանները դասաւորել ենք առանձին տասնամեակներով:
3. Զատել ու առանձին դասաւորել ենք անկազմ մատեանները, տումարները, ցուցակները:
4. Բոլոր վաւերագրերը դասաւորել ենք ժամանակագրական կարգով, բացի վրացերէն, թուրքերէն լեզուների վաւերագրերի:
5. Առանձնացրել ենք թուականներն անյայտ վաւերագրերը եւ մատեանները, տումարները:
6. Ի մի ենք հաւաքել թերի վաւերագրերը:

Արխիւի ցուցակագրութիւնը սկսելուց առաջ անհրաժեշտ է ստանալ ստորեւ գրած խնդիրների լուծումը եւ հարցերի պարզաբանութիւն, ուստի եւ խնդրում եմ հրահանգ ու կարգադրութիւն ցուցակագրութիւնն սկսելու:

Արխիւը իւր բովանդակութեամբ բազմազան է: Վաւերագրերը հաւաքուած չեն որոշ սկզբունքով ու համակարգութեամբ, այլ պատահականօրէն: Վաւերագրերը մեծ մասով ժԹ-ԲՊ, փոքր մասով ԺԸ-ԲՊ դարու հայոց ընդհանրական հայրապետների եւ վերաբերում: Կան նաեւ զանազան հոգեւորականների, աշխարհականների վերաբերող վաւերագրեր, էջմիածնի Սինօզից, այլ եւ այլ թեմերի կոնսիստորիաներից, Գէորգեան հ. ճեմարանից գործեր: Ի նկատի ունենալով այս հանգամանքները, ըստ իս, արխիւը պէտք է ցուցակագրել տարբեր ձեւով, քան Եւրոպական արխիւներն են, որոնք որոշ համակարգութեամբ են կազմակերպուել:

Ըստ իս արխիւը պէտք է ցուցակագրել՝ ի նկատի ունենալով վաւերագրերի ժամանակագրական կարգը: Վաւերագրերը դասաւորել ըստ տարեթուների, նշանակել ամեն վաւերագրի համար համարագրով (նումերատոր), նշանակել վաւերագրի գրած երեսների թիւը:

Ցուցակագրութեան համար տպագրել շուրջ 100,000 ցուցակագրութեան թերթիկ, ուր պիտի նշանակուի ո՞վ է գրողը, ո՞ր տեղից է գրուած, ո՞ր թուին, ո՞ւմ է գրուած, ո՞ր տեղ եւ վաւերագրերը քանի երեսից է բաղկացած⁴⁴: Այդ թերթիկներից յետոյ կարելի կլինի կազմել

⁴⁴ Յայտարարութեան կարում եմ ցուցակագրութեան թերթիկի օրինակը:

ցուցակներ ըստ բովանդակութեան, ըստ հեղինակների, ըստ տպագրութեան:

Ցուցակագրութեան համար անհրաժեշտ իվետները եւ հարցերը հետեւեալներն են.

1. Արխիւի ներկա[յ] շէնքը շատ նեղ է. պէտք է ունենալ ընդարձակ շէնք, որի մի մասում տեղաւորուի արխիւը, միւս մասում վարիչն իր աշխատակիցներով աշխատէ. երրորդ մասում գրսից եկած աշխատողները, որոնք արխիւի վաւերագրերով են պարապում:
2. Վաւերագրերը տեղաւորել նոր պահարաններում, քանի որ եղածները եւ հին են եւ կոտորտած եւ չեն տեղաւորում եղած վաւերագրերը: Վաւերագրերը պէտք է դասաւորուին համաձայն պահարանների դարակների, ուստի եւ պահարանների հարցը խնդրում եմ շուտով լուծել:
3. Արխիւի վաւերագրերը անխնամ մնալու պատճառով փշացել են՝ ծալծլւելով, ելիզները կտրատուելով, փոշու, արեւի տակ մնալով, խոնաւութիւնից փշանալով եւ այլն: Այդ ամենի առաջն առնելու համար հարկաւոր է ստուարաթղթից պահպանակներ վաւերագրերի մեծութեամբ 1-1½ վերջով բարձրութեամբ:

4. Արխիւը, ըստ իս, շատ է ծանրաբեռնուած պատմական, գրական արժէք չունեցող թղթերով, որոնք գուր տեղ են բռնում, աւելորդ աշխատանք են պահանջում ցուցակագրութեան ժամանակ: Այդպիսի թղթեր են այլ եւ այլ գործակալներն, քահանաների տուած յայտարարութիւնները պսակի համար կամ «Արարատ»ի բաժնեգների անդորրագրերը, կամ չքաւոր անձանց տուած խնդիրները նիւթական նպաստ ստանալու նպատակով եւ այլն: Ըստ իս պէտք է այդպիսի թղթերը առանձնացնել արխիւում պահելով միայն մի մի հատ օրինակի համար⁴⁵:

5. Կան վաւերագրեր հայերէն եւ ռուսերէն լեզուներով, մէկը միւսի թարգմանութիւնը. արդեօք միասին պահել այդ վաւերագրերը, թէ զատել ըստ լեզուների եւ ըստ այնմ ցուցակագրել:

6. Կան վաւերագրեր, որոնց մի թերթը հայերէն է, միւսը այլ լեզուով եւ տարբեր բովանդակութիւն ունին. նման վաւերագրերը որ լեզուի բաժանում դնել:

7. Կան կարուած «գործեր», որոնք բազմաթիւ վաւերագրեր ունեն մի քանի տարիների վերաբերող եւ տարբեր լեզուներով գրած, օրինակ՝ գործը սկսուել է 1850 թուին, վերջացել է 1857-ին, մէջը

⁴⁵ Այդպիսի թղթերի նմուշները ներկայացնում եմ յայտարարութեանս հետ:

կան հայերէն, վրացերէն, ռուսերէն, թուրքերէն լեզուներով վաւերագրեր: Դասաւորելիս գործը որ թուի տակ դնել 1850-ի⁴⁶, թէ 1857-ի⁴⁷, ցուցակագրելիս օտար լեզուների ցուցակագրութիւնն էլ հայերէնի բաժնում դնել, թէ՛ համապատասխան լեզուների բաժնում:

8. Վաւերագրերի մէջ գրողների ստորագրութիւնները յաճախ անթուղի է, ի՞նչ նշանակել ցուցակագրութեան թերթիկում գրողի կամ վաւերագրի հեղինակի անունն տեղ:

9. Կան բազմաստորագիր խնդիրներ, հանրագրութիւններ. ի՞նչ նշանակել գրողի բաժնում, բոլոր ստորագրութիւնները, թէ՛ միայն մի քանիսը: Ըստ իս միայն մի քանիսը, որովհետեւ երբեմն երկու հազար ստորագրութիւն ունեցող վաւերագրեր կան:

10. Մի ժամանակ ճեմարանի աշակերտները կազմել են արխիւի վաւերագրերից ոմանց համառօտ բովանդակութիւնը կամ արտագրել են պատճէնները. արդեօք այդ աշխատանքն էլ ցուցակագրել, թէ արխիւից հանել՝ պահելով միայն այն պատճէնները, որոնց բնագրերը չեն երեւայ արխիւում:

11. Կան «գործեր», որոնք թերթահան են եղած սկզբից եւ վերջից եւ յայտնի չէ ո՞ր թուի «գործ» է. իսկ գործի մէջ կան տարբեր թուերով վաւերագրեր, ո՞ր թուականի տակ դնել գործը:

12. Կան թուականներ, որոնցից շատ վաւերագրեր կան. կան նաեւ թուականներ, որոնցից 2-3 հատ վաւերագիր կայ. ի՞նչպէս տեղաւորել նման դէպքերում վաւերագրերը պահպանակներում. ըստ իս շատ վաւերագրերը մի քանի պահպանակներում, իսկ քիչ վաւերագրերի դէպքում մի քանի տարիներինը միացնել եւ մի պահպանակում տեղադրել:

13. Կան «ժողովածուներ» տարբեր վաւերագրերի, որոնք կազմուել են Մկրտիչ I կաթողիկոսի ժամանակ. վաւերագրերը տարբեր տարեթուերի են եւ բովանդակութեամբ էլ տարբեր են. ո՞ր թուականի տակ դնել այդ ժողովածուները եւ թողնել այդպէս կարուած, թէ իրարից զատել վաւերագրերը եւ ըստ տարեթուերի դասաւորել:

14. Արխիւում կան ձեռագիր աշխատութիւններ հոգեւորական եւ աշխարհական անձանց, որոնց ցուցակը կազմել եմ, ըստ իս դրանք պէտք է ուղարկել մատենադարան այնտեղ պահելու. արխիւում պահել միայն վաւերագրերը:

Ցուցակագրութիւնը հիմնական է լինելու եւ տպագրութիւնը:

Առայժմ այս հարցերի լուծում եմ խնդրում ցուցակագրութիւնը սկսելու՝ աւելացնելով, որ ինձ աշխատա-

կից տաք միայն մի հոգի, բայց աւելի պատրաստի ու հմուտ, քան մինչ այժմեաններն են եղել»⁴⁶:

Գիտ ծ. վրդ. Տէր-Ղազարեանի ներկայացրած գրութեան հիման վրայ մատենադարանի վարիչ Սեմ. Տէր-Յակոբեանն արխիւում կատարուած եւ կատարուելիք աշխատանքների մասին 1921 թ. յուլիսի 25ի № 38 գրութեամբ էջմիածնի գիտական ինստիտուտի կոլեգիայի նախագահին ներկայացնում է. «Սրանով ներկայացնում եմ Մատ. Արխիւի կարգաւորման վերաբերեալ նոյն բաժնի վար[ի]չի գրութեան պատճէնը: Այդ գրութեան մի քանի կէտերը (## 1-4), որոնք վերաբերում են կարգաւորման տեխնիկական խնդիրներին, արդէն ընթացք տրւած է: Մնացեալ կէտերի վերաբերմամբ նկատի են առնւած հետեւեալները՝

5/6. Տեղադրման համար ժամանակագրական կարգն ընդունելուց յետոյ պէտք է հետեւողականօրէն նոյն տեղադրական դասաւորման ենթարկել այլեւայլ լեզուներով եւ բովանդակութեամբ վաւերագրերը:

7. Կարւած գործերը, որոնք մի կենտրոնական անձի կամ դէպքի են վերաբերուած, պահուած են նոյնութեամբ, առանց տարիների վրայ բաժանելու՝ ընդունելով հնագոյն տարեթիւր դասաւորման թւական (դասակարգած ցուցակում իւրաքանչիւր վաւերագիր կունենայ, ըստ ինքեան, իւր տեղը ըստ նիւթի եւ ժամանակի):

8. Հնագրագէտ եւ վաւերագրերի ծագման շրջանի պատմութեան ծանօթ աշխատակից-ընկերների աշակցութեամբ աշխատել վերծանելու:

9. Հանրագրութիւնները եւս պէտք է նշանակուել ուղարկող համայնքի, հիմնարկութեան կամ ընկերութեան անունով՝ առաջ բերելով նաեւ ստորագրութիւններից կարեւորները:

10. Արխիւը պէտք է ունենայ պատճէնների բաժանմունք, որի համար առանձինն կը գեկուցուի - #10-ում յիշատակւած պատճէններն ու բովանդակագրութիւնները՝ վերստուգութեան ենթարկելուց յետոյ կը գետեղուել պատճէնների բաժնում:

11. Ստուգողական եւ մեկնական աշխատանքի միջոցով, ըստ կարելուցն վերականգնել վաւերագրի

⁴⁶ Տե՛ս Մատենադարանի արխիւ, «Մատենադարանի հիմնարկի արխիւային ֆօնդ», թղթայ. 74, վաւ. 116, թերթ 4-5 (օրինակ գրութեան, ձեռագիր) եւ 6-7 (բնագիր, ձեռագիր): Հմմտ. թղթայ. 74, վաւ. 136, թերթ 3, 5-7 (բնագիր, ձեռագիր՝ սեւագրութիւն): Յետագայում, յուլիսի 26ի գրութեամբ, Գիտ ծ. վարդապետը տեղեկացնում է Սեմ. Տէր-Յակոբեանին այն մասին, որ արխիւում կան հայերէն 253 եւ ռուսերէն 9 աշխատութիւններ այլեւայլ հեղինակների, ինչպէս նաեւ այլ թերի աշխատութիւններ, որոնք ուղարկում է մատենադարանում պահելու. տե՛ս անդ, թղթայ. 74, վաւ. 116, թերթ 8 եւ վաւ. 136, թերթ 2 (բնագիր, ձեռագիր՝ 2 օրինակից):

ծագման ճիշտ ժամանակը, հակառակ դէպքում գետեղել պատառիկների եւ ստուգելիների շարքում:

12. Իւրաքանչիւր տարւոյ նիւթը մի պահպանակում գետեղել, իսկ վաւերագրերի շատութեան դէպքում բաժանել մէկից աւելի հատոր-պահպանակների:

Հատուածական ցուցակի պատրաստ լինելուց յետոյ, խորհրդակցութեամբ կորոշւի համակարգած բաժանումների եւ օժանդակ աղիւսակների կազմութեան ձեւերը, որի մասին Մատ. վարիչը ունի իւր ծրագիր-գեկուցումը»⁴⁷:

Յետագայում, 1921 թ. սեպտեմբերի 27ի գրութեամբ, Գիւտ ծ. վրդ. Տէր-Ղազարեանը մատենադարանի վարիչ Սեմ. Տէր-Յակոբեանին ներկայացնում է արխիւում կատարուած հետեւեալ աշխատանքները. «Պարտք եմ համարում յայտնելու արխիւում մինչեւ այժմ կատարած հետեւեալ աշխատանքները.

ա. Արխիւում աշխատանքն սկսուել է սոյն թուի յունիսի 1ից: Բոլոր վաւերագրերը հանուել են, մաքրուել ու ըստ լեզուների բաժանուել:

բ. Բոլոր վաւերագրերի վրայ նշած են տարեթւերը. թւականներն անյայտ վաւերագրերը առանձնացուել են:

գ. Արխիւում գտնուած այլեւայլ հեղինակների ձեռագիր աշխատանքները առանձնացուել են, ապա եւ ցուցակագրուել ու յանձնուել թէ՛ աշխատանքները եւ թէ՛ ցուցակը մատենադարան:

դ. Արխիւը մատենադարանից տեղափոխուել է նոր շէնքը:

ե. Արխիւի բոլոր վաւերագրերը դասակարուել եւ ըստ տարիների դասակարուել են պահպաններում (1863-1883 թւերի վաւերագրերը մնացել են պահպանների վերեւում դրած):

⁴⁷ Տես անդ, թղթայ. 74, վաւ. 116, թերթ 9 (բնագիր, ձեռագիր): Պահպանուել է մի անստորագիր գրութիւն, որում 1921 թ. արխիւային փաստաթղթերի համար նշում են առաջ քաշուած հետեւեալ հարցերը. «1. Վաւերագրերը բաժանել ըստ լեզուների: 2. Ձատել թերի, պատուաստուածները՝ առանձին: 3. Մէջը եղած ձեռագիր աշխատանքները զատել: 4. Սկզբնական ցուցակագրութիւն կատարել՝ ծանօթանալու համար բովանդակութեանը. դրա համար խումբ խումբ կապկպելով. եւ ցուցակագրել՝ նշանակելով № վաւերագրին. թերթի համար՝ ոչ երեսներ. ո՛վ է գրել, ո՛րտեղից, էրբ, ո՛ւմ է ուղղուած, ո՛ր եւ՝ համառոտ բովանդակութիւնը: 5. Ցուցակագրութեան դէպքում՝ նշանակ №№-երը 1ից սկսած եւ շարունակութիւնը մինչեւ վերջը: Ցուցակագրել թերթիկներով՝ թղթի եւ ոչ կարտոնի, ապա թէ դասաւորել ըստ ժամադրականի, ըստ հեղինակների, ըստ բովանդակութեան: Պատրաստել տալ թղթապանակներ կարտոնից՝ վաւերագրերը մէջը պահելու եւ կապելու. թղթապանակի վրայ լինի ցուցանակ...» եւ այլն. տես անդ, թղթայ. 74, վաւ. 136, թերթ 9:

զ. Վաւերագրերը ցուցակագրուել են սկզբից (1676 թիւ) մինչեւ 1800 թիւը (հետը հաշւած յատուկ տպագրուած ցուցակագրական թերթիկներով. շուրջ 650 թերթիկ):

Արխիւում կան միայն վաւերագրեր ուսուելոց եւ հայերէն լեզուով տեղաւորուած 2 մեծ եւ 4 փոքր պահպաններում՝ սկսած 1676 թիւից մինչեւ 1910 թիւը:

Վաւերագրերը պահուում են յատուկ պատրաստուած պահպանակներում. սկզբից մինչեւ 1808 թիւը: 1809 թիւից սկսած մնացած վաւերագրերը մնում են առանց պահպանակների, որովհետեւ դեռ պատուիրած պահպանակները տպարանից չեն ստացուել⁴⁸: Նոյն օրը՝ սեպտեմբերի 27ին Գիւտ ծ. վարդապետը դիմում է ինստիտուտի կոլեգիային հոկտեմբերի 1ից մէկ ամսուայ արձակուրդ տալու խնդրանքով՝ նշելով. «որովհետեւ խիստ յոգնած եմ եւ յօդացալիս պատճառով կարիք ունեմ Տիխիսի հանքային ջրերից օգտուելու»⁴⁹: Եւ կոլեգիայի սեպտեմբերի 28ի № 239 որոշմամբ Գիւտ ծ. վարդապետին տրուում է «միամսեայ արձակուրդ յոգնածութիւնից կազդուրուելու եւ բժշկուելու համար»⁵⁰:

1921 թ. յուլիսի 14-15ի էջմիածնի կուստուպատմական ինստիտուտի կոլեգիայի №9 նիստում որոշում է կայացում դիմել էջմիածնի Սինոդին եւ խնդրել՝ ա. յանձնել ինստիտուտի արխիւին ի ցուցակագրութիւն եւ ի պահ Սինոդի արխիւի այն մասը, որն ունի միայն պատմական եւ կենցաղագրական նշանակութիւն, բ. դատարկել տպարանի դահլիճը եւ այնտեղից դուրս տանել արխիւի Սինոդին պէտքական մասը եւ գ. հարցը սկզբունքով որոշելու համար ժամանակ նշանակել մէկ շաբաթ⁵¹: Այնուհետեւ նիս-

⁴⁸ Տես անդ, թղթայ. 74, վաւ. 136, թերթ 1 (բնագիր, ձեռագիր):

⁴⁹ Տես անդ, թղթայ. 74, վաւ. 137, թերթ 16 (բնագիր, ձեռագիր):

⁵⁰ Տես անդ:

⁵¹ 1921 թ. օգոստոսի 12ի Կ. Մելիք-Օհանջանեանը տեղեկացնում է, որ Սինոդը խնդրում է նախ՝ տեղ յատկացնել արխիւի կարգաւորութեան համար եւ ապա միայն՝ խոստանում է քննել նրա մի մասը ինստիտուտի արխիւին միացնելու առաջարկը. տես անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 21բ, արձանագրութիւն №11 (բնագիր, ձեռագիր): Դրանից առաջ, 1921 թ. օգոստոսի 1ի № 67 գրութեամբ, Աբ. էջմիածնի Սինոդը դիմում է էջմիածնի կուստուպատմական ինստիտուտի վարչութեանը (գրութիւնը ստացուել է 3/VIII 1921 № 168). «Ս. էջմիածնի Սինոդը, ի պատասխան վարչութեանդ փարոսյս յուլիս 16ի թ. 224 գրութեան, պարտք է համարում յայտնել, որ Սինոդի արխիւը, քանի նա գտնուում էր իւր յայտուկ շէնքում, շար խնամքով պահուում էր եւ գործերը փեսակաւորուած եւ դասաւորուած էին յայտուկ շինուած դարակներում: Սակայն իբր պետական հիանդանոցի

տի նախագահ Կ. Մելիք-Օհանջանեանը զեկուցում է մամուլի եւ արխիւի բաժինների տեղի ներդրեան եւ արխիւի համար նոր բնակարան գտնելու անհրաժեշտութեան մասին, եւ որոշում է արխիւի համար յատկացնել հանրակացարանում երկու բնակարան, վերեւ եւ ներքեւ. վերեւում տեղաւորել արխիւը, իսկ ներքեւը տալ իբրեւ բնակարան արխիւի բաժնի վարիչին⁵²:

1921 թ. յուլիսի 28ի եւ 30ի էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի կոլեգիայի №10 նիստում Արխիւի վարիչ Գիւտ ծ. վարդապետ Տէր-Ղազարեանը գրատու զեկուցում-առաջարկներ է անում արխիւի ցուցակագրութեան հիմնական կարգերի որոշման մասին, քանի որ նախնական աշխատանքներն արդէն աւարտուել էին: Այս առթիւ կարեւոր բացատրութիւնները տալիս է մատենադարանի վարիչ Սեն. Տէր-Յակոբեանը⁵³: 1921 թ. օգոստոսի 14ի էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի կոլեգիայի №12 նիստին մատենադարանի վարիչ Սեն. Տէր-Յակոբեանը ներկայացնում է արխիւի ցուցակագրութեան համար անհրաժեշտ թերթիկի օրինակը, եւ որոշում է այն տպագրել տասը հազար օրինակ⁵⁴: ՀՍԽՀ Լուստղուկ-

վարչութեան կողմից Սինօղի շէնքը բռնագրուուեցաւ եւ պահանջուեցաւ երկու օրուայ ընթացքում դատարկել այն եւ յանձնել իրեն, մինչեւ իսկ չյարգուեցաւ գոնէ արխիւը իւր տեղում թողնելու խնդիրը, որպէս զի փշանալուց զերծ մնար, եւ զինուորների ձեռքով, զինուորական սայլերով շտապ կերպով փոխադրուեցաւ այս փայտանի դահլիճը, որի հետեւանքն է Սինօղի արխիւի «այժմեան անխնամ եւ իրար վերայ թափուած վիճակը», որի բարոյական պատասխանատուութիւնը ծանրանում է վերոյիշեալ աններելի հրամանը արձակողի վրայ: Սինօղը ուրախ է, որ վերջապէս ինստիտուտի ներկայ գիտական կոլլեգիան «որոշել է խնդրել դատարկել փայտանի դահլիճը եւ այնտեղից դուրս տանել Սինօղի արխիւը»: Հաւանօղէն մի յարմարաւոր տեղ, ուր հնարաւոր կլինի արխիւը վայելուց վիճակի մէջ պահել: Եւ քանի որ վանքի համարեալ թղթը շէնքերը, մինչեւ իսկ միաբանութեան հանրակացարանը բռնագրաման միջոցով իրապէս գտնուում են յիշեալ ինստիտուտի վարչութեան տրամադրութեան փակ, ուստի եւ Սինօղը խնդրում է յայտնել, թէ արխիւը ո՞ր է կարգադրուած փոխադրել, որպէս զի հնարաւորութիւն ունենայ փոխադրել, կարգաւորել եւ ըստ առաջնոյն գործերը տեսակաւորել, որից յետոյ միայն հնարաւորութիւն կունենայ պատասխանել նաեւ գրութեան ա. կէտին: Սինօղի անդամ՝ Գէորգ եպիսկոպոս, Կ.պ. ստեղծարարի՝ Ա. Հայկազունի»: տնս անդ, թղթայ. 74, վաւ. 130, թերթ 11-12 (բնագիր, ձեռագիր):

⁵² Տնս անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 17ա-բ, արձանագրութիւն №9 (բնագիր, ձեռագիր):

⁵³ Տնս անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 18բ, արձանագրութիւն №10 (բնագիր, ձեռագիր):

⁵⁴ Տնս անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 22ա, արձանագրութիւն №12 (բնագիր, ձեռագիր):

մատի էջմիածնի գիտական ինստիտուտի վարչութեան 1921 թ. սեպտեմբերի 27ի № 439 գրութեամբ կոմիտարի պաշտօնակատար Խ. Սամուէլեանը դիմում է մատենադարանապետ Սեն. Տէր-Յակոբեանին՝ շտապ ներկայացնել համառօտ տեղեկագիր արխիւային աշխատանքների կազմակերպման եւ արխիւային ներկայ ֆօնդի բովանդակութեան մասին⁵⁵: 1921 թ. դեկտեմբերի 31ի կոլեգիայի №23 նիստին ներկայացում է Գիւտ ծ. վրդ. Տէր-Ղազարեանի հրատարականը Արխիւի բաժնի վարիչի պաշտօնից⁵⁶: Հրատարականն ընդունում է 1922 թ. յունվարի 6ի կոլեգիայի №24 նիստին⁵⁷, եւ յունվարի 7ի № 3 հրամանով⁵⁸ Գիւտ ծ. վրդ. Տէր-Ղազարեանն ազատում է վարիչի պաշտօնից իր դիմումի համաձայն⁵⁹:

էջմիածնի գիտական ինստիտուտի 1921 թ. դեկտեմբերի 30ի ելից գրութիւնների մատենանում, № 65, կարդում ենք. «Կենտրոնի կարգադրութեան համաձայն, նախկին գաւառապետական շէնքից, այսօր ուղարկուած է Երեւան էջմիածնի նախկին գաւառական վարչութեան արխիւը, մօտ տասն սայլաբեռ, ինչպէս տեղեկացայ, վաճառային ապրանքների հետ փոխանակելու նպատակով: Արդ, որովհետեւ այդ արխիւը, ուստական տիրապետութեան սկզբնական շրջաններից սկսած, իւր մէջ պարունակելիս կը լինի էջմիածնի գաւառին վերաբերեալ պատմական, վիճակագրական եւ այլ նիւթեր, ուստի այսու խնդրում եմ, որ գրութեանս իմաստը հաղորդէք ուր որ անկ է, որպէսզի յատուկ քննութեամբ արխիւային պիտանի նիւթերը ընտրելիութեամբ դուրս բերելուց յետոյ մնացեալի հետ վարկին ինչպէս որ որոշուած է: Իսկ պիտանի նիւթերը որպէս էջմիածնի գաւառին վերաբերեալ, խնդրում եմ միջնորդել, որ յանձնի ինստիտուտի արխիւվին»⁶⁰: Անորոշ է, թէ ում է ուղղուած գրութիւնը:

1922 թ. յունվարի 29ի ինստիտուտի կոլեգիայի №26 նիստին ներկայացում է, որ նոր շտատներ են ստացուել, որի համաձայն ինստիտուտն ունենալու է 1 նախագահ եւ 5 անդամ միայն. կրճատուած են բոլոր աշխատակիցները, դիւանում թողնուած է միայն մի գործավար-հաշուապահ, ջնջուած են տնտեսական մասի վարիչը եւ գիտատնտեսական բոլոր

⁵⁵ Տնս անդ, թղթայ. 74, վաւ. 113, թերթ 6գ (բնագիր, ձեռագիր):

⁵⁶ Տնս անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 36բ, արձանագրութիւն №23 (բնագիր, ձեռագիր):

⁵⁷ Տնս անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 37ա-38ա, արձանագրութիւն №24 (բնագիր, ձեռագիր):

⁵⁸ Տնս անդ, թղթայ. 74, վաւ. 99, թերթ 26բ (ձեռագիր):

⁵⁹ Տնս անդ, թղթայ. 74, վաւ. 111, թերթ 15ա (ձեռագիր):

⁶⁰ Տնս անդ, թղթայ. 74, վաւ. 109, թերթ 1բ (ձեռագիր):

աշխատատեղերը, տպարանում նկատի չեն առնուել գրաշարի աշակերտները, արխիվի համար ոչ մի պաշտօնեայ չի թողնուած, ինչպէս եւ Զուարթնոց աւերակների ամբողջ շտապը շնջուած է: Նոր շտապը գործադրութեան մէջ է մտնելու 1922 թ. փետրվարի 1ից, որից յետոյ շտապից դուրս ոչ մի պաշտօնեայի ռոնիկ չի տրուի: Պահանջուած է մնացող պաշտօնեայութեան լիակատար ցուցակն ուղարկել Լուսժողկոմատ: Որոշուած է ցուցակից հանել Զուարթնոց աւերակների կառավարիչ Խաչիկ Ժ. վարդապետին (որ իբրեւ հոգեւորական չի կարող մնալ ինստիտուտի պաշտօնեայութեան մէջ), Աստուածատուր Խաչատրեանին եւ Սարգիս Բարսեղեանին, այլեւ Տարագրուսին՝ շտապների կրճատման պատճառով: Նոյն նիստին Թանգարանի վարիչ Գարեգին եպս. Յովսէփեանը ներկայացնում է արձանագրութիւն թանգարանը էջմիածնի վանական իշխանութեանը յանձնելու մասին՝ կաթողիկոսի ներկայացուցիչ Բագրատ արեւիկոսկոպոսի, ինստիտուտի ներկայացուցիչ եւ փոխնախագահ Սեն. Տէր-Յակոբեանի եւ թանգարանի վարիչ Գարեգին եպս. Յովսէփեանի ստորագրութիւններով: Նաեւ տեղեկացնում է ինստիտուտի անդամութիւնից դուրս գալու մասին՝ համաձայն Լուսժողկոմի կարգադրութեան (էջմիածնի միաբանները չեն կարող անդամակցել ինստիտուտին եւ պաշտօն վարել նրա հաստատութիւնների մէջ. տե՛ս արձան. ԻԳ. §1.բ.)⁶¹:

1922 թուականի՝ մակինցեանական ուղղագրական բարեփոխումներից յետոյ ներկայացում է Հայաստանի գիտական ինստիտուտի մատենադարանի կանոնադրութեան նախագիծը՝ հիմնական 3 գլուխներից (1. Մատենադարանի կոչումն ու նպատակը, 2. Մատենադարանի կազմութիւնը, 3. Մատենադարանի վարչութիւնը), 9 ենթակէտերից բաղկացած: Նախագիծի 2րդ գլխում ներկայացուած են Մատենադարանի 4 բաժանմունքները (Ձեռագրատուն, Արխիւ, Տպագրերի բաժանմունք, Ժողովրդական ընթերցանութեան վերաբերեալ գրքերի բաժանմունք), որտեղ արխիւի նպատակ նշուած է. «ա. Յուցակագրումն ու դասավորումն առձեռն նյութերի, բ. Հավաքումն Հայաստանի յեւլ Առաջավոր Ասիայի ուսումնասիրութեան տեսակետից արժեքավոր վավերագրերի»⁶²:

1922 թ. մայիսի 24ի կոլեգիայի №6 նիստի արձանագրութեան համաձայն՝ ՀՍԽՀ Լուսժողկոմը մայիսի 22ի թ. № 2997 գրութեամբ դիմում է հարտարապետ

Մուշեղ Մելիք-Հայկազեանին՝ հնարաւորութիւն տալու մատենադարանի երկաթի պահարանները տեղահան անելու եւ Երեւան տեղափոխելու համար: Մատենադարանի վարիչը զեկուցում է, որ անմիջապէս տեղահան անել հնարաւոր չէ, որովհետեւ ձեռագրերը, արխիւի նիւթերը եւ հին տպագրերը հարկաւոր է ուրիշ տեղ տանել, որպէսզի վարպետները կարողանան ձեռագրատան սենեակում աշխատել: Որոշուած է խնդրել Լուսժողկոմին երկու, առնուազն մի շաբաթ ժամանակ տալ մատնանշուած աշխատանքները կատարելու համար⁶³: 1922 թ. յուլիսի 14ի ինստիտուտի կոլեգիայի №9 նիստի արձանագրութեան համաձայն՝ լսեցին Լուսժողկոմի 29/VI 1922 թ. № 3615 գրութիւնը, որով յայտնում է, թէ էջմիածնի Սինոդի արխիւն անցնում է ինստիտուտի տրամադրութեան տակ, իսկ արխիւարիւս է նշանակուած Խ. Սամուէլեանը: Նախագահող Սեն. Տէր-Յակոբեանը զեկուցում է, որ ինքը հարց է յարուցել Լուսժողկոմի առաջ՝ տպարանի մեծ դահլիճը արխիւի համար յատկացնելու եւ ստացել է Լուսժողկոմի համաձայնութիւնն այն պայմանով, որ նախօրոք տպարանի բանուորքերի համար ուրիշ բնակարան հարուի: Որոշուած է միջոցներ ձեռնարկել որբերի համար բնակարան գտնելու եւ տպարանի դահլիճը, ուր առաջ զետեղուած էր արխիւը, դատարկել տալու համար, իսկ Խ. Սամուէլեանին խնդրել առայժմ ստանձնել մատենադարանում եղած արխիւը եւ ցուցակագրութիւնը շարունակել⁶⁴: 1922 թ. յուլիսի 31ի № 25 հրամանով⁶⁵ յուլիսի 18ից մատենադարանի արխիւարիւս է հաստատուած Խ. Սամուէլեանը, իսկ օգոստոսի 15ից հետագուած է համարուած 1922 թ. օգոստոսի 21ի № 26 հրամանի⁶⁶ համաձայն:

1922 թ. յուլիսի 20ի ինստիտուտի կոլեգիայի №10 նիստին գիտաբարտուղար Ե. Տէր-Մինասեանը զեկուցում է իր գործողման մասին Երեւան: Տեղեկացնում է, որ «ա. «Բանբեր»ի բոլոր հաշիւները վերջացրել է, եւ ընկ. Լուսժողկոմը կարգադրել է դրամները դուրս գրել, սակայն դեռ դրամ չէ ստացել՝ զանձարանում դրամ չլինելու պատճառով: բ. Նոյն պատճառով չի կարողացել ստանալ ծառայողների յունիս ամսի ռոնիկները եւ մատենադարանի գնումների եւ տնտ. ծախքերի համար բաց թողնուած աւանաները: գ. Երեւանում պարզուել է, որ Լուսժողկոմատում մտադրութիւն կայ կրճատ

⁶³ Տէն անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 47ա, արձանագրութիւն №6 (բնագիր, ձեռագիր):

⁶⁴ Տէն անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 49ա, արձանագրութիւն №9 (բնագիր, ձեռագիր):

⁶⁵ Տէն անդ, թղթայ. 74, վաւ. 99, թերթ 29բ (ձեռագիր):

⁶⁶ Տէն անդ:

⁶¹ Տէն անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 39բ-40ա, արձանագրութիւն №26 (բնագիր, ձեռագիր):

⁶² Տէն անդ, թղթայ. 74, վաւ. 97ա, 97բ (ձեռագիր, մեքենագիր, երկուսն էլ՝ անստորագիր եւ անթուական):

տելու ինստիտուտի կազմը (14ից դարձնել 8) եւ վերակազմել այն՝ ինստիտուտի անդամ նշանակելով թոշակառուներից ոմանց: Ծրագրուած նոր շտատը թողնում է 1 նախագահ, 1 քարտուղար, 1 մատենադարանապետ, 1 գործավար-հաշուապահ, 2 գրապահ-ցուցակագրող եւ 2 ծառայ. ընդամենը՝ 8 հոգի»⁶⁷:

1922 թ. հոկտեմբերի 7ի էջմիածնի կոպուրպատմական ինստիտուտի կոլեգիայի №12 նիստի արձանագրութեան համաձայն՝ նախագահ Սեն. Տէր-Յակոբեանը զեկուցում է ինստիտուտի շտատների նոր կրճատման մասին, որի առթիւ ներկայացնում է Լուսժողովուարի 4/X1922 թ. № 5119 գրութիւնը: Այդ գրութեան համաձայն՝ թողնում են պաշտօնի մէջ մէկ նախագահ (որը եւ մատենադարանի վարիչն է), մէկ ցուցակագրող եւ մէկ պահակ, եւ առաջարկում է անմիջապէս ազատել այն աշխատակիցներին, որոնց պաշտօնները չեն նախատեսուած այդ շտատով, եւ կոմիսարիատ ուղարկել երկու ցուցակ՝ 1. պաշտօնի մէջ մնացածների եւ 2. պաշտօնից ազատուածների: Ըստ այդմ՝ ազատուեցին գիտնական Բարտուղար Ե. Տէր-Մինասեանը, գրապահ-ցուցակագրող Սրբ. Սամուէլեանը եւ ծառայող Ս. Բարսեղեանը⁶⁸:

1922-1925 թթ. ընթացքում Մատենադարանի ձեռագրական հաւաքածուների մասին խօսելիս՝ Օ. Եգանեանը նշում է, որ 1924 թուականի ապրիլի 8ին Գերագոյն հոգեւոր խորհրդի յանձնարարութեամբ Մ. Տէր-Մովսիսեանը գնում է Լենինական, հաւաքում Բաղաբի եկեղեցիներում եղած բոլոր ձեռագրերը եւ բերելով էջմիածին՝ նոյն թուականի ապրիլի 24ին ամբողջութեամբ յանձնում է Մատենադարանին: Մ. Տէր-Մովսիսեանի՝ այդ կապակցութեամբ կազմած ցուցակում⁶⁹ յիշատակում է Եփրեմ կաթողիկոսի 1 կոնդակ: Այնուհետեւ նկատում է, որ յատուկ նշում չլինելու պատճառով կոնդակի (միւս նիւթերի հետ միասին) արդի համարը դեռեւս մնում է անորոշ⁷⁰: 1924 թ. դեկտեմբերին Բաբուի եւ Թուրքեստանի թեմակալ առաջնորդ Մատթէոս Եպիսկոպոսը Գերագոյն հոգեւոր խորհրդի հասցեով Բաբուից էջմիածին է ուղարկում 12 ձեռագիր, որոնք Մատենադարանին են հանձնուում 1925 թ. յունվարի 15ին⁷¹: Այդ 12 ձեռագրերից մէկը,

որ եղել է Յովսէփ Արղութեանի Յիշատակարանը, ժամանակին մուծուել է Մատենադարանի արխիւ, իսկ մնացած 11 ձեռագրերը՝ «Խառն ժողովածու»ի մէջ⁷²: 1925 թ. Մոսկուայի Լազարեան հեմարանից բերուած ձեռագրերի մէջ, երբ տեղ հասած սնդուկները բացում են, ինչպէս նշուած է Հ. Յովհաննիսեանի, Ս. Տէր-Յակոբեանի, Վ. Թոթովենցի եւ Գ. Ռոտինեանցի՝ այդ առթիւ կազմած 2.1.1926 թ. արձանագրութեան մէջ... № 113ի տակ արձանագրուած Քարոզգիրքը փոխարինուած է եղել արխիւային զանազան թղթերով⁷³:

1924 թ. (կամ յետոյ) պահպանուել է էջմիածնի թանգարանի իրերի ցուցակը, որտեղ 22բ թերթում յիշատակուած են արխիւային հետեւեալ նիւթերը. «499 Եփրեմ կաթողիկոսի փոքրագիր կոնդակ...: 502 էջմիածնի եւ յարակից վանքերի նկարներով կոնդակի սկզբնագործ: 503 Յովհ. կաթողիկոսի ընդհ. կոնդակ: 504 Մի տաճկական ֆիրման մանրանկարներով...: 563 Լազարեան ճեմարանի վկայական...՝ տրված Ն. Սրբութեան Տ.Տ. Գէորգ Ե կաթողիկոսին 1912 թ. 14 յունիսի հայերէն եւ ռուսերէն լեզուներով: 564 Ուղերձ Ն. Սրբ. Տ.Տ. Գէորգ Ե կաթողիկոսին Մոսկուայի Հայոց եկեղեցու երգեցիկ խմբի կողմից, մատուցուած 14 յունիսի 1912 թ. ստորագրութեամբ երաժշտագէտ Ե. Բաղդասարեանի եւ իւր խմբի անդամներին: 565 Ուղերձ Թիֆլիսի ուսուցիչների եւ վարժուհիների միութեան կողմից Ն. Սրբութեան Տ.Տ. Գէորգ Ե կաթողիկոսին, մատուցուած 1912 թ. յունիսի 25ին: 566 Ուղերձ տպուած հայերէն եւ ռուսերէն լեզուներով Արմաւի հայ ուսանողների կողմից Ն. Սրբութեան Տ.Տ. Գէորգ Ե կաթողիկոսի անունով եւ մատուցուած 19 յուլիսի 1912 թ.: 567 Լազարեան ճեմարանի ուղերձը նորին Սրբութեան Տ.Տ. Գէորգ Ե կաթողիկոսի անունով, տպուած հայ-ռուս լեզուներով եւ մատուցուած 5 հոկտ. 1913 թ. տառերի գիւտի 1500 ամեակի եւ տպագրութեան 400 ամեակի առթիւ: 568

⁶⁷ Տեն անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 49բ, արձանագրութիւն №10 (բնագիր, ձեռագիր):

⁶⁸ Տեն անդ, թղթայ. 75, վաւ. 21, թերթ 50բ, արձանագրութիւն №10 (բնագիր, ձեռագիր):

⁶⁹ Ցուցակ Լենինականից ստացուած ձեռագրերի, Անտիպ ձեռագրացուցակների ֆօնդ, № 29բ:

⁷⁰ Տեն Օ. Եգանեան, նշ. աշխ, էջ 120-121:

⁷¹ Անտիպ ձեռագրացուցակների ֆօնդ, № 29բ:

⁷² Տեն Օ. Եգանեան, նշ. աշխ, էջ 121: Մատենադարանի արխիւում Յ. Արղութեանի՝ 1779 թուի Յիշատակարանը գրանցուած է եղել ԿԴի 7րդ թղթապանակի 4րդ վաւերագրի համարի ներքոյ, որը, 1950 թ. մայիսի 10ի № 1 արձանագրութեամբ, յանձնուել է Ձեռագրատուն. տնն Մատենադարանի արխիւ, թղթայ. 8439, վաւ. 8, արձանագրութիւն № 1, էջ 3, կէտ 9:

⁷³ «Այս թղթերը մինչեւ 1954 թուականը պահուում էին հայերէն ձեռագրերի շարքում № 6745ի տակ, որից յետոյ մուծուել են Մատենադարանի արխիւ, փոխարէնը № 6745ի տակ գրանցելով № 1092 պատահիկը». տնն Օ. Եգանեան, նշ. աշխ, էջ 132-133: Այդ փաստաթղթերը ԺԸ դարի կալուածագրեր են, գրանցուել են ԿԴի 252 թղթապանակի 145-150 համարների ներքոյ. տնն Մատենադարանի արխիւ, թղթայ. 8439, վաւ. 13, արձանագրութիւն 17/9-1954, էջ 3:

Ուղերձ Թիֆլիսի հայ հաստատութիւնների կողմից մատուցուած Ն. Սրբ. Տ.Տ. Գէորգ կաթողիկոսին 1916 թ. ստորագրութեամբ հաստատութիւնների նախագահների, վարչութեան անդամների»⁷⁴:

ՀՍԽՀ Ժողովուրդներ 1939 թ. յուլիսի 15ի № 5320 հրամանագրով⁷⁵ պարտաւորեցնում էր ֆաղափային ու շրջանային խորհուրդների գործկոմներին եկեղեցապատկան ձեռագրերն ու հնուրիները հաւաքել ու յանձնել Մատենադարանին ու Պատմութեան քանդարանին: Նման մի շրջաբերական-հրամանագրով⁷⁶ Հայաստանի լուսատուրութեան ժողովրդական կոմիսարիատը նոյնպէս պարտաւորեցնում է իր ենթակայութեան տակ գտնուող բոլոր գերատեսչութիւններին, գիտահետազոտական հիմնարկութիւններին, դպրոցներին եւ գրադարաններին իրենց մօտ գտնուող բոլոր տեսակի հին ձեռագրերը, կաթողիկոսական կոնդակները, ինչպէս եւ հմայիլները պարտադիր կարգով փոխանցել պետական կենտրոնական ձեռագրատուն-մատենադարանին: Նոյն թուականին Մատենադարանը էջմիածնից տեղափոխուում է Երեւան եւ ժամանակաւորապէս զբաղեցնում Ալ. Մեանիկեանի անուան Պետական համարային գրադարանի (ներկայիս Ազգային գրադարանի) համար կառուցուած շէմֆի 2րդ հարկի մի մասը եւ վերին հարկը գրեթէ ամբողջութեամբ: Այստեղ աւելի մեծ թափով են շարունակուում ինչպէս ձեռագրերի, այնպէս եւ արխիւային տասնեակ հազարաւոր փաստաթղթերի կարգաւորման, գոյնագրման եւ համառօտ նկարագրութեան աշխատանքները: *«Մատենադարանի արխիւային ֆօնդերում եղած հազարաւոր վաւերագրերը,- գրում է Ա. Աղամեանը,- համառօտ բնութագրման են ենթարկուում ցուցակներում, որից իմացուում է, թէ ի՞նչ լեզուով է գրուած այն, ո՞ւմ է հասցէագրուած եւ ո՞վ է հեղինակը, ինչպէս նաեւ գրութեան տարեթիւր, վայրը, վավերագրերի էջերի քանակը, շափը, ֆիզիկական վիճակը, ո՞ր համարի թղթապանակում է տեղադրուած վաւերագիրը եւ հերթական ո՞ր համարի տակ»⁷⁷:* Այդ ցուցակների մէջ, անշուշտ, կան, եւ չէին կարող չլինել, թերութիւններ ու սխալներ, քանի որ նրանք կազմուել են ոչ թէ մանրակրկիտ գիտական նկարագրութիւնների, այլ գերազանցապէս գոյնամատեանների տուեալների հիման վրայ: Այնուամենայնիւ, դրանք օգնում եւ դեռ երկար ժամանակ կշարունակեն օգնել Մատենադարանում

աշխատող եւ այլ վայրերից ժամանող մասնագէտներին գտնելու իրենց հետաքրքրող նիւթերի մասին տեղեկութիւններ⁷⁸: Ժամանակին այդ ցուցակների նշանակութիւնը բարձր է գնահատուել գիտական հասարակայնութեան կողմից: Յիշատակում է, որ 1944 թ. ակադեմիկոս Եւգենի Տարլէն այցելելով Մատենադարան եւ ծանօթանալով ցուցակների պատրաստի մասերին՝ Մատենադարանի յուշերի մատեանում գրել է. *«Շատ արխիւներ կարող էին սովորել այստեղ զարմանալի խելացի ու ամբողջական այսպիսի ցուցակներ կազմելու գործը»⁷⁹:* Այդ ժամանակ արդէն Արխիւային բաժինն ունէր իր ֆօնդերի ուղեցոյց ցանկը եւ բոլոր ֆօնդերի (Կաթողիկոսական, Երիցեանի, Անհատական արխիւների, Լազարեանների արխիւի, Սինոդի եւ այլն) փաստաթղթերի անտացիոն ցուցակները, նիւթերի թեմատիկ ֆարտարանը: Այդ ցուցակներում նկարագրուած ու անտացիայի են ենթարկուած արխիւային բոլոր փաստաթղթերն առանձին-առանձին: *«Ուսումնասիրողը,- գրում է Լ. Խաչիկեանը,- միայն այս ցուցակները ձեռքի տակ ունենալով, առանց փաստաթղթերի դիմելու, հեշտութեամբ գտնում է շուրջ 200.000 արխիւային փաստաթղթերի ծովում իրեն հետաքրքրող հարցերին վերաբերող նիւթերը»⁸⁰:* Համաձայն Կ. Իզբաշեանի 1955 թ. յուլիսի 13ին կազմած Մատենադարանի նոր պահոցների գրապահարանների շափերի հաշուարկների (*«Հաշուարկ Մատենադարանի գրապահոցների, արխիւային նիւթերի, գրադարանների ֆօնդերի»* խորագրով, ռուսերէն) Մատենադարանի արխիւում եղել է 2300 թղթապանակ: Նա գրում է. *«Архивные документы находятся в папках, в подавляющем большинстве случаев имеющих размеры 40x27x25 см. Нынешнее количество папок равно 2300, таким образом количество погонных метров папок, уложенных в горизонтальном положении, параллельно стеллажам равно 40x2300= 9200 см = 920 м»⁸¹:*

* * *

Ներկայումս Մատենադարանի արխիւում պահուում են 509 հազարից աւելի մշակուած ու նկարագրուած փաստաթղթեր, շուրջ այդքան էլ մշակութային

⁷⁴ Տե՛ս Մատենադարանի արխիւ, «Մատենադարանի հիմնարկի արխիւային ֆօնդ», թղթայ. 74, վաւ. 79:
⁷⁵ Տե՛ս անդ, թղթայ. 79, վաւ. 8:
⁷⁶ Տե՛ս անդ, թղթայ. 79, վաւ. 18:
⁷⁷ Տե՛ս Ա. Աղամեան, նշ. աշխ., էջ 1:
 2 - ՅՈՒՅԼԿԻ ԿԼԹՈՒԿԻՄՈՒԿՆԵՆԻ ԻԻԻԼԵԻ

⁷⁸ Տե՛ս Լ. Խաչիկեան, Աշխատութիւններ, նշ. աշխ., էջ 1026:
⁷⁹ Տե՛ս անդ, էջ 1027: Հմմտ. Ա. Աղամեան, նշ. աշխ., էջ 1:
⁸⁰ Տե՛ս Լ. Խաչիկեան, նշ. աշխ., էջ 1011-1012:
⁸¹ Տե՛ս Մատենադարանի արխիւ, «Մատենադարանի հիմնարկի արխիւային ֆօնդ», թղթայ. 8473, վաւ. 15:

գործիչների՝ մշակման ենթակայ ֆոնդեր եւ այլ օժանդակ նիւթեր ինչպէս հայերէն, այնպէս եւ ասորերէն, հնդկերէն, ռուսերէն, վրացերէն, պարսկերէն, օսմաներէն եւ եւրոպական տարբեր լեզուներով (իտալերէն, ֆրանսերէն, գերմաներէն, ռումիներէն, հունգարերէն, յունարէն, անգլերէն) գրուած փաստագրեր: Դրանք շատ արժէքաւոր տեղեկութիւններ են պարունակում հայ եւ միւս ժողովուրդների տնտեսական, քաղաքական, վիճակագրական, գրական, մանկավարժական, կրօնական եւ բազմաթիւ այլ հարցերի վերաբերեալ: Կարեւոր են հայ կաթողիկոսների՝ օտար թագաւորներին ուղղուած կոնդակները եւ նրանցից ստացած պատասխան հրովարտակներն ու գրութիւնները: Տնտեսական վիճակը պատկերացնելու համար կարեւոր են նաեւ ԺԿ եւ յետագայ դարերից պահպանուած իլիսանական, պարսից շահերի, թուրք սուլթանների հրովարտակները: Արժէքաւոր են հայ կաթողիկոսներին ու մելիքներին եկատերինայ 2րդի 1768 թ. եւ Պաւել 1ինի 1798 թ. ուղղած հրովարտակները, որոնցով նրանք յայտնում են հայ ժողովրդին իրենց հովանաւորութեան տակ վերցնելու մասին: Ուշագրավ է Նապոլեոն 1ին Բոնապարտ կայսեր 1809 թ. մագաղաթ հրովարտակը՝ տրուած պատուոյ լեզունի սպայ Պիեր Շամբոնին: Հետազոտողները հաւաստի փաստաթղթեր կգտնեն ազգային-ազատագրական շարժումների, 1812 թ. ռուս-ֆրանսիական, 1826-1828 թթ. ռուս-պարսկական, 1828-1829, 1853-1855, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների, դեկաբրիստների ապստամբութեան, ռուսական կայսրերի, հայկական գաղութների (Ռուսաստան, Պարսկաստան, Հնդկաստան, Թուրքիայ, Լեհաստան, Ռումինիայ եւ այլն), եկեղեցական թեմերի, դպրոցների, նեմարանների մասին: Նիւթեր կան հայ եւ օտար ռազմաւարական, գրականութեան ու արուեստի եւ ականաւոր այլ գործիչների մասին՝ Իլիսան Աբու Սայիդ Բահադուր (1330 թ.), Սեֆեան Շահ Աբաս Ա. (1603 թ.), ռուսաց կայսրուհի եկատերինայ Բ (1768 թ.), ռուսաց կայսրեր Պաւել Ա. (1798 թ.), Ալեքսանդր Ա. (1809 թ.), Նիկոլայ Ա. (1831, 1843 թթ.), Ալեքսանդր Բ (1859, 1866 թթ.), Ալեքսանդր Գ (1885, 1893 թթ.), Նիկոլայ Բ (1909 թ.), Նադիր շահ (1738 թ.), վրաց թագաւոր Հերակլ Բ (1783 թ.), շահ Ֆաթի Ալի Ղաջար (1820 թ.), Խ. Աբովեան, Պարրոտ, Արիս, Վագներ, Յովհաննէս, Յովակիմ եւ Խաչատուր Լազարեաններ, Այվազովսկիներ, Մսերեաններ, Մաղաֆիայ Օրմանեան, Նիկողայոս Ադոնց, Հաֆստհաուզէն, Գյոթէ, Մելլէ, Նիկողայոս Մառ, Յոզէֆ Կարստ, Բրոսսէ, Յոզէֆ Մակուարտ, Կարապետ Բասմաջեան, Ֆրանց Վերֆել եւ ուրիշներ: Մա-

տենադարանի արխիւային հաւաքածոնում են պահուում նաեւ հայ եւ եւրոպացի հայագէտների, հայոց հոգեւոր առաջնորդների, մշակոյթի ու գիտութեան առաջատարների ինքնագրերը (յօդուածներ, աշխատութիւններ, նամակներ, անձնական փաստաթղթեր), լուսանկարները: Արժէքաւոր ֆոնդերից են Ներսէս Աշտարակեցու, Լազարեանների, Գարեգին Յովսէփեանի, Յակոբ Մանանդեանի, Արշակ Ալպոյանեանի եւ այլոց արխիւային ֆոնդերը: Մատենադարանը շարունակում է համալրուել արխիւային նոր ֆոնդերով: Այդ գործում իրենց ներդրումն ունեն առանձին անհատներ, որոնց ջանքերի շնորհիւ տարբեր վայրերից հաւաքուում եւ Մատենադարանին են նուիրաբերուում արխիւային տարաբնոյթ հաւաքածոներ: Վերջին տարիների ձեռքբերումներից են Համագասպ եւ Վիկտոր Համբարձումեանների, Սիրարփի Տէր-Ներսիսեանի, Վարազ Առաքելեանի, Խաչիկ Սամուելեանի, Նուպար Դաւիթեանի, Լեւոն Մկրտչեանի, Զարլո Դաուսեթի, Կոստան եւ Արմէն Զարեանների եւ այլոց ֆոնդերը, Աւոյ Յովհաննիսեանի, Ռուբէն Գալչեանի, Շաւարշ Միսակեանի, Գոհարիկ Ղազարոսեանի անձնական հաւաքածոները, Եղիշէ Զարէնցի ձեռագրերը, Ադամայի Հայոց առաջնորդարանի գործավարական մատենաները եւ այլն:

Ստորեւ ներկայացուած են տեղեկութիւններ Մատենադարանի արխիւային հաւաքածուի ֆոնդերի մասին եւ, առաջաբանը չձանաբերուելու նպատակով, արտայայտել ենք միայն թղթապանակների գոյ-հաճամարները, պարունակած վաւերագրերի միաւորների քանակը եւ ծայրային թուականները⁸²:

Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՒԱՆԻ ԱՐԽԻՒՅԻՆ ՖՕՆԴԻ

Տեղադրուած է 1-262 թղթապանակներում, պարունակում է 42123 միւտր⁸³ վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1441-1975 թթ.:

Բ. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՐԽԻՒՆԵՐԻ ՖՕՆԴԵՐ

ա. Գիտական մշակման ենթարկուած ֆոնդեր

1 Աբրահամեան Յարութիւնի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 98-99 թղթապանակներում, պարունակում է 474 միւտր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1421-1937 թթ.:

2 Ալաջալովների արխիւային ֆոնդ – տեղադրուած է 263 թղթապանակում, պարունակում է 28

⁸² Ֆոնդերի մասին տեղեկութիւնները քաղել ենք գոյքամատեաններից, Արխիւի ցուցակների ցուցակից եւ Ա. Ադամեանի նշուած աշխատութիւնից:

⁸³ Տես սնտ ծնթ. 1:

միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները նշուած չեն:

3 Աղաքէկեան Մարկոսի արխիային ֆօնդ – տեղադրուած է 184^{ա-բ} թղթապանակներում, պարունակում է 5 հատոր ձեռագիր գրքեր, ծայրային թուականները՝ 1896-1897 թթ.:

4 Ամատունի Սահակ վրդ-ի արխիային ֆօնդ – տեղադրուած է 34-40 թղթապանակներում, պարունակում է 296 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1844-1919 թթ.:

5 Այլ անձանց արխիային ֆօնդ – տեղադրուած է 181-183 թղթապանակներում, պարունակում է 89 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1876-1913 թթ.:

6 Այլ եւ այլ հեղինակների արխիային ֆօնդ – տեղադրուած է 240ա-ժ թղթապանակներում, վաերագրերի միատրների քանակը եւ ծայրային թուականները՝ անորոշ:

7 Աշտարակեցի Ներսէսի արխիային ֆօնդ – տեղադրուած է 164^{ա-բ}-167^{ա-բ} թղթապանակներում, պարունակում է 5357 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1808-1849 թթ.:

8 Առաքելեան Վարագի արխիային ֆօնդ – ֆօնդում առկայ է 581 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1920-2010 թթ.:

9 Բագրատունի Կարապետ արքեպս-ի արխիային ֆօնդ – տեղադրուած է 163^{ա-գ} թղթապանակներում, պարունակում է 1838 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1801-1856 թթ.:

10 Բիզանդացի Նորայրի արխիային ֆօնդ – ֆօնդում, 279 գրանցման միատրով, պարունակում է 2149 վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1849-1915 թթ.:

11 Գետրգեան Վախթանգի արխիային ֆօնդ – տեղադրուած է 255 թղթապանակում, պարունակում է 19 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1954-1964 թթ.:

12 Դատուէթ Զարգի արխիային ֆօնդ – գրանցման 684 միատրով պարունակում է 715 վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1227-2005 թթ.:

13 Երիցեան Ալեքսանդրի արխիային ֆօնդ – տեղադրուած է 147-162 թղթապանակներում, պարունակում է 4604 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1631-1910 թթ.:

14 Զամինեան Աբրահամի արխիային ֆօնդ – տեղադրուած է 232ա-բ թղթապանակներում, պարունակում է 134 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1799-1931 թթ.:

15 Զանազան հեղինակների արխիային ֆօնդ – տեղադրուած է 41-68^{ա-բ} թղթապանակներում, պարունակում է 420 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1667-1935 թթ.:

16 Թայիրեան Հոնիփսիմէի արխիային ֆօնդ – առկայ է 190 վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1876-1926 թթ.:

17 Իզմիրլեան Մաթէոս կթղ-ի արխիային ֆօնդ – տեղադրուած է 10-14 թղթապանակներում, պարունակում է 633 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1635-1910 թթ.:

18 Լալաֆարեան Սամսոնի արխիային ֆօնդ – առկայ է 786 վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1893-1991 թթ.:

19 Լեոյի արխիային ֆօնդ – առկայ է 239 վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1820-1946 թթ.:

20 Լիսիցեան Լեոնի արխիային ֆօնդ – տեղադրուած է 261 թղթապանակում, պարունակում է 11 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1920-1922 թթ.:

21 Լվով քաղաքի հայկական եկեղեցու արխիային ֆօնդ – առկայ է 38 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1785-1949 թթ.:

22 Խաչիկեան Լեոնի արխիային ֆօնդ – ֆօնդում, գրանցման 909 միատրով, պարունակում է 1204 վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1940-2008 թթ.:

23 Խրիմեան Մկրտիչ կթղ-ի արխիային ֆօնդ – տեղադրուած է 101-117 թղթապանակներում, պարունակում է 7986 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1893-1907 թթ.:

24 Կարստ Յոզէֆի արխիային ֆօնդ – տեղադրուած է 249-254 թղթապանակներում, պարունակում է 38 բազմաթերթ գործեր, ծայրային թուականները նշուած չեն:

25 Հազարեան Յարութիմի արխիային ֆօնդ – տեղադրուած է 259 թղթապանակում, պարունակում է 11 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1942-1970 թթ.:

26 Ղազարոսեան Գոհարիկի արխիային ֆօնդ – 1441 գրանցման միատրով պարունակում է 1885 վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1919-2015 թթ.:

27 Մատենադարանի ձեռագրատնից ստացուած վաերագրեր – տեղադրուած է 78-80 թղթապանակներում, պարունակում է 81 միատր վաերագիր, վաերագրերի ծայրային թուականները՝ 1776-1914 թթ.:

28 Մադրասի հայկական եկեղեցու արխիվային ֆոնդ – տեղադրում է 258 թղթապանակում, պարունակում է 21 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1742-1863 թթ.:

29 Մալխասեան Ստեփանի արխիվային ֆոնդ – 4538 գրանցման միատուրով պարունակում է 4620 վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1876-2018 թթ.:

30 Մանանդեան Արսէնի արխիվային ֆոնդ – տեղադրում է 231 թղթապանակում, պարունակում է 56 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1924-1936 թթ.:

31 Մանանդեան Յակոբի արխիվային ֆոնդ – ֆոնդում, 3117 գրանցման միատուրով, պարունակում է 3348 վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1894-1955 թթ.:

32 Մանուկեան Յովհաննէսի արխիվային ֆոնդ – տեղադրում է 234 թղթապանակում, պարունակում է 19 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1934-1939 թթ.:

33 Մաշտոցի ծննդեան 1600-ամեակին նուիրում յոբելեանի արխիվային ֆոնդ – տեղադրում է 247 թղթապանակում, պարունակում է 61 միատուր վաւերագիր, վաւերագրերի թուականը՝ 1962 թ.:

34 Մառի նամակների արխիվային ֆոնդ – տեղադրում է 218 թղթապանակում, պարունակում է 81 միատուր (Մառի գրած նամակները), ծայրային թուականները՝ 1890-1931 թթ.:

35 Մարկոսեան Ռաֆայէլի ընկերակցութեան արխիվային ֆոնդ – տեղադրում է 256 թղթապանակում, պարունակում է 70 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1920-1967 թթ.:

36 Մարկոսեան Յոզէֆի արխիվային ֆոնդ – տեղադրում է 262 թղթապանակում, պարունակում է 11 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1896-1938 թթ.:

37 Մախոյեան Մեսրոպ վրդ-ի արխիվային ֆոնդ – տեղադրում է 25-33 թղթապանակներում, պարունակում է 802 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1799-1933 թթ.:

38 Մէլիֆ-Շահնազարեանների արխիվային ֆոնդ – տեղադրում է 241 թղթապանակում, պարունակում է 324 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1538-1867 թթ.:

39 Մէլիֆ-Օհանջանեան Կարօյի արխիվային ֆոնդ – 2614 գրանցման միատուրով առկայ է 2900 վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1881-1995 թթ.:

40 Միսաֆեաններ Շաարշ եւ Արփիկի արխիվային ֆոնդ – Հաւաքածուում պահպանում է 1806 միատուրով 1839 փաստաթուղթ:

41 Մսերեանների արխիվային ֆոնդ – տեղադրում է 188-209 թղթապանակներում, պարունակում է 2466 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1786-1931 թթ.:

42 Յովհաննէս Պետրոսի Մամելիկի արխիվային ֆոնդ – տեղադրում է 248 թղթապանակում, պարունակում է 27 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1806-1962 թթ.:

43 Յովհաննիսեան Աշոտի արխիվային ֆոնդ – տեղադրում է 243-244¹⁻²⁵ թղթապանակներում, պարունակում է 2239 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1766-1973 թթ.:

44 Յովհաննիսեան Նշանի արխիվային ֆոնդ – տեղադրում է 260 թղթապանակում, պարունակում է 1 միատուր վաւերագիր, թուականը նշում է չէ:

45 Յովսէփեան Գարեգինի արխիվային ֆոնդ – տեղադրում է 83-97 թղթապանակներում, պարունակում է 1708 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1844-1939 թթ.:

46 Նոր Նախիջեանի Հոգաբարձութեան⁸⁴ արխիվային ֆոնդ – տեղադրում է 233 թղթապանակում, պարունակում է 259 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1783-1934 թթ.:

47 Չոմարեան Սուրէնի արխիվային ֆոնդ – տեղադրում է 1-7 թղթապանակում, պարունակում է 284 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները նշում չեն:

48 Պահրի Զարուհու արխիվային ֆոնդ – 2774 գրանցման միատուրով պարունակում է 3065 վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1874-1991 թթ.:

49 Պատկանեանների արխիվային ֆոնդ – տեղադրում է 135-146 թղթապանակներում, պարունակում է 628 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1783-1913 թթ.:

50 Պիատի արխիվային ֆոնդ (ֆրանսիական հիւպատոս) – տեղադրում է 257 թղթապանակում, պարունակում է 10 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1896-1969 թթ.:

51 Ռոստոմեան Նիկիտայի արխիվային ֆոնդ – տեղադրում է 245 թղթապանակում, պարունակում է 54 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1721-1961 թթ.:

⁸⁴ Ա. Աղամեանի մօտ՝ Նոր Նախիջեանի Հայոց եկեղեցու. տե՛ս Ա. Աղամեան, նշ. աշխ., էջ 125:

52 Սմբատեան Մեարոյ արքեպս-ի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 217 թղթապանակում, պարունակում է 17 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1883-1905 թթ.:

53 Սմբատեան Շաւարշի արխիւային ֆոնդ – ֆոնդում առկայ է 1867 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1913-2000 թթ.:

54 Ստեփանէ Խորէն եպս-ի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 219 թղթապանակում, պարունակում է 106 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1870-1940 թթ.:

55 Սրապեան Կիրէղի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 81-82 թղթապանակներում, պարունակում է 1070 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1646-1916 թթ.:

56 Վարդագարեան Բագրատ վրդ-ի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 77 թղթապանակում, պարունակում է 72 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1896-1938 թթ.:

57 Տէր-Ղազարեան Գիւտ (Իսահակ) եպս-ի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 1-6 թղթապանակներում, պարունակում է 451 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1852-1928 թթ.:

58 Տէր-Մաթէոսեան Մաթէոս արքեպս-ի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 168-178 թղթապանակներում, պարունակում է 266 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1873-1935 թթ.:

59 Տէր-Մինասեան Երուանդի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 239 ա-ը թղթապանակներում, պարունակում է 505 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1879-1970 թթ.:

60 Տէր-Մկրտչեան Գալուստի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 15-24 թղթապանակներում, պարունակում է 536 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1837-1917 թթ.:

61 Տէր-Մկրտչեան Կարապետի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 98-100 թղթապանակներում, պարունակում է 286 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1876-1928 թթ.:

62 Տէր-Յակոբեան Սենեֆերիմի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 71-76 թղթապանակներում, պարունակում է 304 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1879-1976 թթ.:

63 Տէր-Յովհաննիսեան Տիրայր վրդ-ի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 118-134 թղթապանակներում, պարունակում է 2248 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1891-1939 թթ.:

64 Տէր-Ներսիսեան Սիրարփիի արխիւային ֆոնդ

– 2847 գրանցման միատուրով պարունակում է 12444 վաւերագիր, 50 թերթ կրկնօրինակ եւ 292 լուսանկար, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1902-2011 թթ.:

65 Տէրունեան Թադէոսի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 242 թղթապանակում, պարունակում է 7 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1851-1912 թթ.:

66 Տիտանեան Ռուզաննայի արխիւային ֆոնդ – առկայ է 766 վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1643-1979 թթ.:

67 Փիրղալեմեան Ղեռնդի արխիւային ֆոնդ – տեղադրուած է 69 թղթապանակում, պարունակում է 19 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1849-1887 թթ.:

բ. Գիտական մշակման չենթարկուած ֆոնդեր
68 Աբգարեան Գեորգի արխիւային ֆոնդ
69 Աբրահամեան Աշոտ Արսէնի արխիւային ֆոնդ
70 Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիւային ֆոնդ

71 Ալպոյանեան Արշակի արխիւային ֆոնդ
72 Ամիրդովլաթ Ամասիացու ռուսերէն թարգմանութիւններ

73 Անասեան Յակոբի արխիւային ֆոնդ
74 Արեշատեան Սենի արխիւային ֆոնդ
75 Բարսեղեան Ամատունու արխիւային ֆոնդ
76 Բարթիկեան Հրաչի արխիւային ֆոնդ
77 Գալչեան Ռուբէնի արխիւային ֆոնդ
78 Գասապեան Ներսէսի արխիւային ֆոնդ
79 Գրիգորեան Վարդանի արխիւային ֆոնդ
80 Դավթեան Նուպարի արխիւային ֆոնդ
81 Դիոնեսեաններ Նինայ եւ Հիրիկի արխիւային ֆոնդ

82 Եանգուով Գրիգորի արխիւային ֆոնդ
83 Զահրատի արխիւային ֆոնդ
84 Զարիֆեան Զաֆարի արխիւային ֆոնդ
85 Զարեաններ Կոստանի եւ Արմէնի արխիւային ֆոնդ

86 Զաֆարեան Լիլիթի (Էլլա) արխիւային ֆոնդ
87 Էդգարեան Յովիկի արխիւային ֆոնդ
88 Թամրազեան Հրաչեայի արխիւային ֆոնդ
89 Թերզեան Անահիտի արխիւային ֆոնդ

90 Թերլեմեզեան Փանոսի գծանկարների ֆոնդ
91 Իգմայլովայ Տատեանայի արխիւային ֆոնդ
92 Խալաֆեան Մելֆոնի արխիւային ֆոնդ
93 Խաչատրեան Վանոյի արխիւային ֆոնդ
94 Համբարձումեան Համազասպի արխիւային ֆոնդ

- 95 Համբարձումեան Վիկտորի արխիւային ֆօնդ
- 96 Յակոբեան էմիլի արխիւային ֆօնդ
- 97 Մաթեստեան Արտաշէսի արխիւային ֆօնդ
- 98 Մինասեան Մարտիրոսի արխիւային ֆօնդ
- 99 Մկրտչեան Լեւոնի արխիւային ֆօնդ
- 100 Մնացականեան Ասատուրի արխիւային ֆօնդ
- 101 Մուհամմեդ Սեյեդի արխիւային ֆօնդ
- 102 Մուրադեան Կիմի արխիւային ֆօնդ
- 103 Յակոբեան էմիլի արխիւային ֆօնդ
- 104 Յովհաննիսեան Աւոյի արխիւային ֆօնդ
- 105 Ուելթի Օրվիս Սիւզանի արխիւային ֆօնդ
- 106 Չարէնց Եղիշէի արխիւային ֆօնդ
- 107 Զիթունի Տիգրանի արխիւային ֆօնդ
- 108 Զուգասգեան Բաբկէնի արխիւային ֆօնդ
- 109 Պետրոսեան Սերոբէի արխիւային ֆօնդ
- 110 Պերպերեան Հայկի արխիւային ֆօնդ
- 111 Պըլտեան Գրիգորի արխիւային ֆօնդ
- 112 Պլովդիւի հայկական եկեղեցու արխիւային ֆօնդ
- 113 Զուգեպպէ Ֆրանսոնի արխիւային ֆօնդ
- 114 Սամուէլեան Խաչիկի արխիւային ֆօնդ
- 115 Սեակ Պարոյրի արխիւային ֆօնդ
- 116 Սերուգեաննների արխիւային ֆօնդ
- 117 Ստեփանեան Գառնիկի արխիւային ֆօնդ
- 118 Տարեկան ձեռքբերումների ֆօնդ
- 119 Տէր-Ստեփանեան Արմէնի արխիւային ֆօնդ
- 120 Տոկարսկի Միխայիլի արխիւային ֆօնդ
- 121 Փերիխանեան Անահիտի արխիւային ֆօնդ
- 122 Քոլանջեան Սուրէնի արխիւային ֆօնդ

Գ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԿՆԵՐԻ ԱՐԽԻՒԱՅԻՆ ՖՕՆԴԵՐ

123 *Հազարեանների արխիւային ֆօնդ* – տեղադրուած է 100-137 թղթապանակներում, պարունակում է 7485 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1628-1915 թթ.:

124 *Մատենադարան հիմնարկի արխիւային ֆօնդ* – տեղադրուած է 74-84¹⁻¹⁰³ թղթապանակներում, պարունակում է 2907 միատուր վաւերագիր, վաւերագրերի ծայրային թուականները՝ 1863-1971 թթ.:

ՅՈՒՅԱԿԻ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպէս սկզբում ենք նշել, արխիւային վաւերագիրը նկարագրուած է հաւասարեցուած է ձեռագիր մատեանին: Հետեւապէս ներկայ հրատարակուող ցուցակի համար լաւագոյնը եւ օրինակելին Մաշտոցի անուան Մատենադարանի հայերէն ձեռագրերի Մայր ցուցակ կոթողային աշխատութեան կիրառուած հարցակարգն է: Արխիւային վաւերագրի դէպքում նկարագրութեան համար կիրառուել է 38 հարցից բաղկացած (30ի փոխարէն) հարցակարգ, որն արտայայտուած է հետեւեալ սկզբունքներով.

Ա. Հարցակարգ

1. Յուցակի համար
2. Խորագիր
3. Գոյհահամար վաւերագրի
4. Վայր
5. Ժամանակ
6. Գրիչ
7. Գրագիր
8. Թարգմանիչ
9. Հեղինակ
10. Ստացող
11. Թերթ
12. Պրակ
13. Նիւթ
14. Մեծութիւն
15. Գրութիւն
16. Գիր
17. Տող
18. Կազմ
19. Պահպանակ
20. Մանրանկարչութիւն
21. Վիճակ
22. Իսկութիւն
23. Բովանդակութիւն
24. Յիշատակարան նախօրինակի
25. Յիշատակարան
26. Յիշատակագրութիւն
27. Յատկագրութիւն
28. Վկայութիւն
29. Ստորագրութիւն
30. Հասցէ
31. Յիշատակարան յետագայի
32. Յիշատակագրութիւն յետագայի
33. Կնիադրոշմ
34. Նշում

- 35. Ճնշադրոշմ
- 36. Գրչափորձ
- 37. Ծրար
- 38. Լուսանկար

Բ. Նկարագրովեան եղանակներ

1. Յուցակի *համար*-ը դրուած է տողի կենտրոնում. այսպէս հաշուաւում է ԿԻի պարունակած վաւերագրերի միատրների քանակը:

2. *Խորագիր*-ը (անուանումը) դրուած է նոր տողի կենտրոնում՝ ցուցակի համարից յետոյ: Այն ստեղծուած է նկարագրողի կողմից: Երկուսից աւելի նիւթեր ունեցող վաւերագրերի դէպքում կիրառուել է «ժողովածոյ» խորագիրը:

3. *Գոյքահամար վաւերագրի* հարցը դրուած է նոր տողի կենտրոնում, փոքրատառերով: Այն վաւերագրի գործող գոյքահամարն է. նշուած են թղթապանակի եւ վաւերագրի համարները: Այստեղ «թղթապանակ» տերմինի տակ, իրականում, պէտք է հասկանալ «տուփ», այսինքն՝ արխիւային պահոցում վաւերագրերը ծրարներով եւ թղթապանակներով պահպանուած են տուփերի մէջ, եւ թղթապանակ այսինչ ստելով՝ պէտք է հասկանալ տուփի համարը:

4. *Վայր* հարցը չի դրուած, այլ միանգամից նշուած է տեղը: Այն դրուած է նոր տողի ձախ մասում, եզրագծին հաւասար: Տեղանուններից յետոյ երբեմն փակագծում նշուած է տուեալ վայրի աշխարհագրական տեղը մատնանշող գիտլի, քաղաքի, գաւառի, նահանգի, երկրի անունը:

5. *Ժամանակ* հարցը չի դրուած, այլ նշուած է Հայոց թուականը, Փրկչի թուականը արաբական թուանշաններով, իսկ դարանիշ թիւը՝ հայկական թուատառերով: Հարցը դրուած է նախորդ հարցի հետ նոյն տողի վրայ՝ աչ եզրագծին հաւասար:

6. *Գրիչ* հարցի դիմաց տրուած է գրչի անունը, մականունը, կոչումը եւ այլն: Այն դրուած է նոր տողից, 7-10 հարցերի հետ կողք կողքի, համապատասխան յաջորդականութեամբ:

7. *Գրագիր*՝ նախորդ հարցի եղանակով:

8. *Թարգմանիչ*՝ նախորդ հարցի եղանակով:

9. *Հեղինակ*՝ նախորդ հարցի եղանակով:

10. *Ստացող*՝ նախորդ հարցի եղանակով:

ա) *Գրիչ* հարցի տակ նկատի ունենմ փաստաթղթի գրի եւ բովանդակութեան հեղինակին, իսկ *Գրագիր* հարցի տակ՝ միայն փաստաթուղթը գրողին:

բ) Եթէ յատուկ անուններ վաւերագրում հանդիպում են մի անգամ, դրուած են ըստ վաւերագրի ուղղագրութեան, իսկ եթէ անունները տարբեր տեղերում

ունեն տարբեր ուղղագրութիւններ՝ արտայատուած են նիշտ ձեւերը:

11. *Թերթաքանակ* հարցը նշուած է ԹԵՐԹ ձեւով, իսկ դիմացը տրուած է վաւերագրում առկայ թերթերի քանակը: Եթէ վաւերագիրը էջակալուած է, ապա թերթաքանակի միատրի կողքին նշուած է էջ (այսպէս՝ ԹԵՐԹ՝ 2 էջ): Որպէս ենթահարց, արտայայտուած է(են) չգրուած թերթահամար(ներ)ը կամ էջահամար(ներ)ը: 11-19 հարցերը դրուած են կողք կողքի՝ համապատասխան յաջորդականութեամբ:

12. *Պրակ* հարցը դրուած է նախորդ հարցից յետոյ եւ արտայայտուած է մամուլների քանակը: Եթէ մէկ պրակ է, ապա նշուած է, օրինակ՝ Աx4, իսկ եթէ մէկից աւելի եւ խառը քանակութեամբ, ապա կոր փակագծում նշուած են համապատասխան պրակահամարները եւ պրակաթերթերի քանակը, այսպէս՝ (Ա, ԺԸ՝ 2, Բ՝ 5) եւ այլն:

13. *Նիւթ* հարցի դիմաց նշում է՝ մագաղաթ, թուղթ: Առանձին արտայատուած են, յատկապէս ուսահայոց թեմի հետ կապուած, կապոյտ գոյն ունեցող թղթերը: Եթէ վաւերագրում առկայ են տարբեր որակի թղթեր, ապա կոր փակագծի մէջ նշում է տարբեր: Որպէս ենթահարց, տարբերակում են թղթի մէջ առկայ գծերը, գրերը եւ պատկերները, եւ ընդհանուր հարցի մէջ առանձնացուած են միջակէտով՝ արտայայտուելով այսպէս. *լուսագծերով*, *լուսագրով* (բերուած է գրութիւնը եւ/կամ թուականը), *լուսապատկերով* (նկարագրուած է պատկերագրութիւնը եւ/կամ զարդանախշը):

14. *Մեծովիւն* հարցի դիմաց նշուած են տուեալ վաւերագրի երկու չափերը սանտիմետրով, բազմապատկման նշանով, օրինակ՝ 22,9x17,6: Եթէ կան տարբեր երկու չափի թերթեր, ապա դրանք արտայայտուած են՝ իրարից առանձնացուած ստորակետով, օրինակ՝ 22,9x17,6, 17,5x10,2, իսկ եթէ երկուսից աւել են, ապա նշուած է՝ ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ տարբեր:

15. *Գրութիւն* հարցի տակ նշուած է սիւնակների քանակը, օրինակ՝ միասիւն, երկսիւն, հնգասիւն եւ այլն:

16. *Գիր* հարցի տակ նշուած է գրատեսակը, օրինակ՝ բոլորգիր, նոտրաման բոլորգիր, նոտրգիր, շղագիր:

17. *Տող* հարցի դիմաց ցոյց է տրուած թերթերի տողերի քանակը: Տարբեր տողաքանակի դէպքում նշուած են նաեւ միւս թուերը: Եթէ տողերի քանակն էսպէս տարբեր է, ապա տողաքանակն արտայայտուած է այսպէս. ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 28: Եթէ տողերի հիմնական շարքից բացի ձախ եւ/կամ աչ եւ/կամ վերեւ եւ/կամ ներքեւ հատուածներում կան

գրութիւններ, ապա տողաբանակն արտայայտուած է + նշանով: Սկզբում նշուած է ուղիղ գրութեան տողերի քանակը, ապա՝ թե՛ տողերի, այսպէս. ՏՈՂ՝ 14+5+2 եւ այլն:

18. *Կազմ* հարցի ներքոյ միատրուած են «կազմ» եւ «աստառ» հարցերը. նշուած են կազմի նիւթը (տախտակ, լաթ, ստուարաթուղթ, կաշի եւ այլն), վրայի զարդերը, մակագրութիւնները, աստառի նիւթը, գոյնը, զարդը: *Աստառ* հարցը դիտուած է որպէս կազմ-ի ենթահարց եւ ընդհանուր հարցակարգում առանձնացուած է միջակէտով, օրինակ՝ ԿԱԶՄ՝ լաթապատ ստուարաթուղթ. աստառ՝ սպիտակ թուղթ:

19. *Պահպանակ* հարցի տակ նշուած են հիմնականում թղթէ սովորական պահպանակները: Եթէ նշուած է, օրինակ՝ 1+2, նշանակում է, որ 1 թերթը գտնուում է ձեռագրի սկզբում, իսկ 2ը՝ վերջում:

20. *Մանրանկարչութիւն* հարցի դիմաց թուարկուած են վաւերագրում առկայ համապատասխան տուեալները (օրինակ՝ ճակատագարդ. գոյներ եւ այլն), յղուած է համապատասխան թերթահամարը/ էջահամարը:

21. *Վիճակ* հարցի դիմաց արտայայտուած են վաւերագրի առկայ վիճակը, նկատուող ֆիզիկական շեղումները, նորոգումները:

22. *Իսկութիւն* (ПОДЛИННОСТЬ, authenticity) հարցի դիմաց արտայայտուած է փաստաթղթի բնագիր, թարգմանութիւն, օրինակ գրութեան, սեւագիր, կրկնօրինակ, պատճէն, լուսանկար եւ այլն, ինչպէս նաեւ ձեռագիր, տպագիր լինելը:

23. *Բովանդակութիւն* հարցը դրուած է նոր տողի մէջտեղում: Յաջորդ տողից նշուած են նախ՝ թերթահամար(ներ)ը/էջահամար(ներ)ը, ապա՝ շակերտների մէջ բերուած են գործի սկիզբն ու վերջը (գրութեան սահմանները), այնուհետեւ՝ նկարագրողի բառերով շարադրուած է գործի հիմնական բովանդակութիւնը: Առանձին դէպքերում, երբ վաւերագիրը պարունակում է, օրինակ՝ կաթողիկոսների զանազան գրութիւնների, կոնդակների օրինակների արտագրութիւններ կամ, ասեմք, հաշուեմատեաններ, ծախսամատեաններ եւ այլն, նման դէպքերում նկարագրողի խօսքը դրուած է սկզբում, որից յետոյ, նոր տողից, առանց շակերտների, արտայայտուած են բովանդակութեան նիւթերն առանձին-առանձին՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով: Բովանդակութիւնից առաջ, յաճախ, ներկայացուած են ծանօթագրութիւններ լրացուցիչ տեղեկութիւններով:

24. *Յիշատակարան նախօրինակի* հարցի տակ արտայայտուած է(են) նախօրինակի յիշատակա-

րան(ներ)ը՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով: Հարցակարգի 23-31 կէտերն արտայայտուած են առանց շակերտների:

25. *Յիշատակարան* հարցի տակ արտայայտուած է(են) հիմնականում հեղինակի, ստացողի, երբեմն գրչի, գրագրի յիշատակարան(ներ)ը՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով:

26. *Յիշատակագրութիւն* հարցի տակ արտայայտուած է(են) հեղինակի, ստացողի, երբեմն գրչի կամ գրագրի յիշատակագրութիւն(ներ)ը՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով:

27. *Յաւելագրութիւն* հարցի տակ արտայայտուած է(են) վաւերագրի բովանդակութեան ասարտից յետոյ հեղինակի, գրչի, գրագրի արուած գրութիւն(ներ)ը՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով:

28. *Վկայութիւն* հարցի տակ արտայայտուած է(են) գործին վկայ գտնուող անձը(անձինք)՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով:

29. *Ստորագրութիւն* հարցի տակ արտայայտուած է(են) վաւերագրի տակ անունը գրած, ստորագրած անձը(անձինք)՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով:

30. *Հասցէ* հարցի տակ արտայայտուած է, թէ ո՞ւմ է ուղղուած գրութիւնը՝ համապատասխան թերթահամարի/էջահամարի յղումով: Սկզբնապէս այն ունեցել է անձին ուղղուած նշանակութիւն, յետագայում բուն նշանակութեանն անելացուել են նաեւ բնակութեան կամ գրանցման վայրի տուեալները:

31. *Յիշատակարան յետագայի* հարցի տակ արտայայտուած է(են) յետագայում արուած յիշատակարան(ներ)ը՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով:

32. *Յիշատակագրութիւն յետագայի* հարցի տակ արտայայտուած է(են) յետագայում արուած յիշատակագրութիւն(ներ)ը՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով, որից յետոյ կոր փակագծի մէջ նշում է դարը եւ գրի տեսակը: Եթէ յիշատակագրութիւնը թուական ունի, ապա կոր փակագծում նշում է միայն գրի տեսակը:

33. *Կնքադրոշմ* հարցի տակ արտայայտուած է(են) վաւերագրում առկայ կնիք(ներ)ը նախ՝ Ա. թանաքով արուած, ապա՝ Բ. զմուտսի վրայի՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով: Եթէ թանաքով արուած կնքադրոշմը բնօրինակն է, ապա այն վերծանուած է երկաթագիր, իսկ եթէ այն նախօրինակի վերտառութիւնն է շրջանակի կամ ուղղանկեան մէջ, ապա այն արտայայտուած է բոլորգիր:

Բոլոր դէպքերում համառոտագրութիւնները, կցագրութիւնները եւ կապագրութիւններն արտայայտուած են բացումով:

34. Նշում հարցի տակ արտայայտուած է(են) վաւերագրի տարբեր մասերում յետագայում արուած գրութիւն(ներ)ը՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով:

35. Ճնշադրոշմ հարցի տակ արտայայտուած է(են) վաւերագրի թերթ(եր)ին/էջ(եր)ին առկայ, ննշումով արուած դրոշմները՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով: Նման ննշադրոշմները հիմնականում լինում են անգոյն, երբեմն՝ դժուար ընթեռնելի:

36. Գրչափորձ հարցի տակ արտայայտուած է(են) գրչի, գրագրի կամ յետագայում արուած տառ(եր)ը, բառ(եր)ը, թուաբանական հաշուարկ(ներ)ը եւ այլն՝ համապատասխան թերթահամար(ներ)ով/էջահամար(ներ)ով:

37. Ծրար հարցի տակ ներկայացուած է սովորական եւ, հիմնականում, փոստային գերատեսչութիւնների կողմից շրջանառութեան մէջ դրուած ծրարները, նամականիշերը. վերջինս դիտուած է իբրեւ առանձին միատուր եւ նկարագրուած է ըստ մշակուած ամբողջական հարցակարգի:

38. Լուսանկար հարցի տակ ներկայացուած է (են) ֆոտոնկար(ներ)ը. վերջինս դիտուած է իբրեւ առանձին միատուր եւ նկարագրուած է ըստ մշակուած ամբողջական հարցակարգի:

Գ. Կրճատումներ եւ հապատումներ
Կոչումներ, առանձին բառեր

- արդյ – արեղայ
- աշխ. – աշխատութիւն
- արհեստ. – արհեստիսկոպոս
- գհկլ – գահակալ
- գտ – գաւառ
- գտպտ – գաւառապետ
- դ. – դար
- դդ. – դարեր
- դպր – դպիր
- եսպ. – եպիսկոպոս
- թգւր – թագաւոր
- թղթպ. – թղթապանակ
- թ. – թուական
- թթ. – թուականներ
- խշյ – խօջայ
- ծ. – ծայրագոյն
- Ծնթ. – Ծանօթագրութիւն

- կրդկս – կաթողիկոս
 - կր. – կրոնաւոր
 - հմմտ. – համեմատել
 - հնգցլ – հանգուցեալ
 - ձեռ. – ձեռագիր
 - մհտ. – մահտեսի
 - յշտկծ – յիշատակուած
 - նհնգպտ – նահանգապետ
 - նշ. – նշուած
 - չարդյ – շարեղայ
 - չեսպ. – շեպիսկոպոս
 - չհիյ – չհահանայ
 - պհպնկ – պահպանակ
 - պրն – պարոն
 - սկ. – սկիզբ, սկզբում
 - սրկ. – սարկաւագ
 - Սք./սք. – սուրբ
 - վաւ. – վաւերագիր
 - վջ. – վերջ, վերջում
 - վրդ. – վարդապետ
 - տրց. – տիրացու
 - ֆհյ – ֆահանայ
- Յատուկ անունները հապատուած չեն:

Դ. Կէտադրութիւն եւ մեծատառեր

Յուցակում կիրառուած են կէտադրութեան արդի եղանակները: Հարցակարգում իւրաքանչիւր հարցից յետոյ դրուած է բութ, բացառութեամբ Մանրանկարչութիւն հարցի, որից յետոյ դրուած է երկար գիծ (—): Հարցերն իրենց պատասխաններով միմեանցից անջատուած են վերջակէտով: Կրճատուած բոլոր բառերից յետոյ դրուած է միջակէտ: Հապատուած բառերից յետոյ կէտ չի դրուած: Հապատուած, բայց միաժամանակ նաեւ կրճատուած բառերից յետոյ նոյնպէս դրուած է միջակէտ:

Մեծատառի գործածութեան սովորական դէպքերից բացի վաւերագրերում հանդիպող մարդկանց անուններին գուգակցող տեղանունային մականունները գրուած են մեծատառով: Այդ նոյն անուններին նախորդող մականունները, կոչումները (պաշտօնական, ֆաղափական, կենցաղային եւ այլն) դրուած են փոքրատառով, օրինակ՝ տէր Մատթէոս, խշյ Յարութիւն:

Հարցակարգի բոլոր հարցերը երկաթագիր են՝ բացառութեամբ վաւերագրի գոյֆահամարի:

Ե. Պայմանական նշաններ

Բնագրային մէջբերումների ժամանակ յաւելագրուած տառերի, կրճատումների, բացթողումների,

կնիքների կցագրությունների (առանձնայատուկ դէպ-
քերում) եւ նման այլ բնույթի շեղումների դէպքում գոր-
ծածել ենք հետեւեալ պայմանական նշանները.

- = հաւասար է,
- [] ուղղագիծ փակագծերի մէջ առնուով
են կազմողի վերականգնած տառը, բառը, անու-
նը եւ այլն,
- () կոր փակագծերի մէջ վերծանուած
են Փրկչի թուականը, թուային արժէք ունեցող
տատերը, բնագրում (առանձին դէպքերում) հա-
մառոտուած բառը, օրինակ՝ որով(հետեւ) եւ այլն,
- / կնիքադրոշմների դէպքում նշում է յա-
ջորդ տողի սկիզբը,
- /// դժուար ընթեռնեմի բառ կամ յա-
տուած՝ անկախ տատերի կամ բառերի ֆանակից,
- < > սուր փակագծերի մէջ առնուած տա-
ռը կամ բառը աւելորդ են,
- { } նշանի մէջ առնուած տառը կամ բառը
վնասուած են, սակայն հասկացում են:

Ուղղագրական սահմանուած կանոններից շե-
ղումները, եթէ դրանք տուեալ վաւերագրին բնորոշ
խօսուածքով չեն գրուած, ներկայացուած են առանձ-
նացուող տառով (ուղիղ կամ թեք):

* * *

Մատենադարանի արխիւում հաշուառուած ԿԴԻ
որոշ նիւթեր տարբեր ժամանակներում յանձնուել են
ինչպէս Մատենադարանի Ձեռագրատուն, այնպէս եւ
Ազգային պետական արխիւ եւ Ե. Չարէնցի անուան
գրականութեան եւ արուեստի թանգարան (ԳԱԹ):

Այսուհետ իւրաքանչիւր հատորում (եթէ այդպիսիք
կան), ըստ գոյհաւանագրների անման յաջորդակա-
նութեան կարգի (№ թղթապանակի, № վաւերագրի),
կներկայացուեն բացակայող, տեղափոխուած նիւ-
թերի գոյհաւանագրները⁸⁵ կոր փակագծերում նշելով
տեղափոխման թուականը: Ներկայ հատորում բա-
ցակայող գոյհաւանագրների նիւթերը փոխանցուել են
Մատենադարանի Ձեռագրատուն. դրանք են՝

1. թղթպ. 1 – վաւ. 46 (1950 թ.), վաւ. 47
(1950 թ.), վաւ. 55 (1941 թ., միացուել է 6241 ձե-
ռագրին), վաւ. 57 (1950 թ.), վաւ. 59 (1950 թ.),
վաւ. 60 (1950 թ.), վաւ. 61 (1950 թ.), վաւ. 62
(1950 թ.), վաւ. 68 (1950 թ.),
2. թղթպ. 5 – վաւ. 36 (2019 թ.),
3. թղթպ. 7 – վաւ. 4 (1950 թ.):

Ներկայ հատորի վաւերագրերի հաշուառումը,
մշակումը եւ նկարագրություններն արել են (թուար-
կումները՝ ըստ ցուցակի համարների կարգի)՝

- Աւրմէն Մալխասեան – 1-94, 96-106, 108-204,
207-274, 276-282, 286, 288-297, 300, 303-309, 311-
326, 328-348 – 333 միատր,
- Նաիրա Մարտիրոսեան – 285, 287, 299, 349-
368, 384-413 – 53 միատր,
- Անահիտ Ասատրեան – 206, 275, 301, 302, 369-
383 – 19 միատր,
- Լուսիկ Ստեփանեան – 95, 107, 205, 283, 284,
298, 310, 327 – 8 միատր:

Յանկերը կազմել է Աւրմէն Մալխասեանը:

ԱՐՄԷՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ

*Մաշտոցեան Մատենադարանի Արխիւի եւ
Արխիւագիտութեան բաժնի վարիչ*

⁸⁵ Բնականաբար այդ վաւերագրերն այլեւս հաշուառ-
ուած չեն ԿԴԻ միատրների թում:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

ԴԻԻԱՆ


1 ՀՐՈՎԱՐՏԱԿ

թղթա. 1, վա. 1

ԺԸ դար

Հեղինակ՝ Եաղուբ Իբն Հասան (1476 թ.):
ՍՏԱՅՈՂ՝ Շմաուն Աղուանից կրթկա (1476 թ.):

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,7x21,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 25:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերը նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ քարգմանութիւն պարսկերէնից, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Հրաման – Ապուլ Մուզաֆար Եաղուբ պհաղէր Սուզմիզ... եւ գրեմ մեծամեծաց զօրապետաց եւ զօրաց մերոց ո՛չ որ ձեռնամուխ չի լինել կամ պահանջողութիւն առնել Աղվանքիցն ու ո՛չ որ չի համարձակեցէ մեր այս շնորհեալ հրովարտաբնի հակառակիլ»: Պարսից Եաղուբ Իբն Հասան արքայի ֆերմանը Շմաուն կրթկային, որով հրա-

մայում է Ատրպատականի եւ Աղուանքի մեծամեծերին եւ ժողովրդին նրան ճանաչել հայերի հոգեւոր կառավարիչ: Հրամայում է նաեւ հոգեւորականներից խաւը ու բեգեար շվերցնել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1ա Գրեցաւ շամատի ալ-աւալ, որ է մայիս ամիսն. 892 ամին տաճկաց եւ յամի Տեառն 1476ին:

ՅԱՒԵԼԱԳՐՈՒԹԻԻՆ

1ա Այսինքն՝ Գանձասարու (նշուած է բնագրի «Աղվանքից» բառի դիմաց լուսանցում):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (ԺԸ դ., նոսրգիր) Սիմօն կաթողիկոսն եղբոր[որդի]ի էր Մատթէոս կաթողիկոսին:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (սեւ քանակով, շրջանակի մէջ եւ դրսում, նախօրինակի կնիքների տեղերի նշումներով) 1. «Արքայ պարսից Եաղուբ Իբնի Հասան», 2. «Ըսպանտար», 3. «Ալի շաֆար», 4. «Ալի»:

ՆՇՈՒՄ՝ 1ա «19 866»:

2

ՊԱՐՏԱՄՈՒՐ ՀԱԿ


թղթա. 1, վա. 2

ՌՄԾԲ-1803

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ]

Հեղինակ՝ Սաամբուցի Եղիայ եւ Սահակ:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսապակերով՝ բուսական զարդանախշ (կիսատ): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 16,3x12,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 12:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Զորութիւն գրուա այս էջ... թէ որ տիվանից ցլքելու լինեմ՝ հեա՛մ ղուլղն տամ, հեա՛մ փոյղն տամ»: Սաամբուցի Եղիայի եւ Սահակի մուրհակը էջմիածնի միաբան Կարապետ վրդ-ից ստացած գումարի պարտքի (10ին 12% շահով) վերաբերեալ:

Ծնթ. Փաստաթղթին, աշակերտական վանդակատր, 21x16,8 չափի թղթի վրայ կցուած է մուրհակի ընդօրինակութիւնը՝ հաստատուած Մատենադարանի արխիւի բաժնի վարիչ Յ. Աբրահամեանի ստորագրութեամբ: Թղթի ներ-

Բեի հատուածով կայ Լ. Խաչիկեանի 4/VIII [19]79 թուակիր գրութիւնը, որով առաջարկում է վաւերագրի թուականը կարգալ ՌԲ[Ճ]ԾԲ (1803):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

- 1. 1ա Ի [Թ]վին ՌԲ[Ճ]ԾԲ (1803), մայիսի է (7):
- 2. 1ա Մոյհր շունեյի՝ մայտս կնքեցիյ եւ մեզ հայ-

ճու եղեւ, տեսնողաց հաճո[յ] լինի:

3. 1ա Այհայ ես՝ տեցլաբ Կարայպետս վրկայիմ, մայրյ շունեյի՝ մատս կնքեցի:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (1 մատնադրոշմ, 1 խաչ շրջանակի մէջ):


3

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

թղթպ. 1, վաւ. 3

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 21,6x15,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 10:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ արտագրութիւն, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Շնորհօք ամենակալին Աստուծոյ, որ մենք դարաբուլաղէցի ժողովուրդս, մեծ և փոքրն շինեցինք սուրբ եկեղեցիս... որով աշխատեցինք»: Արտագրութիւնն է Պետրոս [Խանձկեցի] կրղկսի ժամանակ Ղարաբուլաղի եկեղեցու շինութեան արձանագրութեան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

1ա ես՝ մեղաւոր Դաւիթ Էրէցս գրեցի թուին Հայոց ՌՃԻԵ (1676), ով ոք կարդաք՝ մէկ բերան հոգւոց եւ ողորմին ասէք, Քրիստոս զձեզ ողորմի. ամէն:

Ծնթ. Արձանագրութիւնը հմմտ. Կարապետեան Ս., Հիւսիսային Արցախ, Երեւան, 2004, էջ 382:

4

ԿՈՆԴԱԿ


թղթպ. 1, վաւ. 4

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՍԻՆ]

ՌՃԼԲ-1683

ՀԵՂԻՆԱԿ՝ եղիազար Ա Այնթապցի կրղկս:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35,5x21,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 30:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ստորին եզրերը ծալուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

Ծնթ. № 7ի գրիչն է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Յիսուսի Քրիստոսի ծառայ եղիազար կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարկ Վաղարշապատու քրիստոսազարդ Սրբոյ Աթոռոյս էջմիածնի: Յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան... եւ այսքան բաւականացի առ ձեզ, կատարողք հրամանաց մերոց եւ խնդրուածաց օրհնիցիս յԱստուծոյ եւ ամենայն սրբոց նորա եւ ի մէնջ. ամէն: Հայր մեր»: Եղիազար Այնթապցի կրղկսի կոնդակն ուղղուած Սբ. Բեղղեսէմի ժողովրդին, որով գիտի ծխերի երկու բաժինը տալիս է տէր Սարգիս Բհյին, մէկ բաժինը՝ Մեղքիսէդ Բհյին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ ի թիւին ՌՃԼԲ (1683), յունվարի Ը (8):


5
ՀՐՈՎԱՐՏԱԿ

թղթայ. 1, վառ. 5

ՌՃԽ-1691

Հեղինակ՝ Շահնավազ Վրաց թգար: ՍՍԱՅՈՂ՝ Պապունաբէկ:

Թեմբ. 2. չգրուած՝ 1բ-2բ: Նիւթ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրերով՝ «1816», «ԵՓԴԵ»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,5x21: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 21:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «По высочайшему приказу и грамоте Его Величества Государя... а Лорійскій вла- дѣлецъ не долженъ касаться до оной»: Վրաց Շահնավազ թգարը Պապունաբէկին հրովարտակով յայտնում է, որ Հաղպատ գիւղն իր սահմաններով եւ վանքն իրենց եկամուտներով պատկանում են Պապունաբէկին, իսկ Լոռուայ իշխողը իրատունֆ չունի խառնուելու, քանի որ արքայական պալա- տից տրուած այլ հրաման չկայ, բայց այդպիսին յայտնաբերելու դէպքում իրատունֆը նանաչուելու է ըստ այնմ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Іюня 4-го дня 1691-го года. На под- линномъ подписано: Царь Шахнавазъ:


6
ԳՐԱՆՅԱՄԱՏԵԱՆ

թղթայ. 1, վառ. 6

ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍ (ՎԱՆ)

ԺԸ-ԺԹ դարեր

Թեմբ. 12. չգրուած՝ 1ա-2բ, 11բ-2բ: Նիւթ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 42,8x28,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ մի- ասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 3բ): ՏՈՂ՝ 33-39:



Նմուշ 3բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ, տեղ-տեղ քանաֆոտուած, գրադաշտը գունափոխուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

3բ-11ա «Պատճառ գրիս այս է. թվին ՌՃԾԾՐ (1703) մարտի ամսոյ մէկին եւ՝ Աւետեսի որդի խօ- ճայ Եավրիս Սուրբ Պօղոսայ ժամատան փոխ դրամ ճԾ (150) ղուռուշ տըւի... եւ ամենայն նախնեացն նորին. ամէն»: Նշուած են Վանի Սբ. Պօղոս վանքին 1703, 1705, 1712, 1745-1748, 1759, 1762, 1764- 1766, 1768-1769, 1775, 1778-1783, 1788, 1806,

1817 թթ. ի յիշատակ տրուած դրամները, նվերնե- րը (այդ շարքում՝ Յայսմատաբ, Ճաշոց, Ոսկեփո- րիկ, Շարակնոց, Սաղմոսարան, Ժամագիրք, Տո- նացոյց եւ այլն), դոմանները, ինչպէս նաեւ վան- քի վաքիլների (լիագորուած անձանց) կատարած գործերն ու ստացուած եկամուտները:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ

1. Յա (գրած-ջնջած) Աստուած բարին կատարէ. գրեցավ թիւլին ՌՃԻԷ (1678), ապրիլի մէկուամն: Ավետարան Աղթուէնց խօջայ Ախիջան ժամհան դրամով գնեցինքն, ըսկողն արծաթեց:

2. 10ա Թիւն ՌՄԽԸ (1799) եւ՝ Ղառատկանց Յարթինս այս գիր գրեցի:

3. 3բ (ԺԸ դ., նոսրգիր) Այս յիշատակարանս: Այս յիշատակարանս ճՂԶ (196) թուխթ է. ով որ կտրի՝ ձեռ կտրի, Աստուծոյ արքայութեան արժանի չի լինի: Բայց Աստուած ողորմի ասացէք խօջայ Յա- կոբին, որ զայս ետուր յիշատակ:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1. 9բ (սեւ քանաֆով, բոլորակ) «ԵԱՎՐԻ», 2. 9բ (սեւ քանաֆով, ձուածեւ) «[Շ]ԱՅԻՍ-

ՄԻԲՐ]», 3. 9բ (սեւ քանափով, ձուածեւ) «ԱՂԱՄԻՐ |ՈՒ /ԽԱՆԱՄԻՐ», 4. 9բ (սեւ քանափով, ձուածեւ, եր-

կիցս, անընթեռնելի), 5. 9բ (սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԱՇԽԱՆ /ՌՃԾԲ] (1703)»:

7
ԿՈՆԴԱԿ


թղթայ. 1, վաւ. 7

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՃԾԶ-1707

ՀԵՂԻՆԱԿ՝ Աղեփսանդր Ա Ջուղայեցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35,5x21,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 19:



Նմուշ 1ա

ԻՃԱԿ՝ բաւարար. ստորին եզրերը ծալուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

Ծնթ. № 4ի գրիչն է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Յիսուսի Քրիստոսի ծառայ Աղեփսանդր արժանայիշատակ կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարք Վաղարշապատու լուսակառոյց Սրբոյ Աթոռոյս էջմիածնի. յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան... այլեւ կատարողք եւ հնազանդողք հրամանաց մերոց օրհնեալ լինին ի յԱստուծոյ եւ ամենայն սրբոց մաքուր աղօթիւնքն եւ ի մէնջ. ամէն»: Աղեքսանդր Ջուղայեցի կթղկսի կոնդակը Հաղպատի վանքի 3 եկեղեցիներին, որով այդ եկեղեցիների վրայ աւագերէջ եւ գործակալ է կարգում տէր Սարգսին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ ՌՃԾԶ (1707) թուին եւ յամսեանն օգոստոսի ԻԲ (22), ի դրանէ լուսագարդ միծի Աթոռոյս էջմիածնի:

8
ԿՏԱԿ


թղթայ. 1, վաւ. 8

ՇԻՐԱԶ (ԻՐԱՆ)

ՌՄԻԳ-1775

ՀԵՂԻՆԱԿ՝ ֆալանթար Սարգիս:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «H.O.G», լուսապատկերով՝ բուսական զարդագծերով պարուրուած թագ՝: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 25,3x19,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն, եռասիւն: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 36:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Ուրպէս ասէ սրբազան առաքե[ա]լն Պո-

ղոս. Կտակ յետ մահուան հաստատուն է (Եբ. Թ 17) – ես՝ տէր Սիմէոնի որդի Ջուղայու քալանթար Սարգիսս իմ կաման եւ իմ յօժարութեամբն խոստովանեցայ առաջի Աստուծոյ... Գրեմն բարաթնոց կշտինայ, հետեւէք. յինքազնէք»: Ջուղայի ֆալանթար Սարգսի կտակն է, որտեղ նշում է իր «վաքիր»ներին եւ պատուիրում, թէ ում որքան ոսկի տան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ թիվն Փոքր ԱՃԾԹ (1775) նախայ Բ (2), Շիրազ. վերոյ գրեալն տէր Սիմոնի որդի Սարգսիս ընդունելիայ, եւ իմ միրհնայ:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

Վկայութիւնները հաստատուած են կնիքների տեղերի օղակածեւ նշումներով.

1. 1ա Ս[ա]հ[ա]բ քալանթար պարոն Ս[ա]րգսի եղբորովն վկայամ Յարութիւնի որդի Ալավերդիս:

2. 1ա Սահաբ ք[ա]լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի եղր-
րովն վկայեմ թօխ[ա]թեցի Խ[ա]չ[ա]տրի որդի
Մ[ա]րգ[ա]րս:

3. 1ա Սահաբ ք[ա]լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի եղր-
րովն վկայեմ Մեխումի որդի Մուրատս:

4. 1ա Սահաբ ք[ա]լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի եղ-
րովն վկայեմ Յարուփինի որդի Խ[ա]չիկս:

5. 1ա Գրիգորի որդի պարոն Խաչատուրս ք[ա]
լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի եղրովս վկայեմ:

6. 1ա Սահաբ ք[ա]լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի եղ-
րովն վկայեմ Մնացականի որդի Իգնատիսս:

7. 1ա Տէր Մելիսեթի որդի Յովնջանս ս[ա]հ-
[ա]բ ք[ա]լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի եղրովն վկայեմ:

8. 1ա Կիրակոսի որդի Ս[ա]րգիս ս[ա]հ[ա]բ

ք[ա]լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի եղրովն վկայեմ:

9. 1ա Սահաբ ք[ա]լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի եղ-
րովն վկայեմ Սիմոնի որդի Մանուկս:

10. 1ա Ես Դաւթի որդի Մարգ[ա]րս սահաբ
ք[ա]լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի եղրովն վկայեմ:

11. 1ա Ս[ա]հ[ա]բ ք[ա]լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի
եղրովն վկայեմ Մումելի որդի Գրիգ[ո]ր[ս]:

12. 1ա Սահաբ ք[ա]լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի
եղրովն վկայեմ Կ[ա]ր[ա]պ[ե]տի որդի Ադամս:

13. 1ա Սահաբ ք[ա]լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի եղ-
րովն վկայեմ Մնացի որդի Յովանէսս:

14. 1ա Ս[ա]հ[ա]բ ք[ա]լ[ա]նթ[ա]ր Ս[ա]րգսի
եղրովն վկայեմ Սիմոնի որդի Յարուփինս:


ԳՐՉԱՓՈՐՉ 2բ «Ա»:

9
ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ


թղթայ. 1, վառ. 9

ՌՃԿԹ -1720

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2աբ: ՆԻԻԹ՝ կապոյտ
թուղթ. լուսագրով՝ «ВФБИ, 1837»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝
35,4x21,9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն
(նմուշ՝ 1ա), վրացերէն (նմուշ՝ 1բ): ՏՈՂ՝ 22:



Նմուշ 1ա



Նմուշ 1բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1աբ «Копія съ купчей крѣпости. Волею и
помощію Божіею Отца и Сына и Святого
Духа... я Мирзаанскій Оганезъ и естъ свидѣ-
телемъ сему купчому документу»: ԴՈՒՃԱՂՎԻ-
ԼԵՐՈՎ Դոզին, իր որդի Գիրգին, իր ազգական Զա-
քարիան վաճառում են իրենց հողամասը Դաւիթ
եշիբարաշվիլուն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ Писана въ началъ юнь 1720-го года.
Сій купчий, и севященникъ Иванъ сему доку-
менту свидѣтель (այնուհետեւ՝ վրացերէն ստորագ-
րութիւններ):

ՆՇՈՒՄ՝ 2բ (վրացերէն):


10
ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

թղթայ. 1, վառ. 10

ՌՃՀԱ -1722

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լու-
սագծերով, լուսապատկերով (անընկալելի): ՄԵ-

ԾՈՒԹԻԻՆ՝ 34,7x21,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝
ռուսերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 20:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթ 1ի ստորին եզրերը վնասուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրուրեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Указъ 1722 апрѣля 4-го о томъ что протопоповъ, поповъ, и дьяконовъ... Указъ 1723»: Հրամանագիր այն մասին, որ աւագերէցներին, եւէցներին, տիրացուներին եւ նրանց զաւակներին գլխահակի մէջ չգրեն, եթէ իրօք նրանք եկեղեցիներում պաշտօնավարում են, իսկ եթէ ոչ՝ գրեն հարկատուների մէջ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Տէ՛ս Բովանդակութեան սկզբում:

11

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 1, վա. 11

ՌՃԶԶ, ՌՃՂԷ-1737, 1748

ԳԻՒԶ՝ աէր Գաբրիէլ:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 11,6x8,5:

ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 8:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշարը գունափոխուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1ա ԹՎԻՆ ՌՃԶԶ (1737) եւ՝ աէր Գաբրիէլս գրեցեր, մահտարածամ շատ մարդ շարդեց, ցորեն ժԳ (13) զօլթա ծախեցաւ, գարի թ (9) զօլթա ծախեցաւ. ամէն:

2. 1ա ԹՎԻՆ ՌՃՂԷ (1748)ին Վարդավառի պահոց օրն Ե (5) շախի [թ]ի արեճական լոյս նվազեցաւ, Աստուած վերջ բարին կատարէ. ամէն, յուլիսի ժԳ (14)ին:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1ա Տէ՛ս Բովանդակութիւն 1, 2:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ 1բ «արգդեց»:

12

ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ


թղթ. 1, վա. 12

ՌՃԶԵ-1736

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ]

ՀԵՂԻՆԱԿ՝ մհա. Զաբարիա:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22,3x17,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 16+6+7:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Է: Աբրահամ կաթողիկոսէն - Պատճառ գրոյս այս է, որ ես՝ նորեցի պարոն Մարգարի որդի մահտեսի Զաբարիաս..., այլ մահտեսի Զաբարիէայէն ո՛չ առնելիք ունիմք եւ ոչ բան. թէ՛ տունն եւ թէ՛ այգիքն Սուրբ Աթոռիս եղև Աստուծով»: Պայմանագրում նշուած է, որ նորեցի պրն Մարգարի որդի մհա-ի Զաբարիան էջմիածնից վերցրած 60

քուման փողի պարաֆի դիմաց Սբ. Աթոռին է վաճառում իր տունն ամբողջությամբ, այգիները, վարելահողը, ամբողջ ունեցուածքը: Հաստատուած է 7 վարդապետների վկայութեամբ եւ կնիքներով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Այս եղեւ ՌՃՁԵ (1736) թուին, յունվարի քսան օրն:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 1բ (ԺԸ դ., նոտագիր) Նորեցի մահտեսի Զաֆարիայի այգոյ թամասուկն է:

2. 1բ (ԺԸ դ., նոտագիր) Ոյր աղագաւ զկնէ զիւր տունն եւ այգին թողացուցեալ է էջմիածնի:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1. 1ա մատնադրոշմ մահ-ի Զաֆարիայի: 2. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ

ԾԱՌԱՅ /ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ /ՌՃԿՁ (1717)»:

3. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԱՂԷՔՍԱՆԴՐ ՎԱՐԴԱՊԵՏ»:

4. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ /ՌՃԿԷ] (1718)»:

5. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ԴԱՆԻԷԼ /ՎԱՐԴԱՊԵՏ»:

6. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՄԱՐՈՒԳ ՎԱՐԴԱՊԵՏ /ԹՎ[ԻՆ]///»:

7. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՅԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ /ՌՃՁԳ (1735)»:

8. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ԶԱՔԱՐԻԱՅ /ՎԱՐԴԱՊԵՏ»:

Մնթ. Տե՛ս «Կալվածագրեր եւ տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 եւ 1655-1839 թթ.)», պրակ I, կազմեց՝ Հար. Աբրահամյան, Երեսան, 1941, էջ 169 (այսուհետեւ՝ 3. Աբրահամյան, № ..., էջ...):

ՀԱՇՈՒԵՄԱՏԵԱՆ


թղթ. 1, վա. 13

ՍՈՒՐԻՔ ԷՋՄԻԱԾԻՆ


ԳՐԻՉ՝ Միխայել վրդ.՝ 1739, 1741 թթ. (1-70), Անտոն վրդ.՝ 1745 թ. (71-7), Յակոբ վրդ. Շամախեցի՝ 1746, 1749-1751, 1753-1759 թթ. (78-96, 115-9, 135, 139-51, 153, 155-60, 317-29, 333-63, 367-417, 436, 438), Յօսէփ արքյ՝ 1747 թ. (365), Յովաննէս վրդ.՝ 1749 թ. (97-8, 107-113), Գալուստ վրդ.՝ 1750 թ. (121, 127-32), Թադէոս վրդ.՝ 1751, 1753-1754 թթ. (161, 165-77, 207-56, 265-316), Մինաս վրդ.՝ 1752 թ. (191-9, 202-3), Աւետիֆ վրդ.՝ 1753 թ. (179-80, 185-8, 204), Ռէթէոս վրդ.՝ 1753 թ. (205, 257-63):

ԹԵՐԹ՝ 440 էջ (96-97 էջերի միջև 7, 190-191ի՝ 1, 200-201ի՝ 2, 256-257ի՝ 1, 430-431ի՝ 2 թերթ կտրած-հանած: Նախկին կազմարարը մամուլները սխալ է դասատրել եւ խառնել է մատենանի էջակարմը): չգրուած՝ 99-106, 114, 120, 122-6, 133-4, 136-8, 152, 154, 162-4, 178, 181-4, 189-190, 200-1, 206, 264, 330-2, 364, 366, 418-35, 437, 439-40: ՊՐԱԿ՝ Ա.ԻԱ. (Ա, ԻԱ՝ 5, Բ՝ 15, Գ, Զ, Ը, ԺԳ, ԺԶ՝ 10, Դ, ԺԸ՝ 12, Ե, Ժ՝ 6, Է, ԺԲ, ԺԵ՝ 14, Թ, ԺԹ՝ 13, ԺԱ՝ 8, ԺԴ, ԺԷ, Ի՝ 11): ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագ, ներկեում՝ շեղանկյուն ողկոյց: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 32,5x21,6: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն, միասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1), նոտագիր (նմուշ՝ 107): ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 37-42: ԿԱԶՄ՝ ստուարաթղթէ միջուկով թուղթ, մէջքը կաշի (նորոգուած): ՊԱՀՊԱՆԱԿ՝ Գ+Բ (չգրուած թուղթ):


ՌՃՁԸ-ՌՄԸ-1739-1759




Նմուշ 1 (Միխայել վրդ.)




Նմուշ 71 (Անտոն վրդ.)




Նմուշ 79 (Յակոբ վրդ.)




Նմուշ 107 (Յովաննէս վրդ.)




Նմուշ 127 (Գալուստ վրդ.)




Նմուշ 161 (Թաղեոս վրդ.)




Նմուշ 185 (Աւետիք վրդ.)



Նմուշ 191 (Մինաս վրդ.)



Նմուշ 205 (Ռեթեոս վրդ.)



Նմուշ 365 (Յուսէփ արք.)

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերը տեղ-տեղ պո-
կուած, եզրերը վնասուած:

ԻՍԿՈՒԹԻՒՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՒՆ

Մատեանում գրանցուած են Սբ. Արթուրի 1739-
1759 թթ. հարկերն ու ծախսերը՝ վերոյբերեալ
վարդապետների կողմից:

1. 1-32 Այս է մասրաֆ եւ խարջն Սուրբ Աթոռոյս:
Ա (1) թուման ետու զձկէ (167) զազկատուի, շո-
րապանի ձեռքն, մայիսի ժի (12)... քուլ շամն այս
դաֆթարիս եղեւ ԴձՁԳ (484) թուման է՛՛՛ (7000) Գ
(3) ապասի Բ (2) փող:

2. 32-6 Ի ՌձՂ (1741) թուին, մարտի ժի (18):
Դարձեալ. այս է Սուրբ Աթոռիս խարճ եւ մաս-
[ր]աֆն... Իսկ վերոգրեալ Ե (5) շամն դաֆթարիս
միահողոյն եղեւ իննսուն թումանէն Ե (5) շահի պա-
կաս, ի մայիսի Իէ (27): Վերջ:

3. 36-46 Դարձեալ. Ի ՌձՂ (1741) թուին, ի յունի-
սի մուսն: Այս է Սուրբ Աթոռիս խարճ եւ մասրաֆն...
շամն վերոյ բովանդակին եղեւ ԲձԿԱ (261) թուման,
Ե՛՛՛ (5000) ԲձԾ (250) դիան:

4. 46-55 Դարձեալ. ՌձՂԱ (1742) թվին, մարտի
ամսոյ ժ (10): Այս է Սրբոյ Աթոռոյս խարճ եւ մաս-
րաֆն... շամն բովանդակ եղեւ ԳձԽԹ (349) թուման,
Դ՛՛՛ (4000) ԱձԵ (105) դիան:

5. 56-69 Դարձեալ. ՌձՂԱ (1742) թվին, մարտի
ամսոյ ժ (10): Այս է Սրբոյ Աթոռոյս խարճ եւ մաս-
րաֆն... վերոգրեալ շամն է (7) թուղթ դաֆթարիս
եղեւ ԲձԾԳ (253) թուման, է՛՛՛ (7000) Գձ (300) ՁԵ
(85) դիան:

6. 70 Ի ՌձՂԳ (1745) թուին, յունվարի մէկին: Այս
է ի սրբազան վեհէն առած փողս, զոր խառճելոց եմ,
որք են այսք... եւս ետ սրբազան ձեռամբ Յովանէս
վարդապետին ի մարտի ԻԳ (24):

7. 70 Ի ՌձՂ եւ Գ (1745) թուին, որ յունվարի
սկզբէն մինչ ի մայիսի ելքն, որ գիւղիս գեալուրն, այ-
սինքն՝ աթոռահա[ր]կն եւ հոգեբաժինն դաւթարի...
քուլու շամն եղեւ Ձէ (87) ց(թուման) Գ՛՛՛ (3000):

8. 71-7 Այս է մասրաֆ եւ խարճն Սրբոյ Աթո-
ռոյս: ժ (10) ց(թուման) ետու սրբազան վեհին ի
փետրվարի ԻԳ (23)ին... վերոյ գրեալ Գ (3) թուղթ
եւ ժԳ (14) ղալամ դաւթարիս շամն եղեւ Ձէ (87)
ց(թուման) (եղիւ տառ սխալ գրած-ջնջած) Գ՛՛՛ (3000)
Ղձ (900) ԻԵ (25) դիան: Յունիս ժ (10)ին վերջ եղեւ:

9. 78 Մարտի ամսոյ Բ (2): Բ (2) թուման ետու
սրբազան վեհին մերոյ... շամն եղեւ ՌձԽԳ (1143)
թուման:

10. 79-96 Այս է մասրաֆ եւ խարճն Սրբոյ Աթո-
ռոյս: Գարւոյ ետու, որ էր Լ (30) լիտր... Այս երեք
թուլարի շամեն. շամն է ԼՁ (36) թուման Կ (60) դիան:

11. 97-8 Այս է ըստակն, որ ինձ յանձնեցաւ: Առի
սրբազան վեհապետէն իմմէ մէկ թուման... ժԵ (15)
ց(թուման) եղեւ շամն:

12. 107-11 Այս է խարճ եւ մասրաֆն: Մէկ թու-
ման ետու գաջի... Բովանդակի շամն եղեւ ԾԲ (52)
թուման, ՁՌ (6000) Գ (3) շահի:

13. 111-3 Վերստին սկսայ ի ՌճՂԸ (1749) թվին, յուլիսի մէկն. մասրաֆն Սրբոյ Աթոռոյս: Մէկ թուման տվի Դավիթ վարդապետին... Բ (2) թուման տվի սրբազան վեհի հրամանաւն եղվարդեցոց մեր հնձ[ւ]որացն Ի (20) հոգւոյ, որ կալին մեզ ցորեան տալ պարտին ինչ նրխով որ գնայ: Թամասուկն տվի տեղապահ Յակոբ վարդապետին:

14. 115-9 Այս է խարճ եւ մասրաֆն: Բ (2) ապասի տվի Գ (3) քար աղի... ջամն եղեւ վերոյ խարճիցն ժէ (17) թուման, եմ (5000) Դճ (400) ժե (15) դիան:

15. 121 Այս է ստակն, որ ինձ յանձնեցաւ: Առի սրբազանէն իմմէ մէկ թուման... է (7) թուման փող առի ձեռամբ տիրացու Ովսէփին մայիսի մուտն:

16. 127-31 Այս է խարճ եւ մասրաֆն: Գ (4) Ռ (1000) ժԱ (11) շահի ետու... ջամն Ե (5) թուման եմ (5000) դիան է (7) շահի եղեւ:

17. 131-2 Այս է խարճ եւ մասրաֆն: է (7) Ռ (1000) դիան ետու Գ (4) բարդի ծառի... ջամն ԻԲ (22) Ռ (1000) դիան Գ (3) շահի Գ (3) փող:

18. 135 Այսքանք են, որք ի ստորեւ կարգաւ գրեցան... վասն որոյ ժ (10) ղալամիդ ջամն եղեւ:

19. 139-51 էմ (7000) դիան Ա (1) շահի Թ (9) փող... էմ (7000) Դ (4) աբասի Գ (3) շահի Գ (3) փող: Վերոյ ժ (10) ղալամիդ ջամն է:

20. 153 Այս է ստակն, որ ինձ յանձնեցաւ... է ջամն բոլոր առքիս Զ (80) թուման:

21. 153 Այս է ստակն, որ ինձ յանձնեցաւ... ինձ էհաս բողփի, շաղվամի, քալամի, գազարի, սոխի գինն՝ Թաթոս, Ղունկիւանոս եւ տնտես վարդապետաց ձեռօքն:

22. 155-8 Այս է խարճ եւ մասրաֆն Սրբոյ Աթոռոյս... երկու թղթիս ջամն եղեւ բովանդակ ՀԹ (79) թուման, Թ (9) Ռ (1000) Գ (3) շահի Բ (2) փող:

23. 158-60 Այս է խարճ եւ մասրաֆն Սրբոյ Աթոռոյս... Իէ (27) Ռ (1000) ժ (10) շահի ետու մշակաց եւ մէհտարաց:

24. 161 Այս սրբազան վեհէն ինձ թասլիմ ելած ստակն... ԻԱ (21) թուման ճ (100) լիտր բամբակագին առի լիտր ԲՌ (2000) Աճ (100) դիանով:

25. 165-77 Խանի դռնաբանին, որ սրբազան վեհ[ի] հետ գնացինք Երեւան, ետու Եճ (500) դիան... Յախ առի ԳՌ (3000) դիանի վէքիլի ձեռօքն:

26. 179 Ի յունվար ամսոջն առի եւ էհաս ի սրբազան [վեհապետէն]... ժ (10) ց(=թուման) ի փետրվար ամսոջն՝ ձեռամբ տիրացու Յովսէփին:

27. 180 Ի դեկտեմբեր ամսոյն հասին:

28. 185-8 Ի յուլ[ն] վար ամսոջ խարճքն այսք են... Զ (6) բեռն անծողի՝ ձեռամբ վաքիլին:

29. 191-9 Բ (2) ղուռուշ Բ (2) աղք[ա]տի ետու ողորմութիւն... Վերոյ գրեալս Դ (4) թղթի խարճի ջամն ճԼԲ (132) ց(=թուման) էմ (7000) Բճ (200) դիան:

30. 199 Ա (1) քէսա. հոգտեմբերի մուտն... Նիկ[ն]ղ[ա]յոս վարդապետն գեղորէիցն եբեր Ա (1) թուման:

31. 202-3 ԼԶ (36) ղուռուշ. ժԸ (18) սոման, կէս կտաւատ... Ը (8) թուման, ԱՌ (1000) Եճ (500) դիան:

32. 204 Յանցեալ դեկտեմբեր ամսոյ խարճքն այս[ք] են... ԱՌ (1000) Բճ (200) Մ (50) դիան. Ի Ը (8) օրն զշաբաթ, Բ (2) լիտրուկէս ձիթոյ, լիտրն ժ (10) շահի՝ ձեռամբ ամպրպետին եւ վաքիլին:

33. 205 Այս է սրբազան վեհէն ինձ թասլիմ եղեալ ստակն... Զ (6) թուման ԲՌ (2000) ետու Բ (2) ժամօրհնօղ եւ լուսարար վարդապետաց:

34. 207-56 Այս է իմ արարեալ խարճ եւ մասրաֆն... ժԳ (13) ց(=թուման) Եմ (5000) Գ (3) աբասի. վերոյ գրեալ Ը (8) ղալամի ջամն է:

35. 257-63 Այս է մասրաֆ եւ խարճն Սրբոյ Աթոռոյս... Ե (5) ց(=թուման) ժԸ (18) շահի: Այս վերոյ գրեալ ժ (10) ղալամիս ջամն է:

36. 265-304 Այս է խարճ եւ մասրաֆն Սրբոյ Աթոռոյս... Ա (1) ց(=թուման) ԸՌ (8000) Գ (3) ապասի: Այս վերոյ գրեալ Բ (2) ղալամիս ջամն եղեւ:

37. 305-15 Նոր արած մասրաֆն: Այս է իմ Թաղէտ վարդապետիս ի վերայ Սրբոյ Աթոռոյս... Բ (2) ց(=թուման) ԸՌ (8000) Ա (1) շահի Գ (3) փող: Այս վերոգրեալ ժԱ (11) ղալամիս ջամն եղեւ:

38. 316 ՌԲճԴ (1755) թուին, յունվարի Գ (3)ին: Այս է իմ Թաղէտ վարդապետիս արարեալ խարճ եւ մասրաֆն ի վերայ Սրբոյ Աթոռոյս... ԲՌ (2000) Դ (4) ապասի գիտութեամբ տեղապահ եւ ժամօրհնողին:

39. 317-29 Առի ի սրբազանէն Ը (8) թուման փող... Առի եւս ի նմանէ վասն խարճելոյ երեք թուման, ԴՌ (4000) Ը (95) դիան՝ գիտութեամբ Ղունկիւանոս վարդապետին, ի սոյն ամսոյ Դ (4)ին ղաբզովէ:

40. 333-54 ետու ժամօրհնօղ Յակոբ վարդապետին Ե (5) թուման փող... ետուք եւս մեր դրաւդային ԳՌ (3000) դիան ի կողմանէ մսագնոյ եւ իւղագնոյ՝ գիտութեամբ լուսարար եւ ժամօրհնօղ վարդապետաց, ձեռամբ մեր Պետրոսին, ի սոյն ամսոյ ԻԵ (25)ին:

41. 355-6 Մասրաֆ խարճին, որք են ի ներքոյ[յ] գրեալքս... Քարվանսարայի, յուլիսի ամսոյ քրէի կողմանէն, առի Խաչատուր վարդապետէն Ա (1) թուման, ԴՌ (4000) Աճ (100) Հ (70) դիան օգոստոսի ԻԸ (28) Յակոբ եւ Օվանէս վարդապետաց գիտութեամբն:

42. 357-63 Այս է գեալուրն Սրբոյ Աթոռոյս... ջամն եղեւ ԻԲ (22) թուման, ԴԻ (4000) ԸՃ (800) դիան: Վերջ:

43. 365 եւ զոր ինչ եկք են, այս է... Դ[ա]րձ[եա]լ է. ետ Թաթէնս վարդապետին, որ բանտրաց ետ ԼԲ (32) դուռուչ Գ (3) ապասի Ե (5) փող:

44. 367-80 ԺԵ (15) ց(=բուման): Ետու աթոռակալ Թաթէնս վարդապետին վասն խարճելոյ ի պէտս Սրբոյ Աթոռոյս... Վերջ հաշիւ առուես տրոց Թ (9) թուման, ԸԹ (8000) ԷՃ (700) ԻԵ (25) դիան. վասն որոյ ԺԹ (19) զալամիդ ջամն է:

45. 381-8 եւ (40) ց թուման նախ առի ի լուսարարէն եւ ի տիրացու Յովսէփիէն... Վերջ հաշիւ առուես տրոց ԿԹ (69) թուման, ԹԹ (9000) ԷՃ (700) դիան. վասն որոյ ԺԱ (11) զալամիդ ջամն է:

46. 389-406 Թուականն ՌՄՁ (1757) եւ մարտամիս: ԵՃ (500): Ետու եւս հինգ հարիւր դիան... գիտութեամբ Եղիազար եւ Ղունկիանոս վարդապետացն ի սոյն ամսոյ ԺԴ (14)ումն. դաբազովէ:

47. 406-17 Ետու եւս խանի նազիր Իբրահիմիին, զի լաւութիւն արացէ Սրբոյ Աթոռոյս, Բ (2) թուման մէկ Ռ (1000) ԲՃ (200) Մ (50) դիան... Երկաթ առի ԻԹ (29) լիտր, որոյ գինն սուի մէկ թուման ՁՃ (600) դիան ի յուլիսի Ը (8)ին եւ ձեռամբ շորապան Գրիգոր վարդապետին:

48. 436 Այսքան, որ [ի] ներքսն գրեալ է... պամպակ Գ (3) սոմար:

49. 438 Այսքան է. Ղարաա[յ] ցորենն Գձ (330) սոմար... բօվանդակ չաթնուկի ջամն եղեւ ԲԹ (2000) ԲՃ (200) ԺԲ (12) սոմար:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ № 28:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Միխայէլ տրուպ եւեթ վարդապետս արարի գտաւթարս զայս ի ՌՃՁԸ (1739) թվին, մայիս ամսոյ ԺԲ (12):

2. 71 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Անառն տրուպ եւեթ վարդապետս արարի գտաւթարս զայս ի ՌՃՂԴ (1745) թուին, յունվարի մէկին:

3. 78 Թուին ՌՃՂԵ (1746) ես՝ Յակոբ տրուպ եւեթ վարդապետս, զոր ինչ ետու Սրբոյ Աթոռիս կալուրէն սրբազան վեհին մեմ(ր)ոյ, որք են ի ներքոյ գրեալքս:

4. 79, 357 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Յակոբ տրուպ եւեթ վարդապետս արարի գղաւթարս զայս ի ՌՃՂԵ (1746) թուին, փետրվարի Դ (4)ին:

5. 355 Թուին ՌՃՂԵ (1746), փետրվարի ամսոյ Զ (6)ումն: Այս է առքն իմ, զոր առի սրբազան վէհէն, ես՝ Յակոբ տրուպ եւեթ վարդապետս, վասն Սրբոյ Աթոռոյս:

6. 115 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Յակոբ անարդիւն եւեթ վարդապետս արարի գղաւթարս զայս ի ՌՃՂԸ (1749) թուին եւ ի օգոստոսի ԺԷ (17), շաբաթու օրն:

7. 135 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ի սրբազան վեհապետէն մերմէ ինձ՝ տեղապահ Յակոբ անարդիւն վարդապետիս Շամախեցոյ, հասեալ փողն վասն խարճելոյ ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս:

8. 139 Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի վասն խարճից ոմանց եւ տրոց զդաֆաարս այս արարի ես՝ Շամախեցի տեղապահ Յակոբ անուամբ միայն վարդապետս ի ՌՃՂ եւ Թ (1750) թուականիս մերում եւ ի մայիսի ամսոյ Ժ եւ Գ (13)ումն:

9. 153 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Յակոբ անարդիւն եւեթ վարդապետս արարի գղաւթարս զայս ի ՌՃՂԹ (1750) թվին եւ ի սեպտեմբերի ԻԶ (26):

10. 153 Վերստին սկսայ ի ՌԲՃ (1751) թվին:

11. 155 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն. ամէն: Ես՝ Յակոբ անարդիւն եւեթ վարդապետս արարի գղաւթարս զայս ի ՌՃՂԹ (1750) թվին եւ սեպտեմբերի ԻԶ (26):

12. 158 Վերստին սկսայ ի ՌԲՃ (1751) թվին յունվարի մուտն:

13. 367 Ի ՌՄԲ (1753) թուին եւ ի յօգոստոսի մտին: Հրամանաւ տեառն իմոյ Աղէֆսանդր սրբազան հայրապետին: Յորժամ կարգեցայ տեղապահ ի Սուրբ Աթոռոջս Էջմիածին, ես՝ մեղաւոր Յակոբ վարդապետս Շամախեցի, յայնժամ որքան դրամս, զորս ի հասիցն Սրբոյ Աթոռոյս ետու եւ ծախեցի ի հարկաւոր պէտս սորին, գրեցի կարգաւ զայնս զամենեսեան ի յայսմ դաֆթարումս:

14. 381 Ի ՌՄԲ (1753) թուին եւ ի յօգոստոսի մտին: Հրամանաւ տեառն իմոյ Աղէֆսանդր սրբազան հայրապետին: Յորժամ կարգեցայ տեղապահ ի Սուրբ Աթոռոջս Էջմիածին, ես՝ մեղաւոր Յակոբ վարդապետս Շամախեցի, յայնժամ որքան դրամս, զորս ի հասիցն Սրբոյ Աթոռոյս առի եւ ծախեցի ի հարկաւոր պէտս սորին, գրեցի զայնս կարգաւ զամենեսեան ի յայսմ դաֆթարումս:

15. 369 Արդ՝ այսուհետեւ ի մտանելն ի ՌՄԳ (1754) թուականն եւ ի յունվար ամիսն եւ ի գնալն իմ ի յԷրզրում ընդ յառաջ սրբազանին, զձեռամբ իմով տուեալ եւ զարարեալ խարճան գրեմ ահա՛:

16. 317 Ի ՌՄԳ (1755) թուականիս եւ ի քսան եւ հինգ յունիս ամսոյս: Հրամանաւ տեառն իմոյ Աղէֆսանդրի սրբազանի եւ արժանապատուոյ կաթողիկոսին ամենայն Հայոց եւ Սրբոյ Էջմիածնի: Դաֆղարս այս կրկին արարի ես՝ մեղապարտ Յակոբ տեղապահ վարդապետս Շամախեցի: Որ է վասն առից եւ մտից դրամից ոմանց, զորս՝ թէ՛ ի սրբազանէն եւ թէ՛ ի յայլոց մարդկանց առնում յանուն Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, եւ խարճեմ ի հարկաւոր պէտս սորին թէ՛ իմոյ ձեռամբս եւ թէ՛ այլոց, որք են ի ներքոյ գրեցեալքդ:

17. 333 Ի ՌՄԳ (1755) թուականիս եւ ի քսան եւ հինգն յունիս ամսոյս: Հրամանաւ տեառն իմոյ Աղէֆսանդրի սրբազանի եւ արժանապատուոյ կաթողիկոսին ամենայն Հայոց եւ Սրբոյ Էջմիածնի: Դաֆղարս այս կրկին արարի ես՝ մեղապարտ Յակոբ տեղապահ վարդապետս Շամախեցի: Որ է վասն տրոց եւ ելից դրամից ոմանց, զորս տամ ժամօրհնօղ Յակոբ վարդապետին՝ առ ի խարճելոյ ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս եւ կամ ես ձեռամբ իմով խարճեմ, որք են ի ներքոյ գրեցեալքդ:

18. 406 Թիվըն եղեւ ՌՄԸ (1759) եւ ամիսն յունվար, յորում ըսկսայ ես՝ տեղապահ Յակոբ վարդապետս նորապէս խարջ եւ մասրաֆ առնել:

19. 365 Ի ՌՃՂԶ (1747), նոյեմբեր մէկ. կարգեցաք գործակալ Սուրբ Աթոռոյս, վասն որոյ եւ զոր ինչ տր[ու]եցաւ ինձ՝ Յօսէփ արեղայիս:

20. 97, 107 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Յովաննէս անարդիւն եւեթ վարդապետս արարի զդաւթարս զայս ի ՌՃՂԸ (1749) թուին եւ ի փետրվարի Ի (20), անառակի կիրակէի երկուշաբթի օրն:

21. 121 Է: Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Գալուստ անարդիւն եւեթ վարդապետս արարի զդաւթարս զայս ի ՌՃՂԹ (1750) թուին եւ ի յունվարի մուտն:

22. 127 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Գալուստ տեղապահ վարդապետս ի ՌՃՂԹ (1750) թուին եւ ի յունվարի մուտն:

23. 131 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ տեղապահ Գալուստ վարդապետս ի ՌՃՂԹ (1750) թուին եւ ի մայիսի մուտն:

24. 161 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Թաղէոս անարդիւն վարդապետս արարի զայս դաւթարս ի աթոռակալութեան ժամանակիս, որ էր ի ՌՄ (1751) թվին, հոգտեմբերի ժե (15)ումն:

25. 165 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Թաղէոս անարդիւն վարդապետս, որ իմ աթոռակալութեան ժամանակին. այս է ի ՌՄ

(1751) թվին, հոգտեմբերի ժե (15):

26. 207 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ անարդիւն Թաղէոս վարդապետս արարի զդաւթարս զայս ի ՌՄԲ (1753) թվին, մայիսի ժԳ (14)ին: Ձ[կ]նի վախճանման Միմաս կաթողիկոսին միաբան եղբարց կամօքն եղէ գործապետ:

27. 265 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Թաղէոս վարդապետս արարի զդաւթարս զայս ի ՌՄԳ (1754) թվին, յունվարի ամսոյ մուտն:

28. 191 ՌՄԱ (1752) թվին, ապրէլ ամսոյ ԻԳ (23): Աստուծով եւ հրամանաւ [վեհապետ]ին Սրբոյ [Աթոռոյ] Միմաս նուաստ վարդապետս եղէ գործակալ:

29. 179 Հրամանաւ ամէնօրհեալ սրբազան վեհապետին, որ ես՝ Աւետիք նուաստ վարդապետս տեղապահ եղէ եւ գործակալ Սրբոյ Աթոռոյս, ի ձեռն եղբարց ոմանց եկք եւ գէլուր առի, որք ի ներքոյ ահա կարգաւ գրին:

30. 185 Հրամանաւ երանեալ սրբազան վեհապետին, որ ես՝ Աւետիք նուաստ վարդապետս տեղապահ եղէ եւ գործակալ Սրբոյ Աթոռոյս, ի ձեռն եղբարց ոմանց ելք եւ խարճք, զորս արարի, այսք են, որք ի ներքոյ կարգաւ գրին:

31. 180 Հրամանաւ սրբազան վեհապետիս, յորժամ վերստին կարգեցայ գործապետ, այսք են ինձ հասեցեալ արդիւնքն, որ ի ներսէն ի ձեռն եղբարց ոմանց, որք գրին ի ներքոյ կարգաւ ի ՌՄԲ (1753) թվին. Աւետիք նուաստ վարդապետ:

32. 204 Հրամանաւ սրբազան վեհապետիս, յորժամ վերստին կարգեցայ գործապետ, այսք են իմ արարեցեալ խարճս, որք գրին ի ներքոյ կարգաւ ի ձեռն եղբարց, ի ՌՄԲ (1753) թվին. Աւետիք վարդապետ նուաստ ծառայ Բարձրելոյն:

33. 205 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Ռէթէոս անարդիւն եւեթ վարդապետս, որ եղէ գործապետ սրբազան վեհին եւ գործակալ Սրբոյ Աթոռոյս, ի ՌՄԲ (1753) թուականին եւ յունվարի ամսոյ ութին, օրն ուրբաթ:

34. 257 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ես՝ Ռէթէոս անարդիւն եւեթ վարդապետս արարի զդաւթարս զայս ի ՌՄԲ (1753) թվին եւ յունվարի ամսոյ ութն, ուրբաթ:

ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐՉԱՅ

1. 113 Ի ՌՃՂԸ (1749) թվին, օգոստոսի ժԳ (13) Յովաննէս վարդապետս տեղապահութենէ ելի եւ այս դաւթարիս հէսապն տվի: Վերջ:

2. 199 (Միմաս վրդ., 1752 թ.) Այս աւաթարիս հէսապն տեսնինք սեբտեմբերի ելն, սրբազանի դու-

լուղին, զոր եւ կնքեաց մշակաց աւաթարն. ինչ որ խարջ եմ արել մնաց, որ ի կատարմանն հէսապն տեսնունք, եւ Աստուծով, հոգտեմբերի մուտն, սկիզբն արինք նոր աւաթար՝ առնել զելն եւ զմուտն:

3. 202 (Մինաս վրդ.) Աստուծով: ՌԻՃԱ (1752) թվին հոգտեմբերի մուտն լիցի մեզ նոր աւաթար:

4. 436 (Մինաս վրդ.) Թվին ՌՄԱ (1752) սեպտեմբերի Գ (3)ն սկսեալ աշնաւար ցորեն ցանեցինք եւ սեպտեմբերի ԻՆ (25) աւարտեցինք:

5. 438 (Մինաս վրդ.) Թվին ՌՄԱ (1752) նոյեմբերի մուտն մեր տանս հացն տար անել տուինք:

6. 135 (Յակոբ վրդ. Շամախեցի, 1749 թ.) Արդ՝ զվերոգրեցեալ ինձ հասեալ դրամսդ՝ տասն դալամ, բովանդակ խարճեցի ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս: Որք եւ գրեցեալք են ի յառաջիկայ իմ արարեալ դաֆղարումդ, թէ վասն ո՛րպիսեաց իրաց եւ իրակութեանց խարճեցեալք են:

7. 385 (Յակոբ վրդ. Շամախեցի, 1753 թ.) Ի սոյն թուին եւ ի հոգտեմբերի Ժ (10), զկնի վերոգրեալ առիցդ, նոր կրկին առք:

8. 373 (Յակոբ վրդ. Շամախեցի, 1754 թ.) Ի սոյն թվին եւ ի հոգտեմբերի Ժ (10)ումն սկսեալ, զկնի անցեալ տրոց, նոր տուրք եւ արած ոմանք խարճք եւս: Ահա՛ վերստին աստէն շարունակաբար գրեցեալք լինի:

9. 319 (Յակոբ վրդ. Շամախեցի) Ի ՌՄԴ (1755) թվին եւ ի նոյեմբերի ԺԱ (11)ումն, յորում վախճանեցաւ տէր Աղէսանդր սրբազան կաթողիկոսն, յետ վախճանման սորա՝ իբրեւ սկսայ նոր խարճ առնել (տե՛ս նաեւ աստ № 27):

10. 376 (Յակոբ վրդ. Շամախեցի) Վերստին մասրաֆն եւ խարճն վասն Սրբոյ Աթոռոյս, ի ՌՄԴ (1755) թվին, ի յունվարի:

11. 380 (Յակոբ վրդ. Շամախեցի, 1755 թ.) Ի վերոյ է (7) թղթոյդ եւ Ժ եւ Դ (14) երեսիդ վերայ գրեցեալ. ԳՃ՝ (300) ԻԸ՝ (28) դալամ տրոց դրամից ջամից՝ բովանդակ ջամն է էՃՆ (705) թուման, ԵՌ (5000) ԱՃն (140) դիան:

12. 388 (Յակոբ վրդ. Շամախեցի, 1755 թ.) Ի վերոյ Դ (4) թղթոյդ եւ Ը (8) երեսիդ վերայ գրեցեալ. ԱՃՂ եւ Գ (173) դալամ առից դրամից ջամից՝ բովանդակ ջամն է ՁՃՂէ (697) թուման, ՁՌ (6000) ԵՃ՝ (500) ԾՆ (55) դիան:

13. 321 (Յակոբ վրդ. Շամախեցի) Աստանօր ամն լրացաւ եւ թուականն եղեւ ՌՄԵ (1756) եւ յունվար ամիսն:

14. 339 (Յակոբ վրդ. Շամախեցի) Թուականն ՌՄԵ (1756) եղեւ, ահաւասիկ եւ յունվար ամիսն:

15. 325 (Յակոբ վրդ. Շամախեցի) Թուականն մեր

եղեւ ՌՄԶ (1757) եւ ամիսն յունվար, յորում նոր առքս մեր:

16. 353 (Յակոբ վրդ. Շամախեցի) Թուականն եղեւ ՌՄԶ (1757) եւ ամիսն յունվար, յորում սկսաք խարճել նորապէս:

17. 354 (Յակոբ վրդ. Շամախեցի, 1757 թ.) Ծանի՛ր ընթերցող, զի պակասեցաւ աստ կարգի թուղթ դաֆղարիս, ուրեմն Ժէ (17) թուղթ յաջ կողմիդ շրջեա՛, անդ դաֆղարիս կարգաւն է, գտանես ըստ վերոյ ամսոյդ կարգին:

18. 389 (Յակոբ վրդ. Շամախեցի, 1757 թ.) Այս թուղթս ոչ է ի ձախակողմ դիմացիդ թղթի կարգին, այլ ի ձախակողմ թղթոց, Ժէ (17) թուղթս շրջեա՛, զսորին կարգն գտանես:

19. 399 (Յակոբ վրդ. Շամախեցի) Ներքոյ գրեցեալքդ են ի ՌՄԶ (1757) թվին, ի յուլիս եւ յօգոստոսի արարեալ խարճիցն. մոռացմամբ անդ ո՛չ գրեցան, վասն որոյ աստ գրեցաք:

20. 327 (Յակոբ վրդ. Շամախեցի) Թուականն եղեւ ՌԻՃ եւ Եօթն (1758) եւ ամիսն յունվար, յորում սկսանի լինիլ առք եւս:

21. 399 (Յակոբ վրդ. Շամախեցի) Թուականն փոխեցեալ եղեւ ՌՄէ (1758) եւ ամիսն յունվար, յորում սկսանի նոր խարճ:

22. 329 Թուականն եղեւ ՌՄ եւ Ը (1759) եւ ամիսն յունվար, յորում սկսայ նորապէս զգրամս առնուլ ի լուսարար Եղիազար վարդապետէն, սակս խարճելոյ ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս. ես՝ տեղապահ Յակոբ վարդապետ:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

Բ աստառ՝ 1. Աճար օշականցոց տվաք ԺԲ (12) սօմար, 2. Ժ (10) շահի գլոյն, Ժ (10) լիտր ցորեն մնաց, 3. Թիւն ՌՃՂԹ (1750) մարտի մուտն, 4. ԲՃ՝ (200) ԽՆ (45) լիտր Դիլանիցն հասաւ, 5. Գ (3) դաւթարի ջամն եղեւ ԻՆ (25) թուման ԸՌ (8000):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՆՏԱԳԱՅԻ

1. 36, 46, 55, 69, 153, 158 (1741, 1742, 1750 թթ., նոտրգիր) Ինձ հաճելի է եւ ընդունելի:
2. 70, 77, 117 (1745, 1749 թթ., նոտրգիր) Հաճելի եղեւ ինձ:
3. 97, 111 (1749 թ., նոտրգիր) Հաճելի է ինձ եւ ընդունելի:
4. 98, 119, 135, 151, 199 (1749, 1750-1751 թթ., նոտրգիր) Ինձ հաճելի է:
5. 121, 131 (1750 թ., նոտրգիր) Ինձ հաճոյ եղեւ:
6. 121, 132 (1750 թ., նոտրգիր) Ինձ հաճելի եղեւ:
7. 205 (1753 թ., բոլորգիր) Այս վերոյ գրեալ ըս-

տակի հէսապըն Հոնդէտս վարդապետին հետ տեսինք ես՝ լուսարար Եղիազար վարդապետս, ես՝ ժամօրհնող Յակոբ վարդապետս, ես՝ Թաղէտս վարդապետս. մեզ հաճելի եւ ունդունելի է:

8. 263 (1753 թ., բոլորգիր) ես՝ լուսարար Եղիազար վարդապետս, ես՝ ժամօրհնող Յակոբ վարդապետս, ես՝ Թաղէտս վարդապետս: Այս վերոյ գրեալ մասրաֆիս հէսապըն Հոնդէտս վարդապետէն տեսինք, մեզ հաճելի եւ ընդունելի է:

9. 380 (1755 թ., նոտրգիր) Գիտասջիք, զի այս տեֆտերից, որ է մասրաֆի Սրբոյ Աթոռոյս, որ տեղապահ կարգեալ զինքն ի Պօլսոյ, թվին ՌՄԲ (1753)ն ամսեանն օգոստոսի մինչեւ ՌՄԴ (1755)ն ամսեանն մայիսի մուտն, աջ(ո)աջի իմ հիսապ տեսին լուսարար Եղիազար եւ ժամօրհնող Յակոբ վարդապետքն եւ այլք եւս: Շամախեցի Յակոբ վարդապետէն ո՛չ առնելիք մնաց Սուրբ Աթոռոյս եւ իմ վերայ, եւ ո՛չ նորա Սուրբ Աթոռոյս եւ մեզ տալիք, եւ իմ վերայ հասու եղեալ, վասն որոյ ձեռամբ իմով գրեցի եւ հաճեալ կնքեցի, եւ այս վասն որոյն զիպող ժամու ընդունելի եղիցի տեսողաց. ո՛չ առնելիք մնաց եւ ո՛չ տալիք (կնքադրոշմ՝ Աղէքսանդր կաթողիկոս): Աղէքսանդր կաթողիկոսիս է կնիքս:

10. 388 (1755 թ., նոտրգիր) Գիտասջիք, զի այս

տեֆտերիս Սրբոյ Աթոռոյ առից դրամից հիսապն եւ հաշիւն առաջի իմ տեսին լուսարար Եղիազար եւ ժամօրհնող Յակոբ վարդապետքն եւ այլք եւս, յորոյ վերահասու եղէ ես, Շամախեցի տեղապահ վարդապետին, ո՛չ ի վերայ մեր եւ ո՛չ Սուրբ Աթոռոյս առնելիք մնաց եւ ո՛չ ի վերայ նորայ, վասն որոյ եւ ես հաճեալ կնքեցի եւ ձեռամբս գրեցի, վասն ապագայ տեսողաց ընդունելի եղիցի. պրծանք, ո՛չ առնելիք մնաց եւ ո՛չ տալիք. այս եղեւ թվին ՌՄԴ (1755), մայիսի մուտն (կնքադրոշմ՝ Աղէքսանդր կաթողիկոս): Աղէքսանդր կաթողիկոսիս է կնիքս:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. 1, 32, 46, 55, 69-71, 97-98, 107, 111, 113, 115, 117, 119, 121, 127, 131-132, 135, 151, 153, 155, 158 (կարմիր քանափով, ուրանկիւն) «ՂԱԶԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ/ՌՃԶԶ (1737)»: 2. 199 (կարմիր քանափով, ուրանկիւն) «է ՄԻՆԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ /ԹՎԻՆ/ՌՄ (1751)»: 3. 205, 263 (սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԵՂԻԱԶԱՐ /ՎԱՐԴԱՊԵՏ /ՌՃԶԸ (1729)»: 4. 205, 263 (սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ/ՅԱԿՈԲ /ՎԱՐԴԱՊԵՏ»: 5. 205, 263 (սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ/ԹԱԴԷՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ /ՌՃՂԴ (1745)»: 6. 380, 388 (կարմիր քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԱՂԵՔՍԱՆԴՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ /ՌՄԲ (1753)»:

14

ՆԱՄԱԿ


թղթայ. 1, վա. 14

Կ. ՊՈԼԻՍ

ՌՃՂ-1741

ԳԻԲՉ՝ Յակոբ [Նալեան] Պոլսոյ պատրիարք: ՍՏԱՅՈՂ՝ Սարգիս վրդ.:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22x21,4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 28+15:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Սիրելի եւ ազնիւ եղբօրդ մերոյ տեսնող Սարգսի աստուածաբան վարդապետի յոյժ կարօտի ողջոյն եւ սէր ընծայի – Ծանկի՛ր սիրելի իմ,

զի ոչ միայն աստուածապաշտական եւ քրիստոնէական կրօնն, այլ եւ հեթանոսաց փիլիսոփայքն երբեմն ոգեալ երեւին... վերստին դու գիտես, ողջ լե՛ր ի պարծանս»: Կ. Պոլսոյ Յակոբ [Նալեան] պատրիարքի նամակը Սարգիս աստուածաբան վրդին, որում պատրիարքը նշում է, որ ուղարկում է Ղազար վրդին եւ յուսով է, որ վերջինս նրա կողմից կարժանանայ եղբայրական ընդունելութեան: Այնուհետեւ ասելացնում է, որպէս ծայրագոյն նուիրակ Սր. Աթոռի, ինքն ինչքան ծանուցում է արեւ եւ որքան է յորդորել ժողովրդին «ի տուրս Սրբոյ Աթոռոյն»: Պատրիարքը յոյս է յայտնում, որ Սարգիս վրդը եւս, Մայր Աթոռից հեռացած եւ Աղթամարի կաթողիկոսական արքային յարած եղբայրների նման, կընդունի Պոլսոյ պատրիարքի բարերարութիւնը: Հակառակ դէպքում, եթէ ընդունի Աղթամարի կաթողիկոսութիւնը, իր գործն է: Բայց ըստ կանոնների՝ որեւէ եպիսկոպոս «ո՛չ պարտի էլ եւ մուտ առնել ի վիճակի»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Իմ Յակոբայ իբրու պատրիարքի Կոստանդնուպոլսոյ, որ ի ՌՃՂ (1741), յունիսի ժե (15), զգիրս

գրեցի իմով ձեռամբ ի պատրիարքարանս:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1բ (սեւ քանափով, ուքանկիւն) «ՅԱԿՈՒԲ /ՎԱՐԴԱՊԵՏ /1728»:


15

ՍՏԱՅԱԿԱՆ

թղթպ. 1, վաւ. 15

ՌՃՂ-1741

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 10,2x7,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 7:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Մենք՝ Կսապատու Ուհան քովխաս Չալիս, Պէտրոսս... ջաղացայ մալն առանք թամալ. քամալ»: Կսապատցիների 1741 թ. ստացականն է, որում նշուած է Բահաթուրի որդի Պապի ջրաղացի «մալն» (հարկը) վերցնելու մասին:

- Ծնթ. 1. Հմմտ. ա՛ստ NՁNՁ 16, 17, 75:
- 2. Տէ՛ս Յ. Աբրահամեան, NՁ 132, էջ 169:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Թիվն ՌՃՂ (1741) էր:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (4 մատնադրոշմ):


16

ՍՏԱՅԱԿԱՆ

թղթպ. 1, վաւ. 16ա

ՌՃՂԱ-1742

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 10,6x7,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 9+6:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

վէնք»: Կսապատցիների 1742 թ. ստացականն է, որում նշուած է Կսապատի վաֆիլ Պապի ջրաղացի հարկը (30 շահի) վերցնելու մասին:

- Ծնթ. 1. Հմմտ. ա՛ստ NՁNՁ 15, 17, 75:
- 2. Տէ՛ս Յ. Աբրահամեան, NՁ 132, էջ 169:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1աբ ՌՃՂԱ (1742) թիվն գիքդեմպէրի ամսեան ԻԹ (29) գիրեաց է:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

- 1. 1ա ես՝ տէր Սարգիս վկայ:
- 2. 1ա ես՝ մօլլայ Լազարիս գիրեցի վկայ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (1, սեւ քանափով, ձուածեւ, արաբատառ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Կիսայպատու վաքիլ Պապին ճաղացի մալ ու ջահաթին... ջամիհաթիս հասաւ դապգի գի-


17

ՍՏԱՑԱԿԱՆ

թղթայ. 1, վառ. 16թ

ՌՃՂԳ-1745

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 9,6x7,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 9+2:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Մուխրայթաղէցի Պահայթուրն որդի Պա-

պին ճաղացին մալի... հասաւ ղապագի դիվէնք»: Կսապատցիների 1745 թ. ստացականն է, որում նշուած է Պահայթուրի որդի Պապի ջրաղացի հարկը (2010 շահի) վերցնելու մասին:

Ծնթ. 1. Հմմտ. ա՛ստ №№ 15, 16, 75:

2. Տե՛ս 3. Աբրահամեան, № 132, էջ 169:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա ՌՃՂԳ (1745) թիվն մարտի Ը (8) էր:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1ա Ղազարիս վկայ:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (1, սեւ քանաճով, ուղղանկիւնու մէջ զարդանախշ):

18


ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ

թղթայ. 1, վառ. 17

ՌՃՂԵ-1746

ԳՐԻՉ՝ Մարկոս վրդ.:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ խաչապսակ երկգիծ բոլորակ, ներսում՝ կենդանու անընկալելի պատկեր: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,2x22,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 23:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Պատշառ գրոյս, թիվն ՌՃՂԵ (1746), յունիս ամսի Ի (20) օրն... Ես՝ Պողոսի աղշիկ Հէրիֆնագս էհօտէն գամ և իմ մատս ինձ ղապուլ է»: Սոյն գրութեամբ Տիմկնեցի Պօղոսի դուստր Հէրիքնազը

15000-ով գնում է այգի եւ տալիս Մկրտիչի որդի եղումին:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 20, 22:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Ես՝ Մարկոս վարդապետս գրեցի Հէրիֆնագի իրղարովն, վկայ եմ:

2. 1ա Տե՛ս Բովանդակութեան սկզբում:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1. 1ա Ես՝ բանիս մեք դնակատափու Ջամթես վկայ:

2. 1ա Ես՝ էվէտիկի որդի Ֆոանկզուս վկայ:

3. 1ա Ես՝ Ածօպեցի Ամիրխանս վկայ:

4. 1ա Ես՝ Սօղումս վկայ:

5. 1ա Ես՝ տէր Թումի որդի Գիրիգիորս վկայ:

6. 1ա Ես՝ Խուտոյ [որդի] Խաչիկս վկայ:

7. 1ա Ես՝ Շահնագարի որդի էվագս վկայ:

8. 1ա Ես՝ Ավաֆի որդի Թէվիս վկայ:

9. 1ա Ես՝ Մարթեսի որդի Ոսկանս վկայ:

10. 1ա Ես՝ Փիրղալամս վկայ:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (1 մատնադրոշմ):

19
ԿՏԱԿ


թղթայ. 1, վառ. 18

ԱՐԶՐՈՒՄ

ՌՄԺ-1761

Հեղինակ՝ կառակապատար Մելքում:

Թերթ՝ 1 չգրուած՝ 1բ: Նիւթ՝ թուղթ. լուսագծերով: ՄեծՈւթԹիւն՝ 33,1x20,6: ԳրՈւթԹիւն՝ միասին: Գիր՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 47:



Նմուշ 1ա

Վիճակ՝ բաւարար. նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Զորութիւն գրուս այս է, որ թիւն Հայոց ԱՌՃՂԶ (1747)ունն Պատարայ Ագուկեցի Վարժանի որդի Ասայբովին կղազայգիրայ հասդադում... ես՝ Մելքումս պարտականութիւն շունիմ»: Կառակապատար Մկրտումի որդի Մելքումը էրզրումում գտնուելով՝ նշում է Ագուկեցի Վարդանի որդի Ասայբովի 1747 թ. կառակի խնդրի մասին, որ միա կառակապատարներն իրենց պարտականութիւնները չեն կատարել, բայց վերջը մի կերպ հաշտուել են:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա եղեվ Արգրում թիւն Յայոց ԱՌԲՃԺ (1761) սեփականքերի ժէ (17):

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

- 1. 1ա Վերու գրելն Մկրտումի որդի Մելքումիս դաշինայ եւ ընդունելի (կողմին՝ շրջանակ):
- 2. 1ա Որպէս վերն պարոն Մելքումն դաշինայ-

դրութիւնայ արեւ, ես՝ Ղազարի որդի Բունիաթս զամբն կացի, որ Թիֆլիզու խաբարն ուղարկեալ են յետ հատուցման ամի (կողմին՝ շրջանակ):

3. 1ա Պարոն Մելքումի իրզարովն վկայ եմ Թարխան աղայ դի Աղամալ:

4. 1ա եփրիկեան մահտեսի Գրիգորս ասլըն տեսի եւ սավատըս կնքեցի:

5. 1ա ես՝ յԱկեցի մահտեսի Սուգիասըս ասլըն տեսի, սավատըս մոհրեցի:

6. 1ա ես՝ մահտեսի Փիլիպոսըս ասլըն տեսի եւ սավատըս մէհրեցի:

7. 1ա ես՝ յԱկեցի մահտեսի Կար[ա]պետ[ի] որդի Գեվորքս ասլըն տեսայ եւ սավտես մոհրեցի:

8. 1ա ես՝ յԱրաբկրցի մահտեսի Սիրականեան Պապիկս ասլըն տեսի եւ սատս մէհրեցի:

9. 1ա ես՝ Արզրումցի Մսէրլիօղլի մուղտուսի Գրիգորըս ասլըն տեսի, սեվատն մոհրեցի:

10. 1ա Սավատիս ասլըն տեսի համեմատ էր, Օհանի որդի Առաքելս մոհրեցի:

11. 1ա ես՝ Ղափանցի Գրիգորի որդի Դուկասս ասլըն տեսի, սավատս համեմատ էր, մոհրեաց:

- ԿՆՔԱԳԻՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԳԻՐԳՈՐ /ՌՃՀէ (1728)»: 2. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՍՈՒՔԻԱՍ /ՌՃՂԲ (1743)»: 3. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՓԻԼԻՊՈՍ»: 4. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ԳէՈՐԳ»: 5. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՍՐԱՊՈՆ»: 6. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԳԻՐԳՈՐ»: 7. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԱՌԱՔՔ /ՌՃԶԸ (1739)»: 8. 1ա (սեւ քանաֆով, ուղղանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՂՈՒԿԱՍ»:

20

ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ

թղթայ. 1, վառ. 19


ՍՈՒՐԲ ՆՇԱՆ (ԽՈՏԳԵՐԱՆ)

ՌՃՂԵ-1748

ԳՐԱԳԻՐ՝ Գրիգոր վրդ.: Հեղինակ՝ Ովսէփ:

Թերթ՝ 1: Նիւթ՝ թուղթ. լուսագծերով: ՄեծՈւթ-

Թիւն՝ 19,5x15,5: ԳրՈւթԹիւն՝ միասին: Գիր՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 16:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1ա «է: Պատճառ գրոյս այս է. թվին ՌՃՂԷ (1748), մարտի 2 (6) օրին եղեւ: Որ ես՝ Խաչիկի որդի Ովսեփըս իմ կաման եւ իմ յօժարութեամբ ծախեցի... ես՝ Ուսեփըս ջուղայան տամ, հուզուրչի բերեմ»: Խաչիկի որդի Ովսեփը «քահրէզի» (ստորգետնեայ ջրանցի) իրեն պատկանող մէկ [փաստա]թուղթը 2000 դահեկանով վաճառում է առաջնորդ Մարկոս վրդին:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ N2N2 18, 22:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա ՏԵ՛ս Բովանդակութեան սկզբում:

2. 1ա ես՝ Գրիգորն վարդապետս գիրեցի վկայ:

ՎԿԱՅՈՒԹԻՆ

- 1. 1ա Այս բանիս տանուտէր Փիրղալամըս՝ վկայ:
- 2. 1ա Խոսքոյ Խաչիկըս՝ վկայ:
- 3. 1ա Թեվիս՝ վկայ:
- 4. 1ա Ամիրխանըս՝ վկայ:
- 5. 1ա Ոհանըս՝ վկայ:
- 6. 1ա Եղումըս՝ վկայ:
- 7. 1ա Մուսէլըս՝ վկայ:
- 8. 1ա Սողմանըս՝ վկայ:
- 9. 1ա Կիրակոսըս՝ վկայ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

- 1. 1բ (ԺԸ դ., նոտագիր) Այս է կայրէզի դապուէն:
- 2. 1բ (ԺԸ դ., նոտագիր) ես՝ Գոմէրեցի տէր:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (2, սեւ թանափով, ուղղանկիւն, արարատառ):

Ծնթ. Մանրամասն տե՛ս 3. Աբրահամեան, N2 90, էջ 114-115:

21

ԿՈՆԴԱԿ


թղթայ. 1, վաւ. 20

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՃՂԹ-1750

ՀԵՂԻՆԱԿ՝ Ղազար Ա Ջահկեցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՆ՝ 33x20,5: ԳՐՈՒԹԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 34+3:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՆ – եկեղեցի (կթղկս բառի վրայ)՝ 1ա, զարդագիր՝ 1ա: Գոյնե՛ր՝ կարմիր, կանաչ, դեղին (լուսանցագծերը՝ կարմիր):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:
ԻՍԿՈՒԹԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1ա «է: Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Ղազար [կա]թուղիկոս ամենայն Հայոց եւ ծայրագոյն պատ-

րիարգ Վաղարշապատու... Ուրեմն լերո՛ւք հնազանդք, զի շահեսչիք զօրհնութիւնս. եւ կատարօղք հրամանաց մերոց, եղիջի՛ք օրհնեալք յԱստուծոյ եւ ի մէնջ իսկ. ամէն»: Ղազար Ջահկեցի կթղկսի կոնդակն է Ջորագիւղի ժողովրդին, որով Ջորագիւղի առաջնորդ եւ վերատեսուչ է նշանակում տէր Ղազարին: Պատուիրում է հնազանդ լինել նրան եւ որքան զարիք եւ եկամուտ լինի՝ դրանց «հոգեբաժինն ու կողոպուտն» եւս տան նրան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ ի ՌՃՂԹ (1750) թուին եւ ի նոյեմբեր ամսոյ ԺԱ (11), առ դրան Սրբոյ էջմիածնի:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (կարմիր թանափով, բոլորակ) «է: ՇՆՈՐՀԻԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՏԷՐ ԴԱԶԱՐ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱ[Յ] ՈՅ ՌՃՁԶ (1737)», պատկերագրութեան շուրջ՝ «ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ», ձեռքի գրքին՝ անընթեռնելի:


22
ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ

թղթ. 1, վա. 21

ՍՈՒՐԲ ՆՇԱՆ (ԽՈՏԳԵՐԱՆ)

ՌՃՂԹ-1750

ԳՐԱԳԻՐ՝ աէր Սաեփանոս: ՀեՂԻՆԱԿ՝ եղում:
ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծե-
րով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,3x22: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին:
ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 22+3:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1ա «Պատճառ գրուս այս է. թվին ՌՃՂԹ (1750) ին, որ ես՝ Օծօպեցի Մկրտիչի որդի եղումս ծախեցի մեր Ծատուրենցոց այգին... Թէ որ դավի դատապի անելոյ լինի, ես՝ եղումս ատէն գամ պատալն Ա (1) այգի տամ»: Օծոպեցի Մկրտիչի որդի եղումը 26000 դահեկանով վաճառում է Ծատուրենց, Աբրահամենց եւ այլոց այգիներն ու հողերը Օծոպի վանքի առաջնորդ Մարկոս վրդ-ին:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 18, 20:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա ես՝ Գամէրեցի տէր Սուղմոնի որդի տէր Ըստէփանս գիրեցի, եղումի իղրարօվն վկայ եմ, ի դուռն հոտգեւան Սուրբ Նշանի, ի ժամահինն Մարկոս վարդապետին:

2. 1ա Տէս Բովանդակութեան սկզբում:
ՎԿԱՅՈՒԹԻՆ

1. 1ա եղումի մտքին:
2. 1ա ես՝ հուրոյ որդի հաչիկս վկայ եմ:
3. 1ա ես՝ տէր Ըստէփան վկայ եմ:
4. 1ա ես՝ Ավաքի որդի Թէվիս վկայ եմ:
5. 1ա ես՝ տէր Պողոս վկայ:
6. 1ա ես՝ Գալուստի որդի Փէրդալամս վկայ եմ:
7. 1ա ես՝ տէր Կարայպետի որդի Սուղմոնս վկայ եմ:
8. 1ա ես՝ Ղէվանդս վկայ եմ:
9. 1ա ես՝ տէր Աբրահամանի որդի Ունանս վկայ, ինձ դապուլ:
10. 1ա ես՝ հաչիկի որդի Յոհաննս վկայ եմ:
11. 1ա ես՝ Կիրակոսի որդի Ղազարս վկայ եմ:
12. 1ա ես՝ հաչիկի որդի Մուսէվս վկայ եմ:
13. 1ա ես՝ Ոնայգատեցի Էրէցփոխան Քոզոլս վկայ եմ:
14. 1ա ես՝ տէր Թումի որդի Գիրիգորս վկայ եմ:
15. 1ա ես՝ Էրէցփոխան Յունանս վկայ եմ:
16. 1ա ես՝ Վարդանի որդի Ըստէփանս վկայ եմ:
17. 1ա ես՝ Գոմէրեցի Բաղիս վկայ եմ այս բանիս:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (7, 5-ը՝ ուղղանկիւն, 2-ը՝ ձուածեւ, արաբատառ):

Ծնթ. Մանրամասն տէս 3. Աբրահամեան, № 71, էջ 90-91 (տպագրում վաւերագրի գոյհահամարը նշուած է՝ Թղթ. 1. № 26):

23
ԳՐԱՆՅԱՄԱՏԵԱՆ

թղթ. 1, վա. 22


ՍՊԵՐ

ՌՃՂԹ-1750

ԳՐԻՉ՝ Աբրահամ վրդ.:

ԹԵՐԹ՝ 94 (էջակալուած 1-77՝ հաշուի շաւնեւ-
լով չգրուած թերթերը). չգրուած՝ 1բ, 3ա-5բ, 7ա-
9բ, 11բ-2բ, 14բ-6բ, 18ա-9բ, 22ա-4բ, 26բ-30բ, 32աբ, 34ա-6բ, 39ա-41բ, 43ա-4բ, 45բ-7բ, 48բ, 49բ, 51ա-3բ, 54բ-5բ, 56բ-8բ, 60ա-1բ, 63ա-5բ, 66բ-7բ, 69ա-71ա, 72բ, 74բ-6ա, 79բ, 81ա-2ա,

84ա-5բ, 94բ: ՊՐԱԿ՝ Ա-ԺԳ (Ա, Գ, Ե, Է, Թ, ԺԱ՝ 10, Բ, Դ, Զ, Ը, ԺԲ՝ 6, Ժ, ԺԳ՝ 2): ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր պատկեր, ներբեւում՝ «NA//AU» լուսագրով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 32,7x10,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 37-42: ԿԱԶՄ՝ կաշի, աստառը՝ թուղթ:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաարար. կազմի Բ փեղկը եւ մէջքը ցեցակեր:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

Սբ. էջմիածնի նուիրակ Աբրահամ վրդ-ը եւ իր կողմից վախի նշանակուած տէր Երեմիան մատենանոս գրանցում են Մայր Աթոռի ստացած գումարները՝ նշելով, թէ որ քնի ծովսն ինչքան գումար է տուել եւ ինչ արհեստ ունի նուիրատուն.

1. 2աբ Աւագ էրէց տէր Բարաղամի ծխերն այս է... բրուտ Կոպիկն:
2. 6աբ Տէր Ովանէսի ծխերն այս է... թէրզի մահտեսի Յարութին:
3. 10ա-1բ Մեծ տէր Աբկարի ծխերն այս է... ջուռկակ Պողոսն:
4. 13ա-4ա Տէր Սարգսի ծխերն այս է... գեծն-ջուռկի Գրիգորն:
5. 17աբ Տէր Մկրտչին ծխերն այս է... ճգմաջի Յարութին:
6. 20ա-1բ Տէր Պաղտասարի ծխերն այս է... մահտեսի Պողոսն:
7. 25ա-6ա Տէր Մարկոսի ծխերն այս է... Ումուր-շատենց Եղիայն:
8. 31աբ Տիրացուքն այս է... տիրացու Յակոբ-ջանն Լ (30) փարայ:
9. 33աբ Տէր Նահապետի ծխերն այս է... քուրք-չի Ալեքսանն:
10. 37ա-8բ Մուղամ զատայ տէր Յարութենի ծխերն... ասպոնջի Յովսէփն:
11. 42աբ է (7) եւ կէս տէր Մինասի ծխերն այս է... դերձակ Գրիգորն:
12. 45ա Հանգուցեալ տէր Մկրտչին ծխերն (այս-ֆանը միայն):
13. 48ա Տէր Կիրակոսի ծխերն այս է... շուլհակ Կիրակոսն:
14. 49ա Փոքր տէր Աբկարին ծխերն այս է... բա-պուճի Սիմոնն:
15. 50աբ Տէր Մարուգին ծխերն այս է... Զուրիկի մանչն:
16. 54ա Տէր Աստուածատուրին ծխերն այս է...

դազազ Մինասն:

17. 56ա Տէր Սահակին ծխերն այս է... պալթաջի Յոհանէսն:
18. 59աբ Տէր Սուփասին ծխերն այս է... դալ-փաղչի Մովսէսն:
19. 62աբ Տէր Մաթէոսի ծխերն այս է... մոմճի Յովսէփն:
20. 66ա Տէր Ստեփանի ծխերն այս է... ջուռկակ Մանուկն:
21. 68աբ Մեծ տէր Մինասին ծխերն այս է... հա-մալ Մանուկն:
22. 71բ-2ա Տէր Զաֆարիայի ծխերն այս է... ջուլ-հակ Յովանէսն:
23. 73ա-4ա Տէր Սիմոնի ծխերն այս է... դուրկար [Ս]տեփանոսն:
24. 76բ Տէր Երեմին ծխերն այս է... մահտեսի Յարութենի որդին:
25. 77ա Տէր Աբրահամին ծխերն այս է... ջաղ- [ա]ցպան Սարգիս:
26. 77բ Զամպար տէր Յարութենի ծխերն այս է... ջուլհակ Դափթն:
27. 78ա Լապլապուճի զատայ տէր Մինասի ծխերն... ջաղջպան Յարութինն:
28. 78բ Տէր Խաչատուրի ծխերն այս է... շուլհակ Գրիգորն:
29. 79ա Տէր Պողոսի ծխերն այս է... Բասէնցի Անդրէասն:
30. 80աբ Օձ տէր Յարութենի ծխերն այս է... գիւռջողի Յովանէսն:
31. 82բ Տէր Կարապետն... բրուտ Փիլոսն:
32. 83ա Տէր Մարտիրոս (այսֆանը միայն):
33. 83բ Տէր Անանիայ... բորակչի Բարիլուսն:
34. 86ա Այս է մուսաֆիրներուն դաֆտարն... Մին Բաղիշեցի մուսաֆիր իւր եղբոր հոգեքաթին ետուր:
35. 86բ Տէր Բարաղամ... քիրիշի Յակոբ:
36. 87ա-94ա Մեծ տէր Աբկար... Տէր Երեմիայի ժողովեայն թէ՛ ի բխեաց եւ թէ՛ յայլ մնացելոց եղև 82 զուռուշ կէս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Ի թուին 1199 (1750) եւ յունիսի ամսոյ 10, յորժամ կացուցայ ի գործ Սրբոյ Աթոռոյն, ինձ՝ Աբրահամ վարդապետս, ի Սպիրու կողմանէն թէս-լիմ եղև Զ (80) զուռուշ:
2. 86բ Ի թուին ՌՃՂԹ (1750), սեպտեմբերի ամսոյ ԻԻ (24) ես՝ Սուրբ էջմիածնա[յ] նուիրակ Աբրահամ վարդապետս վէքիլ կացուցի ինձ ի կողմանէ իմ եւ Սրբոյ Աթոռոյն զտէր Երեմիայ քահանայն

եւ յանձնեցի նմա զմնացեալ բախիսն թէ՛ ի սասց-
ւոյն, թէ՛ ի Մկրտիչ վարդապետէն եւ թէ՛ յինէն, զոր
կարգաւ ստորեւ եղեալ է:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

91բ ես՝ Սուրբ Էջմիածնայ նուիրակ Աբրահամ
վարդապետս ի գնալն իմ ի վիճակն իմ, երբ վէքիլ

կացուցի զտէր Երեմիայն, յանձնեցի զմնացեալ
բախիսն թէ՛ ի ժողովրդենէն եւ թէ՛ ի տիրացուացն,
որբ եւ թուով 259 զուուռ է եւ 22 փարայ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 86բ, 91բ (սեւ քանափով, ուքանկին)
«ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԱՅՐԱՀԱՄ /ՎԱՐԴԱՊԵՏ»:

ԳՐՁԱՓՈՐՁ 94ա «սալամանդր գազանն հրակեր»:

24


ՀԱՐԿ ՈՒ ԾԱԽՍԻ ՄԱՏԵԱՆ

թղթպ. 1, վառ. 23

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ԳՐԻՉ՝ Յակոբ վրդ.:

ԹԵՐԹ՝ 86 էջ (էջակալուած 1-74՝ հաշուի շառ-
նելով չգրուած թերթերը). չգրուած՝ 23-4, 77-86:
ՊՐԱԿ՝ Ա.Մ.43: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագ-
րով՝ «WE WD DEDOG»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 34x11,3:
ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1):
ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 37-42: ԿԱԶՄ՝ բաց
մոխրագույն թուղթ:



նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թղթերի եզրերը մասամբ
գունափոխուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մատեանում Յակոբ վրդ. ժամօրհնողը գրան-
ցել է Սբ. Աթոռի 1755-1758 թթ. հարկերն ու ծախ-
սերը.

1. 1-10 Արզրումցի պարոն Առաֆէլն եւ իւր Բ (2)
ընկերն ետուն ողորմութիւն Թ (9) Ռ (1000) Գ (3)
ապասի... Գեղորէյից ամթոռակալ Աբրահամ վար-
դապետէն Երափան[ի]ց կողմանէն՝ Բ (2) թուման:

2. 10-7 Ի ՌԲՃԶ (1757) թուին եւ յունվարի
մուտն: Այս է Սրբոյ Աթոռոյ արդիւնքն եւ գեա-
լուրն... Քարվանս[ա]ր[ա]յի քիրահի կողմանէն
դարձեալ առինք ի տէր Ահարօնէն Լ (8) ց(=բուման)
ԲՌ (2000) Բ (2) շահի մարտի մէկին:

3. 17-20 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
ամէն: Ի ՌՄԷ (1758) թուին եւ յունվարի մուտն: Այս

ՌՄԴ-ՌՄԷ-1755-1758

է Սրբոյ Աթոռոյ գեալուրն եթէ՛ ի ներքսականաց
եւ թէ՛ յարտաքսականաց... Բղղասմցի դաթրչի Թու-
մօն, Խաչօն եւ Գեօրկին ողորմութիւն ետուն ԳՌ
(3000) Ժ (10) շահի սեպտեմբերի ԼԱ (31)ին:

4. 21-2 Ի սոյն ՌՄԷ (1758) թուիս եւ ի հոգտեմ-
բերի սկիզբ[ը]ն յետ յղելոյ դաւթարին մերոյ առ
սրբազանն [կաթուղիկոս]ըն. այս է վերստին Սրբոյ
Աթոռոյ գեալուրն... Բաղնսի իճարի կողմանէն եւս
Դ (4) լիտր բամբակ էհաս:

5. 25-41 ԹՎին ՌՄԴ (1755), յունվարի մուտն:
Այս է Սրբոյ Աթոռոյ վարձատու[ը]քն, որ ի ներքոյ
դէվթէրին գրեալ կան... Մշակաց վարձն եղեւ ԺԶ
(16) երեսէս ջամն ԼԹ (39) թուման Դ (4) շահի:

6. 42-53 ԹՎին ՌՄԴ (1755)ին, յունվար ամսոյ
մէկն: Այս է Սրբոյ Աթոռիս խառճն... Բալարուտնկի
լեր հանօղ մշակաց վարձն ետու, վերակացու Առու-
թենի ձեռամբն, Ա (1) Ռ (1000) գիան:

7. 53-76 Բամբակի. ՄՇԳ (273). քախանաւորաց
վարձն ետու Ա (1) շահիով ձեռամբ վաքիլ Այվա-
զին եւ տէր Յովսէփին... Հարակից խարճն ԻԳ (23)
երեսէս ջամն եղեւ ՀԶ (76) թուման Զ (6) Ռ (1000)
Բ (2) շահի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 53 Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
ամէն: Թուին ՌՄԴ (1755), յունիսի ԻԵ (25) ես՝ Ժա-
մօրհնօղ Յակոբ վարդապետս սկսայ գրել Սրբոյ
Աթոռոյ խարճն եւ մասրաֆըն:

2. 1 Թուին ՌՄԵ (1756)ին, յունվար ամսոյ մէկին
եւ՝ ժամօրհնօղ Յակոբ վարդապետս ըսքսայ Սրբոյ
Աթոռոյ եկած գելուրն դէհդար առնել:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 53 Մինչեւ ցայս վայր հիսապն տեսինք
պրծանք, ինձ Աղեփսաւնդր կաթուղիկոսիս հաճելի

է: Թվին ՌՄԴ (1755), յունիսի Իե (25). զրաւ:

2. 53 Ժե (15) հազար եւս վերոյ հիսապն համարեալ եղեւ: Վաղջան տէֆտերիս:

3. 6 ՌՄե (1756) Թվին քարվանսարի աուքան- [ն]երու մայիս եւ յունիս ամսոյ վարձն էհաս լուսարար վարդապետին՝ ձեռամբ տիրացու Պետրոսին, գիտութեամբ տեղապահ վարդապետին Դ (4) Թուման Դ (4) Ռ (1000) Բ (2) Ռ (1000) Գ (3) շահի Դ (4) փող եւս:

4. 7 ՌՄե (1756) Թվին քարվանսարի աուքան-

ներու յուլիս եւ յօգոստոս ամսոյ վարձն էհաս լուսարար վարդապետին՝ ձեռամբ տիրացու Պետրոսին, գիտութեամբ տեղապահին Դ (4) Թուման Դ (4) Ռ (1000) Գ (3) ապասի՝ Ա (1) շահի Դ (4) Ռ (1000) Բ (2) շահի Դ (4) փող եւս:

5. 12 ՌՄե (1756) Թվին քարվանսարի աուքան- [ն]երու նոյեմբերի եւ դեկտեմբերի ամսոյ քիրան տուինք՝ ձեռամբ տիրացու Պետրոսին, Դ (4) Թուման Ռ (1000) Թ (9) շահի Ը (8) փող:

6. Տէս Բովանդակութիւն 2-6 (սկզբում):

25

ԿՈՆԴԱԿ


թղթա. 1, վաւ. 24

ԵՐԻՅ ՄԱՆԿԱՆՅ ՎԱՆՔ (ԱՐՅԱԽ)

ՌՄ-1751

ՀէՂԻՆԱԿ՝ ՆԵՐԱՇԱ ԱՂՈՒԱՆԻԳ ԿՐՂԿԱ:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «ΑΝΑ//», լուսապատկերով՝ թագ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 58x34,6: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 70:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – եկեղեցի (կրղկա բառի վրայ)՝ 1ա, թռչնագիր՝ 1ա: Գոյներ՝ սեւ, շագանակագոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «է: Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Ներսէս կաթողիկոս ամենայն Աղուանից, փոխանորդ եւ յաջորդ սրբոյն Եղիշէի առաքելոյն եւ Գրիգորիսի

սուրբ հայրապետին... Նաեւ որքան պաշտօնք եւ պատարագ եւ այլք շնորհապաշխ ոգուն որք կատարեցին ի Սուրբ Աթոռուցս՝ մեծ մասիւ բաժին ելցեն ձեզ. ամէն»: Աղուանից Ներսէս կրղկսի կոնդակը Աւետարանոց գիղաբաղաբի եւ Վարանդայի նահանգի այլ գիղերի բնակիչներին, որով յայտնում է, որ 6-7 տարի է զանազան պատճառներով չի կարողացել միտուն ուղարկել եւ, հետեապէս, չի ստացել նաեւ նուիրակութեան արդիւնքները (հարկերը): Յորդորում է այդ տարիների մնացած արդիւնքներն անպակաս եւ անթերի, յօժար կամֆով եւ առատ սրտով տալ նուիրակ կարգուած Յակոբ գիտնական վրդին եւ հնազանդ լինել նրան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ ՌՄ (1751) Թվիս, մարտի ԺԸ (18) էր, ի դրան լուսագարդ սուրբ տաճարի Երից Մանկանց:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (կարմիր թանաֆով, բոլորակ) «է: ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՂՈՒԱՆԻՅ ՎԱՐԴԱՊԵՏ //»: (Երկրորդ շրջանակի տառերն անհասկանալի են):

26

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՆՈՐՈԳՄԱՆ


թղթա. 1, վաւ. 25

ՍՈՒՐԲ ԽԱԶ (ՂՐԻՄ)

ՌՄ-1751

ԳՐԻՉ՝ Աղամ արդյ:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,2x17,6: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 18:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ քաւարաւ:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Ողորմութեամբն Աստուծոյ վերստին նորոգեցաւ Սուրբ Խաչ վանքս գեղեցկայօրինեալ... որ են ջերմեռանդ սիրով արք եւ կանայք ողորմութեամբ»: Ադամ արեղան արձանագրում է *Կրիմի Սբ. Խաչ վանքի նորոգութեան մասին:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Ի ժամանակս առաջնորդութեան Ադամայ

արքեպիսկոպոս կղզոյս, որ էր աշակերտ Յոհաննու պատրիարքի Կոստանդնուպոլսոյ Բաղիշեցոյ, որ եղեւ հոգաբարձու եւ պատճառ շինութեան բազմադիմի աշխատութեամբ վասն իւրոյ հոգոյն եւ նախնեացն, եւ եղեւ ծեր թվոջ Փրկչին մերոյ 1751, իսկ ըստ Հայոց ՌՄ (1751): Ո՛վ բարեպաշտ, ի յընթեոնուզ զարձանագիրս յիշեցէ՛ք միով Հայր մերիւ յի վերոյ գրեցեալ բարեպաշտքն եւ այցելու սրբոյ տանս Ադամ եւեթ արեղայն:

27

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ


թղթ. 1, վա. 26

ՂԶԼԱՐ

[ՌՄԲ-1753]

ԹԱՐԳՄԱՆԻՉ՝ աւագ եւեց Ալեքսանդր Պետրիէ:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2բ: **ՆԻԻԹ՝** կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «Մ 804», լուսապատկերով՝ առագաստանաւ, ձուածիր երկգիծ բոլորակ արտաքին ելուսաներով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 36x-22,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 43:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ քաւարաւ. նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ թարգմանութիւն հայերէն բնօրինակից, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «Помощію Святаго Духа мы ниже подписавшіеся сіе договорное писмо утвердили съ господиномъ Ованесомъ... Я Саркись Ованесовъ сіе писмо по моей доброй волю отдалъ: Саркись Ованесовъ»: Ուզումեցի, մարաղացի, Թավրիզի եւ Մազանդարանի շրջակայ այլ գիւղերի մի խումբ պարսկահայեր պայմանագիր են կապում *Աստրախանի* բնակիչ, հնգցի Մակարի որդի Յովհաննէսի հետ: Նշում են, որ գալով *Անգալի* անմշակ եւ անիշխան տարածքներ՝ տեղացիների կողմից ենթարկուում են նեղութեան ու հարկապահանջութեան, եւ խնդրում են Յովհաննէսին իր հովանու տակ վերցնել իրենց եւ

տեղափոխել *Ղզլար*, ուր նա ունի մետաքսի մշակման գործարան, որտեղ իրենք կարող են ապրել, զբաղուել հողագործութեամբ, հացամթերքի արտադրութեամբ: Խնդրում են ամէն մի ընտանիքին տալ մի զոյգ եգ, տարեակգրքն՝ սերմացու, որ կարողանան հացամթերք արտադրել այն պայմանով, որ բոլոր տեսակի բարիքների 2/10րդը թողնեն իրենց, իսկ մնացածը վաճառեն նոյն պրնիւն կամ նրա ժառանգներին՝ այդ ժամանակ *Ղզլարում* կամ գիւղում գործող գնով: Նաեւ պայման են դնում, որ *Յովհաննէսը* պատասխանատու լինի պետական տուրքերի ու ամէն տեսակ հարկերի համար, իր միջոցներով գործարանի մօտ կառուցի եկեղեցի, որտեղ իրենք հայկական քրիստոնէական հաւատով ծիսակատարութիւններ կատարեն: Պայմանագրի հայերէն բնօրինակը հաւաստուած է եղել մի խումբ մարդկանց վկայութեամբ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՅՈՐԻՆԱԿԻ

1բ Написано въ Анзалию 1753-го года, апреля 1 дня:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

1բ Съ армянскаго подлинника переводилъ кизлярскій протоіерей Александръ Петріе (կից՝ ստորագրութիւն):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2ա (ԺԼ դ., նոտրգիր) Մարափանցոց գիրն է: Կանդրիստի թարգմանութենէ:


28
ՀԱՇՈՒԵՄԱՏԵԱՆ

թղթպ. 1, վա. 27


ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՍԻՆ

ԳԻԻՉ՝ Յակոբ վրդ. Շամախեցի:

ԹԵՐԹ՝ 48 (էջակարուած 1-59՝ հաշուի շաւնելով չգրուած թերթերը). չգրուած՝ 1աբ, 7ա-9բ, 34բ-48բ: ՊՐԱԿ՝ Ա-Ե (Ա՝ 9, Բ՝ 14, Գ՝ 4, Դ՝ 10, Ե՝ 11): ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով, լուսագրով՝ «A FAUGERE VAR LANGV DOOC, 1748», լուսապատկերով՝ թագանման գարդանախշ, ներքեւում՝ խաղողի ողկոյց, ստորեւ՝ «GAUIAC» մակագրութիւն: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,1x22,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 2ա), նոսրգիր (նմուշ՝ 24ա): ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 28-35: ԿԱԶՄ՝ ստուարաթղթէ միջուկով զարդանախշ կաշի, աստաւը՝ թուրք:



նմուշ 2ա



նմուշ 24ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի Ա փեղկի եզրերը վնասուած, ցեցակեր:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

Աղէքսանդր կթղկաի հրամանով Յակոբ վրդ. Շամախեցի մատենանում գրի է առնում Մայր Աթոռի դրամների 1755-1759 թթ. մուաֆերն ու ելֆերը.

1. 2ա-6բ Առի ի սրբազանէն Ը (8) թուման փող... Առի եւս ի նմանէ վասն խարճելոյ երեք թուման ԴԻ (4000) ՂԵ (95) դիան, գիտութեամբ Ղունկիանոս վարդապետին, ի սոյն ամսոյ Դ (4)ին: Ղապզովէ:

2. 10ա-34ա ետու ժամօրհնող Յակոբ վարդապետին Ե (5) թուման փող... Երկաթ առի ԻԹ (29) լիտր, որոյ զինն ետու մէկ թուման Դ (4) հազար դիան ի յուլ[ի]սի Ը (8) ձեռամբ շորապան Գրիգոր վարդապետին:

ՌՄԴ-ՌՄԸ-1755-1759

Ծնթ. Հմմտ. ա՛ստ № 13:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 2ա Ի ՌՄԴ (1755) թուականիս եւ ի քսան եւ հինգ յունիս ամսոյս հրամանաւ տեառն իմոյ Աղեֆսանդրի սրբազանի եւ արժանապատուի կաթողիկոսին ամենայն Հայոց եւ Սրբոյ Էջմիածնի, դաֆդարս այս կրկին արարի ես՝ մեղապարտ Յակոբ տեղապահ վարդապետս Շամախեցի, որ է վասն առից եւ մտից դրամից ոմանց, զորս թէ՛ ի սրբազանէն եւ թէ՛ ի յայլոց մարդկանց առնում յանուն Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, եւ խարճեմ ի հարկաւոր պէտս սորին թէ՛ իմով ձեռամբս եւ թէ՛ այլոց. որք են ի ներքոյ գրեցեալքդ:

2. 4բ Ի ՌՄԴ (1755) թուականիս եւ ի քսան եւ հինգ յունիս:

3. 10ա Ի ՌՄԴ (1755) թուականիս եւ ի քսան եւ հինգն յունիս ամսոյս հրամանաւ տեառն իմոյ Աղեֆսանդրի սրբազանի եւ արժանաւոր կաթողիկոսին ամենայն Հայոց եւ Սրբոյ Էջմիածնի, դաֆդարս այս կրկին արարի ես՝ մեղապարտ Յակոբ տեղապահ վարդապետս Շամախեցի, որ է վասն սրոց եւ էլից դրամից ոմանց, զոր տամ ժամօրհնող Յակոբ վարդապետին՝ առ ի խարճելոյ ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս, եւ կամ ես ձեռամբ իմով խարճեմ. որք են ի ներքոյ գրեցեալքդ:

4. 12բ Թուականն ՌՄԵ (1756) եղեւ ահաւասիկ եւ յունվար ամիսն:

5. 3ա Աստանօր լրացաւ եւ թուականն եղեւ ՌՄԵ (1756) եւ յունվար ամիսն:

6. 5ա Թուականն մեր եղեւ ՌՄԶ (1757) եւ ամիսն յունվար, յորում՝ նոր առքս մեր:

7. 20ա Թուականն եղեւ ՌՄԶ (1757) եւ ամիսն յունվար, յորում ըսկսայ խարճեալ նոյնպէս:

8. 6ա Թուականն եղեւ ՌՄ Է (1758) <Ճ> եւ ամիսն յունվար, յորում սկսանի լինել առք եւս:

9. 6բ Աստանօր յետ մեր դաֆդարցն յղելոյն ի Կարին առ սրբազանն, ի սոյն ՌՄԷ (1758) թվին եւ ի հոգդեմբեր ամսոջն սկսայ եւս զգրամս առնուլ ի լուսարար եղիազար վարդապետէն՝ առ ի խարճելոյ ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս ես՝ տեղապահ Յակոբ վարդապետս:

10. 25բ Թուականն փոխեցեալ եղեւ ՌՄԷ (1758) եւ ամիսն յունվար, յորում սկսանի նոր խարճ:

11. 28ա Արդ՝ յետ դաֆդարացն մերոց առ սրբա-

զանն յղելոյ ի սոյն թուիս, որ է ՌՄԷ (1758) եւ ի հոգ-
ղեմբերի ամսոջս, սկսայ նորապէս խարճ առնել:

12. 6բ Թուականն եղեւ ՌՄԸ (1759) եւ ամիսն
յունվար, յորում սկսայ նորապէս զդրամս առնուլ ի
լուսարար Եղիազար վարդապետէն սակս ի խար-
ճելոյ ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս ես՝ տեղա-
պահ Յակոբ վարդապետս:

13. 29ա Թիվն եղեւ ՌՄԸ (1759) եւ ամիսն յուն-
վար, յորում ըսկսայ ես՝ տեղապահ Յակոբ վարդա-
պետս նորապէս խարճ եւ մասրաֆ առնել:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԶԻ

1. 2բ ի ՌՄԴ (1755) թվին եւ ի նոյեմբերի ժԱ
(11)ումն, յորում յաւուր վախճանեցաւ Տէր Աղեմ-
սանդր սրբազան կաթողիկոսն, յետ վախճանման
սորա իբրեւ սկսա[յ] նոր խարճ առնելս:

2. 25ա Ներքոյ գրեցեալքդ են ի սոյն ([ՌՄԶ=
1757]) թուոջ, բայց ի յուլիս եւ ի յօգոստոս ամսոջ
արարեալ խարճիցն, եւ զի մոռացմամբ անդ ոչ գրե-
ցան, վասն որոյ աստ գրեցաք:

29

ԿՈՆԴԱԿ


թրթպ. 1, վաւ. 28

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

ՌՃԹ-1660

Հեղինակ՝ Յակոբ Դ Ջուղայեցի կթղկս: ՍՏԱ-
ՅՈՂ՝ Բիրդուէլ, Մանուչար, Ջիմշիտ, Բայիմդուր,
Փիրալու:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուրթ. լուսագծե-
րով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35,4x18,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միա-
սիւն: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 34+5:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ կաթո-
ղիկոս ամենայն Հայոց եւ պատրիարզ Վաղարշա-
պատաւ... ինչպէս աւետիս կաթողիկոսի հրամա-
նաւ թաղու ժամանակն, որ Կոպարաւ բաժանել

են Ամիրաղինց տանէն մինչեւ ի Համգարէկինց
տունն, հաստատ Կոպարն այն է»: Յակոբ Ջուղա-
յեցի կթղկսի պատասխան գրութիւնը պարունկեր
Բիրդուէլին, Մանուչարին, Ջիմշիտին, Բա[յ]ինդու-
րին, Փիրալուն, որով տեղեկացնում է, որ Դաւիթ
վրդ-ի հետ կապուած իրենց խնդրամբը նամակով
չի կարող յայտնել, սակայն Դաւիթ վրդ-ի մասին
շատ բան ունի ասելու, եւ բերանացի տեղեկաց-
նելու համար ուղարկում է Յոհան վրդ-ին: Իսկ Բա-
հանաների գծտութեան հետ կապուած անընդու-
նելի է համարում Կոպարի ծխականների բաժա-
նումը, որի մասին գրել էր Բարսեղ պարոնաւոր:

Ծնթ. Տես նաեւ ա՛ստ № 30:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ թուին ՌՃԹ (1660), ապրիլէ Ը (8):

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (կարմիր թանափով, բոլորակ)
«ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌՈՒՅ ՅԱԿՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ԹՎԻՆ ՌՃԴ (1655) /ՅԱԿՈՒ ՎԱՐ-
ԴԱՊԵՏ»:

30

ԿՈՆԴԱԿ

թրթպ. 1, վաւ. 29


ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

ՌՃԹ-1660

Հեղինակ՝ Յակոբ Դ Ջուղայեցի կթղկս: ՍՏԱ-
ՅՈՂ՝ տանուաւէր Գօղէրձի:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուրթ. լուսագծե-

րով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 34,9x20,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միա-
սիւն: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 33+6:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ կաթուղիկոս ամենայն Հայոց եւ պատրիարզ Վաղարշապատու... Դարձեալ, ինչպէս աւետիս կաթողիկոսի հրամանաւ տանուտէր թաղու ժամանակն, որ Կոպարաւ բաժանել են Ամիրաղինց տանէն մինչեւ ի Համզաբէկինց տունն, հաստատ Կոպարն այն է»:
Յակոբ Ջուղայեցի կրօնկա պատասխան գրութիւնը

նը Գորի գիղաֆաղաֆի տանուաւր Գողէրձուն եւ առհասարակ ամենայն ժողովրդին, որով տեղեկացնում է, որ Դաւիթ վրդ-ի հետ կապուած իրենց խնդրանքը նամակով չի կարող յայտնել, սակայն Դաւիթ վրդ-ի մասին շատ բան ունի ասելու, եւ բերանացի տեղեկացնելու համար ուղարկում է Յոհան վրդ-ին: Իսկ ֆահանաների գժտութեան հետ կապուած անընդունելի է համարում Կոպարի ծխականների բաժանումը, որի մասին գրել էր Բարսեղ պարոնտէրը:

Ծնթ. Տես նաեւ ա՛ստ № 29:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ թուին ՌՃԹ (1660), ապրիլ Ը (8):

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (կարմիր քանաֆով, բոլորակ) «[ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ] ԾԱՌԱՅ ՅԱԿՈԲ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, [ԹՎԻՆ ՌՃԴ] (1655) /ՅԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ»:

31

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

թղթայ. 1, վաւ. 30


ՍՈՒՐԲ ՆՇԱՆ (ՀԱՂԲԱՏ)

ՌՃԻԴ-1675

ՀԵՂԻՆԱԿ՝ Աւետիս եպս.: ՍՍԱՅՈՂ՝ Դաւիթ ֆիյ, Գրիգոր սրկ., Գաբրո:

Կոպրոս առաջնորդ Հախպատայ Սուրբ Նշանի... Այլեւ փրկեսցէ եւ ազատեսցէ զձեզ ամենայն փորձանաց, յերեւելից եւ յաներեւութից... եւ ամենայն յորոգոյթից հոգոյ եւ մարմնոյ, ամէն: Հայր մեր որ յեր՝»: Հաղբատի վանքի առաջնորդ Աւետիս եպս-ի օրհնութեան գիրը եւ պահպանութեան նամակը Դաւիթ ֆիյին, Գրիգոր սրկ-ին, Գաբրոին եւ նրանց մերձաւորներին ու բարեկամներին:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 43,5x15,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ 1ա): ՏՈՂ՝ 36+1:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերին եզրերը վնասուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Յիսուսի Քրիստոսի ծառայ Աւետիս եպիս-տոս»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ թուին ՌՃԻԴ (1675):

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (սև քանաֆով, բոլորակ) «ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ /ԾԱՌԱՅ ԱԻԵՏ/ԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ /ԹՎԻՆ ՌՂԹ (1650)»:

ԹԵՐԹ՝ 6. չգրուած՝ 1աբ, 4ա-6բ: ՊՐԱԿ՝ ԱՃԵ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուրք. լուսագծերով, լուսագրերով՝ «LIPIMR», «18///», լուսապատկերով՝ թագապսակ ձուածեւ շրջանակ, ներսում՝ տապարն ուսին արչ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,7x17: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 2ա): ՏՈՂ՝ 19:



նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ բարարաւ. ստորին եզրերը ծալուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ թարգմանութեան (անգ-

լերէնից հայերէն), ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

Թարգմանութիւնն է Շամիր Սուլթանի՝ Մաղրաս ֆաղափի անգլիացի բժիշկ պրն Ջեյմս Անդերսոնին գրած նամակի, որով աշխատում է փաստերով ապացուցել, որ Աղամի լեզուն հայերէնն է եղել, Յաբեթից սերուած ժողովուրդը հայերն են եւ կիրը Արարատեան.

1. 2ա-3ա «Թարգմանութիւն գրոյ միոյ պարօն Շամիրսուլթանամիանէ առ մեծ բժիշկն ֆաղափի պարօն Ջիմս Անդրասան՝ բժիշկ Ջիմս Անդրասան: Արժանատր պարօն – Ոչ թէ միայն ունիմ ուրախութիւն եւ մխիթարութիւն պատասխանել քոյին հարցմանց վասն ծանօթութեան քոյ, յաղագս լեզուի եւ հեղինակի ազգին իմոյ Հայոց, այլեւ համարիմ զայս հարկ իմ առնել... եւ ես գոլով տրուպ մի յայնմ յազ-

զէ՛ խնդալոց եմ յոյժ լսել զ[յ]աջողութիւն բանին, մնալով բազում խոնարհութեան եւ պա[տ]ուով»: Վերջում նշում է, որ ինքը նրան մի խոյ է ուղարկել Անգլիայում բազմացնելու համար, որի «գեղմը» պատուական է:

2. Յբ «Ա. Գ. Այլեւ ունիմ միախարոսիւն այ[ս]-միկ յուղարկել քեզ յօդուած մի ի յսպանիացոց յաշխարհագրոյ պատմութենէ, հանդերձ որոյ թարգմանութեամբն ի անգլիացոց բառքառս՝ վերաբերօղ լեզուին Հայոց, զոր եւ զայս հաստատէ լինիլ զլեզուն նախահօրն մերոյ Ադամայ – Թարգմանութիւն յօդուածոյ միոյ ի սպանիացոց յաշխարհագրոյ պատմութենէ, արարացելոյ ի հեղինակ սրբակրօն Պէտր Մուրիօէն ի Մէքնիկոյ եւ

տպագրեալ ի Մադրիդ յամին 18(7)52... նոքա իջին ի Նախիջեան հրամանաւն Աստուծոյ յաղագս գործոյ բազմանալոյն սեռն մարդկային, նոքա, որդիք նոցա եւ թոշունք նոցա, եւ սերունդք նոցա խօսէին զնոյն բառքառս»: Մադրիդում 1752 թ. տպուած Պէտր Մուրիլոյի յօդուածը Շահամիր Սուլթանն ուղարկում է Ջեմա Անդերսոնին, որտեղ նշում է, որ Ադամը, Նոյը հայերէն են խօսել, եւ բոլոր ցեղերն այդ տեղից՝ Նախիջեանից են սերունդ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

Յա ի Մադրաս, 29 նոյեմբերի: 1793: Արժանաւոր պարօն քոյդ առաւել հնազանդ խոնարհ ծառայ ձեռնադրեալ Շամիր Սուլթան:

Ծնթ. Տես նաեւ ա՛ստ № 291:

63


ՊԱՐՏԱՄՈՒՐ ՀԱԿ

թղթ. 1, վա. 71

ՌՃՂԸ-1749

ԳԻԻԶ՝ Նահապետ (պարտապանը): ՍՍԱՅՈՂ՝ Ղազար Ա Ջահկեցի կթղկա:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ աղանակերպ Սուրբ Հոգի, կառուցին՝ խաղողի շեղանկին ողկոյզ՝ (կիսաա): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,2x16,9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 18:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած (որի տակ է մնացել 1բ-ի գրութիւնը):

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1ա «Տեառն Ղազարու սրբազ[ա]ն կաթող[ի]-կոսին – ես՝ Աստ[ա]պատցի խաչիկի որդի Նահապետս... իսկ եթէ զայլ այլութէն առնիցեմ եւ դիվան ես ձեգեղու լինիմ, զուլուզն դահեկին ես տամ անպատճառ»: Աստապատցի խաչիկի որդի Նահապետը պարտատրում է Ղազար Ջահկեցի ամենայն Հայոց կթղկսին տալ 10 թուման, որի կէսը 5 թուման է անում, մինչեւ մէկ տարուայ ընթացքով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Այս եղեւ իմ Նահ[ա]պետիս իրդարն ինձ ղապուլ է եւ գրեցալ ի ՌՃՂԸ (1749) հոտեմբերի Ժէ (17):

2. 1ա ես՝ Նահ[ա]պետս գրեցի եւ ինձ ղապուլ է:

ՎԿԱՅՈՒԹԻՆ

1. 1ա ես՝ Յարթեցի Բարխուտարի որդի Ովանէս վկ[ա]յ էմ:

2. 1ա ես՝ Աֆտանդիի որդի Մուսէս վկ[ա]յ էմ:

3. 1ա ես՝ Նախճվանցի Շողիկի որդի Մալխաս, ես վկ[ա]յ էմ:

4-5. 1ա (արաբատառ 2 վկայութիւն):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ (ԺԸ դ., նոտրգիր) Աստաբարցի Խ[աչիկի] որդի Նա]հապետի թամասուկն է:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ թանաֆով, ձուածեւ) «Ն[Ա.] ՀԱՊԷՏ»: 2. 1ա (սեւ թանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ Յ/ՈՎԱՆԷՍ///»: 3. 1ա (սեւ թանաֆով, ուղղանկին) «ՄՈՒ/ՍԷՍ»: 4. 1ա (սեւ թանաֆով, ուղղանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ Պ/ԱՐՈՆ/ /ՅՈՎԱՆՓ», (կնիադրոշ մի վեռետում արաբատառ վկայութիւն): 5. 1ա (սեւ թանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՄԱՎԽԱՍ»: 6. 1ա (սեւ թանաֆով, ուղղանկին, արաբատառ):

ԳՐԶԱՓՈՐԶ՝ 1բ «Աստեպցի»:

64
ՊԱՐՏԱՄՈՒՐ ՀԱԿ


թղթ. 1, վա. 72

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇԻՆ]

ՌՄԵ-1756

ԳՐԱԳԻՐ՝ տէր Ահարոն: ՀԵՂԻՆԱԿ՝ Արզում:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով, լուսապատկերով՝ թագ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,3x16,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 16+6:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ներֆետում գրադաշտը գունափոխուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Պատճառ գրոյս այս է. ՌՄԵ (1756) թուին, օգոստոսի Իէ (27), ես՝ Պաճալուեցի Աւետիսի որդի Արզումա... Եթէ մուգաղա անեմ, դիվան ձգեմ, ԺԲ (12) Ռ (1000) դիան դիվանին դուլուղ տամ, համ փողն տէրն հասուցանեմ»: Պաճալուեցի Աւետիսի որդի Արզումը պարտաւորում է Յովհաննէս վրդին տալ 3 թուման, որից 1 թումանը կտայ Սբ. Խաչին, իսկ մնացած 2 թումանը կվերադարձնի 3 ամսուայ ընթացքով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա ես՝ տէր Ահարօնս Արզումի իղրարովն

այս թամասուկս գրեցի վասն Աստուծոյ համար վկայ եմ, զոր կնքեցի:

2. 1ա Տէ՛ս Բովանդակութեան սկիզբը:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԶԻ

1ա Մօհր չունիմ, մատամբս կնքեցի, ինձ՝ Աւետիսի որդի Արզումիս ղապիլ է:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

1. 1ա ես՝ լուսարար եղիազար վարդապետս վկայ եմ:

2. 1ա ես՝ շորապան Գրիգոր վարդապետս վկայ եմ:

3. 1ա ես՝ տէր Պօղոսս վկայ եմ:

4. 1ա ես՝ Թարվիզեցի ահտար Օհանջանս վկայ եմ:

5. 1ա ես՝ վրացի Ղազարս վկայ եմ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ (ԺԸ դ., նոտագիր) Թամասուկ է ղարսեցոյ հին:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանաֆով, մատնադրոշմ Արզումի): 2. 1ա (սեւ քանաֆով, ռհատր ֆառակուսի) «Տէ՛ր ԱՀԱ/ՐՈՆ ///»: 3. 1ա (սեւ քանաֆով, ռհատր ֆառակուսի) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԵՂԻԱԶՂԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ /1179 (1730)»: 4. 1ա (սեւ քանաֆով, ռհատր ֆառակուսի) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ /1191 (1742)»: 5. 1ա (սեւ քանաֆով, ուքանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՊՕՂՈՍ /ՎԱՐԴԱՊԵՏ»: 6. 1ա (սեւ քանաֆով, ուղղանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՕՀԱՆՃԱՆ»:

65


ՊԱՐՏԱՄՈՒՐ ՀԱԿ

թղթ. 1, վա. 73

ՌՃՂԶ-1747

ԳՐԱԳԻՐ՝ տէր Մկրտիչ: ՀԵՂԻՆԱԿ՝ Անդրէաս:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 29x13: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա), նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 24:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Պատճառ գրոյս այս է. որ ճահկեցի Յովհաննէսի որդի Անդրէասս... եւ այս վերոյ գրեալ ստակիս ով ոք որ տէր Յօսէփին վաքիլ կանէ ժԱ. (11) օրումն տամ վաքիլին»: Ճահկեցի Յովհաննէսի որդի Անդրէասը նշում է, որ ճահկեցի տէր Մկրտիչի որդի տէր Յովսէփից վերցրել է 50 դուրոշ եւ պարտատուում է վերադարձնել 11րդ օրը: Հակառակ դէպքում, եթէ 11րդ օրն անցնի, պարտատու է մէկ ամսուայ համար յաւելեալ վճարել 1 դուրոշ եւս:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

- 1. 1ա Գրի գիրս ՌՃՂԶ (1747)ին, փետրվարի ամսոյ ԻԵ (25) օրն:
- 2. 1ա ես՝ Սրբոյ Կարապետին միաբան տէր

Մկրտիչս Անդրէասի իղրարովն գրեցի վասն Աստուծոյ եւ ես վկայ եմ:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

- 1. 1ա Իմ Անդրէասիս մատն է:
- 2. 1ա ես՝ Արտաբիւնի որդի Շահնագարսս վերայհասուն եւ վկայ] էմ Անդրասի օղորովըն եւ իմ Շահնագարիս մուրհըս է:
- 3. 1ա ես՝ ճահուկեցի պատրի Դովինիկոս վկայ եմ:
- 4. 1ա ես՝ Շուռօթեցի Եաղուպի որդի Թեղանըս վկայ եմ:
- 5. 1ա ես՝ էգրումցի տիրացու Յովհաննէսս վկայ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանափով, բոլորակ) «ՏէՐ ՄԿՐՏԻՉ»: 2. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՇԱՀՆԱԶԱՐ /1134 (= 1721/2)»: 3. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՅՈՀԱՆՆԷՍ /ՌՃԶԷ (1738)»:

66


ԽՆԴՐԱԳԻՐ

թղթայ. 1, վաւ. 74ա

ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Զէյնալ Աբդոյ աղայ (1768/9 թ.) եւ այլք: ՄՍԱՅՈՂ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կրթիկ:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 35,5x22: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 19:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ստորին եզրերը ծալուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ թարգմանութիւն թուրքերէնից, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Թարգմանութիւն: Յարգոյսպատիւ Զէյնալ Աբդոյ աղայ [յ] եւ այլ յարգելիք Աղանատան գեղջ առաջարկեցին... ի մի կողմն գտանի ճանապարհէն Արզումայ, ի միւս կողմանէ նոյն ճանապարհէն ի գիւղի Թալին, յերրորդ կողմանէ հողն Ուշան-Դաշի եւ ի չորրորդ կողմանէ գերեզմանատանն»: Մի խնդրագրի թարգմանութիւնն է, որտեղ նշուած

է, որ Աղանատուն գիւղից Զէյնալ Աբդոյ աղան եւ այլ յարգարժան մարդիկ առաջարկում են էջմիածնի Սիմէոն կրթիկին նշանակել հաւատարիմ մէկին, որը կհասափի իր հասանելիք ամենամեայ բեւեբը:

Ծնթ. Նոյն խնդրագրի ռուսերէն թարգմանութիւնը տես աստ № 67:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1ա Գրեցաւ յամսեանն շաբանի 1182 (1768/9) ամի:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1ա Ստորագրեալ են ի վկայութիւն անդամք հոգեւոր շարիատի՝ [1.] Մօլլայ Մամադ Հուսէին (տ.կ.): 2. Մօլլայ Մամադ(դ) Բաֆի (տ.կ.): 3. Մօլլայ Ալի եւ դրոշմեցին զկնիքս այլ վկայք: [4.] Հաշի Ահմէդ խան-բէկ (տ.կ.): [5.] Հաշի Քալի դազազ (տ.կ.): [6.] Հաշի Նաուզա Ֆալի, [7.] մօլլայ հաշի Բաբայ (տ.կ.): [8.] Զաման բէկ (տ.կ.): [9.] Ուստա[յ] Ֆարամարզ բազազ (տ.կ.): [10.] Իմամ Վերդի (տ.կ.): [11.] Մուստաֆա բէկ (տ.կ.): [12.] Մօլլա[յ] Բաղաֆ Ալի (տ.կ.), եւ [13.] Հաշի Բաբա[յ] (տ.կ.):»:

67


ԽՆԴՐԱԳԻՐ

թղթպ. 1, վառ. 74բ

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2աբ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35,5x22: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ ոռուե-րէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 23:

Ага[в]натуръ Зейналь Абдунъ Ага и прочіе... съ третей земля Удчанъ-Даши, и съ чет-вертой кладбище:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ստորին եզրերը ծալուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ թարգմանութիւն հայերէնից, ձե-նագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա Переводъ: Высокопочтенный деревни

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1ա Писанъ въ шабанъ мѣсяцъ 1182 (1768/9)

2.:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1աբ Подписались свидѣтелями члены ду-ховнаго шариата...:

Ծնթ. 1. Խնդրագրի հայերէն թարգմանութիւնը, բովանդա-կութեան նկարագրութիւնը եւ վկայութիւնները տես ա՛ստ № 66:

2. №№ 68, 69ի գրիչն է:

68


ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

թղթպ. 1, վառ. 75

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 2: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագրով (երկիցս) «//ФАБРИКА»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35,8x22,4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ ոռուեւէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 31:

май Эриванскаго остались четверо сыно-вей... Мировая эта соправаждалась сегого на арабскомъ и персидскомъ языках»: Շարիա-թական համաձայնագիր է կազմուած Երեւանի խան Ահմեդ Շամայի մահուանից յետոյ նրա ու-նեցուածքը ժառանգների միջեւ բաժանելու կա-պակցութեամբ:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ստորին եզրերը ծալուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ թարգմանութիւն հայերէնից, ձե-նագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Причина написанія этой бумаги, ут-вержденной шариатомъ заключается въ томъ, что послѣ смерти ханъ Ахмада Ша-

Ծնթ. №№ 67, 69ի գրիչն է:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

2բ Написано эд(т)о въ мѣсяцъ могоаррамъ 1064 (1653/4) года:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ


1ա На печати изображено: Есть на-дежда, что Господь твой возвыситъ тебя до степени Махмуда (избранный). Этотъ актъ написанъ при мнѣ:

69
ՏԵՂԵԿԱԳԻՐ

թղթպ. 1, վա. 76

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 2: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35,1x-21,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 21:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ստորին եզրերը ծալուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ թարգմանութիւն հայերէնից՝, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1ա «№13. Въ слѣдствіе испрашиванія у Двора счасція подробныхъ свѣдѣній насчетъ земель и садовъ принадлежащихъ монастырю, называемому Учъ-Килиса... по взнось ими въ Эриванское казначействъ 350 гурушовъ они были свободны отъ всѣхъ прочихъ государственныхъ налоговъ и въ противность Шаріоту закону и высочайшему фирмону не были притѣсняемы и чтобы поступлено было на основаніи фирмона»: Դռան հարցմանն ի պատասխան Կարբիում գտնուող Ուշքիլիսա վանքին պատկանող այգիների եւ հողերի մասին՝ տեղեկացում է, որ Ուշ-

քիլիսա գիւղի կազմում գտնուող հողերը նուիրաբերուել են վերոյնշեալ վանքում ապրող աղքատներին: Վանքին նուիրաբերուած մշակելի հողերը եւ այգիները չեն հարկուել. հարկը կազմում էր տարեկան եկամտի տասներորդ մասը: Քանի որ Ուշքիլիսա, Օշական եւ Մաստարայ գիւղերի հողերը նուիրաբերուել են Ուշքիլիսա վանքում ապրող աղքատներին, ապա Ուշքիլիսայի եւ Օշականի բնակիչները պարտաւոր են Ուշքիլիսա վանքին վճարել տարեկան եկամտի տասներորդ մասը, իսկ Մաստարայի բնակիչները՝ տասներկուերորդը: Վանքում ապրող վանականներից, ծերերից եւ մանուկներից, ովքեր ի վիճակի չեն աշխատելու, հարկեր չի գանձում: Վանքի մահացած բնակիչների ունեցուածքը մնում է վանքին: Վերոյնշեալ գիւղերի բնակիչները պարտաւորում են տարեկան 350 դուրուշ վճարել երեւանի գանձատուն, որով ազատում են մնացած բոլոր պետական հարկերից: Դրա համար նրանք խնդրել են իրենց տրամադրել ֆերման, որը գրուել եւ տրամադրուել է:

Ծմբ. №№ 67, 68ի գրիչն է:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

2բ Написано въ 1147 (1734/5)-мъ году:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ

1ա На печати написано: Гусейнъ Паша:


70

ՑԱՆԿ

թղթպ. 1, վա. 77

Ի դար

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ (աշակերտական): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 21x14,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ շղագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 13+1:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ստորին եզրը ծալուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1ա «Վրացական տպագրութեան սկիզբը – 1629 թ. Հռոմում՝ վրացերէն-իտալերէն բառարան... առաջին վրացական տպարանը Վրաստանում հիմնվել է 1708-9 թ. Վախտանգ VI թագավորի ձեռնբեքով»: Թղթում ներկայացուած է Հռոմում (1629, 1643, 1670 թթ.), Մոսկուայում (1705 թ.) եւ Տիֆլիսում (1709 թ.) հրատարակուած գրքերի ցանկը՝ բոլորը «խուցուրի (յեկեղեց.)» տառերով:

71


ԳՐՈՒԹԻՒՆ

թղթայ. 1, վա. 78

ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ [Զաֆարիա վրդ.]:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33,1x21,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 41+8+5:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը տեղ-տեղ գունափոխուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

Ծնթ. Հեղինակի անունը վերականգնել ենք ըստ կնիքադրոշմի. տե՛ս ստորեւ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Է: Աստուածընտիր երիցս երանեալ ծայրագոյն ֆահանայապետիդ ամենայն Հայոց եւ գլուխ եւ պսակ համայնից միադասան հօտիցն Քրիստոսի, ճշմարիտ հովիւդ՝ երկրպագութեամբ հանդերձ սրբոյ երկնաշու կարշապարիդ համ-

բոյ[ր] փափակատենչ ըղծի մատուցանեմ – Արդ լիցի սրբազան վեհիս, զի յառաջ քան զայս գրեցաք սակս Սրբոյ Կարապետի վէքիլ Պետրոս վարդապետին... երկար աւուրբ եւ ողջ պահեցէ Քրիստոս Աստուածն մեր զգլուխդ մեր. ամէն»: [Զաքարիա վրդ-ը] գրութեամբ տեղեկացնում է կթղկսին Սբ. Կարապետ վանում տիրող դրութեան մասին, որ վանքը «վրդովեցեալ է» ո՛չ միայն միաբանների խառնակչութիւնից, այլեւ «ոտնահարութենէ եւ կեղեքմանէ զօրաց պատերազմողաց եւ եւս սեւագլխացն պէսպէս արարմանց»: Խնդրում է վեհին նախ՝ գրութեամբ սաստել սեւագլուխներին դադարեցնելու աստանդական զրախօսութիւնները եւ ապա՝ ներել վանքի տեղապան Պետրոս վրդին, Յօնան վրդին եւ բէկին, քանի որ վանքին շատ վնաս հասցուեց: Խնդրում է գրութեամբ դիմել էրզրումի իշխանաւորներից ոմանց, որ ապստամբ սեւագլուխներին երես չտան: Աւելացնում է նաեւ, որ իրեն գրել էին, «թէ դառնալոյն դոցայ՝ եւ Պետրոս վարդապետն լաւ պատրաստութեամբ գալոց է սուրբ կարշապարդ համբուրելոյ»:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1բ (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ/ՉԱՔԱՐԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ/ՌԵՃՂԸ (1749)»:


72

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՁԵՌԱԳՐԻ

թղթայ. 1, վա. 79

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35,2x22,4: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 24:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ստորին եզրերը մի փոքր պատռուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-2ա «Համառօտ պատմական տեղեկութիւն՝ ֆաղուածօրէն արտագրեալ ի յիշատակարանէ ձեռագիր Աւետարանին գտելոյ ի տան Սարգսի Տէր-Առաքէլեանց Վէլիսցիխացոյ – Փառք եզակի տէրութեանն... Արդ՝ եղեւ զրաւ գրչութեան այսմ Աստուածաշունչ մատենի ի թուականութեան Հայկազեան տունմարի ի ՌՃ եւ Թ (1660) թվի: Յորում անբարի եւ վշտաշատ ժամանակի, եղեւ տիրումն այլազգաց ի յերկրին Վրաց... Ո՛վ դասք լուսերամից, յիշեցէք ... (տեղը բաց), նաեւ զիս՝ զանարժան Սարգիս գրչիս, որ միայն անուամբ եմ քահանայ...»: Ներկայացնուած է 1661 թ. Գանձակի Սավուրեցիք գիւղում գրուած Սարգիս քնյ գրչի յիշատակարանը, որտեղ նկա-

րագրուած են 1648-1660 թթ. *Վրաստանում* տեղի ունեցած իրադարձութիւնները: Ըստ յիշատակարանի՝ 1648 թ. *Փայտակարանի* գահակալ *Ռուստամը*՝ «յազգէն *Բագրատունեաց*», պարսից թգր *Փոքր Շահաբասի* դրդմամբ՝ դուրս է գալիս վրաց *Թամրազ* թգրի դէմ: *Թամրազը* փախչում է *Պաշիաշուխ* երկիր, այնուհետեւ՝ *Ռուսաստան*: 1659 թուին *Ռուստամ* Բագրատունին վախճանում է, եւ իշխանութիւնն անցնում է նրա ազգական *Պատոնաշվիլուն*, ում պարսից թգրն անուանում էր *Շահնավագ*: *Իրիցթավ* անունով մէկը չարախօսում է *Շահնավագին* պարսից թգրի մօտ, վերջինս *Վրաստան* է ուղարկում *Ատրպատականի* իշխան *Մուրթուզա Դուլիին*: Գալով *Վրաց Տուն*՝ վերջինս

կառուցում է երեք բերդ. «*ա. Ալավէրտ, ա. յնտս Կովկասայ եւ միւսն՝ Քօփղարաղաճ, եւ եհան ջուր ի Դանաղ գետէն*»: Այս տեսնելով՝ վրաց թգրը 1660 թ. ինքնակամ մեկնում է պարսից արքայի մօտ եւ խափանում *Շահնավագի* եւ *Իրիցթավի* միաբանութիւնը: 1661 թ. սպանում է բանասարկու *Իրիցթավը*, որ այս բոլոր շարիքների պատճառը եղաւ:

Ծնթ. Յիշատակարանի՝ 1648-1660 թթ. տեղեկութիւններն ընդգրկուած չեն ժէ դ. յիշատակարանների հատորում. տե՛ս Հայերէն ձեռագրերի ժէ դարի յիշատակարաններ (1641-1660 թթ.), հատոր Գ, աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, Երեւան, 1984, էջ Թ:

ՇՏԱՄՊ՝ 1ա (ԺԹ դ., սպիտակ, վերին ձախ անկիւնում) «ТАТАРОВСКОЙ /ПРОТАСЪЕВА В»:

73


ԽՆԴՐԱԳԻՐ

թղթայ. 1, վա. 80

ԺԸ դար

ՄՏԱՅՈՂ՝ Պետրոս վրդ.:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 16,3x-11,9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 16+2:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բասարա. եզրերն անհարթ, ստորին ձախ անկիւնը պոկուած:

ԻՄԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Պետրոս տեսոն աստուածութեան վարդապետ րաբունապետիդ – Գիտութիւն լ[ի]ցի տէ-

րութեանդ... Ողջութեամբ ո՛ղջ լեր ի պարծանս մեր. ամէն»: Մի հոգեւորական *Պետրոս* վրդ-ին խնդրում է միաբաններ աէր *Գրիգորի* եւ *Մկրտումի* միջոցով ուղարկել «սուրբ Աջը», որպէսզի նրանով այցելի *Ճաթղրան՝ էջմիածնի* արքունակալ մեծ վրդ-ի համար կաթ, իւղ եւ ձու հաւաքելու նպատակով:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1բ (սեւ թանափով, բոլորակ) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ /ՌՃԿԴ (1715)»:

ՆՇՈՒՄ՝ 1բ (ԺԸ դ.) «*Զվեց ամ սերմանեսցէս գերկիր քո, եւ ժողովեսցես զարմտիս նորա... այնպէս արասցես զայգի քո եւ ձիթենի քո* (Եւբ ԻԳ 10-11): *Ընծայ եւ պարգեւ կուրացուցանեն զաշս դատաւորի, եւ իբրեւ համր բերանով դարձուցանէ զհանդիմանութիւն* (հմմտ. Սիրաբ Ի 31)»:

74


ՈՏԱՆԱԻՈՐ

թղթայ. 1, վա. 81

Ի դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Իգնատիոս արքյ (1721 թ.):
ԹԵՐԹ՝ 4. չգրուած՝ 1բ, 2բ, 3բ-4բ: ՆԻԻԹ՝ թուղթ.

լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 30,7x23,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսին: ԳԻՐ՝ մեքենագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 43, 48, 29:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած, թերթերն առանձին-առանձին:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ ռեմինգոնատի պատնէն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա, 2ա, 3ա «Համառոտ պատմութիւն եւ տաղաչափական ոտիւք վասն անցից հարուստի մեծոք ժամանակին ի վերայ յաշխարհին պարտից ի ձեռն առնել ազգին Ազգունից, ժամացեալ եւ Օսմանցւոց եւ ապա յօճակն յարմար յաշխարհի եւս ի խնդարոսմն յօցին Քաղաքաւթիանց զարմարի եւ վերային վերականգնումն եւ ի զորանցն յազգի պարտից ի վերայ Օսմանցոց եւ կրկին նորոգութիւնք յօգին ի ձեռնէ նկարի Գեկ կայնցելոց, որ եւ ժպեւայնեայ զանձազ զսոցի խնդար եւ յնա յազմանակն վերականգնել տեսաւր, վնէ ժամոք կոտ շնցաւ ի յերկին արձնել տեսն Արզ թազո՞ Քաղաքանոց արշաւանքի ծոցն ծոցն ի յոմիտն, զսեղաղլաւ եւ ամեմագնայ շնչին, եւ ստանալու եւ ստորագրու իզնառի յամենայն եւ ամենապարտ արձազել:

դարձյալ եւ վերստին վերականգնումն, եւ ի գորանալն յազգի Պարսից ի վերայ օսմանցոց, եւ կրկին նորոգութիւնք նորին ի ձեռնէն Նէտիր Պեկ կոչեցելոյ, որ եւ մակոճայնեալ Ահմադ Աուլի խան, զոր եւ յետ յաղթանակին վերաձայնեալ անուամբ Վելի Մամաթ կոչեցաւ ի յերկիրն արեւելեան: Արդ՝ բազու[ւմ] թախանձանո՞ւ աշխատասիրել եղեւ ի յում/ումնէ, դանդաղկոտ եւ ամենավրէպ շնչին, եւ ստորադաս, եւ ստորադաս Իգնատիէ ամենամեղ եւ ամենապարտ արեղայէ Տիգրանակերտոց – Հազար հարիր Հայոց թվական, յետ թանանիւ պատուաստական... այսքան աղետք որք պատմեցան, վասն իմ մեղացն գործեցան»: Տիգրանակերտցի Իգնատիոս արքայի գրած չափածոյ ստեղծագործութիւնում ներկայացուած է 1721 թ. աղոսանների եւ օսմանցիների արշաւանքներից Պարսկաստանի կործանման եւ Նադիր շահի շնորհիւ վերականգնման համառոտ պատմութիւնը:

75


ՍՏԱՑԱԿԱՆ

թղթայ. 2, վաւ. 1

Ի դար

ԳՐԱԳԻՐ՝ Պետրոս երէց (1758 թ.):

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: **ՆԻՒԹ՝** հաստ թուրք: **ՄԵԾՈՒԹԻՒՆ՝** 31x22,7: **ԳՐՈՒԹԻՒՆ՝** միասին: **ԳԻՐ՝** շղագիր (նմուշ՝ 1ա): **ՏՈՂ՝** 22:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ստորին եզրն անհարթ: **ԻՍԿՈՒԹԻՒՆ՝** արտագրութիւն, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Մեք՝ Կսապատու Դանիէլ քօխվէս, Ոհանս... առանք Սարգիսանայ ԳԻ (3000) փող Բ (2) տարէն շաղացին մալն»: Կսապատի հասարակութեան ներկայացուցիչների 1758 թ. գրած ստացականը շաղացի երկու տարուայ հարկը Սարգիսայից վերցնելու մասին:

Ծնթ. 1. Բովանդակութեան ներհումը ծանօթագրուած է. «Վերոհիշյալ տեխաղ Մատենադարանի կաթողիկոսական դիվանի թղթապանակ № 2, № 1 վավերագիրն է եղել, որը ներկայումս այդ թղթապանակում չէ եւ այդ առթիվ կազմված է համապատասխան ակա: Այդ վավերագրի տեխաղը 1941 թվին Մատենադարանի արխիվի նախկին վարիչ Հ. Աբրահամյանը իր հրատ. «Կավածագրեր» ժողովածուի 169 էջում տպագրել է, որից արտագրեցինք այդ վավերագիրը:

2. Քանի որ արտագրութիւնում կայ դասական եւ խորհրդային ուղղագրութիւնների խառը կիրառութիւն, հիմք ենք ընդունել 3. Աբրահամեանի հրատարակութիւնը. տե՛ս 3. Աբրահամեան, № 132, էջ 169:

3. Հմմտ. ա՛տ №№ 15, 16, 17:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

- 1. 1ա Գրեցաւ ԹՄէ (1758) էր:
- 2. 1ա եւ՝ Պետրոս երէցս գրեցի՞ վկայ:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ


1ա եւ՝ Ալահվերտանց Գիգլիս վկայ:

76
ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐ

թղթայ. 2, վառ. 2

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ բոլորակ՝ ներսում անընկալելի պատկեր: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,3x17,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 18:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերն անհարթ: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «//Իւր կաման եւ շար՛ի մարիֆաթովն գերապատիւ Դօրչի Աթանանի որդի Ազայն ծախեաց... կտրվեցաւ առնողին իղրարովն. այսպէս եղև զայսքան խօսկին զայսուր»: Կարուածագրում նշում է, որ Դօրչի Աթանանի որդի Ազայր Դարբանդում գտնուող իր հողակտորը («մին բաց տափ, որ

հինգ թաղար ցորենոյ տեղ է») վաճառեց ազգութեամբ հայ Վարդանին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՅՈՐԻՆԱԿԻ

1ա Գրեցաւ ճամառ քաւալ ՌՃՂԳ զտաճկաց եւ Հայոց ՌՄԷ (1758), յուլիսի:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1ա Վկայք՝ Շաբան վալատն Հաշիմ Քազում, զալատն մօլայ Նայիպ Ուսուպն լալայ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

- 1. 1ա (ԺԸ դ., նոտագիր) Դարբանդու վախմ այգուր Բ (2) երեսն է:
- 2. 1բ (ԺԸ դ., նոտագիր) Դարբանդու վախմ այգուր գիրն է:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (սեւ քանափով, ուղղանկյուն, նախօրինակի տեղի նշումով) «Մուրթուզայ Դուլի»:

Ծնթ. Մանրամասն տե՛ս 3. Աբրահամեան, № 52, էջ 68:


77
ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻԻՆ

թղթայ. 2, վառ. 3

ՌՄԹ-1760

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «LV GERREVINK», լուսապատկերով՝ թագակիր ոճաւոր զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23,1x19: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 14+12:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Պատճառ գրոյս այս է, որ եղև ի ՌՄԹ

(1760) թուին եւ ի սեպտեմբերի ամսոյ Ժ (10)ումն... եւ իմ խոստովանահայրս է տէր Մանուէլ քահանայն, եւ վկայեցեն յայսմ բանիս ներքոյ կնքեալ վարդապետքս, զոր եւ տեսողաց հաճելի լիցի»: Կաֆայեցի «աթտար» (մանրավանառ) Իգնատիոսի կին մահտեսի Բհարը Սբ. էջմիածին ուխտի գալով՝ Կաֆայի Սբ. Սարգիս եկեղեցու մօտ գտնուող իր տան մի կէտը նուիրում է Սբ. էջմիածնին, միա կէտը՝ Երուսաղէմին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա ՏԵ՛ս Բովանդակութեան սկիզբը:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

- 1. 1ա եւ՝ Սբոյ էջմիածնի լուսարար եղիազար եպիսկոպոսս վասն Աստուծոյ վկայեմ:
- 2. 1ա եւ՝ տեղապահ Անդրէաս վարդապետս վկայեմ:

3. 1ա ես՝ գործապետ Սրբոյ Աթոռոյս Պետրոս վարդապետս վկայ:

4. 1ա ես՝ Սրբոյ Էջմիածնի ժամօրհնօղ Ղազար վարդապետս վկայ:

5. 1ա ես՝ Սրբոյ Էջմիածնի միաբան Թաղէոս վարդապետս վկայ:

6. 1ա ես՝ Այտինցի Օհանի որդի մահտեսի Ստեփաննոս, որ ուխտ էի եկեալ Սուրբ Էջմիածին ընդ Բհար կնոջս եւ հասու եղեալ այսմ բանիս հանդերձ իմ ընկերովս՝ կնքեցաք եւ վկայեմք:

7. 1ա ես՝ Ուրուշնուղցի Աստուածատուրի որդի, սրոյ ուխտակից Աւետիսս տեսեալ՝ վկայեմ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2բ (ԺԸ դ., բոլորգիր) Քաֆայեցի աթոար Իգնատիոսի կին մահտեսի Բհարի տված ղաբուլագիրն

է, որ իւր տան կէան Սրբոյ Աթոռոյս վախուպ ետ, որ է տունն ի Քեաֆայ ի մահլացն Սուրբ Սարգիս եկեղեցւոյ:

- ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1. 1ա (սե քանափով, ընասր քանակութի) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԴԵՂԻՍԱՆՁԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ/1179 (1730)»:
- 2. 1ա (սե քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԱՆԴՐԷԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ/1194 (1745)»:
- 3. 1ա (սե քանափով, ուրանկին) «ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ/1194* (1745)»:
- 4. 1ա (սե քանափով, ձուածեւ) «ՂԱԶԱՐ /ՎԱՐԴԱՊԵՏ/»:
- 5. 1ա (սե քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԹԱԴԷՆՍ ՎԱՐԴԱՊԵՏ /ԻՃՂԴ (1745)»:
- 6. 1ա (սե քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԸՍՏԷՓ/ԱՆ»:
- 7. 1ա (սե քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԱԻՎՎՆԵՏ / (քուականը՝ արաբատա)»:

78


ՀԱՇՈՒԵՄԱՏԵԱՆ

թղթ. 2, վա. 4

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ


ԳԻԻԶ՝ Պետրոս արդյ՝ 1760-1763 թթ. (2ա-10ա, 11-5բ, 16բ-7ա, 18ա-28ա, 29ա-65բ), Ղունկիանոս վրդ.՝ 1763 թ. (66ա-68ա, 82ա-100ա, 101ա, 102ա-5ա, 109ա-18ա), Թաղէոս վրդ.՝ 1763 թ. (128ա-34բ), Մկրտիչ վրդ.՝ 1764-1767 թթ. (142ա-208ա, 209ա):

ԹԵՐԹ՝ 216 (էջակալուած 1-352՝ հաշուի շաւնելով չգրուած թերթերը). չգրուած՝ 1աբ, 10բ, 16ա, 17բ, 28բ, 68բ-81բ, 100բ, 101բ, 105բ-8բ, 118բ-27բ, 135ա-41բ, 208բ, 209բ, 210բ-15բ: ՊՐԱԿ՝ Ա-է (Ա՝ 2, Բ՝ 36, Գ՝ 43, Դ՝ 46, Ե՝ 14, Զ՝ 32, Է՝ 43): ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «A FAV & VA LARGV L P», լուսապատկերով՝ բուսական ընասումամբ պատուանդան, ներեւտամ՝ խաղողի ողկոյգ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 32,2x22: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 2ա, 104բ, 128ա, 156ա): ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 40-42: ԿԱԶՄ՝ կաշի դրոշմագարդ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա. (սկ.):




Նմուշ 2ա (Պետրոս արդյ)


ՌՄԹ-ՌՄԺԶ-1760-1767



Նմուշ 104բ (Ղունկիանոս վրդ.)



Նմուշ 128ա (Թաղէոս վրդ.)



Նմուշ 156ա (Մկրտիչ վրդ.)

ՎԻՃԱԿ՝ կազմը ցեցակեր, մամուլների թելերը պոկուած եւ կազմից անջատուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Մատենամ գրանցուած են Սր. Աթոռի 1760-

1767 թթ. հարկերն ու ծախսերը՝ վերոյբերեալ միարանների կողմից.

1. 2ա-3բ Այս է տիրացու Ստեփանի առքն, զոր առեալ է ի սրբազան վեհէն կամ այլոց գործակալացն Սրբոյ Աթոռոյս... Դճ (400). տվեալ էր եւս զրտից եւ աղքատաց Դճ (400) դիան սրբազան վեհին բերդն գնալիս:

2. 4ա-5բ Առքն Թաղէս վարդապետի այս է, զորս առեալ է ի սրբազան վեհէն եւ ի Ստեփանէն, ի յունվար ամսոյ մտէն մինչեւ ի ապրիլ ամսոյ ելն... Վերոյ գրեալ ՀԴ (74) զալամ փողից ջամն եղեւ ԻԳ (23) թուման ԳՈ (3000) Ծ (50) դիան եւ Բ (2) փարայ:

3. 6ա-7ա Եճ (500) դիան նալբանտի՝ ձեռամբ Յովսէփ վարդապետին... ԲՈ (2000) դիան տուած էր Ջորագեղու եկեղեցոյ՝ Բ (2) ֆանճարայիցն շինելոյ վարձ:

4. 7բ Տուած էր առաջի շաբաթուն ի քակմանն ԼԸ (38) մշակաց վարձան Բ (2) շահիով... Վերոյ գրեալ ութ զալամ մշակաց վարձուց փողից ջամն եղեւ Ե (5) յ(թուման) ԱՈ (1000) եւ Աճ (100) դիան Ա (1) փարայ:

5. 8ա-10ա Աճ (100) ԻԵ (25) դիան տուեալ էր կէս լիտր մսի ուստայից համար, ձեռամբ Ուռուփն, յուլիսի Գ (3)ին... Վերոյ գրեալ ԻՈ (20000) զալամ խարճից փողից ջամն եղեւ ԺԴ (14) թուման ԹՈ (9000) էճԾ (750) դիան Ա (1) փարայ:

6. 11ա-4ա Գ (3): Առի սրբազանիցն երեք թուման փող, վասն խարճելոյ ի հարկաւոր տեղիս, մայիսի ԺԳ (13)ունն... Վերոյ Զ (6) զալամ դրամիցդ ջամն է Կէ (67) թուման, ԱՈ (1000) էճ (700) դիան Բ (2) փարայ:

7. 14բ-5բ ԲՈ (2000) ԲճԾ (250): Եկեղեցոյ վերայ բանօղք Բ (2) շաբթի աւուր ԺԵ (15) մշակաց վարձսըն Գ (3) շահիով ԲՈ (2000) ԲճԾ (250) դիան... Վերոյ գրեալ ԼԳ (33) զալամ խարճից եւ մասրաֆից ջամն եղեւ Ե (5) թուման ԹՈ (9000) էճ (700) դիան եւ Ա (1) փարայ:

8. 16բ-7ա Այս է տուրքս, զորս ետու գործակալաց զարգով, զոր գրելոց եմ ի ներքոյ... Ը (8) յ(թուման): Ետու նոյն Պետրոս վարդապետին ութ թուման փող վասն խարճելոյ ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս ի դեկտեմբեր ամսոյ Թ (9)ունն:

9. 18ա-26բ Մալիս ամիս: զճ (100): Ետու մսի զճ (100) դիան վասն կերակրոյ միաբանիցն ի յերեւան Ե (5)ունն... Վերոյ Դ (4) զալամ դրամիցդ ջամն է Գ (3) թուման ԳՈ (4000) ԼԵ (35) դիան:

10. 27ա-8ա Գ (3) յ(թուման) ԵՈ (5000) Եճ (500): Առի ի սրբազան վեհէն երեք թուման եւ Եճ (500)

դիան փող, հինգ հազար դիան եւս վասն խարճելոյ ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս ի յունվար ամսոյ Ա (1)ունն... է (7) յ(թուման) ԵՈ (5000) ԶճԻԵ (625): Առի եւս ի սրբազանէն եօթն թուման հինգ հազար վեց հարիւր քսանհինգ դիան, որ էր է (7) գարաս, Ե (5) լիտր գինոյ գինն, ի սոյն ամսոյ Լ (30):

11. 29ա-30բ էՈ (7000) Բճ (200): Առի ի սրբազան վեհէն էՈ (7000) Բճ (200) դիան, որ չորս գանջրու ոսկի, ի յուլիսի Ա (1) առի... Վերոյ Թ (9) զալամ առից դրամից ջամն է ԱճՉՉ (186) յ(թուման) էՈ (7000) Ըճ (800) դիան: Վերջ:

12. 31ա-32ա Առի ի Անանիայ վարդապետի մեզ տալացուկ դրամի կողմանէն, որ փօղիցայ արարինք... Վերոյ Զ (6) զալամ առից ջամն է Ծէ (57) յ(թուման) ԹՈ (9000) Ըճ (800) դիան:

13. 32բ Առի եւս Բայազիտու նուիրակ Պետրոս վարդապետէն, հրամանաւ սրբազան վեհին, մին հարիւր յիսուն սաղ ղ[ու]ռուշ փող... Բ (2) յ(թուման) Զճ (600): Առի եւս երկու թուման եւ Զճ (600) դիան ի Էրեւանու Բ (2) եկեղեցոյ գանձանակացն, գիտութեամբ Ղունկիանոս վարդապետին եւ ձեռամբ Էրեւանու եղեալ ժողովրդոցն, մարտ ամսոյ ԺՉ (16)ունն:

14. 33ա-42բ ԱՈ (1000) ԱճԼԵ (135): Խսիր առի ԼԴ (34) հատ, Ա (1) հատն Բ (2) փարայով, զգինն ետու ԱՈ (1000) ԱճԼԵ (135) դիան... Վերոյ գրեալ է (7) զալամ խարճից փողից ջամն եղեւ Բ (2) յ(թուման) ԼԵ (35) դիան:

15. 43ա-56բ Ի ՌՄԺ (1761) թվին ի յուլիս ամսէ սկսեալ մինչեւ ցայս վայր... Վերոյ է (7) զալամ խարճից փողից ջամն եղեւ Թ (9) թուման ԹՈ (9000) էճՂԵ (775) դիան:

16. 57ա-65բ ԻԳ (23) յ(թուման): Ուղտ առի Գ (3) հատ, որոց գինն ետու քսաներեք թուման... Մկրտիչ վարդապետն իմ խարճեցեալն եւս ընդ շարս իւրոյ խարճից դաւարին գրեաց, եւ ի սրբազան վեհին զաբազին եւս գրեաց, թէ ԺԳ (13) թուման ԳՈ (3000) ԴճԼԵ (435) դիան փողն ի տէր Պետրոսէն առի եւս ի սոյն ամսունն:

17. 66աբ Եճ (500): Զուրօրհնէք օրն եւ կամ Ութօրէիցն, սրբազան վեհին ժամ գնալիս, վասն աղքատաց ետու Եճ (500) դիան, կամ մտանելն եւ կամ ի դուրս ելանելն... ԱՈ (1000) Աճ (100): Դեղորէից գին ետու եւս մին հազար եւ Աճ (100) դիան հէքիմ Հէրապետին, վասն սրբազանի հիւանդութեանն, ի մարտ ամսոյ ԺՉ (16)ունն:

18. 67բ-8ա Զէ (87) յ(թուման) ԳՈ (3000) ԶճԿԵ (665): Առաք նախ ութսունեօթն յ(թուման) ԳՈ (3000) ԶճԿԵ (665) դիան՝ ձեռամբ Սիմէօն վար-

դապետտին... Վերոյ հինգ ղալամից ջամն է ժԴ (14) յ(=թուման) ԵՃ (500) դիան:

19. 82ա-5բ Բ (2) յ(=թուման) ԶԹ (6000) ԱՃ (100): Ղոխ այգոյ ետորքն եղեն ԲՃԿԱ (261) մշակք, մէկն Բ (2) շահիով... Վերոյ գրեալ ժԶ (16) ղալամից ջամն եղեւ է (7) յ(=թուման) ԷԹ (7000) ԱՃՂԵ (195) դի[ա]ն:

20. 86ա-96ա ԱՃ (100): Երեւան ԱՃ (100) դիան ետու մեր միրգին հացագին վասն Նորագեղոյ այգոյն... (ջնջած) Վերոյ երկուց ջամից ջամն է Ը (8) յ(=թուման) ԱԹ (1000) ԹՃ (900) ԻԵ (25) դիան:

21. 96բ-100ա ԵԹ (5000): Խթման եր[ե]կոյին ժամասաց վարդապետաց, սարկաւագաց, դպրաց եւ վարժատան մոնթերին ետու հինգ հազար դիան փող... Վերոյ ժԸ (18) ղալամից ջամն է Ե (5) յ(=թուման) ԸԹ (8000) ԱՃԺ (110) դիան:

22. 101ա Ի (20) յ(=թուման): Առի լուսարար եւ Սիմէոն վարդապետացէն քսան թուման փող ղաբզով... Գ (3) (=թուման): Առի եւ քարվանսրատար տիրացու Գարուստէն երեք թուման փող քարվանսրայի կողմանէն, ղաբզ եւ ետու իւրն, մայիս ամսոյ Ը (8)ին:

23. 102ա-4ա ԱԹ (1000) ԱՃ (100) ԼԴ (34)ն: Նօխտայ կարել ետու ձիոյ տանն եւ մին հատ, ջորոյ՝ երեք հատ... ԳՃ (300): Նօխտայ կարել ետու վասն ջորոցն հինգ հատ, եօթն հատ եւ պիտի կարել. գինն ետու երեք հարիւր դ[ի]ա[ն], գիտուլթեամբ շորապան Յարութիւնին, սոյն ամսոյ ժ (10)ին:

24. 104բ-5ա Առի տիրացու Մկրտչէն տանն թուման փող վասն Սրբոյ Աթոռոյս... Վերոյ գրեալ ԻԸ (28) ղալամի ջամն է ԱՃԽԱ (141) յ(=թուման) ԴԹ (4000) ԳՃՃ (370) դի[ա]ն:

25. 109ա-18ա (Յունիս ամսոյ մուտն) – ԱՃ (100) Կ (60) դիան: Բուրթ մանեւ ետու մին լիտր ուղտոց նօխդի համար... Վերոյ գրեալ ԻԵ (25) ղալամից ջամն եղեւ Դ (4) յ(=թուման) ԹԹ (9000) ԴՃԼ (430) [դիան]:

26. 128ա-34բ ԱԹ (1000) ԲՃԾ (250) դիան Ա (1) փող: Գարի առի ժԹ (19) լիտր, մէկ լիտրն Դ (4) փարայով... Բ (2) յ(=թուման) ԲԹ (2000) ԶՃ (600) դիան Ա (1) փարայ: Վերոգրեալ ժԶ (16) ղալամիդ ջամն եղեւ Բ (2) յ(=թուման) ԲԹ (2000) ԶՃ (600) դիան Ա (1) փարայ:

27. 142ա-55բ Վրացի խառատ Դաւիթն ժ (10) օր բանէց ի վերայ Սրբոյ Աթոռոյս թէ՛ եկեղեցոյ վերայ եւ թէ՛ այլ արտաքոյ բան... ԻԶ (26) յ(=թուման) ԹԹ (9000) ԷՃ (700) Ծ (50) դիան: Վերոյ ժԸ (18) ղալամիդ ջամն է ԻԶ (26) թուման ԹԹ (9000) ԷՃ (700) յիսուն դիան:

28. 156ա-72ա ԴԹ (4000): Անցեալ ամին Դ (4) լիտր բարութ առինք, լիտր ԱԹ (1000)... ԱՃՃԳ (173)

ԹՃ (900) ԺԵ (15): Բոլորից ժԸ (18) ղալամից ճամն է ՌՃՃԳ (173) յ(=թուման) ԹՃ (900) ԺԵ (15) դի[ա]ն:

29. 172բ-90ա Յունվար – Գ (3) յ(=թուման) ԳԹ (3000) ԸՃ (800) ԿԵ (65): Նալն առի ԱՃԽԵ (145) իւիչին առանց մեխի. մին իւիչին ժԴ (14) փարայ... ԱՃԾԴ (154) յ(=թուման) ԸԹ (8000) ԳՃԼ (330) դի[ա]ն: Վերոյ գրեալ ԻԱ (21) ղալամիս ջամն է ԱՃԾԴ (154) յ(=թուման) ԸԹ (8000) ԳՃԼ (330) դի[ա]ն:

30. 190բ-206ա ԲԹ (2000): Ոչխարն առի վասն մորթելոյ Ա (1) հատ, որոյ գին ետու ԲԹ (2000) Բարեկենդանին... Վերոյ գրեալ ԻԴ (24) ղալամիս ջամն է մին ճԿԴ (164) յ(=թուման) ԳԹ (3000) ԸՃԾ (850) դի[ա]ն:

31. 207ա-8ա, 209ա ԳԹ (3000): Ե (5) դարւիշացն, ձեռամբ Թաղէոս վարդապետին, ետու ԳԹ (3000) դիան յունվար Ա (1)... Վերոյ բոլոր խարճեաց երկուց ջամն եղեւ ԴՃԽԵ (445) թուման ԳԹ (3000) ///:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 2ա Ի ՌՄԹ (1760) թուին եւ ի դեկտեմբեր ամսոյ ժԴ (14)ին, հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհին, ես՝ նորին նուաստագունեղ ծառայ տէր Պետրոս, մեր տիրացու Ստեփաննի հէսապն տեսի, առից եւ տրից, զոր ինչ որ ի յունվար ամսոյ մէկէն մինչեւ ի մայիս ամսոյ Դ (4)ըն առեալ էր ի սրբազան վեհէն եւ խարճեալ ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս: Վասն որոյ եւ ես, հրամանաւ սրբազան վեհին, առքն եւ արարեցեալ խարճ եւ մասրաֆսն նորին գրեցի ի դաւթարիս իմում, որ առքն ընդ առքիս իմում լիցի եւ խարճսն ընդ խարճիս, որպէս որ գրելոց եմք ի ներքոյ:

2. 4ա Ի ՌՄԹ (1760) թուին եւ ի դեկտեմբեր ամսոյ ժԴ (14)ին, հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհին, ես՝ տէր Պետրոս անարդիւն եւ խունիմաստ ծառայս նորին, Թաղէոս վարդապետի առից եւ տրից հէսապն տեսի, զոր ի սրբազան վեհէն, եւ ի տիրացու Ստեփաննէն առեալ եւ խարճեալ էր վասն հարկաւորութեան Սրբոյ Աթոռոյս. զի թէպէտ ի սրբազան վեհից առեցեալ դրամից հաշիւն սրբազանին էր տուեալ, եւ տիրացու Ստեփաննից առեցեալն Ստեփաննին, սակայն եւ ես, ըստ հրամանի տեառն իմոյ սրբազան վեհ[ին] եւս տեսի, վասն որոյ գրեցի ի դաւթարիս իմոյ նորին առքն, խարճս եւ մասրաֆսն վասն Սրբոյ Աթոռոյս, զի լիցի առքն ընդ առքիս իմոյ եւ խարճսն ընդ խարճիս ի ներքոյ միոյ գրչի:

3. 4բ Ի ՌՄԹ (1760) թուին եւ ի յունվար ամսոյ մտէն մինչ ի ապրիլ ամսոյ ելն, այս է Թաղէոս վարդապետի արարեալ խարճ եւ մասրաֆսն, զոր ես՝

տէր Պետրոս, հրամանաւ սրբազան վեհին, նորին հէսապն տեսի թէ՛ առիցն եւ թէ՛ տրից եւ խարճիցն, զոր ի սրբազան վեհին եւ ի տիրացու Ստեփաննէն առեալ եւ խարճեալ էր ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս:

4. 6ա Ի ՌՄԹ (1760) թուին, մայիսի ԺԴ (14)ին ես՝ մեղապարտ տէր Պետրոս, հրամանաւ սրբազան վեհին, Թաղէս վարդապետի թէ՛ առից եւ թէ՛ տրից հէսապն տեսի, զի առեալ էր վեհէն Ե (5) թուման մին, Գ (3) յ(թուման) ԶԹ (6000) դիւլան մին, Բ (2) յ(թուման) ԷԹ (7000) դիւան եւս մին: Յորոց ջամն եղեւ ԺԱ (11) յ(թուման) ԳԹ (3000) դիւան. է (7) յ(թուման) եւս տէր Պետրոսը ետու: Ի սրբազան վեհի տուեալ ԺԱ (11) յ(թուման) եւ ԳԹ (3000) դիւան փողին ես՝ տէր Պետրոսը դաբզ ետու սրբազան վեհին: Զի այս փողս խարճեալ էր ի պէտս հարկաւորութեան Սրբոյ Աթոռոյս: Արդ՝ վասն այն տեսի զհէսապն ի նմանէ, զի առքն ի մէջ առքին իմոյ լիցի եւ խարճն ընդ խարճին իմոյ, զի մի անկանիցի ի գրչաց, վասն որոյ գրեցաւ ի ներքոյ:

5. 7բ Ի ՌԲՃԹ (1760) թուին, ի յունիս ամսոյ ԻԸ (28)էն մինչ ի նոյեմբեր ամսոյ մէկն: Այս է ներսի ձմռան վեհարանի վերաբանեցեալ մշակաց եւ ուստայից տուեցեալ վարձսն թէ՛ քակելոյն, թէ՛ շինմանն, թէ՛ հողելոյն եւ թէ՛ սվաղելոյն, զոր ձեռամբ մեր Յոնան վարդապետին խարճեալ էր, վասն որոյ ես՝ սրբազան վեհ[ի] ծառայ տէր Պետրոսը Յոնան վարդապետի հէսապն տեսի եւ գրեցի ի ներքոյ, որ էր ԴՃՂ (490) մշակք:

6. 8ա Ի ՌՄԹ (1760) թուին, [յ]ունիս ամսոյ ԻԶ (26)ին: Այս է Ղունկիանոս վարդապետի արարեալ խարճսն ի վերայ Զորագեղու նորակերտ վեհարանին եւ այգւոյ վերաբանօղ մշակացն եւ այլ մասրաֆից դաւթարն, որ սորին խարճեցեալ դրամսն ի սրբազան վեհի սպասաւոր տէր Պետրոսէս էր առեալ եւ խարճեալ, վասն որոյ եւ ես՝ տէր Պետրոսս նորին հէսապն տեսի եւ զխարճ եւ զմասրաֆսն ի դաւթարոջս իմում գրեցի, որք են այսոքիկ, զորս գրեցաք ի ներքոյ: Զի ի գրչաց ոչ անկանիցի:

7. 11ա Ի ՌՄԹ (1760) թուին, մայիս ամսոյ ԺԳ (13)ին ես՝ անարժան ծառայս մեծի տեառն իմոյ սրբազան վեհին տէր Պետրոս, հրամանաւ նոյնոյ սրբազան վեհին, սկսայ Աստուծով առնել դաւթարս զայս առից եւ գէլուրից դրամից ոմանց, եթէ՛ սրբազան վեհէն եւ թէ՛ այլուստ, վասն խարճելոյ ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս:

8. 18ա Ի ՌՄԹ (1760) թուին եւ ի մայիսի ամ-

սոյ Դ (4)ումն: Ես՝ անպիտան ծառայս տեառն իմոյ սրբազան վեհապետին տէր Պետրոսս սկսայ, հրամանաւ սրբազան վեհապետին իմոյ, զխարճս եւ մասրաֆս առնել ի վերայ հարկաւորականաց պիտոյիցն Սրբոյ Աթոռոյս, վասն որոյ արարի (զելից եւ զհատից) զդաւթարս այս. այս է, զորս գրեցաք միջստմիտջէ ի ներքոյ:

9. 14բ Ի ՌՄԹ (1761) թուին եւ մարտ ամսոյ ԺԷ (17)էն սկսեալ: Այս է տէր Սահակի արարեալ խարճ եւ մասրաֆ դրամաքն ի վերայ Զորագեղու նորակերտ շինուածոցն, այսինքն՝ ի վերայ վեհարանի եւ եկեղեցւոյ, նաեւ պարսպի բանօղք վարպետացն եւ մշակացն, զոր դրամն ի սրբազան վեհի անպիտան ծառայ տէր Պետրոսէս էր առեալ եւ խարճեալ ընդ Անդրէաս վարդապետին, վասն որոյ եւ ես՝ տէր Պետրոսը նորին հէսապն տեսի եւ նորին դաֆղարոջ գրեալ մշակսն եւ նոցին տուեցեալ դրամսն ի յիմում դաֆղարոջս մին թամամ գրեցի, զի մի ի գրչաց ինչ անկանիցի. այս է, զորս կարգաւ գրելոց եմք ի ներքոյ:

10. 27ա Յանուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ի ՌՄԹ (1761) թուին եւ ի յունվար ամսոյ մէկումն: Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհի ես՝ նուաստագունեղ տէր Պետրոսս արեղայս յետ հաշուատութեանս իմոյ սկսայ նորապէս դաւչարս վասն առից եւ կէլուրից դրամից ոմանց Սրբոյ Աթոռոյս, թէ՛ ի սրբազան վեհէն եւ թէ՛ [յ]արտաքուստ, վասն խարճելոյ ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս:

11. 29ա Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ի ՌՄԹ (1761) թուին եւ ի յունիս ամսոյ մուսն: Ես՝ մեղապարտ տէր Պետրոսս արեղայս յետ հաշուատութեանս իմոյ նորապէս դաւթար առնել սկսայ վասն առից եւ գեալուրից թէ՛ ի սրբազան վեհէն եւ թէ՛ յարտաքուստ, զամենայն ըստ կարգի, զոր ի ներքոյ գրի ի ծախս եւ ի խարճս վասն հարկաւորութեան Սրբոյ Աթոռոյս:

12. 33ա Ի ՌՄԹ (1761) թուին եւ ի յունվար ամսոյ մէկումն, հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետին, ես՝ խունիմաստ եւ անարդին ծառայս նորին, յետ յանցելոյ ամաց հաշուատութեանս իմոյ սկսայ նորապէս խարճ եւ մասրաֆ առնել վասն հարկաւորականաց պիտոյիցն Սրբոյ Աթոռոյս. վասն որոյ արարի (զելից եւ զխարճից) զդաֆղարս այս: Այս է, զորս գրելոց եմ միջստմիտջէ ի ներքոյ:

13. 43ա Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհին ես՝ նուաստ եւ անարժան ծառայ նորին, յետ հաշուատութեանս իմոյ, սկսայ նորապէս խարճ եւ

մասրաֆ առնել վասն հարկաւոր պիտոյիցն Սրբոյ Աթոռոյս, զոր միբրամիոջէ ի ներքոյ գրի:

14. 31ա ի ՌՄԺԱ (1762) թուին եւ ի յունվար ամսոյ մուտըն, հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհին, ես՝ մեղապարտ տէր Պետրոս արեղայս նորապէս դաւթար առնել սկսայ վասն առից եւ գեալուրից թէ՛ ի սրբազան վեհէն եւ թէ՛ յարտաքուստ, զամենայն ըստ կարգի, զոր ի ներքոյ ծախս եւ ի խարճս գրի վասն հարկաւորութեանն Սրբոյ Աթոռոյս:

15. 32բ ի ՌՄԺԲ (1763) թուին եւ ի յունվար ամսոյն, հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհին, ես՝ մեղապարտ տէր Պետրոս արեղայս նորապէս դաֆղար սկսայ առնել վասն առից եւ գէլուրից ի սրբազան վեհէն եւ թէ՛ [յ]արտաքուստ, զամենայն ըստ կարգի, զոր ի ներքոյ ծախս եւ ի խարճս գրի վասն հասարակութեանն Սրբոյ Աթոռոյս:

16. 57ա ի ՌՄԺԱ (1762) թուին եւ ի յունվար ամսոյ մուտըն, սկսայ վերստին գրել Սրբոյ Աթոռոյս եղեալ խարճ եւ մասրաֆսն, հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհին, ի դաֆղարս:

17. 67բ ի ՌՄԺԱ (1762) թուին եւ յապրելի մուտն: Այս է մեր Դումկիանոս եւ Մկրտիչ վարդապետաց առքն ի սրբազան վեհէն վասն հասարակաց խարջելոյ, որք են այսոքիկ:

18. 82ա Այս է Սուրբ Աթոռոյս հասարակաց եղեալ խարջն, ձեռամբ Դումկիանոս վարդապետին եւ Մկրտիչ վարդապետիս եղեւ, ՌՄԺԱ (1762), մուտ ապրիլ ամսոյ:

19. 86ա ի ՌՄԺԱ (1762) թուին եւ ի մուտ յունիսի: Այս է Սրբոյ Աթոռոյս վասն հասարակաց եղեալ խարջն, զոր ձեռամբ Դումկիանոս եւ Մկրտիչ վարդապետացս եղեւ:

20. 66ա ի ՌՄԺԲ (1763) թուին եւ ի յունվար ամսոյն սկսայ վերստին խարճ եւ մասրաֆ առնել այնպիսի իրաց, որ ներսական է խարճ եւ մասրաֆ:

21. 96բ Յանունն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն: Ի ՌՄԺԲ (1763) թուին եւ յունվար ամսոյ մուտն, ի ժամանակս տեառն սրբազան Յակոբայ կաթողիկոսին, որ ես (տեղը բաց) վարդապետս սկսայ Սրբոյ Աթոռոյս խարճ եւ մասրաֆ առնել հրամանաւ (տեղը բաց), այսոքիկ են, որք կան ի ներքոյ գրեալ:

22. 104բ ի ՌՄԺԲ (1763) թուին, յունիս ամսոյ մտէն այս է իմ՝ Դումկիանոս վարդապետիս առեալ փողն վասն խարճի եւ մասրաֆի Սրբոյ Աթոռոյս:

23. 128ա Յանունն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն: Թվին ի ՌԲՃԺԲ (1763), ապրիլի է (7)ին: Այս է իմ՝ Թաղէոս վարդապետիս արարեալ խարջ եւ մասրաֆ վասն հարկաւորութեան, որք միբրստ-

միոջէ գրեալք կան ի ներքոյ յատկապէս:

24. 142ա ի ՌԲՃԺԳ (1764) թուին եւ յունվարի մուտն, երբ հրամանաւ սրբազան վեհին սկսայ Սրբոյ Աթոռոյս հասարակ մասրաֆն առնել, ես՝ ծառայ նորին Մկրտիչ վարդապետս: Սկիզբն արարի զայս դաւթարիս կարգաւ զխարջս Սրբոյ Աթոռոյս գրել յատուկ-յատուկ:

25. 207ա ի ՌՄԺԳ (1764) թուին:

26. 156ա ի ՌՄԺԳ (1765) թուին եւ ի յունվարի մուտն, երբ հրամանաւ սրբազան վեհին վերստին սկսայ Սրբոյ Աթոռոյս հասարակ մասրաֆն առնել, ես՝ ծառայս նորին Մկրտիչ վարդապետս: Սկիզբն արարի զայս դաւթարս կարգաւ զխարջս Սրբոյ Աթոռոյս գրել յատուկ-յատուկ:

27. 172բ ի ՌՄԺԵ (1766) թուին եւ ի մուտն յունվարի, երբ հրամանաւ սրբազան վեհին վերստին սկսայ ես՝ ծառայս նորին Մկրտիչ տեղապահ վարդապետս զհասարակ մասրաֆն Սրբոյ Աթոռոյս առնել թէ՛ ի սրբազանէն առեալ զսրբազով յառքէն եւ [թէ՛] յարտաքուստ եկեալ արդեանցն: Զսկիզբն արարի կարգաւ զխարջս Սրբոյ Աթոռոյս յատուկ-յատուկ գրել:

28. 190բ ի ՌՄԺԶ (1767) թուին եւ ի յունվարի մուտն, երբ հրամանաւ սրբազանին վերստին սկսայ Սրբոյ Աթոռոյս հասարակ մասրաֆն առնել, սկիզբն արարի ես՝ Մկրտիչ վարդապետս եւ տեղապահս նորին, զայս դաւթարս կարգաւ յատուկ-յատուկ գրել զխարջն Սրբոյ Աթոռոյս:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 2բ (տէր Պետրոս, 1760 թ.) Այս է Ստեփանի արարեալ խարճ եւ մասրաֆն, որ ի յունվար ամսոյ մէկէն մինչեւ ի մայիս ամսոյ չորսն խարճեալ էր ի հարկաւոր տեղիս Սրբոյ Աթոռոյս: Վասն որոյ, հրամանաւ վեհ[ին], նորին հէսապն տեսեալ ի դեկտեմբեր ամսոյ ԺԳ (14)ին, եւ գրեցի ի դաւթարիս իմոյ, որպէս գրեալ եմ ի միւս երեսին:

2. 3բ (տոբ. Ստեփան, 1760 թ.) Յիսունն եւ ինն թուման վեց հազար չորս հարիւր ութսուն դիան վերոյ երկու եւ կէս երեսից եւ ԿԸ (68) դալամ խարճեցեալ դրամիցդ ջամնէ ձեռամբ իմ՝ ապիրատ Ստեփանիս, եւ վասնզի մեծապատիւ տէր Պետրոս եղբայրն իմ, հրամանաւ վեհին, զհաշիւն իմ ետես եւ այս դաֆթարումս գրեաց եւ ի վերայ իւրն հաշուեցաւ զամենայն սակս այն իմով կամաւս, եւ վասն հաստատութեան իրեն եզի զկնիքս իմ աստ:

3. 4ա (Թաղէոս վրդ., 1760 թ.) Այժմս զհէսապս իմ տէր Պետրոսին հետ տեսինք դեկտեմբերի ԺԵ (15)

ին, վասն որոյ եւ կնքեցի վասն եղելոյն իրակա-
նութեանս:

4. 5բ (1760 թ.) Այս վերոյն գրեալ ՀԳ (74) ղալամ
խարջիս ջամն եղեւ ԻԳ (23) թուման ԳՌ (3000) Ե (5)
փարաւն, որ իմ Քաղէնս վարդապետս ձեռամբն
եղեալ է, դեգտեմբերի ԺԵ (15)ին, ըզհէսապալս իմ
տէր Պետրոսին հետ տեսինք, վասն որոյ եւ կնքեցի
վասն հաստատութեան իրականութեանս:

5. 7ա (1760 թ.) Վերոյն գրեալ Ծ եւ Գ (53) ղա-
լամ խարճիս ջամն եղեւ Թ (9) թուման ԳՌ (3000)
ԳՃ (400) դիան եւ Դ (4) փարաւն, որ իմ Քաղէնս
վարդապետիս ձեռամբն եղեալ է, սորա առքն տէր
Պետրոսն առեալ եմ, զհէսապալս իմ ընդ տէր Պետ-
րոսին հետ տեսինք եւ կնքեցի:

6. 9բ (1760 թ.) Վերոյ գրեալ Բ (2) թղթոջ Դ (4)
երեսի ԱՃԾԲ (152) ղալամ խարճից փողից ջամն
եղեւ ԺԸ (18) թուման ԳՌ (3000) ԸՃ (800) Կ (60)
դիան, զոր ես՝ Դուռնկիանոս վարդապետս տէր
Պետրոսն առեալ՝ զայս խարճս արարի եւ զհաշիւն
տէր Պետրոսին տվի: Վասն որոյ գրեալ աստ՝ եւ
կնքեցի իմով կնքով:

7. 10ա (տէր Պետրոս, 1760 թ.) Այս է Զորագեղու
նորակերտ վեհարանին վերաւն ղալամ ղալկաց
վարձան, զոր ինչ որ խարճ եղեալ է՝ ձեռամբ Դուռն-
կիանոս վարդապետին:

8. 10ա (1760 թ.) Զայս վերոյ գրեալ Ե (5) երես
թղթոջ ԱՃՀԳ (173) ղալամ խարճից դրամից ջամն
եղեւ երեսուն թուման, երեք թուման, երեք հազար
վեց հարիւր ԻԵ (25) դիան եւս: Զի այս յասմ ջամի
գրեալ երեսուներեք թուման ԳՌ (3000) ԶՃԻԵ (625)
դիան դրամս ես՝ Դուռնկիանոս վարդապետս առի ի
տէր Պետրոսն եւ խարճեցի ի յերեւան ի վերայ վե-
հարանին եւ այլ հարկաւոր տեղիս Սրբոյ Աթոռոյս:
Ի յունիս ամսոյն սկսեալ եւ ի դեկտեմբեր ամսոյ ԺԳ
(14)ին զհէսապալս իմ ետու տէր Պետրոսին, վասն որոյ
եւ իմով կնքովս կնքեցի եւս զջամ դաւթարիս իմոյ:

9. 14ա (Յակոբ կթղկս, 1760 թ.) Արդ՝ վերոգրեցեալ
առից դափնարդ, որ ունի գերիս թուղթս ողջս եւ
զկէս եւս, որք ունին զվեց երեսս ողջս եւ զկէս եւս,
յորս գրեցեալք դրամքն են եօթանասուն եւ երեք
ղալամք, որոց բովանդակից դրամից ջամից ջամն է
չորս հարիւր ութսուն եւ հինգ թուման, չորս հազար
եւ յիսուն դիան փող: Այսմ դափն[ա]րիս եւ սորին
հաշուատեսութեանն վերահասու եղէ ես ստուգու-
թեամբ, ընդ որում հաճեալ հաւանեցայ եւ զաբուլ
արարի: Վասն որոյ զայսքան բանս ձեռամբ իմով
աստ գրեցի, զոր եւ մատանեաւ կնքեցի: Նաեւ
յայսմ կողմանէ զղաբզ մի եւս ջոկ գրեալ՝ կնքեցի,

զոր եւ ետու մեր տէր Պետրոս արեղային՝ ի միամ-
տութիւն նորա եւ ի հաստատութիւն հաշուատեսու-
թեանս մերոյ: Ի վերոգրեցեալ թուականիս մերում
եւ ի դեկտեմբերի ելմանն աւուր: Վերջ:

10. 26բ (Յակոբ կթղկս) Արդ՝ վերոգրեցեալ տրոց,
խարճից եւ մասրաֆից դափնարդ, որոյ սկիզբն է ի
ՌՄ եւ Թ (1760) թուականէն եւ ի մայիս ամսոյ չոր-
սէն, որ ունի զթուղթս ողջս ինն հատ սովաւ, որոց
երեսքն են տասն եւ եօթն եւ զկէս եւս այս, յորս
գրեցեալք են երկու հարիւր յիսուն եւ եօթն ղալամք
դրամք, ուրոյն ուրոյն, որոց դրամից բովանդակից
ջամից ջամն է չորք հարիւր ութսուն եւ չորս թու-
ման, ԱՌ (1000) ԵՃ (500) Ժ (10) եւ Ե (5) դիան:
Այսմ դափնարիս եւ սորին հաշուատեսութեանն
վերահասու եղէ ես ստուգութեամբ, ընդ որում հա-
ճեալ հաւանեցայ եւ զաբուլ արարի: Վասն որոյ
զայսքան բանս ձեռամբ իմով աստ գրեցի եւ մա-
տանեաւս եւս կնքեցի: Նաեւ յայսմ կողմանէ զղաբզ
մի եւս ջոկ գրեցի, զոր եւ կնքեցի եւ ետու զայն մեր
տէր Պետրոս արեղային՝ ի միամտութիւն նորա, ի
հաստատութիւն հաշուատեսութեանս մերոյ եւ ի
բարձումն ընդ վայր կարծեաց եւ անհաւաստի տե-
սողաց: Ի վերոգրեցեալ ՌՄ եւ Թ (1760) թուակա-
նիս եւ ի դեկտեմբերի ելմանն աւուր: Վերջ:

11. 28ա (Յակոբ կթղկս, 1761 թ.) Արդ՝ վերոգրե-
ցեալ առից դափնարիդ, որ ունի գերկուս թուղթս
եւ գերկուս եւ զկէս երեսս, յորս գրեցեալ դրամքն են
երեսուն եւ վեց ղալամք, որոց բովանդակից ջամից
ջամն է երեք հարիւր վեց թուման հինգ հազար եր-
կու հարիւր քսան եւ հինգ դիան: Այսմ դափնարիս
եւ սորին հաշուատեսութեանն վերահասու եղէ ես
ստուգութեամբ, ընդ որում հաճեալ հաւանեցայ եւ
զաբուլ արարի, վասն որոյ զայսքան բանս ձեռամբ
իմով աստ գրեցի եւ մատանեաւս իմով կնքեցի:
Նաեւ յայսմ կողմանէս զղաբզ մի եւս ջոկ գրեցեալ՝
կնքեցի եւ ետու մեր տէր Պետրոսին՝ ի միամտու-
թիւն նորա եւ ի հաստատութիւն հաշուատեսու-
թեանս մերոյ: Վերջ:

12. 42բ (Յակոբ կթղկս) Արդ՝ վերոգրեցեալ տրոց,
խարճից եւ մասրաֆից դափնարիդ, որոյ սկիզբն է ի
ՌՄԺ (1761) թուականիս եւ ի յունվարի մէկն, որ ու-
նի զթուղթս ողջս տասն հատ, իսկ գերեսս տասն եւ
ինն եւ զկէս, յորս գրեցեալք են երեք հարիւր տասն
եւ երեք ղալամք դրամք, որոց բովանդակից դրամից
ջամից ջամն է երկու հարիւր ութսուն եւ եօթն թու-
ման երեք հազար ինն հարիւր եւ Գ (90) դիան: Այսմ
դափնարիս եւ սորին հաշուատեսութեանն վերա-
հասու եղէ ես ճշմարտութեամբ, ընդ որում հաճեալ

հաւանեցայ եւ զաբուլ արարի: Վասն որոյ զայսքան բանս ձեռամբ իմով աստ գրեցի եւ մատանեաւս իմով եւս կնքեցի: Նաեւ յայսմ կողմանէս զշոկ զաբզ մի եւս գրեալ՝ կնքեցի եւ ետու մեր տէր Պետրոսին՝ ի միամտութիւն նորա եւ ի հաստատութիւն հաշուատեսութեանս մերոյ: Այս եղև ի սոյն թուականութեանս մերում եւ ի յուլիսի մէկն: Վերջ:

13. 15բ (1761 թ.) Վերոյ գրեալ Գ (3) երես ԱճԻ (120) զալամ, ձեռամբ տէր Սահակի եւ գիտութեամբ Անդրէաս վարդապետի, ի վերայ Էրեւանու նորակերտ շինուածոց խարճից եւ մասրաֆից բոլոր ջամից ջաման եղև քսաներեք թուման վեց հազար էՃԾ (750) դիան եւ Բ (2) փարայ դրամ:

14. 82ա, 86ա (առ Պետրոս, 1762 թ.) Տէր Աստուած Յիսուս Քրիստոս փրկեա՛ զիս ի մեղաց եւ ի փորձանաց:

15. 95բ (1762 թ.) Յետ Մկրտիչ վարդապետին ի դեկտեմբեր ամսոյն իմ՝ Ղունկիանոս վարդապետիս արարեալ մասրաֆ խարջն եղև:

16. 101ա (1763 թ.) Յետ վաղճանի Յակոբայ սրբազան վեհին այս է իմ առքս, ապրիլ ամսոյ մուտն:

17. 102ա (1763 թ.) Յետ Յակոբայ հանգուցեալ սրբազանէն ապրիլ ամսոյ մէկին. այս է իմ խարճ եւ մասրաֆս:

18. 155բ (Սիմէոն կրդկա) Արդ՝ վերոյ գրեցեալ դէվթէրդ, որ սկսեալ է ի ՌՄԺԳ (1764) թուականէն եւ յունվարի մտէն, որ ունի զթուղթս տասն եւ չորս եւ զերեսս ԻԸ (28), եւ յորս գրեցեալ դրամքն են էՃԺէ (717) զալամք, եւ որոց բովանդակից դրամից ջամից ջամն է հինգ հարիւր ութսուն եւ հինգ թուման ինն հազար երկու հարիւր տասն եւ հինգ դիան դրամ, որ է Սրբոյ Աթոռոյս մերոյ տարւոյ արտաքոյ եղեալ բոլոր մասրաֆն, որոյ ԱՃԾ (150) թուման հինգ հազար ԶՃԾ (650) դիանն բոլոր տասն եղեալ վարձաւոր մշակաց տօնլուղն է, եւ չորս հարիւր երեսուն եւ հինգ թուման ԳՌ (3000) էՃԿե (565) դիանն հասարակ մասրաֆ է Սրբոյ Աթոռոյս: Զոր տեսեալ իմ՝ հաւանեցայ եւ զաբուլ արարի: Վասն որոյ եւ զայսքանս իմով ձեռամբ գրեցի եւ կնքեցի ի հաստատութիւն հաշուատեսութեանս իմոյ եւ ի միամտութիւն հարազատի որդւոյն Սրբոյ Աթոռոյս Մկրտիչ վարդապետին եւ ի ընդունելութիւն ապագայից տեսողաց: Ի ՌՄԺԳ (1764) թուականիս եւ ի դեկտեմբերի վերջումն:

19. 172ա (Սիմէոն կրդկա) Վերոյ գրեցեալ դէվթէրդ, որ սկսեալ է ի ՌՄԺԳ (1765) թուոյն եւ ի յունվարի մտէն մինչեւ ի վերջ տարւոյն, որ ունի զթուղթս ԺԶ (16) եւ կէս, եւ յորս գրեցեալ դրամքն են էՃԺԳ (713) զալամք, եւ որոց բովանդակից դրա-

մից ջամից ջամն է վեց հարիւր ութսուն եւ երեք թուման վեց հազար վեց հարիւր իննսուն դիան դրամ, որ է Սրբոյ Աթոռոյս մերոյ տարւոյ արտաքոյ եղեալ բոլոր խարճ եւ մասրաֆն, որոյ ԱՃԾԲ (152) թուման ԸՌ (8000) էՃԺ (710) դիանն Սրբոյ Աթոռոյս բոլոր տարեկան վարձաւոր մշակաց տօնլուղն է, եւ էՃԼ (530) թումանն եօթն հազար ինն հարիւր քառասուն դիանն հասարակ մասրաֆ է Սրբոյ Աթոռոյս եւ նորոգ շինելեացն մերոց: Զորս տեսեալ իմ՝ զաբուլ արարի եւ հաճեցայ: Վասն որոյ եւ զայսքանս ձեռամբ իմով գրեցի եւ կնքեցի ի հաստատութիւն հաշուատեսութեանս իմոյ եւ ի միամտութիւն հարազատի տեղապահին իմոյ Մկրտիչ վարդապետին եւ ի ընդունելութիւն ապագայից տեսողաց: Ի ՌՄԺԳ (1765) թուոյն մերում եւ դեկտեմբերի վերջն:

20. 190ա (Սիմէոն կրդկա) Վերոյ գրեցեալ դէվթէրդ, որ սկսեալ է ի ՌՄԺԵ (1766) թուին, ի յունվարի մտէն մինչեւ ի վերջ տարւոյն ի դեկտեմբերի ելն, որ ունի զթուղթս ԺԸ (18) այսու երեսովս, եւ յորս գրեցեալ դրամքն են եօթն հարիւր չիսուն եւ մէկ զալամք, եւ որոց բովանդակից դրամից ջամից ջամն է վեց հարիւր եօթանասուն թուման մէկ հազար եւ ԲՃ (200) դիան դրամ, որ է Սրբոյ Աթոռոյս միոյ տարւոյ արտաքոյ եղեալ խարճ եւ մասրաֆն, ձեռամբ տեղապահին իմոյ Մկրտիչ վարդապետին, որոյ մէկ հարիւր քառասուն եւ ութն թուման երկու հազար եւ երկու հարիւր դիանն Սրբոյ Աթոռոյս տարեկան վարձաւոր մշակաց տօնլուղն է, եւ հինգ հարիւր քսան եւ մէկ թուման եւ ինն հազար դիանն Սրբոյ Աթոռոյս արտաքին հասարակ մասրաֆն է եւ խարճ նորոգ շինելեացն մերոց: Զորս տեսեալ իմ, վերահասու լեալ՝ հաւանեցայ եւ ընկալայ: Վասն որոյ եւ զայսքանս ձեռամբ իմով գրեցի եւ կնքեցի ի վերջ թղթոյս ի հաստատութիւն հաշուատեսութեանս իմոյ, ի միամտութիւն հարազատի տեղապահին իմոյ Մկրտիչ խոհեմամիտ վարդապետին եւ ի ընդունելութիւն ապագայից տեսողաց եւ ի բարձումն այլեւայլ հոգեկորուստ կարծեաց: Ի հազար երկու հարիւր ԺԵ (1766) թուոյն մերում եւ ի դեկտեմբերի վերջումն:

21. 206ա (Սիմէոն կրդկա) Վերոյ գրեցեալ դէվթէրս, որ սկսեցեալ է ի ՌՄԺԶ (1767) թուին, ի յունվարի մտէն մինչեւ ի դեկտեմբեր վերջն, որ է ԼԲ (32) երես եւ ԼՃԺ (810) զալամ, յորս խարճեցեալ դրամից բոլոր ջամից ջամն է ԼՃԿե (865) թուման ԳՌ (3000) Բ (2) հարիւր դիան, որ է Սրբոյ Աթոռոյս միոյ տարւոյ արտաքին խարճն, ձեռամբ հարազատ տեղապահին իմոյ Մկրտիչ վարդապետին, որոյ մէկ հարիւր վազսուն եւ հինգ թուման ԲՌ (2000)

էձ՝ (700) դիանն մեր տարեկան մշակաց տօնլուղն է, իննսուն եւ եօթն թուման ԸՌ (8000) եւ մէկ հարիւր դիանն՝ գեղջս քակելոյն եւ շինելոյն է, բաց ի յեկեղեցոյն, իսկ վեց հարիւր երկու թուման ԲՌԻՃ՝ (2400) դիանն պարսպին եւ այլոց հարկաւորաց մասրաֆն է: Զորս տեսեալ իմ՝ վերահասու եղէ եւ հաւանեցայ: Վասն որոյ եւ զայսքանս ձեռամբ իմով գրեցի եւ կնքեցի ի վերջ թղթոյս ի հաստատութիւն հաշուատեսութեանս իմոյ, ի միամտութիւն հարազատ տեղապահին իմոյ Մկրտիչ վարդապետին, ի յընդունելութիւն ապագայից տեսողաց եւ ի բարձունս այլեւայլ հոգեկորուստ կարծեաց: Ի հազար երկու հարիւր տասն եւ վեց (1767) թուոջս, ի վերջն դեկտեմբերի ամսոյ: Բաւ է:

22. 206բ (Սիւնն կթղկս) Վերոյ գրեցեալ դէվթէրդ, որ սկսեցեալ է ի ՌՄԺԶ (1767) թուին եւ ի յունվարի մտէն, որ ունի գերեսս ԼԲ (32) եւ զունթն հարիւր տասն զալամ խարձս: Զորոյ որպէսն թէպէտ գրեցաք յառաջ ի միւս երեսն սոյն թղթոյս, սակայն սխալմամբ գրեցաւ: Վասն որոյ վերստին աստ գրեցաք զուղիղն, ուրեմն յայնկուսի գրեցեալն անընդունելի է: Արդ՝ այդ ութն հարիւր եւ տասն զալամ խարձեցեալ դրամիցդ ամենեցունց ջամից ջամն է եօթն հարիւր վաքսուն եւ եօթն թուման մէկ հարիւր եւ վեց հարիւր դիան, որ է Սրբոյ Աթոռոյս միոյ տարուոյ արտաքին խարձն, ձեռամբ հարազատ տեղապահին իմոյ Մկրտիչ վարդապետին: Արդ՝ սորա մէկ հարիւր վաքսուն եւ հինգ թուման ԲՌ (2000) էձ՝ (700) դիանն մեր տարեկան վարձաւոր մշակաց տօնլուղն է, իսկ վեց հարիւր մէկ թուման եւ ԸՌ (8000) եւ ԹՃ՝ (900) դիանն՝ Սրբոյ Աթոռոյս պարսպին, եւ այլոց նորոգ շինեցելոց, եւ բոլոր արտաքին հարկաւորաց, եւ մեր գեղջս եկեղեցոյն (գոր ի նորոյ շինեցաք), եւ այլոց հասարակ հոգալեաց մասրաֆն է: Որպէս տեսանես ի յիւր դա վերջս գրեցեալ: Զորս տեսեալ իմ՝ վերահասու եղէ ճշմարտութեանն, վասն որոյ եւ հաւանեալ՝ գրեցի զայսքանս ձեռամբ իմով եւ կնքեցի ի վերջ դէվթէրիս ի հաստատութիւն հաշուատեսութեանս իմոյ, ի միամտութիւն մտերիմ տեղապահիս իմոյ Մկրտիչ վարդապետին, ի յըն-

դունելութիւն ապագայից տեսողաց եւ ի բարձունս հոգեկորուստ եւ նախանձածին կարծեաց: Ի հազար երկու հարիւր տասն եւ վեց (1767) թուոջս մերում եւ ի յելն դեկտեմբերի ամսոյն ի վերջ տարուոյն: Բաւ է ճշմարտասիրաց եղբարցդ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. աստառ Ա (ԺԸ դ., նոտրգիր) Այս է տեղապահ Մկրտիչ վարդապետի դավթարն:
2. 67ա (ԺԸ դ., նոտրգիր) Ք[րիստոս]ի՞ Թիֆնիս գեօղն, յոր[ո]ւմ կան բատլնգ եղբայր ն[ո]րին Այվազն:
ՀԱՇՏԱՐԻՑԱՆ

ՌՄԺԶ-1767

Հեղինակ՝ [Ստեփանոս վրդ.]: ՍՍԱՅՈՂ՝ Յովհաննէս արեւայս.:

Թերթ՝ 1: Նիիթ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ ցանկապատի ներսում սաղաւար-

տով զինուոր, ձեռքին՝ եռաժանի: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 42,7x33,9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 55:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած, բնագրի սկզբ-նամասը պոկուած-ընկած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Վեհա/// փրկութեան ասա/// եւ խոյեմա-զարդ զլիսոյ/// հայոց արժանատւարար բազմո-ղի/// տակաթ փափակմամբ մատուցանեմ հա/// զարբազնագունեղ հայրդ մեր առողջ եւ երկար/// – Ազգ լիցի սրբազան վեհանձնութեանդ, զի ան-ցեալ ամի Տեառն 1766 սեպտեմբերի 25երորդն, զոր ինչ պատկանիր, առ պատասխանատրութեան ի քումնէ վեհանձնութենէ առաքեցեալ թղթոցն հա-մառօտ բանիր ծանուցեալ եմ գրով... եւ ո՛ղջ լեր արհիական զլուրդ եկեղեցոյ միահեծան քահանա-յապետութեամբդ. ամէն»: [Ստեփանոս վրդ-ը] Հաշտարխանից գրում է Յովհաննէս արեւապ-ին, որ իրենց մօտ հոգեւորականների մէջ գո-յութիւն ունի «մեծագոյն աղմուկ եւ խռովութիւն՝ յորդորմամբ նուիրակ Յոհաննէս վրդ-ին, Աստա-պատեցի Մովսէս դի Բունիաթին եւ Փառակեցի Բարդուղիմէոս դի տէր Ոսկանին», որի պատճա-ռը հետեւեալն է. «կին ոմն, ըմբանեցեալ բազում անգամ ի մեղս շնութեանն ընդ զանազան անձանց,

նաեւ ընդ մահմետական թաթարի, համբաստա-նեաց զումինն քահանայէ Սիմէօն կոչեցելոյ՝ ասե-լով, թէ նոյն քահանայն արարեալ է ընդ ինքեան շնութիւն», եւ նկարագրում է այդ կապակցու-թեամբ տեղի ունեցած իրադարձութիւնները՝ նշե-լով նաեւ, որ յիշեալ անձնատրութիւնները վատ-նում են եկեղեցու նուիրատրութիւնները եւ ունեց-ուածքը: Տեղեկացնում է, որ «շնորհեալ պարգեւ փիլոնն եւ խալիչէն նուիրակն, ոչ գիտեմ ոյր աղա-գաւ, ոչ էր տվեալ մեզ», իսկ Դավիթ վրդ-ի՝ Մոս-կուայ գնալու մասին գրում է, որ «քաղաքիս քա-ղաքապետն առանց խնդրելոյ իմոյ ոչ կամէր տալ նմայ պաշարս», չնայած որ այդ մասին ինքն էլ հրաման չունէր, բայց ամէն ինչ արել է թոյլաու-թիւնը ստանալու համար:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցեալ եղեւ ամի Տեառն 1767, մայիսի 1ին, ի նաւահանգիստն Հաշտարխան:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ (ԺԸ դ., նոտրգիր) Գիր գրեալ առ բարեկրօն Յովհաննէս արքեպիսկոպոսն ի տրուէն ռուսաց, որոյ ա[յ]ժմ ընթերցեալ ծանեաք:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1. 1բ (սեւ թանաֆով, ուրանկիւն, երկիցս) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԱՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ /1820»: 2. 1բ (սեւ թանաֆով, ձուածեւ, անհասկանալի) «Պ /ՍԲ (կամ ՄԻ) ՎՐ /1820»: 3. 1բ (սեւ թանաֆով, ձուածեւ) «ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՍՏԵՓԱՆՈՍ /ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ /1760»: 4. 1աբ (արիւնով, 2+2 մատնադրոշմ):

ՆՇՈՒՄ՝ 1բ (Ստեփանոս արեւապ-ի կնիքի դիմաց) «Ստեփաննոս եւեթ վարդապետ»:


115 ԳՐՈՒԹԻԻՆ ԵՒ ՅԱՆԿ

թղթայ. 3, վաւ. 15


ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կթղկւ: ՍՏԱՅՈՂ՝ Փիլիպպոս, խցյ Առաքել:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսա-գրով՝ «P», լուսապատկերով՝ առագաստանաւ (կիսաւ): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 36,1x11,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ մի-ասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա), խոշոր բոլոր-գիր (նմուշ՝ 1բ): ՏՈՂ՝ 19+2, 41+1:



Նմուշ 1ա



Նմուշ 1բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1ա «Յորմէ սիրով եւ աստուածային օրհնութեամբն գիտաստե՛լք սիրելիք մեր եւ հարազատ որդիք Սրբոյ Աթոռոյս Քրիստոսի... Ողջ լերո՛ւք ի Տէր: Ի Հոկտեմբերի ԻՆ (25)»: [Սիմէոն] կթղկսի գիրը Փիլիպպոսին եւ իւջ Առաքելին առ այն, որ Դօլվաթլու խանը գրաբեր է ուղարկել «վասն միոյ խալւոյ, զի առնուցու», որն արժէր 825 դուրուշ

դրամ: Ուստի խնդրում է նարել եւ այդքան գումար վճարել խանի գրաբերին, իսկ յետոյ իրենք հաշուարկ կանեն:

2. Պարունակում է Սաղեանու եւ Մէլսարու նախավկայի եւ Աստուածածնայ վանքերի, ինչպէս նաեւ Սաղեանի թեմի ենթակայ վայրերի ցանկը.

ա. 1բ Առաջնորդ Սաղեանու եւ Մէլսարու նախավկայի եւ Աստուածածնայ վանիցն – Շամախի, Հովուզ... Մօլախալի, Ազատողլի:

բ. 1բ Սաղիանու վանից առաջնորդն, որոյ թէմն են ներքոյ գրեալքն – Շամախի քաղաքն, Հովուզ մահալն... եւ թէ ոչ իցէ անդ շինութիւն, զնոսա եւս ինքն հովուէ, վասնորոյ է այժմ գրելի որպէս սեպհական թէմ Սրբոյն Սաղեանու:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տէ՛ս Բովանդակութիւն 1 (վերջում):

116
ԿՈՆԴԱԿ

թղթ. 3, վա. 16


ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

[ՌՄԻԳ-1774]

ՀԵՂԻՆԱԿ՝ Սիմէոն Ա Երեւանցի կթղկու:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33,4x22,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուազգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 47:

ամէն»։ Սիմէոն կթղկսի ընդհանրական կոնդակը, որով յայտարարում է, թէ Թոխաթցի Յարութիւն վրդը, «գոլով ի վիճակէ Սրբոյ Էջմիածնի», սխալուելով՝ գնացել է Գեանջայ եւ եպս. ձեռնադրուել ինքնակոչ Իսրայէլ կթղկսից, եւ այդ պատճառով բանադրուել է իր կողմից: Տասը տարի մնալով տարագրութեան եւ ողորմելիութեան մէջ, 1773 թ. զղջալով ու մեղայականով՝ դիմում է Սբ. Աթոռին եւ յանձն առնում մինչեւ մահ «մնալ ի հնազանդութեան եւ ի միաբանութեան»: Եւ նա ներում ստացաւ, նշանակուեց Կարինի Սբ. Լուսաւորիչ վանքի առաջնորդ, իսկ 1774 թ. հոկտեմբերի 19ին հանդիսատւր կերպով նանաչուեց օրինատւր եպս., իրատւմ ստացաւ անհրաժեշտութեան դէպքում ձեռնադրելու ֆահանաներ եւ այլ աստիճանատւրներ: Կոնդակի վերջում թուարկում են այն կանոններն ու պարտաւորութիւնները, որոնցից շեղուելու կամ ուխտազանց լինելու դէպքում «եպիսկոպոսութիւն սորին անընդունակ լիցի»:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եգրերը վնասուած:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Սիմէոն կաթողիկոս եւ ծայրագոյն պատրիարքս ամենայն Հայոց եւ Աստուածաէջ սրբոյ լուսակիր Աթոռոյս, որ ի Վաղարշապատ: Եւ յաջորդս սրբոց առաքելոցն Թաղէոսի եւ Բարդուղիմէոսի, եւ փոխանորդս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Յորմէ հայրական սիրով եւ հոգեւոր օրհնութեամբ գիտաստե՛լք ամենայնքն... Եւ առ այս կատարողքդ հրամանաց մերոց եղիջի՛ք օրհնեալք յԱստուծոյ եւ ի մէնջ.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ Գրեցաւ վկայական գիրս ի լուսանկար եւ ի տիրակերտ Աթոռս Սուրբ Էջմիածին:

117
ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ


թղթպ. 3, վա. 17

[ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ]

ԺԸ դար

ԳՐԻԶ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կթղկա: ՍՏԱՅՈՂ՝
Ղարանդիւան:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսա-
պատկերով՝ լայնեգր գլխարկ կախազարդերով:
ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 31,4x21,4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն:
ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 47:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ սււազիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Առ Ղարանդիւանն – Յորմէ ժամանեցի
թուղթ օրհնութեան ի վերայ հ[ո]գեւոր որդւոյդ մե-
րոյ պարոն Ղարանդիւանիդ եւ տանդ ամենից...
Ըստ գործոցդ եւ ըստ արարմանցդ ընդունիցիս
զվարձս մեծամեծս ի Տեառնէ յազգաց յազգս եւ
յորդոց յորդիս աստ եւ ի հանդերձելումն. ամէն»:
[Սիմէոն] կթղկսի օրհնութեան գիրը Ղարանդիւա-
նին, ընդունում է նրա մեղայականը որդու ապօ-
րինի ամուսնութեան կապակցութեամբ, բայց եւ
այնպէս հարգելով նրան՝ ներում է եւ տալիս իր
օրհնութիւնը:

118

ԳՐՈՒԹԻԻՆ


թղթպ. 3, վա. 18

[ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ]

ԺԸ դար

ԳՐԻԶ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կթղկա:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծե-
րով, լուսապատկերով (անընկալելի): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝
25,7x19,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոսրգիր
(նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 37+10:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եգրերը ծալուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ սււազիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Յորմէ քրիստոսական սուրբ ողջունիւ, եւ

նոյնական սիրով, աստուածային առատագոյն օրհ-
նութեամբն, եւ Սրբոյ Աթոռոյս գերածաւալ շնոր-
հիւ ծանուցումն լիցի գերազնիւ սիրելոյդ իմոյ եւ
ճշմարիտ բարեկամիդ Սրբոյ Աթոռոյս... զճշմարիտ
սէրդ եւ զսիրանիշ գիրդ եւ զհարազատ բարեկա-
միդ ի մէնջ անպակաս արարեալ՝ ո՛ղջ լեր»:
[Սիմէոն] կթղկսի գրութիւնը ոմն պրնի («Ֆլան»), որ-
տեղ նշում է, թէ իսպառ ձանձրանալով տեղի փա-
հանաների ապօրինի գործողութիւններից՝ աւա-
գագոյներին կանչել է Սբ. Աթոռ, որոմ գղջացել
եւ ստորագրութիւն են տուել, որ այլեւս հնազանդ
կմնան: Այժմ ուղարկում է մի նոր առաջնորդ,
օրհնութեան կոնդակով հանդերձ, եւ խնդրում է
օգնել նրան եւ թգւրին էլ տեղեկացնել (ասում է,
որ ինքն առանձին գրել է արժային), որ աղմկասէր
մարդիկ այլ կերպ չներկայացնեն:


119
ՏԱՂ

թղթա. 3, վա. 19

ՌՄԺԵ-1766

ԳՐԻԶ՝ Իսահակ արկ.:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 24,6x21,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւմ: ԳԻՐ՝ նոտրանման բոլորգիր (նմուշ՝ 1բ): ՏՈՂ՝ 41:



Նմուշ 1բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նոտագմամբ:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

Ծնթ. Վաւեազիրը վնասուած եւ քերի է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1. 1ա Տաղ ///([ձմնդեան]) Աստուծոյ մերոյ – Ի մեծի աւուրս շնորհազարդ ծննդեան Քրիստոսի Փրկչին, շնորհողին բարութեան, ցնծացէք ազգ մարդկան... Ուստի ի պարելով ուրախ լերուք եւ ցընծացէք, եւ զՔրիստոս ի բարձունս նըմա երգեցէք:

2. 1աբ (յանգաւոր) Տաղ ի սուրբ Աստուածածինն – Յարփուոյն լուսոյ վառեալ ճըրագ գերալոյս, որով մեզ ծագեցաւ գերաճաճանն լոյս... այլ լէ՛ր ինձ դու միջնորդ, արա՛ մեծայոյս եւ յօգեալ միացո՛՛յ Աստուածն իմ Յիսուս:

3. 1բ Տաղ մաղթողական – Ի յանճառ փառքս քոյ, Տէ՛ր, անտրտում կայի զուարճացեալ, ըզլոյս պատուիրանըս քոյ... Այլ ես գնոյն վերջստին՝ ընկեցի ի տիղմս շար ախտից, եւ չիմանալով զպատիւն՝ հաւասար եղէ անբանից:

4. 1բ Յորդորակ – Հայցեմ, Տէ՛ր, ըստ անառակին, տո՛ւր ինձ զփառսն առաջին, թէպէտ եւ չեմ արժան նմին: Արտասուօք աղաչեմ, Տէ՛ր, յանբաւ գթոյդ մի՛ մերժէր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ /// լէ՛ր միամիտ, եւ ողջ: Եւ զորպիսութենէդ փոքր ինչ ծանո՛, որոյ կարօտիմ յիրաւի: Իսկ զընթերցմանց թէ հարցանիցե՛ս՝ աղօթիւք հօրդ գերձեալ զՍահմանսն զՊորփիրոսն եւ զհինգ առածան, զՍտորոգութիւնսն եւս՝ հանդերձեալ եմք աւարտել: Տացէ Տէր զխաղաղ կեանս սրբազան [հայրապետ]իս մերոյ, որ յոյժ ջանայ յայսմ կողմանէ: Աբրահամ վարդապետն եւս զբազումս ժողովեալ՝ ոմանց զարտաքինս ուսուցանէ եւ ոմանց զքերական, իսկ եւ ընդ մեզէն՝ դասակից սիրելի որդեակն քոյ եւ եղբայրն իմ տիրացու Յօհաննէսն: Լէ՛ր որջ ի պարծանս, նուաստ Իսահակայ անարժան սարկաւագի: Քան զայս Բ (2) աւուրք յառաջ թուղթ մի եւս գրեցի առ հայրապետութիւն քոյ, ի ձեռն Միրզայի որդի պարոն Առաքելին: Տիրացու Ներսէս հարազատ պաշտօնէին քոյ սիրով զողջոյն տամ ի տեղի, որոյ տիրացու Դանիէլն սպասաւորէ մեր հայր տեղապահ՝ վարդապետին. եւ հրամանաւ նորին ի մէնջ գտաղս եւ զգանձս ուսանի: Եւ եւս այսուհետեւ, եթէ զնորագոյնս ինչ յարմարեցից գտաղս, յղելոց եմ հայրութեան քում ի նշան մշտական սիրոյ: Գրեցաւ ի ՌՄԺԵ (1766) թուին եւ ի փետրվարի Ը (8):

ԳՐՁԱՓՈՐԶ՝ 1. 1ա (բոլորգիր) «թոյն»: 2. 1ա (բոլորգիր) «գրչա աղանւոյ»:


120

ՍՏԱՅԱԿԱՆ


թղթա. 3, վա. 20

ՌՄԽԴ-ՌՄԽԶ -1795-1797, ԺԸ դար


ԹԵՐԹ՝ 9 (զանագան). չգրուած՝ 1, 2, 4, 5, 8, 9՝ Բ երեսները: ՆԻԻԹ՝ սպիտակ եւ կապոյտ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ տարբեր: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւմ: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ տարբեր:




Նմուշ 1ա




Նմուշ 2ա




Նմուշ 3ա




Նմուշ 4ա




Նմուշ 5ա




Նմուշ 6ա



Նմուշ 7ա



Նմուշ 8ա



Նմուշ 9ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

Ծնթ. Տարբեր ստացականներ են՝ գրուած 9 թերթի վրայ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

Պարունակում է վանական այլեայլ գործարհների դիմաց տրուած ստացականներ, մի քանի իրերի անուններ.

ա. 1ա է: Վանաց այգեաց բաղաթն մեզ էհաս Ա (1) ց(=թուման) էնի (7000) դիան. եւ այս ղաբզս ետուք: Ի ՌՄԽԴ (1795) եւ ի մարտի ժԻ (14):

բ. 1ա Ի ՌՄԽԴ (1795) թվին եւ ամսիանն մարտի ժ (10)նեն վանանց Նորագեղու պաղաթն երկու թուման մեկ հազար տիան հասաւ Ձորակեղցի տապաղ Մկրտումիս, Հարութիւնիս հասաւ այս ղապզն լինի:

գ. 1աբ Ի ՌՄԽԶ (1797) թուռջն եւ նոյեմբերի ժե (15)ին, ձեռամբ տիրացու Խաչատուրին էհաս շիրաչի Անդրունէն տնտես Սահակ արեղաչիս ժԳ (13) լիտր անհալ ճրագու... որ եղեւ զամն Խ (40) լիտր եւ կէս ճրագու անհալ ինձ հասեալ:

դ. 1ա է: Ի ՌՄԽԷ (1798) թուին եւ մարտ ամսոյ ժ (10) Նորագեղու Սուրբ Աթոռի այգոյ բաղաթն ժենի (15000) դ[իա]ն ձեռամբ հայր աթոռակալ վարդապետին էհաս մեզ... եւ այս թուռս ետուք ի հաւաստութիւն տեսողաց:

ե. 1ա է: Լուսանկար եւ երկնահանգէտ Սրբոյ Աթոռոյ այգեաց բաղաթն մեզ էհաս ձեռամբ նորին ծայրագոյն գործակալ Դաւիթ աստուածաբան վարդապետին եւ արհիեպիսկոպոսին, որ է Ա (1) ց(=թուման) էնի (7000) սաղ փող: Ի ՌՄԽԷ (1798) եւ ի մարտի ժԷ (18):

զ. 1աբ ժե (15) նոյստայ Դ (4) փարայով Ան (1000) դիան... ժԶ (16) ապասի ութշուտի՝ ձեռամբ Իսրայել թուվանքուն:

է. 1ա Թ (9) տարւոյց Բ (2) ց(=թուման) նաղտ: 1 թօփ կտա... 2 լիտր բրինձ:

ը. 1ա Ի յօգոստոսի 23, ի ձեռն պարոն Յօհաննիսին... 2 (6) տիկ է:

թ. 1ա Իւղ, թիլանի հօխայ... 10 թիլանի մեղր թարց մորթոյ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տէս Բովանդակութիւն 1-5:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. ա. 1ա (սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԾԱՏՈՒԻ /1233 (1784)»:

2. ա. 1ա (սեւ քանափով, ուրանկիւն, արաբատառ):

3-4 բ 1ա, դ 1ա (սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՄԿՐՏԻԶ /1242 (1793)»:

5. գ 1ա (սե քանաֆով, ուքանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ /1241 (1792)»:

6. ե 1ա (սե քանաֆով, ուքանկին) 1ա «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԾԱՏՈՒԻՐ /1233 (1784)»:

7. ե 1ա (սե քանաֆով, բորակ) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԳԷՈՐԳ /ԹՎԻՆ ՌՄ (1751)»:

8. ե 1ա (սե քանաֆով, ուքանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԳԷՈՐԳ /1239 (1790):

9. ե 1ա (սե քանաֆով, ռնառ բառակուսի) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՆԱԻԱՍԱՐԴ /12// (17//)»:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ է1բ «Տէր»:

121 ՀԱՇՈՒԵՄԱՏԵԱՆ


բրթպ. 4, վաւ. 1

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍԻՆ


ՌՄԺԲ-ՌՄԾ, ՌՄԿԴ-1763-1801, 1815

ԳՐԻԶ՝ արց. (աւր, վրդ.) Մկրաի՛ 1763-1781 թթ. (1ա-6ա, 18ա-149բ), Նահապետ դպր՝ 1782-1792 թթ. (149բ-231բ), Աստուածատու վրդ.՝ 1793-1799 թթ. (232ա-277ա, 289ա), անյայտ՝ 1800-1801, 1815 թթ. (277բ-80բ, 7ա-8ա): ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն կրղկա, Դուկաս կրղկա, Եփրեմ կրղկա:

ԹԵՐԹ՝ 290+3 (վերջում. էջակալուած 1-539՝ հաշուի շտնելով չգրուած թերթերը). չգրուած՝ 6բ, 8բ-17բ, 249ա, 281ա-8բ, 289բ, 290բ: ՊՐԱԿ՝ Ա-ԻԲ (Ա՝ 19, Բ՝ 42, Գ, Ը, Թ, ԺԵ, ԺԷ-ԺԸ, ԻԱ՝ 10, Դ՝ 16, Ե՝ 22, Զ, Ժ՝ 8, Է, ԺԲ-ԺԳ՝ 12, ԺԱ, ԺԴ, ԺԶ, ԺԹ՝ 14, Ի՝ 11, ԻԲ՝ 2): ՆԻԻԹ՝ թուղթ (տարբեր). լուսագծերով, լուսագրով՝ «A FAZERE GAVIAC», «ES ALCINAR TOSCOLANO», լուսապատկերով՝ թագակիր առիւծ, ներհետում՝ «A» մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 34,3x21,9: ԳՐՈՒԹԻՒՆ՝ հնգապիւն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա, 224բ, 232ա, 277բ): ՏՈՂ՝ տարբեր: ԿԱԶՄ՝ կաշեպատ ստուարաթուղթ. աստառը՝ սպիտակ թուղթ. սկզբում եւ վերջում՝ գրպանիկ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ 1+1՝ տպագիր չգրուած սպիտակ թուղթ:



Նմուշ 232ա (Աստուածատու վրդ.)



Նմուշ 277բ (անյայտ)


ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, կապիչները մասամբ պոկուած, թերթերի եզրերը սկզբում վնասուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Մատենանում գրանցուած են 1763-1801, 1815 թթ. Սբ. էջմիածնի վանքի նորոգութիւնների՝ վեհարանի եւ ներքին այլ կարիքների համար ծախսերը՝ հաստատուած Սիմէոն եւ Դուկաս կաթողիկոսների ինքնագրերով եւ կնիադրոշմներով.

1. 1ա-2ա Ի ՌՄԺԸ (1769) թուին եւ ի մայիսի չորս, օրն Բ (2) շաբաթ: Յորում Աստուծով սկսաֆ զտանիսն սրբոյ եւ մեծի աստուածակերտի եկեղեցւոյն նորոգել – Ուստա[յ] Երանոսին եւ որդւոյն նորին ուստա[յ] Գասպարին բաշխիշ ետու չորս հազար... ԶԱ (81) է[Ռ] (7[000]) ԺԱ (11) Ա (1). Վերոյ գրեցեալ վեց ղալամիս ջամն է ութսուն եւ մէկ թուման, եօթն հազար, տասն եւ մէկ շահի եւ Ա (1) փարաջ: Ստոյգ է:



Նմուշ 1ա (արց. Մկրաի՛)



Նմուշ 224բ (Նահապետ դպր.)

2. 2բ-5ա Ի ՌՄԻԶ (1777) թուոչս եւ ի յայրիլի 18ումն. վասն եկեղեցւոյ ներքին դասու յետին խախտեալ սեանն նորոգման զՄեղին փայակն յղեցաք ի Վան ի բերել զքարտաշ Սահակն... եւս ազուցաք նմա Ա (1) ֆէլէմէնկ չուխայ՝ դուռնայի գոյն, ի հոկտեմբերի 21. եւ գնաց ի Վան:

3. 5բ Ի ՌՄԻԷ (1778) թուոչս: Սկսաք գներին դասու առաջին եւ յետին սինսն գաշել եւ ծաղկել, որք ահա՛ գրին ի ներքոյ կարգաւ. ի յօգոստոս Ա (1) – Ա (1) Զ (6) Ե (5) Բանահ Աքրահամն ԼԸ (38) օր բանեց՝ Ա (1) օրն Ե (5) շահի, վարձն ետու ԹԹ (9000) Ժ (10) շահի... Զ (6) խառատ Պետրոսին: Զ (6) բանահ Աքրահամին Ա (1) շալ կապայ: ԽԲ (42) է (7) ԺԳ (13):

4. 6ա Ի ՌՄԼ (1781) թուոչս: Մինչ ձեռնարկեցաւ շինելոյ զլուսամուտսն սրբոյ եկեղեցւոյն ի յօգոստոսի երկուսն, սկիզբն եղել եւ ի սեպտեմբերի ԺԸ (18) լուսն, այս է գնացեալ խարճն, զորս գրին ի ներքո՛ թէ՛ վէն եւ թէ՛ նաղտ – Բ (2) Ա (1) Ժէ (17) Վարդեա Բարայն Խօյեցի ԽԸ (48) օր բանած էր, որոյ վարձ ետու, օրն Ե (5) շահով, ԺԲ (12) հազար դիան... Վասն սոյն լուսամտից ԵՃԼԶ (536) շիւղէ գնաց թէ՛ ալվան եւ թէ՛ սպիտակ:

5. 6ա Ի ՌՄԼԲ (1783) թուոչս: Վասն շինման երկուց սեանց սրբոյ եկեղեցւոյն, այսինքն՝ վերի դասի առաջին եւ յետին սեանց, որ առաջին սեան արեւելեան եւ հիւսիսակողմի ճակատսն մինչեւ ցալ աթոռն. յետին սեան հիւսիսայկողմի եւ յարեւմտեան ճակատսն, մինչեւ ցկէսն կամարի, իսկ ի հարաւայ եւ յարեւմտից կողմն, ի վեր քան զսալ աթոռն մինչ ի կամարսն, կրկին նորոգեցաւ, որոց վասն տրեցեալ բաղձիչն եւ խիլայն միայն աստ գրեցաւ, իսկ օրական վարձն մշակաց եւ այլ խարճսն՝ ի յաթոռակալի դարձարն գրեցաւ. որոյ սկիզբն շինման եղել ի յուլիսի ԻԸ (28) եւ յաւարտն ի սեպտեմբերի Իէ (27) – Ա (1) Ե (5) Ուստայ Գասպարին ետու առաջի քարն տեղն դնելն Բ (2) ոսկի... Վերակացու Մարտիրոս վարդապետին Ա (1) շալ փիլոն. գինն է Ա (1) թուման:

6. 18ա-20բ Ա (1) ԺԶ (16). Մէկն Սուրբ Հովիփսիմէն գնացաք, ետու ԱՌ (1000) [դիան], ԺԶ (16) շահի... Ահա՛ ի մտէն հոգտեմբերի եւ մինչեւ ցեղն դեկտեմբերի խարճեալ եմ ԻԸ (28) թուման, ԶԹ (6000) [դիան] ԺԲ (12) շահի Բ (2) փարայ:

7. 21ա-32բ Գ (3)ն եւ Դ (4)ն ամսոյս, շաբաթ եւ կիրակի, յանապատոջն, ծեր եւ նորընծայ Տէր-Յօհանիսեանցն ժամուց ետու Բ (2) ապասի... Գ (3) Ա (1) Զ (6) Վերոյ գրեցեալ չորս ղալամիս ջամն է Գ (3)

Գ(=թուման), ԱՌ (1000) [դիան], Զ (6) շահի անսխալ: 8. 33ա-42բ ԺԸ (18). Մէլիփ Առաքելն, որ գառն եբեր փէշքաշ սրբազանին, ետու կէս ոսկի... Դ (4) Բ (2) ԺԶ (16) Վերոյ գրեցեալ Թ (9) ղալամիս ջամն է Դ (4) թուման, ԲՌ (2000) [դիան], ԺԶ (16) շահի:

9. 43ա-52բ Ա (1) ԺԶ (16) Բ (2). Բայազիդու փաշայի չուխատարն, որ վասն պատրիճանաթղթուի էր եկեալ, որում ետուք մէկ ոսկի՝ ձեռամբ տեղապահ հայր վարդապետին... ԺԴ (14) Դ (4) Դ (4). Վերոյ գրեցեալ ԺԶ (16) ղալամիս ջամն է ԺԴ (14) թուման ԳՌ (4000) [դիան] Դ (4) շահի:

10. 53ա-9ա Գ (3). Դուռնի առի Ա (1) հատ մեր ղաթրճի Մարգարէն, (որ էր Բայազիդու փաշային ընծայ), ետու ԳՌ (3000) [դիան]... Ժ (10) Գ (3) Ժէ (17) Ա (1). Վերոյ գրեցեալ ԺԴ (14) ղալամիս ջամն է Ժ (10) թուման ԳՌ (3000) [դիան] Ժէ (17) շահի Ա (1) փարայ:

11. 59բ-65բ ԺԸ (18) Ա (1). Ժամուց Աքրահամ վարդապետին՝ կէս ոսկի, (Որոտմանց տօնին, որ էր դեկտեմբերի 29), ամսոյս գրեցի... ԺԵ (15) Ը (8) ԺԱ (11) Բ (2). Արդ՝ վերոյ գրեցեալ ութ ղալամիս ջամն է ստոյգ տասն եւ հինգ թուման ութ հազար [դիան] տասն եւ մէկ շահի եւ երկու փարայ:

12. 66ա-71բ Ա (1). Սոյն օր երկուց ձիթահանից ասարներացն Դ (4) ապասի՝ ձեռամբ Գալուատ վարդապետի... ԻԳ (23) Գ (3) ԺԹ (19) Ա (1). Արդ՝ վերոյ գրեցեալ քսան եւ մէկ ղալամիս ջամն է քսան եւ երեք թուման երեք հազար [դիան], տասն եւ ինն շահի եւ մէկ փարայ ստոյգ:

13. 72ա-6բ Բ (2) Ժ (10). Տանձ առի հինգ լիտր, մէկ լիտրն՝ տասն շահով... ԻԵ (25) Ե (5) Ը (8). Արդ՝ վերոյ գրեցեալ տասն ղալամ ջամից ջամն է ստոյգ քսան եւ հինգ թուման, հինգ հազար [դիան] եւ ութ շահի:

14. 77ա-82ա Ա (1) Բ (2). Աւետիս ետու ժամասած Ստեփան, Մինաս, Յարութիւն եւ Մատթէոս վարդապետացն, Ստեփան եւ Վարդան արեղայիցն մէկ թուման եւ ԲՌ (2000) [դիան]... ԺԲ (12) Ը (8) ԺԳ (13) Ա (1). Վերոյ գրեցեալ տասն եւ մէկ ղալամ ջամից ջամն է ստոյգ տասն եւ երկու թուման ութն հազար [դիան] ԺԳ (13) շահի Ա (1) փարայ:

15. 82բ-7բ Բ (2). Բաշխիշ ետու թէրզի Գրիգորին եւ Նաւասարդին ԲՌ (2000) [դիան]... ԺԵ (15) Ը (8) ԺԴ (14) Բ (2). Վերոյ գրեցեալ Թ (9) ղալամ ջամից ջամն է ԺԵ (15) թուման ԸՌ (8000) [դիան] ԺԴ (14) շահի եւ Բ (2) փարայ:

16. 88ա-93բ Ա (1) Աւետիս ետու ժամասած Ստեփան, միւս Ստեփան, Յարութիւն, եւս Ստեփ-

ան եւ Վարդան վարդապետացն Բ (2) Բ (2) հազար [դրան]... ԺԳ (13) Դ (4) է (7). Վերոյ գրեցեալ Ժ (10) ղալամիս ջամն է տասներեք թուման ԴՌ (4000) [դրան] եւ է (7) շահի: Ստոյգ:

17. 94ա-100բ Բ (2) Ե (5). Ժամուց ետու հասարակաց՝ ձեռամբ լուսարար Գրիգոր վարդապետին երկու թուման հինգ հազար [դրան] յամսոյ 3... ԻԲ (22) Թ (9) ԺԱ (11). Վերոյ գրեցեալ ԺԹ (19) ղալամիս ջամն է քսաներկու թուման ԹԹ (9000) [դրան] ԺԱ (11) շահի:

18. 101ա-6բ Բ (2). Միրզայ Գեօրգիմ, ի գալն յԱխլցխայու եւ գնալն ի Թիֆլիզ, ետու երկու թուման, ձեռամբ Գալուստ վարդապետին, օրն Ե (5) շաբաթ, յամսոյս 1... ԺԵ (15) է (7) ԺԵ (15). Վերոյ գրեցեալ ԺԲ (12) ղալամիս ջամն է ԺԵ (15) թուման էՒ (7000) [դրան] ԺԵ (15) շահի:

19. 107ա-12բ Ա (1). Սուրբ Ստեփաննոս գիրքն բերան կարդացօղ Կիրակոս տղային ետու ԱՌ (1000) [դրան] յամսոյս 7... ԺԳ (13) Դ (4) ԺԹ (19). Վերոյ գրեցեալ ԺԳ (13) ղալամիս ջամն է տասն եւ երեք թուման շորս հազար [դրան] տասն եւ ինն շահի:

20. 113ա-8բ Ը (8) Աւետիս ետու ժամասած Ստեփան, Աւետիս եւ Յարութիւն եպիսկոպոսաց եւ միւս փոքր Ստեփան վարդապետին Բ (2) Բ (2) հազար [դրան]... ԺԵ (15) Գ (3) ԺԲ (12) Բ (2). Վերոյ գրեցեալ տասն եւ մէկ ղալամիս ջամն է տասն եւ հինգ թուման երեք հազար [դրան] ԺԲ (12) շահի Բ (2) փարայ: Ստոյգ:

21. 119ա-127բ է (7). Աւետիս ետու ժամասած Ստեփան եւ Յարութիւն եպիսկոպոսաց ԴՌ (4000) [դրան], Կարապետ, Ստեփան եւ Միխայել վարդապետացն ԳՌ (3000) [դրան]... ԺԳ (13) Զ (6) Բ (2) Բ (2). Վերոյ գրեցեալ տասն եւ հինգ ղալամիս ջամն է տասն եւ երեք թուման վեց հազար [դրան] Բ (2) շահի Բ (2) փարայ:

22. 128ա-37բ Ա (1) Աւետիս ետու ժամասած Ստեփան եւ Յարութիւն եպիսկոպոսաց, Կարապետ, Ստեփան եւ Միխայել վարդապետաց Բ (2) Բ (2) հազար [դրան]... ԻԳ (23) ԺԹ (19). Վերոյ գրեցեալ տասն եւ մէկ ղալամիս ջամն է քսան եւ երեք թուման եւ տասն եւ ինն շահի:

23. 138ա-43բ Զ (6) Աւետիս ետու վարժապետ Ստեփան, միւս Ստեփան եւ Միխայել վարդապետացն Զ (6) հազար [դրան]... է (7) Ե (5) ԺԲ (12) Բ (2). Վերոյ գրեցեալ տասն եւ երկու ղալամիս ջամն է եօթն թուման հինգ հազար [դրան] տասն եւ երկու շահի Բ (2) փարայ:

24. 144ա-7բ Ոչխար առի Բ (2) հատ, գինն ետու ԲՌ (2000) [դրան] Ե (5) շահի... ԻԲ (22) Ը (8) Ե (5)

Բ (2). Վերոյ գրեցեալ ԺԳ (14) ղալամիս ջամից ջամն է քսան եւ երկու թուման ութն հազար [դրան] հինգ շահի եւ Բ (2) փարայ:

25. 148ա-54ա Ա (1) Ա (1). Ծաղկեալ թուղթք բերին տիրացու Անդրէասն եւ Յարութիւնն, ետու Զ (6) զարիմէհպուս ոսկի յունվարի Ա (1) կաղանդ օրն... ԾԸ (58) Գ (3) ԺԱ (11). Վերոյ գրեցեալ Թ (9) ղալամիս ջամն է ԾԸ (58) ց(=թուման) ԳՌ (3000) [դրան] ԺԱ (11) շահի:

26. 154բ-62ա Ա (1) Ա (1) ԺԲ (12). Բակլայ առի Ի (20) լիտր, գինն ետու Ա (1) ապաստով ԴՌ (4000)... ԺԴ (14) Թ (9) Զ (6) Բ (2). Վերոյ Գ (3) ղալամիս ջամն է ԺԴ (14) ց(=թուման) ԹԹ (9000) ԳՃԼ (330) դ[իւս]ն:

27. 162բ-8բ Դ (4) ԺԶ (16) Բ (2). Ողորմութիւն ետու Սիմէօն ձերունի վարդապետին Ա (1) ոսկի... Թ (9) Գ (3). Իսկ վասն շաթրաց՝ Գ (3) շուխտ պաճոյճ պաղերովն ԳՌ (3000) [դրան], որ ի վերջ տարոյս ահա՛ գրեցի:

28. 169ա-75ա Ը (8) Աւետիս ետու ժամասաց Ստեփան եպիսկոպոսին, վարժապետ Կարապետ եւ Միխայել վարդապետաց եւ սարկաւազ Ստեփանին Բ (2) Բ (2) հազար դ[իւս]ն ամսոյս 5... Խ (40) Ա (1) ԺԱ (11). Զամն է ութ ղալամիցս Խ (40) ց(=թուման) ԱՌ (1000) [դրան] ԺԱ (11) շահի:

29. 175բ-81բ Ա (1) Բ (2) Աւետիս ետու ժամասաց Բ (2) Ստեփան, Միխայել վարդապետաց եւ տէր Ստեփանին ԸՌ (8000) դ[իւս]ն... ԺԱ (11) ԺԷ (17) Բ (2). Վերոյ Զ (6) ղալամիցս ջամն է 110880 դ[իւս]ն:

30. 182ա-90ա Դ (4) ԺԸ (18). Զայթուն առի ԺԲ (12) լիտր եւ Ա (1) նուկի, գինն ետու Բ (2) ապաստով ԴՌ (4000) ԹՃ (800) ամսոյս 1... ԺԶ (16) Թ (9) ԺԳ (13) Ա (1). Վերոյ եօթն ղալամիցս ջամն է 169665 դ[իւս]ն:

31. 190բ-7ա Ժ (10) Սարվան Մատուն ետու Ժ (10) շահի յունվարի մուտն... է (7) ԺԸ (18) Վերոյ երեք ղալամիցս ջամն է 70900 դ[իւս]ն:

32. 197բ-203բ Բ (2) է (7). Մեղր առի Խ (40) լիտր եւ կէս, գինն ետու լիտր[ն] Ա (1) ղուռուշով Խ (40) ղուռուշ եւ կէս ի յունվարի մուտն՝ ձեռամբ աթոռակալին... ԶԹ (79) Գ (3) ԺԹ (19). Վերոյ Ժ (10) ղալամիցս ջամն է 793950 դ[իւս]ն:

33. 204ա-10ա Զ (6) Աւետիս ետու Բ (2) ժամասաց Ստեփան վարդապետաց եւ սարկաւազ Գրիգորին ԶՌ (6000) [դրան] ի Խթման երեկոյին, ամսոյս 5... ԺԸ (18) ԺԴ (14). Վերոյ Թ (9) ղալամիցս ջամն է 180700 դ[իւս]ն:

34. 210բ-17ա Ա (1) Իւզպաշի Գաբրիէլն թուղթ

էր գրեալ, ի Գեանջայու եւ այլ տեղեաց համբաւ էր ծանուցեալ. թուղթ բերօղ Նազարին ետու ԱՌ (1000) [դիւան]... ԻԸ (28) ց(=քուման) է (7) Գ (3). Վերոյ ժ (10) ղալամիցս ջամն է 287150 ղ[իւան]:

35. 217բ-24ա Ա (1). Սարկաւագ Փիլիպպոսի եղբայր Մկրտչին ետու ԱՌ (1000) [դիւան]ամսոյս 1... ժէ (17) ց(=քուման) Ը (8) ժ (10). Վերոյ հինգ ղալամիցս ջամն է 178500 ղ[իւան]:

36. 224բ-31բ է (7) ժ (10). Աւետիս ասօղ ժամասաց Բ (2) Ստեփան վարդապետաց եւ սարկաւագ Գրիգորին ետու ԶՌ (6000) ղ[իւան], իսկ Իւրայէլ սարկաւագին՝ Լ (30) շահի ամսոյս 5... ԻԵ (25) ց(=քուման) Զ (6) ժԳ (14) Բ (2). Վերոյ Դ (4) ղալամիցս ջամն է 256730 ղ[իւան]:

37. 232ա-41ա ժ (10). Թիֆլիզեցի Բ (2) աղքատաց ետուք ողորմութիւն ժ (10) շահի ամսոյս 1... ԻԲ (22) Ե (5) Ա (1). Վերոյ տասն եւ մէկ ղալամիցս ջամն է 225020 ղ[իւան]:

38. 241բ-8բ Ը (8). Աւետիս ետուք Ստեփան վարդապետին, Գրիգոր, Իւրայէլ եւ Առաքել սարկաւագացն Բ (2) Բ (2) Ռ (1000) ղ[իւան], ջամն է ԼՌ (8000) ղ[իւան], ի յունվարի 6... ԽԲ (42) ց(=քուման) Ա (1) ԻԳ (23) Բ (2). Վերոյ տասն եւ Բ (2) ղալամիցս ջամն է 421230 ղ[իւան]:

39. 249բ-55բ ժ (10) Զարէքտարքն մեր, որք սառուց ընծայ բերին, նոցա ետու ժ (10) շահի ի յունվարի 1... Զամն է սոյն ժ (10) ղալամ հաշուիցս 44100 ղ[իւան]:

40. 256ա-62բ Ը (8). Աւետիս ետու ժամասաց Ստեփան եպիսկոպոսին եւ Գրիգոր, Իւրայէլ եւ Առաքել սարկաւագաց Բ (2) Բ (2) հազար ղ[իւան] ամսոյս 5... ԻԵ (25) ց(=քուման) Ե (5) Ե (5) Ա (1). Վերոյ Թ (9) ղալամիցս ջամն է 255265 ղ[իւան]:

41. 263ա-8բ Ը (8). Աւետիս ետուք շորս ժամաս[ա]ծաց, այսինքն՝ Ստեփան եպիսկոպոսին, Գրիգոր, Իւրայէլ եւ Առաքել սարկաւագաց Բ (2) Բ (2) Ռ (1000) ղ[իւան] ամսոյս հնգին... ՀԶ (66) ց(=քուման) Ա (1) ժԳ (14). Վերոյ հինգ ղալամիցս ջամն է 661700 ղ[իւան]:

42. 269ա-2բ Ա (1). Զինաբեր արամուսցի մարդոյն ԱՌ (1000) ղ[իւան] ետուք յունվարի 5... Դ (4) Դ (4). Մոմի քիրայն, որ ի վերդ գրած է, ի Բայազիտու մինչեւ ցՍուրբ Աթոռս քիրայ ետուք ԴՌ (4000) ԲՃ (200) ղ[իւան]:

43. 273ա-7ա Ա (1) Ե (5). Աւետիս ետու շորս ժամասաց Գրիգոր, Առաքել, Իւրայէլ եւ Ստեփան սարկաւագացն Բ (2) Բ (2) Ռ (1000) ղ[իւան]... ԼԱ (31) ց(=քուման) Ը (8) Գ (3) Բ (2). Վերոյ ժԳ (13) ղալամիցս ջամն է 318185 ղ[իւան]:

44. 277բ-9բ Ե (5). Յովսէփ արքեպիսկոպոսի աղագաւ մանսար մի գրեցուցեալ զնա՝ կաթուղիկոս խնդրեցաք. սոյն մանսարս Դարս տանօղ տղայոց խարճի տուաք ԵՌ (5000) դիւան ի յունվարի 28... Դ (4) Դ (4) Զ (6) Բ (2). Ժամուց տուաք ժամարարաց բոլոր տարին ԿԶ (66) ղուռուշ եւ կէս, որ է 133 ժամարար, իւրաքանչիւրոցն Ի (20) փարայ տալով:

45. 280աբ Բ (2) Ա (1) Ը (8). Աւետիս ասօղաց տուաք ի Սուրբ Ծննդեան երեկոյին, ի յունվարի Ե (5), որք գրեցան աստ... Դ (4). Վեհարանի քէշիքչի Դ (4) տղայոց Դ (4) ամսէն վարձ տուաք Դ (4) ց(=քուման) ի սոյն ամսոյս:

46. 7ա-8ա Տեառն Եփրեմայ: Յամի Տեառն 1815, բարձու հրամանաւ սրբազան վեհապետին մերոյ եւ արիաջան հաւազատ վերակացութեամբ Գրիգոր եպիսկոպոս գանձապետին Սրբոյ էջմիածնայ եղև նորոգումն տանեաց միոյ կողմանն սրբոյ տաճարիս, որոյ ծախսն ներոյ նշանակին միլլատմիոջէ – 7. Թօմաս քարահատին ետուք եօթն թուման յաղագս 760 քարինս հատանելոյն ի քարահանքն զաւուրս 70, օրն ԱՌ (1000) դեան վարձն... Երեք երեսի գումարաց ջամն է ԲՃԻԱ (221) թուման ԸՌ (800) Զ (6) շահի:

47. 289ա Մատաղագին եւ տօլուվագին ետու Յօվագիմ վարդապետն սակս մատաղ առնել... Մանրամասնաբար խարճ, ձեռամբ Աստուածատուրին, եղև Զ (6) ղուռուշ Դ (3) ամսոյս. սոյն մէկ թղթոյ Բ (2) երեսունմ:

Բ. Երեւ առանձին թերթիկներին նշուած են գանազան ծախսեր եւ յանգաւոր եռատող.

1. ա. 1ա 0.130600 դիւան լուսարարի գրամէն մեզ էհաս...3200000:

բ. 1բ Ի ՌՄԽԹ (1800) թուի ջամքն է դաւթարիս, այս մեծ դաւթարինն է... 3 ղալամի ջամն է 1900000 ղ[իւան]:

գ. 1բ Ի ՌՄԾ (1801) թուի ջամն է. մինչեւ ցապրիլի 28... 623005:

2. ա. 1ա Այս հաշիւն Թ (9) գթակակար վարպետ Յարութիւնին...20830 ղ[իւան]:

բ. 1բ Մերքն առ նա եղեալ են այսօրիկ, զորս գրեմք... Ե (5) հատ վանականաց գթակի ղրագ:

3. 1ա Իմաստուն, հեզ եւ խոնարհ լեր.
որովք հասցիս նորին աղ բեր
հեղինակիդ լիցիս պատ կեր:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

1. 18ա Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

ամէն: Ի ՌՄԺԲ (1763) թուին եւ ի հոգտեմբերի ամսոյ մտին, հրամանաւ տեառն իմոյ մեծի սրբազան վեհապետին, որոյ յետին ծառայ եւ սպասաւոր տիրացու Մկրտիչ սկսայ խարճ առնել մասնաւոր:

2. 21ա Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ի ՌՄԺԳ (1764) թուին եւ ի յունվարի ամսոյ մտին, հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետին, որոյ յետին ծառայ տէր Մկրտիչ սկսայ խարճ մասնաւորաբար առնել, վասնորոյ արարի զդաՖաարս զայս:

3. 33ա Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետին, ես՝ անարգ ծառայ նորին տէր Մկրտիչ յետնեալ աբեղայս, վերստին արարի եւ սկսայ զդաւթարս զայս վասն մասնաւոր խարճարարութեան մերոյ ներ վեհարանոջ Սրբոյ Աթոռոյս, գիտութեամբ եւ հրամանաւ վերոյ սրբազան վեհապետիս, ի ՌՄԺԴ (1765) թուին եւ ի նորապէս մուտն յունվար ամսոյ:

4. 43ա Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետին, ես՝ անարգ եւ յետնեալ մշտայապաշտօն ծառայս նորին տէր Մկրտիչ իբրեւ վարդապետս, վերստին սկսայ եւ արարի զդաւթարս զայս վասն մասնաւոր խարճարարութեան մերոյ ներ վեհարանոջս ի վերայ հարկաւորական իրաց սակս Սրբոյ Աթոռոյս, գիտութեամբ եւ հրամանաւ վերոյ սրբազան վեհապետին, ի սկզբան նոր տարւոյս ի ՌՄԺԵ (1766) թուոջս եւ ի յունվարի մտին:

5. 53ա Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետին ես՝ անարգ եւ յետնեալ մշտայապաշտօն ծառայս նորին Մկրտիչ իբր վարդապետս, վերստին Աստուծով սկսայ եւ արարի զդաւթարս զայս վասն մասնաւոր խարճարարութեան մերոյ եթէ՛ ներ վեհարանոջս մերում եւ եթէ՛ արտաքոյ ի վերայ հարկաւորական իրաց, հրամանաւ եւ գիտութեամբ վերոյ սրբազան վեհապետին, ի յըսկզբան նոր տարւոյս եւ ի վերոյ եղեալ թուոյս, որ է ի 1216 (1767) եւ ի յունվարի մտին:

6. 59բ ՌՄԺԶ (1768): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Բուռն հրամանաւ եւ հարկադրութեամբ տեառն իմոյ մեծի եւ յոգնաշխատի ծնողի սրբազան վեհապետին ես՝ նուաստագոյն ծառայս նորին Մկրտիչ եւեթ վարդապետս, վերստին սկսայ եւ արարի զդաւթարս զայս վասն մասնաւոր խարճից եւ մասրաֆացն Սրբոյ Աթոռոյս. զորս առնելոց եմ եթէ՛ ներ վեհարանոջս մերում եւ եթէ՛ յայլս տեղիս ի վերայ հարկաւոր իրաց օրըստօրէ, գիտութեամբ եւ հրամանաւ վերոյ գրեցեալ

տեառնս իմոյ սրբազան վեհապետին. ներ թուոջս մերում, որ 1217 (1768) եւ ի յունվարի ամսոյ մտէն սկսեալ, որք են ի ներքոյ գրեցեալք յատուկ-յատուկ եւ կարգաւ:

7. 66ա ՌՄԺԸ (1769): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Որոյ պահպանութեամբն եւ ամենառատ ողորմութեամբն հասաք ի յայս 1218 (1769) թիւս. եւ ի սկզբան տարեմտի յունվարի ամսոյս ես՝ Մկրտիչ եւեթ վարդապետ, բնական ծառայս քրիստոսապսակ եւ սրբազնակատար վեհապետի ծնողիս իմոյ, վերստին սկսայ գրել զձեռամբ իմով արարեալ խարճան Սրբոյ Աթոռոյս մասնաւորապէս, հրամանաւ տեառնս իմոյ մեծի վեհապետիս. որք են ի ներքոյ գրեցեալքս կարգաւ:

8. 72ա ՌՄԺԹ (1770): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Որոյ յաջողմամբն եւ ամենառատ ողորմութեամբն ժամանեցաք ի թուականս մեր նորոգ ՌՄԺԹ (1770): Ուստի հրամանաւ քրիստոսապսակեալ տեառն իմոյ սրբազան վեհապետին ես՝ յետին ծառայս նորին Մկրտիչ ամենանուաստ վարդապետս, սկսայ նորապէս զխարջս առնել, որոյ աղագաւ եւ զայս դաւթարս գրել:

9. 77ա ՌՄԻ (1771): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Որոյ ամենառատ ողորմութեամբն եւ յաջողմամբն ժամանեցաք ի թուականս մեր նորոգ ՌՄԻ (1771): Ուստի հրամանաւ քրիստոսապսակեալ տեառն իմոյ սրբազան վեհապետին ես՝ յետին ծառայս նորին Մկրտիչ ամենանուաստ վարդապետս, սկսայ նորապէս զխարճս առնել, որոյ աղագաւ եւ զայս դաւթարս գրել:

10. 82բ ՌՄԻԱ (1772): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Հրամանաւ եւ գիտութեամբ տեառն իմոյ քրիստոսապսակեալ սրբազան վեհապետին սկսայ վերստին զխարճս եւ զմասրաֆս առնել մանրամասնաբար ես՝ Մկրտիչ նուաստ վարդապետ ծառայս նորին: Վասնորոյ սկսայ վերստին գրել զդաւթարս այս ի 1221 (1772) թուոջս եւ ի յունվարի մտումն:

11. 88ա ՌՄԻԲ (1773): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ի ՌՄԻԲ (1773) թուականութեանս մերում, ըստ հրամանի վեհապետ եւ սրբազնակատար տեառնս իմոյ սրբազան վեհապետիս, եւ յաջողմամբ տնօրինողին ամենայն բարեաց Աստուծոյ ես՝ ամենանուաստ ծառայս սրբազանի տեառն իմոյ Մկրտիչ վարդապետս սկսայ վերստին զխարջս առնել, որոյ աղագաւ եւ զայս դաւթարս գրել:

12. 94ա ՌՄԻԳ (1774): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ի ՌՄԻԳ (1774) թուական-

նութեանս մերում, մինչ սկսաք, զնոր ամս զայս շնորհաւոր, վերստին ըստ հրամանի գերերջանիկ տեառնս իմոյ սրբազան վեհապետիս ես՝ նուաստագունեղ ծառայս սորին Մկրտիչ վարդապետս, սկսայ առնել զխարջս, որոյ աղագաւ եւ զգաւթարս այս խարջից ի գրել ձեռնարկեցի:

13. 101ա ՌՄԻԴ (1775): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Որոյ շնորհին ամբողջ նոյնութեամբ հասաք ի յայս ՌՄԻԴ (1775) թիւս եւ ի յունվարի սկիզբն տարեմտիս: Հրամանաւ նոյն սրբազան վեհապետ ծնողիս իմոյ, յետին ծառայ Մկրտիչ ապարդիւն վարդապետս, վերստին սկսայ գրել զձեռամբ իմով արարեալ խարճ եւ մասրաֆսն Սրբոյ Աթոռոյս:

14. 107ա Թիւն 1225 (1776): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Որոյ շնորհին մինչ ամբողջ նոյնութեամբ աւարտեցաք զանցեալ հին տարին եւ սկսաք այս ՌՄԻԵ (1776) նոր տարւոյ թուականս: Հրամանաւ նոյն սրբազան վեհապետ ծնողիս իմոյ ես՝ ապարդիւն ծառայս նորին Մկրտիչ եւեթ վարդապետս, վերստին սկսայ ձեռամբ իմով զարարեալ խարճ եւ մասրաֆսն Սրբոյ Աթոռոյս գրել ի ներքոյ ի յունվարի մտէն սկսեալ:

15. 113ա 1226 (1777): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Որոյ ողորմութեամբն հասաք ի ՌՄԻԶ (1777) թուականս մեր. եւ հրամանաւ տեառն իմոյ եւ ըստ հոգւոյ ծնողի սրբազան վեհապետին, նուաստ Մկրտիչ վարդապետ ծառայս նորին, վերստին սկսայ գրել զձեռամբ իմով եղեալ խարճ եւ զմասրաֆսն Սրբոյ Աթոռոյս յատկապէս ի սոյն թուոյս եւ ի մուտն յունվարի:

16. 119ա Ի 1227 (1778) թուին: Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Որոյ ամէնառատ ողորմութեամբն հասաք առանց իմիք գլխաւոր դիպուածոյ ի ՌՄԻԷ (1778) թիւս: Որում գոհութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն: Հրամանաւ տեառնս իմոյ սրբազան վեհին, նուաստ բնիկ ծառայս եւ որդիս նորին Մկրտիչ եւեթ վարդապետս սկսայ գրել վերստին զմասնաւոր խարճարութեան դաւթարս զայս, զոր ձեռամբ իմով յատկապէս խարճեալ եմ վասն հարկաւորութեան Սրբոյ Աթոռոյս, ներ վեհարանոջ մերում եւ յայլ տեղիս, ի վերոյ գրեցեալ թուոյս եւ ի յունվարի մտէն սկսեալ:

17. 128ա Թիւն 1228 (1779): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Որոյ ամենազօր զօրութեամբն եւ ամէնառատ ողորմութեամբն հասաք առանց իմիք վնասուց եւ դիպուածոց ի ՌՄԻԸ (1779) թիւս եւ ի յունվարի մուտն: Որում օրհնու-

թիւն, գովութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն: Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետին, նուաստ ծառայս նորին Մկրտիչ եւեթ վարդապետս սկսայ վերստին գրել զմասնաւոր խարճարութեան դաւթարս այս, զոր ձեռամբ իմով յատկապէս ներ վեհարանոջ մերում խարճեալ եմ՝ հանդերձ ի յերեւան եւ ի յեայլոյս եւ յայլ տեղիս արարեալ հարկաւոր եւ յատուկ մասրաֆովն:

18. 138ա Թիւն 1229 (1780): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Որոյ ամէնառատ ողորմութեամբ եւ նախախնամութեամբն հասաք յայս ՌՄԻԹ (1780) թիւս եւ ի յունվարի մուտն: Հրամանաւ տեառնս իմոյ եւ հոգեւոր ծնողի սրբազան վեհապետին, նուաստ Մկրտիչ վարդապետ ծառայս նորին, վերստին սկսայ գրել ձեռամբ իմով եղեալ զմասնաւոր խարճսն եւ զելան Սրբոյ Աթոռոյս առ դրան վեհապետիս թէ՛ ի վեհարանոջս մերում եւ թէ՛ արտաքոյ Սրբոյ Աթոռոյս:

19. 144ա Մինչեւ ցայս վայր կեցեալ յաշխարհի հոգեծին ծնողին մերոյ տեառն Սիւլեօնի սրբազան կաթողիկոսին, ապա ի ՌՄԻԹ (1780) թուոյս, ի յուլիսի ամսոյ ԻԶ (26), ի Վարդավառի կիրակին փոխեցաւ առ Քրիստոս՝ թողեալ զմեզ ի սուգ անմխիթար: Ապա ի յառաջիկայ շաբաթոջն Ղուկաս արքեպիսկոպոսն ընտրեցաւ ի կաթողիկոսութիւն՝ ըստ կամաց եւ ազդեցութեանն Աստուծոյ. զոր եւ վասն ներկայիս խոռվութեան եւ երկրիս աւեր գոլոյ՝ եկեալ ի մի վայր բոլոր երկրականքս եւ միաբանք Սրբոյ Աթոռոյս, ի նոյն առաջիկայ կիրակէին երկրորդում, որ էր օգոստոսի Բ (2), օծին ի հայրապետութիւն տանս Հայոց՝ չկամելով յանտիրութեան թողուլ ընդ երկարս զՍուրբ Աթոռս ի դառն ժամանակիս: Որում Տէր զկեանս երկարս պարգեւելով տացէ՛ մեզ ընդ երկայն աւուրս ի մխիթարութիւն սրտից մերոց: Իսկ յետ օծման նորոգ սրբազան վեհապետիս մերոյ, ըստ վերոյ գրեցելոյ ոճոյն, զոր ինչ յատուկ խարջս արարաք ի հայրապետանոցի աստ հրամանաւ իւրով, սկսաք գրել կարգաւ ի ներքոյ:

20. 148ա Թիւն 1230 (1781): Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Որոյ նախախնամական գթութեամբն եւ ողորմութեամբն հասաք յայս ՌՄԼ (1781) թիւս եւ ի մուտն յունվարի: Հրամանաւ եւ հարկադրութեամբ տեառնս մերոյ նորոգ սրբազան վեհապետիս, Մկրտիչ վարդապետ նուաստս, վերստին մաշեցեալ անձամբ սկսայ գրել զձեռամբ իմով արարեալ մասնաւոր խարճսն եւ զելան Սրբոյ Աթոռոյս, զորս թէ՛ ի վեհարանոջ մե-

րում եւ թէ՛ արտաքոյ Սրբոյ Աթոռոյս, հրամանաւ մեծի սրբազան վեհապետիս արարեալ եմ:

21. 154բ (Նահապետ դպր.) Ի ՌՄԼԱ (1782) թուոջս: Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետին, նուաստ բնական ծառայս նորին արարի զդավթարս զայս եւ գրեցի ի ներքոյ զյատուկ եւ զմասնաւոր խարճս եւ զմանրամասնաբար մասրաֆան, որք ի դուռն սրբազան վեհապետիս մերոյ ներ վեհարանոջս մերում, հրամանաւ նորին եւ ձեռամբ իմով եղեալ է, զոր յանուանէ գրեմք ահա:

22. 162բ Ի ՌՄԼԲ (1783) թուին: Հրամանաւ տեառն իմոյ մեծի սրբազան վեհապետին, Նահապետ՝ նուաստ եւ բնական ծառայս նորին, վերստին սկսայ գրել զմասնաւոր խարճ եւ զմասրաֆան, որք ձեռամբ իմով եղեալ են ներ վեհարանոջս եւ արտաքոյ վեհարանին, զորս ահա գրեմ տեղեալ եւ կարգաւ եւ յատկութեամբ՝ ի յունվարի մտէն սկսեալ:

23. 169ա ՌՄԼԳ (1784): Հրամանաւ տեառն իմոյ մեծի սրբազան վեհապետին, Նահապետ՝ նուաստ ծառայս նորին, յայսմ ՌՄԼԳ (1784) թուոջս եւ ի յունվարի մուտն վերստին սկսայ գրել զձեռամբ իմով արարեալ խարճ եւ մասրաֆան միլրստմիոջէ թէ՛ ներ վեհարանոջս եղեալսն եւ թէ՛ ի յԵՐԵԱՆԷԱՆ եւ յայլ տեղիս արարեալսն, որք են ի ներքոյ գրեցեալքս:

24. 175բ 1234 (1785) թուին: Հրամանաւ տեառն իմոյ մեծի սրբազան վեհապետին, նուաստ Նահապետ բնական ծառայս նորին, վերստին սկսայ գրել ի ներքոյ զմասնաւոր եւ զյատուկ խարճ եւ մասրաֆան, որք ձեռամբ իմով եղեալ են ներ վեհարանոջ մերում եւ արտաքոյ վեհարանին՝ ի յունվարի մտէն սկսեալ:

25. 182ա Ի ՌՄԼԵ (1786) թուոջս: Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետիս ես՝ Նահապետ նուաստ եւ բնական ծառայս նորին, վերստին սկսայ գրել զմասնաւոր խարճ եւ մասրաֆան, որք ձեռամբ իմով եղեալ են ներ վեհարանոջս եւ արտաքոյ սորին: Զորս ահա գրեմ տեղեալ եւ կարգաւ եւ յատկութեամբ՝ սկսեալ ի մտէն յունվարի:

26. 190բ 1236 (1787) թուոջս: Հրամանաւ մեծի տեառնս իմոյ սրբազան վեհապետիս ես՝ Նահապետ նուաստ ծառայս նորին, վերստին սկսայ գրել զխարճն եւ զմասրաֆան Սրբոյ Աթոռոյս, որք ձեռամբ իմով եղեալ են ներ վեհարանոջս եւ թէ՛ արտաքոյ վեհարանիս. որք եւ գրին ահա՝ ի ներքոյ կարգաւ եւ յատկութեամբ միլրստմիոջէ, հանդերձ տեղեալ՝ սկսեալ ի մտէն յունվարի:

27. 197բ Ի ՌՄԼԷ (1788) թուոջս: Հրամանաւ տեառնս իմոյ մեծի սրբազան վեհապետիս ես՝ Նա-

հապետ ծառայս նորին, կրկին սկսայ գրել զմասնաւոր խարճն եւ մասրաֆան, որք գրին յստորեւ իմովս ձեռամբ թէ՛ ներ վեհարանոջս եղեալն եւ թէ՛ արտաքոյ վեհարանիս եղեալն, հանդերձ կարգաւ եւ յատկութեամբ՝ սկսեալ ի յունվարի մտէն:

28. 204ա Ի ՌՄԼԸ (1789) թուոջս: Հրամանաւ մեծի տեառնս իմոյ սրբազան վեհապետիս ես՝ Նահապետ դպիրս եւ բնական ծառայս նորին, սկսայ վերստին գրել ի ներքոյ զմասնաւոր եւ զյատուկ խարճն եւ մասրաֆան իմովս ձեռամբ թէ՛ ի ներ վեհարանոջս եղեալն եւ թէ՛ արտաքոյ եղեալն, հանդերձ կարգաւ եւ ամսոց աւուրցն յատկութեամբ՝ սկսեալ ի յունվարի մտէն մինչեւ ցվերջ տարւոյն:

29. 210բ ՌՄԼԹ (1790): Հրամանաւ եւ հարկադրութեամբ գերագոյն տեառնս իմոյ մեծի սրբազան վեհապետիս ես՝ Նահապետ բնական ծառայս նորին, յայսմ ՌՄԼԹ (1790) թուոջս եւ ի մուտն յունվարի սկսայ վերստին ներ դավթարոջս գրել միլրստմիոջէ զմասնաւոր խարճան եւ զելսն Սրբոյ Աթոռոյս թէ՛ ի վեհարանոջս եղեալն եւ թէ՛ արտաքոյ եղեալն: Որք եւ յայտնին յստորեւ կարգաւ եւ ամսոց աւուրցն յատկութեամբ:

30. 217բ ՌՄԽ (1791) թուոջս: Հրամանաւ տեառնս մերոյ սրբազան վեհապետիս ես՝ Նահապետ ծառայս նորին, սկսայ կրկին գրել զխարճն եւ զմասրաֆան թէ՛ ի վեհարանումս եւ թէ՛ արտաքոյ եղեալն: Որք եւ ցուցանին ի ներքոյ կարգաւ ամսոց աւուրցն յատկութեամբ:

31. 224բ ՌՄԽԱ (1792): Հրամանաւ տեառնս մերոյ սրբազան վեհապետիս ես՝ Նահապետ ծառայս նորին, սկսայ վերստին գրել զխարճն եւ զմասրաֆան թէ՛ ի վեհարանումս եւ թէ՛ արտաքոյ եղեալն: Որք ցուցանին կարգաւ ամսոցն յատկութեամբ:

32. 232ա Ի ՌՄԽԲ (1793) թուին: Հրամանաւ տեառն իմոյ եւ ըստ հոգւոյ ծնողի սրբազան վեհապետին, նուաստ ծառայս նորին Աստուածատու վարդապետս սկսայ գրել ձեռամբ իմով թէ՛ ներ վեհարանոջս եւ թէ՛ արտաքոյ եղեալ խարճն եւ մասրաֆան Սրբոյ Աթոռոյս ի սոյն թուոյս յունվարի մտէն:

33. 241բ Ի ՌՄԽԳ (1794): Հրամանաւ մեծի տեառն իմոյ սրբազան վեհապետին ես՝ ծառայս նորին Աստուածատու նուաստ վարդապետս վերստին սկսայ գրել զձեռամբ իմով արարեալ խարճ եւ մասրաֆան թէ՛ ներ վեհարանոջս եղեալսն եւ թէ՛ արտաքոյ եղեալսն միլրստմիոջէ կարգաւ, որք են ի ներքոյ գրեալքս:

34. 249բ ՌՄԽԴ (1795) թուոջս: Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետին ես՝ նուաստ

ծառայա նորին Աստուածատուր վարդապետս սկսայ վերստին գրել զխարճն եւ զմասրաֆն թէ՛ ի վեհարանոջս եւ թէ՛ արտաքոյ եղեալսն, որք յայտնապէս ծանուցանին, կարգաւ աստէն զամենայնըն ամսոց աւուրցն յատկութեամբ:

35. 256ա ՌՄԽԵ (1796) թուոջն: Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետին ես՝ նուաստ ծառայա նորին Աստուածատուր վարդապետս սկսայ վերստին գրել զխարճն եւ զմասրաֆն թէ՛ ի վեհարանոջս եւ թէ՛ արտաքոյ եղեալսն, որք յայտնապէս ծանուցանին, կարգաւ աստէն զամենայնըն ամսոց աւուրցն յատկութեամբ:

36. 263ա ՌՄԽԶ (1797) թուոջն: Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետին ես՝ նուաստ ծառայա նորին Աստուածատուր վարդապետս սկսայ վերստին գրել զխարճն եւ զմասրաֆն թէ՛ ի վեհարանոջս եւ թէ՛ արտաքոյ եղեալսն, որք յատկապէս ծանուցանին, կարգաւ զամենայնն աստէն ամսոց աւուրցն յատկութեամբ:

37. 269ա ՌՄԽԷ (1798) թուոջն: Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետին ես՝ նուաստ ծառայա նորին Աստուածատուր վարդապետս սկսայ վերստին գրել զխարճն եւ զմասրաֆն թէ՛ ի վեհարանոջս եւ թէ՛ արտաքոյ եղեալսն, որք յատկապէս ծանուցանին, կարգաւ ամենայնն աստէն ամսոցն աւուրցն յատկութեամբ:

38. 273ա ՌՄԽԸ (1799): Հրամանաւ տեառն իմոյ սրբազան վեհապետին ես՝ նուաստ ծառայա նորին Աստուածատուր վարդապետս սկսայ վերստին գրել զխարճն եւ զմասրաֆն թէ՛ ի վեհարանոջս եւ թէ՛ արտաքոյ եղեալսն, որք յատկապէս ծանուցանին, կարգաւ ամենայնն աստէն ամսոց աւուրցն յատկութեամբ:

39. 277բ Ի ՌՄԽԹ (1800) թուին: Յայս վայր կեցեալ յաշխարհի հոգեծին ծնողին մերոյ տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին, ի ՌՄԽԸ (1799) թուին եւ ի դեկտեմբերի ԻԸ (28), բարի մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս: Զկնի վախճանմանն, զոր ինչ խարճ եւ մասրաֆ արարաք, հրամանաւ տեղապահ Մինաս վարդապետին եւ այլ կառաւարչացն Սրբոյ Աթոռոյս, գրեցաք կարգաւ միըստմիոջէ՛ սկսեալ ի ՌՄԽԹ (1800) թուէն եւ ի յունվարի մտէն:

40. 280ա Ի ՌՄՄ (1801) թուին: Վերստին սկսաք գրել ըստ առաջնոցն, զոր ինչ խարճ եւ մասրաֆ լինի ձեռամբ մերով:

41 ՏԵՍ նաեւ Բովանդակութիւն 1-5 (սկիզբ):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 20բ (Սիմեոն կթղկս, 1764 ք.) Զայս դէվթէրէս տեսի ըստուգիւ եւ վերահասու եղէ, որ ճիշտ էր. վասնորոյ եւ իբրու խափան արարեալ ի հոկտեմբերէն մինչեւ ի յունվարն, եւ կնքեցի: Դարձեալ. ի սոյն ամիս, ի մարտի ամսէն մինչեւ ի հոկտեմբեր ամիսս, յորում այս դէվթէրս սկսաց, խարճեալ էր մեր որդի Մկրաիչ վարդապետն յիսուն եւ չորս թուման, երկու հազար երկու հարիւր դիան, որք յայլում դէվթէրոջ էին գրեցեալք, որովհետեւ զայն պատառեցաք եւ զայս դէվթէրս ի ձեռն տուեալ՝ գրեցուցաք յայսմհետէ, վասնորոյ եւ յայն դէվթէրինն եւս հանեալ աստ եղաք: Որ է վերոյ գրեցեալք. որք միանգամայն ի միասին լինին այս տարույս խարճեցեալքն, ձեռամբ մեր որդի Մկրաիչ վարդապետին, ութսուն եւ երեք թուման: Վասնորոյ եւ զայսքանս ձեռամբ իմով գրեցի եւ կնքեցի կրկին:

2. 20բ (Սիմեոն կթղկս, 1764 ք.) Ի ՌՄԺԲ (1763) թուին եւ ի մարտի ԻԱ (21), յորն Աւագուրբաթու, լուսահոգի Յակոբ կաթողիկոսն առ Քրիստոս գնաց, եւ ի նոյն օրն շղթայս անկաւ ի պարանոցս մեր, բայց ի յապրիլի Ի (20)ին, որ է հինգերորդ կիրակէ յինանց, օծեցաք: Որոյ տնօրինողին փառք:

3. 32բ (Սիմեոն կթղկս) Արդ՝ վերոյ գրեցեալ հաշլոյի մասրաֆիդ դէվթէրդ, որ սկսեալ է ի ՌՄԺԳ (1764)էն եւ ի յունվարի մտէն մինչեւ ի վերջն դեկտեմբերի. որ ունի զթուղթս ԺԲ (12) եւ զերեսս ԻԳ (23) եւ կէսոյս. եւ յորս գրեցեալ դրամքն են երեք հարիւր հինգ դալամք. եւ որոց բովանդակից դրամից ջամից ջամն է մէկ հարիւր եօթանասուներկու թուման, երեք հազար չորս հարիւր վացսուն եւ հինգ դիան. զորս խարճեալ էր մեր որդի տէր Մկրաիչն հրամանաւ իմով: Զորս տեսեալ՝ ստուգիւ վերահասու եղէ, հաւանեցայ եւ զաբուլ արարի: Վասնորոյ եւ զայսքանս գրեցի իմով ձեռամբ եւ կնքեցի ի հաստատութիւն հաշուաւտեսութեանս իմոյ, ի յընդունելութիւն ապագայից տեսողաց եւ ի միամտութիւն որդեկիս իմոյ հարազատի եւ պաշտօնէի իմոյ բնականի տէր Մկրաչին: Ի ՌՄԺԳ (1764), ի դեկտեմբերի վերջն:

4. 42բ (Սիմեոն կթղկս) Արդ՝ վերոյ գրեցեալ հաշուի մասրաֆի դէվթէրս, որ սկսեալ է ի ՌՄԺԴ (1765) թուէն եւ ի յունվարի մտէն մինչեւ ի վերջն դեկտեմբեր ամսոյն. որ ունի զթուղթս տասն եւ զերեսս քսան. յորս խարճեցեալ դրամքն են ԳճԾԱ (351) դալամք. որոց բովանդակից դրամից ջամից ջամն է երկու հարիւր քառասուն եւ երկու թուման, ութն հա-

զար < դիան > եւ հինգ հարիւր դիան. զորս խարճեալ էր մեր որդի Մկրտիչ վարդապետն հրամանաւ իմով եւ գիտութեամբ: Զորս տեսեալ ի լրանալ տարւոյն՝ ստուգիւ վերահասու եղէ, եւ հաւանեալ՝ զաբուլ արարի: Վասնորոյ եւ զայսքանս գրեցի իմով ձեռամբ եւ կնքեցի ի հաստատութիւն հաշուաւտեսութեանս իմոյ, ի յընդունելութիւն ապագայից տեսողացո՞ր եւ ի միամտութիւն հարազատի եւ բնականի որդեկիս իմոյ եւ հաւատարիմ պաշտօնէի Մկրտիչ վարդապետին: Ի ՌՄԺԵ (1766) թուիս եւ ի մուտն յունվար ամսոյ: Վերջ տարւոյն անցելոյ:

5. 52բ (Սիմէոն կթղկա) Արդ՝ վերոյ գրեցեալ մասրաֆի դէվթէրս, որ մեկնեցեալ է ի ՌՄԺԵ (1766) թուոյն եւ ի յունվարի մտէն մինչեւ ի յեյն դեկտեմբեր ամսոյն. որ ունի զթուղթս Ժ (10) եւ գերեսս քսան. յորս խարճեցեալ դրամքն են ԳՃԶԵ (385) զալամբ. որոց բովանդակից դրամից ջամից ջամն է երկու հարիւր իննսուն եւ երկու թուման, շորս հազար դիան, ԺԱ (11) շահի եւ մէկ փարայ. զորս խարճեալ էր հրամանաւ եւ գիտութեամբ իմով որդեակն իմ Մկրտիչ վարդապետն: Ի լրանալ տարւոյն, տեսեալ իմ զդէվթէրս զայս, վերահասու եղէ ստուգութեանն եւ հաւանեալ՝ զաբուլ արարի: Վասնորոյ եւ զայսքանս իմով ձեռամբ գրեցի եւ կնքեցի ի հաստատութիւն հաշուաւտեսութեանս իմոյ, ի յընդունելութիւն ապագայից տեսողացո՞ր եւ ի միամտութիւն հարազատի եւ բնականի որդեկիս իմոյ եւ վշտակից պաշտօնէի Մկրտիչ վարդապետին: Ի ՌՄԺԶ (1767) թուոյս եւ ի մուտն յունվար ամսոյն յառաջիկայ տարւոյս եւ ի վերջն ամին անցելոյ:

6. 59ա (Սիմէոն կթղկա) Արդ՝ վերոյ գրեցեալ մասրաֆի դէվթէրս, որ սկսեալ է ի ՌՄԺԶ (1767) թուոյն եւ ի յունվար ամսոյ մտէն եւ վերջացեալ ի վերջն դեկտեմբերի. որ ունի զվեց թուղթս եւ զմէկ սոյն երեսս. եւ գերկու հարիւր քառասուն եւ շորս զալամս: Եւ խարճեցեալ դրամից բովանդակ ջամից ջամն է մէկ հարիւր եօթանասուն եւ վեց թուման եւ երեք հազար դիան. զորս խարճեալ էր մեր որդի Մկրտիչ վարդապետն հրամանաւ եւ գիտութեամբ իմով: Ապա ի լրանալ տարւոյն տեսեալ իմ՝ վերահասու եղէ ստուգիւ եւ հաւանեալ՝ զաբուլ արարի: Վասնորոյ եւ զայսքանս գրեցի իմով ձեռամբ եւ կնքեցի ի հաստատութիւն իմոյ հաշուաւտեսութեանս, ի յընդունելութիւն ապագայից տեսողացո՞ր եւ ի միամտութիւն հարազատի եւ բնականի որդեկիս իմոյ եւ հաւատարիմ պաշտօնէի Մկրտիչ վարդապետին: Ի ՌՄԺԷ (1768) թուոյս մերում եւ ի յունվար ամսոյ մուտն, ի յաւարտ տարւոյն անցելոյ: Բաւ է:

7. 65բ (Սիմէոն կթղկա) Արդ՝ վերոյ գրեցեալ մասրաֆի դէվթէրս, որ սկսեցեալ է ի ՌՄԺԷ (1768) թուոյ յունվարի մտէն եւ վերջացեալ ի սոյն թուոյս ի վերջն դեկտեմբերի. որ ունի զվեց թուղթս եւ զմէկ երեսս. եւ գերկու հարիւր եօթանասուն եւ եօթն զալամս: Եւ խարճեցեալ դրամից բովանդակից ջամից ջամն է ԲՃ (200) քառասուն եւ ինն թուման եւ երկու հազար դիան. զորս խարճեալ էր հարազատ որդեակն իմ Մկրտիչ վարդապետն հրամանաւ եւ գիտութեամբ իմով: Ապա ի լրանալ տարւոյն տեսանելով իմ՝ վերահասու եղէ ստուգիւ եւ հաւանեցայ: Վասնորոյ եւ զայսքանս գրեցի իմով ձեռամբ եւ կնքեցի ի հաստատութիւն հաշուաւտեսութեանս իմոյ, ի յընդունելութիւն եւ յազատութիւն յայլեւյայլ սնոտի կարծեաց ապագայից տեսողացո՞ր եւ ի միամտութիւն հարազատի եւ բնականի որդեկիս իմոյ եւ հաւատարմի պաշտօնէի Մկրտիչ վարդապետին: Ի ՌՄԺԸ (1769) թուոյս եւ յըսկզբան յունվարի ամսոյս եւ յաւարտ տարւոյն անցելոյ: Բաւ է:

8. 71բ (Սիմէոն կթղկա) Վերոյ գրեցեալ մասրաֆիս դէվթէրն, որ սկսեալ է ի ՌՄԺԸ (1769) թուոյն ի յունվարի մէկէն մինչեւ ի վերջն դեկտեմբերի սոյն թուոյս. որ ունի զվեց թուղթս եւ զԺԲ (12) երեսս. եւ զԲՃԽԱ (241) զալամս: Յորս խարճեցեալ դրամից բովանդակից ջամից ջամն է մէկ հարիւր իննսուն եւ երկու թուման, հինգ հազար վեց հարիւր դիան. զորս խարճեալ էր, հրամանաւ եւ գիտութեամբ իմով, հարազատ որդեակն իմ վարդապետն Մկրտիչ: Ապա ի լրանալ տարւոյն տեսանելով իմ՝ վերահասու եղէ ստուգութեանն եւ հաւանեցայ: Վասնորոյ եւ զայսքանս գրեցի ձեռամբ իմով եւ կնքեցի ի հաւաստութիւն հաշուաւտեսութեանս իմոյ, ի յազատութիւն ի սնոտի եւ յայլեւյայլ կարծեաց ապագայից տեսողացո՞ր եւ ի միամտութիւն բնականի եւ հաւատարմի որդեկին իմոյ Մկրտիչ վարդապետին: Ի ՌՄԺԹ (1770) թուոյս, սկզբանն եւ ի մուտն յունվարի ամսոյս եւ ի յաւարտ յնոյ տարւոյն անցելոյ:

9. 76բ (Սիմէոն կթղկա) Վերոյ գրեցեալ միոյ տարւոյ մասրաֆի դէվթէրս, որ սկսեցեալ է ի ՌՄԺԹ (1770) թուոյն ի յունվարի մտէն մինչեւ ի վերջն դեկտեմբերի ամսոյն. որ ունի զհինգ թուղթս, զԺ (10) երեսս. եւ զԲՃԸ (208) զալամ մասրաֆս: Յորս խարճեցեալ դրամից բովանդակից ջամից ջամն է ԱՃԽԴ (144) թուման, ԱՌ (1000) եւ ԶՃԿԵ (665) դիան. զորս խարճեալ էր, հրամանաւ եւ գիտութեամբ իմով, հարազատ որդեակն իմ Մկրտիչ

վարդապետն: Ապա ի լրանալ տարւոյն տեսանելով իմ՝ վերահասու եղէ ստուգութեանն եւ հաւանեցայ: Վասնորոյ եւ զայսքանս գրեցի ձեռամբ իմով եւ կնքեցի ի հաւաստութիւն հաշուատեսութեանս իմոյ, ի յազատութիւն յայլեւայլ ի սնոտի կարծեաց ապագայից տեսողացդ, ի միամտութիւն հարազատի եւ բնականի որդեկին իմոյ Մկրտիչ վարդապետին: Ի ՌՄԻ (1771) թուոջս, յսկզբանն, ի մուտն յունվարի ամսոյս եւ ի վերջն անցելոյ ամին: Բաւ համարեցի այսքանս խոհեմապէս նկատողացդ:

10. 82ա (Սիմէոն կթղկս) Վերոյ գրեցեալ միոյ տարւոյ մասրաֆի դէվթէրս, որ սկսեալ է ի ՌՄԻ (1771) թուոյ սկզբէն ի յունվարի մտէն մինչեւ ի յաւարտ տարւոյն ի վերջն դեկտեմբերի. որ ունի զհինգ թուղթ եւ զմէկ երեսս. եւ զԲՃԹ (209) զալամ մասրաֆս: Յորս խարճեցեալ դրամից ջամից ջամն է ընդամէնն ԲՃՂԳ (293) թուման չորս հարիւր դիան. զորս խարճեալ էր, հրամանաւ իմով, բնական եւ հոգեծին որդեակն իմ Մկրտիչ վարդապետն: Տեսի եւ վերահասու եղէ ստուգութեանն: Վասնորոյ եւ զայսքանս ձեռամբ իմով գրեցի եւ կնքեցի ի հաւաստութիւն հաշուատեսութեանս իմոյ, ի միամտութիւն հարազատի որդեկին իմոյ Մկրտիչ վարդապետին եւ յազատութիւն յայլեւայլ կարծեաց ապագայից տեսողացդ: Ի ՌՄԻԱ (1772) թուոջս եւ ի յունվարի մուտն:

11. 87բ (Սիմէոն կթղկս) Վերոյ գրեցեալ մասրաֆի դէվթէրս, որ սկսեալ է ի ՌՄԻԱ (1772) թուոյն եւ յունվարի մտէն եւ վերջանայ յաւարտ տարւոյն ի վերջն դեկտեմբերի. ունի զհինգ թուղթ եւ կէս երեսս. եւ զմէկ հարիւր իննսուն զալամս: Յորս խարճեցեալ դրամից ջամից ջամն է ընդամէնն մէկ հարիւր երեսուն եւ հինգ թուման եւ վեց հազար դիան. զորս խարճեալ էր հոգեծին եւ հարազատ որդեակն իմ Մկրտիչ վարդապետն հրամանաւ իմով: Չորս տեսի եւ վերահասու եղէ ստուգութեանն եւ հաւանեցայ: Վասնորոյ եւ ի ստորեւ զայսքանս գրեցի իմով ձեռամբ եւ կնքեցի ի հաշուատեսութեանս իմոյ, ի բարձունն այլեւայլ կարծեաց ապագայ եկելոց տեսողացդ եւ ի միամտութիւն հարազատի որդեկին իմոյ Մկրտիչ վարդապետին: Ի ՌՄԻԲ (1773) եւ ի յունվար ամսոյ մուտն:

12. 93բ (Սիմէոն կթղկս) Վերոյ գրեցեալ մասրաֆի դէվթէրս, որ սկսեցեալ է ի ՌՄԻԲ (1773) թուոյն, ի յունվարի մտէն եւ վերջացեալ ի վերջն դեկտեմբերի. որ ունի զԺԱ (11) եւ կէս երեսս թղթոյ. եւ մէկ հարիւր իննսուն եւ եօթն զալամ խարճս: Եւ այսքան զալամ խարճից ջամն է ընդամէնն երկու

հարիւր վաասուն եւ եօթն թուման, երկու հազար դիան. զորս խարճեալ էր հարազատ եւ հոգեծին որդեակն իմ Մկրտիչ վարդապետն հրամանաւ իմով վասն ներսիս եւ այլ մեզ հարկաւորաց աղագաւ: Չորս տեսեալ՝ վերահասու եղէ. վասնորոյ եւ գրեցի զայսքանս իմով ձեռամբ եւ կնքեցի ի յստորեւ ի հաստատութիւն հաշուատեսութեանս իմոյ, ի յազատութիւն յայլեւայլ կարծեաց ապագայից եղբարց եւ ի միամտութիւն որդեկին իմոյ Մկրտիչ վարդապետին: Ի ՌՄԻԳ (1774) թուոջս եւ յունվարի մուտն:

13. 100բ (Սիմէոն կթղկս) Վերոյ գրեցեալ միոյ տարւոյ խարճս, որ սկսեալ է ի ՌՄԻԳ (1774) թուոյն, ի յունվարի մտէն եւ ի դեկտեմբերի ԼԱ (31) վերջացեալ. որ է եօթն թուղթ: Եւ ունի զԱՃ (100) իննսուն եւ ինն զալամ խարճս. որոց խարճից ընդամէնից ջամից ջամն է երկու հարիւր երեսուն եւ երեք թուման, վեց հազար դիան եւ չորս փարայ: Չորս խարճեալ էր հարազատ որդեակն իմ Մկրտիչ վարդապետն հրամանաւ եւ գիտութեամբ իմով: Չորս տեսեալ՝ հաւանեցայ. վասնորոյ եւ զայսքանս իմով ձեռամբ գրեալ՝ կնքեցի ի ստորեւ ի հաստատութիւն հաշուատեսութեանս իմոյ, ի յազատութիւն յայլեւայլ կարծեաց յապագայ տեսողացս եւ ի միամտութիւն հարազատի որդեկին իմոյ Մկրտիչ վարդապետին: Ի ՌՄԻԴ (1775) թուոջս <եւ ի> եւ ի մուտն յունվարի: Փառք Աստուծոյ:

14. 106բ (Սիմէոն կթղկս) Վերոյ գրեցեալ միոյ տարւոյ խարճս, որ սկսեալ է ի ՌՄԻԴ (1775) թուոյն եւ ի յունվարի մտէն եւ ի դեկտեմբերն վերջացեալ. որ է զԵ (5) թուղթ: Եւ ունի զԱՃՂ (190) զալամ խարճս. որոց խարճից ջամից բոլորից ջամն է երկու հարիւր երեսուն եւ ինն թուման, ութն հազար դիան եւ Ժէ (17) շահի: Չորս խարճեալ էր հրամանաւ մերով Մկրտիչ վարդապետ հարազատ որդեակն իմ: Չորս տեսեալ՝ վերահասու եղէ եւ հաճեցայ. վասնորոյ եւ զայսքանս ձեռամբ իմով գրեցի եւ կնքեցի ի յստորորտն թղթոյս՝ առ ի հաստատութիւն հաշուատեսութեանս իմոյ, ի յազատութիւն յայլեւայլ կարծեաց ապագայից եւ առ ի միամտութիւն հարազատի եւ ցաւակցի որդեկին իմոյ Մկրտիչ վարդապետին: Ի հազար երկու հարիւր քսան եւ հինգ (1776) թուոջն մերում եւ ի յունվարի մուտն ցաւագնեալ անձամբ եւ շնչահատ կենօք, որ եւ երեւիւր ինձ յայտնապէս, թէ վերջին ամն է իմ: Սակայն կամք Տեառն եղիցի օրհնեալ:

15. 112բ (Սիմէոն կթղկս) Վերոյ գրեցեալ միոյ տարւոյ խարճս, որ է Չ (6) թուղթ եւ ճՂԱ (191) զալամ. որոց դրամից ջամից ջամն է ԲՃԶԹ (289)

թուման ԱՌ (1000) եւ ԶՃ (600) դիան: Զորս հրամանաւ մերով խարճեալ էր Մկրտիչ վարդապետ որդեակն իմ: Զորս տեսեալ՝ վերահասու եղէ եւ հաւանեցայ. վասնորոյ եւ զայսքանս ձեռամբ իմով գրեցի ի յըստորոտն եւ կնքեցի՝ առ ի հաւաստութիւն հաշուաւտեսութեանս իմոյ, ի յազատութիւն յայլեւյայլ կարծեաց ապագայից տեսողաց եւ ի միամտութիւն հարազատի եւ ցաւակցի որդեկին իմոյ Մկրտիչ վարդապետին: Ի հազար ԲՃ (200) քսան եւ վեց (1777) թուոյս եւ ի յըսկզբանն յունվարի ամսոյ գրեցի եւ եւս առաւել կիսակեաց ցաւալի եւ աւելորդ կենօք. մնացեալ օրհնեալ կամեցողութեան եւ ողորմութեանն Աստուծոյ եւ մենաբարեկամի, որոյ կամացն միշտ փառք:

16. 118բ (Սիմէոն կթղկս) Վերոյ գրեցեալ միոյ տարւոյ խարճս, որ է վեց թուղթ եւ մէկ հարիւր յիսուն դալամս. յորս խարճեցեալ գրամից ջամից ջամն է մէկ հարիւր վաւասուն թուման եւ մէկ հազար դիան: Զորս խարճեալ էր Մկրտիչ վարդապետ որդեակն իմ հրամանաւ իմով: Զորս տեսեալ՝ վերահասու եղէ եւ հաւանեցայ. վասնորոյ եւ զայսքանս ձեռամբ իմով գրեցի եւ կնքեցի ի հաշուաւտեսութեանս իմոյ հաւաստութիւն եւ ի միամտութիւն հարազատի որդւոյն իմոյ Մկրտիչ վարդապետին: Ի ՌՄԻէ (1778) եւ յունվարի մուտն: Հասուցանողին փառք յաւիտեան:

17. 127բ (Սիմէոն կթղկս) Վերոյ գրեալ միոյ տարւոյ խարջդ, որ է Թ (9) թուղթ եւ ԲՃԻԲ (222) դալամ, որդեկին իմոյ հարազատի Մկրտիչ վարդապետի արարեալ խարճն է, զոր հրամանաւ իմով արարեալ է ի յունվարի մէկէն մինչեւ ի դեկտեմբերի վերջն ՌՄԻէ (1778) թուին, որ է երկու հարիւր ութսուն եւ ութն թուման: Զորս տեսեալ՝ վերահասու եղէ. վասնորոյ եւ զայսքանս գրեցի ձեռամբ իմով եւ կնքեցի ի միամտութիւն հարազատի որդւոյն իմոյ Մկրտիչ վարդապետին եւ ի հաւաստութիւն հաշուաւտեսութեանս իմոյ: Ի ՌՄԻԸ (1779) եւ յունվարի մէկն: Փառք Աստուծոյ:

18. 143բ (Ղուկաս կթղկս) Վերոյ գրեցեալ եօթն ամսոյ խարճդ, որ է վեց թուղթ, ԺԲ (12) երես եւ ճԻԲ (122) դալամ, մեր Մկրտիչ վարդապետի արարեալ խարճն է ի ժամանակս հոգելոյս հայրապետին

մերոյ, ի ՌՄԻԹ (1780) թուոյն մինչեւ ցվերջն յուլիս ամսոյն, որ է մէկ հարիւր ԼԳ (34) թուման հինգ հազար դիան ԺԴ (14) շահի եւ երկու փարայ: Զոր տեսեալ՝ վերահասու եղէ. վասնորոյ եւ զայսքանս գրեցի ձեռամբ իմով եւ կնքեցի ի միամտութիւն սիրելւոյն իմոյ Մկրտիչ վարդապետին եւ ի հաւաստութիւն հաշուաւտեսութեանս իմոյ եւ յայլոց տեսողաց ի յայլեւյայլ կարծեաց ազատութիւն: Գրեցի ի ՌՄԼ (1781) թվոյն, ի յունվարի մուտն: Վերջ:

19. 147բ (Ղուկաս կթղկս) Վերոյ գրեցեալ հինգ ամսոյ խարճդ, որ է չորս թուղթ, ութն երես եւ ՂԱ (91) դալամ, մեր Մկրտիչ վարդապետի արարեալ խարճն է ի ժամանակս մեր, ի ՌՄԻԹ (1780) թուոյն յօգոստոսի մէկէն մինչեւ ցվերջն դեկտեմբեր ամսոյն. որ է հարիւր հինգ թուման երեք հազար դիան ԺԵ (15) շահի: Զոր տեսեալ՝ վերահասու եղէ. վասնորոյ եւ զայսքանս գրեցի ձեռամբ իմով եւ կնքեցի ի միամտութիւն սիրելւոյն իմոյ Մկրտիչ վարդապետին, ի հաւաստութիւն հաշուաւտեսութեանս իմոյ եւ ի յայլոց տեսողաց ի յայլեւյայլ կարծեաց ազատութիւն: Գրեցի ի ՌՄԼ (1781) թուոյս եւ ի յունվար ամսոյս մուտն: Վերջ:

20. 149բ Գիտելի լիցի եւ այս, զի ի վերոյ գրեցեալ ՌՄԼ (1781) թուոյն եւ ի յունվարի մտէն սկսեալ մինչեւ զմարտի ամսոյս 23, Մկրտիչ վարդապետի խարճեալ եւ գրեալն է, իսկ այժմ հրամանաւ նոյն սրբազան վեհապետի տեսանս իմոյ Նախապետ նուաստ ծառայս նորին սկսայ գրել զսոյն դաւթարս կարգաւ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԿԱՅԻ

290ա (նոարգիր) Վեհապետի ողորմ(ութիւն)՝ Յովսէփու, Կարբեցի տէր Մարգարիմ, 1819, յունվարի 28:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1. 20բ (երկիցս), 32բ (երկիցս), 42բ (երկիցս), 52բ (երկիցս), 59ա, 65բ, 71բ, 76բ, 82ա, 87բ, 93բ, 100բ (երկիցս), 106բ, 112բ, 118բ, 127բ (երկիցս, կարմիր քանափով, ուրանկիւն) «է: /ՍԻՄԷՅՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ /ՌՄԺԲ (1763)»: 2. 143բ, 147բ (կարմիր քանափով, ուրանկիւն) «է: /ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ /ՌՄԻԹ (1780)»:

122
ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 4, վա. 2

ՆՈՐ ԶՈՒՂԱ (Ա)
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ (Բ)


ՌՄԺԸ-1769 (Ա)
ՌՄԻ-1771 (Բ)

Հեղինակ՝ Պետրոս աղայ Յարութիւնեան (Ա), Սիմէոն Ա Երեւանցի կթղկա (Բ): ՍՍԱՅՈՂ՝ Սիմէոն Ա Երեւանցի կթղկա (Ա), Պետրոս աղայ եւ որդին՝ Յարութիւն աղան (Բ):

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 37,2x22,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ խոշոր բոլորգիր (նմուշ՝ 1ա), մանր նոսրգիր (նմուշ՝ 1բ): ՏՈՂ՝ 48+1, 54+5:



նմուշ 1ա



նմուշ 1բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թղթի աչ եզրը պոկուած, տեխսան ընկած-կորած, այժմ՝ նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր (Ա), սեւագիր (Բ), ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1ա «Շնորհագարդ եւ երջանկափայլ տեառն Սիմէօն[ն] սրբազան եւ սրբազանակատար կաթողիկոսին ամենայն Հայոց, առ որ զը(ըդ)նի եւ կարի տենչանօք համբոյր սրբոյ աջոյն ընծայեմ, լիցի պետական գլխիս ողջ յար եւ միշտ – Յայտնի առնեմ ամենապատվական վեհափառութեանդ եւ գերյարգելի արժանաց պահիւ վեհանձնութեանդ քում, զի նամակդ շնորհալի օրհնութեանն ծրեալն եւ թվին Հայոց ՌՄԺԸ (1768)ին եւ ամս[ա]կն փետրվարի ԻԴ (24)ին եկեալ էհաս առ նուաստս նոյն թվին, նոյեմբեր 2 (6)ին... Ոխչ լեր պատվական գլուխտ մեր ի պարծանս բոլոր ասկին մերոյ, ամէն: 1769, փետրվարի 12, վե[րջ]. որ եմ սրբազան վեհիս ծառայ Պետրոս Յարութիւնեան»: Պետրոս [աղայ] Յարութիւնեանը Սիմէոն կթղկսին

տեղեկացնում է, որ ստացել է 1768 թ. փետրուար 24 թուակիր նամակը եւ շնորհակալութիւն է յայտնում սփոփանքի ու մխիթարութեան համար, որ նուիրակ Յովսէփ վրդ-ի հետ ուղարկել է սբ. մեռոն եւ օրհնութեան կոնդակ: Խնդրում է կթղկսից կարգադրել «սեւագլխացն Ջուղա[յ]ու», որ «մին հատ խոնարհ եւ համեստ անձն ուղարկեն», որ իր գործը կատարելուց յետոյ վերադառնայ իր վանքը եւ գայթակղութեան տեղիք չտայ:

2. 1բ «Յորմէ ժամանեցի թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց հանդերձ ամենառատ ողորմութեամբն եւ զթութեամբն Աստուածային... Ողջ լեր ի Տէր, զօրացեալ միշտ ի նոյն. եւ շնորհօք սրբոյ եւ մեծի Աթոռոյս ընդ քեզ եւ ընդ քոյայինսն ամենայն եղիցի հանապազ. ամէն: 1220 (1771), յունվարի»: Սիմէոն կթղկսի պատասխան սեւագիր նամակը Ջուղայեցի Պետրոս աղային եւ նրա որդի Յարութիւն աղային, որտեղ բարձր է գնահատում Պետրոս աղայի վերաբերմունքն առ Սբ. Աթոռ եւ առ նուիրակ Յովսէփ վրդ-ը: Նաեւ ցասակցութիւն է յայտնում Պետրոս աղային եղբօր՝ Բարսեղ աղայի մահուան առիթով: Ինչ վերաբերում է նրա խնդրանքին, որ կոնդակով դիմի «սեւագլխացն Ջուղա[յ]ու», որով նուիրակն իր գործը կատարելուց յետոյ վերադառնայ իր վանքը եւ գայթակղութեան տեղիք չտայ, այդ պահին նպատակայարմար չի գտնում՝ Մայր Աթոռի նուիրակի այնտեղ գտնուելու կապակցութեամբ. «զի թերեւս գայթակղութիւն լիցի ոմանց, եւ շատք ի նուիրակէն մերմէ դժուարացին, թէ նա է արարեալ», իսկ երբ նուիրակը ետ վերադառնայ Մայր Աթոռ եւ նոր նուիրակ ուղարկի, այդ ժամանակ նրա խնդրանքը կկատարի: Յայտնում է նաեւ, որ ստացել է Յովսէփ վրդ-ի միջոցով ուղարկուած 3 մեծ վարագոյրները, շուրջառները, ուրարները եւ այլ նուէրները:

Ծնթ. Սիմէոն կթղկսի սեւագիր նամակը գրուած է Պետրոս աղայ Յարութիւնեանի թղթի ետնամասում:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

Տէ՛ս Բովանդակութիւն 1-2 (վերջում):


123
ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

բղթպ. 4, վառ. 3

ԱՐԶՐՈՒՄ

ՌՄԺԸ-1769

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ ռեաուր բոլորակ, ներսում «DA» մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,9x-24,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ խոշոր բոլորգիր (նմուշ՝ 1ա), նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 25+20:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերը եւ վնասուած մասերը նորոգուած:

ԻՄԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1ա «Զօրութիւնս գրոյս այս է, որ թարեղէս յառաջ ողորմած հոգի Պետրոսի որդի պարոն Սարգիսն եւ Թիֆլիզեցի ողորմած հոգի Մելքոնի որդի պարոն Մկրտումն Բասրայ վեքիլ են լինում ողորմած հոգի Ասապովին... Այս եղև թիվն ՌՄԺԸ (1769) յունիսի Ը (8)ումն, Արգրում»: Ասապովի մահից յետոյ նրա լիագոր անձանց՝ Պետրոսի որդի պրն Սարգսի եւ Թիֆլիզեցի Մելքոնի որդի պրն Մկրտումի (յետագայում՝ հնգգլ Մկրտումի որդի պրն Մելքոնի) միջեւ առաջացած վէճի հետ կապուած հաւաքուածները համաձայնագիր են ստորագրում, որով հաստատում են, որ պրն Սարգսի տուած գումարը Թեւանին «Ասապովի ճնաթէն այ, էլ ուրիշ բան չի կայ, վասնորոյ մենք՝ վարդապետս, քազ(հ)անայք եւ ջոմիաթքս էս մահուրս գրել տվինք եւ մօհրեցինք, որ տեսողաց հաջոյ լինի եւ պարոն Մելքոնին՝ միայմտութիւն»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տե՛ս Բովանդակութեան վերջում:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՆ

1. 1ա եւ՝ Արգրումցի Մարիողլի մահտեսի Գրիգորս վերայհասու եղայ, որ Թեւանին առած փողն Ասապովին կողմանէն է (ներեւում՝ կլոր օղակ):

2. 1ա եւ՝ Ղափանցի Գրիգորի որդի Դուկասս վերայհասու եղայ, որ Թեւանին առած փողն Ասապովին կողմանէն այ (ներեւում՝ կլոր օղակ):

3. 1ա եւ՝ Ղափանցի Պապի որդի Ագրահամս վերայհասու եղայ, որ Թեւանին առած փողն Ասապովին կողմանէն այ (ներեւում՝ կլոր օղակ):

4. 1ա եւ՝ յԱկէնցի մահտեսի Սուգիասս ասլն տէսի, սավատըս մօհրէցի:

5. 1ա եւ՝ յԱկցի մահտեսի Կար[ա]յեաի, որդի Գեվորիս յասլն տեսիլ եւ սավտիս մօհրցիլ:

6. 1ա Սավատիս ասլն մօհրելի՛ սավատս էլ մօհրեցի Ոհանի որդի Առաքելըս:

7. 1ա եւ՝ Ակնցի մահտեսի Սուփասի որդի մահտեսի Յովանեսս վերայհասու եղայ վկայից բերանէն Թեւանին առած ըստակն Ասապովին կողմանէ է (ներեւում՝ կլոր օղակ):

8. 1ա եւ՝ մահտեսի Բարաջանի որդի մահտեսի Յովանեսս վերայհասու եղայ, որ Թեւանին առած փողն Ասապովին կողմանէն այ (ներեւում՝ կլոր օղակ):

9. 1ա եւ՝ Ոհանի որդի մահտեսի Առաքելս վերայհասու եղայ, որ Թեւանին առած ըստակն Ասապովին կողմանէն այ (ներեւում՝ կլոր օղակ):

10. 1ա եւ՝ մահտեսի Փիլիպոսըս ասլն տեսի եւ սավատըս մէհրեցի:

11. 1ա եւ՝ յԱրաբկերցի մահտեսի Սիրականեան Պապիկս ասլն մէհրած եմ եւ սաւատս մէհրցի:

12. 1ա եւ՝ Արապկերցի մահտեսի Սիրականեան Պապիկս վերայհասու եղայ, որ [Թեւան]ին առած փողն Ասապովին կողմանէն այլ:

13. 1ա եւ՝ Ղափանցի մահտեսի Բինեթի որդի մահտեսի ///ս վերայհասու եղայ, որ Թեւանին առած փողն Ասապովին կողմանէն այ (ներեւում՝ կլոր օղակ):

14. 1ա Եփրիկեան մահտեսի Գրիգորըս ասլն տեսի եւ սավատըս մօհրեցի:

15. 1ա եւ՝ Արգրո[ւ]մցի Մսերիողլի մաղտեսի Գրիգորս ասլն մօհրած էի եւ սեվատս մօհրեցի:

16. 1ա եւ՝ Ղափանցի Գրիգորի որդի Դուկասս սավատիս ասլն մօհրելի՛ [ս]ավատս էլ մօհրեցիլ:

17. 1ա եւ՝ Կարնոյ քաղաքիս դէտ Բաղտասար վարդապետս վերայհասու եղէ, որ Թեւանին առած ըստակն Աստուածապովին կողմանէն է եւ ոչ այլ իրաց (ներեւում՝ կլոր օղակ):

18. 1ա եւ՝ տէր Անանիաս վերայհասու եղայ, որ Թեւանին առած ըստակն Ասապովի կողմանէն այ, այլ ոչ ուրիշ իրաց (ներեւում՝ կլոր օղակ):

19. 1ա ես՝ տէր Պողոսս վերայհասու եղայ, որ թեւանին առած ըստակն Ասապովի կողմանէն այ, այլ ոչ ուրիշ իրաց (վերետում՝ կոր օղակ):

20. 1ա ես՝ տէր Գրիգորս վերայհասու եղայ, որ թեւանին առած ստակն Ասապովի կողմանէ է, այլ ոչ ուրիշ իրաց (վերետում՝ կոր օղակ):

ԿՆՔԱԳԻՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՍՈՒՔԻԱՍ /ՌՃ/ՂԲ (1743)»: 2. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ԳԷՆՐԳ /վերետում եւ ներետում՝ արա-

բառաւ)»: 3. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԱՌԱՔԱ /ՌՃՁԸ (1739)»: 4. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՓԻԼԻՊՈՍ»: 5. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՄՐԱՊՈՒՆ»: 6. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԳԻՐԳՈՐ /ՌՃՀԷ (1728)»: 7. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՔԻՐԳՈՐ/»:

124

ՍՍԱՅԱԿԱՆ


թղթպ. 4, վաւ. 4

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՄԺԸ-1769

Հեղինակ՝ ուստայ Գասպար: ՍՍԱՅՈՂ՝ Մկրտիչ վրդ.:

Թերթ՝ 1. չգրուած՝ 1բ: Նիիթ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով (կիսատ, անընկալելի): Մեծնիթիին՝ 14,8x10,9: Գրնիթիին՝ միասին: ԳիՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 17+3:



Նմուշ 1ա

Վիճակ՝ բաւարար. եզրերը ծալուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Զօրութիւն գրոյս այս է, որ ի ՌՄԺԸ (1769)

թուոյն եւ ի մայիսի ամսոյն սկսայ ես՝ ուստայ Գասպարս զեկեղեցոյ տանիսն շինել... եւ զայս թուղթս ետու ի միամտութիւն Մկրտիչ վարդապետին, որ էլ կէս փող առնելացուկ շունիմ ի նմանէ»: Ուստայ Գասպարի տուած ստացականը Մկրտիչ վրդ-ին՝ եկեղեցու տանիքը կառուցելու համար ստացած 77 թումանի եւ 1000 դիանի դիմաց:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ № 127:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տե՛ս Բովանդակութեան սկզբում:

ՎԿԱՅՈՒԹԻՆ

1ա ես՝ լուսարար Գրիգոր վարդապետս վերահասու եւ վկայ եմ:

ԿՆՔԱԳԻՐՈՇՄ՝ 1. 1ա (մատնադրոշմ ուստայ Գասպարի): 2. 1ա (սեւ քանաֆով, ձուածեւ) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԳԻՐԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ»:

125


ՆՆԻՐԱԳԻՐ

թղթպ. 4, վաւ. 5

ՌՄԺԹ-1770

Հեղինակ՝ սենատոր Ջիլերին (Բ): ՍՍԱՅՈՂ՝ Եկատերինա կայսրուհի (Ա), Իվլելեր Իւան Լազարեւ (Ա, Բ):

Թերթ՝ 2. չգրուած՝ 2աբ: Նիիթ՝ թուղթ: Մեծնիթիին՝ 35,3x22,4: Գրնիթիին՝ եռասին: ԳիՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 32, 15:



Նմուշ 1ա

Վիճակ՝ բաւարար. նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ թարգմանությունն ուսերէնից, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1ա «1770, ապրիլի: Առաջին խնդրագիր հասարակութեան Հայոց ի Ս.Պ.բուրդ եւ ի Մոսկով վասն շինութեան եկեղեցեաց՝ մատուցեալ իւրուհայ կայսերութեան Եկատերինի իմպերատրիցայի, Իվելեր Իւան Լազարեւ ընդ վաճառականաց ի Ս.Պետրբուր եւ ընդ եղեղոցն ի զինուորական ծառայութեան – 1. Ազգն Հայոց եկեալ ի վաղուց ժամանակաց ի Բուսաստան ի միջի այլոց ի հերոց նախնեաց ընկալեալ են զամէնողորմած զրամատ եւ պրիվելլագրիայս... ամէն[ո]ղորմած (թագաւոր) կամ թագուհի ամենախոնարհաբար խնդրեմք ի Ձեր կայսերական մեծութեան այսմ մերում ի գաղազղայ առնել վճռագատութիւն. ապրիլի (տեղը բաց) 1770ի»:

Սանկտ Պետերբուրգի հայերի 3 կէտանոց խնդրագիրը, որով խնդրում են Մոսկուայում եւ Սանկտ Պետերբուրգում կառուցուած հայոց եկեղեցիների համար յատուկ հրովարտակ, որպէսզի չկրկնուի ելիզավետայ Պետրովնայ կայսրուհու 1742 թ. յունվարի 16ի դրած արգելի նման դէպքը:

2. 1բ «1770, յունիսի: Նորին կայսերական մեծութիւնն՝ ի վերայ իմում ամենանպատակօրէն դակլատի... եւ վասն այնի գետնոյ ի գլխաւոր պօլիցայէն տալ այնմ Իվելեր Լազարեւին եւ այլոցն խնդրուածոց դաննամիւ (որ է գիր վասն տալոյ) ղեներալ պօլիցմետր, ղենարալ պօրուչիկ, սենատոր Չիչերին»: Սենատոր Չիչերինի գրութիւնը Իվելեր Լազարեւին, որով տեղեկացնում է, որ «ի զլավնի պօլիցեիւ ունիցի հրամայել զայն տեղի նշանակել վասն շինութեան եկեղեցւոյն տալ»:

126

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 4, վաւ. 6

ՄԱԴԻԱՍ (ՀՆԴԿԱՍՏԱՆ)

ՌՄԺԹ-1770

ԳՐԻԶ՝ Յովսէփ վրդ.: ՍՏԱՅՈՂ՝ պրն Գրիգոր լուսահոգի Միխայէլ:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 31,6x20,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 39:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխուած: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «է: Ես՝ Սուրբ Էջմիածնայ նուիրակ Յովսէփ վարդայպետս գիրս ձեռացայգրով եւ իմ մօհրովն

մօհրած տուի պարոն Գրիգոր լուսայնոցի Միխայէլին... եթէ Աստուծոյ ողորմութեամբն խնդրվածն կու հաստատեն, գրիս զօրութիւնն ոչ ինչ արժողութիւն չունի»: Սբ. Էջմիածնի նուիրակ Յովսէփ վրդը Մազրասից գրում է, որ պրն Գրիգոր լուսահոգի Միքայէլի հետ պայմանաւորուածութեան համաձայն՝ վերջինս Միմէոն կթղկսին է տրամադրել որոշ գումար իր եւ ծնողների յիշատակին Էջմիածնում տպագրատուն եւ մի մասնատու զանգակատուն կառուցելու համար:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա եղեւ Մատրաստմն, իմով ձեռամբ գրեցի եւ կնքեցի, թիւն Փրկչին մէն հազար եօթն հարիւր եօթնաստուն (1770) եւ ամսեանն սեպտեմբերի ԺԲ (12)ին, վերջ: Նուիրակ՝ Յովսէփ վարդայպետ (վերջում՝ կլոր օղակ):

ՆՇՈՒՄ՝ 1ա լուսացֆում (թուաբանական հաշուարկ):

127

ՍՏԱՅՈՂԿԱՆ


թղթայ. 4, վաւ. 7

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՄԻ-1771

ՀԵՂԻՆԱԿ՝ ուսույ Գասպար: ՍՏԱՅՈՂ՝ Մկրտիչ վրդ.:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22,1x13,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 20+3:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Պատճառ գրոյս այս է, որ ի ՌՄԻ (1771) թուին եւ ի յապրիլի ամսոյ ժՁ (16) ումն սկսեալ ես՝ քարտաշ ուստայ Գասպարս զերկու տանիսն խորանացն Սրբոյ Աթոռոյն էջմիածնի իճարայ արարի... եւ ետու մեր հայր Սկրտիշ վարդապետին ի միամտութիւն, որ եւ տեսողացդ եւս ընդունելի լիցի, Աստուած շէն պահեսցէ զՍուրբ Աթոռն եւ զսրբազան

վեհապետն»: Քարտաշ ուստայ Գասպարի տուած ստացականը Մկրտիշ վրդին՝ Սր. Աթոռի երկու խորանների տանիքները նորոգելու համար ստացած 45 թումանի դիմաց:

Ծնթ. Հմմտ. ւստ № 124:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տէ՛ս Բովանդակութեան սկզբում:
ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1ա Սրբոյ Աթոռոյս միաբան Եսայի վարդապետս վասն Աստուծոյ վկայեմ բանիս վերոյ գրեցելոցն:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. 1ա (մասնադրոշմ ուստայ Գասպարի): 2. 1ա (սեւ թանաֆով, ձուածել) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԳՐԻԳՈՐ /ՎԱՐԴԱՊԵՏ ՌՃՁԱ (1732)»: 3. 1ա (սեւ թանաֆով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԵՍԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏ /1198 (1749)»:

ԳՐՈՒԹԻՆ


թղթայ. 4, վաւ. 8 ար

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ (Բ)


ՌՄԻ-1771

ԳԻԻԶ՝ Բաղդասար վրդ. (Ա), Սիմէոն Ա Երեւանցի կթղկս (Բ): ՄՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա Երեւանցի կթղկս (Ա), Բաղդասար վրդ. (Բ):

ԹԵՐԹ՝ 4 էջ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսապատկերով՝ եռամանիկ: ՄԵԾՈՒԹԻՆ՝ 22x13,5: ԳՐՈՒԹԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1, 3): ՏՈՂ՝ տարբեր:



Նմուշ 1



Նմուշ 3

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ:
ԻՍԿՈՒԹԻՆ՝ բնագիր (Ա), սեւագրութիւն (Բ), ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

Ա. 1-2 «Աստուածընդիր եւ շնորհազարթ հայրապետիս իմոյ սուրբ աշ եւ մաքուր գարշապար համբուրեմ եւ զօրհնութիւն խնդրեմ. լէր ողջ ի Քրիստոս... Լէր ողջ ի պարծանս Բաղդասար ծառայիդ»: Նուիրակ Բաղդասար վրդ-ը գրում է Սիմէոն կթղկսին, որ տէր Վահանի ձեռնով ուղարկած իր գրութեան պատասխանը չի ստացել եւ, ահա՛, Յովանէսի միջոցով ուղարկում է 103 տաւար, իսկ ինքը կվերադառնայ մի քանի օրից՝ նշելով. «մաքուր աղօթիւք գամ առ տէրութեանդ, կրկին առնում զօրհնութիւն տեառնդ իմոյ, յայնժամ հանգչի հոգի ի մարմնի իմոյ եւ ի զրավբանես»:

Բ. 3 «Յորմէ սիրով եւ օրհնութեամբ բազմազիտասջիր սիրելի որդի մեր Պաղտասար խոհեմառատ վարդապետ... Ողջ լեր ի Տէր»: Սիմէոն կթղկսի պատասխան գրութիւնը նուիրակ Բաղդասար վրդին, որով տեղեկացնում է, որ հոկտեմբերի 13 թուակիր նամակը եւ 103 տաւարը ստացել է Յովանէս տղայի ձեռնով, իսկ տէր Վահանի միջոցով ուղարկած նամակն էլ ստացել է եւ պատասխանն ուղարկել տրց. Ստեփանի միջոցով, որ Բայազէտից պիտի ուղարկած լինի, եւ յոյս է յայտնում, որ արդէն ստացել է:

Կարգադրում է Բաղդասար վրդ-ին վերադառնալ Մայր Աթոռ: Տեղեկացնում է նաև Մախսուտ բէկի եւ Պետրոս վրդ-ի պայմանաւորաւորութեան մասին, որով նրանք խնդրել էին Սբ. Կարապետի վանքին առաջնորդ նշանակել: Իսկ Աբրահամ վրդ-ին էլ գրել էր Սուրբ Աթոռ գալ, բայց նա չի կամեցել, ուստի թոյլատրել է նրան տեղում մնալ որքան կամենայ:

Ծնթ. Սիմէոն կրդկսի սեազիր նամակը գրուած է նուիրակ Բաղդասար վրդ-ի թղթի վրայ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 2 (Բաղդասար վրդ.) Գրեցաւ ի ՌՄԻ (1771) թվոջն, հոգատեմբերի ԺԳ (13):

2. 3 (Սիմէոն կրդկս) Գրեցաւ ի ՌՄԻ (1771), ի հոկտեմբեր ԻԶ (26):

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

3 (Սիմէոն կրդկս) Ա (1) փուսուլայ եւս գրեցաւ առ սա վասն Բաղիշու եպիսկոպոսացուացն:

ՀԱՍՅԷ

4 Աստուծով: Հասցէ գիրս ի սուրբ դաստակն սրբազան վեհիս իմոյ ի բարին. ամէն:


ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 2 (Կիսաա, սեւ թանաքով, բոլորակ) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱԽԱՅ /ՊԱՂՏԱՍԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ///»:

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

ՌՄԻԱ-1772

ՀԵՂԻՆԱԿ՝ Սիմէոն Ա երեսանցի կրդկս:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ եռամանիկ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 38,3x26: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 33:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – եկեղեցի (կրդկս բառի վրայ)՝ 1ա, թոչնագիր՝ 1ա: Գոյներ՝ կարմիր, կանաչ, դեղին (լուսանցագծերը՝ կարմիր):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշարը գունափոխուած, հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Սիմէոն կաթողիկոս եւ ծայրագոյն պատրիարքս ամենայն Հայոց, առաքելականի եկեղեցոյս Քրիստոսի եւ լուսագարդի Աթոռոյս Սրբոյ էջմիածնի – Յորմէ ժամանեցի թուղթ սիրոյ եւ ողջունի, օրհնութեան եւ շնորհաց ի վերայ սիրելի եւ հոգեւոր որդւոցդ մերոց... Ուստի պատուիրեմ զայդ մեծավարձ առաքինութիւնդ ի ձեզ հաստատուն պահել, որով միշտ զշնորհս եւ զօրհնութիւնս Սրբոյ Աթոռոյս ընկալջիք. ամէն»:

Սիմէոն կրդկսի օրհնութեան կոնդակը Ղազարի տանուաւերեթին եւ ժողովրդին, որով տեղեկացնում է, որ ստացել է գրութիւնը Հաղարծնի թեմի եւ վիճակի հետ կապուած: Պատասխանը «բերանով» փոխանցել է Ղազարի առաջնորդ Մանուէլ վրդ-ի եւ տանուաւեր պրն Զալիի միջոցով: Նաև շնորհակալութիւն է յայտնում Սբ. Աթոռին ընծայած իւղի, պանրի եւ մատաղացովի համար:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ ի ՌՄԻԱ (1772) թուին, ի հոկտեմբերի Ը (8) եւ ի Սուրբ Աթոռս էջմիածին:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (կարմիր թանաքով, բոլորակ, ներսում՝ պատկերագրութեամբ) «է: ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՌՄԺԲ (1763)»:


130 ՆՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ

թղթպ. 4, վառ. 10

ԺԸ դար

ՄՏԱՅՈՂ՝ Յովսէփ վրդ. Սանահնեցի (Արղու-թեան):

ԹԵՐԹ՝ 20 (էջակալուած 1-29՝ հաշուի շա-նելով չգրուած թերթերը). չգրուած՝ 1աբ, 2բ, 6բ, 17ա-20բ: ԳՐԱԿ՝ Ա.Ճ.10: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ իաշակիր թագի ներհե-տամ «GR», լուսապատկերով՝ իաշակիր եւ թա-գակիր, կրկնակի շրջանակի մէջ պատկերուած է գաւազանակիր միապետ, ձախ ձեռքով՝ դափնու նիւլ: ՄԵՏՈՒԹԻԻՆ՝ 32,1x20,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ վեցա-սիւն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ Յա): ՏՈՂ՝ 41-53:



նմուշ Յա

ՎԻՃԱԿ՝ բարաբար. անկազմ, մամուլի թելերը պոկուած:

ԻՄԿՈՒԹԻԻՆ՝ արտագրութիւն, ձեռագիր:

Ծնթ. 1. Բնօրինակը տես ա՛ստ Nո 140, Բովանդակու-թիւն 1-10, 12-6, 20-3:

2. Արտագրութեան շարունակութիւնը տես ա՛ստ Nո 204:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Մատեանում Յովսէփ վրդ. (յետագայում՝ ար-հեպս.) Սանահնեցին (Արղութեանը) գրանցել է տունը 1774-1776 թթ. ընթացքում կտակներից եւ խոստումներից, ննջեցելոց եւ կենդանեաց յիշա-տակութիւններից, նուիրակութիւններից, սրբա-դրամներից, առաջնորդական գանձանակից, պսակադրամից, հասարակ ննջեցելոց հոգեբա-ժիններից, Մայր Աթոռից ուղարկած, բոլոր ար-դիւններից ստացած գումարներն ու ծախսերը.

1. 1ա Յանկ գլխատր բանիցն դաբարիս – Յառաջաբանութիւն, Կտակ եւ խոստմունք... Նուի-րակութիւն Ղզարու:

2. 3բ-6ա Թիւն 1774 եւ յուլիս ամիս. սկիզբն գործոյն եւ մուտք արդեանցն, նուիրակութեան, կտակից եւ խոստմանց՝ ըստ նշանագրութեանց

խրաբանչիւրոցն – ԴԻ (4000). 1. Թիւն 1774 եւ ամ-սեանն յուլիսի, վաղճանեցաւ տէր Կարապետն, եւ նորին որդի Նազարէթն Սրբոյ Աթոռոյն ետուն հոգէ-բաժին շորս հազար դիան... 2ձ՝ (600) Ղ(=թուման) ԺԲ (12) Ղ(=թուման) ԼԻ (8000) ԲՃ՝ (200) Ծ՝ (50). Վերոյ բոլորի գումարն է: Յովսէփ արքեպիսկոպոս:

3. 7ա-9ա Իսկ յիշատակիիք, զորս տունեալ եմ մեզ յանուն կենդանեաց եւ ննջեցելոց, ի դունն սրբոյ եւ մեծի Աթոռոյն, 1774 եւ առ յապայս, եմ գրեցեալքս ի ներոյ, զորս եւ ընկալցի տէր Աս-տուածն ամենայնի ի հաճոյս կամաց իւրոց, եւ զվոխարէնն հատուցէ ի հոգիս ննջեցելոցն զիւր առատ ողորմութեան շնորհս աստ եւ ի հաճութե-անն միշտ. ամէն – 1. Թիւն 1774: Փառակեցի պարոն Ոսկանի քոյր կոյս եղիսաբէթ ապաշխա-րօղն ետ ի դունն սրբոյ եւ մեծի Աթոռոյն էջմիած-նի, վասն կենդանեաց եւ ննջեցելոց իւրոց, գրչեայ տափակագիր Աւետարան... 72. Սարգիս աղայի կենակից Խանփարի խանուժն ետ մէկ սուղանի:

4. 9բ Յիշատակիք վասն Սուրբ Խորվիրապալ – 1. Մէկ արծաթեայ սկիհ՝ Աճուկեցի Ասկարխանենց Թումանի որդի պարոն Յովսէփն ետ... Ի Սուրբ Աթոռն ուղեւորեցաւ բոլորն:

5. 10ա Թիւն 1775 եւ յունիս ամսոյ 2: Շնոր-հիւ Տեանն սկիզբն նուիրակութեան Աստրախ-անու օրհնեալ քաղաքին, որք նշանագրին աստէն անուանք տուողացն եւ անուանք քահանայիցն, որք ըստ կարեաց իւրեանց[ը] եղեն մեզ գործա-կիցք թէ՛ ի նուիրակութեան եւ թէ՛ յայլսն. որք եւ յԱստուծոյ վարձատրեցին. եւ խնամք ամեն-ակալին Աստուծոյ, եւ շնորհք Սրբոյ Աթոռոյն, եւ օրհնութիւն սրբազան հայրապետին եղիցի ի վերայ ժողովրդեանն. ամէն – է (7) Ղ(=թուման) Գրիգոր աղայն ետ... ԱՃ՝ (100) ԺԴ՝ (14) ԴԻ (4000). Գումարն եղաք, որ է ԱՃԺԴ (114) Ղ(=թուման) ԴԻ (4000): Աստ[ա]խանու նուիրակութիւնն՝ այսբան: Յովսէփ արքեպիսկոպոս:

6. 10աբ Կուսագարդ մօրն մերոյ Սրբոյ Աթո-ռոյն նուիրակութիւն եւ առաջնորդական արդիւնք Մօսկովու տիրախնամ քաղաքի լուսաւորչակրօն օրհնեալ ժողովրդեան, որք տունեալ էին ի ձեռն Վարդան վարդապետին մերոյ ի 1776 թուոջն,

որք եւ ի ձեռանէ Տեառն ընկալցին զողորմութիւնն եւ զերկնից արքայութիւնն: ԺԲ (12) Ղ(=թուման) ԳԹ (3000). ի 1769 թուին մինչեւ ի 1776 թիւն թէ՛ գանձանակ Սրբոյ Աթոռոյն եւ թէ՛ առաջնորդական բոլորն եղեւ: (Նուիրակութիւն) – Ը (8) Ղ(=թուման) Եղիազար ազնիւ աղայն ետ Սրբոյ Աթոռոյ՝ հոգեւոր ծնողին իւրոյ ողորմութիւն եւ նուէր... ԽԴ (44) Ղ(=թուման) ԳԹ (3000). Պարոն Մարկոսն. եւ այլք եւս շատք գոն՝ չգրեցաք, բայց բոլորն թէ՛ նուիրակութիւնն եւ թէ՛ առաջնորդական արդիւնքն Մօսկովու եւ քառասուն եւ չորս թուման, Գ (3) <երեք> հազար [դիան]:

7. 10բ Պետրպօրճու օրհնեալ մերագնեայ ժողովրդեան նուրակութիւնն է, զոր տէր Յօհաննէս ծերունագարդ քահանայն ժողովեալ էր եւ յանձնեալ աղայ Մինասիւն Դիլանչեան, որ էհաս մեզ եւ աստ նշանեցաք – Բ (2) Ղ(=թուման) ԵԹ (5000). Պարոն Գրիգոր աղայն Կնպանեան... ԺԵ (15) ԱԹ (1000). Բոլորի գումարն է տասն եւ հինգ թուման, մին հազար [դիան]: Յովսէփ արքեպիսկոպոս:

8. 10բ-1ա Սկիզբն այլ կերպ տրոց աստուածախնամ ժողովրդեանն հայոց, որք ի յԱստուխան քաղաքի բնակեալք կան, այս է՝ զարբարամս եւ զայլս, զորս ցուցաք ի խորագիրն նուիրակութեան. զորս եւ գրեմք կարգաւ, եւ նախկինս լիցի յաղագս սրբադրամին, որ եղեւ ի 1774 թուին եւ յօգոստոսի ամսոջն: Սրբադրամ – ԱԹ (1000). Աւագի Սիմէօնն ետ... ՀԹ (79) Ղ(=թուման) ԶԹ (6000) ԲՃ (200). Վերոյ հինգամեայ սրբադրամի գումարն եղեւ: Յովսէփ արքեպիսկոպոս:

9. 11ա Շարք դասատրութեան գանձանակացն ժողովման, որք ի կիրակեան առաջնորդական անուամբ, որ եղեւ ի թիւն 1774, յունիսի 15: Գրին իւրաքանչիւր ամսոյ եղեալ դրամոց ջամսն ի ներքոյ կարգաւ: Յուլիս – ԴԹ (4000) ԸՃ (800) ԻԴ (24). Այս ամսոյս գանձանակն եղեւ չորս հազար ութ հարիւր քսան եւ չորս դիան... ԻԲ (22) Ղ(=թուման) ԲԹ (2000) ԷՃ (700). Հանդերձ վերոյ գրեցելովն է ԻԲ (22) Ղ(=թուման) ԲԹ (2000) ԷՃ (700) դիան: Յովսէփ արքեպիսկոպոս:

10. 11ա Կարգ եւ դասատրութիւն մտիցն, որք ի հարսանեաց ի 1774 թուին, սկսեալ ի յունիսէն եւ վերջացեալ ի 1775, ի յունիս ամսոջ: (Մուսք հարսանեաց) – ԱԹ (1000). Տիրացու Սարգիսն մեր... ԺԴ (14) ԲԹ (2000) ԲՃ (200). Մտից գումարն եղեւ տասնչորս թուման, երկու հազար ԲՃ (200) դիան: Յովսէփ արքեպիսկոպոս:

11. 11բ Դիցում աստանօր եւ վասն հասարակ ննջեցելոցն գնուէրսն [յ]իւրաքանչիւր կարգեալ յանուանէ. յըսկզբանէ մինչեւ ցսկիզբն յուլիս ամսոյ. զոր կարգեցէ տէր Աստուածն ամենայնի ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան իւրոյ. ամեն: Ի 1774 թուին հասարակ հոգէքաթինք մինչեւ ի 1775 – ԱԹ (1000). Վասն երեխայի միոյ տէր Ոսկանն... Թ (9) Ղ(=թուման) Ծ (50). Վերոյ երեք տարեկան ննջեցելոց հոգեքաթնից գումարն է: Յովսէփ արքեպիսկոպոս:

12. 11բ-3ա [Հասք Առաջնորդական]: Սկիզբն կալցումք գրել աստանօր եւ զմնացեալ մուսան առաջնորդական անուամբ, որք ոչ գրեցան ըստ կարգի: Այս է՝ գտունօրհնէսն, եւ զերրորդի ամի զարբարամսն իւրաքանչիւր ամի, զդրամից ջամսն յանուանէ, եւ զայլ պէսպէս արդիւնս առաջնորդական: [Ի] սկիզբն առեալ ի 1774 թուոյ Կենարարին եւ ի Հայոց ՌՄԻԳ (1774) թուին: Ի յսկիզբն հոկտեմբերի ամսոյ եւ առ յապայն կարգաւ – Դ (4) Ղ(=թուման). 1. Թիւն 1774, հոկտեմբեր ամսոյ 26, ի տօնի Գիւտ խաչին... Վերոյ Հ (70) դարձ առաջնորդական մտից ջամն, որպէս զինչ ինչ լինելն, սկզբան յայտնի է: Յովսէփ արքեպիսկոպոս:

13. 13ա Ի 1775 թուին եւ ի նոյեմբերի ԻԲ (22), օգնականութեամբն ամենասուրբ հոգւոյն Աստուծոյ, ձեռն մխեցաք ի գործ նուիրակական Սրբոյ Աթոռոյն ի Ղլար օրհնեալ քաղաքի – Ա (1) Ղ(=թուման) ԵԹ (5000). Պարոն Եղիայն ետ... Ծէ (57) Ղ(=թուման) ԶԹ (6000) ԸՃ (800). Ղլարու բոլոր նուիրակութեան ջամն է: Յովսէփ արքեպիսկոպոս:

14. 13ա Նուիրակութիւն Մօզդօկու, թիւն 1776, փետրվարի 7ումն – ԵԹ (5000) Ղազար Գիօրգու... ԺԴ (14) ԵԹ (5000). Մօզդօկու նուիրակութեան ջամն է: Յովսէփ արքեպիսկոպոս:

15. 13աբ [Նուիրակութիւն Սարաֆանու] – Դ (4) Ղ(=թուման) ԴՃ (400) Ծ (50). Սարաֆանու նուիրակութիւնն է՝ բոլորն չորս թուման, չորս հարիւր յիսուն դիան... ԺԳ (13) Ղ(=թուման) ԲԹ (2000) ԶՃ (600) Ծ (50). Վերոյ Սարաֆանու, Բօրաղանու, Անդրիու եւ Եղսէի՝ չորս տեղեաց նուիրակութեանց բոլոր ջամն է:

16. 13բ Աստ արտագրեցաք դասատրումս եղեալ բոլոր արդեանց ջամերն յանուանէ – ԶՃ (600) ԺԲ (12) ԸԹ (8000) Ծ (50). Կտակաց եւ խոստմանց ջամն է... ԱԹ (1000) ԵՃ (500) Գ (3) Ղ(=թուման) ԶԹ (6000) ԱՃ (100). Վերոյ բոլոր ԺԱ (11) տեսակ մտից ջամն է, որպէս յանուանէ դաւթարումս գրած է, որ է մին հազար հինգ հարիւր երեք թուման վեց

հազար մէկ հարիւր դիւան: Յովսէփ արքեպիսկոպոս:

17. 14աբ Կ (60) Վ(թուման). 1. Թիւն 1775, յամսեանն փետրվարի մեր էջմիածնայ գիւղացի Դաւթի որդի Եսայուն ետուք վաթսուն թուման... ԱՌ (1000) ԵՃ (500) Ժէ (17) Վ(թուման) էՌ (7000) էՃ (700) ԺԵ (15) դիւան: Վերոյ եօթ անգամ ուղարկածն ի Սուրբ Աթոռն, բոլոր արդեանցն կամ Մինաս վարդապետի ուղարկած երեք հարիւր թումանովն ջամն է մէկ հազար հինգ հարիւր տասն եւ եօթն թուման եօթն հազար եօթն հարիւր տասն եւ հինգ տիւան:

18. 15ա ԱՌ (1000) ԲՃ (200) Ժէ (17) Վ(թուման) էՌ (7000) էՃ (700) ԺԵ (15). Դիմացն յիշեալ Սուրբ Աթոռն ուղարկած մին հազար հինգ հարիւր տասնեօթն թուման եօթն հազար եօթն հարիւր տասնհինգ դիւանէն Մինաս վարդապետի երեք հարիւր թումանն դուրս ձգած մնում է հատուկ մեր ուղարկած մին հազար հինգ հարիւր տասն եւ եօթն թուման եօթն հազար եօթն հարիւր տասն եւ հինգ դիւան... ԱՃ (100) ԽԶ (46) ԹՌ (9000) ԸՃ (800) Հ (70). Մին հարիւր քառասուն եւ վեց թուման ինն հազար ութ հարիւր եօթնասուն դիւան. այսքան մաբաղն, մեզանէ աւելի գնացած է Սուրբ Աթոռն, որ մեք այլում տեղոյ հաշուելոց եմք: Յովսէփ արքեպիսկոպոս: Վերջ:

19. 15բ-7ա Ողորմութեամբն Աստուծոյ բովանդակեալ մեր զամենայն օրհնեալ լուսաւորչաւերամ դասուց ժողովրդոցն հայոց, զոր ինչ յանուն սրբոյ եւ մեծի Աթոռոյն էջմիածնի մինչեւ ցաստ յիւրաբանչիւր երեսս դաւթարիս թէ նուիրակութիւն եւ թէ առաջնորդական հաւ: Դիցոմբ աստանօր եւ վասն ծախիցն, զորս արարեալ եմք ի թուէն Հայոց 1223 (1774) եւ ի յունիսի 4էն սկսեալ: Յունիս – Ա (1) Վ(թուման). Ի յեղանելն մեր ի նաւէն մինչեւ ցքաղաքն՝ լօթկայի միոյ քիրայ ետուք մէկ թուման... ԳՌ (3000) ԱՃ (100) ԻԵ (25). Հասարակ մասրաֆն ամսոյս եղեւ երեք հազար մէկ հարիւր քառասունհինգ դիւան՝ ձեռամբ Աւետիսին: (Ապրիլ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. Յա Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Ողորմութեամբն Աստուծոյ, եւ շնորհիւ սրբոյ եւ մեծի քրիստոսահիմն Աթոռոյն էջմիածնի, եւ օրհնութեամբ սրբազան հօրն հասարակաց, ծայրագոյն պատրիարգի եւ մեծի քահանայապետի տեառն Սիմէօնի աստուածակոչ կաթողիկոսի եւ իմս բազմերախտ եւ քաղցրագուծ հոգեւոր ծնողի եւ դաստիարակի, որոյ եւ հարկաւորիչ հրամանան

եւ՝ նուաստագոյն ծառայս լուսակերտ Սրբոյ Աթոռոյն եւ թերավարժ ձեռնասուն աշակերտ նոյնոյ սրբազան վեհապետին Յովսէփ վարդապետս Սանահնեցի եւ յազգէ Արղութագնէից, հարկաւորեցայ լինիլ նուիրակ եւ առաջնորդ ի վերայ տէրունի վիճակին Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, տիրախնամ եւ լուսաւորչակրօն ազգին Հայոց, որք բնակեալ են ի կողմանս հիւսիսոյ, ի յաստուածապահ քաղ[ա]քան, այսինքն՝ ի Ս.Պետրոսի, ի Մօսկոֆ, ի յԱստրախան, ի Ղզլար, ի Մօզդոկ, ի յԵրեւոյս եւ ի շրջակայ գաւառս սոցին, ի թիւն Փրկչին 1773 եւ Հայոց 1222 (1773), դեկտեմբեր ամսոյ 28, յորս եւ մանաւանդ ի յԱստրախան մուտն մեր եղեւ ի թիւն Փրկչին 1774 եւ Հայոց 1223 (1774) եւ յունիս ամսոյ 4ըն: Իսկ սկիզբն արդեանց Սրբոյ Աթոռոյն ի կողմանէ հարկաւորեալ մերս գործոյ, այսինքն՝ նուիրականի եւ առաջնորդականի եղեւ ի նոյն թուոց ի մուտն յուլիս ամսոյ, ուստի եւ սկիզբն առնեմք ահա՛ գրել զերկուց կողմանց զնուէրսն, զբարեպաշտ եւ յաստուածօրհնեալ ժողովրդեանս մերոյ զհոգեւոր պտուղսն ուրույն-ուրույն, այս է՝ զնուիրակութիւնս, զկտակս, զխոստմունս, զհոգէբաժինս, զպսակադրամս, զսրբադրամս, զտունօրհնէս եւ զայլս կարգաւ ըստ իւրաքանչիւր յատկութեանց տրոցն եւ տուօղացն, եւ ի փառս Աստուծոյ օրհնելոյն միշտ եւ յաւիտեանս. ամէն:

2. Տէս նաեւ Բովանդակութիւն 2-3, 5-6, 8-14, 19 (սկզբում):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 14ա Աստէն գրին այնք ելքն, զորս ըստ իւրաքանչիւր ժամանակի ի յարդեանց Սրբոյ Աթոռոյն տուեալ եմք այլոց՝ առ ի հասուցանել Սուրբ Աթոռն կամ հրամանաւ սրբազան վեհին եւ կամ մեք ինքնին՝ տեսանելով զհաւատարմութիւն գնացողացն, յորոց եւ ունիմ զմուրհակս սանատ կոչեցեալ: Քանզի երկու-երկու եմ առեալ. մինն ի Սուրբ Աթոռն եմ առաքեալ, որով առնուլ կարիցեն ի դրամառու առնէն, եւ մինն առ մեզ է մնացեալ: Գրին աստէն եւ բովանդակութիւն քորեղինացն, զորս հրամանաւ սրբազան վեհին եւ կամ մեք ինքնին առեալ եմք եւ ի Սուրբ Աթոռն առաքեալ: Եւ զորս հասեալ է, եւ գիր եմք ընկալեալ ի վեհէն, նօյիս նշանեալ եմք: Յովսէփ արքեպիսկոպոս:

2. 15ա Աստ արտագրի դիմաց թղթոյ միւս երեսի դիմացն եղեալ, բոլոր արդեանց ջամն միանգամայն բերի աստ, որ է մին հազար հինգ հարիւր երեք

Թուման վեց հազար մին հարիւր դրան. ԱՌ (1000) եճԳ (503) յ(=թուման) ԶԻ (6000) ԱՃ (100) դրան:

3. 9աբ 73. Թիւն 1776. սկիզբն արարաք շինեցուցանել արծաթեայ գոգնոց յաղագս Սուրբ Էջմիածնի, որ ունի ի յինքեան գիշումն Միածնի՝ ըստ տեսլեան սուրբ Լուսաւորչին մերոյ. զՉարչարանս Լուսաւորչին ի յեզերս իւր եւ զշորս աւետարանիչս՝ ի շորս անկիւնս. եւ զսուրբ առաքեալսն Թադէոս եւ Բարդուղիմէոս. զերեք սուրբ վանորայսն՝ սրբոցն Հովհիսիմէի, Գայիանէի եւ Շողակաթի. զսիւն լուսոյն՝ զարեգակն, զլուսին, զաստեղս. զԼուսաւորչին եւ զՏրդատ իւրովքն. եւ զՄկրտութիւնս Աբգարու եւ Տրդատայ թագաւորացն մերոց եւ զթագաւորական նշանս նոցա. եւ զյատուկ նշանս հայրապետացն մերոց ի ներքոյ կաթողիկէին մեծի. եւ Բ (2) հրեշտակք, որք կալեալ ունին զկաթողիկէն ի նշան պահպանութեան ամ[ենայն] արկածից թշնամեաց. եւ զմեծամեծ լերինսն Մասսեայ, Արագածու եւ Սեպուհւոյ՝ խորհրդաւոր յօրինուածովք: Որոյ մասնակիցք եղեն բարեպաշտօն արք եւ կանայք, ըստ մասին, ի Հաշարխանու, ի

Ղզլարու եւ ի ղարիպականաց: Իսկ ըստ մեծի մասին եղև իմ սեպհական արդեամբն ի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց՝ Շիօշբէկին եւ Քէթեվանին, եղբարցս, քերցս եւ ամենայն արեանառու մերձաւորացս: Վայելօղբն յիշեացեն զիս՝ Յովսէփ արքեպիսկոպոսս Սանահնեցի Արղութեանց Երկայնաձեռն, որ ի տոհմէ մեծի նախարարին Հայոց Զաւարիայի որդւոյ Սարգսի իշխանի, զորոց պատմէ Կիրակոս պատմիչն եւ այլք: Յիշեցէք եւ զորդեակն իմ եղեւվարդեցի Աւետիկ սարկաւազն, որ ի յամս քանիս աշխատեցաւ ի վերայ սոյն գեղեցկատես գոգնոցիս: Աւարտեցաւ ի 1784 թուին, ի հայրապետութեան տեսուն Գուկասու սրբազնասուրբ հայրապետին ամենայն Հայոց: Յովսէփ արքեպիսկոպոս՝ ծայրագոյն նուիրակ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, առաջնորդ բոլոր Ռուսաց երկրի Հայոց ազգին եւ հիմնադիր նոր Նախիջեանայ քաղաքին հայոց:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

15ա Ծառայ Յարութիւն Դարթեան Դիլանե[ա]նց:

131
ԽՈՍՏՈՒՄՆԱԳԻՐ


թղթայ. 4, վա. 11

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇԻՆ

ՌՄԻԲ-1773

ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա Երեւանցի կրթիկս:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 44x32,9: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտրաման բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 43:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. աչ եզրը վնասուած, տեխւոր կորուած, հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Պատճառ գրոյս այս է, որ մեք՝ Թիֆլիզու

եղեալ քահանայքս, յառաջ քան զայս անհնազանդութիւն առնէաք առաջնորդին մերոյ... Այս եղև ահա՛ ուխտադրութիւնն մեր /// վերոյ գրեցեալ բանիցն, որ եւ տեսողացն հաճոյ թուեսցի»: Թիֆլիզում գործող աւագ ֆահանսաների մեղայագիր-խոստումնագիրը Սիմէոն կրթիկսին առ այն, որ զղջում են իրենց առաջնորդին անհնազանդ լինելու, տեսակ-տեսակ անկարգութիւնների եւ բազում ապօրինութիւնների համար թէ՛ ընդդէմ սուրբ եկեղեցու եւ թէ՛ ընդդէմ Աթ. Աթոռի իշխանութեան: Յանձն են առնում այսուհետ հնազանդ լինել առաջնորդին եւ հաւաքուած ամբողջ հասոյթը հանձնել նրան. դրանք են՝ «հոգե]բաժին, քառասնից եւ խոստմունք՝ թէ՛ ի կենդանեաց եւ թէ՛ ի վախճանողաց, կտակ, յիշատակք պէսպէս, առաջնորդին գանձանակ, աթոռահաս, յ[արկ] պսակողաց՝ թէ՛ ի կուսից եւ թէ՛ յայրեաց, կողոպուտն տէրունեաց»:

Ծմբ. Հմմտ. աստ №№ 133, 134, 135, 136, 142, 143, 144, 155, 157, 165:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա եղև ի թուռ մերում ՌՄԻԲ (1773)ըն, ի նոյն բերրի հինգ եւ ի Սուրբ Աթոռս էջմիածին:

132

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 4, վա. 12 աք

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՄԻԲ-1773

Հեղինակ՝ Սիմեոն Ա Երեւանցի կթղկա: ՍՏԱՅՈՂ՝ Մետրոպ վրդ. (Ա), պրն Մէհրապ (Բ):

Թերթ՝ 1: Նիւթ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «Ա.Տ»: ՄեծՈՒԹԻՒՆ՝ 24,6x22,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 48, 37+3:



Նմուշ 1ա

Վիճակ՝ բաւարար. վերին մասը եւ ներքեւի աջ անկիւնը պոկուած-ընկած, վնասուած մասերը նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ սեւագիր, ձեւագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 1աք «Ի ՌՄԻԲ (1773) եւ ի փետրվարի եւս ժե (15): Առ Թարվիզու նուիրակ Մետրոպ վարդապետն՝ ի պատասխանի թղթոյն ընդ իւր յղեալ փայեկ մահտեսի Միմասին – *Յետ ելանելոյ Սրբոյն Բարդուղիմէոսի վանից նորոգ առաջնորդ Սողոմոն վարդապետին ի Սրբոյ Աթոռոյս, այսօր եկն փայեկ մի ի Թարվիզու նուիրակ Մետրոպ վարդապետէն... Այլև թէպէտ գրեաց սմա, թէ ե (5) հատ նորատիպ Աղօթից գիրք յղեցի, զի յորոց զԲ (2)ն մէլիք խոտավէրտուն եւ մէլիք Շահգեարտուն եւ զերիսն ում եւ կամիցի տացէ, բայց այս յանճարութենէ եղև այսպէս, զի մոռացաք ընդ»:* Ի պատասխան Թարվիզի նուիրակ Մետրոպ վրդ-ի գրութեանը «*վանն առաջնորդութեան Սրբոյ Բարդուղիմէոսի վանիցն եւ փոլիցայի»՝ Սիմէոն կթղկար յայտնում է, որ Սբ. Բարդուղիմէոս վանքի նորա-*

նշանակ առաջնորդ Սողոմոն վրդ-ն առաջնորդական կոնդակով եւ թղթերով հանդերձ՝ արդէն ուղեւորուել է իւր պաշտօնատեղի: Իսկ «*փոլիցայ»* առնելու յետ կապուած պատուիրում է. «*զի կամ առ պարոն Մէհրապն եւ կամ առ մէլիք խոտավէրտին զիցէ յաւանդ»:* Նաեւ աւելացնում է, որ ալէր *Նիկողայոս* անուամբ «*չերէց ոմն, (որ է ըմբնող Բասրայու փայեկ տիրացու Սիմոնին)*», այդ տարի ոմանցից թուղթ է ներկայացրել Սուրբ Բարդուղիմէոս վանքի առաջնորդ Ստեփաննոս վարդապետին եւ նրանից գրութիւն վերցրել, «*զոր գրեալ է սա անդ առ ոմանս, թէ ազատեցէ՛ զիս ի գեհենոցն՝ զՍուրբ Աթոռս գեհեան կոչելով, որոյ հոգին ի գեհեանն մաշեցի»:*

Բ. 1բ-ա «Ի ՌՄԻԲ (1773) եւ ի փետրվարի ժե (15), ընդ Սողոմոն վարդապետին – *Յորմէ սիրով եւ օրհնութեամբ բազմաւ գիտաստի՛ր, սիրելի՛ դմեր պարոն Մէհրապ... եւ դու եւս, որքան կարես, մուղայեթ լե՛ր դմա յամենայն կողմանէ»:* Սիմէոն կթղկար գրում է պրն Մէհրապին եւ դժգոհում, որ նա երկու տարի է չի պատասխանում իւր թղթերին եւ չի ուղարկում խոստացած 2 մարմարէ ֆարը: Նաեւ խնդրում է ուղարկել պրն Նաւասարդին՝ իւր պարտքերը վճարելու, «*սպա թէ ոչ՝ յետոյ զղջմամբ եւ փոշիմանելով կու տայ»:* Տեղեկացնում է նաեւ, որ Բարդուղիմէոս Առաքեալի վանքի առաջնորդ է նշանակել Սողոմոն վրդ-ին եւ յանձնարարական թուղթ գրել «*Դօլվաթլու Ահմատ բէկին»*, որ նա հովանատրի առաջնորդին եւ հոգ տանի վանքի մասին: Այդ պատճառով բէկի սիրտը շահելու համար որպէս նուէր ուղարկել է «*Բ (2) թօփ զարպայ՝ սպիտակ եւ կարմիր, Ա (1) թօփ սութի եւ Ա (1) թօփ դալամգար շիթ»:*

133
ԽՈՍՏՈՒՄՆԱԳԻՐ


թղթայ. 4, վա. 13

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՄԻԲ-1773

ԳԻՐԶ՝ Առաքել ֆհյ: ՍՍԱՅՈՂ՝ Սիմէոն Ա Երեւանցի կրթիկս:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ բուսական զարդանախշ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 33x21: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուազանիս բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 51



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. աշ եզրի տեխստը պոկուածընկած, նոր նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Պատճառ գրոյս այս է, զի յորմէ հետէ Թեֆ-լեզցի Զաքարիայ վարդապետն առաջնորդ եղ[եւ մեր] Թեֆլեզ քաղաքին, որով կերպիւ եւ իցէ, որով հետեւ ինքն ի բնէ թիւր էր սրտիւ առ [Սուրբ Աթո] ոս... Արդ՝ վասն այսց պայմանցս ետու ես տեսուն իմոյ վեհին զձեռագիրս զայս, տեսողաց եւս հաճոյ թուեսցի»: Թիֆլիզի Նորաշէն կաթողիկէ եկեղեցու միաբան տէր Առաքելի եւ մի խումբ քահանաների մեղայագիր-խոստումնագիրը Սիմէոն կրթիկսին առ այն, որ զղջում են իրենց առաջնորդ Զաքարիայ վրդ-ին անհնազանդ լինելու, անկարգութիւնների եւ ապօրինութիւնների համար: Յանձն են առնում այսուհետեւ հնազանդ լինել Սբ. Աթո-

նի սրբազան գահակալին եւ իրենց առաջնորդին: Իսկ եթէ չկատարեն իրենց խոստումը, ապա 50 թուման տուգանք կտան արքային եւ կրթիկսից էլ թող բանադրուեն: Քանի որ ինքը Հախապատի թեմի ֆհյ է, խոստանում է Սանահնի թեմի կամ այլ վիճակի ժողովրդին շնուվուել եւ իրեն ծուխ չանել: Սակայն նշում է. «Բայց թէ իցէ ոք այնպիսի եկամուտ ժողովրդոցն, որ իւրով կաման յարեսցի առ իս եւ ասիցէ, թէ ես կամիմ, որ դու հո[վո]ւեսցիս զիս, յայնժամ եւ ես զնա հովուեսցից», իսկ ստացուած բաժնի 2/3ը խոստանում է տալ Սուրբ Աթոռին, իսկ 1/3-ը իրեն վերցնել :

Ծնթ. Հմմտ ա՛ստ №№ 131, 134, 135, 136, 142, 143, 144, 155, 157, 165:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա եղեւ այս ի թ[ո]ւոջ մերում ՌՄԻԲ (1773)ին, դեկտեմբերի ԻԶ (26):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ (ԺԼ դ. նուագիր) Բերթ[ղեհեմ]ի եկեղեցւոյն է, տէր Առաքելինն է:

- ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏէՐ ԱՄԷԼԻՔՍԷԹ /ԹՎԻՆ ՌՃՂԸ (1749)ին»: 2. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏէՐ ԱՌԱՔԵԼ /ՌՄԺԸ (1769)»: 3. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏէՐ /ՎԱՐԳԱՆ»: 4. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏէՐ /ՍՏէՓԱՆ»:

134

ԽՈՍՏՈՒՄՆԱԳԻՐ


թղթայ. 4, վա. 14 ա, բ, գ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ


ՌՄԻԲ-1773

ՍՍԱՅՈՂ՝ Սիմէոն Ա Երեւանցի կրթիկս:

ԹԵՐԹ՝ 2: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ ներսից ռեաուր ուղղանկին շրջանակ, ներսում՝ «Փ Ե» մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22x17,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուագիր (նմուշ՝ 1ա, 1բ): ՏՈՂ՝ տարբեր:



Նմուշ 1ա



Նմուշ 1բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

Ա. 1բ-2ա «Գիտումն գրոյս այս է, որ մեք՝ Թիֆլիզու բոլոր աւաճագոյն քահանայքս եկինք ներքոյ թարղումս ի աստուածայէջ Սուրբ Աթոռս ի սպաս սրբազան վեհիդ եւ զայս յուշտ եւ դաշինս եդաք առաջի տէրութեանդ... այսուհետեւ եթէ ոք ի մէնջ մեր այս վերոյ դաշնագութեանս շեղէ եւ յանդգնի՝ ի կարգէ եւ ի հաւատոյ զրկեալ լինի յաւիտեան, հոգւով եւ մարմնով թողութեան ոչ լինի արժանի»: Թիֆլիզի աագագոյն քահանաները էջմիածին կանչուելով՝ խոստովանում են, որ իրենց առաջնորդ Զաքարիայ վրդ-ի ժամանակուանից անկարգացել են («հակառակութիւն օրինաց եւ կանոնաց յուլով աննէաք»): Այժմ զոչում եւ գիր են տալիս, որ այլեւս չեն մեղանչի եկեղեցու կանոնների դէմ եւ հնազանդ կլինեն իրենց առաջնորդին:

Բ. 1ա «Պատճառ գրոյս այս է, զի յորմէ հետէ Թիֆլիզի Զաքարիա վարդապետն առաջնորդ եղեւ մեր Թիֆլիզ քաղաքին, որով կերպիւ եւ իցէ, որովհետեւ ինքն ի բնէ թիւր էր սրտիւ առ Սուրբ Աթոռս... եւ քաղցրալուր տեառն մերոյ տէր Սիմէօն սրբազան

կաթողիկոսին խոնարհեալ յաղաչանս ծառայիցս իւրոց՝ ներեաց մեզ, եւ եթող զյանցանս մեր, եւ պատուիրեաց մեզ այլ մի՛ եւս դառնալ ի նոյն չարիան»: Թիֆլիզի քահանաները մեղայագիր-խոստովանագիր են տալիս կթղկսին, որ իրենք անկարգ են եղել եւ եկեղեցու կանոններին հակառակ են գործել, այսուհետեւ խոստանում են ոչ մի անկարգութիւն չանել, վրաց դռներն էլ չըջել: Եթէ չկատարեն այս պայմանը, թող կարգից եւ հաւատից զրկուեն, թողութեան արժանի չլինեն:

Գ. 2բ «Մեք եւս առ ի հաստատութիւն զղջմանս մերոյ պայմանեցաք եւ ուխտեցաք առաջի Աստուծոյ եւ նորին փոխանորդ գերընտիր հայրապետին մերոյ վեհապետին, զի այլ մի՛ եւս դարձուք ի նոյն մեղան... Արդ՝ վասն այսց պայման[ա]յցս ետու ես տեառն իմոյ վեհապետին զձեռագիրս զայս, տեսողաց եւս հաճոյ թուեսցի»: Թիֆլիզից եկած քահանաները զղջման թուղթ են տալիս իրենց անկարգութիւնների հետ կապուած եւ խոստանում առանձին-առանձին գիր տալ. իբր աագ երէցն իր յատուկ թերութիւնները կուղղի: Հաղպատի թեմի հովիւն էլ խոստանում է այլ թեմերից եկած ծխերին չհովուել, իսկ եթէ ցանկանան, որ հովուի՝ խոստանում է եկամուտի 2/3 մասն առաջնորդի եւ երէցփոխանի միջոցով տալ Սուրբ Աթոռին, 1/3ը իրեն վերցնել:

Ծնթ. Հմմտ ա՛ստ №№ 131, 133, 135, 136, 142, 143, 144, 155, 157, 165:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2բ եղեւ այս ի թուոջ մերում ՌՄԻԲ (1773), ի նոյեմբերի եւ ի Սուրբ Աթոռս էջմիածին:

135

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթա. 4, վաւ. 15

ԹԻՖԼԻԶ

ՌՄԻԲ-1773

ՀԵՂԻՆԱԿ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով (անընկալելի): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,8x10,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 35:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1աբ «Յորմէ սիրով եւ հայրական օրհնութեամբ գիտասելիք ի յօրհնեալ մայրաքաղաքդ Թիֆլիզ բնակեալ Սրբոյ Աթոռոյս էջմիածնի եւ Հաղպատու եւ Սանահնու թեմիցն եղեալ հասարակ բոլոր քահանայք... յայնժամ մեք եւս, զոր ինչ հարկն եւ արդարութիւնն պահանջեսցէ, այնպէս առնելոց եմք, այսպէս իմացեալ՝ լերու՛ք ողջք եւ զգոյշք. բաւ է»:
[Սիմէոն Ա. Երեւանցի] կթղկսը գրութեամբ դիմում

է Թիֆլիսում բնակուող էջմիածնական, Հաղպատում եւ Սանահնում գտնուող բոլոր ֆահանաներին առ այն, որ այդքան տարուայ անկարգութիւնների հետ կապուած տեղի աւագ երեցները էջմիածնում մեղայական խոստովանութեամբ միասնական եւ առանձին-առանձին գրութիւն են տուել: Պատուիրում է՝ «եւ դուք իւրաքանչիւրքդ եւս զմէկ-մէկ ձեռագագիր գրել ըստ մտաց եւ ըստ օրինակի իւրաքանչիւր աւագագոյն քահանայից տուեալ յատուկ ձեռագրին, եւ դուք կնքել եւ այլոց

եւս կնքեցուցանել», հակառակ դէպքում սպանում է վարուել ինչպէս հարկն է եւ ինչպէս արդարութիւնը կպահանջի:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 131, 133, 134, 136, 142, 143, 144, 155, 157, 165:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա ի ՌՄԻԲ (1773) եւ ի նոյեմբերի ժէ (17), ի Թիֆլիզ՝ ձեռամբ յովուապետին:

**136
ԽՈՍՏՈՒՄՆԱԳԻՐ**


թղթայ. 4, վաւ. 16

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

ՌՄԻԲ-1773

ՀէդինԱԿ՝ տէր Պօղոս: ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա երեսանցի կրղկա:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,6x15,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 35:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերին եզրերը ծալուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1աբ «Պատճառ գրոյս այս է, որ ես՝ Թիֆլիզ քաղաքի վանքի եկեղեցւոյ տէր Պօղոս նուաստ քա-

հանայս, յառաջագոյն ունէի անկարգութիւն յոյժ բազում... եւ զայս ձեռագիրս գրեալ եւ կնքեալ եւ Սրբոյ Աթոռոյս գերապետի եպիսկոպոսացն եւ մեր աւագ քահանայիցն եւս կնքեցուցեալ՝ ետու սրբազան վեհապետին: Որ եւ տեսողաց հաճոյ թուեսցի»: Թիֆլիսի եկեղեցու Պօղոս ֆնյի մեղայական խոստովանագիրը, որով հաւաստում է իր կատարած բազում անկարգութիւնների մասին եւ յանձն առնում այլեւ շընդդիմանալ կրղկսին եւ իրենց առաջնորդին: Հակառակ դէպքում թող անէժի ու նզովի արժանանայ, կարգալոյժ լինի եւ 10 թուման տուգանք էլ վնարի արժունի դիւանին:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 131, 133, 134, 135, 142, 143, 144, 155, 157, 165:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ եղեւ այս ի թուոջ մերում ՌՄԻԲ (1773), ի նոյեմբերի ժէ (17) եւ ի Սուրբ Աթոռս էջմիածին:


**137
ԳՐՈՒԹԻՆ**

թղթայ. 4, վաւ. 17

ԱԼԻՔՈՒԶԱԿ ԳԻԻՂ

ՌՄԻԲ-1773

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 16x10,6: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 29:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար: ԻՍԿՈՒԹԻՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1աբ «Ի ՌՄԻԲ (1773) եւ ի յօգոստոսի Դ (4), ի յԱլիֆուչակայ առ Հերակլ արքայն իրիջայ վասն փախուցեալ ղազախեցոց Թ (9) տանց – Քանի մի ղազախեցիք, վասն խոռովութեան իրիք եղելոյ Ը (8) ղազախեցոցն, զըեղջս ցորենոյ նոցա հուր արկեալ արեալ էին... Ձթուղթ սրբազան (վեհ)ին, գոր

միրզայն մեր տարաւ ընդ իւր յԵրեւան, ըստ խնդրոյ ղազախեցւոցն տուեալ էր նոցա առ ի տանիւ առ Հերակլ արքայն»։ Մի քանի ղազախեցիներ խոսվութեան հետեւանքով այրում են հարեւանների ցորենի դէգերը եւ մի գիշերում իրենց ընտանիքներով փախչում են Կարս։ Կթղկսը իմանալով՝ բերել է տալիս նրանց եւ այդ մասին տեղեկացնում իսանին։ Խանը կթղկսին առաջարկում է ղազախեցիներին իր մօտ ուղարկել եւ գրութեամբ տեղեկացնել Հերակլ արքային։ Չնայած իսանը

խոստանում է մի գրութիւն էլ իր կողմից ուղարկել թգութին, սակայն գրութեամբ տեղեկացնում է ղազախում իշխող Ղասում աղային եւ ղազախեցիներին այնտեղ ուղարկում։

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

1. *1բ Ի ՌՄԻԲ (1773) եւ ի յօգոստոսի Դ (4), ի Սլիփոնյակ գիւղն:*
2. Տե՛ս նաեւ Բովանդակութեան սկիզբը:

138

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 4, վա. 18

ՅՕՀԱՆԱՎԱՆՔ

ՌՄԻԲ-1773

ՀԵՂԻՆԱԿ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կթղկս։ ՍՏԱՅՈՂ՝ Սարասկեար եւ Օմար փաշաներ, Իբրահիմ էֆենտի։

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,9x-10,8: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 31-35:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բարարաբ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «Ի ՌՄԻԲ (1773) եւ ի յօգոստոսի Թ (9), ի Կարս առ Սարասկեարն եւ առ նորակ փաշայն,

եւ առ Իբրահիմ էֆենտին, եւ առ յայս թուղթ եւ միւր՝ ձեռամբ ղահբաշի Սողոմոնի, ի Յօհանավանից – Թուղթ սիրոյ առ Սարասկեար փաշայն՝ ընդ նմին եւ ընծայ... զի վասն չիք Մուրատին ծանուցէ Սարասկեար փաշային, զի նա Աւրի փաշային հարկեացէ յղել զնա ի Սուրբ Աթոռն»։ Կթղկսը Օհանավանքից «ղահբաշի» (տասնապետ) Սողոմոնի միջոցով Կարսի Սարասկեար եւ Օմար փաշաներին, Իբրահիմ էֆենտուն միւրգ (ճանակը նշուած է) եւ թուղթ է ուղարկում ի պատասխան գրութեան, որով գանգատուել էին Ղոշավանքի առաջնորդ Սուքիաս վրդ-ից, «թէ անկարգութիւն առնէ»։ Գրում է տեղեկացնեն, թէ ի՞նչ գանգատներ ունեն, իսկ մնացած գումարն ուղարկեն Կարին Մուրտիկեանց մնա-ի Փիլիպպոսին, ապա թէ ոչ՝ «ղահբաշի» Սողոմոնի միջոցով ուղարկեն։

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

Տե՛ս Բովանդակութեան սկիզբը:

139

ՆԱՄԱԿ


թղթ. 4, վա. 19

ԷՐԶՐՈՒՄ

ՌՄԻԲ-1773

ՀԵՂԻՆԱԿ՝ Դալիթ եւ Սուրբան: ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կթղկս։

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագ, ներքեւում՝ մանիկ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 28,9x22,6: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 26+9:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. աջ եզրը ծալուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Մեծի եւ ընթանաւիշխ եւ գորովագոյս սրբազան կաթողիկոսիդ, եւ սրբազնամաւնուր եւ սուրբ գարշապարսդ համբուրեմք մեծաւ աղերսանօք, ո՛րչ լեւ – Ձկնի սակաւ գրոյս յայտ լիցի տէրութեանդ, որ ի յայդդ առեալ ի ձեռանէ դորին թէմէսուկն յղեալ ես մահտեսի Փիլիպպոսին... զի օրհնութեան տեսունդ ջանամք, զի զանկեալ ծառայքս կանգնեցուցես. որ եւ ո՛ղջ լիցի գլուխ տէրութեանդ ի փառս Տեառն եւ ի պարծանս բոլոր ազգիս Արամեան»: Էրզրումից Դաւիթը եւ Սուլթանը գրում են Սիմէոն կթղկսին, որ մհա-ի Փիլիպպոսը ներկայացրել է իրենց պարտամուրհակը, սակայն իրենք չեն կարող պարտքը վճարել, քանի որ «վշտաց

եւ նեղութեանց պատահեցաք», այլ «մին փտեալ» տուն ունեն, որի փաստաթղթերը որպէս գրաւ տուել են մհա-ի Փիլիպպոսին եւ ներողամտութիւն են խնդրում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Գրեցաւ ի ՌՄԻԲ (1773) թվին, մարտի ԻԲ (22) ի յերգրում:

2. 1բ Մառայ ծառայից տէրութեանդ անարժան Դաւիթ եւ ոտից փոշի Սուլթան:

ՀԱՍՅԷ

1բ Աստուծով: Հասցէ գիրս ի սուրբ գահն էջմիածին եւ սուրբ աջ երիցս երանեալ սրբազան հայրապետին անբաց ի բարին:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (կարմիր զմուսի վրայ, վնասուած, անհասկանալի):

140


ՆՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ

թղթայ. 4, վաւ. 20


ՌՄԻԳ-ՌՄԼԲ-1774-1783

ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ վրդ. Սանահնեցի (Արղուրեան):

ԹԵՐԹ՝ էջ 156+4 (1ա-1դ). չգրուած՝ 1բ-դ, 15-22, 38-41, 54-8, 70-2, 76-80, 83-90, 96-114, 130, 152, 154-6: ՊՐԱԿ՝ Ա-Ժ (Ա, Ժ՝ 9, Բ, Գ, Է, Թ՝ 6, Գ, Ե, Ը՝ 10, Զ՝ 8): ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ երկու վիշապ օձ, սուրբ Գէորգ Զօրավար: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 33,6x20,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ փառասին: ԳԻՐ՝ բոլորգիր նոտրաման (մնուչ՝ 2), նոտրգիր (մնուչ՝ 37): ՏՈՂ՝ 32-35: ԿԱԶՄ՝ կաշեպատ ստուարաթուղթ. աստաղը՝ թուղթ:



նմուշ 2



նմուշ 37

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

Ծնթ. Բնագրի ընդօրինակութիւնը տե՛ս աստ №№ 130, 204:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Մատեանում Յովսէփ վրդ. (յետագայում՝ արքեպս.) Սանահնեցին (Արղուրեանը) գրանցել է տուել 1774-1783 թթ. ընթացքում կտակներից եւ խոստումներից, ննջեցելոց եւ կենդանեաց յիշատակութիւններից, նուիրակութիւնից, սրբադրամներից, առաջնորդական գանձանակից, պսակադրամից, հասարակ ննջեցելոց հոգեբաժիններից, Մայր Աթոռից ուղարկած, բոլոր արդիւնքներից ստացած գումարներն ու ծախսերը.

1. 1ա Յանգ գլխաւոր բանիցն դաւթարիս – Յառաջաբանութիւն՝ 1 համարն: Կտակ եւ խոստումնք՝ 2 համարն... Նուիրակութիւն Գլխաւոր՝ 115 համարն:

2. 2-14 Աստուծով: Թիւն 1774 եւ ամիս յուլիս. սկիզբն գործոյն եւ մուտք արդեանցն, նուիրակութեան, կտակից եւ խոստմանց՝ ըստ նշանագրութեան իւրաքանչիւրոցն – 1. ԳԻ (4000). Թիւն 1774 եւ ամսեանն յուլիսի, վաղձանեցաւ տէր Կարապետն, եւ նորին որդի Նազարեթն Արքայ Աթոռոյն ետ հոգեբաժին շորս հազար դիան... ԶՃ (600) ԺԲ (12) Դ(թոսման) ԸԻ (8000) ԲՃ (200) Ծ (50). Վերոյ Դ (4)

ղալամին ջամն այ: Վերջ: Յովսէփ արքեպիսկոպոս:

3. 23-35 Իսկ յիշատակիմ, գորս տուեալք են մեզ յանուն կենդանեաց եւ ննջեցելոցն, ի դուռն սրբոյ եւ մեծի Աթոռոյն, 1774 եւ առ յապայս, են գրեցեալսն ի ներքոյ, գորս եւ ընկալցի տէր Աստուածն ամենայնի ի հաճոյս կամաց իւրոց, եւ զփոխարէնն հատուցէ ի հոգիս ննջեցելոցն զիւր առատ ողորմութեան շնորհս աստ եւ ի հանդերձեալն միշտ. ամէն – 1. Թիւն 1774: Փառակեցի պարոնն Ոսկանի քոյր կոյս Եղիաբէթ ապաշխարօղն ետ ի դուռն սրբոյ եւ մեծի Աթոռոյն էջմիածնի, վասն կենդանեաց եւ ննջեցելոց իւրոց, գրչեայ տափակագիր Աւետարան մի... 72. Սարգիս աղայի կենակից Խանփէրի խանուանն ետ մէկ սուզանի:

4. 37 Յիշատակիմ վասն Սուրբ Խորվիրապայ – 1. Մէկ արծաթեայ սկիհ՝ Ագուլեցի Ասկարխանենց Թումանի որդի պարոնն Յովսէփն ետ... Ի Սուրբ Աթոռն ուղեւորեցաւ բոլորն:

5. 42-51 Թիւն 1775 եւ յունիս ամսոյ 2: Շնորհիւ Տեառն սկիզբն նուիրակութեան Աստուախանու օրհնեալ ֆաղափն, որք նշանագրին աստէն անուամբ տուողացն եւ անուամբ ֆահանայիցն, որք ըստ կարեաց իւրեանց եղեն մեզ գործակիցք թէ ի նուիրակութեան եւ թէ յայլսն. որք եւ յԱստուծոյ վարձատրեցին. եւ ինամբ ամենակալին Աստուծոյ, եւ շնորհիւ Սրբոյ Աթոռոյն, եւ օրհնութիւն սրբազան հայրապետին եղիցի ի վերայ ժողովրդեանն. ամէն – Է (7) յ(թուման) Գրիգոր աղայն ետ... ԱճժԴ (114) յ(թուման) ԳՌ (4000) դիան բոլոր ջամն: Յովսէփ արքեպիսկոպոս:

6. 52-3 Լուսազարդ մօրն մերոյ Սրբոյ Աթոռոյն նուիրակութիւն եւ առաջնորդական արդիւնք Մօսկովու տիրախնամ ֆաղափ լուսաւորչակքօն օրհնեալ ժողովրդեանն, որք տուեալ էին ի ձեռն Վարդան վարդապետին մերոյ ի 1776 թուոցն, որք եւ ի ձեռանէ Տեառն ընկալցին զողորմութիւն եւ զերկնիցն արքայութիւն: ԺԲ (12) յ(թուման) ԳՌ (3000) դիան գանձանակ Սրբոյ Աթոռոյն եւ առաջնորդական ի 1769 թուէն մինչեւ ի 1776 թիւն: Նուիրակութիւն – Ը (8) յ(թուման) Եղիազար աղնիւ աղայն ետ Սրբոյ Աթոռոյն հոգեւոր ծնօղին իւրոյ ողորմութիւն եւ նուէր... ԽԴ (44) յ(թուման) ԳՌ (3000) բոլոր արդեանց Մօսկովու նուիրակութեան եւ առաջնորդական եկք: Յովսէփ արքեպիսկոպոս:

7. 53 Պետրպօրֆու օրհնեալ մերագնեայ ժողովրդեան նուիրակութիւնն է, զոր տէր Յովհաննէս ծերունագարդ ֆահանայն ժողովեալ էր եւ յանձնեալ աղայ Մինասին Դիլանչեան, որ էհաս մեզ

եւ աստ նշանեցաւ: 1777 – Բ (2) յ(թուման) ԵՌ (5000). Պարոն Գրիգոր աղայն Կնպանեան... ԺԵ (15) յ(թուման) ԱՌ (1000) դիան վերոյ Զ (6) զալամին ջամն է: Յովսէփ արքեպիսկոպոս:

8. 59-66 Սկիզբն այլ կերպ արոց աստուածախնամ ժողովրդեանն հայոց, որք յԱստուախան ֆաղափ քնակեալք կան, այս է՝ զարբարամս եւ զայլս, գորս ցուցաւ ի խորագիրն նուիրակութեան. գորս եւ գրեմք կարգաւ, եւ նախկինս լիցի յաղագս սրբադամին, որ եղել ի 1774 թուին եւ յօգոստոսի ամսոցն: Սրբադամ – ԱՌ (1000) Աւաքի Սէմէօնն ետ... ՀԹ (79) յ(թուման) ԶՌ (6000) ԲՃ (200). Վեր Ծամեայ սրբադրամից ջամն եղել: Յովսէփ արքեպիսկոպոս:

9. 67-9 Շարք դասատրութեան գանձանակացն ժողովման, որք ի կիրակէսն առաջնորդական անուամբ, որ եղել ի թիւն 1774, յունիսի 15: Գրին իւրաքանչիւր ամսոյ եղեալ դրամոց ջամն ի ներքոյ կարգաւ: Յովսիս – ԴՌ (4000) ԸՃ (800) ԻԴ (24). Այս ամսոյս գանձանակն եղել չորս հազար ութ հարիւր քսան եւ չորս դիան... Վերոյ երեք երես գրեալ առաջնորդական գանձանակի դրամոց ջամն այ ԻԲ (22) յ(թուման) ԲՌ (2000) ԷՃ (700) դիան: Յովսէփ արքեպիսկոպոս:

10. 73-4 Կարգ եւ դասատրութիւն մտիցն, որք ի հարսանեաց ի 1774 թուէն, սկսեալ ի յունիսէն եւ վերջացեալ ի 1775, ի յունիս ամսոց: Մուտք հարսանեաց – ԱՌ (1000). Տիրացու Սարգիսն մեր... Դ (4) յ(թուման) ԳՌ (3000) ԲՃԾ (250). Վերոյ տասն եւ ինն զալամ պսակ[ա]դրամից ջամն եղել չորս թուման երեք հազար եւ երկու հարիւր յիսուն դիան:

11. 75 Կարգ եւ դասատրութիւն մտիցն, որք ի հարսանեացն ի 1777 թուին սկսեալ ի յուլիսին եւ վերջացեալ ի 1778 ի յուլիս – ԵՃ (500) Գրիգորի Խլաքն ետ... ԺԴ (14) յ(թուման) ԲՌ (2000) ԲՃ (200) դիան վերն երեք երես հարսանեաց մտից ջամն եղել: Յովսէփ արքեպիսկոպոս:

12. 81-2 Դիցոյք աստանօր եւ վասն հասարակ ննջեցելոցն գնուէրսն յիւրաքանչիւր կարգեալ յանուանէ. յգկզբանէ մինչեւ ցկիզբն յուլիս ամսոյ. գորս կարգեցէ տէր Աստուածն ամենայնի ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան իւրոյ. ամէն: Ի 1774 թուին հասարակ հոգեբաժինք մինչեւ ի 1775 – ԱՌ (1000). Վասն երեխայի միոյ տէր Ոսկանն... Թ (9) յ(թուման) Ծ (50). Վերոյ երեք տարեկան ննջեցելոց հոգեբաժնից ջամն է: Յովսէփ արքեպիսկոպոս:

13. 91-5 Համբ Առաջնորդական: Սկիզբն կալցոյք գրել աստանօր եւ զմնացեալ մուսսն առաջ-

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ եռամանիկ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 33,7x22: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 29-23:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կարմիր զմուտք վնասուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Առ երիցս երանեալ սրբազան վեհիդ իմոյ, անարժան բերանով զգարշապար ոտս քո համ-

բիւրելով՝ օրհնութիւն սրբազանիդ միշտ խնդրեմ, եւ լե՛ր ողջ վասն իմ եւ բոլոր ազգիս Հայոց. ամէն – Ծանիցէ վեհութիւն տերութեանդ, որ մահտեսի Յովնան ծառայդ եկն եւ զամենայն եղեալսն պատմեաց փաշա[յ]ին... որպէս վայել է սրբութեան քում, այնպէս արասցես եւ լե՛ր ողջ. ամէն»:
Մհա. Փելիպոսի նամակը Սիմէոն կրթիկին, որով տեղեկացնում է, որ տեղի ունեցածի եւ լսածի մասին փաշային յայտնել է մհա. Յովնանը, ում գալով՝ լուծուեց իր տարակուսութիւնը: Նշում է, որ շնայած Ակն քաղաքում աղանդաւորութիւն է տարածուել, խնդրում է ներում շնորհել եւ օրհնութեան գրով միախարել, իսկ էրզրումի նուիրակ Սերգիս վրդ-ին էլ կրթիկի գրութեամբ եւ Յովնան վրդ-ի ստիպմամբ բռնել եւ էջմիածին են ուղարկել: Նաեւ յիշեցնում է վճարել Դարսի փաշային խոստացուած 400 դուրուշը, որի համար ինքն է երաշխատել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Ծառայ քո մահտեսի Փելիպոս: Թ[ո]ւին ՌԲՃԻ (1771), փետրվարի Իէ (27)ին, Խարս:

ՀԱՍՑԷ

1բ Հասցէ էջմիեաձին առ յոտս երիցս երանեալ սրբազան վեհին մերոյ, փոխան իմոյ Սահամ բի-

րեսցէ յոտս նորին, որ լենա իւր մին օրն Աստուծով բազում. ամէն:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1բ (միայն վնասուած շագանակագոյն գմուտս):

ԳՐՉԱՓՈՐՉ՝ 1. 1բ «Բաղդաս»: 2. 1բ «Դախթ»: 3. 1բ «Բաղդասար»: 4. 1բ «գու առ ախտս»:

162

ԿՈՆԴԱԿ


թղթայ. 4, վա. 38

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՄԻԲ-1773

ՀԵՂԻՆԱԿ՝ Սիմէոն Ա Երեսանցի կրղկս:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ բուսական: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 40,6x27,6: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 45+2:



նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ – եկեղեցի (կրղկս բառի վրայ)՝ 1ա, թոչնագիր՝ 1ա: Գոյներ՝ կարմիր, բաց ու մուգ կանաչ (լուսանցագծերը՝ շագանակագոյն):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունավորիտուած: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Սիմէոն կաթողիկոս եւ ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց, առաքելականի եկեղեցոյս Քրիստոսի, նաեւ տիեզերականի մեծի եւ սրբոյ Աթոռոյս էջմիածնի – Յորմէ ժամանեացի թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց ի վերայ սիրելի եւ հոգեւոր որդւոց մերոց եւ հարազատ զաւակացոյ Սրբոյ Աթոռոյս, որք կայք բնակեալք ի յօրհնեալ նահանգդ Վարանդայ... Այսպէ՛ս գիտացեալ՝ ողջ

լերովք ի Տէր»: Սիմէոն կրղկսի ընդհանրական կոնդակը Վարանդայի ֆահանսներին, իշխաններին եւ ամենայն ժողովրդին առ այն, որ նրանց առաջնորդ համարուած Ստեփանը, որ Սբ. Աթոռի թեմից էր եւ ում շարութեան համար ինքը ցանկանում էր պատժել, փախաւ եւ գնաց Իսրայէլ կրղկս կոչուածի մօտ, ձեռնադրուեց «չեպիսկոպոս», որի համար արժանացաւ անէծքի եւ բանադրանքի: Նրան ձեռնադրողն էլ արժանացաւ անէծքի, քանի որ մի վիճակի առաջնորդը չի կարող այլ առաջնորդի վիճակից քիչ կամ այլ աստիճանատր ձեռնադրել: Պահանջում է հալածել նրան որպէս չար դէպի, քանի որ գաղտնաբար ընդունել է «զաղանդն արիթարմայութեան» (կաթողիկոսեան), իսկ «որ ոք ընդունիցի զդա, նա եւս հաղորդ լիցի անիծից դորին»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ ի ՌՄԻԲ (1773) թուին, ի սեպտեմբերի ԻԴ (24) եւ ի լուսապայծառ Աթոռս Սուրբ էջմիածին:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԿԱՅԻ

1բ (ԺԲ դ., նտարգիր) Սրբոյ էջմիածնի հոգեւոյս Սիմէոն կաթողիկոսի կոնդակն է ի վերայ Վարանդեցոց ընդ դէմս մեն չիք Ստեփան վարդապետին:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (կարմիր քանափով, բոլորակ) «է: ՇՆՈՐՀԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՌՄԻԲ (1763)»:

163
ՆԱՄԱԿ


թղթպ. 4, վաւ. 39

ԲԱՆԶԻՍԱՐԱՅ

ՌՄԺԸ-1769

ԳԻԻԶ՝ Մարտիրոս: ՍՏԱՅՈՂ՝ Յովհաննէս վրդ.:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23,2x-16,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 21+4+4+2:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխուած, վերին պատռուածքը հին նտրոգմամբ: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Երջանկազարդ հօրդ իմոյ տեառնդ Յովհանննու աստուածիմաստ վարդապետին գտորբ գարշապարս յոյժ կարօտիւ համբուրեմ եւ զողջ կեալդ խնդրեմ, ո՛ղջ լեր – Յայտ լիցի հօրդ իմոյ, ահայ Աստուծով ես ալ այս գիրս գրած օրըս արայպայ բահեցի... եւ լէ՛ր ողջ ի տէր ի պարծանըս

ստրուկ Մարտիրոսիս, որ գգիրս ՌՄԺԸ՝ (1769), յու- լիսի ե (5)ին գրեցի ի Պանչայսարայ: Հայր սուրբ հաշլիս ալ հատար, Ա (1) ըսակըս շի մնաց, քանի ղուրուշ ալ պարտք արի»: Բախշիսարայից Մար- տիրոսը գրում է Յովհաննէս վրդ-ին եւ խնդրում անմիջապէս նանապարհուել եւ իրեն հանդիպել կեողլեւ փաղափում, որպէսզի նաւից յետ շմնան, քանի որ մեա. Վարդան աղան գիր էր ուղարկել, որ եթէ այս նաւից ուշանաք, որիշը շի լինելու:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տէ՛ս Բովանդակութեան վերջում:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻԻՆ

1ա եղբայր տիրացու Օհաննէսըն սուրբ աշդ կու համբուրէ:

ՀԱՍՅԷ

1բ Հասցէ գիրս /// շարխափան Աստուածածին:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (ԺԸ դ., նտարգիր) Եկն առ մեզ այս թուղթս յու- լիսի ԺԲ (12)ալն:

164

ԳՐՈՒԹԻԻՆ


թղթպ. 4, վաւ. 40

ԲԱՍՐԱՅ

ՌՄԺԹ-1770

ՀԵՂԻՆԱԿ՝ Յոհաննէս Բրեւան: ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծե- րով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 33,2x21,6: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միա- սին: ԳԻՐ՝ խոշոր բոլորգիր (նմուշ՝ 1ա), նտարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 35:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխ- ւած, վերին եւ ստորին պատռուածքները հին նտրոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Քաղաքիդ լուսատրագնորդ Երուսա- ղէմի մահարձան անմաաշելի, եւ չորեքձագեանս եզերաց տիեզերաց, դիտապետ հայկազեանս սեռի, յոգնաշխատ եւ քրտնաշան, շնորհազարդ Սուրբ Աթոռոյդ էջմիածնի ժառանգորդ եւ հան- գոյն նմին տեսանողի տեառնդ Ս[իմէոն]ն աս- տուածարե[ա]լ կաթուղիկոսիդ – Ջորբափայլ եւ զերկնաշու սուրբ գարշապարդ խոնարհաբար համ- բուրեմ մածեալս ի հող... կիցի՛ պետական գլուխդ մեր ողջ ի յողջ գլուխն, եւ ի պարծանս նուաստ հիբոյս»: Յոհաննէս Բրեւանի գրութիւնը Սիմէոն կթղկսին, որով զեկուցում է իր Բասրայ գնալու

երեք հանգամանքների մասին. առաջին՝ եղբորորդին *Հնդկաստանից* մօր հետ եկել էր *Բասրայ* եւ մեկնել *Բաղդատ*, երկրորդ՝ սպասում է «*մինչ ի Բանկալու նաւերն գան*», որ իրենց գործերից տեղեկանայ եւ միւս եղբորորդու հետ գայ վեհափառին տեսութեան, երրորդ՝ երկար ժամանակ է, որ *Ստեփանոսից* գրութիւն չի ստացել: Անհանգստանում է. «*չլինի անտէրութենէ կոխան ոտից լինեն, եթէ այլ ազգից կամ մեր քրիստոնեայ ազգից, զրատեղս կերպ-կերպ վրդովմունք շատ ենք լսում*»: Տեղեկացնում է նաեւ, որ *Յովսէփ* վրդ-ը *Մաղրասում*

է եւ յաջորդ տարի հաւանաբար միասին կվերադառնան, քանի որ ժամանակները փոխուել են, վաճառականութիւնը շատ է պակասել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Թիւն Փրկչին ՌէճՅՅ (1770)ուն, մայիսի Ժէ (17), Պասրայ, որ եմ ծառայից ծառայ ի Տէր Յոհանէս Բրբեան:

Ծնթ. Բովանդակութեան եւ յիշատակարանի գրերը տարբեր են:

**165
ԽՈՍՏՈՒՄՆԱԳԻՐ**


թղթայ. 4, վաւ. 41

ԹԻՖԼԻԶ

ՌՄԻԲ-1773

ԳԻՐԶ՝ տէր Ստեփան: ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կթղկա:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «CPH»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 33,3x22,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 49+9:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ձախ եւ աջ եզրերն անհարթ, գրադաշտը գունափոխուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1ա «Տէր Սիմէոն սրբազան կաթողիկոս – Պատճառ գրոյս այս է, զի յորմէ հետէ Թիֆլիզեցի Չափարիս վարդապետն առաջնորդ [եղեւ] մեր Թիֆլիզ քաղաքին, որով կերպիւ իցէ ինքն ի բնէ թիւր էր սրտիւ առ Սուրբ Աթոռս... Արդ՝ վասն այսց պայմանացս ետու ես տեսուն իմոյ վեհապետին զձեռագիրս զայս, տեսողաց եւ[ս] հաճոյ թուեսցի»: Հաղպատի թեմի ու Նորաշենի եկեղեցու միաբան Ստեփան Բնյի եւ Թիֆլիզի մի խումբ քահանաների մեղայական-խոստումնագիրը Սիմէոն կթղկսին առ այն, որ զղջում են իրենց առաջնորդ Չափարիս վրդ-ին անհնազանդ լինելու, անկարգութիւնների եւ ապօրինութիւնների համար: Յանձն են առնում այստե՛տեւ հնազանդ լինել Սբ. Աթոռին եւ իրենց առաջնորդին: Իսկ տէր Ստեփանը պարտա-

ւորում է, եթէ չկատարի խոստումը, ապա յիսուն թուման տուգանք կտայ արքային: Խոստանում է Հաղպատի թեմից եկած ծխերին չհովուել, իսկ թէ այլ թեմերից լինեն, քանի տուն ծուխ որ լինեն իւրաքանչիւր տան համար արժուին դիւանին կտայ տասն-տասն թուման դրամ տուգանք: Սակայն, եթէ կամովի ցանկանան, որ հովուի, ապա եկամտի 2/3 մասը կտայ *էջմիածնին*՝ առաջնորդի միջոցով եւ երէցփոխանի իմացութեամբ, իսկ 1/3ը իրեն կվերցնի:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ ՈՁՈՁ 131, 133, 134, 135, 136, 142, 143, 144, 155, 157:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Եղեւ այս ի թուոջ մերում ի ՌՄԻԲ (1773), ի դեկտեմբերի ԻԸ (28), որ ի քաղաք Թիֆլիզ:

ՎԿԱՅՈՒԹԻՆ

1. 1ա Վերու գրեալըն տէր Սըռ[ե]վիանի դաբուլութեամբն Նորաշենու տէր Մեխիսէթըս վկայ[ւ] գուլով կընքեցի:
2. 1ա Վերոյ գրեալ տէր Ստեփանի դաբուլութեամբն Նորաշենու տէր Չափարիս վկայ գուլով կընքեցի:
3. 1ա Վերոյ գրեալ տէր Ստեփանի դաբուլութեամբն Նորաշենոյ տէր Ս[ա]հակս վկայ գուլով կընքեցի:
4. 1ա Տէր Ըստեփանի դաբուլութեամբն ձեռագրիս վկայ գուլով կընքեցի՝ Նորաշենու միաբան տէր Յակոբ:
5. 1ա Տէր Նիկողոսս վկայ գուլով կընքեցի:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ (ԺԷ դ., նոտագիր) Նորաշէնու տէր Ստեփանինն է:

- ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՍՏԷՓԱՆ /1216 (1767)»:
- 2. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՄԷԼԻՔԻ/ՍԷԹ //»:
- 3. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ /ԶԱՔԱՐԻԱ /ՌՄԻԲ

- (1773)»:
- 4. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՍԱՀԱԿ //»:
- 5. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՅԱԿՈՒՅ 17[6]7»:
- 6. 1ա (սեւ քանափով, ուրանկին, անընթեռնելի, նիկողոսի վկայութեան տակ):
- 7. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ՂԱԶԱՐ /ՌՄԻ (1771)»:
- 8. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՍԻՄ/ԷՅՆ»:

**166
ՀԱԻԱՏԱՐՄԱԳԻՐ**


թղթայ. 4, վաւ. 42

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՍԻՆ

ՌՄԻԲ-1773

ՀԵՂԻՆԱԿ՝ տէր Փիլիպպոս: ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա երեսանցի կթղկա:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ աղանակերպ Սուրբ Հոգի, կառուցին՝ խաղողի շեղանկին ողկոյց: ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 33,7x22,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 16+8:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերին եզրում տեղ-տեղ պատռուած, խոնաւութիւնից գրադաշտը գունափոխուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «է: Պատճառ գրոյս այս է, որ ես՝ տէր Փիլիպպոսս ի ՌՄԻԲ (1773) թուին եւ ի հոգատեմբերի Գ (3) ին ընդ Դաւիթ վարդապետին եկի ի Սուրբ Աթոռս էջմիածին... նզովեալ եղէց յամենասրբոյ Երրորդութենէն եւ յերից սրբոց ժողովոցն, ճԾ՝ (150)իցն, Մ՝ (200)իցն եւ ԳՃԺԸ՝ (318)ից սրբազան հայրապետացն, ի տեառնէ իմմէ սրբազան տեառն Սիմէոն սրբազան կաթողիկոսէի իսկ»: Փիլիպպոս քնյի հաստատմագիրը Սիմէոն կթղկաին, որով հաստատում է, որ ինքը չունի «աղթարմայուեան» (կաթոլիկութեան) կամ այլ ինչ հերձուածողութեան հակում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա եղեւ ի ՌՄԻԲ (1773), ի նոյեմբերի ԺԹ (19) եւ ի Սուրբ Աթոռս էջմիածին:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

- 1. 1ա Տէր Փիլիպպոս կնիք ոչ ունելով՝ գայս իմով ձեռամբ գրեցի եւ ինձ ընդունելի է:
- 2. 1ա Սրբոյ Աթոռոյս էջմիածնի միաբան Աբրահամ վարդապետ բանիս հասու եղեալ՝ կնքեցի:
- 3. 1ա Սուրբ Նշանի մահտեսի տէր Նիկողայոսս վկայեմ. մուհր չունէի, այս իմ ձեռացագիրս է:
- 4. 1ա Մըղնու տէր Աբրահամմ՝ վկայ:
- 5. 1ա Տէր Աստուածատուրս վկայ էմ:
- 6. 1ա Տէր Մէլիֆսէ՝ վկայ էմ:
- 7. 1ա Տէր Գաբրիէլս վկայ էմ:
- 8. 1ա Տէր Միսիթարս վկայ էմ:
- 9. 1ա Տէր Խ[ա]չատուրս վկ[ա]լ էմ:
- 10. 1ա Տէր Պօղոս վկ[ա]լ էմ:

- ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /Ա.ԲՐԱՀԱՄ /ՎԱՐԴԱՊԵՏ»:
- 2. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՄԿՐՏԻԶ ՎԱՐԴԱՊԵՏ /1210 (1761)»:
- 3. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ 1202 (1753)»:
- 4. 1ա (սեւ քանափով, ձուածեւ) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԳՐԻԳՈՐ /ՎԱՐԴԱՊԵՏ ՌՃՀԱ (1722)»:
- 5. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՅՈՎԱՆՆԷՅՍ ՎԱՐԴԱՊԵՏ /1210 (1761)»:
- 6. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ԳԱՂՈՒՍ /ՎԱՐԴԱՊԵՏ»:
- 7. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ԴԱԻԹՎԱՐԴԱՊԵՏ»:
- 8. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՄԱՀՏԵՍԻ ՏԷՐ Ա.ԲՐԱՀԱՄ /ՌՃԶԶ (1737)»:
- 9. 1ա (սեւ քանափով, բարակ) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ԱՍՍՏՈՒՐ /ՌՃԶԷ (1738)»:
- 10. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՄԷԼԻՔ/ՍԷԹ»:
- 11. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ԳԱՔՐԻԷԼ»:
- 12. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՄԻԿ/ԹԱՐ»:
- 13. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ /ԽԷԶԱՏՈՒՐ /ՌՄԺԸ (1769)»:
- 14. (սեւ քանափով, ձուածեւ) 1ա «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՊՕՂՈՍ /ՌՄԺ (1761)»:

167
ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ


թղթ. 4, վա. 43

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇԻՆ

ՌՄԻ-1771

ԳՐԻՉ՝ ՍԻՄԷՈՆ Ա ԵՐԵԱՆԳԻ ԿՐՈՂԿԱ:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «PROPATRIA» լուսապատկերով՝ շրջանաձև ցանկապատ, ներսում միապետը՝ զինուորական հանդերձով՝ եռաժանին ձեռքին, դիմացը առիւծ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 31,5x20,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ խոշոր բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 49:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ, ձախ եզրին ստանձի հետքեր:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Յառաջաբանութիւն հեղինակին – եթէ

հարկադրիմք ի Սուրբ Գրոց եւ, մանաւանդ, ի սրբազան առաքելոյն Պօղոսէ, աղօթել հասարակապէս վասն ամենայն թագաւորաց... Ձոր ամենաթագաւորն Աստուած ի փառս իւր համարելով լուրից էւ զխնդրուածս բազմութեանն կատարեցէ. ամէն»: Պարունակում է Սիմէոն կրողկի՝ ռուսաց եկատերինայ Բ. կայսրունու տօնախմբութեան առիթով եկեղեցիներում անցկացուելիք կանոնակարգի մասին առաջաբանը:

Ծնթ. «Յառաջաբանութիւնն» անջատուած է ամբողջական գործից:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

1բ Քրիստոսի նուաստագոյն ծառայից ծառայ Երեւանցի Սիմէոն կաթողիկոս ամենայն Հայոց եւ Սրբոյ Աստուածախօյի Աթոռոյս Էջմիածնի, ի թուոյ Փրկչին մերոյ 1771, ի յուլիս ամսոյ Ժ (10) ձեռամբ իմով:

ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ (ԺԸ դ., բոլորգիր) Սրբազան կաթողիկոսի ձեռագիրն է ի ներքոյ:

168
ՅՈՒՅԱԿ


թղթ. 4, վա. 44

ՍՈՒՐԲ ԳԱՅԵԱՆԷ

ՌՄԻԱ-1772

ԳՐԻՉ՝ ՅՈՎԱԷԿԻ ԵՒ ՍՏԵՓԱՆ ՎԱՐՊԱԿԵՒԲ:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1ա, 2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «C J», լուսապատկերով՝ առագաստանաւ, ձուածիր երկգիծ բոլորակ արտաքին երաստներով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,4x22,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսին: ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ՝ 1բ): ՏՈՂ՝ ասրբեր:



Նմուշ 1բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թղթի եզրերը մասամբ վնասուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Մատեանում ցուցակագրուած է 1772 թ. ապրիլի դրութեամբ Գայանէի վանին պատկանող «գեկեղեցական եւ զարտաքսական» ունեցումովը:

1. 1բ է: Ի ՌՄԻԱ (1772) թուին եւ յապրիլի մուտն, հրամանաւ տեսոն մերոյ սրբազան վեհին, նուաստ ծառայիս նորին Յովաէկի Եւ Ստեփան վարդապետիս սրբոյ վանիցն Գայեանէի գեկեղեցական եւ զարտաքսական ինչսն եւ զտաւարսն դարպար արարաբ, զորս ի ներոյ տեսցին – ԼԵ (35) հատ շապիխ սպիտակ եւ զոմմաշ հին ու նոր... Վերոյ գրեալքն յեկեղեցուջն են:

2. 2ա Յեկեղեցոյ զհրանոջն – ՉԱ (81) հատ մ[ա]րթապայ մեծ եւ փոքր... Ա (1) շերէպ, Ա (1) կշիւ:

3. 2ա Սեւատաւարին – Դ (4) էգ գոմէշ, Բ (2) ձնած... Ընդամէնն ԻԷ (27) մեծ եւ փոքր:

4. 2ա Ոչխարքն – է (7) Ծնած ոչխար... Ընդամենն ԼԸ (38) բայ ի գառանցն եւ յուլուցն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տե՛ս Բովանդակութիւն 1 (սկիզբ):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 2ա ([1772] թ., նտարգիր) Վերոյ գրեալսն ինձ՝ տէր Մկրտչիս թասլիմ եղեւ՝ գիտութեամբ տեղա-

պահին եւ Յովսէփ վարդապետին:

2. 2ա (նտարգիր) Ի մէջ դավթարիս գրեալքն ինձ՝ Յարութիւն վարդապետիս յանձնեցաւ՝ հրամանաւ սրբազանին, ձեռամբ Յուսէփ վարդապետին, ի թվոջ մերում ՌՄԻԱ (1772)ին. գրեցաւ մայիսի ժե (15)ին:


ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 2ա (երկիցս, սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՅԱՐՈՒԹԻՒՆ /ՎԱՐԴԱՊԵՏՈՍ»:

**169
ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ**

թղթպ. 4, վաւ. 45

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ, 2բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22x17,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 6, 5:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ծայրուած մասերի եզրերում պոկուած, գրադաշտը մասամբ գունափոխուած: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1ա «Ըստ խնդրոյ Ջուղայու բնակիչ հայ վաճառական Աստուածատուր Կոնստանդիանսեա-

նի... հրաման եղեւ ի նորին կայսերական մեծութենէ Պետրոսէ Ալէքսանեանէ ի <ի> յուլիսի 1706 ամի»: Նշուած է, որ Ջուղայի բնակիչ Աստուածատուր Կոնստանդիանսեանի խնդրանքով Աստրախանի Սբ. Աստուածածին նոր ֆարէ եկեղեցին կառուցուելու է հնացեալ փայտէ Աւագ եկեղեցու տեղում՝ կայսերական մեծութիւն Պետրոս Մեծի 1706 թ. յուլիսի հրամանով:

2. 2ա «Հրամանաւ օգոստոսափառ կայսերութեանց Եկատերինէ Ալէքսեյովնի ի 1763 ամի 14 յունիսի... իսկ աւարտումն էառ ի 1772 ամի, եւ օժաւ ի Մինաս արքեպիսկոպոսէ»: Նշուած է, որ Եկատերինա կայսրուհու 1763 թ. յունիսի 14ի հրամանով՝ ֆաղափ Պետրոս-Պօղոս եկեղեցու հիմնարկութիւնը եղաւ 1765 թ. օգոստոսի 2ին, իսկ կառուցման աւատը 1772 թուին, եւ օժեց Մինաս արքեպս-ը:

ՃՆՇԱԳՐՈՇՄ՝ 2ա (անընթեռնելի):


**170
ՀՐՈՎԱՐՏԱԿ**

թղթպ. 4, վաւ. 46ա

ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ սուրբան Համիդ: ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կրթիկ:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 24,5x20,6: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 32:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ թարգմանութիւն թուրքերէնից, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «Այս է յօսմանեան տերութենէն տուեալ Սիմէոն կաթողիկոսի ֆերմանի միտքն եւ խորհուրդն – 1. Ըստ կանոնի հայոց՝ մինչ կաթողիկոսն ոչ վախճանի, միւսն ոչ կարէ յաջորդել նմա... եւ այլ մասնաւոր հրամանք բազումք ի մէջ ֆերմանի գոյ»: Օսմանեան սուրբանի 1774/5 թ. Սիմէոն կրթիկին

տրուած հրովարտակի «միտքն ու խորհուրդքն» կրթկսի իրաւունքների մասին՝ 13 կէտից բաղկացած:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

2բ Մուհարէմամայ Յին հիշրէյի 1188 (1774/5) թուականին:


**171
ՀՐՈՎԱՐՏԱԿ**

թղթպ. 4, վաւ. 46բ

Ի դար

Հեղինակ՝ սուլթան Համիդ:

Թերթ՝ 16 էջ. չգրուած՝ 13-16: ՊՐԱԿ՝ Ա.Ճ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 21x14,9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ շղագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 19: ԿԱԶՄ՝ վարդագոյն թուղթ:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ արտագրութիւն, ձեռագիր:

Ծնթ. Արտագրուած է դպրոցական տետրի մէջ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1-12 «Իմ այս նվիրական հրովարտակը հանելիս՝ թող հայտնի լինի էրզիրումի, Կարսի, Իզմիրի, Բայազետի իմ մեծաշոյք վեզիրներին, նահանգապետներին, գավառապետներին, դատավորներին, ենիչերիների պետերին, մահապետներին եւ զինվորական իշխանություններին – Վոր ողորմություն շնորհող Բարձր ատյանիս, Իստանբուլի-Պոլսի եւ շրջանի հայերի Զաւարիա անուն պատրիարքի կողմից կնքված եւ մատուցված աղերսագրի համաձայն՝ պատրիարքարանի իրավասության ներքո, Անատոլի նահանգներում գտնվող Իւլ-ֆիլսէ անունով հայերի վանքում... Հրամայում եմ իմ այս նվիրական հրամանի կետ առ կետ գործադրումը»: Թարգմանութիւնն է [սուլթան Համիդի] հրովարտակի՝ ուղղուած էրզրումի, Կարսի, Իզմիրի, Բայազետի վեզիրներին, նահանգապետներին, գավառապետներին, դատավորներին, ենիչերիների պետերին, մահապետներին եւ զինուորական իշխանութիւններին առ այն, որ Զաքարիայ պատրիարքի աղերսագրի համաձայն՝

ա. յիշեալ վայրերի աւերումների հետեւանով վանքերում գտնուող չհատրներին կերակրելու համար կամատուր նուէրներ ու ողորմութիւն հաւաքելու մասին,

բ. հայ հպատակներով բնակեցուած վայրերից հանապարհորդներին եւ վանքերում մնացած վարդապետներին ու նրանց մարդկանց նեղութիւններ չպատճառելու մասին,

գ. երկրի հայ հպատակներին 3 տարին մէկ անգամ «բլան-եաղի (մեռոն)» բաժանելու եւ նուէրներ (ողորմութիւն) հաւաքող անձանց նեղութիւն չպատճառելու մասին,

դ. առաջնորդարանների սեփական եւ այլ կալուածքների օգտագործման վերաբերեալ դժուարութիւններ չհարուցելու մասին,

ե. նրանցից որեւէ պարտք կամ գոյք պահանջելիս՝ դատավարութիւնը Պոլսում տեղի ունենալու վերաբերեալ,

զ. պատրիարքը տեղեկացնում եւ խնդրում է պահպանութիւն եւ ապահովութիւն տրուի՝ համաձայն առաջներում շնորհուած հրովարտակների: Ուստի մատուցուած աղերսագրի հետեւանով՝ տրուում է հրովարտակ՝ գործադրելու ըստ այդմ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. կազմ Աա (Ի դ., շղագիր) Մուլթան Համիդ Առաջնից (1773-1789) Սիւլէն կաթողիկոս Յերեւանցուն տրված հրովարտակը՝ ի հետեւումն Զաւարիա պատրիարքի (1773-1781) խնդրագրի:
2. կազմ Աբ (Ի դ., շղագիր, մատիտով) Սիւլէնի եւ Զաւարիայի թղթակցությունները:
3. կազմ Աբ (Ի դ., շղագիր, մատիտով) Կցել նույն ժամանակվա վիլայեթների բաժանումները ըստ Հաջի Կալֆայի:
4. կազմ Աբ (Ի դ., շղագիր, մատիտով) Զաւարիա եւ Պոլոս պատրիարքների գիծը:
5. կազմ Աբ (Ի դ., շղագիր, մատիտով) Պոլիսը (պատրիարքությունը) քաղդպրոց:


172
ՆԱՄԱԿ

թղթա. 5, վառ. 1

ՌՄԻԳ-1775

ԳԻԻԶ՝ ԳԷՈՐԳ: ՍՏԱՅՈՂ՝ Սիմեոն Ա. Երեւանցի կրթկա:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «F», լուսապատկերով՝ բուսական զարդանախշ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 39,1x26: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 54:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Ոմն «Գէվոր» նամակով տեղեկացնում է [Սիմեոն] կրթկսին դրամական մի շարք հաշիւների մասին՝ նշելով, որ, ինչպէս հրամայել էր, մնացած գումարն ուղարկել է Կարին մհա-ի Փիլիպոսին: Խնդրում է երկու շնորհակալագիր ուղարկել Ղօշազանք Սուքիաս վրդ-ին իրեն փոխանցելու համար: Տեղեկացնում է նաեւ, որ խօսակցութիւն

կայ Բաղդաստի վրայ արշաւանքի մասին: Եթէ լուր ունենայ փաշային տեղեկացնելու համար, խնդրում է տանկերէն չգրել դրա մասին.

1. 1ա է: Գարշապարդ համբուրեմ սրբազան վեհիդ եւ օրհնութիւնդ կու խընդրեմք միշտ փափականօք ամենա[յ]ն ժամոյ հաշոյ թվեսցի մեծի տէրութեանդ. ամէն – եւս կընի հանմբուրման գարշապարիդ՝ ծանուցումն լիցի մեծի տէրութեանդ, զի գրէս առաջ, Բ (2) սիրոյ օրհնութեանն նամակդ եկըն էհաս առ ծառայդ... կամ մահտեսի հայրս եւ ծառայդ Կարապետն գարշապարդ կու հանմբուրեն եւ օրհնութիւնդ կու խընդրեն. ամէն:

2. 1ա (այլ գրով) Կրկին ծանուցումն լիցի մեծի տէրութեանդ, որ [յ]աղաքս Սուքիաս վարդապետի համար գրայցելիր, տեղս քնընեցինք... կամ գուլապն մոմն դրկես Ղօշազանք, մեզ կու հասնի, հաճոյ թվեսցի տէրութեանդ. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Թվին ՌԻՃԻԴ (1775), ապրիլի ամսոյ Գ (3) օրն: Փոքրըն ծառայ՝ Գէվոր:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1բ (սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ/ԳԷՈՐԳ /ՌՄԻԳ (1773)»:


173
ՀԱՇՈՒԵՑՈՒՅԱԿ

թղթա. 5, վառ. 2

ԺԹ դար

ԳԻԻԶ, ԹԱՐԳՄԱՆԻԶ՝ Մեկիսեղիկ աագ ֆիչ Ղամագեան:

ԹԵՐԹ՝ 4. չգրուած՝ 1աբ, 3բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «ЯВМЯ» «1817», լուսապատկերով՝ թագապսակ ձուածեւ շրջանակ, ներսում՝ տապարն ուսին արջ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,2x21,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ եռասիւն: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 2ա): ՏՈՂ՝ 35, 45, 14:



Նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերը զոյգ-զոյգ: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Հաշուեցուցակում արտայայտուած են 1775 թ. Դուշէթից (Վրաստան) վերադարձած, իրենց եկեղեցին այրուած գտած, նրա վերաշինութեան համար կատարուած ծախսերը, որն արել է գրիչ, քարզմանիչ, կաթողիկէ եկեղեցու աագ ֆիչ Մեկիսեղիկ Ղամագեանի հայրը.

1. 2ա-3ա Քաղաֆս այս, որ աներեցաւ, ի Դուշէթու վերսահն վերադարձաք ի տուն մեր ի 1775 թուականին դեկտեմբերի 3ին, մեր եկեղեցին այնպէս այրեցեալ էր, որ բաց ի յորմոց այլ ինչ ոչ երե-

փար, զոր ինչ ծախս արարեալ եմ ի վերայ եկեղեց-
այն՝ ի ներոյ գրի — 9 (հազար). Ի կողմն կանանց
մեծ դուռն պատրաստել ետուն ի վերայ ուստայից,
փայտից եւ թէ ի վերայ երկաթեայ մասարչից ծախս
եղեւ... 1 (հազար) 5 (հարիւր). Երկու ժամատպիք:

2. 4աբ 16 (թուման). Ի վերայ գաւթի շինութեանն,
որ ի կողմն արեւելեան... Քաղաքի աւերման զկնի,
գոր ինչ [ի] վերայ եկեղեցւոյն յաւելացուցեալ եմ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

Տե՛ս Բովանդակութիւն 1 (սկզբում):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. Յա Համեմատ նախատպին, ի ձեռագրոյ հօր
իմոյ, ի վրացերէնէն ի հայերէնն արտագրեցի կա-
թողիկէ եկեղեցւոյ աւագ քահանայ Մելքիսեդիկ
Ղամազեան:

2. 4բ Համեմատ նախատպին, ի ձեռագրոյ հօր
իմոյ, ի վրացերէնէն ի հայերէնն արտագրեալ՝
թարգմանեցի կաթողիկէ եկեղեցւոյ աւագ քահա-
նայ Մելքիսեդիկ Ղամազեան:

174

ՆԱՄԱԿ


թղթայ. 5, վառ. 3

ԲԱՍՐԱՅ

ՌՄԻԵ-1776

ՀԵՂԻՆԱԿ՝ մհա. Աստուածատուր Դաւթեան:
ՍՍԱՅՈՂ՝ Փիլիպպոս վրդ.:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լու-
սագծերով, լուսագրով՝ «FA», լուսապատկերով՝
բուսական զարդանախշ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 20,2x14,4:
ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա):
ՏՈՂ՝ 36+3:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բասար. 2րդ թերթին այրուածի եւ
խոնաւութեան հետեւ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1ա «է»: Հանճարեղ եւ գիտնական Սրբոյ էջ-
միածնայ ն[ո]ւիրակ Փիլիպպոս աստուածաբան
վարդապետիդ, զուրբ ներբանսն համբուրմամբ,
բազում կարօտիս պատկառեալ դիմօք, մատու-
ցանեմ ողջոյն ծառայական եւ ասեմ ողջ լե՛ր — եւ
արդ՝ գիտասցէ քոյին սրբութիւնդ տէր իմ եւ հայր,

Բուշեոց գրած օրհնութեան գիրդ, որ էր շ[ա]բաթ
30էն, եկն է՛հաս... Լե՛ր ողջ եւ առողջ ի պարծանս
ն[ո]ւաստիս»: Մհա-ի Աստուածատուր Դաւթեանը
խնդրում է էջմիածնի նուիրակ Փիլիպպոս վրդ-ին,
որ մօտը գտնուող կնքուած երկու «ամանաթս»
պահի: Իսկ եթէ որեւէ տեղ գնալու լինի, ապա
երկուսն էլ նոյն կնիքով դնի պրն Կարապետ Գաս-
պարովին ուղարկած ֆակում, որի շուրջը 12 տեղ
կնքել է, գրուին էլ ինքը կնքի եւ տայ պրն Աւէտ
Տէր-Մարգարեանին՝ խոստովանութեամբ երկու
բարի մարդկանց, եւ իրեն այդ մասին յայտնի.
«ապսպարեր, որ մարդոյ բան շասեն, զրայ ժամա-
նակս չար է»: Այնուհետեւ, այլեւայլ գործերի հետ
կապուած, խնդրում է ինչ որ անի, իրեն իմաց
տայ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Թիվն 1776, յուլիսի ԺԲ (12)ին, Բասրայ, որ
եմ ծառայից ծառայ մահտիսի Աստուածատուր
Դաւթեան:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ

1ա Մեար Բօմանին շատ բարով անիս պարոն
Աւէտ Տէր մի գրովն (յ[ո]ւլ[ի]սի ԺԸ (18) էթաս):

175

ՆԱՄԱԿ


թղթ. 5, վա. 4

ՌԱՇՏ (ՊԱՐՄԿԱՍՏԱՆ)

ՌՄԻԵ-1776

Հեղինակ՝ Դավիթ Մովսիսեան: ՄՍԱՅՈՂ՝ Սի- մեոն Ա Երեւանցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2աբ: ՆԻԻԹ՝ թուղթ. լու- սագծերով, լուսագրով՝ «EROBATRIA», լուսա- պատկերով՝ շրջանաձև ցանկապատ, ներսում զի- նուտրական հանդերձով միապետը՝ գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր առիւծ՝ սուրը ձեռքին: ՄԵՏՈՒԹԻԻՆ՝ 30,4x19,6: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ ՅՑ, 12:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերին մումի եւ խոնա- տութեան հետեւ, թանաքը թափուած, 1բ-ի տեխ- տը տպուած 2ա-ին:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1աբ «Աստուածընտիր եւ շնորհագարդ, մե- ծարգոյ եւ բարձրափառ, հեղինակիդ վսեմա- կանի եւ գերափայլի հանրից ազանց, տեառնդ գերընտիր եւ երիցս երանեալ, հանճարաշատ սրբազան վեհապետիդ, խոնարհեալ ի վերա[յ] երեսացս, երկրամած անձամբ եւ պակուցեալ դիմօք վերընծա[յ]եմ երկրպագութիւն գերկնա- շու գարշապարացդ, ընդ նմին եւ գողջակեալդ ի Տեառնէ մախթեմ եւ գերկնասլաք օրհնութիւնդ ի նպաստ եւ ի ձեռնառու հօվանատրութիւն հեփոյս, ժտեմ մեծաւ տենչմամբ, եւ եռանդն սիրով իսկ եւ իսկ – եւ զկնի խոնարհական եւ բազմաբաղձ հան- բուրիցս ծանիցէ վսեմագոյն տէրութիւնդ, որ թիւն անցեալ եւ օգոստոսի 6էն Պետրոս վարդապետիւ եւ հոկտեմբերի 8էն պարոն Յովսէփ Աստուածա- տուրեանիւ, որ մական[ո]ւամբ Լօյիւնէնց կոչեն, որ է 2 հատոր ծառայական թխտօվս տեղոյ... Ի այս- մանէ խնդրեմ յԱստուծոյ, զի պահեսցէ տեառնդ իմ երկար ամօք, խաղաղ կենօք եւ հաստատուն տէրու-

թեամբ ի փառս իւրոյ մարդասիրութեամբ եւ ի պար- ծանս խղճալի ազգիս Հայոց. ամէն»: Ռէշտից Դավիթ Մովսիսեանը [Սիմէոն] կթղկսին տեղեկացնում է, որ համապատասխան գրութիւններով մի արծա- թէ սկիհ՝ իր «մաղձմանօվն» ոսկեգօծուած, յանձ- նել է պրն Յովսէփ Աստուածատուրեանին եւ մի արծաթէ խաչ էլ Պետրոս վրդ-ին Սբ. Էջմիածին բե- բելու համար, սակայն «վասն տարոյս ձախորդու- թեան» ծովում նաւաբեկութիւն է եղել եւ նաւեր են ջրասուզուել: Նշում է նաեւ, որ Յովսէփ վրդ-ից դեկտեմբերի 8ին Ղզլարից գրութիւն է ստացել, որ տեղի գործը յաջող է եղել, սակայն ժողովուրդը մեծ տրամութեան մէջ է, գնալու է Հաշտարխան, «ըստ խնդրոց Մօսկօվու եւ Պետրբօրֆու իշխա- նացն երթացէ Պետրբօրֆ եկեղեցին օծելու»: Իսկ պրն Եղիազար Զուղայեցու խոստացած մէկ գոյգ մեծ գանգի համար Յովսէփ վրդ-ը գրել է, թէ հնար է նաւով ուղարկեն, սակայն «բեռնակրողաց հետն խոսեցա[յ]՝ յանձն չառին»: Աւելացնում է նաեւ, որ ուղարկելու համար պատրաստել էր նաեւ շիմշատ փայտ, սակայն մարտ ամսին ֆաղաֆում հրդեհ է բռնկուել, այրուել է Խ-Ծ (40-50) մարդ եւ ՌՇ (1500) տուն, շիմշատ փայտն էլ է այրուել: Յոյս է յայտնում նորը պատրաստել եւ աշնանն ուղար- կել: Վերջում տեղեկացնում է. «թխտաբեր պարոն Սիմոնին մին բան եմ ապսպարել, որ ըսպասուամնդ յայտնելոց է, եթէ հնար է, խնդրեմ ի տէրութիւնէդ, որ հոգս տարեալ՝ կատարուամն շնորհես»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1բ Աւարտ բանիս մնամ քոյին գերամաքուր տէրութեանդ եւ բարձրագոհութեանդ յարածամ հպատակ եւ հնազանդ եւ պատրաստագունեղ՝ ծա- ռայից ծառայ՝ Դավիթ Մովսիսեան: Ապրիլի 10ին, Ըոնէշ, ի 1776 թ[ո]ւին:
2. 1բ Վսեմագունեղի եւ երջանկափայլի տեառնդ իմոյ խոնարհեալ ի վերայ երեսաց հանբուրեմ զթաթք ոտիցդ մեծաւ կարոտիւ, ծառայից ծառայ՝ Մօվսէս Դաւթեան:

176
ԿՏԱԿ


թղթայ. 5, վառ. 5

[ԴՁԼԱՐ]

ՌՄԻԵ-1776

ԳԻԻԶ՝ տէր Մարգար:

ԹԵՐԹ՝ 2. շգրուած՝ 1բ-2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «LX», լուսապատկերով՝ թագակիր կրկնակ շրջանակի մէջ խաչակիր գաւազանով թագակիր աղիւծ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 32,8x-20,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ խոշոր բոլորգիր, նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 18+6+3:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թղթի եզրերը վնասուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1ա «Որպէս ասէ առաքեալն Պօղոս՝ կտակ յետ մահուն հաստատուն է (Եբր. Թ 17): Պօղոս որդի Իսախանն ի հիւանդութեանն մինչդեռ կենդանի էր, առաջի Աստուծոյ ինձ՝ տէր Մարգարիս խոստովանեցաւ... այլ մարդոյ գնալ կամիցի, կէս պաղս կնոջս լինի, ուր կամի գնայ, տունս եւ այգոյ կէս պաղս Սուրբ Աթոռոյն էջմիածնայի՝ յիշատակ իմ հոգւոյն»: Դզլարեցի հնգցլ Պօղոսի որդի Իսախանի կտակն է, որ հիւանդութեան ժամանակ գրառել է խոստովանահայր տէր Մարգարը՝ երկու վկաների ներկայութեամբ, ըստ որի՝ Իսախանն իր ունեցուածքից յատկացնում է 4 թուման Սբ. էջմիածնին, 1 թուման առաջնորդին (Յովսէփ արքեպս. Արղութեանց – Ա.Մ), 2 թուման երուսաղէմին, 1 թուման 5000 դիան Սբ. Աստուածածին եւ 1 թու-

ման Սբ. Լուսաւորիչ եկեղեցիներին, 5000 դիան Խոր Վիրապին: Կնոջը կտակում է, քանի դեռ ողջ է, «նստի իմ տանս, տունս եւ այգիս վայելէ եւ ուտէ, յետ կենացն՝ Սուրբ Աթոռոյն», իսկ թէ ցանկանայ ամուսնանալ, ապա՝ համապատասխան ըստ նշուածի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Բանի Իսախանին գրեցի խոստովանահայր տէր Մարգար: Գրվեցաւ ի ՌՄԻԵ (1776), եւ յօգոստոսի ԺԴ (14) ումն վաղջանն լուսայնո[գ]ւոյն:

ՎԿԱՅՈՒԹԻՆ

1. 1ա եւ՝ Բալասան որդի Դավիթի վերոյ գրեալն ողորմած հոգի Իսախանի բերանէ լսեցի եւ իմ մօտն գրեցաւ այս կտակայգիրս, վասն որոյ Աստուծով վկայեցի:
2. 1ա եւ՝ Թեվայթրօսի որթի Յո[ւ]սէփըս հանկուցեալ Իսախանի խոստովանահայր տէր Մարգարի պերանէն լսեցի եւ վկայեցի:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

Չբ (նոսրգիր) Դզլարեցի հանգուցեալ Պօղոսի որդի Իսախանի կտակագիրն է, որ գտունն իւր եւ զկէս այգին վախճ վչիշատակ է տուեալ Սբոյ Աթոռոյն էջմիածնի ի հայրապետութեանն տեառն Սիմէօն սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց եւ ի յառաջնորդութեան սորին ձեռնասուն աշակերտ Սանահնեցի Յովսէփ արքեպիսկոպոսին Արղութեանց: Սորին մէկ սաւատն է ի Դզլար ի ձեռս գործակալացն Սբոյ Աթոռոյն պարոն Դանիելին եւ պարոն Նուրիջանին եւ մէկն ի Հաշտարխան ի դաւթար առաջնորդարանին արկեալ: ՌՄԻԵ (1776) յօգոստոսի ԺԴ (14):


177
ՆԱՄԱԿ

թղթայ. 5, վառ. 6ա

ՌՄԻԵ-1776

ՀԵՂԻՆԱԿ՝ մհա. Փիլիպոս եւ Առաքել Մուստիկիեաններ: ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կթղկս: ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսա-

պատկերով (անընկալելի): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 32,4x22,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 37+2+4:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշար գունափոխուած, հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1ա «է: Մեծի եղանկագարդ եւ արժանավայել տիեզերահըռչակ ընդհանուր ծա[յ]րայգոյն քանանայապետիդ, տեսունդ գերընտիր սրբազան վեհիդ մատուցանի հանրոյր գերկնաշու գարշապարացդ ըղծի մեծաւ եւ փափաքանօք տենչմամբ խընդայլ ի Տէր – Իսկ ըզկնի հանրաբայմայտոյց գրոյս, գէկ լիցի մեծի տէրութեանդ, որ փէտըրվարի ժէ (17)ին եւ փէտըրվարի ելսն գըրած

օրհնութեանեն գըրեանքը առ ծառայնստ էհայս... եւ այլէֆայլ խէր լիցի, լինայ պատվական հօրն մերոյ մեն օրն բազում»: Մհա-ի Փիլիպոս եւ Առաքել Մուրտիկիեանները գրում են [Սիմէոն] կթղկսին, որ ստացել են փետրուարին ուղարկած երկու գրութիւնները եւ, ինչպէս նշուած էր, գրածները բարեկամ թաքարի միջոցով ուղարկել են Ստանբուլ: Տեղեկացնում են, թէ նամակի մէջ դրել են մի անդորրագիր՝ «խալաս», որը Թոխաթի նուիրակ Պետրոս վրդ-ի 4000 դուրուշի անդորրագիրն է: Յայտնում են նաեւ, որ Զաքարիայ վրդ-ը չի վճարել Ստանբուլի Նազարէթ ծառային ուղարկած իրերի արժէքը՝ 1910 դուրուշ: Խնդրում են անօրինութիւն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Գրվեցաւ թիւվն ՌՄԻԵ (1776)ին, մարտի ամսոյ ԻԵ (25)ին:
2. 1ա Մտայ Փըրկչեն մահտեսի Փիլիպոս եւ Առաքել Մուրտիկիեայնսըէ:

ԳՐՈՒԹԻՆ


թղթ. 5, վա. 6բ

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՍԻՆ]

ՌՄԻԵ-1776

ԳՐԻՉ՝ [Սիմէոն Ա. Երեւանցի կթղկս]: ՍՏԱՅՈՂ՝ Զաւարիա վրդ.:

ԳՐՈՒԹԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ շղագիր (նմուշ՝ 1բ): ՏՈՂ՝ 30+4:



Նմուշ 1բ

ԻՍԿՈՒԹԻՆ՝ սեւագիր, ձեռագիր:

Մնթ. Գրուած է № 177ի՝ մհա. Փիլիպոսի նամակի հակառակ թերթին որպէս սեւագրութիւն:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1բ «Յորմէ սիրով եւ կարօտի ծանիր, սիրելիդ իմ Զաւարիայ հանճարափայլ վարդապետ, զի ի ներկայումս ոչինչ ունէի գրել քեզ հարկաւորապէս, միայն զայս գրեմ ի կարճոյ... Բաւ է սիրելոյդ իմոյ»:

[Սիմէոն] կթղկսը Զաքարիայ վրդ-ին տեղեակ է պահում մհա. Փիլիպոսից ստացած նամակի մասին եւ կարգադրում, որ մի նամակ գրի պատրիարքին, որ Նազարէթն իր «ղապզն յետ առնուցու»: Նաեւ զարմացած է, որ Նազարէթի գնած իրերի արժէքը՝ 1910 դուրուշ, պատրիարքը չի վճարել, յորդորում է ինքը վճարի եւ գրի գումարի չափը: Նաեւ հարկ է համարում գրել Երուսաղէմի նուիրակ Աբրահամ վրդ-ի մասին, որ «այս քանի տարի է, որ ցայս կողմունիս շրջի ու զիւր գործն ամէն տեղ աւարտեալ է, չգիտեմ թէ վասնէ՞ր ոչ դառնայ առ առաքիչն իւր»: Տասն անգամ Թիֆլիզ տարով է գնացել, ումանց իր կողմն արել, թէ իրեն առաջնորդ ընտրեն, նաեւ «ի Կենչայ չիք Իսրայէլին հետ խորհրդակցի, զի ի նմանէ զեպիսկոպոս լիցի»: Դրա համար գրում է, որ Զաքարիան նրան գրի, որ վերադառնայ իր առաքողի մօտ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ 1225 (1776), ապրիլ 19:

179
ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 5, վա. 7

ԳԱՆՁԱՍԱՐ

ՌՄԻԷ-1778

ՀԵՂԻՆԱԿ՝ Աղուանից Յովհաննէս է Գանձասարեցի կրղկա: ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա Երեւանցի կրղկա:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «A Y»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35,7x22,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրաման բոլորգիր, նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 48+6:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերին եզրերը ծալուած, 2րդ թղթի աջ միջնամասը պոկուած-ընկած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «է: Գերեշանիկ սրբոյ հօրոյ ամենայն Հայկազնոյ, եւ յատուկ իմն հատոյդ եւ տեսնող երիցս երանելոյ սրբազնասուրբ Բանանայապ[ե]տիդ եւ ծայրագոյն վեհապետիդ ամենայն Հայոց մեծաց, եւ փոխանորդ եւ գահակալ սրբոյ լուսատուփն հոգւոց մերոց, եւ ծայրագոյն պատրիարզ սրբոյ գահիդ Միածնայիջի, խոնա[ւ]հապարանոց յերկիտլալի դիմօք երկրպագութիւն մատուցի, եւ համբոյր աստուածագործ սրբոյ աջոյդ կարօզին ըղձիւ – Իսկ զկնի յայտնի լիցի գերազօր տեսանդ իմոյ, որ ի հրամ[ա]ն առնուլն մեր ի սպասու տեսանդ եկեալ ի սուրբ տուն սրբութեանդ ժամանեցաք, թէպէտ ճանապարհին ցրտահար եղեալ՝ փոքր ինչ հիւանդութիւն կրեցաք... Նաեւ Աստուծով այս գարնան թուղթս հնգեքին մէլիքաց եւ այլ ամենայն զորպիսութեամբ յղեւոց եմք, որ եւ լեր ողջ եւ յառողջ, ի յողջ գլուխն Քրիստոս, ի պարծանս սրբոյ տանս եւ ի պարծանս մերս անարժանութեան»: Աղուանից [Յովհաննէս է Գանձասարեցի] կրղկար յայտնում է էջմիածնի [Սիմէոն] կրղկսին, որ ող-

ջութեամբ հասել են Գանձասար, սկսել են եկեղեցու տանիքը նորոգել, սակայն վարպետ չկայ, «որ սորա տանիսն կատարեալ, որպէս ինքն շինեալ է, այնպէս շինէ»: Խնդրում է մէկ կամ երկու վարպետ ուղարկել, որ աւարտին հասցնեն գործը: Իսկ իրավիճակի մասին տեղեկացնում է. «լաւ են խաղաղ թէ՛ Շիրուան եւ թէ՛ Խամսէ, բայց Կէնջու Զաւառ խանն եկեալ է աստ, մինչեւ յիմայ մէլիք Օսէփի տանն է լիեալ, այժմս մէլիք Աղաւթի տանն է, չէ գնալոյ Գէնջէ, թէպէտ բազումք եկին՝ ոչ գնաց, այսպէս մնացեալ կայ»: Աւելացնում է նաեւ, որ, չնայած ասել էիր ոչ մէկին գիր չես տայ, սակայն եկել է Գաւրիթ վրդ-ը այլ վրդապետների հետ, գրել են Աբրահամ, Սահակ եւ ուրիշ վարդապետներին, «չգիտեմք հրամանացդ բանիւ է եւ թէ ինքնագլուխ գրեն թարց հրամանի հրամանացդ», եւ ցանկանում են 15 տարուայ խաղաղուած կոիւր կրկին հաստատեն, խնդրում է վեհափառին «ի խնամս քոյ ունելով՝ զողորմութիւնդ անպակաս արասցես եւ թղթով միով զպատքեալ սիրտ մեր զովացուցես»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Ի ՌՄԻԷ (1778) թուիս, փետրվարի ամսոյ Իէ (27), ի սուրբ աթոռս Աղուանից Գանձասար:

ՀԱՍՅԷ

2բ Աստուծով: Հասցէ թուղթս ի սուրբ գահն էջմիածին եւ անդ ի սպաս տեսան սրբազնասուրբ վեհապետին ամենայն Հայոց մեծաց, ի բարին: Ամէն:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ Ա. 1բ (կարմիր թանաքով, ուրանկին) «է: /ՅՈՂԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ /ՌՄԺԲ (1763)»: Բ. 2բ (մուգ շագանակագոյն, վնասուած գմուտսին) «է: /ՅՈՂԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ /[ՌՄԺԲ] (1763)»:

ԳՐՁԱՓՈՐՁ՝ 1. 2բ «Գրչափ»: 2. 2բ «Գրչափորձ է, բայց լաւ է»: 3. 2բ «Գրչափորձ, լաւ տես, լաւ է, դու ոչ ես լաւ»: 4. 2բ «Գրչափորձ է, այս լաւ է լաւ, դու ես փիս»: 5. 2բ «583+988=5571»:

180
ԿՏԱԿ


թղթայ. 5, վառ. 8ա

ԲՕՐԱՂԱՆ ԳԻԻՂ (ՂԶԱՐ)

ՌՄԻԵ-1776

ԳՐԱԳԻՐ՝ տէր Յարութիւն: ՀԵՂԻՆԱԿ՝ Թամար:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած 1բ-2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, երկիցս լուսապատկերով՝ ներսից ոճաւոր ուղղանկիւն շրջանակ, մէկի ներսում՝ «Փ Ե» մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 36,3x22,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրանման բոլորգիւր, նոտրգիւր (նմուշ՝ 1ա), վրացերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 31+13+6:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերին եզրերը ծալուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՆ

1ա «է: Կաման Աստուծոյ եւ միջնորդութեամբ սուրբ Աստուածածնին եւ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին եւ՝ Թիւֆիզեցի հանգուցեալ Սիօպի դուստր տառապեալ Թամարս... Իսկ կատարողքն եղիցին օրհնեալք յԱստուծոյ, ի Սրբոյ Աթոռոյն էջմիածնէ եւ ամենայն սրբոցն Աստուծոյ»: Թիւֆիզեցի հնգցլ Սիօպի դուստր Թամարը, զաւակ չունենալու պատճառով, Ղզլարում գնած իր այգին կտակում է Սբ. էջմիածնին իր, ամուսնու եւ ծնողների յիշատակին:

Մնթ. Կաակը գրուած է 2 օրինակից. մէկը Սբ. էջմիածին ուղարկելու, միւսը առաջնորդ Յովսէփ արեւպս. Արղութեանի մօտ պահելու համար: 2րդ օրինակը տես ա՛ստ № 181:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Գրեցաւ սիգէլս ի 1776 թուոյ Փրկչին, իսկ ըստ Հայոց ի հազար երկու հարիւր քսան եւ հինգ (1776), եւ ի մարտ ամսոյ տասն եւ երկուքն, ի

գիւղս Բօրաղան: Այս սիգէլս երկու գրեցաք համեմատ միմեանց եւ կնքեալ ետուք առաջնորդին մերոյ տեառն Յովսէփ արքեպիսկոպոսին, որ զմինն ի Սուրբ Աթոռն առաքեսցէ եւ զմիւսն աստ առ ինքն պահեսցէ, որ յետ նորին աստ նստող ն[ո]ւիրակ եւ առաջնորդսն նովաւ տիրեսցէ այգւոյն մերոյ:

2. 1ա եւ՝ Հաշտարխանու քահանայ, Պապի որդի տէր Յարութիւնս բանիւ պարոն Յարութիւնին եւ իւր կենակից Թամարին գրեցի եւ վկայեմ:

ՎԿԱՅՈՒԹԻՆ

1. 1ա եւ՝ Բրօղանու գայհանայ տէր Ավաքս ի տեղի իմ խօստովանայորդի Թամարին ձեռք եղի եւ ես վկայ եմ վերոյ բանին:

2. 1ա վրացերէն:

3. 1ա Վերոյ գր[ե]ալ բանուով յուզտայ Յարութիւնին կամ յիրան կողակից Թամարի յիրաւորով վեկայ եմ՝ Ծառու տի Յակոբփ:

4. 1ա Վերոյ գիրեալ բանին ուստայ Յարութիւնին կամ Թամարի իղրարովըն վկայ եմ՝ Ապր[ա]համ դի Սահակ:

5. 1ա Վէ[ր]օվ գիր այ Թամարի եւ իրան կենայկից Արութին իղրայօվ վկայ՝ Եղիայէս տի Պախու[տ]այ:

6. 1ա Ղզլարու աւագ քահանայ տէր Մարգարս բանիւ Թամարին եւ իւր կողակից Յարութիւնին վկայ եմ:

7. 1ա եւ՝ Ղզլարու քահանայ տէր Մինասըս բանիւ Թամարին եւ իւր կողակից Յարութիւնին վկայ եմ:

8. 1ա Վերոյ պ[ա]ր[ո]ն Յարութիւնին եւ ուր կողակցին Թամարին եղրարօվ վկայ եմ՝ դէբու-տատ Մարկոս դի Ըռ[ու]սաամի:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2բ (ԺԸ դ., նոտրգիր) Ի Ղզլար եղեալ այգոյ իբրու զապալայն է ի ՌՄԻԵ (1776) թվոյն:

181
ԿՏԱԿ

թղթալ. 5, վառ. 8բ

ԲՕՐԱՂԱՆ ԳԻՒՂ (ՂԶԱՐ)

ՌՄԻԵ-1776

ԳՐԱԳԻՐ՝ տէր Յարութիւն: Հեղինակ՝ Թամար:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2ա: Նիւթ՝ թուղթ. լուսագծերով, երկիցս լուսապատկերով՝ ներսից ռնատր ուղղանկիւն շրջանակ, մէկի ներսում՝ «Փ Ե» մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 36,3x22,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրանման բոլորգիր, նոտրգիր (նմուշ՝ 1ա), վրացերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 31+13+6:

1. 1ա եւ՝ Բրօյղանու քայհանայ տէր Ավաքս տեղի իմ խօստովանայորդի Թամարին ձեռք եղի եւ ես վկայ եմ վերոյ բանին:

2. 1ա վրացերէն:

3. 1ա Վերոյ գր[ե]ալ բանիս յուստայ Յարութիւնի կամ յիրան կողակից Թամարի յիրողարովն վեկայ եմ՝ Ծատուր տի Յակոբի:


4. 1ա Վերոյ գիրեալ բանին ուստայ Յարութիւնի կամ Թամարի իղրարովըն վ[կ]այ եմ՝ Ապր[ա]համ դի Սահակ:

5. 1ա Վերով գիրալ Թամարի եւ իրան կէնայկից Արոպի իղրարով եւ՝ Եղիայէ Պախուտի որդի վկայ:

6. 1ա Ղզարու աւագ քահանայ տէր Մարգ[ա]րս բանիւ Թամար[ի]ն եւ իւր կողակից Յարութիւնին վկայ եմ:

7. 1ա եւ՝ Ղզարու քահանայ տէր Մինասըս բանիւ Թամարին եւ իւր կողակից Յարութիւն[ի]ն վկայ եմ:

8. 1ա Վերոյ պ[ա]ր[ո]ն Յարութիւնին եւ ուր կողակից Թամարին եղր[ա]րով վկայ եմ՝ դէքուպատ Մարկոս դի Ըն[ու]ստամի:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխուած: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

Ծնթ. 2րդ օրինակն է № 180ի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա ՏԵ՛ս № 180ի Բովանդակութիւնը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա ՏԵ՛ս № 180ի Յիշատակարան 1, 2:

182
ԳՈՅՔԱՅՈՒՅԱԿ

թղթալ. 5, վառ. 9

ԱՆԳՂԱՅ ՎԱՆՔ (ՏԱՐՕՆ)

ՌՄԻԶ-1777

ԳՐԻԶ՝ Միրզա:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: Նիւթ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «F L», լուսապատկերով՝ բուսական զարդանախշ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33,2x24,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 30:

1ա «Այս է Անգղայ վանից մալոյ Սուրբ Պօղոս ամանաթին, ոյ էր Տարոն – Բ (2) մեծ Ավետարան մէկ արծաթայպատ... Մէկ եմիփորան»: Գոյֆացուցակում նշուած է Անգղայ վանի այն առարկաների ցանկը, որոնք յետոյ վանի Աւետիս վրդ-ը եւ 4 մարդիկ վերցնում ու տանում են:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Այ որ թվին ՌՄԻԶ (1777) մայիս[ա]յ ժԶ (16)ին, որ եկին Անգղայ վանից եպիսկոպոս, Ավետիս վարդայպետ եւ գեղի ըռէս Սարուհան, ըռէս Արթին, Միրաբ, Կիրայկոս, Ասպատուր եւ վանից



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերը անհամաչափ:

ժամ[ա]րար տէր Յուսէփ, որ եկին գնացին մօտ Սահակ աղէն բերին Սուրբ Պօղոս յուրենոյ կութին, բացի մալտէսան, վերուցին տարան եւ ներքոյ մարդերաց վկայութէնօվ մենք Դ (4) մարթս վարդապետի մօճր զարկինք վէր էս հլասին, տվինք, առինք, սրժանք:

2. Տե՛ս վկայութիւն 2:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1. 1ա ես՝ Ս[ա]հակ աղէս վկայ:

- 2. 1ա ես՝ Միրզէս գրեցի, վկայ եմ:
- 3. 1ա Գալոս՝ վկայ:
- 4. 1ա ես՝ տէր Մաղայգէս վկայ:
- 5. 1ա ես՝ տէր Յովանէս վկայ:
- 6. 1ա (Երկիցս) ես՝ Պետրոս վկայ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (սեւ թանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԱՎԵՏԻՍ /ՎԱՐԴԱՊԵՏ ՌՄԺ (1761)»:

183


ԳՐՈՒԹԻՆ

թղթ. 5, վա. 10

ԺԹ դար

ԳՐԱԳԻՐ՝ գրագիր Գրիգոր (1777 թ.):

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «ՓԿԻ» «1823», լուսապատկերով՝ թագապակ ձուածեւ շրջանակ, ներսում՝ տապարն ուսին արջ: ՄԵԾՈՒԹԻՆ՝ 34,4x22,1: ԳՐՈՒԹԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 38+2:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՆ՝ օրինակ գրութեան (արտագրութիւն), ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1ա «Հրամանաւ Աստուծոյ եւ ամենայն սրբոց նորա մէք՝ Ամիրախվարի որդի Գիորգի Մինբաշայ կողակից եւ Պարնի քեռդուատր Եսիիմէս... եթէ սոյն գետնի եւ կա՛մ ճորտի կողմանէ, կա՛մ ի մէնջ, եւ կա՛մ յազգականաց մերոց, եւ կա՛մ յայլոց դաւ արասցէ պատասխանի տ[ո]ւօղն մէք լինիցիմք»: Ամիրախվարի որդի Գեորգի Մինբաշու կողակից Եսիիմէն եւ որդին Գիվը եւ Աբղուզափարը վաճառում են Տիխիսում ունեցած, Հերակլ արքայի կողմից հաստատուած իրենց «Տափիթաղի» հողը եւ մէկ տունը քաղաքացի Նազարբէկի որդի Յովսէփին եւ նրա որդիներ Դավթին ու Բէժանին, դրամը ստանում են ամբողջութեամբ ու տալիս այս գրութիւնը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1ա եւ ես՝ գրագիր Գրիգորս Պարնի քեռորդուոյ

եւ իւր որդուց բանիւն գրեցի եւ վկայեմ: Գրեցաւ ապրիլի Գ (3), Վրաց թիւ 465:

ՎԿԱՅՈՒԹԻՆ

- 1. 1ա Քաղաքի մէլիք՝ Մամասելիս Աւետիփ:
- 2. 1ա Աբէսարմեան Պապի որդի Հասարք:
- 3. 1ա Թաղօեան Վարդանի որդի Մկրտում:
- 4. 1ա Ամիրաղեան Զուրաբի որդի Դուրիսավար:
- 5. 1ա Խիթարեան Գուրգէնբէկի որդի Զուրաբ:
- 6. 1ա Փէրդանգեան Անդրիայի որդի Թովմա:
- 7. 1ա ես՝ Պարնի քեռորդի Եսիիմէս սոյն գրոյս

ղաբուլ եմ եւ իմ ձեռքն է:

- 8. 1ա ես՝ Դաւիթս այս գրոյս ղաբուլ եմ:
- 9. 1ա Ամիրախվարի որդի Դաւիթս այս գրոյս ղաբուլ եմ. կնիք չունէի, այս իմ ձեռքն է:
- 10. 1ա ես՝ Խիթարեան Գիօրգի որդի Զուրաբս վկայ եմ:

11. 1ա Եովանէ Կալատուզի որդիս Պարնի քահանայս վկայ եմ:

12. 1ա ես՝ թագուհույ դիվան Մօլարիէթ Խուլէսա վկայ եմ. մայիս 15, Վրաց թիւ 465:

13. 1ա ես՝ Խարէթի եկեղեցույ աւագ քահանայ Գիօրգի Լարաձէ վկայ եմ:

14. 1ա Սիռնի աւագ քահանայս վկայ եմ:

15. 1ա ես՝ Յիւլիվանի նացվալն Պարնի քեռորդուոյն հրամանին վկայ եմ եւ իմ վերահաստութեամբն է. Սօլօմօն Զէրգիլիձի որդի, 1777:

16. 1ա Մէք՝ Ամիրախվար դիւանբէկ դասէ հաստատեմք զսոյն սիգէլս:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ

1ա Սորայ իսկն կայ ի կամիսիայն՝ կնեազ Իվանէ Ամատունեան:

184
ՆԱՄԱԿ


քղթպ. 5, վառ. 11

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

ՌՄԻԶ-1777

Հեղինակ՝ Գեորգ Վարդանեան, Մնացական Յակոբջանեան, Յարութին Վարդանեան: ՍՏԱ-ՑՈՂ՝ արն Պետրոս:

Թերթ՝ 1: Նիւթ՝ բուրբ: Մեծնիւթիւն՝ 31,4x-21,5: Գրձիւթիւն՝ միասին: Գիր՝ բլուրգիր, նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 37:



նմուշ 1ա

Վիճակ՝ բարար. գրադաշար գունափոխուած, հին ու նոր նորագմամբ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «է: Սիրով եւ օրհնութեամբ բազմաւ ծանիր, սիրելիդ մեր պարոն Պետրոս, զի եղբայրն քո թարջիման Ստեփանն մինչ եկն աստ ընդ թղթաշէն ֆռանկացն ի ՌՄԻԶ (1775) թուոյ մերում... Գրեցաք այսքան, զի գիտասցես: Բաւ է»: Գեորգ Վարդանեանը, Մնացական Յակոբջանեանը եւ Յարութին Վարդանեանը նամակով տեղեկացնում են արն Պետրոսին, որ նրա եղբայր թարջիման Ստեփանի հիւանդութիւնը «սկսաւ յօրէ յօր սաստկանալ, եւ ուռուց եւս եբեր», եւ 1777 թ. ապրիլի 18ին նա մահացաւ: Սակայն նախկինում խնդրել էր վեհին իր մէկ տարուայ գումարը նախապէս վճարել, «զոր եւ հառ ի Մկրտիչ վարդապետէն, որ էր ԱՃԾԲ (152) զուռուշ: Որ բովանդակ նմա հասեալ դրամն եղեւ եճՂԴ (534) զուռուշ», նաեւ այլ պարտքեր էր կուտակել: Հետեւապէս խնդրում են արն Պետրոսին վճարել եղբոր կուտակած պարտքերը՝ նշելով հաշիւների մանրամասնութիւնները: Աւելացնում են

նաեւ, որ «այլ քանի մի մանր իրք, զոր ինչ ունէր, կապեալ ետուք ի մէջ բողային, եւ կան ի պահեստի, որոց դաւթարն ահա՛ առ պատրիարքն յղեցաք»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ Գրեցաւ ի ՌՄԻԶ (1777) թուոյս, ի մայիս ամսոյ ԻԹ (29) եւ ի Սուրբ Աթոռս էջմիածին:

Գեորգ Վարդանեան,
Մնացական Յակոբջանեան,
Յարութին Վարդանեան:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 1ա Սրբոյ էջմիածնի միաբան՝ Մկրտիչ վարդապետ:
2. 1ա Սրբոյ էջմիածնի միաբան՝ Ղուկաս վարդապետ:
3. 1ա Սրբոյ էջմիածնի աթոռակալ՝ Դաւիթ վարդապետ:
4. 1ա Սրբոյ էջմիածնի միաբան՝ Պետրոս վարդապետ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՄԿՐՏԻԶ ՎԱՐԴԱՊԵՏ /1210 (1761)»: 2. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՂՈՒԿԱՍ /ՎԱՐԴԱՊԵՏ»: 3. 1ա (սեւ քանափով, ուրանկին, ներսում՝ խաչեալ Քրիստոսի պատկերագրութեամբ) «ԴԱԻԹ ՎԱՐԴԱՊԵՏ»: 4. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ /1223 (1774)»:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ 1. 1ա (նոսրգիր) «Սիրով եւ օրհնութեամբ: Սիրով եւ օրհնութեամբ բազմաւ ծանիր սիրելիդ մեր»: 2. 1ա (բլուրգիր) «յաւուր: թէ ի ժամ: թէ ժամ: յաւուր: վերահասու: ՚ի»: 3. 1բ (բլուրգիր) «Մինաս: Կարապետ վարդապետ: մ»: 4. 1բ (նոսրգիր) «Կարապետ: յաւուր: յարամի: Կարապետ: 2 2 2: Ծ Ծ: Գ Գ: Պ Պ Պ Պ Պ: Ա Ա Ա: Աթոռս էջմիածին»:

185
ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 5, վառ. 12

ՀԱՇՏԱՐԻՆԱՆ

ՌՄԻՋ-1777

Հեղինակ՝ Յովսէփ արքեպս. Արղուքեան:

Թերթ՝ 1: Նիւթ՝ թուղթ. լուսագծերով: ՄեծՈՒ-
ԹԻՒՆ՝ 36,5x22: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ բո-
լորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 35:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերը հին նորոգմամբ:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «Քրիստոսի փրկագործ Աւետարանին պաշտօնեայ քրիստոսանիմն եւ լուսակառոյց Աթոռոցն Սրբոյ էջմիածնի ծայրագոյն նուիրակ եւ կողմանցս Հիւսիսոյ հայոց առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս – Յորմէ ժամանեացի թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց ի վերայ սիրելեացդ մերոց հարազատ եւ հաւատարիմ գաւակաց Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, որք կայք բնակեալք ի տիրախնամ յօրհնեալ քաղաքդ Ղզլար... եւ շնորհ Սրբոյ Աթոռոցն, եւ օրհնութիւն սուրբ Լուսատուրչին եւ մեր եղիցի ի վերայ ձեր յորդոց յորդիս եւ յազ-

գէ յազգս միշտ եւ հանապազ. ամէն»: Ռուսահայոց թեմի առաջնորդ Յովսէփ արքեպս. Արղուքեանը գրում է Ղզլարի հայ համայնքին, որ նրանք Սբ. Աթոռին դէմ են դուրս եկել, անպատշաճ արարքներ թոյլ տուել: Այդ ամէնը կազմակերպել են պրն Անտոնը եւ պրն Աւետիկը, որոնց նա բանադրել է՝ յոյս ունենալով, որ կզղջան: Եւ, քանի որ գատակական տօներ են, ինքը ներում է նրանց. «բայց՝ Որ հայր է, որ ո՛չ խրատիցէ զորդի իւր, եթէ անխրատ թողուցու, խորդ իցէ եւ ո՛չ որդի» (հմմտ. եբր. ժԲ 7-8): Եւ համայնքին պատուիրում է ընդունել նրանց («ի հաղորդակցութիւն սուրբ եկեղեցոյ, զի սիրելիք մեր են եւ հոգեւոր որդիք Սրբոյ Աթոռոցն»), հնազանդ լինել Սբ. Աթոռին եւ հոգեւոր գործերին շխտնուել: Նաեւ նշում է, թէ պրն Դանուղին գործակալ է՛ նշանակել, ապա ինքն էլ հաւանութիւն է տալիս, որ խտովութիւնը դադարի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

- 1. 1բ Գրեցաւ ի 1777 թուին եւ ի յամսեանն ապրիլի ութն ի Հաշտարխան քաղաքոջս:
- 2. 1բ Յովսէփ արքեպիսկոպոս Հայոց:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1 ա (սեւ քանաճով, ութանկիւն)
«ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ / 12 ՚ (1221= 1772)»:

186
ՍՏԱՅԱԿԱՆ


թղթայ. 5, վառ. 13

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՄԻԷ-1778

Հեղինակ՝ Գրիգոր վրդ. Եղվարդեցի եւ Աղաբաբ: ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա Երեւանցի կթղկա:

Թերթ՝ 1. չգրուած՝ 1բ: Նիւթ՝ թուղթ: ՄեծՈՒ-
ԹԻՒՆ՝ 22,1x16,6: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 17:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – 1ա: Գոյներ՝ կարմիր, սեւ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թղթին վառուած մոմի հետքեր:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Է: Տէր Սիմէոն սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց – Պատճառ գրոյս այս է, որ ես՝ Սրբոյ էջմիածնի միաբան Եղվարդեցի Գրիգոր վարդապետս եւ ես՝ Երեւանցի դերձակ Պօղոսի որդի դերձակ Աղաբաբս... վասն որոյ եւ զայս զապզպ

գրեալ եւ կնքեալ ետուք նմա վասն միամտութեան»։ Ստացական, որով Գրիգոր վրդ. Եղվարդեցին եւ Երեւանցի դերձակ Պօղոսի որդի դերձակ Աղաբաբը, Սիմէոն կրդկսի կարգադրութեամբ, Երեւանի սրբոց առաքելոց Պետրոսի եւ Պօղոսի եկեղեցու նորոգութեան համար էջմիածնի գանձապետ Մկրտիչ վրդ-ից կանխիկ ստացել են 95 թուման եւ 2 շահի գումար եւ տուել այս փաստաթուղթը։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Եղեւ այս ի ՌՄԻԷ (1778) թուոջ մերում եւ ի հոկտեմբերի 1 (30). որ եւ տեսողաց հաճոյ լիցի։

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ /1225 (1776)»։ 2. 1ա (սեւ քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԱՂԱԲԱԲ /արաքատաւ»։

187

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 5, վա. 14

ՎԱՆ

ՌՄԻԷ-1778

ՀԵՂԻՆԱԿ՝ Թովմայ կրդկս Աղթամարի։ ՄՏԱ-ՑՈՂ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կրդկս։

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2ա։ ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «A Y»։ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35,4x22,3։ ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին։ ԳԻՐ՝ նուագիր (նմուշ՝ 1ա)։ ՏՈՂ՝ 29+3։



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – եկեղեցի (կաթուղի-կոսիդ բառի վրայ)՝ 1ա։ Գոյն եր՝ կարմիր, սեւ։ ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերը ծալուած, 2բ թերթին մնացել են շագանակագոյն զմուտսի հետեւեր։ ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «է։ Ի Հոգոյն Սրբոյ ընտրեալ, եւ յառաջ կոչեալ վարում մաքրագարդեալ, եւ իմաստիմ գերափայլեալ, արթուն դիտապետի եւ երջանիկ հայրապետի, տեսուն գերընտիր կաթողիկոսիդ բազմաւ կարօտի շնորհաբաշխ սրբոյ աջոյդ, համբոյր մատուցանեմք, եւ զփխտոսականի սուրբ ողջոյն նուիրեմք, եւ զողջակերութեամբդ ցնծամք – եւ առ գերերջանիկ քահանայապետութեանդ զայս ինչ յուշ արարից... Որ եւ բազմագուծ աչցելուդ տիեզերաց լիցի՝ ողջ եւ առողջ, ի փառս սրբոց եկեղեցւոցն՝

Քրիստոսի եւ ի պարծանս համայն Արմենին Հայոց։ Բաւ է»։ Աղթամարի Թովմայ կրդկսի գրութիւնը էջմիածնի Սիմէոն կրդկսին, որով յայտնում է, որ «ի յերկիրս մեր եւ ի վիճակս բազում եւ յոյժ խառնակութեան միջի են», որ տեղի ժողովուրդը հարկերից «իբրեւ զծով երերեալ ծփին», իսկ «բազերը» (բէկերը) իրենց շարութիւնը կիրարկելով՝ բնաւ խաղաղութիւն չեն ցանկանում։ Ենդրում է վեհափառին. «զի երբեմն-երբեմն ցնծալի եւ շնորհալի գրովդ զտրամուծիւնս մեր ըսփոփեսցես եւ ցնծացուցես եւ մի՛ մոռասցիս զանլիշելիս»։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Թովմայ կաթողիկոս՝ գահին Աղթամարայ Սրբոյ խաչին։ Եղեւ գրեցեալ ի 1227 (1778) թվին, օգոստոսի 1, ի Վան։

ՀԱՍՅԷ

2բ Աստուծով։ Հասցէ ի տիեզերափայլ Սուրբ Աթոռն էջմիածին, ի շնորհաբաշխ դաստակն, որոյ երջանկազարդ հայրապետին անլոյժ կնքովն ի բարին։ 1227 (1778)։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2բ (ժԹ դ., շղագիր) «Ախթամարայ կաթ[ո]ղ[ի]-կ[ո]սի գիր»։

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1բ (կարմիր քանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԹՈՎՄԱ. ԿԱԹՈՂԻԿՈՍ /1208 (1759)»։

188
ԿՏԱԿ


թղթա. 5, վա. 15

ՂԶԼԱՐ

ՌՄԻԷ-1778

Հեղինակ՝ Արզու:

Թեթև՝ 2. շգրուած՝ 1բ-2ա: Նիհիթ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «Π Κ», լուսապատկերով՝ թագակիր կրկնակ շրջանակի մէջ խաչակիր գաւազանով թագակիր առիւծ, շրջանակին «PROF-GREAE O80 EG18» մակագրութիւն: ՄեծՈՒԹԻԻՆ՝ 32,6x20,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 28+6:



Նմուշ 1ա

Վիճակ՝ բարարար. 1ին թերթի ստորին եզրերը վնասուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Զօրութիւն գրույս այս է, որ կաման Աստուծոյ եւ միջնորդութեամբ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Լուսաւորչին, այս գիր յաւիտենական յիշատակի ետուք ի դուռն Սուրբ Աթոռոյն էջմիածնի... եւ մեր յիշատակն կորուսանել՝ անիծեալ եղիցին յԱստուծոյ եւ ի Սրբոյ Աթոռոյն եւ սեւերես մնան մինչ ի դատաստանին Աստուծոյ, իսկ կատարողկն՝ եղիցին օրհնեալք յԱստուծոյ եւ ի Սրբոյ Աթոռոյն»: Ղզլարեցի հնգգլ զարգար (ոսկերիչ) Մինասը երկու տարի առաջ, «ի ժամ վախճանին իւրոյ միջդեռ բանականութիւնն ի գլուխն իւր էր, իւր յօժարութեամբն եւ կամօքն, առանց այլոց յորդորման», խոստովանում է Բօլնիսեցի տէր Գրիգորի առաջ

եւ իր սեփական տունը խոստանում տալ Սբ. էջմիածնին, եւ այժմ նրա այրին՝ Արզուն, ամուսնու ցանկութեան համաձայն, իր ունեցուածքը կտակում է Սբ. էջմիածնին յիշատակ՝ պայմանով, որ քանի դեռ ողջ է, «նըստիմ իմ տանս»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա եղեւ ի 1778 եւ ի մարտի մինըն ի Ղզլար:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1. 1ա Տէր Մանուկելի որդի տէր Յարութիւնս հետ հանգուցեալ Աթիայի որդի պարոն Դանիէլին ականջալուր եւ ի յողորմած հոգի զարկար Մինասէն, վասն որոյ եւ վկայեցի:

2. 1ա Խոստովանահայր տէր Գրիգորս զարգար Մինասիցն լսեցի, վեկայ եմ:

3. 1ա Աթի որդի Դանիէլս Մինասիցն լսեցի եւ վկայ եմ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

Չբ (նոտագիր) Ա՛հարցի եւ մի Ղզլար հանգուցեալ զարկար Մինասի կնոջ գիրն է, որ սոյն զարկար Մինասս մի ժամ վախճանին զտունն իւր Սրբոյ Աթոռոյն վախճեալ եւ յիշատակ է տուեալ, ի հայրապետութեան տեառն Սիմէօն սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց եւ մի յառաջնորդութեան սորին ձեռնասուն աշակերտ Սանահնեցի Յովսէփ արքեպիսկոպոսին Արղուսեանց: Սորին մէկ սաւատն է ի Ղզլար ի ձեռս գործակալացն Սրբոյ Աթոռոյն պարոն Դանիէլին եւ պարոն Նուրիջանին եւ մէկն ի Հաշտարխան ի դաւթար առաջնորդարանին արկեալ: ՌՄԻԷ (1778) մարտի Ա (1):

189
ՆԱՄԱԿ

թղթա. 5, վա. 16ա


ԹԱՐՎԷՉ

ՌՄԻԷ-1778

ԳրիՉ՝ Աւետիս մեհ. Հախնագար: ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա Երեւանցի կթղկս:

Թեթև՝ 4 էջ: Նիհիթ՝ թուղթ. լուսագծերով, լուսա-

գրով՝ «A»: ՄեծՈՒԹԻԻՆ՝ 22,4x17,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 33+5:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ, մուգ կարմիր գմուռաները վնասուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1-2 «Մերամաքուր աչն հանփուրեմք Սիմէօն սրփազան (վեհապետ)ին եւ կաթողիկոսին ամենից Հայոց ի բարձանս մեր եւ ի պար[ծ]անս հայոց. ամէն – Արզ լիցի (վեհապետ)ին հրամ[ա]ն[ա]ցն ղուլղն, որ մեղայարը Շիրազու եկիր Քազան Պարսեղ եւ Գերիքուր հայր վարդայպետքն... լինի սրփազան (վեհապետ)իս կ[ե]անս երկարս ի բարձանս ազկիս մերոյ. ամէն»: Մհա. Աւետիս Հախնազարը գրում է Սիմէոն կրդկսին, որ Շիրազից Քազան եւն եկել Բարսեղ եւ Գրիգոր վրդայպետներն

իրեն տեսնելու, որոնք աւել եւն, թէ իրենց յանձնարարուել է Թարիզ գնալ եւ խոյ Մելքոնի «օղէն» բացել ու գրել, սակայն տեղեկացնում է, որ իր եղբայր Մելքոնը մահացել է, ապաւինում է հայրապետին աւելի խնամք տանել եւ տիրութիւն անել: Տեղեկացնում է նաեւ տարբեր գործարքներ ի վերաբերեալ եւ խնդրում է եղբօր ունեցուածքն իրեն հանձնել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1 1227 (1778)ին, մարտի 6 (5) օրն, Թարվէզ:
2. 2 Հրամանացա ծառայ սեվայսիրա Ավետիս մահտեսի Հախնազար արզըս:

ՀԱՍՅԷ

4 Աստուծով: Հասցէ գիրս ի Սուրբ Էջմիածին նորին կահայկալի տ[ե]առն Սիմէօնի վեհապետին, սրփազան վեհապետին ամենից Հայոց հրամ[ա]ն[ա]ցն ղուլղն ի բարին. ամէն:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 4 (մուգ կարմիր գմուռ, վնասուած, անընթեռնելի):

ԳՐՉԱՓՈՐՉ՝ 4 (բարբգիր) «ատարակ»:

190

ԳՐՈՒԹԻԻՆ


թղթ. 5, վա. 16բ

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ]

ՌՄԻԷ-1778

ՀԵՂԻՆԱԿ՝ Սիմէոն Ա Երեւանցի կրդկս: **ՍՍԱՅՈՂ՝** արց. հաշատուր, կին Ուղուր:

Ծնթ. Գրուած է № 189ի՝ Աւետիս մհա. Հախնազարի նամակի 2րդ եւ 3րդ էջերին որպէս սեւագրութիւն:



Նմուշ 3

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

3-2 «Յորմէ սիրով եւ աստուածային օրհնութեամբ գիտաստղիք, սիրելի որդի մեր տիրացու հա-

շատուր եւ հոգեւոր ղուստր մեր, լուսահոգի խօջայ Մելքոնի կողակից բարեպաշտուհի Ուղուր... Ուրեմն այսպէս գիտացեալ՝ շուտով գրեցես ի Թարվէզ զթուղթ ըստ այսմ ոճոյ որպէս գրեցաք: Ողջ լերուք ի Տէր»: Սիմէոն կրդկսը գրութեամբ տեղեկացնում է արց. հաշատուրին եւ հնգգլ խոյ Մելքոնի կին Ուղուրին, որ ստացել է նրանց նամակները հնգգլ Մելքոնի Թավրիզում եղած ունեցուածքի հետ կապուած: Յորդորում է արց. հաշատուրին եւ Մելքոնի եղբայր Աւետիսին միաբանութեան գալ Մելքոնի ունեցուածքի՝ իրենց բաժնետմասի շուրջ, ինչպէս նաեւ հոգ տանել, որ «նորին որբացեալ ընտանեացն եւս ապրուստ լիցի» եւ Սք. Աթոռի հասանելի պարտքն էլ վճարուի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

էջ 2 ի ՌՄԻԷ (1778), ի մարտի էլն:

191
ՆԱՄԱԿ


թղթպ. 5, վա. 17

ԻԶՄԻՐ

ՌՄԻԸ-1779

ԳԻԻԶ՝ Եսայի արդյ: ՍՏԱՅՈՂ՝ Ստեփաննոս արքեպս.:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 20,1x13: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 31:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 1ա-ի ներքեւի աջ կողմի տառերը շնչուած, 2րդ թերթի աջ անկիւնը պոկուած-ընկած, կարմիր գմուռսները վնասուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1աբ «Է: Հաննարունակ շնորհափայլ եւ երջանկազարդ յեղբօրդ մերոյ հոգիացելոյ տեսանդ Ստեփաննոսի արքեպիսկոպոսի եւ բարեղի քաղաքի Կարնոյ արժանավայել առաջնորդի մատուցի ողջոյն տեսանական – Մեծազնեայ սիրոյդ եւ սրտիս վշտացելոյ սիռփիչ հոգի յեղբօրդ վթուղթն, որ թէ քանիցս ընկալայ... եւ լեր ողջ միշտ ի <ի> պարծանս յերոցս վշտականի Եսա-

յի իբր ար[ե]ղայի եւ անբարեբեր դիտիս որպէս թէ Զմիւռնոյ. ամէն»: Զմիւռնիայի առաջնորդ Եսայի արքեպան գրում է Կարնոյ առաջնորդ Ստեփաննոս արքեպս-ին, որում յոյս է յայտնում շուտով տեսակցելու մասին, ապա՝ խնդրում է սիրով ընդունել գրաբեր Յովհաննէս ֆիլին, որն ուխտի է գնում Սբ. Էջմիածին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1բ 1228 (1779), ի մայիսի 3, Իզմիր քաղաքս գրի յոյժ շեշտակի եւ իմով ձեռամբ:
2. 1բ Տն՝ Բովանդակութեան վերջում:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻԻՆ ԳՐԶԻ

1բ Ողջոյն եւ աստուածային յաւէտ օրհնութիւն ընծայի հարազատի պաշտօնէիցդ եւ Սրբոյ Աթոռոյն նորաբողբոջ ոստոցն, որ շնորհիւն միշտ գօրասցին. ամէն:

ՀԱՍՅԷ

2բ Աստուծով: Հասցէ ի բարեղի քաղաքն ի Կարին եւ անդր ի ձեռն եւ ի սուրբ աջ նորին երջանկափայլ առաջնորդի տեսուն Ստեփաննոսի արքեպիսկոպոսի յոյժ բարեաւ. ամէն:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 2բ (վնասուած կարմիր գմուռսի հետքեր):

ՆՇՈՒՄ՝ 2բ (1779 թ.) «Մայիսի 6 (10)»:


192
ՆԱՄԱԿ

թղթպ. 5, վա. 18ա

ՌՄԻԸ-1779

ՀԵՂԻՆԱԿ՝ Գէորգ դի Յոհան եւ Աստուծով դի Իգնատ: ՍՏԱՅՈՂ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 4 էջ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23,3x19: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուարգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 46+8:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. մուգ շագանակագոյն գմուռսը վնասուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1-2 «Անյիշաչարի եւ անխակալի, ամեն[ա] յնամի եւ ամենազքի տեսանդ մերոյ տեսուն տեսուն [հայ]՝ րեն[ա]լմեծար եւ սրբազան Սիմէօնի կաթողիկոսի ամ[ենայն] Հայոց, որ եւ փոխանորդի Լուսատւի հոգոյ մերոյ, զոր եւ մեծաւ սիրով զերկն[ա]լշու գտուրբ գարշապարդ համբուրեմք ստեպով – Զօր մեծաւ զգուշութեամբ եւ յոյժ

ահիւ եւ դողութեամբ, որ եւ Տէր կարի սարսափմամբ յայտնաբանեցից զսղալանս մեր առ վերոյ հոգեւոր ծնօղիդ մերոյ սրբազնայկատար տէրութեանդ... որ եւ լիցի ցնծութիւն եւ ուրախութիւն ի պարծանս համայն Արամեանս զարմի, որ եւ յետնեալ որդեգրաց քոյին. վերջ»: Գէորգ դի Յոհաննը եւ Աստուածաբան դի Իգնատը խնդրում են Սիմէոն կթղկսին ներել ուխտում տեղի ունեցած սխալների համար, քանի որ ծայր գրչին մերոյ ցամաքեալ է, աչք մեր զառուս հեղուն եւ զմահիջս մեր ողողէն»: Եւ աղերսում են ազատել բանադրանքից՝ նշելով. «Վաղճան գրոյս կրկին-կրկին երես անկեալ մեղայական բանիւ եւ թախ[ան] ձեալ ա(ս)րտիւ աղերսմամբ աղաչեմ, պատմամբ հայցեմք թո՛ղ ի խղճմտանաց կապանացս

եւ հան՛ն ի խաւարամած մթութեան բանտէ եւ արձակեա՛ ի ծանրութենէ անկապ շխթայիցս եւ այլն»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1 Ի 1228 (1779), ապրիլի Ժե (15):
2. 2 Յամենայնի անիրըստական ծառայքս՝

Գէորգ դի Յոհանն Աստուածաբան դի Իգնատի:

ՀԱՍՅԷ

4 Աստուծով: Ի սպասս մեծի քահանայապետին եւ [հայ]՞րենայմեծար վեհին, որ եւ սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց անլոյժ յայլմէ:

ԿՆՔԱԳԻՈՇՄ՝ 4 (մուգ շագանկագոյն զմուս, անընթեռնելի):

193

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 5, վաւ. 18բ

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՍԻՆ]

[ՌՄԻԸ-1779]

ԳՐԻՉ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կթղկս: ՄՏԱՅՈՂ՝ տրց. պրն Գէորգ դի Յոհանն եւ Աստուածաբան դի Իգնատ:

Ծնբ. Գրուած է Նո 192ի՝ Գէորգ դի Յոհաննի եւ Աստուածաբան դի Իգնատի նամակի 3րդ եւ 4րդ էջերին որպէս սետագրութիւն:



Նմուշ 3

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ջնջումներով, գրադաշտը գունափոխուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ սետագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

3-4 «Յորմէ սիրով մեծաւ եւ կարօտի ստուգիւ, եւ սրբոյ Քրիստոսաիջի սրբոյ տեղոյս շնորհին եւ

օրհնութեամբն ծանուցումն լիցի վաղեմեան սիրելեացն եւ ցանկալե[ա]ցդ հոգւոյս տիրացու պարոն Գէորգիդ եւ պարոն Աստուածապոհ(վ)իդ...ի գալն յայդր՝ եւ մոռացաւ, զոր ինչ ետես եւ լուսաւ: Սիմէոն կթղկսը գրութեամբ տեղակացնում է Գէորգ դի Յոհաննին եւ Աստուածաբան (Աստուածաբան) դի Իգնատին, որ նրանցից ստացել է սոյն թուականի ապրիլի 15ի նամակը՝ նշելով. «Եւ ներեցի բոլորով արտիւ՝ յիշելով զնախնական սէրն», քանի որ նրանք վկայել են իրենց արդարութիւնն ու անմեղութիւնը, սակայն ընդգծում է. «զի ցայն Ժե (15) տարին ո՞րքան զիրարութիւնք, իզուր խոռվութիւնք, արտնդութիւնք եւ ազգն ազգի վնասք, զի եղեն եւ դեռեաւ լինին մեզ»: Նախագրուածն է նաեւ, որ շմտածեն, թէ խաբել են: Ապա յիշեցնում է ժամանակին վերցուած 4583 դուրուշ գումարի մասին եւ յորդորում է այսուհետ վճարել Մայր Աթոռի հասանելիքը:

194

ՀՐՈՎԱՐՏԱԿ


թղթայ. 5, վաւ. 19

ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Եկատերինայ Բ կայսրուհի: ՄՏԱՅՈՂ՝ Պետրոս վրդ. Մարկոսեան:

ԹԵՐԹ՝ 8 էջ. չգրուած՝ 6-8: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «M Y», «1793»,

լուսապատկերով՝ զարդաւոր թագակիր խաչ: ՄԵՐՈՒԹԻՒՆ՝ 35,5x22,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 35:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերն առանձին-առանձին:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ թարգմանութիւն ռուսերէնից, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Թարգմանութիւնն է Սանկտ Պետերբուրգում 1779 թ. նոյեմբերի 14ին եկատերինայ Բ կայսրուհու գրած հրովարտակի՝ ուղղուած Պետրոս վրդ. Մարկոսեանին եւ Ղրիմի հայութեանը, որով սահմանում է 5 կէտից բաղկացած արտօնութիւնների առանձնաշնորհումներ: Ընդառաջելով 1778 թ. յուլիսի 16ին Բախչիսարայից գրած խնդրագրին, Ղրիմից գաղթող հայերին Ազովի շրջանում, Դօնի մօտերը տեղաւորելով՝ նրանց տալիս է հետեւեալ արտօնութիւնները. ա. թոյլատրել ձկնորսութիւն Դօն գետում, բ. տասը տարի արհայական հարկերի վճարներից ազատել, գ. Պետրոս վրդ. Մարկոսեանին յանձնարարել եկեղեցի եւ զանգակատուն կառուցել, եկեղեցական պաշտամունք եւ հոգեւոր արարողութիւն կատարել լինելով «ընդ իշխանութեամբ Հայոց հայրապետին», դ. նոր Նախիջեւանում առանձին մագիստրատ հաստատել իրենց գործերը վարելով՝ «ընտրելով ի ձէնը զդատաւորս վիճակաձգութեամբ... եւ եղիցին ենթ իշխանութեան նամէստնիկական կառավարութեան», ե. վաճառականներին ազատ առետուր անել «որպէս արտաքոյ, նոյնպէս եւ ի միջոյ տէրութեանս մերոյ»:

1. 1 Աստուծոյ արագահաս ողորմութեամբն մե՛ք՝ եկատարինա երկրորդ կայսերունի եւ ինքնակալունի Ռուստաց... – Հաւատարմին մերոյ Մարկոսեան Պետրոս վարդապետի, եւ ամենից հասարակութեանց Խրիմոյ քրիստոնէիցն Հայոց դաւանութեամբ, ամենից կողմանցն առհասարակ եւ իւրաքանչիւրոց յատուկ անձանցն մեր կայսերական ողորմածագունեղ բանն... շնորհեմք ձեզ արդիւնաւորիլ ի տէրութեան մերում ոչ միայն այնքիւր ամենիւր իրաւամբք եւ առաւելութեամբք, որպիսեօք

ամենայն ժողովուրդք մեր ի մէնջ եւ ի նախնեաց մերոց ի վաղնչոց ժամանակաց վայելեն, այլեւ բաց ի յայնցանէ հրամայեմք մեւք:

2. 2 Նախ – Առ ի ներկայական անդրաբնակութեան ձերոյ ի գաւառին Ազովոյ, մերովք ծախիւքն բերել ի Խրիմոյ զայն ամենայն ինչս ձեր, զորս միայն կարելի իցէ. որ եւ կարգաւորեցեալ ի մէնջ դրամոցն արդէն կատարումն եղեալ է:

3. 2 Երկրորդ – Վասն յարմարագոյն բնակութեան ձերոյ ի գաւառին Ազովոյ, զատեալ յայլոց բնակչացն, տալ ձեզ ի շրջանակին ամրոցի սրբոյն Դեմետրեայ Ռօստովսկուն... ամենաողորմածաբար շնորհեմք ձեզ յաւիտենականաբար ի յարդիւնս եւ ի շահաւէտութիւնս ամենից հասարակութեանց ձերոց՝ թարց ամենայնի պահանջողութեան զհարկս ի գանձարանս մեր:

4. 2 Երրորդ – Յետ յատկացուցանելոյ զգանազանութիւն ժողովրդական կացութեան, ամենաողորմածաբար տամք ազատութիւն ամենից արքայական հարկաց եւ սպասաւորութեանց, որպիսի անուամբ եւ իցեն, մինչեւ ի տասն տարի... յաւիտեան եղիցին ազատք ի տալոյ զպատերազմական զինուորս, բայց եթէ ոք ըստ ինքեան ծառայել մեզ յօժարիցէ:

5. 3 Չորրորդ – Ամենաողորմածաբար յանձնեմք Մարկոսեան Պետրոս վարդապետին մինչեւ ցմահ նորին զհովութիւն ամենից այսոց ելանողացն ընդ նմա ի Խրիմոյ հայոց... եւ որպէս յիշեալ վարդապետն, նոյնպէս եւ հայոց քահանայքն, եղիցին միայն ընդ իշխանութեամբ Հայոց հայրապետին, որ ի յԱրարատեան Հայրապետական Աթոռոջն իցէ:

6. 3 Հինգերորդ – Ձկնի բնակութեան ձերոյ ի յատուկ քաղաքուշ անուանեցեալ Նախիջեւան ի կողմ Պօլտաքենկին՝ տալով վասն խոտաճարակութեան նոյնոյ քաղաքին երկոյտասան հազար դէսէտինս գետնոյ... կարգեսցի յատուկ անձինս ի ռուստաց, որք եւ ոչ ունիցին մասնակցութիւն դատաստանական գործոց սոյն բնակչացն, այլ եղիցին միայն պահպանիչք եւ այցելուք նոցին:

7. 3 Գարձեալ – յետ մտանելոյ իւրաքանչիւրոց եւ ընտրելոց վասն ինքեանց զորպիսի եւ իցէ ցեղ կացութիւնս ի տէրութեանս, այնպիսեացն շնորհեմք արդիւնաւորիլ ի յաւիտեան մշտնջենաբար յետագայիւր իւրեանց... Միով բանիւ՝ ամենայն արհեստս բազմացուցանել, զայն ամենայն ըստ յօժարութեան եւ կարողութեան իւրաքանչիւրոց, եւ վայելեալ ամենիւր նօքօք՝ ենթ ամենաողորմածագունեղի մերոյ հովանաւորութեան եւ պահպանութեան օրինաց արդիւնաւորիլ:

Բ. Ներկայացրած են հրովարտակի թղթերի 5 երեսներին արուած պատկերներն իրենց բացատրութիւններով.

1. 4 Մեկնութիւն պատկերահանական նշանականութեանց ի վերայ առաջին երես պովելէզին – Վերի կողման, ի վերայ լուսափայլ եւ ախորժատես ամրոց, է Բարեպաշտութիւն ի կերպարանս կնոջ... ծալեալ թուղթ նշանակելով առ ի յիշումն եւ ի մտածումն յետ ջրհեղեղին առաջին հայոց քաղաքին՝ անուանեցելոյ Նախիջեւան, որ այժմ, ըստ բարձրագունեղի կամեցողութեան, նոյն անուամբ քաղաք շինի՝ նորոգեցեալ ի վերայ շնորհեցեալ գետոյն անուանեցեալ Պօլուսենկոյ:

2. 4-5 Ի վերայ միտա երեսաց թղթոյն, ըստ զօրութեան անդ գրեցելոցն բանից, շրջապատն արտադրեալք են նկարեղէն զարդարանք եւ ծաղկունք, այսինքն՝ ի վերայ երկրորդ երես թղթոյն – Պայծառափայլ ակն եւ գունդն երկրային նշանակեն զնախասահմանութիւն Աստուծոյ... նշանն կաղնւոյ ցուցանէ զարիութիւն, Տէր ողորմեայն է նշան պարկեշտութեան եւ ջեռմեռանդութեան:

3. 5 Ի վերայ երրորդ յերես թղթոյն – Ի վեր անդր ի վերայ վահանի՝ նկարեալ արեգակն, եւ ծաղիկն արեգական... թուլադրութիւնն ձկնորս որսութեան եւ ստացումն արդիւնս ի նոցունց՝ նշանակեն ուռկանան եւ այլովք գործեօքն այնքիւք:

4. 5 Ի վերայ չորրորդ երես թղթոյն – Ի վերն, ներ

լուսափայլ ամպոց, Աւետարանն բացեալ եւ զհաշն՝ նշանակեն զհաւատն քրիստոնէական... Թագ եւ եմիփորոնն եպիսկոպոսական, գաւազան կամ հեծանոց՝ բուրվառ եւ բանալիքն եւ այլ եկեղեցական անօթքն, նըշանակեն զգլխաւոր կառավարութիւնն եկեղեցեաց եւ իշխանութիւն ձեռնադրութեան:

5. 5 Ի վերայ հինգերորդ երես թղթոյն – Վերին կողմի նկարեալ վահանն եւ սուսերն՝ նշանակեն զպահպանութիւն եւ զհովանաւորութիւն տէրութեամբ, եւ նկատմամբ վաճառականական առեւտրոց՝ առ ի բազմացուցանումն ֆապրիկաց եւ զաւտաց՝ նշանակեն միջնորդութեամբ փայլածուի կերպարանին, նաեւ զառագաստ, խարիսխ եւ նաեւ դրօշակօք եւ այլովք:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

4 Զայս ամենայն մանաւանդականութիւնս շնորհելով մեք հանդիսօրէն ամենայն հասարակութեան եւ յետագայիցն ի յաւիտեանս ժամանակաց. վասն առաւել հաստատութեան ստորագրեցաք ձեռօք մերովք եւ թագաւորական կնքով ամրացուցանել հրամայեցաք:

Տուեալ եղև ի յարքայանիս[տ] քաղաքւոջ մերում Սանկթ Պետրբուրգ, յամին ի ծննդենէ Քրիստոսի հազար եօթն հարիւր եօթանասունինն, նոյնմբերի 14. եւ ի թագաւորութենէ մերմէ տասնութն յամի:

Екатерина:

195


ԹՈՒՂԹ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԵԱՆ

թղթ. 5, վա. 20

ԺԹ դար

Հեղինակ՝ տէր Գաբրիել (1779 թ.): ՍՍԱՅՈՂ՝ պրն Խաչատուր (1779 թ.):

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «WOFKR» «1814»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 33,9x22: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա), վրացերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 36+4+4:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1ա «Դիցումն գրոյս այս է, որ ես՝ տէր Մովսէսի որդի տէր Գաբրիէլս կամեցայ ի մէջ քաղաքիս սրբոյն Կարապետի անուամբ եկեղեցի շինել... եւ զօրհնութիւնս Տեառն վայելեցցեն յաւիտեանս յաւիտենից. ամէն»: Տէր Մովսէսի որդի տէր Գաբրիէլը 1771 թ. նախաձեռնել է եկեղեցի կառուցել սբ. Կարապետի անունով, որի համար վաճառել է հայրենի տունն ու ամբողջ ունեցուածքը եւ տուել «տեղագին եկեղեցւոյս»: Դրանից բացի Հէղուբեանց Ռօստօմի որդի Մկրտումը եկեղեցուն է շնորհել «յիշատակ իւրն» 154 «գազ տեղ», տէր Աստուածա-

սուր Աստուածատուրեանցը՝ 30 թուման: Եւ չնայած ասարտին է հասցրել եկեղեցու կառուցումը, սակայն եկեղեցին ընկել է բազում պարտերի տակ, եւ եկեղեցու գոյքը գրաւադրել է: Յետագայում եկեղեցու պարտքը վճարելով՝ գրաւադրուած գոյքը ետ է բերում Լարադաղցի տէր Մկրտիչի որդի պրն հաշատուրը, որի համար էլ տէր Գաբրիէլը դաշնադրութեան թուղթ է ստորագրում եւ յալիտենական յիշատակութիւն խոստանում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1ա Գրեցաւ թուղթս, ի տեսակս կոպարի, ի ՌՄԻԸ

(1779) թուին Հայոց, նոյեմբերի ամսոյ ժ (10)ին, ի քաղաքս Թիֆլիզ:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1. 1ա Ինձ՝ Սրբոյ Կարապետու ըսպասաւոր տէր Գաբրիէլիս այս վերուգրեալս ընդունելի է, վասն այն կնքեցաք (տեղի կնքոյ):
 2. 1ա Ես՝ Սրբոյ Կարապետի եկեղեցւոյ ծառայ եւ լուսարար տէր Ստեփանն այս վերոյ գրեալն վերահասու գոլով՝ կնքեցի (տեղի կնքոյ):
- Յ-5. 1ա (վրացերէն երեք վկայութիւնք ես՝ հաստատած կնիքների տեղերով):

196


ՕՐԴԵՐ

թղթ. 5, վա. 21

ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ կնեազ [Գրիգորի Ալեքսանդրովիչ] Պոսեովկին (1780 թ.): ՍՍԱՅՈՂ՝ գուպտ Եակօբի (1780 թ.):

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «PROPATRIA», լուսապատկերով՝ շրջանաձև ցանկապատ, ներսում գիւնուտրական հանդերձով միապետը՝ գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր առիւծ՝ սուրը ձեռքին: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 25,7x20,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 23:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ թարգմանութիւն ռուսերէնից, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Օրդեր. հուպօդին հենեալ պօրուաչիկ Աստրախանոյ գաւառապետ եւ կազպեր Եակօբիին — Հայոց արքեպիսկոպոսն Յովսէփի ետ ինձ զինգրուածս նախ՝ զի հոգեւոր աստիճանաւորաց ի յազգէ յայսմանէ, թարց գրոյ վկայութեան ի Արարա-

սոյ պատրիարգէն, մի՛ ումեք թողուցուն մտանել ի ներս Ռուսաց երկրին... առ ի ընդունիլ խնդրուածաց սոյնոյ սրբազանին՝ ցուցանիցես ամենակարելի բաւականութիւնս, սակայն եթէ ո՛չ իցէ եղծումն կարգադրեցելոց օրինացն ի կողմանն այնորիկ ի յայդպիսի պատահմանէն»: Կնեազ Պոսեովկինը, Յովսէփ արեւպա. Արղութեանի խնդրամնով, 1780 թ. մայիսի 11ի օրդերով պատուիրում է Աստրախանի գաւառապետ Եակօբիին հայերի համար սահմանել հետեւեալ կարգը՝ ա. առանց Հայոց կթղկսի յատուկ վկայականի ոչ մի հայ հոգեւորականի չթոյլատրել մտնել Ռուսաստան, բ. ազատել «ի պօստոյէ» Աբրահամ Ահարոնովի Գլարում եղած տունը, քանի որ նա երեսփոխանի պաշտօն է վարում, նմանապէս նաեւ Մոզգոլում նրան, ով նոյն պարտականութիւնը կվարի, գ. ընդարձակապէս թոյլատրել հայերին Գլարից մինչեւ Աստրախան վանառելու հայոց այգիների խաղողի գինին:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ № 198, տե՛ս № 201, Բովանդակութիւն 3, 7:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1ա Ասլն ենթագրեցեալ է այսպէս՝ Կնեազ Պոսեովկին. մայիսի 11, յամի 1780:


ՆՇՈՒՄ՝ 1ա (ԺԸ դ.) «համար 678»:

197
ՆԱՄԱԿԱՆԻ

թղթպ. 5, վառ. 22

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 2: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 17x6: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 39-41:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը տեղ-տեղ գունափոխուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

Փաստաթղթում արտայայտուած է [Սիմէոն Ա երեսանցի] կրղկսի անունով ուղարկուած դրամական հաշիւների վերաբերեալ 9 նամակների կարեւորագրութիւնը.

1. 1ա Առ Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդապետ Պօլսեցի, առ որ յղեաց զԺԳ (13) թուղթսն... Ջայս պահարանս առ մահտեսի Աղամջանն յղեցաք, յղեալ առ նա, եւ

2. 1ա զթուղթ եւս առնան մահտեսի Աղամջանն գրեալ ի պատասխանի թղթոցն երկուց յապրիլի ԻԳ (23) եւ ի մայիսի ԺԳ (13) գրեցելոց... եւ վասն Յակոբ [վարդա]պետին դապզ խնդրեալ:

3. 1ա Վասն որոյ դապզ գրեալ (ա) յղեաց առ սա՝ հասուցանել առ նա: Եւ գրէր, թէ Փիլիպոս [վարդա]պետն եւս դրամ է յղելոց... հասուցէ ի Կարին

առ հայրապետն, եւ գրեացէ ինքեան: Եւ ըստ սորին խնդրոցն՝

4. 1ա Օրհնութան թուղթ եւս առ մահտեսի եղիառմն, որ զկտակ հօրն իւրոյ Այվազին տուեալ էր Զ (6) ղուռուշ եւ կէս սմա:

5. 1աբ Գրեաց եւ զփոսուլայ առ սա, զի տրտունջ գրէր զՍտեփան գետապէն, որ էր մահտեսի Սիմէոնի փոքրաւորն... Էհարց, թէ զի՞նչ է:

6. 1բ Առ Թօխաթու նուիրակ Յակոբ [վարդա]պետն. ի պատասխանի յապրիլի ԺԳ (13) գրեալ թղթոյն... Ջայս եւս առ մահտեսի Աղամջանն յղեաց յղել առ նա:

7. 1բ-2ա Թուղթ եւս ի Կարին առ մեր վէքիլ հայրապետին. ի պատասխանի յունիսի Ա (1) գրեալ թղթոյն... Եւ սրբազանն աստ զնմանէ շնորհ կալեալ՝ գրեաց սմա, զի ցաւարտիլն յղեցէ:

8. 2աբ Եւ զնոյնն փոսուլայով եւս երկրորդեալ՝ ի պահարանն եղաք: Եւ Ջուղայեցի տիրացու Ստեփանն ի Վանայ ԲԹ (2000) ղուռուշի փօլիցայա գիրէր... Ի հասանիլն առ քեզ՝ ինձ գրեցես:

9. 2բ Գրեաց եւ զփոսուլայ եւս առ սա վասն գիժ Առաքելին... Ջպահարան հայրապետին տուաք նոյն վերոյ յիշեալ Ուռուշուղցի խոջայ Սարգսին տանիլ եւ տալ նմա ի Կարին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1ա ԹԻԹ (1780), ի յունիսի ԺԵ (15), ընդ Ուռուշի ուխտաւորաց. Ա (1) ընկեր գոյ սմա[լ]:

198
ՕՐԴԵՐ


թղթպ. 5, վառ. 23

ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ կնեագ [Գրիգորի Ալեքսանդրովիչ] Պոտեովկին (1780 թ.): ՄՍՍՅՈՂ՝ գուպտ Ձերտկով (1780 թ.):

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, երկիցս լուսապատկերով՝ ներսից ռեատր ուղղանկիւն շրջանակ, մէկի ներսում՝ «Փ Ե» մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 25,9x21: ԳՐՈՒԹԻԻՆ՝

միասիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 18:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ քարգմանութիւն ռուսերէնից, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Օրդեր. հուպօղին հեներալ պօրուաչիկ Ազօվայ գաւառապետ եւ կա/ալեր Չերտկովին – Հայոց արքեպիսկոպոսն Յովսէփ ետ ինձ զխնդրուածս նախ՝ զի հոգեւոր աստիճանաւորաց ի յազգէ յայսմանէ, թարց գրոյ վկայութեան ի Արարատոյ պատրիարզէն, մի՛ ումեք թողուցուն մտանել ի ներս Ռուսաաց երկրին... զի ընդունելով զխնդրուածս սոյնոյ սրբազանին՝ ցուցանիցես զպատկանաւոր բաւականութիւնս»: Կնեազ Պոտեօմկինը, Յովսէփ արքեպ. Արղութեանի խնդրանքով, 1780 թ. մայիսի 11ի օրդերով պատուիրում է Ազովի գաւառապետ

Չերտկովին հայերի համար սահմանել հետեւեալ կարգը՝ ա. առանց Հայոց կրօնի յատուկ վկայականի ոչ մի հայ հոգեւորականի շրջաւորել մտնել Ռուսաստան, բ. հայերի բազմանալու առթիւ տալ նրանց հողակտոր «ի մօտաւոր տեղեացն Նախիջեւանայ», գ. նախկին առաջնորդ [Պետրոս] Մարկոսեան վրդ-ին շնորհուած խաչը տալ Նախիջեւանի եկեղեցուն «ի նշան բարձրագունեղի ողորմութեան յաղաքս հասարակութեանն հայոց»:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ N՞ 196, տե՛ս N՞ 201, Բովանդակութիւն 2, 6:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1ա Նախատիպն ստորագրեցեալ է այսպէս՝ Կնեազ Պօտեմկին. մայիսի 11, յամի 1780:

ՆՇՈՒՄ՝ 1ա (ժԸ դ.) «համար 669»:


199

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅ ՄԵԼԻՔՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՒ ԳԱԽԱՌՆԵՐԸ

թղթ. 5, վա. 24

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով, լուսագրով՝ «P Φ I A», «1797»: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 34,5x21,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 31:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Имяна и провинціи пятимеликовъ Армянскихъ. Общее ихъ владеніе подъ названіемъ имянуется = Карабахъ – Первѣй:

изъ нихъ меликъ Дчимшидъ, сынъ мелика Шахназара, котораго провинція имянуется Варандъ... Вышепомянутые мелики имѣютъ подъ своимъ владеніемъ юзъбашовъ, то есть полководцовъ, изъ которыхъ иные по наслѣдству имѣютъ сеи чинъ, а иные по заслугамъ получаютъ отъ своихъ гасподъ меликовъ»: Թղթում յիշատակուած են Ղարաբաղի 5 մելիքների եւ նրանց գաւառների անուններն այսպէս՝ 1. մելիք Ջումշուդ, գաւառը՝ Վարանդայ, բերդը՝ Շուշի, 2. մելիք Աբով, գաւառը կոչում է Ինրմիդիորդ, բերդը՝ Գիւլիստան, 3. մելիք Ռօստօմ որդի իւզբաշի Ալլավերդովի, բերդը՝ Ջրաբերդ, 4. մելիք Աբաս որդի մելիք Բախտամի, գաւառը՝ Դիգակ, 5. մելիք Ալլահվերդի, գաւառը՝ Խաչէն:

ՆՇՈՒՄ՝ 1ա (ժԸ դ.) «Անուանք Ղարաբաղու մելիքացն եւ նոցա գաւառացն»:

200
ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ


թղթա. 5, վա. 25

ԻԶՄԻՐ

ՌՄԼ-1781

Հեղինակ՝ Մարիամ եւ որդիները: ՍՏԱՅՈՂ՝
թերզի Ղազար:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծե-
րով, լուսագրով՝ «C A»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 21,8x18,4:
ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուագիր (նմուշ՝ 1ա):
ՏՈՂ՝ 13+17:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխուած,
ներհեւի տառերի թանաքը թափուած, նորոգուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Զօրովթինն գրոյս այս է, որ մեք՝ ստորա-
գրեալքս, այսինքն՝ հանգուցեալ Ղուշատացի Մովսէ-
սի կողակից Մերիէմն եւ ես՝ Ղուկասս եւ ես՝ Թու-
մայս մեր հօրն Ղուշատայում եղեալ միւլք տունն...
եւ զայս սանատս ընդ տաճկեար հէօճէթին իւրեանց
տվինք, որ ի պիտոյ ժամու ստորագրեալ վկայութն
վասն Աստուծոյ վկայեսցէ»: Ղուշատացի Մովսէսի
կողակից Մարիամը եւ որդիներ Ղուկասը եւ Թու-
ման իրենց հօր սեփական տունը 600 դուրուով
վաճառում են «վասն եկեղեցի շինելոյ Ղուշատայ
բնակեալ ժողովրդոց» եւ գումարն ամբողջու-
թեամբ ստանում Իզմիրում Ղուշատայի ժողովրդի
«վէքիլ» Սարգսի որդի թերզի Ղազարից՝ Զմիւռ-
նիայի առաջնորդ Փիլիպպոս վրդ-ի գիտութեամբ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Աստուծով եղեւ յԻզմիր, ի թվին 1781, ի
մարտի մէկն:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1. 1ա Գիտութեամբ Զմիւռնոյ առաջնորդ Փի-
լիպպոս վարդապետիս:
2. 1ա Գասպար խաթրճի օղլուս թարեղիս զա-
պրզմալ գոլով գրեցի եւ վկայ եմ:
3. 1ա Վերոյ գրեալն Ղուշատացի Մովսէսի կո-
ղակից Մարիամն, վասնի գոլով իմ կողմանէս եւ
իմ եթիմ Գեւորքիս կողմանէ, մատս կոխեցի, մեզ
ընդունելի է:
4. 1ա ես վէրը ըէ գրեալ, ես՝ Մէսէսի որդի Ղու-
կասին զաբուլ է:
5. 1ա ես վերէ լգրեալ, ես՝ Մովսէս[ս]ի որդի
Թումանին զապուլ է:
6. 1ա ես վերէ գրեալ, ես՝ Մովսէսի որդի Գեւոր-
քին զապուլ է:
7. 1ա Յարութինին դի Մենաս՝ վկայեմ:
8. 1ա Մահտեսի Յակոբ դի Աբրահամ՝ վկայ[լ]եմ:
9. 1ա Գեւորք դի Ոհան՝ վկայեմ:
10. 1ա Խաչատուր դի մահտեսի Ազարեա[լ]
վկայեմ:
11. 1ա Զէլիկէն մահտեսի Կարապետս վկայեմ:
12. 1ա ես՝ մահտեսի Յակոբ Աղազարես վկայեմ:
13. 1ա Մահտեսի Յօհանէս դի մահտեսի Մար-
տիրոս վկայեմ:
14. 1ա Մարտում դի Աբութին՝ վկայեմ:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ թանաքով, ութանկին)
«ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՓԻԼԻՊՊՈՍ /ՎԱՐԴԱՊԵՏ»: 2.
1ա (երկու մատնահետք Գասպարի եւ Մարիամի վկայու-
թիւնների կողքին):
Ծնթ. Մանրամասն տե՛ս 3. Աբրահամեան, № 121, էջ
151-152:

201


ՏԵՏՐԱԿ ԳՐՈՒԹԻԻՆՆԵՐԻ

թղթա. 5, վա. 26 ա-ժգ


ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 10. չգրուած՝ 1ա, 2բ, 10բ: ՊՐԱԿ՝ Աx10:
ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «[17]80»,
«A A», «M Փ», «Г O», «A Y»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝

33,5x21,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր
(նմուշ՝ 1բ), նուագիր (նմուշ՝ 7ա): ՏՈՂ՝ աւարբե:



Նմուշ 1բ



Նմուշ 7ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. անկազմ, վերջին թերթերի թելերը պոկուած, գրադաշտը գունափոխուած:

ԻՍՎՈՒԹԻՒՆ՝ քարգմանութիւն ռուսերէնից, արտագրութիւն, ձեռագիր:

Ծնթ. Յովսէփ Արղուիթեանի մօտ եղած տեսակում արտագրուած են 13 վաւերագրեր, որոնք գրանցուած են 26 ա-ժգ համարների ներքոյ. դրանք արտայայտուած են կոր փակագծերում:

ԲՈՎԱՆԻԿԱԿՈՒԹԻՒՆ

1. (№ 26 ա) 1բ «Ռուսաց երկրի ամենայն Հայոց ազգի առաջնորդ Յովսէփայ արքեպիսկոպոսէ Աստրախանայ ազիական հայոց յիւսարանիդ յայտարարութիւն — Հարկ եղեւ ինձ գրել ձեզ եւ զգուշացուցանել, որ եթէ այսուհետեւ յազգէ մերմէ կազաւոր ոք եկեսցէ այդր եպիսկոպոս, վարդապետ, արեղայ կամ քահանայ, յայտնի կարգաւորական ձեւով կամ այլափոխեալ աշխարհական ձեւով... որպէսզի քրիստոսաձիր խաղաղութիւնն եւ կայսերական մեծութեան տուեցեալ բարեկարգութիւնն անշարժ մնասցէ ի յերկիրս այս ի յազգս մեր: Դիտէք զիմս բաղձանք առ այսպիսիս»: Ռուսահայոց թեմի առաջնորդ Յովսէփ արքեպս. Արղուիթեանը հրահանգում է Աստրախանի ասիական հայոց իրաւարանին առ այն, որ առանց Հայոց կթղկսի յատուկ գրութեան եւ վկայականի Ռուսաստան եկող հայ հոգեւորականներին ինչպէս կարգաւոր, այնպէս եւ այլափոխուած աշխարհական ձեւով, «որպէս յանցեալ ամին ժամկոչ քառ Կոստանդի որդի կոչեցեալն Մովսէս իբր վարդապետ», շքնդուներու եւ արտաքսել «ըստ նախնի օրինի մերում եւ ըստ հրամանի կայսերական մեծութեանն, որ առ սուրբ եւ երանելի հայրապետն մեր Սիմէօն ի 1768 թուոջն եւ առ արտաքին գաւառապետն, եւ յանցեալ ամի օրդ[ե]րն պայծառափայլ էնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչն Պօսեմկիմիւն, ըստ խնդրոյ

իմոյ, առ Հաշտարխանու եւ առ Ազովու գաւառապետան»:

Ծնթ. Պոսեմկիմի գրութիւնները տե՛ս աստ №№ 196, 198:

2. (№ 26 բ) 2ա «Հրաման առ գաւառապետն Ազովու տեսան ղեներալ պօռուաչիկ եւ կապլեր Չերթէկովին — Ի շնորհեցեալ յամենաողորմածագուներդի կայսերական մեծութեան թղթուջ կամ հրովարտակուջն՝ սակս ելանելոց ի Ղուիմու ազգին Հայոց քրիստոնէից ի չորրորդ գլխոջ գրեցեալ է... որպէս գրեւելուոյ եւ արժանաւորի ընդունելույ զյատկագոյն պատիւս արհի հովուի»: Կնեազ Պոսեմկիմի հրամանը Ազովի գաւառապետ Չերտկովին, որով տեղեկացնում է, որ նախկինում Զրիմից գաղթած հայերի հովուութիւնը ցմահ տրուել էր Պետրոս վրդ. Մարկոսեանին, նրան յանձնարարուել էր եկեղեցի եւ գանգակատուն կառուցել, եկեղեցական պաշտամունք եւ հոգեւոր արարողութիւն կատարել լիւնելով «ընդ իշխանութեամբ հայոց հայրապետին» (հմմտ. ա՛ստ № 198), բայց այժմ Պետրոս վրդը վախճանուել է եւ հոգեւոր գործը հանձնել Յովսէփ արքեպիսկոպոսին, «որ ունի զգիր ի հայոց պատրիարքէն, զի լինիցի ղէտ եւ հովիւ ամենայնից հայոց, որք են ի յերկիրս Ռուստաց»:

3. (№ 26 գ) 3ա «Օրդ[ե]ր հօսպօղին հենեալ պօռուաչիկ, Աստրախանու գաւառապետ եւ կապլեր Եակօբիին — Հայոց արքեպիսկոպոսն Յովսէփ ետ ինձ բացատրութիւն՝ պատկանեցեալ առ բարեկարգութեանս եւ կառուցման կենցաղավարութեան... զի եթէ ոչ իցէ ընդդիմութիւն ինչ եւ կարգաւորեալ կառավարութեանն խանգարում, արասցես զկարելի բաւականարարութիւնս»: Կնեազ Պոսեմկիմի օրդերը Աստրախանի գաւառապետ Եակօբեին, որով հրամայում է հոգ տանել, ըստ Յովսէփ արքեպս. Արղուիթեանի բացատրութեան, պահպանել հայերի կենցաղը եւ սովորութիւնները. «զի եթէ ոչ իցէ ընդդիմութիւն ինչ եւ կարգաւորեալ կառավարութեանն խանգարում»:

4. (№ 26 դ) 3ա «Հայքն եւ առաջնորդն նոցին խնդրեցին յինէն — Նախ թէ ըստ անդրաշրջեցումամբ կաթօլիկաց կրօնիւն պատրեաց, բազում հայք երթան ի հաւատն նոցա... եթէ կամիցեն, դարձեալ անդրէն դառնալ եւ միանալ նախկին եղեալ Հայոց դաւանութեանս իւրեանց մի՛ ոք հակառակիցէ»: «Օբր ենուղիտոր» Իլեայ Դեւոյցովի ենթագրութիւնը հայերի մէջ կաթօլիկութեան տարածման արգելի եւ կաթօլիկ դարձած հայերին նորից լուսատւադասարան դառնալը շարգելելու մասին:

5. (N^o 26 Է) 3բ «Օրդ[ե]ր հուպօդին հեներալ պօրուաչիկ, Ազօվու գաւառապետ եւ կաւալեր Չերակովին, հանգունակ եւ նման Աստարխանու գաւառապետին վերայ օրդ[ե]րին՝ առանց յաւել պակասութեան, եւ ի խնդրանաց բանք են այսոքիկ – ելեալ հայքն խնդրեցին յինէն... Հինգերորդ՝ վասն կարգաւորութեան շինութեանց բնակութիւն նոցին, եւ եկեղեցեաց գումար դրամից, եւ մաղիստրաթի իւրեանց զերբին, եւ զամենայն զայնոսիկ, զորս հանդերձելոյ եւ կառուցանելոյ հարկաւոր իցէ»: Իլեալ Դեւոյցովի ենթագրութեամբ օրդերն Ազովի եւ Աստրախանի գաւառապետեր Չերակովին առ այն, որ Զրիմից գաղթած հայերին յորդորել բնակութիւն հաստատել իրենց ընտրած վայրերում, իսկ ուրիշ կնանապարհունն նոր նախիջեւան, նրանց օգնութիւն ցուցաբերել:

6. (N^o 26 Գ) 4ա «Օրդեր հուպօդին հեներալ պօրուաչիկ, Ազօվու գաւառապետ եւ կաւալեր Չերակովին – նախ՝ հայոց արքեպիսկոպոսն Յովսէփ ետ ինձ զխնդրուածս, զի հոգեւոր աստիճանաւորաց ի յագգէ յայսմանէ, թարց գրոյ վկայութեան ի Արարատոյ պատրիարգէն, մի՛ ումեք թողուցուն մտանել ի ներս Ռուսաց երկրին... զի ընդունելով զխնդրուածս սոյնոյ սրբազանին՝ ցուցանիցես զպատկանաւոր բաւականութիւնս»: Կնեազ Պոտեմկինը, Յովսէփ արքեպ. Արղութեանի խնդրանքով, 1780 թ. մայիսի 11ի օրդերով պատուիրում է Ազովի գաւառապետ Չերակովին հայերի համար սահմանել հետեւեալ կարգը՝ առանց Հայոց կրթկսի յատուկ վկայականի ոչ մի հայ հոգեւորականի շրոյլատրել մտնել Ռուսաստան, բ. հայերի բազմանալու առթիւ տալ նրանց հողակտոր «ի մօտաւոր տեղեացն նախիջեւանայ», գ. նախկին առաջնորդ [Պետրոս] Մարկոսեան վրդ-ին շնորհուած խաչը տալ նախիջեւանի եկեղեցուն «ի նշան բարձրագունեղի ողորմութեան յաղազս հասարակութեանն հայոց»:

Ծնթ. Պոտեմկինի գրութիւնները տես ա՛ստ N^o 198:

7. (N^o 26 Է) 4բ «Օրդեր հուպօդին հեներալ պօրուաչիկ Աստրախանոյ գաւառապետ եւ կաւալեր Եակօբիին – Հայոց արքեպիսկոպոսն Յովսէփ ետ ինձ զխնդրուածս նախ՝ զի հոգեւոր աստիճանաւորաց ի յագգէ յայսմանէ, թարց գրոյ վկայութեան ի Արարատոյ պատրիարգէն, մի՛ ումեք թողուցուն մտանել ի ներս Ռուսաց երկրին... առ ի ընդունիլ խնդրուածոց սոյնոյ սրբազանին՝ ցուցանիցես ամենակարելի բաւականութիւնս, սակայն եթէ ո՛չ իցէ եղծումն կարգադրեցելոց օրինացն ի կողմանն

այնորիկ ի յայդպիսի պատահմանէն»: Կնեազ Պոտեմկինը, Յովսէփ արքեպ. Արղութեանի խնդրանքով, 1780 թ. մայիսի 11ի օրդերով պատուիրում է Աստրախանի գաւառապետ Եակօբիին հայերի համար սահմանել հետեւեալ կարգը՝ առանց Հայոց կրթկսի յատուկ վկայականի ոչ մի հայ հոգեւորականի շրոյլատրել մտնել Ռուսաստան, բ. ազատել «ի պօստոյէ» Աբրահամ Ահարոնովի Զգլարում եղած առնը, քանի որ նա երեսփոխանի պաշտօն է վարում, նմանապէս նաեւ Մոզգոկում նրան, ով նոյն պարտականութիւնը կվարի, գ. ընդարձակապէս թոյլատրել հայերին Զգլարից մինչեւ Աստրախան վանաւելու հայոց այգիների խաղողի գինին:

Ծնթ. Պոտեմկինի գրութիւնները տես ա՛ստ N^o 196:

8. (N^o 26 Ը) 5աբ «Է: Քաղցրայիշատակ եւ մեծահոշակ բարի անուն մեծի եղբօրդ իմոյ տեառնդ Յովսէփայ արժանատր եւ սրբափայլ եպիսկոպոսիդ եւ աստուածաբան վարդապետիդ մեծի կողմանցդ Հիւսիսոյ ամենահանճար այցելուիդ եւ ամենարդիւն նուիրակիդ. Մինաս, որ զԲեզ սիրէ եպիսկոպոս առաւելապէս ողջոյն – Գիտացես, զի մերս դաղողութիւն ոչ կարաց վճարել զեղբայրութիւնդ ոչ գոլ գէտ ցայժմ իրակութեանցն աղազաւ, որոց եւ գրեմն... եւ վասն Մեսրոպ վարդապետին գալստեանն տեղս եւ զնալոյն յիւտումէին նուիրակութիւն եւ զոր ինչ վասն նորին՝ ի Կարապետ վարդապետէդ գիտանայցես»: Մինաս վրդ-ի գրութիւնը Յովսէփ արքեպ. Արղութեանին երուսաղէմի նուիրակ Կարապետ վրդ-ի մուտքը Ռուսաստան շարգելելու համար, «զի որպէս եւ օրէն է. եւ սրբոյն Սաղիմայ նուիրակին շրջիլ ընդ ամենայն տեղիս, ուր եւ իցեն օրհնեալ ազգն Հայոց, վասն որոց եւ ողորմութեանց», քանի որ «Այրարատ զուրկ ի խաղաղութեան մնալով»՝ հնարաւոր չէ գնալ Սբ. Աթոռ վկայական ստանալու, ուստի դիմում է «ընդունիլ սիրով եւ պահել առ քեզ պատուով իսկ եւ խնամ տանիլ գործոյն հոգաբարձութեամբ»:

9. (N^o 26 Թ) 5բ-6ա «Արհնոյդ պանծալոյ, առաւելապատիւ պետի, եւ արքնամիտ հովուի, տեառնդ իմոյ եւ հօր, տեառնդ Յովսէփայ աստուածաբեալ վեհի, որոյդ մեծի յարգաւորի, շնորհաձրի աջոյն, ընծայեմ համբոյր, աստուածապարգելի օրհնութեանդ կարօտի – Տէ՛ր իմ, յիրաւի մեծ եղեւ ուրախութիւնն ծառայի քոյ ի լսելն իմ դէտ հոգւովն Աստուծոյ ընտրիլդ այդորիկ կողմանց... եւ դու, յարգելի՛ դ, փառս ի վերայ փառաց ընկալնուս, այժմ աստ եւ ի հանդերձեալն»: Ստամ-

բուլում երուսաղէմի ներկայացուցիչ արց. Սարգիսը շնորհաւորում է Յովսէփ արքեպ. Արղուիթեանին («դէտ հոգւոյն Աստուծոյ ընտրիւղ այգորիկ կողմանց») եւ խնդրում է հոգ տանել երուսաղէմի նուիրակ Կարապետ վրդ-ի նկատմամբ, որն այցելելու է Ռուսաստան, քանի որ «ունի եւս յատուկ գիր յերկուց պատրիարգացն՝ ի սուրբ Սաղիմայ եւ ի մեծէ Պօլսոյ առ յարգութիւնն ձեր»:

10. (N^o 26 ժ) 6ա «Մեծարգոյ եղբօրդ իմոյ տեառնդ Մկրտիչ զգօնամիտ վարդապետիդ սիրովալայն – Գիտացիր, եղբայր, որ այս անգամ թող քեզ գրածս այսպէս լինի... եթէ այսինչ անուն մարդ այսինչ քաղաք մի երթիցէ, թէեւ Պողօսն իցէ, ոչ կարէ շարժիլ ուր, թէ եւ Մովսէսն կամ Կարապետն կամ այլ ոք: Ողջ լեր, եւ մեր գրելն բաւ լիցի»: [Մինաս] վրդ-ը գրում է էջմիածնի միաբան Մկրտիչ վրդ-ին երուսաղէմից Ռուսաստան գնացող կեղծ նուիրակների մասին: Մասնատրապէս յիշատակում է երուսաղէմի միաբան Մովսէս անունով վրդ-ին («մէկ կարճիկ, շէկ, շատախօս, պլէզ, Հաշտարխանցի ժամկոչ Կոստանդի որդի»), որը էջմիածին գալով՝ մեկնում է Աստրախան եւ որոշ ժամանակ անց «լուբեռնատօրէն պրիկազ է առնում վասն ճանապարհացն աներկիւղ գոլոյ եւ այլն»: Այդ կապակցութեամբ Յովսէփ վրդ-ը մի գրութիւն է ուղարկում Յովակիմ պատրիարքին «քանի մի համարձակ բառի»: Մինչեւ երուսաղէմի նուիրակ Կարապետի Աստրախան գալը «նոյն ասացեալ Մովսէսն եւ մէկ այլ վարդապետ ուրն, որոյ անունն Վարդան, եկին եւ կամին երթալ կրկին եւ սոքա ի Հաշտարխան նուիրակական գործով, եւ ահա՛ ստովիւն»:

11. (N^o 26 ժա) 6բ «Սրբոյ եւ մեծի Աթոռոյն էջմիածնի ծայրագոյն ն[ն]վիրակ եւ Ռուսաց եկրի ամենայն Հայոց ազգին առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս – Յորմէ սիրով եւ օրհնութեամբ ծանիր, սիրելի որդի մեր եւ եղբայր Մովսէս առաքինազարդ եւ համեստաբարոյ վարդապետ... եւ ի յուլիսին գնալոյ եմ, զի աստի եկեղեցւոյ հիմնարկութիւնն զարծաք: Ողջ լեր ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. ամէն»: Յովսէփ արքեպ. Արղուիթեանի գրութիւնը երուսաղէմի նուիրակ Մովսէս վրդ-ին, որում նշում է, թէ Աւետիք սարկաւազից տեղեկանալով, որ վերջինս կամենում է երուսաղէմ վերադառնալ, խնդրում է երուսաղէմի պատրիարք Յովակիմ արքեպ-ին «ասացես. Յորժամ ի վիճակս այս մարդ իցես առաքելոց՝ գհամեստն եւ զընտանին ընտրեսցես» եւ վկայական ունենայ էջմիածնի կթղկսից, հակառակ դէպքում նրա մուտքը

Ռուսաստան կարգելուի:

12. (N^o 26 ժբ) 7աբ «Առ քաղաւորական ինօստրաննի կօլէգն ի հայոց արքեպիսկոպոսէ Յովսէփայ ամենախոնարհագոյն դօնօշնիայ – Յիրուհոյ կայսերական մեծութենէ առաքեցեալ զողորմածական հրովարտակն ի յանցեալ 1768 յամին, յունիսի 30 ի մեծն Հայաստան առ սրբազնասուրբ Սիմէօն պատրիարգն ամենայն Հայոց... Զորս ամենայնիւ մտացնելով տամ բարեխնամ վերահասութեանն ինօստրաննի կալէգին, եւ ամենախոնարհաբար խնդրեմ ողորմածաբար վճռոյս կատարմանն»: Յովսէփ արքեպ. Արղուիթեանի գրութիւնը քաղաւորական արտասահմանեան կոլեգիային, որով տեղեկացնում է, որ [եկատերինայ] կայսրուհու՝ Սիմէոն կթղկսին տուած 1768 թ. յունիսի 30ի հրովարտակի համաձայն՝ Ռուսաստանում գտնուող հայերը, «ըստ հոգեւորական գործառութեան եւ եկեղեցական կարգաւորութեան կանօնաց, եղիցին ի ներքոյ հրամանի եւ վերադիտողութեան նորա, եւ եկեալքն աստ հոգեւոր անձինքն՝ ունիցին ի նմանէ զվկայական», ինչպէս նաեւ միեւնոյն ժամանակ մի հրովարտակ էլ ուղարկուել է Աստրախանի գաւառապետին: Վեհափառ հայրապետի յանձնարարութեամբ դիմում է Արտասահմանեան կոլեգիային խնդրանքով, յանձնարարել Կ. Պոլսի ռուսաց արքունական նախարարին էջմիածնից Թուրքիայ գնացող «հոգեւոր հովուացն, ի պատահման հարկաւորութեանց նոցին, ցուցանիցէ զկարելի օգնականութիւնս եւ յօժանդակութիւնս»:

13. (N^o 26 ժգ) 7բ-10ա «Ղն[ի]մու երեալ ժողովուրդք են տունք ԳՌ (3000)ք եւ անձինք ԺԲ (12) հազարք... դուք զտէրն ձեր ճանաչեցէք, որ մեք զձեզ ճանաչեմք եւ զայս այսպիսիս, սաւատն ձերոյ ծառայից դեռ չեմք պատրաստեալ»: Յովսէփ արքեպ. Արղուիթեանը կթղկսին տեղեկացնում է Ռուսաստանում բնակուող հայերի քանակի մասին՝ ըստ քաղաքների (Ղրիմից ելածները, հաշտարխանցիք, զղարցիք, Պետրպօլք, Մօսկով, Մօզդօկ, Սարաֆան, Բօրաղան). «որք միանգամ յերկրիս Ռուստաց են տունք ԳՌԳՃԽԱ (4341) եւ անձինք ԺԹՌԱՃՁ (19180), բայց ի լեռնաբնակ չէրքէզացն մերագնէից, որք ոչ են յայտնի մեզ», ինչպէս նաեւ Սանկտ Պետերբուրգում (10), Մոսկուայում (11), Հաշտարխանում (35), Ղզլարում (20), Մոզդոկում (2), Նոր Նախիչեւանում (24) գտնուող հայ երեւելի մարդկանց մասին, ըստ ծագման եւ բնակավայրի, որոնց հետ անհրաժեշտութեան դէպքում կարելի է գրագրութիւն ունենալ եւ թէ ո՛ւմ եւ ինչի՞ մասին պէտք է կոնդակ ուղարկել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1. 6բ Յովսէփ արքեպիսկոպոս հայոց: 1779, յու- նիսի 22, ի Մօսկով:
2. 6ա Մեծութեան ձեր ծառայ եւ սուրբ Երուսա- ղէմայ վէքիլ ի յՄտամպօլ, իբր տիրացու Սարգիս. ՌՄԻԸ (1779), հոկտեմբերի մէկն:
3. 5բ Գրեցաւ ի 1779 եւ հոգտեմբերի ամսոյն ի 20, ի Մտամպօլ, ընդ եկեղեցեաւ Սրբոյն Ստե- փաննոսի, որ ի Խաս գիւղն:
4. 2ա 1780, մարտի 10: Քնեազ Պօտեմկիմ:
5. 3ա Ի վերայ նախատպին ենթագրեցեալ է՝ Քնեազ Պօտեմկիմ. ապրիլի 17, երրորդ աւուր, 1780 յամի:
6. 3ա Ի վերայ նախատպին ենթագրեցեալ է՝ օբր եւնուզիտոր Իլիաց(յ) Դեվօյցօլ:
7. 3բ Ի վերայ նախագաղափարին ենթագրե- ցեալ է՝ օբր եւնուզիտոր Իլիաց(յ) Դեբօյցօլ:
8. 4ա Նախատպին ստորագրեցեալ է այսպէս՝ Քնեազ Պօտեմկիմ. մայիսի 11, յամի 1780:
9. 4բ Ասլն, ենթագրեցեալ է այսպէս՝ Կնեազ Պօ- տեմկիմ. մայիսի 11, յամի 1780:
10. 6ա Գրեցաւ ի ՌՄԻԹ (1780) եւ յուլիսի ԻԵ (25) յՕրբայգեղ ի Սուրբ Աստուածածին եկեղեցին:
11. 7բ Ի Սանկթ Պետրբուրխ, սեպտեմբերի 15, յամի 1780: Յովսէփ արքեպիսկոպոս հայոց:
12. 1բ Գրեցաւ ի 1781, փետրվարի երրորդ աւուրն ի նոր քաղաքս հայոց Նախիջեւան: Յովսէփ արքեպիսկոպոս հայոց:
13. 10ա Ինչ թուղթ յայս երկիրս գրէք, գրեցէք յամի ծննդեան Տեառն՝ Ֆոանգաց սաղամով. 1781 թուին եւ փետրվարի 22:
14. 9բ Սրբութեան ձերում ամենախոնարհ ծա- ռայ՝ Յովսէփ արքեպիսկոպոս Ռուսաց երկրի ամե- նայն Հայոց ազգին: 1781, փետրվարի 23, ի Նա- խիջեւան:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1. 1բ Ի զգուշութիւն մեզ վասն ցանկափակ ապականչոյն գրեցաք ի յիրաւարանս մեր: Ըստ այսմ մտաց եւ բանք՝ առ պարոն գուբէռնաթն Աշ- տարխանու եւ առ ամենայն կողմնակալս: Յովսէփ արքեպիսկոպոս: Եւ մեր ողորմելի Մինաս վարդա- պետն գիտէ, թէ մեղք ինչ է արարեալ. երկու շար գրելն ի դատարանն մեր վասն Աբրահամին:
2. 2ա (Յովսէփ Արղութեան) Դիտումն վերոյ գրե- ցեալ հրամանին վասն առաջնորդութեան մերոյ՝ ջրէ զամենայն ունայն դիտմունս զանձինս ընծայողացն:
3. 3ա Սոյնպէս գրեցաւ եւ առ Ազովու գաւառա-

- կալան՝ ըստ խնդրոյ իմոյ: Յովսէփ արքեպիսկոպոս:
4. 4ա Ահա առանց ձերդ գրուածոյ ես նախա- հոգացեալ եմ եւ ի դառնալս ի Մօսկով, եթէ տ[ո]ւ- լեալ լիցի ինձ կրկին գնալ ի Պետրպօլ, դարձեալ հոգացից ըստ այնմ մտաց, զոր լուսաւորեալ հոգի սուրբ հայրն իմ յառաջադրեալ է ինձ: Յովսէփ ար- քեպիսկոպոս:
 5. 5ա Ահա մեր Մինաս վարդապետի գիրն, որ Երուսաղէմայ Կարապետ վարդապետին գրէ, որ սովաւ է համարձակութիւն՝ առեալ մտանել ի ներս. եւ նախիջեւանցիքն դեռ անտեղեակ գողով, թէպէտ ի մէջ ինքեանց ոչ են ընկալեալ, սակայն ոչ են ար- գելեալ զնա չգնալ ի հայրապետին: Եւ ի Հաշաար- խան մինչ մերքն կամեցեալ են արտաքսեալ. եւ ես եւս գրեցի արտաքսել, նա զայս թուղթս ընդ զգրիւ վարդապետի թղթոյն առ մեզ էր առաքեալ եւ իշ- խանօք խնդրեալ: Վերջապէս յամենայն իշխանու- թեան լուծեալ՝ գրեցի, զոր ինչ ժողովէ մերայնոցն տայ, որ ի կրուստ շմտանէ, նման առաջնոյն. տե- սէք, թէ յարմարի մեր Մինաս վարդապետ եղբօր գիրն, այնմ, որ առ եղբայրն իմ Մկրտիչ վարդապե- տին է գրեալ:
 6. 5բ Մինաս վարդապետի առ մեր Մկրտիչ վարդապետ եղբայրն գրեցեալ գրոյ սաւատն եւս գրեցաք՝ հանդեալ մին ի վերայիշուամն դիտման նորին, եւ տեսէք, թէ յարմարն միմիանց եւ կամ այդպէս պարտի լինիլ:
 7. 5բ (տիրացու Սարգսի գիրն է):
 8. 6ա (Յովսէփ Արղութեան) Ըստ այսմ մտաց՝ եւ եր- կու պատրիարզ կոչեցեալքն գրեն. եւ մինչեւ ցայժմ ոչ ի լուսահոգւոյն ունիմ ինչ վասն նոյն Կարապետ [վարդա]պետին եւ ոչ ի քէն: Եւ եթէ կամիցիմ ի սոյն կիտոջս, արտաքսելոց եմ, բայց թեւքն խու- զեալ մնամ ի ձէնչ պատասխանոյ, որ քանի գրով գրեալ եմ առ կարօտեալ սուրբ հայրն իմ եւ տէրն: Այժմ որպէս գրես, զնոյն հրաման լցուցանելոց եմ առանց շունչ տալոյ: Եւ ոչ որ է ինձ արգելօղ եւ կամ խաբանիչ: Եւ Ռ[ու]մ[է]րեալքն՝ այնոքիկ, թէպէտ այժմ ոչ զգան, բայց իւրեանց օգուտն է Սրբոյ Աթո- ռոյդ հրամանաւ գալն, եւ իմ նոցա գրեալն եւ յա- ռաջադրեալն: Զոր ինչ ձեզ պատկանի՝ գրեցէք, իսկ զոր մեզ պատկանի՝ պատասխանելոց եմք յանձնա- րարութիւն գրողացն, այն ամենայն, որ պարտաւո- րիդ զմեզ ի կատարեալ:
 9. 6բ (Յովսէփ Արղութեան) Ես Յովակիմ վարդա- պետին, պատրիարզ կոչեցելոյ, յատուկ գիր ո՛չ եմ գրեալ, այլ այս Մովսէս իբր վարդապետն, որ ի Սր- բոյ Աթոռոյդ, ապիրհական ձեւով եկեալ էր ի կող- մունս եւ երկար միջոցաւ ցաւածեռ գողով եւ ծած-

կեալ զինքն ի ներքոյ գառնենույ, մինչ ի Մօսկովու լուաք գյայտնիլն նորա իւրոցն. գրեցաք նմա զայս- քանս. «հանդերձեալ էր գնալ ի Սաղիւս»: Այս է, որ մեր Մինաս վարդապետն գրեալ է, թէ համարձակ բառի էր: Էր, է եւ լինելոց է նոյնն: Եւ մեր ժողովրդեանն ամենից հաւանելի է գրեցեալն իմ ի լուսահոգի սուրբ հօր, եւս գրեալ եմ զայս յիմացս: Եւ նորապէս եւս գրեմ անձ վասն տեղեկութեան ձերոյ:

10. 7ա (Յովսէփ Արղութեան) Միրօղն ճշմարտութեան, ճանաչօղն բարեկարգութեան եւ ունօղն գհաւատս ուղղափառութեան յայսմանէ ո՛չ երբէք գայթակղին: Պօլտյ դեսպանն, թէպէտ կամեցեալ է շտալ Կարապետ [վարդա]պետին բաշպօրթ, բայց Զաւարիա վարդապետն խնդրեալ է ի նմանէ, թէ՛ ես սրբազան պատրիարքին փոխանորդն եմ եւ ի նմանէ հրաման ունիմ առ այս: Վասն որոյ տուեալ է բաշքօրթ: Իսկ ես այժմ անհա գամենայն ուուսերէն սաւատս հրովարտակոյն մերոց առաքելոց եմ առ նա եւ անդապէս արգելոց, որ այսուհետեւ թարց գրոյ եւ կնքոյ ձեր, ո՛չ տայցէ ումեք զմոյժ յերկիրս այս: Եւ ըստ ասից նոյն Կարապետ [վարդա]պետին, մեր եղբայր լոյս Մեսրօպ վարդապետն է քամահեալ զգրուածս մեր իբր անդր քան զչափ մեր, որք զչափ անձանց իւրեանց ինքեանք ոչ ճանաչեն: Զի ըստ իմոյ պարտաւորական չափում փոքր եւ իննայելով եմ գրեալ: Եկեալ զթերին լցցեն եւ ինքեանք չափաւորեսցեն զինքեանս եւ զնոսա, որոց յաղագս բարբառեմ: Այսքան է կարն իմ:

11. 7բ (Յովսէփ Արղութեան) Շէնիս ձեռք եղի. կէսն վերոյ բառի ի մէջն է:

12. 7բ (Յովսէփ Արղութեան) Ի յելանելոյ օրն եմ տուեալ վէզիրազում գրաֆ Նիկիտայ Իվանիչ Պանինին, ձեռամբ մեր ազնիւ Զդւլ[ո]յ Յովհաննիսին, խոստացեալ է տալ կատարումն, եւ դեռ չունիմ պատասխան լինելոց է այս: Կամիմ զայս գրել, թէ որպիսի դիտումն եւ միտք իմ կարօտեալ լուսահոգի սուրբ հայրս ունէր առ այսպիսիս վասն ներկային եւ ապագային ի փակումն ցանկոց այգւոյն շտալ մուծս կնքոյն վայրենւոյ եւ նմանեացն, զնոյնն մեք՝ իբրեւ առաւել գէտ վայրեացս թուեայ, առաւելապէս ղրատեալ եմք եւ պտրատեմք միշտ առ ի յապահովութիւն տնկողի սորին, բայց զի՛նչ օգուտ, որ աւետելն ոչ լսէ աշխատաւորն մեծ ի ջրարբուէս, լաւ իցէ զայսպիսի շրջահայեաց գգուշութիւնն պսակաւորն Նոյ, եւ աւետեսցէ ի մշտնջենաւոր հանգիստն քրտնաջան տնկողին եւ լիցի ապահով: Թէեւ ի թեւս թռչնոյ ջանասցեն կինջքն արկանել զիւրեաց ապականութիւն առ սօսիսն, սակայն ջրարբուն զմեռոտ եւ արթուն, որ կարօղ է աղաղակաւ վարել թարց ապականութեան սօսուն: Համահաճականն նարդենի, զթռչունն ապականարար թեւախուզեալ թռուցանէ եւ զծայր վայրէնի անմիտ կնքոյն հատանէ, զի նիւթքն ի նմին ծրարեալ՝ այն սակս է. եւ մտանելոց է անդ, ուր վերոյ բողոքս է: Յիմացս ապառնոյն, որ զկնի մեր:

Թողեալ զկրկնութիւն բանից՝ եկեսցուք առ մեր հարկաւորութիւն:

202

ԹՈՒՂԹ ՄԵԻԹԱՐԱԿԱՆ


թղթայ. 5, վաւ. 27

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

ՌՄԼ-1781

ՀԵՂԻՆԱԿ՝ Ղուկաս Ա. Կարնեցի կրթիկ: ՍՍԱ-ՅՈՂ՝ միւրգայ Միսայել:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՆ՝ 33,8x11,1: ԳՐՈՒԹԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 47:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ջնջումներով, գրադաշար գունափոխում:

ԻՍԿՈՒԹԻՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1ա «Ժողովածու միախարոսիւն առ միւրգայ Միսայելն վասն մահուան եղբօրն – 328 համարն: Որդւոյդ Սրբոյ Աթոռոյս, Տէրամբ զօրացեալ բարեպաշտ եւ մեծահաւատ պարոն միւրգայ Միսայելիդ եւ բարեշառաւիդ եղբօրորդւոցն քոց... առ ի փարատումն սգոյդ եւ տրտմութեանդ՝ անհա՛ զմի տօնլուղ աթլլաս եւ զմի տօնլուղ խառայ յղեցաք, զորս սիրով

ընկալեալ՝ վայելեացես: Ողջ լեր ի Տէր»։ [Ղուկաս Ա. Կարնեցի] կթղկսի մխիթարական թուղթը պրն միրզայ Միսայելին նրա եղբայր միրզայ Գեորգի-նի մահուան առիթով: Նաև նշում է, որ արքան եւ արքայորդին թուղթ են յղել իրեն հնգգլի որդի Ռուստամին մխիթարելու մասին, ում Մայր Աթոռ էր տարել Երեւանի մէլիք պրն Աբրահամը՝ առանց

հօր մահուան մասին տեղեկացնելու նրան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ ի ՌՄԼ (1781) թուոջս եւ ի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ 1. 1բ «Գրեցաւ ի ՌՄԾ (1801)»: 2. 1բ «գրչափորձ»:


203

ՕՐԻՆԱԿՔ ԳՐՈՒԹԵԱՆՑ

թղթայ. 5, վաւ. 28

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 30. չգրուած՝ 6բ, 16բ, 28բ-30բ: ՊՐԱԿ՝ Ա.-Գ (Ա՝ 4, Բ՝ 12, Գ՝ 14): ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35,9x22,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 40-42: ԿԱԶՄ՝ հրագոյն թուղթ:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ արտագրութիւն, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

Պարունակում է 1762-1803 թթ. ընթացքում կաթողիկոսների կոնդակներից արտագրութիւններ՝ արուած Մայր Աթոռի գրադարանի 748, 751, 752, 760, 1503 ձեռագիր օրինակներից.

1. Հմբ. 1. Օրինակք կոնդակաց Ղուկաս կաթողիկոսին՝ գրեալ ի թուին Հայոց ՌՄԻԹ (1780) մինչ ցՌՄԼԲ (1783) թուին ի Սուրբ էջմիածին: Արքայիդ մեծի Հերակլայ:

ա. 1ա-2բ Թուղթ առ Հերակլ արքայն Վրաց. գկնի օժման տեանն Ղուկասու կաթողիկոսին՝ նոյնպէս ծանուցանելով զմահ լուսահոգի Սիմէօն կաթողիկոսին, եւ զօժումն իւր՝ հանդերձ պատճառան որպէս եւ ի վերոյ գրեցաւ — Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Ղուկաս կաթողիկոս եւ ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց, առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի, նաև մեծի Աթոռոյս Սրբոյ էջմիածնի: Յորմէ ժամանեցի թուղթ անանցանելի օրհնութեամբն Հօր Աստուծոյ... Ողջ

լեր ի Տէր զօրացեալ ի նոյն միշտ ի փառս կենսատու եւային եւ ի պարծանս նուաստութեան մերոյ. ամէն: Ի ՌՄԻԹ (1780), ի յօգոստոսի:

Յաշորդի՝ 2բ-4բ թերթերում, նշուած են կոնդակների միայն խորագրերը, այսպէս՝

բ. 2բ Թուղթ առ Անտօն կաթողիկոսն Վրաց. գկնի օժման տեանն Ղուկասու սրբազան կաթողիկոսի ի նոյն միտս (№ 751, 4):

գ. 3ա Թուղթ երկրորդ առ Հերակլ արքայն Վրաց. ի պատասխանի սիրոյ թղթոյն, զոր գրեալ էր ընդ Դանիէլ վարդապետին եւ տէր Ղազարին եւ Բէջանին: Գրեցաւ ի ՌՄԻԹ (1780) ի հոկտեմբեր (№ 751, 27):

դ. 3ա Թուղթ առ Մաքսիմէ կաթողիկոսն Ափխազաց, եւ ըստ ոճոյ թղթոյ արքային: Ի ՌԶԶ (1780) թուոջ (№ 751, 39):

ե. 3ա Թուղթ նորտութեան առ այնպիսիս գրեւի, որ յայլոց իցէ ընծայեցեալ ի նորտութիւն Սրբոյ Աթոռոյս: Ի ՌՄԻԹ (1780), ի նոյեմբերի Իէ (27), (№ 751, 46):

զ. 3ա Թուղթ առ արքայն Վրաց Հերակլէս. մխիթարութեան վասն մահուան որդւոյն իւրոյ Լեւոն միրզային: Ի ՌՄԼ (1781), ի փետրվարի (№ 751, 66):

է. 3ա Թուղթ առ արքայն Վրաց Հերակլէս. յաղագս Սանահնու առաջնորդ Աբրահամ վարդապետին, զոր թարց եպիսկոպոս ձեռնադրելոյ առաջնորդութեամբ միայն վերադարձոյց ի վիճակն իւր... Ի ՌՄԼ (1781) թուոջ մերում, ի յուլիսի ԻԶ (26), (№ 751, 197):

ը. 3ա Թուղթ առ վեզիրն կայսերն Ռուսաց Առաջին նախարար գրաֆ Նիկիտա Իվանիչ Պանինն. ըստ մտաց վերոյգրեալ թղթոցդ նոյնպէս շնորհակալութիւն վասն արարեալ բարերարու-

թեանցն եւ երախտեացն, եւ յաջորդելոյ իւրոյ եւ այլն նոյնպէս, որպէս ի վերոյ: *Գրեցաւ 1782, ի յունվարի (№ 751, 333):*

բ. *3բ* Թուղթ առ Մոսկովու ենարալ անշէֆ ֆնեազ Վասիլ Միխայելիչ Գօրգօլուկն. շնորհակալութիւն վասն սիրոյն եւ բարեկամութեան, որ առ ազգս մեր, զոր եւ ցուցեալ էր Յովսէփ վարդապետին: Եւ սէր եւ խնդիր, զի առ սուրբ եւ առ ինքն ունիցի զբարեկամութիւն: *Գրեցաւ 1782, ի յունվարի (№ 751, 413):*

ժ. *3բ* Թուղթ առ Գաբրիէլ արքեպիսկոպոսն Պետրապօլո. նոյնպէս վասն անցից Սրբոյ Աթոռոյս, եւ սէր եւ շնորհակալութիւն վասն առ Սուրբ Աթոռս սիրոյն եւ ունելոյն ի սէր զՅովսէփ վարդապետն որպէս եւ Պատանին գրեցաւ: *Գրեցաւ յամի 1782, ի յունվարի (№ 751, 417):*

ժա. *3բ* Թուղթ առ Ինօֆենդի արքեպիսկոպոսն Պսկովսկու եւ գահակալն Սինօթին Ռուսաց. ընդ մտաց վերոյգրեալ թղթոցդ, նոյնպէս զորպիսութեանց մերոց, եւ շնորհակալութիւն եւ յորդորումն ի սէր: *Գրեցաւ յամին 1782, ի յունվարի (№ 751, 418):*

ժբ. *3բ* Թուղթ առ Սամուէլ արքեպիսկոպոսն Ռօստավու ի Մոսկով, որ եւս էր գահակալ Սինօթին. նոյնպէս զմերոց որպիսութեանց եւ շնորհակալութիւն վասն առ Սուրբ Աթոռս եւ առ մերայինսն ունեցեալ սիրոյն, եւ խնդիր ի նոյնս մնալ: *Գրեցաւ յամի 1782, ի յունվարի ելն (№ 751, 420):*

ժգ. *3բ* Թուղթ առ արքայորդին Վրաց Գեօրկին միրզայն. ի պատասխանի թղթոյն իւրոյ, որ ընդ Գալուստ վարդապետին, եւ շնորհակալութիւն սակս շնորհելոյն Սրբոյ Աթոռոյս վերստին զմիրզայն մեր մօլլայ Ահմատն վախուպ տալով սմա, զի յազգէ յազգ ծառայեսցէ սրբոյ տանս մտերմաբար: *Գրեցաւ ի ՌՄԼԱ (1782), ի սեպտեմբերի (№ 751, 603):*

ժդ. *4ա* Թուղթ մխիթարութեան առ որդին Հերակլայ Գեօրկին միրզայն վասն մահուան կնոջ իւրոյ: *Հօրն եւ մօրն եւս գրեցաւ, որոց օրինակքն են ի 594, 595 եւ ի 783, 784: Գրեցաւ ի ՌՄԼԱ (1782) թուոջ, ի յունիսի (№ 751, 683):*

ժե. *4ա* Թուղթ ի Թիֆլիզ առ արքայն Հերակլ. ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր քան զայս յառաջ եւ զի վասն Արկաուայ եկեղեցոյն, եւ վասն Մօղնու Սուրբ Գէորգայ վանիցն յղեալ էր զողորմութիւնս ինչ, գրեաց զշնորհակալութիւնս եւ զայն եւս, զի հորվիրապայ վանիցն եւ Սուրբ Յակոբայ անապատին եւս բաժին հասցէ յայն-

մանէ: Եւ դարձեալ շնորհակալութիւն, որ զախթարմայսն անարգեալ էր վասն լրբութեանցն, եւ տուեալ էր այժմ եւս զթուղթ որպէս եւ յառաջ, զի երեսուն ամաց եւ այսր հետեալ եւն ի մէնջ, դարձցին ի դասանութիւնս մեր կամ թէ ո՛չ տացին զծանր տանջանս, եւ զմուհասիս եւս եղեալ էր ի վերայ նոցա այսպէս առնիլ տալ: *Գրեցաւ ի ՌՄԼԱ (1782) թուոջ, ի մայիսի (№ 751, 756):*

ժզ. *4ա* Թուղթ առ արքայն Վրաց Հերակլէս. վասն Հաղարծինու վանից առաջնորդ Մանուէլ եւ իւր միաբան Աւետիս վարդապետացն, որոց զբիծ իսպառ իլեալ էին հախապատցիք. եւ կային քաղցեալ, վասն որոյ եկեալ ասա՝ բողոքեցին, որոյ սակս խնդիր գրեցաւ արքային, զի զհնար իմն գտցէ վասն նոցա: *Գրեցաւ ի ՌՄԼԱ (1782) թուոջ, ի մայիսի ԻԴ (24), (№ 751, 61):*

ժէ. *4ա* Թուղթ առ որդի արքային Վրաց Գիօրկին միրզայն. շնորհակալութիւն վասն յղեալ ընծայիցն: *Գրեցաւ ի ՌՄԼԱ (1782) թուոջ, ի մայիսի ԻԷ (27), (№ 751, 756):*

ժը. *4բ* Թուղթ առ արքայն Հերակլ. մխիթարութիւն վասն մահուան կնոջ որդոյն իւրոյ Գեօրկին միրզային: *Գրեցաւ ի ՌՄԼԱ (1782) թուոջ, ի յունիսի (№ 751, 774):*

ժր. *4բ* Թուղթ ի յԱմատերտամ. շնորհակալութիւն վասն արդեանց իւրեանց հասուցելոց յառաջագոյն ցեսայի վարդապետն եւ խոստումն եւս, զի ի գալ Փիլիպպոս վարդապետին մինչ գիտացէ, թէ զի՞նչ է հասեալ նմա՝ յինքեանց գրեցէ, եւ յայնժամ՝ զշնորհակալութիւնս վասն այնր: Եւ, զի յառաջ քան զայս, յղեաց վերստին զեսայի վարդապետին ի նուիրակութիւն եւ յառաջնորդութիւն Զմիտնոյ՝ եւ սոցա եւս, գրեաց սոցա այժմ զպատուէր կալ հնազանդ բանից նորին եւ զարդիւնս իւրեանց առ նա հասուցանել: *Գրեցաւ ի ՌՄԼԱ (1782), ի նոյեմբերի (№ 751, 787):*

2. Հմր. 2: Օրինակք կոնդակաց Դուկաս կաթողիկոսին քառածալ նօտարագիր՝ գրեալ ի թուին Հայոցս ՌՄԼԱ (1782) մինչ ցՌՄԼԴ (1785) թիւն ի Սուրբ Էջմիածին: № 752:

ա. *5աբ* Թուղթ ի Բայազէտ ի վերայ Սահակ աղային Արապկիրցոյ՝ օրհնութիւն եւ շնորհակալութիւն, վասն ջատագովութեանն առ սուրբ հաւատս մեր եւ ընդդիմակայութեանն ընդդէմ ախթարմայիցն՝ առաջի մովպետին Բայազտոյ, որ այժմ ի խնդրոյ սրբազանին վրէժխնդիր լինէր նոցա, եւ հարկ էր դառնալ առ մեզ – *Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան*

եւ շնորհաց՝ հանդերձ ամենամեծ ողորմութեամբն Աստուծոյ... մանաւանդ բերանալիր գոհունակութեամբ յայտնեալ էին զճշմարտասիրութեան քոյին արիաբար շատագովութիւնն առ սուրբ հաւատ մեր եւ օգնական լինելը ինքեանց ի դոյն աստուածահաճոյ հետեւումսդ եւ ընդդիմակայութիւնդ ընդդէմ հակառակացն ճշմարտութեան շարափառ ախթարմայիցն (№ 752, 1): Ի ՌԼՄԱ (1782), ի յուլիս:

Ծնթ. Տէս ՄՄ ձեռ. 2803. 5բ-6բ, հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Թ, Երեւան, 2017, էջ 643, Ա. 6:

բ. 5բ-6ա Թուղթ մեղադրանաց առ Բայազադոյ նուիրակ Կարապետ վարդապետն, որ ի բազում տեղիս զանօգուտ եւ զխոռովութեան բանս առնէր եւ խստութեամբ վարիւր ընդ ամենեսեան – Յորմէ ի վիրաւորեցելոյ սրտէ մեղադրութեամբ ծանիր Կարապետ վարդապետ... Ուրեմն պարտիս ըստ գրեցելոյս առնիր: Ողջ լեր ի Տէր: Ի ՌԼՄԲ (1783) թուոջս եւ փետրվարի ԺԴ (14), (№ 752, 65):

Ծնթ. Տէս ՄՄ ձեռ. 2803. 33աբ, հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Թ, էջ 647, Ա. 35:

գ. 7ա-8ա Թուղթ առ սրբոյ Երուսաղէմի պատրիարք Յովակիմ վարդապետն. ի պատասխանի թղթոյ նորին, զոր ընդ Յարութիւն եւ Պետրոս վարդապետացն՝ միաբանիցն իւրոց գրեալ էր, առ ի ձեռնադրել զնոսա եպիսկոպոսունս ի պաշտօնատարութիւն սրբոյ Յակոբեանց Աթոռոյն – Քրիստոսի փրկչին մերոյ սքանչելահրաշ սրբոց տեղեացն տնօրինականաց աստուածընկալ Գողգոթային կենսառիթ... եւ զայլ որպէսն մեր ի շնորհածին որդւոցդ մերոց եւ ի նորընծայ եպիսկոպոսացդ իմացեալ ողջ լեր ի Տէր: Ի ՌԼՄԲ (1783) թուոջս եւ ի մարտի Բ (2), (№ 752, 72):

Ծնթ. Տէս ՄՄ ձեռ. 2803. 36բ-37բ, հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Թ, էջ 647, Ա. 39:

դ. 8աբ Թուղթ առ Բահանայսն, իշխանսն եւ ժողովուրդսն Բայազադոյ. ի պատասխանի մահասարին իւրեանց, զոր գրեալ էին եւ ընդ խօյեցոց մահասարին ի ձեռն իւրեանց եւ խօյեցոց Բահանայիցն, իշխանացն ումանց յղեալ՝ խնդրելով առաջնորդ վասն Սրբոյն Թաղէտսի առաքելոյն վանիցն: Որ եւ սրբազան զԻսահակ վարդապետն Փառակեցի յղեաց առաջնորդ վերոյգրեալ կոնդակաւ – Յորմէ ժամանեցի թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց՝ հանդերձ առատածիր ողորմութեամբն եւ զթութեամբն աստուածային եւ պահպանողական շնորհիւ լուսածաւալ սրբոյ տեղւոյս ի շմանն Քրիստոսի... Որք եւ եղիջիք օրհնեալք ի Տեառնէ եւ զօրացեալք միշտ ի նոյն՝ հանդերձ ձերայ-

նուլքդ ամենեքումբք. ամէն: Գրեցաւ ի ՌԼՄԲ (1783) թուոջս մերում, ի մարտի Իէ (27), (№ 752, 85):

Ծնթ. Տէս ՄՄ ձեռ. 2803. 43աբ, հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Թ, էջ 648, Ա. 46:

Յաջորդի՛ Գաբ թերթերում, նշուած են կոնդակների միայն խորագրերը, այսպէս՝

ե. 9ա Թուղթ ի Թիֆլիզ առ միրզայ Գեօրկիմն եւ Միսայլէն. ի պատասխանի թղթոյն նոցա, զոր գրեալ էին առ սրբազանն եւ խնդրեալ, շնորհեալ Սարգսի ումեմն զկոնդակ շրջաբերական: Յորմէ... եւ այլն: Գրեալ ի ՌՄԼԱ (1782), ի յունիսի Ի (20), (№ 752, 91):

Ծնթ. Տէս ՄՄ ձեռ. 2803. 46ա-47բ, հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Թ, էջ 649, Ա. 49:

32. *87բ-9բ* Աստ մուտ գրեցաք Աստրախանու նուիրակութեանն — *ԱՃԺԶ (116)* Ն(=թուման) *ԴՌ (4000)* ի բնակչաց քարվանսահրից, ի զարիբկանաց նուիրակութեան ջամնայ... *եԴ (44)* Ն(=թուման) *էՌ (7000) ԹՃԾ (950)*. Այս վարադիս միւս երեսին դիմացն եղեալ մեզ մօտ մնացած աւելի փող ի յարդեանց Սուրբ Աթոռոյն քառասունչորս թուման եօթն հազար ինն հարիւր յիսուն դիան:

33. *90ա եԴ (44)* Ն(=թուման) *էՌ (7000) ԹՃԾ (950)*. Դիմացն եղեալ մեզ վերայ մնացեալ ի յարդեանց Սուրբ Աթոռոյն մաբլաղն, որպէս յայտ է, բերի աստէն դուրս ձգեմ... որ է մին հարիւր երկու թուման մին հազար ինն հարիւր քսան դիան:

34. *91ա-2ա* 1784, ամիս յունվար: Աստանօր գրեմք եւ զհասարակ մասրաֆսն մեր, զորս արարեալ եմք — 1. *Լ (30)* Ն(=թուման). *Յասմ ամի բոլոր հասարակ մասրաֆն իցէ մերոյ ի ձեռն Աւետիկ աւագ*

սարկաւագին մերոյ... Իսկ կէսն, որ է նոյն չափ, որ է վասն Աւետիս վարդապետի յատուկ անձնական քարին, ես ի վերայ իմ հաշուեմ՝ շտալ վնաս Սուրբ Աթոռոյն:

35. 93բ-5ա 2 (6) Վ(=թուման). Սուրբ Աթոռոյ արդիւնքն, սոյն կողմանց եղեալ քաղաքաց ժողովրդականաց ծերունի Բաղդասար վարդապետն իւր հոգեբաժին ետ վեց թուման... ԲՃօ (200) Թ (9) Վ(=թուման) եթ (5000) ԱձԼօ (130). Վերոյ 2 զալամ ջամն հաւասարեալ եղեւ աստ ընդ դիմացն յիշեալ մտիցն:

36. 95բ-6ա Թիւն 1780: Հիմնեցաք գեղաբն Նախիջեւան. նորին ժողովուրդին, որ ի Ղաթմու գանազան քաղաքաց, արդիւնք ունին Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, եւ կամ ի նորաշէն քաղաքն սանմանեցաք գանձանակ եւ սկսեցաք ժողովել, գիտութեամբ եւ ձեռամբ հարազատ վեբիլին մերոյ պարոն Սլրաշին, մինչեւ թիւն 1787 ի մուտն յունիսի նուիրակութեան արդիւնքն բոլոր – ԱձԺԵ (115) Վ(=թուման). հոգեբաժին եւ գանձանակք բուրն ԲՃԿԱ (261) Վ(=թուման)... ԳՃ (300) ՂԳ (93) Վ(=թուման) եթ (5000). Վերոյ 2 զալամ ջամն եղեւ հաւասար ընդ մտիցն երեք հարիւր [ին]նսուն երէք թուման հինգ հազար դիան:

37. 96բ-7ա Միւնչեւ սոյն թիւ 1789 ապրիլի ամիսս, որ սոյն հաշիս առաքեմ այժմ ի սպաս սրբազան վեհիդ, ի սմին մնացեալն է առ յիս ի յարդեանց Սուրբ Աթոռոյն, որպէս թղթոյս միս երեսումն յայտնի է, որ է ջամնայ – ԿԹ (39) Վ(=թուման) ԸԹԲՃԶ (8280)... ԽԶ (46) Վ(=թուման) ԸԹԶՃԽօ (8640). Վերջապէս, գնաց մնաց աւելի գնացած առ Սուրբ Աթոռն, որ է ջամնայ քառասունվեց թուման ութն հազար վեց հարիւր քառասուն դիան, որ է ԽԶ (46) Վ(=թուման) ԸԹԶՃԽ (8640):

38. 97բ-8ա ԱԹԵՃ (1500) Գ (3) Վ(=թուման) ԶԹ (6000) Աձ (100). Առաջին նուիրակութեան արդիւնքն է, որպէս ի հաշուոջ գրեալ գոյ... ԷՃ (700) Թ (9) Վ(=թուման) ԶԹ (6000) Աձ (100) Ե (5) դիան վերոյ 3 զալամ խառչելին բոլոր ջամն է:

39. 99բ-101ա ԱձԻԱ (121) Վ(=թուման) Աստ մուտ գրեցաք Հաշտարխանու նուիրակութիւնն ի բնակչաց եւ ի դարիպականաց ԱձԻԱ (121) Վ(=թուման)... ԱԹԲՃԺԵ (1215) Վ(=թուման) եթ (5000) Աձ (100) դիան վերոյ հինգ զալամ ելից դրամից ջամն է մին հազար երկու հարիւր տասն եւ հինգ թուման հինգ հազար մին հարիւր դիան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Թիւն 1784, յունվարի մուտն: Դէֆթերս

ծրարեալ եղեւ, ի սմա գրեալ լինիլ ամենայն արդիւնք Սրբոյ Աթոռոյն էջմիածնի. երկրորդ՝ նուիրակութեանն եւ առաջնորդութեանն: Երկայնաբազուկ Արդուքեանց, Շիօշբէգի որդի, Սանահնեցի նուաստ ոգի Յովսէփայ արքեպիսկոպոսի Ռուստաց երկրի ամենայն ազգին Հայոց, ի Հաշտարխան:

2. 5ա Ի հազար եօթն հարիւր եւ ութսուն եւ չորս թուին Փրկչի, եւ ի Հայոց ՌՄԼԳ (1784), նորոգեալ եղեւ նուիրակութիւն մեր եւ առաջնորդութիւն ի վերայ Տէրունի վիճակիս Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, այսինքն՝ ի վերայ Պետրապօլոս, Մօսկօվո, Հաշտարխանու, Ղզլարու, Մօզդոկու եւ շրջակայից սոցին. նաեւ ի վերայ Նոր Նախիջեւանու, Ղաթմու եւ Չիբէզու եւ այլ մերձակայից սոցին, ի սրբազանսուրբ հայրապետութեանն մերմէ տեառն Ղուկասու կաթողիկոսին: Ուստի եւ մէք զսկիբն արարաք գործոյ նուիրակութեան եւ այլ արդեանց ի վերոյ թուոջն եւ ի մուտն յունվարի, եւ անդի սկսեալ՝ գրելոց էմք ի սմա զամենայն արդիւնս եւ զծախս մեր կարգաւ, որպէս տեսանելոց էք ի ցանկս եւ յիւրաքանչիւր տեղիս արդեանց, նուիրակութեանն եւ առաջնորդական արդեանցն: Ամէնաբարձրեալն Աստուած յաշողեսցէ զգործս ձեռաց մերոց ի զօրեղութեամբ՝ տալով ժողովրդեանն զյաշողութիւնս, բարիս, զշնորհ եւ զողորմութիւն իւր: Ամէն:

3. 87բ-88ա Ի 1784 յամի Փրկչին եւ ի Հայոց ՌՄԼԳ, նորոգեալ եղեւ նուիրակութիւն մեր եւ առաջնորդութիւն ի վերայ տէրունի վիճակիս Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, այսինքն՝ ի վերայ Պետրոսօղոս, Մոսկօվո, Հաշտարխանու, Ղզլարու, Մօզդոկու եւ շրջակայից սոցին: նաեւ ի վերայ Նոր Նախիջեւանու, Ղաթմու եւ Չիբէզու եւ այլ մերձակայից սոցին ի սրբազանսուրբ հայրապետէն մերմէ տեառն Ղուկասու կաթողիկոսէն, ուստի գրեմ աստ զմուտսն նուիրակութեանց, խոստմանց, կտակաց, նաեւ առաջնորդական արդիւնքն՝ տնօրհնէք, սրբադրամ, պսակդրամ, հոգեբաժին, եւս այլ յիշատակիք, եւ ի նոցունց որքան Սուրբ Աթոռն եմ հասուցեալ, թէ՛ դրամս, կամ զայլ իրս ի ձեռն զանազան արանց, կամ ի սակի Սուրբ Աթոռոյն անշարժ ինչս գոյացուցեալ, նաեւ մեր խցի ուտելեաց կամ այլ մասրաֆ ծախսն էմք արարեալ, որպէս միջստմիոջէ գումարքն յանուանէ աստ ի ներքոյ սորին մուտսն եւ յելսն նշանագրեալ յայտնի լինին առ բարին:

4. 93բ-4ա Ի հաշուի աստ արտագրին, յետ անցեալ թիւ 1788, յուլիս ամսոյ 30էն, յորում ժամանակի առաքեալ եմ առ Սուրբ Աթոռն. զնախ՝ եղեալ բոլոր մտից եւ ելից հաշիւն, իսկ այնուհետեւ մին-

չեւ ցայն թիւ 1789, ապրիլի ամսոյ վերջն, զմնացորդ մուտան արդեանց, այսինքն՝ կտակաց, խոստմանց, նաեւ առաջնորդական արդիւնքն՝ տնօրհնէք, սրբադրամ, պսակդրամ, հոգեբաժին եւ այլն: Եւ ի նոցունց որքան Սուրբ Աթոռն եմ հասուցեալ եւ որքան ծախս են ելեալ, միըստմիտջէ վասն զանազան իրաց յայտնի:

5. 97բ-Ցա Աստ գումարեալ բոլոր արդեացն Սուրբ Աթոռոյն ի նուիրակութեան իմուժ յատկապէս նշանակեմ, նաեւ ի նոցունց եղեալ խարջն մեր, մինչեւ 1789 ապրիլի վերջն:

6. 99բ-100ա Ի 1789 յամի Փրկչին եւ ի Հայոց ՌՄՂԸ, նորոգեալ եղեւ նուիրակութիւն մեր եւ առաջնորդութիւն ի վերայ տէրունի վիճակի Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, այսինքն՝ ի վերայ Պետրբուրդու, Մօսկովու, Հաշտարխանու, Ղզլարու, Մօզդոկու եւ շրջակայից սոցին, նաեւ ի վերայ նոր Նախիջեանու, Ղախմու եւ Չէրքէզու եւ այլ մերձակայից սոցին ի սրբազանասուրբ հայրապետէն մերմէ տեառն Ղուկասու կաթողիկոսէն, ուստի գրեմ աստ զմուտան նուիրակութեանց, խոստմանց, կտակաց, նաեւ առաջնորդական արդիւնքն, որ է տնօրհնէք, սրբադրամ, պսակդրամ, հոգեբաժին, եւս այլ յիշատակիք, եւ ի նոցունց որքան Սուրբ Աթոռն եմ հասուցեալ թէ՛ դրամս եւ թէ՛ զայլ իրս ի ձեռս զանազան արանց, կամ ի սակի Սրբոյ Աթոռոյն անշարժ ինչս գոյացուցեալ եւ թէ՛ մեր խցի ուտելեաց եւ կամ այլ մասրաֆ ծախսն եմք արարեալ, որպէս միըստմիտջէ գումարքն յանուանէ աստ ի ներքոյ սորին մուտան եւ յելսն նշանագրեալ յայտնի լինին առ բարին:

7. 100բ Վերոյ ամենայն մուտն ձեռամբ զանազան արանց, եւս մեր Գրիգոր վարդապետին, տեսի ի դեֆթերս նոցին, եւ աստ գումարեալ՝ աւարտեցի ի 1795, մայիսի մուտն, եւ զկնի այսմ նոր սկսանելի է. ուրույն գրել զամենայն մուտս Սրբոյ Աթոռոյն: Յովսէփ արքեպիսկոպոս:

8. Տե՛ս Բովանդակութիւն 18, 20, 25, 26, 27, 29, 30, 34, 36, 37 (սկզբում):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 95բ-Ցա Աստ արտագրեմ ի դաֆթարէս իմմէ նոր Նախիջեանու, թիւն 1780էն սկսեալ, արդիւնքն մինչեւ ցայժմ, թէ ուստի, որով եւ որքան է լեալ կամ ի նոցունց ուր իցեն հասուցեալ եւ որքան մնացեալ գայ ապա հասանելոյ ի Սուրբ Աթոռ Մայր մեր աստուածահիմն էջմիածին, որպէս յայտ է:

2. 83բ Յառաջին նուիրակքն արդեանցն, զորս առաքեցի ի Սուրբ Աթոռն եւ հեսապն զերծայ, ի

նոյն յառաջի դաւթարոյն, Սուրբ Աթոռն մեզ տալիք մնաց հարիւր քառասուն եւ վեց թուման ինն հազար ութ հարիւր եօթանասուն դեան, որ այսքանս ի մէնջ աւելի է գնացեալ, եւ Սուրբ Աթոռն մեզ տալիք է, որպէս յայտ է ի դաւթարէն հնոյ, վասն որոյ աստ նշանակեցի վասն ապագայն ի հաշիւ մտանելոց. զի սոյնս յետ աւարտմանն եւ ի Սուրբ Աթոռն գրեալ եմ ի 1783 եւ այժմ ի սոյն 1784 եւ ի յուլիսի մուտն, աստ նշեցի:

3. 90ա Յանցեալ թիւ 1783ին առաջին նուիրակութեան բոլոր մտից եւ էլից հաշիւն յուղարկեալ եմ Սուրբ Աթոռն, յորում յայտնի է, որ իմոց արդեանց աւելի փող է մնացած, եւ մինչեւ ցայսօր նկատելով զհարկաւորութիւնսն Սուրբ Աթոռն ի յարդեանց նորին՝ չեմ վերառեալ. այժմ աստ նշանակեցի, որ կրկին յայտնի լիցի սրբութեան ձեռոց, որ է ջամնայ հարիւր քառասունվեց թուման ինն հազար ութն հարիւր եօթանասուն դիան:

4. 90ա Այս կանխ ձեռնարկութեամբ իմով առաքեցաւ առ ի Սուրբ Աթոռն առ սիրելի վեհապետն. 1788, յուլիսի 30, ի Հաշտարխան:

5. 35բ Մինչեւ յաստ գրեցաւ եւ առաքեցաւ առ սրբազան վեհապետն. եւ աստ վերջացաւ երրորդ նուիրակութեան հաշիւն: 1789, ապրիլի 30, ի Հաշտարխան:

6. 96բ-7ա Աստ նշան[ա]գրեմք բոլոր հաշուաց յինէն առաքելոց մնացորդ[ը] ջամերն, որպէս յինէն աւելի առ Սուրբ Աթոռն գնացածին, նոյնպէս ի միւս հաշուաց առ յիս մնացելոց ջամերն հանդէպ միմեանց երեւին վերահասութեան, թէ վերջապէս բոլոր հաշուովքն մինչեւ 1789 սոյն թիւ, ապրիլի ամիսն, աւելի գնացածն որքան է:

7. 49ա Մինչեւ աստ գրեցաւ եւ ուղեւորեցաւ ի Սուրբ Աթոռն երկրորդ նուիրակութեան հաշիւն, աստ վերջացաւ: Յովսէփ արքեպիսկոպոս: 1789, ապրիլի 30, ի Հաշտարխան:

8. 97ա Վերոյ ԽԶ (46) ՝(քուման) ԸՌ (8000) ԶՃն (640) դիան ընծայ լինիցի Սրբոյ Աթոռոյն ի նուաստ որդւոցս: Այժմ կայ ի Նախիջեան պատրաստի հարիւր թուման, եւ յայսմհետէ եղեալ արդիւնքն յայլ դաւթարս եմ գրելոց: Բոլոր հաշիւն մեր այսու վերջացաւ: Յովսէփ արքեպիսկոպոս: 1789, մայիսի 3, ի Հաշտարխան:

9. 100բ (1789 ք.) Վերոյ գրեալ պարտականութիւնն մեր, որ է մին հարիւր եօթանասունութ թուման երեք հազար վեց հարիւր դիան ի ներկայումս, ոչ եղեւ առաքելն, այլ պատուիրեցի Գրիգոր վարդապետին, սոյն շափն՝ ամանաթ շինեալ ընդ բարձ-

րագոյն հրամանիդ առաքել առ սրբազանի ձեր: Յովսէփ արքեպիսկոպոս:

10. 101ա (1789 թ.) Յովսէփ արքեպիսկոպոս:

11. 36ա երեք թուղթ հատեցեալ եղեւ ի դեֆթե-

րես, զի սխալանք գոյր, զի փոխանակ արդեանցն՝ յիշատակիքն էին գրեալ աստ, այլ պարտ էր մուտքն գրել, որպէս եւ ահա գրի: Յովսէփ արքեպիսկոպոս: 1795, յապրիլի 20, ի Հաշտարխան:

213


ՀԱՇՈՒԵԹԵՐԹ

թղթ. 5, վա. 37բ

ՂԶԱՐ

ԳՐԻԶ՝ Մինաս Բեյ:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «H W» «0 6»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22x17,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 25-26:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 2ա-ում գրադաշար գունավոխտաւծ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա-2ա «Ի 1801 թուոջ եւ ի յունվարի 6էն, զկնի

ՌՄԾ-1801

եղանելոյն աստի Յովսէփայ հանգուցեալ կաթուղիկոսին, մինչեւ յայս նոր թիւս, Սրբոյ Աթոռոյ բոլոր արդիւնքն է Աձեե (145) (թուման) ԳՌ (3000) ԴՃ (400) դիան... Եւ յաղագս դիազարդիցն եւս, զորս քանի կտոր կայ առ մեզ, եթէ սոքա եւս հարկաւոր են, հրամանեա՛, եւ զայստսիկ յղեսցուք, զի իցէ, թէ շատ պիտոյ լինիցի»: Հաշուեթերթում Մինաս Բեհանան արտայայտել է Մայր Աթոռի բոլոր նուիրակութիւնների՝ «Թէ՛ խոստմունք, թէ՛ պսակադրամ, թէ՛ հոգեբաժին եւ թէ՛ գանձանակ», արդիւնքները. «որ մէկ բաժինն եկեղեցւոյն եւ 2 բաժինն Սրբոյ Աթոռոյն եւ առաջնորդական, զոր ի նախնեաց այսպէս է կանոնաւորեալ աստ»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 2ա Գրեցաւ ի 1801 թուոջ եւ դեկտեմբերի 22, ի Ղզար: Մինաս նուաստ քահանայ:
2. Տէ՛ս Բովանդակութեան սկիզբը:

214

ՀԱՇՈՒԵՄԱՏԵԱՆ

թղթ. 5, վա. 38

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՍԻՆ]


ԳՐԻԶ՝ Նահապետ (5ա-100բ):

ԹԵՐԹ՝ 157 (Կրկն.՝ 5գ, 65գ, 98. էջակալուած 1-192՝ հաշուի շառնելով չգրուած թերթերը). չգրուած՝ 1ա-4բ, 17ա, 38բ, 73ա, 101բ-102բ, 104ա-157բ: ՊՐԱԿ՝ Ա-ԺԲ (Ա, Զ, Ը՝ 11, Բ, Ե, Թ՝ 14, Գ՝ 18, Ե, Ժ՝ 16, Է, ԺԱ՝ 10, ԺԲ՝ 12): ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «DV»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23,3x17,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ եռասին: ԳԻՐ՝ բոլորգիր, բոլորախառն նուագիր (նմուշ՝ 5ա): ՏՈՂ՝ տարբեր: ԿԱԶՄ՝ դրոշմազարդ կաշի. աստառ՝ թուղթ:

Ծնթ. Կրկնուած թերթահամարները բաղկացած են առանձին թղթերից՝ այդ էջերում գտնուող, որոնք մամուլի

ՌՄԼԲ-ՌՄԾԳ-1783-1804

մաս չեն կազմում: Դրանց վրայ գրուած են տարբեր հաշիւներ եւ առանձին մարդկանցից ստացուած արդիւնքները (այդ գրառումները, որպէս առանձին Բովանդակութիւն, չենք արտայայտել):



նմուշ 5ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 157 թերթի վերին աջ անկիւնը պոկուած-ընկած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հաշուեմատեանում արտայայտուած են 1783-1804 թթ. ընթացքում Մայր Աթոռի բոլոր ուխտատուների դարպասի, աջհամբոյրի, եկաւ հասաւի, մոմագնի եւ այլ մուտքերի հաշիւները.

1. 5ա-8բ [Ի ՌՄԼԲ] (1783). Յունվար – 32 (դուռուշ) 30 (փարայ). Շիշման Դաւթի փեսայ Արսէնն ի գալն ի Սուրբ Աթոռս, հանդերձ իւր ընտանեօք, աջհամբոյր ետ թէ՛ մասանց եւ թէ՛ սրբազան վեհապետին ԼԲ (32) դուռուշ Լ (30) փարայ ի յունվարի Դ (4)... Զորեսին թղթոցս ընդ երեսաց գրեալ դրամից ջամն է չորս հազար հինգ հարիւր մէկ դուռուշ եւ Ի՛ն (25) փարայ, զոր սրբազան վեհապետի թէֆթէրն անցաւ:

2. 9ա-12բ Ի ՌՄԼԳ (1784) թուոյս: Վերստին գրեմք անա բոլոր ուխտատուաց տուրքն, բաց ի մեծ ուխտատուացն, որ աստ չէ գրած – 44 (դուռուշ) 30 (փարայ). Կարնեցի մահտեսի Մնացաւկանն, կինն եւ որդիքն, բոլոր տուեալ ուղորմութիւնսն եղեւ ԽԴ (44) դուռուշ Լ (30) փարայ ի յունվարի մուտն... 3914 (դուռուշ) 27 (փարայ). Այս ութ երեսաց գրեալ դրամից ջամն է ԳՌԹՃԺԴ (3914) դուռուշ եւ քսան եւ եօթն փարայ, զոր սրբազան վեհապետի թէֆթէրն անցաւ:

3. 13ա-6բ Ի ՌՄԼԴ (1785) թուին, վերստին գրեցից զբոլոր ուխտատուաց դարբասն, աջհամբոյրն, քառասնիցն եւ այլ խօստմունք եւ ողորմութիւնք – 25 (դուռուշ) 30 (փարայ). Նալբանդ Յօհաննէսն եւ մահտեսի Յօհանն, որք էին Արդալ աղայի նալբանդքն, դարբաս եւ աջհամբոյր ետուն Ի՛ն (25) դուռուշ եւ երեսուն փարայ ի յունվարի Ե (5)... 4872 (դուռուշ) 28 (փարայ). Սոյն երեսիս գրեցեալ բոլոր դրամիցս ջամն է ԴՌԼՃՃԲ (4872) դուռուշ ԻԼ (28) փարայ, զոր սրբազան վեհապետի թէֆթէրն անցաւ:

4. 17բ-21ա Ի ՌՄԼԵ (1786) թուոյս: Վերստին գրեցից, ընդ առաջնոյ ռնին, զբոլոր դարպասն եւ այլն, որպէս տեսանես – 45 (դուռուշ) 10 (փարայ). Կարնեցի ղուլուձի Մանուկն իւր ընտանեօք Ի (20) դուռուշ եւ կէս... 3035 (դուռուշ) 8 (փարայ). Միոյ տարւոյ գրեցեալ է (7) երես դրամից ջամն է:

5. 21բ-5ա Ի ՌՄԼԶ (1787) թուին – 67 (դուռուշ) 20 (փարայ). Նոր նախիջեւեացի երկոսին Կարապետն, որք էին տեղեաւ Թօխաթցիք, ի գալն իւրեանց ի Սուրբ Աթոռս՝ աջհամբոյր ետուն ԺԵ (15) մանարու ոսկի ի յունվարի 3... 3364 (դուռուշ) 21 (փարայ). Վերոյ գրացեալ միոյ տարւոյ եղեալ է (7)

ղալամ արդեանց ջամն է երեք հազար երեք հարիւր վաթսուն եւ չորս դուռուշ Ի՛՛՛՛՛ (21) փարայ:

6. 25բ-9ա Ի ՌՄԼԷ (1788) թուոյս – 22 (դուռուշ) 20 (փարայ). Կարնեցի Աբրահամն, ընդ մօրն, ընդամէն ետ ԺԶ (16) դուռուշ եւ կէս... 3880 (դուռուշ) 11 (փարայ). Զամն եղեւ միոյ տարւոյ եղեալ աջհամբոյր եւ դարպաս եւ այլն:

7. 29բ-32բ Ի ՌՄԼԸ (1789) թուոյս – 9 (դուռուշ) Կտցու անապատի ժողովարար Սահակ վարդապետն աջհամբոյր ետ Գ (3) ոսկի ի յունվարի Դ (4)... 3954 (դուռուշ) 10 (փարայ):

8. 33ա-8ա Ի ՌՄԼԹ (1790) թուոյս – 30 (դուռուշ) Թօմա[յ] առաքելոյ վանից առաջնորդ Թօմաս վարդապետն, ի գալն ի Սուրբ Աթոռս, աջհամբոյր ետ Ը (8) խօյայ ոսկի, թող գայլ մրգեղէն ընծայքն, ի յունվարի Ե (5)... 5591 (դուռուշ). Բոլոր ջամն է միոյ ամի եկեալ արդեանց՝ ընդ ցուցանելոյ դաւթարիս:

9. 39ա-45բ Ի ՌՄԽ (1791) թուոյս – 63 (դուռուշ). Թաղէոս առաքելոյ վանից առաջնորդ Գէորգ վարդապետն, մինչ եկն եպիսկոպոս լինելոյ, բացի յայլ ընծայից, աջհամբոյր ետ Ժ (10) ոսկի ի յունվարի Ե (5)... 8036 (դուռուշ) 33 (փարայ). Բոլոր ջամն է ԸՌԼԶ (8036) դուռուշ ԼԳ (33) փարայ:

10. 46ա-52ա Ի ՌՄԽԱ (1792) թուոյս – 30 (դուռուշ). Կարնեցի պառաւ մի, ընդ Բ (2) տղային, ետ Լ (30) դուռուշ ի յունվարի Գ (3) եւ Ա (1) սափլու եւս... 4827 (դուռուշ) 4 (փարայ). Երկուց ջամից ջամն է ԴՌ (4000) ԸՃԻԷ (827) դուռուշ եւ Դ (4) փարայ:

11. 52բ-60ա Ի ՌՄԽԲ (1793) թուոյս – 3 (դուռուշ). Կեօլացի Պօղոս եւ Գրիգորն աջհամբոյր ետուն Բ (2) դուռուշ, Ա (1) դուռուշ եւս սոցա ձեռօքն եկաւ հասաւ ի յունվարի Ա (1)ին... 10380 (դուռուշ) 19 (փարայ). Սոյն ԺԵ (15) ղալամիցս ջամն է ԺՌ (10000) ԳՃԶ (380) դուռուշ ԺԹ (19) փարայ:

12. 60բ-6ա Ի ՌՄԽԳ (1794) թիւն – Ի գալ Գէորգին ի Սուրբ Աթոռս ետ աջհամբոյր Լ (30) դուռուշ... Սոյն ԺԱ (11) ղալամից ջամիցս ջամն 7744 դուռուշ 34 փարայ:

13. 66բ-72բ Ի ՌՄԽԴ (1795) թուոյս – 25 (դուռուշ) 10 (փարայ). Նորապատցի տէր Պետրոսն աջհամբոյր ետ Բ (2) դուռուշ ի յունվարի 3... 280 (դուռուշ) 32 (փարայ):

14. 73բ-8բ Ի ՌՄԽԵ (1796) թուին – 225 (դուռուշ). Բարդուղիմէոս առաքելոյ նորոգ առաջնորդ Խաչատուր վարդապետն աջհամբոյր էր յղեալ ԺԵ (15) Պ(=թուման) սաղ դրամ... 6905 (դուռուշ) 26 (փարայ). Ի միոյ ամի եկեալ արդեանց բոլոր ջամն

է, ընդ ցուցանելոյ դաւթարիս, 20 (6000) ԹՃԵ (905) ղուռուշ ԻԶ (26) փարայ:

15. 79ա-84բ Ի ՌՄԽԶ (1797) թուղն սկսաֆ գրել – 12 (ղուռուշ). Բաղէշու առաջնորդ Գրիգոր վարդապետն ԸՌ (8000) դ[իա]ն աջհամբոյր էր յղեալ Ի Բայազաա... 7037 (ղուռուշ) 10 (փարայ). Յայսմ ամի բոլոր աջհամբոյրի եւ այլ խառն եկեալ արդեանց ջամն է էՌ (7000) Լէ (37) ղուռուշ Ժ (10) փարայ, զորս գրեցաք:

16. 85ա-90ա Ի ՌՄԽԷ (1798) թուղս – 8 (ղուռուշ). Պարոն Յովսէփն Թիֆլիզեցի աջհամբոյր ետ Ա (1) մաճար ոսկի յունվարի 3... 9533 (ղուռուշ) 224 (փարայ). Վերոյ ԺԱ (11) ղալամիցս ջամն է ԹՌ (9000) ԵՃԼԳ (533) ղուռուշ քսան եւ երկու փարայ, զորս գրեցաք աստ ընդ ցուցման դաւթէրիս մերոյ:

17. 90բ-5ա Աստուծով մտաֆ Ի ՌՄԽԸ (1799) թիւն, յորում որ ինչ արդիւնֆ Ի շնորհացն Աստուծոյ գայցէ Սրբոյ Աթոռոյս՝ գրեցից կարգաւ – 24 (ղուռուշ). Սրբոյն Յակոբայ աջոյն խաջհամբոյր էին տուեալ (Թո՛ղ զմատաղսն եւ զգարին) ղուրտուզոպեցիք եւ զշուկեցիք Ա (1) Թուման ԸՌ (8000)՝ ձեռամբ Մարտիրոս վարդապետին... 10168 (ղուռուշ) 18 (փարայ). Վերոյ գրեցեալ Ժ (10) ղալամ գրամոց ջամն է ԺՌ (10000) ԱՃԿԸ (168) ղուռուշ եւ ԺԸ (18) փարայ:

18. 95բ Ի ՌՄԽԹ (1800) թուին, յաուրս անկաթոտիկոսութեան Սրբոյ Աթոռոյս, Ի յովատաւորաց եկեալ արդիւնֆն է – 39 (ղուռուշ). Ի Բայազիաու, Ի Համթա՛ եւ այլ տեղե[ա]յ Ը (8) անձինք ետուն Ի յունվարին... 2998 (ղուռուշ). Սոյն երեսիս բոլոր ջամն է ԱՃՂԹ (199) ՚(=թուման) ԸՌ (8000) ԶՃԿԵ (675) դիան:

19. 96ա-100բ Ի ՌՄԾ (1801) թուին: Յայս վայր հասեալ գրութեանց դարթարիս Դաւիթ սուտասան՝ կաթոտիկոսն կարգեցաւ հայրապետ, եւ օծաւ (դարձրած՝ չօծաւ) Ի ԻԸ (28) ապրիլի. որ էր վեցերորդ կիրակէ յինանցն: Յորմէ հետէ, հրամանաւ նորին, բոլոր ուխտատուրաց աջհամբոյրն, դարպասն, եկաւ հասան, մոմագինն եւ այլֆ այսպիսիք գրին կարգաւ Ի ստորեւ – 124 (ղուռուշ) 20 (փարայ). Սրբազան վեհապետի օծման աւուր ժա-

մուցն եղեւ ԱՃԻԿ (124) ղուռուշ եւ կէս Ի յայր[ի]լի 28... 12734 (ղուռուշ) 8 (փարայ). Վերոյ ինն երես գրեցեալ գրամոց ջամն է ԺԲՌԷՃԼԴ (12734) ղուռուշ:

20. 101ա Դարսեցի Մատակենց մահտեսի Յարութիւնի եւ մահտեսի Միխայելի եւ ընդ սոցա եկեալ ուխտաւորաց տուրքն Ի յունվարի 5... 521 (ղուռուշ) 34 (փարայ). Հին գրամք գոյր, որ չէր խարճուէր, Ի տեղի արծաթի մսխալով ծախեցաք, որ էր ԶՃԿԲ (662) մսխալ եւ Դ (4) դանկ, մսխալն Ժ (10) շահի եւ կիսով գինն եղեւ ԼԴ ՚(=թուման) ԷՌ (7000) ԹՃ՝ (900) դիան, որ է ԵՃԻԱ (521) ղուռուշ ԼԴ (34) փարայ:

21. 103ա Ի ՌՄԾԲ (1803) – Սալմաստեցի մէլիք Նազարն սրբազան վեհապետին աջհամբոյր ետ Բ (2) մաճառ ոսկի, որ է ԺԲ (12) ղապզ, Ի դեկտեմբերի ԻԳ (23)ին... 328 (ղուռուշ). Գումարն է ԳՃԻԸ՝ (328) ղապզ:

22. 103բ Ի ՌՄԾԳ (1804): Սկսեալ կամօֆ եւ յաջողութեամբն Աստուծոյ յսկզբանէ տարոյս նոր Ի նորոյ գրել զեկեալ արդիւնսն սրբազան վեհապետին թէ՛ Ի կարգաւորաց եւ թէ՛ յաշխարհական ուխտաւորաց՝ յանուանէ յատկացուցանելով, զորս տեսանես: Յունվար ամիս – Ի գալ սրբոյն Սաղիմայ Կարնոյ նուիրակ Թօխադցի Մարկոս վարդապետին Ի ձեռնադրել եպիսկոպոս, որոյ Ի տեսութիւնն սրբազան վեհապետին աջհամբոյր ետ Ի (20) պաճախլու, որ է ԲՃ՝ (200) ղապզ... 50 (ղուռուշ). Թամանցի պարոն Մկրտիչն Զ (80) ղապզ ետ թէ՛ աջհամբոյր եւ թէ՛ այլ արդիւնք:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 5ա ՌՄԼԲ (1783): Հրամանաւ տեսուն իմոյ սրբազան վեհապետիս ես՝ Նահապետ նուաստ ծառայս նորին վերստին սկիզբն արարի գրել բոլոր ուխտաւորաց դարպասն, աջհամբոյրն, եկաւ հասան, մոմագինն, ոմանց տեղեաց գանձանակքն եւ այլ այսպիսիք, զոր առ ձեռս մեր հասանին:

2. Տես Բովանդակութիւն 2-19, 21, 22 (սկզբում):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

5ա (1783 թ.) Յառաջ քան զայս Ի վերայ այլ տետրաց գրեալ էր զայնս դեֆթէրեանց:


215
ՀՐՈՎԱՐՏԱԿ

թղթա. 5, վա. 39

ԺԸ դար

ԳՐԱԳԻՐ՝ դիւան Եասին (1775 թ.): ՀԵՂԻՆԱԿ՝
Հերակլ Բ արքայ:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսա-
պատկերով (երկիցս)՝ զանգ, ներհետում՝ «ԲԵ»
մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 72,2x28,6:
ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա):
ՏՈՂ՝ 102:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ստորին եզրը ծալուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ թարգմանութիւն վրացերէնից,
ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1աբ «ա. երկրորդ Հերակլ արքայս Վրաց եւ Կա-
խից, զայս իրաւունս արարի եւ զայս վճիռս գրեցի
վասն այնց, որք ի քաղաքս Թիֆլիզ, եւ ի Գօրի եւ
ի բոլոր ներքոյ թագաւորութեանս մերոյ բնակեալք
են հայք եւ հայք ֆոանկացեալք, որք են ունեցող
զհաւատս Փափին... իբ. Այժմ, օգնականութեամբ
ամենասուրբ Հոգւոյն, կատարումն տամ վճռահա-
տական գրոյս եւ դնեմ արձանապէս, վասն ապագայ
ժամանակաց, եւ հաստատիմ մտօք իմօք եւ կնքով.
Եւ այսպէս հրաւերեմ զամենայն բարեպաշտ որդիսն
իմ, եւ բոլոր պայծառացեալ թաւադսն, եւ դրանն
մերոյ գործակալքն եւ ամենայն նախարարքն, զի
ստորագրութեամբ եւ կնքով հաստատեսցեն զայս,
եւ մեք ըստ ամենայնի տացուք զփառս Աստուծոյ»:

Վրաց Հերակլ Բ թգարի՝ Թիֆլիզի, Գօրիի եւ թագա-
ւորութեան ներքոյ բնակուող հայ կաթողիկներին
եւ հայ լուսաւորչականներին ուղղուած հրովար-
տակի թարգմանութիւնն է, ա-իբ կէտերից բաղ-
կացած, որում անդրադառնում է նրանց հարա-
բերութիւններին, որոնց մասին տեղեկացրել են
«տեղապահ տէր Մկրտիչ վարդապետն եւ տէր
Յոհաննէս առաջնորդն եւ վարդապետն, եւ նուի-
րակ տէր Մարտիրոս վարդապետն, եւ համայնք
բնակեալք հայք, որք ի քաղաքս Թիֆլիզ թէ՛ կար-
գաւորք եւ թէ՛ բոլոր իշխանք հայոց, որք ի Վրաս-
տան, եւ մէլիք Աւէտիքն եւ ամենայն քէթխուղայք»:
Արգելում է նրանց խնամիական կապերով կապ-
ուել կամ մէկը միւսի նկատմամբ բռնութիւն գոր-
ծադրելով՝ իր հաւատին դարձնել, այլապէս «ժա.
ֆոանկացելոյն հատուցի այսպէս. զոր ինչ ու-
նե[ա]ցի, բաց ի հոգւոյն, իսպառ խլեսցի. եւ ի վերայ
զլիսոյն չամուռ եւ ցեխ ածցեն, յորոյ յազգէ եւ իցէ.
Եւ ի կալանաւորութեան՝ զերկու ամիս, երկաթեօք
կապեսցի, եւ ետ երկու ամսոց հանցին ի դուրս, ԳՃ
(300) մարդ կացցեն, երեցս շրջածութեամբ գանա-
կոծ արասցին՝ ի անցուցանելով ի միջի երեցս ան-
գամ, եւ ետոյ թողուցուն եւ կամս տայցեն՝ ուր եւ
կամեսցի եւ յորոյ դաւանութեան վերայ հաճեսցի.
այնպէս արասցէ»:
Եւ կարգը խախտողների հա-
մար սահմանում են պատժամիջոցներ:

Ծնթ. Հմմտ ա՛ստ № 216, 218:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

1ա Գրեցաւ ի թվին յամէ Տեառն ՌՉԶԵ (1775)ին,
յամսուն յունիսի, զոր վիրքն թեբաթվէ կոչեմք, ԺԴ
տասն եւ չորսն, ի թագաւորանիստ քաղաքս մեր
Թիֆլիզ, ձեռամբ դրանն մերոյ. դիւան Եասին:

216
ՀՐԱՄԱՆԱԳԻՐ


թղթա. 5, վա. 40

ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Հերակլ Բ արքայ: ՍՏԱՅՈՂ՝ իշխան
Դեմետրի Օրբելեան եւ Եասաուլ Զազա:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսա-
գծերով, լուսագրով՝ «ROMR», լուսապատկերով՝

թագապսակ զինանշան, ներսում՝ տապարն ուսին
արջ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 44,8x17,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միա-
սին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 59:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերին եւ ստորին եզրերն անհարթ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ թարգմանութիւն վրացերէնից, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-2ա «Ի մէնջ յերկրորդ Հերակլ արքայէս առէք զհրաման, եւ ի գործ արկէք որպէս որ հրամայեալ ենք... արիութեամբ շարժեցէք եւ աշխատեցէք, որ այս շեշտիւ ուղղեսցուք, որ ինչ դիտաւորութիւն էր,

լրացաւ, եւ գրեցաւ. եւ այս թալիղայս պարտի ընդ այն մեծ վճռոյն դնել եւ պահել»: Վրաց Հերակլ Բ արքայի հրամանագիրը իշխան Դեմետրի Օրբելեանին եւ «եասաուլբաշի» Ջազային հայ կաթողիկոսների եւ լուսաւորչադասանների, վրացի յունադասանների եւ վրացի կաթողիկոսների հարաբերութիւնները կարգաւորելու կապակցութեամբ իր հրովարտակը գործարելու մասին, իսկ «եթէ որ անցանիցէ զնովաւ, որով կերպիւ իցէ, այն ի մէջ մեծ վճռոյն կարգեալ կայ, եւ ըստ կարգադրութեան հատուցումն լինելոց է նոցա»:

Ծնթ. Հմմտ աւտ №№ 215, 218:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

2ա Գրեցաւ ի ԻԲ (22) յունիսի ամսոյն, եւ յամի Տեառն 1775 ի թուին Վրաց ՆԿԳին:

217

ԿՈՆԴԱԿ


թղթայ. 5, վաւ. 41

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

ՌՄԻԷ-1778

ՀԵՂԻՆԱԿ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կթղկա: ՍՏԱ-ՅՈՂ՝ գանձապետ Նուրիջան:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33,7x16,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 33:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ – եկեղեցի (կթղկա բառի վրայ)՝ 1ա, թոչնագիր՝ 1ա: Գոյներ՝ կարմիր, բաց ու մուգ կանաչ (լուսանցագծերը՝ կարմիր):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նոտովամբ:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Յիստաի Քրիստոսի ծառայ տէր Սիմէոն կաթողիկոս եւ ծայրագոյն պատրիարք առաքելականի եկեղեցոյս Քրիստոսի եւ մեծի Աթոռոյս Սրբոյ էջմիածնի – Յորմէ հայրական սիրով եւ հոգեւոր օրհնութեամբ, եւ սրբոյ իշման տեղւոյս Քրիստոսի մեծագոր շնորհիւն ծանի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր, հարազատ զաւակ եւ հաւատարիմ գանձապետ Սրբոյ Աթոռոյս, բարեպաշտօն եւ

մեծահաւատ պարոն Նուրիջան... եւ զվէջն դոցա ի մի կողմն հատանել եւ զմեզ գրել. եւ որպէս գրեալ ենք ի հասարակ թղթոջ օրհնեալ իշխանացոյ, այնպէս կատարումն տալ բանին. եւ այսպէս իմացեալ ս՛ղջ լեր ի Տէր»: Սիմէոն կթղկաը կոնդակով դիմում է Մայր Աթոռի գանձապետ Նուրիջանին, որ լուսահոգի Բաղառնց պրն Մելքոնի ունեցուածքը յանձնեն նրա եղբայր պրն Աւետիքին, իսկ դաւթարն ուղարկեն իրեն: Նշում է, որ հնգգլ Մելքոնի եղբորորդի Խաչատուրը Կարինից եկել է իր մօտ եւ ցանկանում է զալ այդտեղ պրն Մելքոնի ունեցուածքի համար: Եւ կթղկաը նրան գրութիւն է տուել՝ նշելով նաեւ Նուրիջանի անունը եւ պատուիրելով. «պարտիք դուք ամենեքին զգրեալ թուղթն եւ զպատուէրսն մեր մտառութեամբ ընթեռնուլ եւ ի նմա, զոր ինչ գրեալ եւ հրամայեալ ենք յաստուածակոյս կողմանէ, իրաւամբ եւ արդարութեամբ այնպէս առնել»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ ի ՌՄԻԷ (1778) թուին, ի սեպտեմբերի ԺԲ (12) եւ ի Սուրբ էջմիածին:


ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (կարմիր թանաքով բոլորակ, ներսում պատկերագրութեամբ) «է: ՇՆՈՐՀԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՌՄԺԲ (1763)»:

218
ԱՆՈՒԱՆԱՑՈՒՑԱԿ

թղթայ. 5, վառ. 42

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «Օ Ս», լուսապատկերով՝ ռճաւոր զինանշան՝ (կիսաւ): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 38,6x17,6: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նուորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 48:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերն անհարթ, վերին աջ մասում կլոր անցի:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

Գորիի եւ Վրաստանի այլ վայրերի կաթոլիկոսութիւնն ընդունած հայերի անուանացուցակը, կազմուած հարցաքննութեամբ՝ ըստ Հերակլ արքայի հրամանի:

1. 1ա է: Առաջի Աստուծոյ, աստուածազօր արքային հրամանաւ հարցաքննութիւն արարաք, երանելի թագաւորի հրամանի եւ հոգմին յետ, ո՛ր ոք ֆոնանկացեալք են հաւաստեցաք վկայութեամբ բազմաց, որք են [ի] ներոյ գրեցեալքս – Դազախեցի Զօհրապն ժ (10) եւ է (7) ամ է... Քացախինց Արքանաւելի դուստր:

2. 1աբ Առաջի Աստուծոյ Գօրու ֆոնանկա-

ցեալքն այսք են – Ս[ա]հակէնց Մանուչարի որդի Յօվանէն... Աքէն, սորա կին:

Ծնթ. Հմմտ ա՛ստ № 215, 216:

ՓՈՍՏԱՅԻՆ ԾՐԱՐ

Այս եւ յաջորդ՝ № 219 վաւերագիրը դրուած են 22,7x18,7 չափի փոստային մի ծրարում՝ բաց շագանակագոյն զմուտով հաստատուած, որն ուղղուած է ամենայն Հայոց կթղկս ներսէս ե Աշտարակեցուն:

Ծրարի երեսամասին (ռուսերէն՝)

1. *Его святѣйшеству верховному патриарху католикоу всѣхъ Армянъ* Нерсесу.

Армянскоу въ Грузіи консисторіи.

Рапорты, № 930 и 931.

Черезъ Эривань въ Эчмиадзинь:

Ծրարի ետնամասին՝

2. Վրաց արքայից գանացողութիւնքն վասն թողացուցանելոյ զայրեաց դարձուցանելոց ի հոովմէականութիւն զվրացիս եւ զհայս:

3. Զուածել շտամպին՝ «ИЗЪ ТИФЛИСА ОТПРАВЛЕНО 21 ДБР»:

4. Զմուտսի մէջտեղում պատկերուած է ռուսական երկգլխանի թագակիր արծիւ, վերետում միապետի խաչակիր թագը, որոնց շուրջ, բոլորածել կայ արձանագրութիւն. «П. ГР. ИМ. ЕП. АРМ. КОНСИС: 4. վրաս. իմի. 2. վիճ. ԿՅՆՍԻՍ»:

219


ԳՐՈՒԹԻԻՆ

թղթայ. 5, վառ. 43

ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Մախիմեանոս հայրապետ: ՍՏԱ՝ ՏՈՂ՝ Սիմէոն Ա. երեսանցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 8 էջ. չգրուած՝ 3, 7, 8: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, երկիցս լուսապատկերով՝ ներսից ռճաւոր ուղղանկիւն շրջանակ, մէկի ներսում՝ «Փ Ե» լուսագիր: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35,6x11,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նուորգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 43, 54:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 7-8 էջերի ներքեւում մումի հետքեր:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ թարգմանություն վրացերէնից, սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1-2 «Ընդ հանրագունի եւ հաւ[ա]տ[ա]րմագունի, մեծի հովուապետի Արամեանց եւ բոլոր Հայոց տեառն պատրիարքի Սիմէօնի – Ողորմութեամբն էմմանուէլ մարդացելոյն Աստուծոյ Հիւսիսային Ափխազ Իմէրէթու եւ յամենայն Սաորին Իվէրիոյ կաթողիկոս հայրապետ Մաքսիմէանու... քանզի ոչ ումէքէ յաղթահարի, զոչխարս քո լայնարձակ լինին, մինչ ի խոր ծերութեան Փրկչեն»: Հիւսիսային Ափխազ Իմերեթի եւ Ստորին Իվերիայի կթղկա Մաքսիմիանոս հայրապետի գրութիւնը Սիմէոն կթղկսին, որտեղ նշում է, որ կաթոլիկութեան տարածման դէմն առնելու նպատակով դիմել է Սոլոմոն արքային, «զի վրէժ խնդրեսցէ յուրայաբար աստուածասպանիցն», որն իսկոյն զինուորներ է կարգել. «եւ սպանալեաօք կորոյս, բռնութեամբ ի բաց վարեաց յիշխանութենէ իւրմէ սուտ վարդապետաց, քահանայից նոցա եւ զեկեղեցին», եւ բոլոր ժողովրդին յանձնել է Մայր Աթոռի նուիրակ Մարտիրոս վրդին, թոյլատրել նրան նրանց վիճակում աներկիւղ շրջել, «ուր եւ իցեն յազգի ձերոյ ժողովուրդ. զոր ինչ կարգեալ իցէ ի

վերայ նոցա՝ առնուն, ոչ ոք լինի արգելօղ»:

2. 4-6 «Ողորմութեամբ եւ ապաւինութեամբ էմմանուէլի մարդացելոյ միածնի որդւոյն Աստուծոյ մեք՝ ի վերայ Ափխազաց եւ Իմէրէթու թագաւորաց թագաւոր Սոլոմօն Դաւթեան եւ անդրանիկ որդին մեր արքայածին Աղէֆսանդր... եւ եթէ ոք զայսու կանոնաւ անցանիցէ եւ հաւատան ոչ պահեսցէ ի վերոյ գրեալ վճիռն եւ [զ]անէ[ծ]ան, եղիցի անպակաս ի գագաթանէ եւ ի տանէ նորա»: Նշում է Ափխազիայի ու Իմերեթիայի թգւր Սոլոմոն Դաւթեանի ու տեղի հոգեւորականների եւ իշխանների միջեւ կաթոլիկութեան տարածման դէմն առնելու նպատակով կնքուած դաշնագրի մասին, քանի որ «որպէս իժի եւ քարբի յարձակեցան ի վերայ աշխարհի մերոյ, ի ծածուկ եւ յայտնի, յեղաշրջէին զժողովուրդն համանու[ան]եալ քրիստոնեայսն, մոլորեցուցանէին զպարզամիտս եւ զուղղագնացս երկրի մերոց, որ է վիճակ Մարիամու Աստուածածնայ, անողորմաբար քակտէին եւ զբազում հոգիս յափշտակեալ՝ արկանէին ի խաւարային դժոխս ընդ հօրն իւրեանց Փափին Հռովմայ...»:

Ծնթ. Հմմտ. աստ № 235:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ


2 Ապրելի ԻԳ (23)ին, 1777ին:

**220
ԿՏԱԿ**

թղթպ. 5, վաւ. 44

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «GB», լուսապատկերով՝ եռամահիկ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33x22,6: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 35, 37:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերն անհարթ: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Մի տարի ու կէս յառաջ եկեղեցւոյ առաջի վաքիլ Սարգիսն, որ մեռած էր, նորա վարիսն, որ լինի իւր որդիքն... Աբրահամն վասն իւր հարսանեացն 40 թուման պարտք է արել, այնոսինքն հատուցանէ»: Պարունակում է տեղեկութիւններ եկեղեցու ներկայացուցիչ, հնգգլ Սարգսի կտակից նրա թոռ Աբրահամին եւ միւս ժառանգորդներին յանձնուած գոյքի մասին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

2ա Այս գիրս գիւղի քէթղուտաներու խայիշօվն գրուեցաւ: Ռահմաբ ասացեալ ամսոյ ինն: Իսկ թիւն 1228 (1813):

221
ԿՈՆԴԱԿ


թղթայ. 5, վառ. 45

[ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ]

ՌՄԻԹ-1780

Հեղինակ՝ Սիմեոն Ա Երեւանցի կթղկա: ՍՏԱՅՈՂ՝ Սահակ վրդ., խշյ Սարգիս:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35,9x-10,9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 52+6+7:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թուղթը չորացած, փշրուող, նոր նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1. 1ա «Յորմէ սիրով եւ օրհնութեամբ բազմաւ գիտաստի՛ր, սիրելի որդիդ մեր Սահակ խոհեմամիտ վարդապետ... զի օր մի յառաջ եկեացէ, որքան շէն վրդովեալ ճանապարհքն: Ողջ լեր ի Տէր»։ [Սիմեոն] կթղկսի գրութիւնը Թոխաթի նուիրակ Սահակ վրդ-ին, որով յանդիմանում է նրան, որ կիմ

անապատի միաբան Մարկոս արդիւն գրութիւն է տուել իր փոխարէն նուիրակութիւնները հաւաքելու: Կարգադրում է ետ վերցնել գրութիւնը «օր մի յառաջ, զի մեզ ընդունելի չէ այդ արարեալդ, մանաւանդ թէ մեծ նեղութեան առիթ եւս է լինելոց մեզ, թէ շուտով չխափանես զայդ արածդ... եւ դու, որպէս եւ գրեալ եմ, ելեալ եկեացես ի Սուրբ Աթոռս»:

2. 1բ «Յորմէ սիրով եւ աստուածային օրհնութեամբ եւ շնորհիւ սրբոյ իջման տեղուոյս նորին, ծանուցումն լիցի սիրելոյդ մերոյ եւ հարազատ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս, տէրամբ Յիսուսի զօրացեալ մեծահաւատ խօշոյ Սարգսիդ... Այսպէս գիտացեալ լեր ողջ ի Տէր»։ [Սիմեոն] կթղկար դիմում է խշյ Սարգսին, որ Սբ. Աթոռի նուիրակ Սահակ վրդ-ի թողած երեք ամանով մեռոնը յանձնի նոր նուիրակ Յակոբ վրդ-ին, քանի որ նրա համաբաղակցիները (թոխաթիները) անարգել են սրբալոյս մեռոնը եւ ուղարկուած կարմրակնիք կոնդակը, դրանով եւ՛ Մայր Աթոռին եւ նրա նուիրակին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա, 1բ (երկիցս) Գրեցաւ ի ՌՄԻԹ (1780), ի փետրվարի (տեղը բաց):

222

ԿՈՆԴԱԿ


թղթայ. 5, վառ. 46

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

ՌՄԻԹ-1780

Հեղինակ՝ Սիմեոն Ա Երեւանցի կթղկա: ՍՏԱՅՈՂ՝ պրն Ալեքսան, պրն Գէորգ, Փիլիպպոս վրդ., պրն Եսայի Մասեհեան:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 33,5x22: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր, նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 56+9+7:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՆ – եկեղեցի (կթղկա բա-

ռի վրայ)՝ 1ա, թղնագիր՝ 1ա: Գոյներ՝ կարմիր, բաց մանուշակագոյն, բաց ու մուգ կանաչ (լուսանցագծերը՝ բաց մանուշակագոյն):

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1. 1ա «է: Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Սիմեոն կարողիկոս եւ ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց Առաքելական եկեղեցոյս Քրիստոսի, նաեւ սրբոյ եւ մեծի Աթոռոյս էջմիածնի – Յորմէ ժամանեցի գիր սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց ի վերայ սիրելի եւ հոգեւոր որդւոյդ մերոյ եւ հարազատ զաւակիդ Սրբոյ Աթոռոյս, բարե-

պաշտօն եւ քրիստոսասէր պարոն Ալէքսանդր... եւ ընդ ձեզ բնակեսցի եւ լցուցէ ամենայն հոգեւոր եւ մարմնաւոր բարութեամբ: Ամէն»: Սիմէոն կրթկսի գրութիւնը պրն Ալէքսանին (անաւարտ է):

2. 1ա «Յորմէ սիրով եւ աստուածային օրհնութեամբ գիտաստէր սիրելիդ մեր, տէրամբ Յիսուսիւ զօրացեալ, պարոն Գէորգ... Այսպէս արարեալ ուրեմն՝ գրեսցես մեզ զորպէսն: Եւ լեր ողջ ի Տէր»: Սիմէոն կրթկսր գրութեամբ տեղեկացնում է պրն Գէորգին, որ Բարսեղ վրդ-ից ստացել է իրեն նուդուած՝ փետրուարի 8ի գրութիւնը, յանձնարարում է պրն Եսայի Մասեհեանից վերցնել եւս 600 եւ վեց ու կէս դուրուշ գումար, որ լրանայ 1200-ը, քանի որ «ԱՌԲՃ (1200) դուրուշի զապզ գրեցաք ի վերայ Զմիւտնոյ նուիրակ եւ առաջնորդ Փիլիպպոս վարդապետին եւ յղեցաք առ քեզ... եւ զայդ զապզ տո՛ւր իւրեան եւ մեզ գրեա՛ւ»:

3. 1բ «Յորմէ սիրով եւ օրհնութեամբ բազմաւ գիտաստէր, սիրելի եւ շնորհածին որդիդ մեր եւ կաթնասուն զաւակ Սրբոյ Աթոռոյս Փիլիպպոս հանճիշտ վարդապետ... եւ զերբ տալդ մեզ գրեալ՝ ծանուցես: Ողջ լեր ի Տէր»: Սիմէոն կրթկսր Զմիւտնիայի առաջնորդ Փիլիպպոս վրդ-ին տեղեկացնում է, որ երկար ժամանակ չի գրել, «զի բազմօք ալէկոծու-

թեամբք ալէկոծեցաւ երկիրս եւ ըստ մեծի մասին աւերեցաւ»: Նշում է, որ պրն Եսայի Մասեհեանից վերցրել է 1200 դուրուշ գումար եւ տուել ստացագիր, ուստի գումար է նուիրակութեան գումարներից նրան տալ նոյնքան գումար «եւ զայս զապզս մեր առեալ՝ առ քեզ պահեսցես, զի յաւուր հաշուատրութեան քոյ քեզ պիտոյասցի»:

4. 1բ «Յորմէ սիրով եւ աստուածային օրհնութեամբ գիտաստէր, սիրելի մեր եւ հարազատ որդի Սրբոյ Աթոռոյս, տէրամբ Յիսուսիւ օրհնեցեալ, բարեպաշտօն պարոն Եսայի... Այսպէս գիտացեալ՝ լեր ողջ ի Տէր»: Սիմէոն կրթկսր պրն Եսայի Մասեհեանին տեղեկացնում է, որ ստացել է փետրուարի 8ի՝ Կարսից ուղարկած գրութիւնը, ուստի 1200 դուրուշի ստացագիր է ուղարկել պրն Գէորգին, հետեւաբար «վեց հարիւր եւ վեց դուրուշ եւ կէս դրամ եւս տացես պարոն Գէորգին, որ ԱՌԲՃ (1200) դուրուշն լրասցի, եւ զմեր զապզն ի նմանէ առեալ՝ ի Զմիւտին առնուցուս ի Փիլիպպոս վարդապետէն»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Ի ՌՄԻԹ (1780), ի փետրվարի ժէ (17):
2. 1բ Գրեցաւ ի ՌՄԻԹ (1780) թուոջս, ի փետրվարի ամսոյ (տեղը բաց) եւ ի Սուրբ Աթոռս էջմիածին:
3. 1բ Ի ՌՄԻԹ (1780), ի փետրվարի (տեղը բաց):

ԿՈՆԴԱԿ

թղթայ. 5, վա. 47

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՍԻՆ

ՌՄԱ-1782


Հեղինակ՝ Դուկաս Ա Կարնեցի կրթկս: ՍՏԱ-ՅՈՂ՝ մհա. Վարդան:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 37,3x21,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 38:

1ա «Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Դուկաս կաթողիկոս եւ ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց, աստուածայնոյ եւ առաքելականի եկեղեցոյս Քրիստոսի, նաեւ տիեզերականի եւ լուսակերտի մեծի եւ սրբոյ Աթոռոյս էջմիածինի — Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց՝ հանդերձ ամենառատ ողորմութեամբն Աստուծոյ... եւ շնորհք սրբոյ աստուածաէջ Աթոռոյս լիցի ընդ քեզ եւ ընդ քոյայինսն ամենեսեան: Ամէն»: Դուկաս Ա Կարնեցի կրթկսի կոնդակը մհա. Վարդանին, որով տեղեկացնում է, որ ստացել է անցեալ տարուայ նոյեմբերին գրած նամակը, ինչպէս նաեւ մի գրութիւն էլ Պալասանի հետ կապուած, սակայն նշում է. «Բայց, սիրե-



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ — եկեղեցի (կաթողիկոս բառի վրայ)՝ 1ա, թռչնագիր՝ 1ա: Գոյներ՝ կարմիր, բաց մանուշակագոյն, բաց ու մուգ կանաչ (լուսանցագծերը՝ կարմիր):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նոր նորոգմամբ:

լիդ իմ, զի՞նչ օգուտ, որ այս Պալասանս ամենեին ընչագուրկ եւ պարտական է, յորմէ դրամ հանելոյ հնար ո՛չ գոյ: Վասն որոյ եւ զհետեւիլն իսկ անպատշաճ համարեցաք»: Աւելացնում է, որ Յակոբ վրդ-ին կոնդակով ուղարկել է հաւաքելու «զարգիւնս Սրբոյ Աթոռոյս... թէ՛ գանձանակադրամ եւ թէ՛ խոստմունք եւ կտակք եւ զայլ այսպիսի հոգեկան տուրս» եւ յանձնարարում է օժանդակել ու ամբողջութեամբ նրան յանձնել Սբ. Աթոռի հնգցյ գանձապետ իզբաշի Եսայուց մնացած եւ նրա-

նից յետոյ հաւաքուած միջոցները:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ ի ՌՄՂԱ (1782) թուոջս մերում, ի հոկտեմբերի ելն, ի լուսակառոյց եւ ի տիրակերտ Աթոռս Սուրբ էջմիածին:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (կարմիր քանափոյ, բոլորակ, ներսում պատկերագրութեամբ) «է: ՇՆՈՐՀԻԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ. ՌՄԻԹ (1780)»:

224

ԿՈՆԴԱԿ


թղթա. 5, վա. 48

[ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ]

ՌՃԼԱ-1682

ՀԵՂԻՆԱԿ՝ Եղիազար Ա Այնթապցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 31,8x21,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բուրգիւր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 25:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻԻՆ – խաչ (կթղկս բառի վրայ)՝ 1ա, թոչնագիր՝ 1ա: Գոյներ՝ բաց ու մուգ կարմիր (լուսանցագծերը՝ կարմիր):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Յիսուսի Քրիստոսի ծառայ Եղիազար կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարզ Վաղարշապատու, քրիստոսանիմն Սրբոյ Աթոռոյ էջմիածնի – Յորմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան եւ նամակ պահպանութեան, շնորհք առաքելական եւ աստուածային բազմապատիկ աւրհնութիւնն ի վերայ Քրիստոսի աւրհնեալ ազ-

գիդ Թումանեցոց... եւ ձեզ հովանի եւ պահպան լիցի յամենայն ժամու. ամէն»: Եղիազար Ա Այնթապցի կթղկսի կոնդակը Թումանեցոց ազգին՝ «գիւան Զուրապիդ, գիւան Սուլխանիդ, նազիր Զալինիդ, գիւան Օթարիդ, մէհմանտարբաշի Բախուտիդ, էշիկաղասիբաշի Փարսատանիդ», որով յայտնում է. «զի ահա՛ մեք զՀախապատու վանից օգուտն կամելով եւ ըստ խնդրոյ ձերում՝ զԲարսեղ պարոնտէրն ի վերայ վանից բոլոր թէմին արհիւպիսկոպոս հաստատեցաք»: Եւ խնդրում է, «որ հանապաղ խրատէք եւ օգնական լինիք պարոնտիրին, որ զվանքն պայծառ եւ շէն պահեսցէ, որ ո՛չ ինքն ամօթ ինչ կրեսցէ եւ ո՛չ դուք»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ ի ՌՃԼԱ (1682) թուին եւ յամսեանն հոկտեմբերի ԺԳ (13):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ


1բ (ԺԹ դ., շղագիր) Կոնդակ Եղիազար կաթողիկոսի:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (կարմիր քանափոյ, բոլորակ՝ ռեատր) «է: ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏէՐ ԵՂԻԱԶԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԵՒ ԱԹՈՒԱԿԱԼ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՍ», Յիսուսի պատկերագրութեան շուրջ՝ «Տ(ԵԱՌ)Ն ԵՂԲԱՐ»:

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՄԼԳ-1784

ՀԵՂԻՆԱԿ՝ Դուկաս Ա Կարնեցի կթղկա: ՄՍԱ-3ՈՂ՝ պրն Թաղեռ:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ – եկեղեցի (կաթողիկոս բառի վրայ)՝ 1ա, թղնագիր՝ 1ա: Գոյներ՝ կարմիր, բաց մանուշակագոյն, բաց ու մուգ կանաչ (լուսանցագծերը՝ կարմիր):

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Դուկաս կաթողիկոս եւ ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց առաքելականի եկեղեցոյս Քրիստոսի, նաեւ մեծի Աթոռոյս Սրբոյ էջմիածնի – Յորմէ ժամանեցի թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան՝ հանդերձ ամենառատ ողորմութեամբն աստուածային... որ եւ առնելով ըստ գրեցելոցս՝ լիցի՛ս ողջ ի Տէր, եւ օրհնեալ միշտ ի նմանէ՛ ժառանգելով եւ զհոգեպարար շնորհս Սրբոյ Աթոռոյս եւ զօրհնութիւնս մեր: Ամէն»: Դուկաս Ա Կարնեցի կթղկսի կոնդա-

կը Սբ. Աթոռի գանձապետ պրն Թաղէոսին, որով տեղեկացնում է, որ իրենց նուիրակ եփրեմ վրդ-ից գոհունակութեան գրուքին է ստացել գանձապետի ճշմարիտ սիրոյ եւ հաւատարմական բարեւարութեան մասին, որի համար յայտնում է իր շնորհակալութիւնը: «Այլեւ ի կողմանէ Դուխտրդանու պարոն Աստուածատուրի վաճառեալ այգւոյն, որ ընդ նուիրակ վարդապետին համախոհութեամբ գերկու թուման եւս, որ ի վերայ իւրն էր, շնորհեալ էիք ինքեան ի վերայ յառաջ տուեալ ինն թուման եւ եմ (5000) դիւան դրամիցն», որին հաւանութիւն է տալիս: Աւելացնում է նաեւ, որ նրա խնդրած հին կալուածագրի «սուրաթն» ուղարկել է եփրեմ վրդ-ին, իսկ Աստուածատուրի հին կալուածագիրը եւ հայերէն կալուածագրակերպ գիրն արդէն ստացել է:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ ի ՌՄԼԳ (1784) թուոջս, ի մարտի էլն եւ ի տիրակերտ Աթոռս Սուրբ էջմիածին:

ԿՆՔԱԳԻՈՇՄ՝ 1ա (կարմիր քանաֆով, բոլորակ, ներսում պատկերագրութեամբ) «է: ՇՆՈՐՀԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԴՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ. ՌՄԻԹ (1780)»:


ԳՐՉԱՓՈՂՉ՝ 1բ «աթող», «իրն» «Յիսուսի Քրիստոսի»:

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ]

ՌՃԼԳ-1684

ՀԵՂԻՆԱԿ՝ Եղիազար Ա Այնթապցի կթղկա: ՄՍԱՅՈՂ՝ Աբրահամ եւ Կիրակոս եղբայրք:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 29,4x20,8: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ խոշոր բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 28+8:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Յիսուսի Քրիստոսի ծառայ Եղիազար կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարք Վաղարշապատու, լուսակառ եւ քրիստոսահիմն, սրովբանեմ եւ աղինասարու Սրբոյ Աթոռոյս էջմիածնայ – Յորմէ ժամանեալ հասցէ գիր արհնութեան եւ նամակ պահպանութեան, շնորհք առաքելական եւ աստուածային բազմազեղ արհնութիւնն ի վերայ հոգեւոր եւ սիրելի որդւոցդ մերոց Աբրա-

համիդ եւ Կիրակոսիդ... Աստ ուրախութեամբ եւ անփորձ կենօք պահեսցէ, եւ յետ աստեացս ելանելոյ զերկնից արքայութեանն արժանի ար[ա]յցէ զձեզ եւ ննջեցեալսն ձեր. ամէն Հ[ալ]ր՞»: Եղիազար Ա Այնթապցի կթղկսի կոնդակը Աբրահամ եւ Կիրակոս եղբայրներին, որով իր գոհունակութիւնն է յայտնում էջմիածնի նուիրակ վարդապետին ընդունելու համար եւ որպէս հոգեբաժին մէկ ձի եւ մէկ գումէլի ձագ Սբ. Աթոռին հատուցելու համար՝ աւելացնելով. «Աւուրս յետ այլ ո՛չ որ ձեզ հետ բան չունէ, տէրունի էք... եւ ահա՛ նուիրակ վարդապետի պատուիրեցի զինչ քահանայ, որ դուք որ ուզէք,

ձեզ վերայ հաստատէ, առանց այն կարգեալ քահանային ո՛չ որ հրաման չունէ քահանայագործութիւն անելոյ»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գր[ե]ց[ա]ւ թվ[ի]ն ՌձՂԳ (1684), յունիսի ԻԲ (22):

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (կարմիր թանաքով, բոլորակ, ներսում՝ Յիսուսի Քրիստոսի պատկերագրութեամբ) «է: ՇՆՈՐՀՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՂԻԱԶԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ», պատկերագրութեան ներսում. «Թվին ՌձՂ (1681)»:

227


ՆԱՄԱԿ

թղթ. 5, վա. 51

ՌՄԻԵ-1776

ՀԵՂԻՆԱԿ՝ ՆԱԳԱՐԷՅ ՄՈՒՐԿԵՆԿ: ՍՏԱՅՈՂ՝ ՍԻՄՆՈ Ա. ԵՐԵԱՆԵՅԻ ԿԹՂԿԱ:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «DA», լուսապատկերով (ամհասկանալի): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 36,4x24,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միախին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 38+10:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բասարա. եզրերը ծալուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Երիցս երանեալ գերեջան[ի]կ մեծի քահանայապետի, գերընտիր սրբազան վեհին մերոյ, որոյ Տէր տացէ յերկար կեանս. ամէն – Իսկ

զկնի համբերայմատուց գրուս զեկ լիցի մեծի տերութեանդ նախքան զգիրս Ի (20) օր յէռ[ա]ջ Ա (1) գրեմբ գրեր, հանդերձ պատարագի գրօվն յըղեցիք... ու մեզի զպապ մի զրկես 225 զպապի, որ զրկինք Յօվնէս վարդապետին, մեր տված զէպազըն յինք առնիմք»: Առաքելիցի նազարէթի նամակը Սիմէոն կթղկսին, որով յայտնում է կից ուղարկուած գրութիւնների ինչպիսին լինելու, նրանց քանակի, Շեհրիմանց խոջայ Մարգարի թղթի արհեստանոցին չորս-հինգ հայ տղայ աշակերտ վեց տարով ուղարկելու եւ էջմիածնի թղթի արհեստանոցը վարպետներով ապահովելու մասին: Աւելացնում է նաեւ, որ «5 հատ Տօմարըն էկավ մեզի հասավ, բայձ թէ գինն թանկ է, կըսեն շէն առնար, Դ (4) զուրուշ, Ե (5) զուրուշ կուզեն»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա-2բ Թիւն ՌՄԻԵ (1776), յունվարի ԺԲ (12): Ծառայ նագարէթ կամ Թաղէոս յԱրաբկերցի Մուրդկենց:

228


ՊԱՐՏԱՄՈՒՐՀԱԿ

թղթ. 5, վա. 52

ՌՄԼԳ-1784

ՀԵՂԻՆԱԿ՝ աղայ Յակոբ Պօղոսեան: ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծե-

րով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 16x8,6: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միախին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 14+2+2:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բարարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Օրինակ դանվիշին Յակոբ աղային: 6200 մինակ վեց հազար երկու հարիւր դուտուշ է - Զօ-

րուժիւն գրոյս այս է, որ ի ներքոյ գրեալս առի... եւ գայս իսլիցայի գիրս զահրիչէօվն հրֆս անէ բաւ»: Աղայ Յակոբ Պօղոսեանի պարաամուրհակի օրինակը Օրթագիւղի քարոզիչ, Սբ. Էջմիածնի զանձապետ Աստուածատուր արեւայս-ից վերցուած 6200 դուտուշի դիմաց, որը կարող է ամբողջութեամբ ստանալ՝ ներկայացնելով «Կարին դէրվիշ աղա-խանն սաքին Փոռոյեան ազնիւ մահտեսի Սուխասին»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Մտոայ դահվիշին՝ Յակոբ Պօղոսեան: 1 ԿՅԿ (1233 = 1784), յունիս 1Կ (12):

229

ԳԻՐ ՀԱՐՑՄԱՆ

թղթ. 5, վա. 53

ԶԳՐԱՇԷՆ (ՎՐԱՍՏԱՆ)


ՌՄԻԵ-1776

ԳԻՐԶ՝ Յովհաննէս վրդ.:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

ԹԵՐԹ՝ 1. չգրուած 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ խաղողի ողկոյճ՝: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 25x22,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 5+22:

1. 1ա Սրբոյ Կարապետի միաբան Մկրտիչ վարդապետս տեղս պատահեցա[յ] եւ վերահասու յեղէ, որ անօրէն չհաս է:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բարարար. հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Քաղաքիս առաջնորդ Յովհաննէս վարդապետս, քաղաքիս բոլոր քահանայիցդ՝ աւաճագունից եւ հասարակ միաբանիցդ հարցանեմ յաստուածակոյս կողմանէ, եւ առաջի Աստուծոյ զճիշդ ասացէք եւ ստորագրեալ վկայեցէք... որ հէքիմ Յովսէփն իւր քվեր թոռն կամի տալ իւր կնքեալ տէր Շմաւոնինց Աբէլին»: [Թիֆլիսի] հայոց առաջնորդ Յովհաննէս վրդ-ը հարցում է անում տեղի աւագագոյն քահանաներին եւ հասարակ միաբաններին առ այն, թէ հաս կամ չհաս է, որ հէքիմ Յովսէփն իր քրոջ թոռանն ամուսնացնի իր կնիւած տէր Շմաւոնենց Աբէլի հետ:

2. 1ա Սրբոյ Նշանի մահտեսի տէր Նիկողայոսս վերահասու եմ, որ չհաս է:

3. 1ա ես՝ տէր Օհաննս վերահասու եմ, որ չհաս է:

4. 1ա ես՝ տէր Փիլիպպոս, կաթողիկէ եկեղեցւոյ աւաճ էրեցս վերահասու եմ, որ չհաս է:

5. 1ա ես՝ տէր Գարբիէլս վերահասու եմ, որ այս չհաս է:

6. 1ա ես՝ տէր Յակոբս վերահասու եմ, որ այս չըհաս է:

7. 1ա ես՝ վանքի տէր Աս[տուա]ծատուրս էս բանիս վերայ հասու եղա[յ], չհաս է:

8. 1ա ես՝ տէր Միխիթարս վերահասու եմ, որ չըհաս է:

9. 1ա ես՝ տէր Խաչատուրս վերահասու եմ, որ չհաս է, վասն որոյ կնքեցի:

10. 1ա Յեա՝ տէր Յեսաիս վերահասու եմ, որ չհաս է:

11. 1ա ես՝ Զկրաշէնի տէր Մկրտիչս վերայ հասու եղեցի, որ չհաս է:

12. 1ա ես՝ տէր Սիմէօնս վերահասու եմ, որ չըհաս է:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրի ի ՌՄԻԵ (1776) եւ ԻԱ (21) նոյեմբերի, ի Զգրաշէն:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանափով, ուրանկիւն) «ՄԿՐՏԻԶ ՎԱՐԴԱՊԵՏ /1208 (1759)»: 2. 1ա (սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՄԱՀՏԵՍԻ /ՆԻԿՈՂՈՍ /ՌՃՂԹ (1750)»: 3. 1ա (սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԵՐ ՕՀԱՆ /1750»:

- 4. 1ա (սեւ քանափով, ուրանկիրն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՓԻՂԳՊՈՍ /ՌՃՁԶ (1737)»:
- 5. 1ա (սեւ քանափով, ուրանկիրն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ԳԱՐԲԻԷԼ»:
- 6. 1ա (սեւ քանափով, ուրանկիրն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ /ԱՍՍՏՈՒՐ /ՌՃՁԷ (1738)»:
- 7. 1ա (սեւ քանափով, ուրանկիրն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՄԽԻ/ԹԱՐ»:


- 8. 1ա (սեւ քանափով, ուրանկիրն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ /ԽԷՉԱՏՈՒՐ /ՌՄԺԸ (1769)»:
- 9. 1ա (սեւ քանափով, ուրանկիրն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ԷՍԱԻ /ՌՄԺԵ (1766)»:
- 10. 1ա (սեւ քանափով, բոլորածեւ) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՄԿՐՏ/ԻԶ»:
- 11. 1ա (սեւ քանափով, ուրանկիրն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՍԻՄԵ/ՕՆ»:

230
ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ

թղթայ. 5, վառ. 54

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ մարդադիմ մահիկ (կիսատ): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 32,8x17,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 23:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերն անհարթ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «Խանի կամ բէկ Երեւանայ – Աղուպ կամ Եաղուպ հրամանաւ Ջահանշահայ. առ Միք՝ Չամ՝, Գ թղթ՝ 473... Հիւսէին Ալի խան. մեռաւ յամի տանկաց յ՝ 9 է, հայ 1228 (1779)»: Յիշատակուած են Աղուպ կամ Եաղուպ, Մէհտալի, Ալլահդուլի, Խալիլ, Հիւսէյին, Մահմատ, Ղուլամալի, Հիւսէին Ալի խաների (1691-1779 թթ.) անունները, նաեւ յղուած են տանկաց եւ հայոց թուականները, մասամբ՝ ֆաղուած աղբիւրների էջերը:

231


ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՏԱՐՕՆԱՅԻ
ԴԱՇՆԱԳԻՐ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՌՈՒՍԱՑ

թղթայ. 5, վառ. 55

ԺԹ դար

ԹԱՐԳՄԱՆԻՉ՝ նորշուղայեցի եղիագար Շամիրեան (1785 թ.):

ԹԵՐԹ՝ 6. չգրուած՝ 4բ, 5բ-6բ: ՊՐԱԿ՝ Աx6: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35,5x21,9: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 34-36:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ արտագրութիւն, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1. 1ա Դաշնագիր հայոց ընդ ռուսաց վասն վերահաստատելոյ զթագաւորութիւն Հայոց: Ի պատմութեանց Սահակայ վարդապետի Տարօնացոյ – (1) գլուխ. Արդ՝ մինչ վրդովեալ էր տէրութիւն Պարսից յերեսաց Օսմանեաց, եւ զաշխարհս Հայոց աւերէին օրըստօրէ... եւ գրեալ յերկուց կողմանց՝ առաքեցին առ միմեանս ի 1789 ամի Փրկչին օրինակ զայս:
- 2. 1ա Յօդուած առաջին – 1. Նախքան զամենայն հաստատիլ զսէր եւ զմիաբանութիւն ի մէջ երկուց ազգացս... որ հիմն քրիստոնէական ազգաց են, ի վեր քան զկարծեցեալ դատողութիւն մարդկան:
- 3. 1ա-2ա Յօդուած Բ – 2. Զհետեալ յիւրաքանչիւր ազգացս շընկալնու ի հաղորդութիւն իբր խոռ-

վարար սիրոյ եւ խաղաղութեան... Զայս գրեցաւ ի կողմանէ հայոց, եւ ի ձեռն արքեպիսկոպոսին Յովսէփայ մատուցաւ յիշեալ կայսրուհուն:

4. 2ա-3ա Յիշատակի ի միում նամակի (1), թէ Գրիգոր Ալեքսանդրիչ Պօտեմկիին ջանայր ըստ ամենայնի ի գլուխ տանիլ զայս գործ եւ յորդորէր միշտ զկայսրունին, զի ինքն կացուցի թագաւոր Հայոց, ուստի եւ հրամանաւ կայսրունայն ի կողմանէ ռուսաց գրեցաւ այս դաշնագիր՝ համաձայն դաշնագրոյն հայոց յօրինակ զայս: Յօդուած առաջին – 1. Նախարարութիւն Հայաստանեայց լիցի հրովարտակաւ ի տանէ Հայոց ըստ օրինացն Հայաստանեայց, այն է՝ ի բուն ազգէն... եւ ի նմանէ ելեալ վճիռն լիցի ընդունելի յերկոցունց ազգացս եւ համարեցի արդարապէս բաւարարութիւն:

5. 3բ Արդ՝ եթէ հաճոյ թուեսցի կամաց հայրապետին եւ իշխանաց եւ տանուտիրաց հայոց... 1000 թերթն ոռուերէն եւ 1000 թերթն հայերէն:

6. 3բ Արդ՝ յաւուրս Ղուկաս կաթողիկոսի, յամի 1780, յիշատակին զայսմանէ ի նամակս իւրեանց առ յիշեալ կաթողիկոսն իշխանքն հայոց, Կ. Պօլսոյ, Վրաստանի, եւ մանաւանդ Հնդկաստանի... որով մինչեւ ցայսօր Ռուսաց տէրութեան մէջ մեծ պատիւ եւ արտօնութիւն ունին:

7. 4ա Ռուսի Հայաստանին նշանն – Ազգի կամ երկրի եւ կամ տէրութեան մասնաւոր նշան ունենալը ամենայն ազգաց մէջ կայ ու շատ հին սովորութիւն է... Այս նշանս հնարողն է Դեմիտր Տալոյ՝ թագաւորական խորհրդականը, եւ կայսրը հաստատած, որ 1833 թուիցն այն լինի հայկական նահանգին նշան ի պատիւ էջմիածնի (1):

8. 5ա Հատոր II. երես 349: Ռուսաց զինուորական ու քաղաքական պաշտօններուն մէջ երեւելի եղած հայազգի իշխաններն – Մեր ազգի բնական ու բարոյական կատարելութիւններն հաշուելու ժամանակ անաշառ դատաստան անողն կտեսնէ, որ մեր ազգն օտար ազգաց սիրով ծառայելոյ համար պէտք չէ, որ ազգատեաց համարուի... յիշեալ մեծանուն արքեպիսկոպոսի ժամանակն հաստատուեցաւ դաշնագիրն ռուսաց եւ հայոց մէջ վերելք նշանակած օրինական:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

3բ Գրեցաւ Դաշնագիրս յամի Տեառն 1777, եւ թարգմանեցաւ ի Դաշնաց մատենէն ռուսաց յամի Տեառն 1785, ի Սանկա Պետրբուրգ՝ ձեռամբ նոր-Ջուլայեցի Եղիազարու Շամիրեան:


**232
ՅՈՎՍԷՓ ԱՐՔԵՊՍ. ԱՐԳՈՒԹԵԱՆ
ՕՐԻՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

թղթ. 5, վա. 56

ԺԹ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Յովսէփ արքեպ. Արղուբեան:

ԹԵՐԹ՝ 20. չգրուած՝ 20բ: ՊՐԱԿ՝ Աx20: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35,8x22,4: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 31:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Պարունակում է 1782 թ. հոկտեմբերի 23ին Հաշտարխանի Սբ. Աստուածածին եկեղեցում Յովսէփ արքեպ. Արղութեանի ընթերցած «Օրինադրու-

թեան» տեխստը, բաղկացած վեց մասերից՝ եկեղեցական առաջնորդական ու Աթոռահաս եկամուտների բնոյթի եւ նրանց գանձման ձեւի մասին (սկզբից՝ թերի, սկսում է երրորդ մասի է յօդուածից):

1. 1ա-4բ է: Ամենայն գանձապետք եւ երիցփոխք սահմանեցին յիւրաքանչիւր եկեղեցուց աման ինչ եւ կնքեցին զայն... (իս) որպէս նախնի թարգմանիչքն ազգիս մերոյ, զորոց վիպէ պատմաբանն Մովսէս քերթողն Խորենացի:

2. 4բ-7ա Մասն Զորոգ: Վասն արդեանց լուսանկար Մօրս մերոյ Սրբոյ Աթոռոյն էջմիածնի վանիցն եւ առաջնորդին: Արդիւնք Սրբոյ Աթոռոյն են այսոքիկ – ա. Յառաջին ժամանակին, մինչ Տեառն ողորմութեամբ ի մերում աշխարհի էաք եւ չէաք ցրուեալք ի զանազան իշխանութիւնս. ի Լուսաւորչէ անտի գոյր սովորութիւն ի մէջ ազգիս Հայոց... (ե) եւ զսոյն արդիւնս շնորհեցաք դատարանին յաղագս նորին հարկաւորութեանն:

3. 7ա-12ա Մասն հիմնգետորդ: Վասն կառավարութեան հոգեւոր դատարանին եւ դատաւորացն. եւ զանազան գործոց առ նոսայ պատկանելոց – ա. Ի հոգեւոր դատարանի մերում, արձակապէս հրամայօղ եւ իշխան հոգեւոր է՛ ի Սուրբ Աթոռն էջմիածնի նստօղ սրբազնասուրբ կաթողիկոսն... (1ա) բայց զգուշ լինիցին չզրպարտել զնայ թարց վկայի եւ օրինաւոր պատճառաց եւ կամ նախանձու:

4. 12ա-9բ Մասն վեցերորդ: Վասն եկամուտ ժողովարարաց, վարդապետաց եւ քահանայից – ա. ժողովարար որ եկեղեցական կամ աշխարհական, ով որ եւ իցէ, ուստի եւ եկեցցէ առանց վկայական թղթոյ, որ ոչ ունիցին ի Սրբոյ Աթոռոյն էջմիածնի սրբազան կաթողիկոսէն ամենայն Հայոց... (իթ) Իսկ այլ մանր գործք եւ առնելիք, արժանապատիւ յաջորդն իմ եւ նորին ընկերքն տեսցեն, ամենայն ինչ սիրով խաղաղութեամբ եւ բարեկարգութեամբ արասցեն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 19բ Օրինագրութիւնս այս, ի 1782 թուին եւ ի հոկտեմբերի 23, ի յեօթներորդ կիրակէն զկնի սուրբ Խաչի, ի տօն Գիւտ խաչին ընթերձեալ եղել ի

Սուրբ Աստուածածին յեկեղեցւոյն ի յունկա բնակից հասարակութեանցն քաղաքիս Հաշտարխանայ, քահանայից, դատաւորաց, իշխանաց եւ առհասարակ ժողովրդոց, որք ամենեքեան միաբան սրտիւ ընկալեալ, գոհացողական ձայնիւ փառաւորեցին զԱստուած եւ զուսատու Մայրն մեր Սուրբ էջմիածին՝ շնորհակալելով, զյետնեալ ծառայես Փրկչին եւ Սրբոյ Աթոռոյ նորին հաստատուն պահեսցէ Տէր եւ յօրըստրէ ծաղկեալ պայծառացուցէ ի պարծանս ազգիս մերոյ եւ Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, եւ ի փառս ամենամեծ անուան իւրոյ, ամէն: Յովսէփ արքեպիսկոպոս:

2. 4բ, 7ա (եղիցս), 12ա Յովսէփ արքեպիսկոպոս:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

7ա Վերոյ գրեալ հինգ ուսպլին իւրաքանչիւր քահանայիցն, վասն աղքատութեան եւ տառապանաց եւ հասարակութեամբ թախանձանաց, շնորհեցաք չպահանջել ի նոցանէ, այլ շնորհեցաք իւրեանց:

ՃՆՇԱԳՐՈՇՄ՝ 1-8 թերթերի վերին անկիւններում՝ «ФАБРИКА СЕРГЬЕВА, № 6», 9-20 թերթերին՝ «ФАБРИКА СЕРГЬЕВА, № 5»

233


ԳՐՈՒԹԻՒՆ

թղթ. 5, վաւ. 57

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ]

ՌՄԼԶ-1787

ԹԵՐԹ՝ 2: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «M», լուսապատկերով՝ թագակիր զինանշան, ներսում առիւծ՝: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 47,7x17,4: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 61:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բասարա:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

1աբ «Քրիստոսահիմն եւ լուսակերտ Աթոռոյս մեծի Սրբոյ էջմիածնի սպասատրօ եւ պաշտօնեայ, քահանայակարգ միաբան եղբարօ, այ-

սինքն՝ եպիսկոպոսունմ, վարդապետ եւ աբեղայք, նուաստ ծառայք Աստուծոյ, եւ հնազանդ որդիք եւ ստորագրեալք աստուածընտիր եւ սրբազան վեհապետիս մերոյ – Յորոց ժամանեցի առատածիր օրհնութիւնն Հօր Աստուծոյ, հանդերձ նախախնամողական գրութեամբ նորին... Որք եւ եղիջիք օրհնեալք եւ զօրացեալք ի տեսունէ Աստուծոյ, եւ շնորհք աստուածաէջ Սրբոյ Աթոռոյն, եւ օրհնութիւն սրբազան վեհապետիս մերոյ եղիցի ընդ ձեզ միշտ. ամէն»: էջմիածնի միաբանների գրութիւնը Կ. Պոլսի հայ իշխանապետերին եւ իշխաններին, որով յայտնում են, թէ ստացուել է նրանց համախօսականը կրթկսի վերաբերեալ: Ըստ այդմ՝ ուղարկում են նրանց խնդրած «զկանօնս ոմանս օգտաւորս առ ի շինութիւն եւ ի պայծառութիւն Սրբոյ Աթոռոյս եւ ի խաղաղութիւն հասարակութեան ազգի մերոյ օրհնեցելոյ»: Նշում են նաեւ, որ լսում են նրանց խորհուրդը՝ կրթկսին անպայման հնազանդ լինելու մասին եւ նոյնը պահանջում նրան-

ցից «ն՛չ սպառնական հարկիւ, այլ աղերսելով եւ աղաչելով, սիրով եւ գրութեամբն Աստուծոյ»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ Ի ՌՄԼԶ (1787), Ի յունվարի Ը (8):


234

ՀԱՍՅԷ

թղթ. 5, վա. 58

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 19 (առանձին-առանձին). չգրուած՝ դարձերեսները: ՆԻԻԹ՝ թուղթ (տարբեր): ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ տարբեր: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ տարբեր:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 1, 3, 14, 17 թերթերի գրադաշար գունափոխուած, այրուածի հետքեր:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Պարունակում է Մբ. էջմիածնի կաթողիկոսութեան պահած, անուանի մարդկանց անունների (հասցէների) նշումների թերթիկներ՝ 1. Մոսկուայում Ռոստովի առաջնորդ եւ վերատեսուչ Սամուէլ արքեպս., 2. Մոզդոկում էջմիածնի գործակալներ պրն Գեօրգի եւ պրն Մանկասար, 3, 4. Սանկտ Պետերբուրգում Պակովի առաջնորդ եւ Սիմոնի

անդամ Ինօքենդի արքեպս., 5, 6. Սանկտ Պետրբուրգում Սիմոնի անդամ Գաբրիէլ արքեպս., 7. Հաշտարիսանում Անտօնիէ արքեպս., 8. «Հասցէ ի տիրախնամ երկիրն Իվերէթու, ի ձեռս համայն հայկասեր եւ լուսաւորչադաւան ժողովրդոցն անդ գետեղեցելոց...», 9. Իմէրէթում Մաքսիմէ կթղկս, 10, 11. Սանկտ Պետրբուրգում Առաջին նախարար գրաֆ Նիկիտա Իվանիչ Պանին, 12. «Հասցէ ի տիրախնամ երկիր Ռուսաց, ի գաւառն Ազովու, ի Նոր Նախիջեան, ի ձեռս համայն հայկասեր եւ լուսաւորչակիցն ժողովրդոցն Դիմու...», 13, 14. Սանկտ Պետրբուրգում Առաջին նախարար եւ գերագոյն իշխան կնեազ Գրիգոր Ալէքսանդրիչ Պօտէմկին, 15. Հաշտարիսանում գուբեռնատոր, գեներալ պոռուչիկ եւ կավալեր Իվան Բարֆօլօմէիչ Նախօբ, 16. Իմէրէթում Սօլօմօն արքայ, 17. Մոսկուայում գեներալ կնեազ Վասիլ Միխայէլիչ Դօբօլուկի, 18. Ազովում գուբեռնատոր, գեներալ պոռուչիկ եւ կավալեր Վասիլ Ալէքսէիչ Չերթիկով, 19. Սանկտ Պետրբուրգում Ընդհանրական սպարապետ եւ Մեծ նախարար եւ գաւառակալ Պետր Ալէքսանդրիչ Ռումանցով:


235

ԹՈՒՂԹ ԴԱՇՆՈՒԹԵԱՆ

թղթ. 5, վա. 59

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2աբ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապակերով՝ ներսից ոճատր ուղղանկիւն շրջանակ, ներսում՝ «Փ Ե» մակագրութեամբ: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 35,6x21,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 45:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ թարգմանութիւն վրացերէնից, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1աբ «է: Ողորմութեամբ եւ սպաւինութեամբ էմմանուէլի մարդացելոյ միածնի որդւոյն Աստուծոյ մէք՝ ի վերայ Ափխազաց եւ Իվերէթու թագաւորաց թագաւոր Սօլօմօն Դապեան եւ անդրանիկ որդին մեր արքայածին Աղէֆաանը... եւ եթէ որ զայսու կանոնաւ անցանիցէ եւ հաստատուն ոչ պահեսցէ ի վերոյ գրեալ վճիռն եւ զանէծսն, եղիցի անպակաս

ի գագաթանէ եւ ի տանէ նորա»: Նշում է Ափխագիայի ու Իմերեթիայի «Թագաւորաց թագաւոր» Սոլոմոն Դավթեանի, նրա անդրանիկ որդի Աղէքսանդրի, Հյուսիսային Ափխագիայի, Իմերեթիայի եւ Ստորին Իվերիայի կրղկս Մաքսիմիանոս հայրապետի ու տեղի հոգեւորականների եւ իշխանների միջեւ կաթողիկոսեան տարածման դէմն առնելու նպատակով կնքուած դաշնագրի մասին, քանի որ «որպէս իժի եւ քարբի յարձակեցան ի [վերայ]

աշխարհի մերոյ, ի ծածուկ եւ յայտնի, յեղաշրջէին զժողովուրդն համանուանեալ քրիստոնեայն, մուրեցուցանէին զպարզամիտս եւ զուղղագնացս երկրի մերոց, որ է վիճակ Մարիամու Աստուածածնայ, անողորմաբար քակտէին եւ զբազում հոգիս յափշտակեալ՝ արկանէին ի խաւարային դժոխս ընդ հօրն իւրեանց Փափին Հոռվմայ...»:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ № 219, Բովանդակութիւն 2:


236
ՎՃԻՌ

թղթ. 5, վա. 60

[ՌՄԼԳ-1784]

ՀԵՂԻՆԱԿ՝ Դաւիթ վրդ. եւ տէր Սահակ:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,2X-21,6: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ վրացերէն (նմուշ՝ 1ա), նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 29+6:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

Ծնթ. Բնագիրը վրացերէն է, կողքին կա տեխստի հայերէն համաոտագրութիւնը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Ես՝ Հախպատայ Սրբոյ Նշանի ըսպասաւոր Դաւիթ վարդապետս եւ գործակալ տէր Սահակըն

այս դատաստանս տեսինք... եթէ ձեր ամսու կարգին կամ անհաղորդ մեռանին եւ կամ այլ իմն շահաս պատահեցի, ամսու քահանայն տուգանս կրեսցէ»: Հաղպատի վանահայր Դաւիթ վրդ-ի եւ գործակալ տէր Սահակի կայացրած դատավճիռը Սամուէլ եւ Ստեփան քահանաների միջեւ ծիսակատարութեան շուրջ ծագած վէճի առիթով: Ըստ այդ վճիռի՝ յիշեալ քահանաներն ամիս առ ամիս, փոխ առ փոխ ծիսակատարութիւն պիտի կատարեն «Սամծրիսգօմ, Քարէլ, Խվէդուրէթ, Ռուչսուն» գիւղերում, իսկ գոյացած արդիւնքը հաւասարապէս բաժանեն՝ անկախ այն հանգամանքից, թէ ով է ծէս կատարողը: Ստացուած արդիւնքը թափցնողը կամ պաշտօնի մէջ թերացողը Հաղպատին կտայ մի քանի լիտր մով տուգանք:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (սեւ թանաքով, ութանկիւն, վրացերէն):

ՇՏԱՄՊ՝ 1բ (Ի դ.) «ԵՂՄ. ՊԵՏ. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՆՎԵՐ Գ. Մուրաղյանից»:

237


ԳՐՈՒԹԻԻՆ

թղթ. 5, վա. 61

ՌՄԻԲ-1773

ԳՐԻԶ՝ Սիմէոն Ա. Երեսանցի կրղկս: ՍՏԱՅՈՂ՝ պրն Մկրտում:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 16,7x10: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 25, 17:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ ԲԱԱՐԱՐ:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ սեւագիր, ձեռագիր:
 Մնթ. Կարդավ 1ա, 2բ, 1բ յաջորդականությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա, 2բ, 1բ «Առ Թիֆլիզեցի պարոն Մկրտումն յերեւան՝ ընդ մեր Սահակ վարդապետի եղբայր տիրացու Ստեփաննոսին – Յորմէ ծանի՛ր Մկրտում, զի յայս Բարեկենդան օրերս երկիցս անգամ գրեանքդ եկին ի յԱթոռս տաճկական մ՛հասիլով... Այս իմ թասլիմ արարի, իմ մարդկանց ձեռօքն սալամաթ, այսուհետեւ դու գիտես: Բաւ [է]»: [Սիմէոն Ա երեւանցի] կրղկսի գրութիւնը Թիֆլիզեցի Մկրտումին առ այն, որ Բարեկենդանի օրերին նրա գրութեամբ երկու անգամ Մայր Աթոռ են դիմել «տաճկական մ՛հասիլով», որի համար յանդիմանում է. «այս է քո մարտավարութիւն, որ հացս Բարեկենդան սնտոխ(՞) խանն եւ այլք տաճիկք, եթէ հարկաւոր բան եւս ունիցին, մարդ եւ մ՛հասիլ ոչ յղեն յԱթոռս»: Աւելացնում է, որ այն երկու մարդիկ, որ այն գիտն էին եկել, մէկը՝ ռուս, միւսը՝

վրացի, նրանց շէն հանաչում եւ «սոցա միտքն այս էր, որ մեզ իրիճայ գրել տային վէզուն, որ նա խնդրէ եւ մեք յղիցեմք գնան ի Թէլֆիզ, այդ որ Ախլցխայ ասես գնալոյ են, սուտ ասէս, միայն դու զքո մարտավարութիւնդ ցոյց տալոյ համար գնացէր մատնեցէր զայս քրիստոնեայքս... ի դոցանէ մ՛հասիլ յղեցեր, բռնութեամբ առեալ՝ տարար»: Եւ յանդիմանում է նրան գիր եւ հրաման շունենալու համար. «եւ ոչ էր գրեալ քեզ, թէ կալ զդոսա՝ ուղարկիր, կամ տաճկի մատնես. դու իբրու զքո զօրութիւնդ ցոյց տալոյ համար արարեր զայդ տաճկով: Ապա դու հայ ես, իբր թէ, ես քո հայրապետն եմ, իմ մարդն փախեալ քո քաղաքդ, բռնեալ են անդ. ես քանիցս զիր գրեցի, թէ յղեցէք»: Այնուհետեւ ռուս եւ վրացի մարդկանց համար, «զորս դու տաճկի բերան ձգեցեր», նշում է, որ մէկի տէրը Ռուսաց թզւոն է եւ միւսինը՝ Վրաց, բայց երկուսի տէրը ինքը եւս է, քանի որ նրանք ֆրիստոնեայ են:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Ի ՌՄԻԹ (1773) եւ ի փետրվարի Գ (3):


**238
ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ**

թղթպ. 5, վաւ. 62

ԹՐԵՍ ՔԱՂԱՔ (ԻՏԱՂԻԱ)

ՌՄԼԲ-1783

ԹԵՐԹ՝ 2: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «CR», լուսապատկերով՝ թագակիր ռճատր զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23,7x18,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 25-26:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ ԲԱԱՐԱՐ. թուղթն ամբողջությամբ գունավորիտաւած, վերին մասերի պատռուածները նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-2բ «//բարեյիշատակ յոգնավաստակ հայրն մեր Մխիթար ըբրոնապետ յետ աստուածարեալ գործոյն կատարման կառուցանելոյ զմիաբանութիւն իւր՝ առ ի մըշտնջենաւորել յազգի մերում

զբարոզութիւն ուղղափառ հաւատոյ... Եւ արդ՝ յանձն արարեալ զմեզ ի բարերարութիւն մեր, կամք պատրաստական յամենայնի ազնուականութեան ձերում»: Թրեստ ֆաղաֆում հաստատուած, դպրոց ու տպարան հիմնած Մխիթարեան հայրերի շրջաբերական դիմում-նամակը բարեւէր ազգայիններին, որով խնդրում են նիւթապէս աջակցել դպրոցի եւ տպարանի բարեյաջող գործունէութեանը: Պատմում են, որ Մխիթար արքահայրը միաբանութեան ստեղծումից յետոյ «խորհէր եւս զայլ դպրատուն մի կանգնել վասն աշխարհական մանկանց ազգիս, յորում ուսանիցին, որ ինչ կարելոր է աշխարհական կարգի», որը նրան շաջողութեց իրագործել: 1779 թ. այս գաղափարն իրագործելու նպատակով օգնականութեան մի շրջաբերական են գրում եւ կայսերական հրամանով ծովեզերեայ Թրեստ ֆաղաֆում մի վանքակերպ տանը կառուցում են դպրատուն՝ տպարանով հանդերձ, «յորում, բացի բարի վարուց եւ ի քրիստոնէական կրթութենէ, ուսցին զանազան լեզուք եւրոպացւոց, մանաւանդ իտալերէն, ֆրանսրզե-

րէն եւ լատիներէն, այլեւ պէսպէս ազատական արհեստք, քերականութիւն, ճարտասանութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն, երկրագրութիւն, աստղաբաշխութիւն եւ այլն»: Նշում են, որ արդէն վեցերորդ տարին է որեւէ օգնութիւն չեն ստացել եւ ընկել են պարտերի մէջ, այդ պատճառով դիմում են. «Խնայեցէք ի մատաղատունկ դպրատունս եւ ի տպարանս, մանաւանդ թէ ի տառապեալ ազգն մեր»: Աշակցողներին խոստանում են նշել իրենց յիշատակարաններում եւ որպէս երախտագիտութիւն նրանց ուղարկել նորաստեղծ տպարանի զբերից. «որպէս ասի՛ այժմ գնշոյլ ինչ օգնու-

թեան գտեալ ի մշտնջենաւոր բարեաց յիշատակաց արժանի Շէնրիմանեաց աղայ Մարգարէն եւ աղայ Գրիգորէն սկսաք տպել զՊատմութիւն շինացոց եւ յաւուրս յայտոսիկ մերձ եմք կատարել, եւ յետ սակաւոց սկսցուք տպագրել նաեւ զՊատմութիւնն Ամէրիկոյ՝ գործակցութեամբ եւ ծախիւք Բաբիկեանց պարոն Յօհաննիսին»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

Չբ Գրեցաւ գիրս ի ծովեզերեայ բազմավաճառ քաղաքն Թրեստո յամի Տեառն 1783, սեպտեմբերի 5. տրուպ ծառայք հարք Մխիթարեանք, որ ի Թրեստ:

239

ՆԱՄԱԿ


թղթպ. 6, վաւ. 1

ԹԻՖԼԻԶ

ՌՍԼԴ-1785

ԳրիՉ՝ Գէորգ Սարգսի Ազարիեան: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արեւազ. Արդուքեան:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «CR», լուսապատկերով՝ քազակիր ռնատր զինանշան՝ ներսում եղջերագաւաք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,5x18,4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 17+5:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բասարա:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Պայծառափայլ եւ արբազնագունեղ Յովսէփ արհիեպիսկոպոս եւ արժանալայել դէտ

ամենայն երկրին Ռուսաց եւ ազգին Հայոց: Իմ ողորմած եւ շնորհունակ տէր – Առաջ քան զայս զգիր մի եւս եմ մատուցեալ սրբազանիս, որոյ զպատասխանն մինչեւ ցայժմ ոչ եմ ընկալեալ... եւ պայծառ իշխանք Շիօշի եւ Սօլօմօնի սիրով ողջոյն մատուցանեմ»: Գէորգ Սարգսի Ազարիեանի նամակը Ռուսաց թեմի առաջնորդ Յովսէփ արեւազ. Արդուքեանին, որով տեղեկացնում է, որ նախորդ նամակի պատասխանը դեռ չի ստացել եւ այժմ Միմունի միջոցով ուղարկում է մի զոյգ «գոջրաթոյ բաղնիսի ֆուլէն» (ցամփոց): Իսկ եթէ ցանկանում է իմանալ իրենց որպիսութիւնը, ապա կարող է գրել պրն Եսայուն կամ Միմունից իմանալ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

1ա Թիւն 1785 եւ մայիսի 15ումն, ի Թիֆլիզ: Մնամ մշտապէս սրբազանիս բարեացն կամեցօղ խոնարհ ծառայ՝ Գէորգ Սարգսի Ազարիեան (ստորագրութիւն):

240

ՆԱՄԱԿ


թղթպ. 6, վաւ. 2

ՍԱՄԱԹԻԱ

ՌՍԼԴ-1785

ԳրիՉ՝ Իսահակ վրդ.: ՍՏԱՅՈՂ՝ Յակոբ Բնի:
ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծե-

րով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 24,5x16,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 33+20:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Սիրեցելոյդ հոգոյս տեսնող Յակոբայ նորասպակ քահանայի եւ սրբակրօն արեղայի, գողջոյնն յիսուսասանդ մատուցանեմ կարօտի եւ սիրով բազմաւ – էհաս թուղթ ի մարտի Ը (8) գրեցեալ ի յունիսի ժԲ (12)... Ողջ լեր ի Տէր, գորացեալ ի շնորհս նորին, ի յուրախութիւն Իսա-

հակայ նուաստ վարդապետիս»: Իսահակ վրդի շնորհատրական նամակը Յակոբ Բնիյն եւ նրա Յ ընկերներին՝ կուսակրօն Բնիյի աստիճան ստանալու առթիւ: Ուրախութեամբ նշում է նաեւ, որ «գլորեսին նախընծայ ձեռնադրեալսն, այսինքն՝ գրիգորն եւ զընկերսն» շնորհուել է վարդապետական աստիճան: Սակայն ցատկ է ընդունում Գէորգի մահուան լուրը: Իր կարօտի ողջոյններն է փոխանցում Աստուածատուր վրդին, տիրացու Նահապետին, Յակոբ եւ Անդրէաս վարդապետներին, Յարութիւնին, Զաքարիային:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Ի ՌՄԼԴ (1785), ի յուլիսի Ժ (10), ի Սաւաթիս:
2. Տէ՛ս Բովանդակութեան վերջում:

241

ՆԱՄԱԿ


թղթայ. 6, վառ. 3

Կ. ՊՈԼԻՍ

ՌՄԼԵ-1786

ԳԻԻԶ՝ Ստեփանոս Բնիյ: ՄՍԱՅՈՂ՝ Յովսէփ արեւկա. Արդութեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ: **ՆԻԻԹ՝** թուղթ. լուսագրով՝ «M M»: ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 23,8x17,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 29, 32, 38, 39+2:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1-4 «Բարձր սրբազնագունեղ հայր: Իմ ողորմաձագունեղ տէր եւ բարերար – Յօգոստոսի 30 գրեալ զհրամանդ խոնարհութեամբ ընկալայ՝ հանդերձ այլ թղթովքն, որ ի Թիֆլիզու եւ ի Հաշտարխանու... եւ ես սրբազնութեան ձերում մնամ պատրաստական. ամենախոնարհ ծառայ՝ Ստեփանոս քահանայ»: Կ. Պոլսից Ստեփանոս Բնիյի նամակը [Յովսէփ արեւկա. Արդութեանին], որով յայանում է, որ ստացել է օգոստոսի 30ի հրամանագիրն այլ թղթերի հետ միասին, գրուած Թիֆլիզից եւ

Հաշտարխանից, վանքի եւ դպրատան շինութեան հետ կապուած, իսկ իրեն տրուած յանձնարարութիւնների մասին նշում է, որ «թէեւ նեղութեամբ եւ դժուարութեամբ իցէ», սակայն կարող է անհոգ լինել. շնայած դեռ հունձքը չեն սկսել, «աստ եւս չկամիմ, թէ զորքանութիւնն գիտասցեն, զի մի... սորա փակեցեն զգովիս, եւ ի խնդրելն զօգնութիւն ինչ ի սոցանէ՛ ասացեն. Յի՛նչ եղեւ ի հնդկացոց այնքան օգնութիւնն»: Տեղեկացնում է, որ «յիշատակարանի» փարք պատրաստ է, այն կա՛մ ինքը կողարկի, կա՛մ տեղում կթողնի Նախիջեանցի Յեսիսիջիօղլի պրն Գէորգի մօտ, որ ուղարկի: Նկատում է, որ վաճառքի համար վերջինիս կարող են ուղարկել Օրացոյցը եւ այլ գրքեր, «քանզի յաստ բնակողաց ոք վասն երկիրդ պատրիարգին ո՛չ կարէ ծախել. եւ սա շունի ինչ երկիրդ, կարէ աներկիրդ վաճառել», մինչդեռ ամէն ոք ցանկանում է ունենալ տպած գրքերից եւ «գժամագիրքս եւ զմանկանց վարժիչ տետրական խնդրեն»: Խնդրում է Զատկի օրերին իրենց հասցնել 1788 թ. Օրացոյցի օրինակներից, քանի որ «միհնչ ի քսան հազար կծախվի»: Տեղեկացնում է նաեւ, որ ծիսականարութեան թագի եւ վակասի ձեւաւորումը ցանկանում էր տալ տրց. Գէորգին, ով մահացաւ, իսկ փարքը յանձնել է մհո. Գալստեանին: Այդ գործում իրեն օգնում են Փափազօղլի Գէորգ (նախ՝

Յակոբ, ապա՝ սրբագրուած) աղան, մհա. Յովհաննէս աղան, Պետրոս քնյի որդիները՝ «արհեստիւ ջաւահիրջի թագաւորական դրանն: Սոցա յանձնեցի զշինումն»: Ուրացող Մովսէս եպս-ի մասին գրում է, թէ զղջացել է ու մեղայական գրել կթղկսին, չնայած շատ կասկածամբա է: Նշելով նրա պիտանի մարդ լինելը՝ խնդրում է չմեծել զղջումը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 4 1786, հոկտեմբերի 15, ի մեծն Պօլիս:

2. Տէս Բովանդակութեան վերջում:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

4 ի սոյն թվիս նստեալ ի նաւ՝ դէպ ի Բերիայ եւ անտի՝ ի Բարայ, զանցեալ զԲաղդատաւ: Մինչեւ ցայժմն մնալն իմ պատճառ եւ չգտանելոյն էր, եւ եւս չգտանելն պատճառ յեգիպտոսի պատերազմն է: Զմեռն մնացինք, եւ հողմքն կատաղին. սրբազնութեանդ ձեր աղօթից օգնութիւն հասցէ:

**242
ԿՏԱԿ**


թղթպ. 6, վաւ. 4

[ՆՈՐ ԶՈՒՂԱ]

ՌՄԼԵ-1786

ՀԵՂԻՆԱԿ՝ Անայ Ոհանէս Տէր-Յակոբեան:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած 2ար: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով, լուսագրով՝ «4W», լուսապատկերով՝ քաղաքի ռեաւոր զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 38,8x24,4: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 73, 75:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բարար. վնասուած մասերը հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Կտակ յետ մահուան հաստատուն է, որպէս ասէ սրբազան առաքեալն (Եբր. Թ 17) – Արդ ես՝ Շաւալեանց հանգուցեալ Փանոս Աւետեանի դուստր Անայեա, ծնեալ ի Սպահան Զուղայու, ի Թարվէզ կոչեցեալ նահանգի եւ ազգաւ հայ... Արդ՝ զեա իմոյ եւ արժանի արասցես յաւետաւոր հրամանես մտանել ի կեանս յախտենակ[ան]. ամէն»: Շաւալեանց հնգգլ Փանոս Աւետեանի դուստր Անայի կտակն է՝ 10 կէտից բաղկացած: Նախ՝ կտակակատարներ է կարգում պրն Յարութիւն Յակոբեանին եւ պրն Յօհաննէս աղայ Շամիրեանին: Երկրորդ՝ գրանցել է տալիս իր ամբողջ ունեցուածքը, նաեւ երկրորդ եւ երրորդ հնգգլ ամուսիններից մնացածները, ինչպէս եւ զարդեղէնն ու կահկարասին: Նշում է,

որ ինչը վաճառելու է՝ վաճառել եւ պահելունը՝ պահել, սակայն «հատուցանեն զժախն թաղման իմոյ եւ զամենայն հարկն իմ հասարակօրէն լիայպէս արասցես թէ՛ առաջին աւուրն իմոյ մահուանն, թէ՛ եօթնօրէնք, քառասունք եւ տարագլխոյն իմոյ»: Երրորդ՝ 270, 300 եւ 800 գումարի շափով հոգեբաժին է յատկացնում՝ ըստ նշուած ցուցակի: Զորրորդ՝ 4 կանանց ամսական եւ տարեկան գումարներ է յատկացնում: Հինգերորդ՝ կարգադրում է մէկ հարկանի տուն վարձել իր մօր, Մարիամ խանումի եւ որդու՝ Յակոբի համար միասին ապրելու, որդու կրթութեան համար եւ այլն: Վեցերորդ՝ կարգադրում է գումար յատկացնել իր տան սպասաւորներին՝ անուանապէս թուարկելով, թէ ում եւ ինչքան: Եօթերորդ՝ կարգադրում է. «Ի վերն գրեալք զամենայն խոստմանցս հատուցմանցէն զուտ մնաց կայես, զորքան որ իցէ...» տան իր մօրն ու որդուն բաւականապէս: Ութերորդ՝ կարգադրում է, երբ իր որդի Յակոբը 21 տարեկան դառնայ եւ կատարեալ, «վերն յիշեալ ի վաղեփ գրեցեալ կայիս, որ կամեման, լինեն իւրն տալն» եւ նշում է, թէ ում ինչքան տան: Իններորդ՝ նշում է, որ եթէ որդու մինչեւ չափահաս լինելը «մահ պատահիցէ», ապա ինչ պէտք է անել: Ծասներորդ՝ կարգադրում է, որ եթէ իր որդին մահանայ, ապա նրա բաժինը յանձնեն իր հնգգլ երկրորդ ամուսին Յօհաննէս Տէր-Յակոբեանի որդի Ստեփանոսին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ Գրվեցաւ կտակս յայսմ աւուր շաբաթի, ի հոգտեմբերի ամսոյն Հոսմ[ե]ացուց, եւ ի Թիրայ 17: Յամի Տեառն 1786. եւ ձեր հրամանաց խոնարհ աղախին, տէրտում յԱնայի Ոհանէս Տէր-Յակո-

բե[ա]ն (կնփատելի), (որպէս օրինակն):

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

1. 1բ //նայ դրեաց եւ կնքեաց [Յարո]ւթին Տէր-Խաչաղտուրե[ա]նն:

2. 1բ Որբոց դբիւր՝ Յարութին Մուրատխանս վկայեմ:

3. 1բ Հրամանաւ տէր Ոհաննէս Տէր-Ներսէսին սաւատս ասլին համեմատ տեսի՝ տէր Յարութին

Շմայսնե[ա]ն (կնփատելի)... (որպէս օրինակն):

4. 1բ Սավ[ա]տս ասլին յամեմ[ա]տ տեսի՝ ծառայ Շահմիր Սուլթան... (որպէս օրինակն):

5. 1բ Սավ[ա]տս ասլին հ[ա]մեմ[ա]տ տեսի՝ Մարութ Յովսէփեան... (որպէս օրինակն):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2բ (ԺԼ դ., նոտագիր) Շաւալենց հանգուցեալ Փանոսի դուստր Անայի կտակն է:

243

ԵՐԳՄՆԱԳԻՐ


թղթպ. 6, վա. 5

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇԻՆ

ՌՄԼԵ-1786

ԳՐԻԶ՝ Դանիել վրդ. Սուրմաւեցի: ՍՏԱՅՈՂ՝ Դուկաս Ա Կարնեցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ ծաղիկ և ետէք աստղիկ, մէկը միաներից մեծ, ներսում՝ «DV» մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 34,2x24,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 30:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ – եկեղեցի (կթղկս բառի վրայ)՝ 1ա: Գոյներ՝ կարմիր, սև:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերին մասերում մոմի հետքեր:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «է: Զօրութիւն գրոյս այս է, որ ես՝ Դանիել վարդապետս Սուրմարեցի եւ բնական միաբանս քրիստոսահիմն Աթոռոյս Սրբոյ էջմիածնի... Արդ՝ առ հաստատութիւն բանիս եւ ուխտագրութեանս

իմոյ ես՝ Դանիել վարդապետս զայս ձեռագիրս իմովս կամաւ եւ յօժարութեամբ ձեռագրեցի եւ կնքեցի, զի դիպող ժամու տեսողացոյ գիտացեալ՝ վկայ լինիջիք եւ կնքեսջիք»: Դանիել վրդ. Սուրմաւեցու (ապագայ կթղկս) եղբմնագիրն է Դուկաս կթղկսին՝ եպիսկոպոսութեան աստիճան ստանալու կապակցութեամբ, որով պարտաւորում է նախ՝ հաւատարիմ մնալ Սբ. էջմիածնին եւ այնտեղ նստող հայրապետին, շշտուել Հայաստանեայց եկեղեցու դասանմանից ու կրօնից. երկրորդ՝ մինչեւ մահ ծառայել միաբանութեանը, եւ առանց հայրապետի հրամանի երբէք այլ տեղ չգնալ. երրորդ՝ առանց իրատունի ձեռնադրութիւն չկատարել, հակառակ դէպքում՝ «անարժան եւ անընդունակ լինիցիմ»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա եղեւ այս ի ՌՄԼԵ (1786) թուոջս եւ ի յունիս ամսոյ ի շորրորդ կիւրակէին, որ զկնի Հոգւոյ գալստեանն, եւ ի շնորհաբուղիս Աթոռս Սուրբ էջմիածին:

2. Տէս Բովանդակութեան վերջում:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ/ԴԱՆԻԷԼ/ՎԱՐԴԱՊԵՏ»:

ԳՐՉԱՓՈՐՉ՝ 1բ «ԿՅԻՐ»:

244


ԳՐՈՒԹԻՒՆ

թղթպ. 6, վա. 6

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33,5x20,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝

նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 34:

ԺԼ դար



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «(Ծանօթութիւն) – Սոյն սրբազան արքեպիսկոպոսն Պետրոս որդի էր ջերմեռանդ գրասէր առն Բերթում անուանելոյ, յազգէ Աղամալեանց... ձեպեաց ի կեանս անանցական: Ի ՌՄՂ (1787)

թուին (Հայոց)»: Գրութիւնը նուիրուած է հնգրդ Պետրոս արքեպս. Աղամալեանին, որտեղ ներկայացուած են նրա աշխատութիւնները («մեկնեաց զսուրբ գրեանս Ծննդոց, Յոբայ, Գործոց առաքելոցն, առական աւետարանչաց՝ անուանեալ «Աղբիւր բացեալ», Յայտնութեանն Յովհաննու, Թղթոյն եփեսացոց: Արար եւ զայլ գրեանս՝ զԱստուածանմանութիւնն, զԿշիռ արդարութեանն, զԱպաշխարութիւնն ազօթից, զՅիսուս փեսայն՝ ոտանաւոր շահմամբ ի նիւթն երգ երգոցի, զտարելից մատեանն քարոզից եւ զայլ ինչ-ինչ գրուածս ճառից եւ երգոց»), բնութագիրը, 1787 թ. մահանալը եւ Սբ. Աթոռի միաբանութեան գերեզմանոցում թաղուելը, տապանաբարի մակագրութիւնը:


245
ՍՍԱՅԱԿԱՆ

թղթայ. 6, վաւ. 7

ՌՄԼԷ-1788

ԳԻԻԶ՝ Յակոբ վրդ.:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 21,4x15,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 19:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշարը գունափոխուած, նոր նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1. 1ա «Ի տէր Յակոբ վարդապետէ, որ եւ նուիրակ երկրիս Թարւէզու... այսպէս եղեւ, մեր իղրարն յետ գործակալացն մերոյ»: Թարիզի նուիրակ Յակոբ վրդ-ի ստացականն է, որտեղ նշում է, որ նուիրակութեան գործի աւարտելու կապակցութեամբ տեղի գանձապետ պրն Թարթոսից ստացել է 4 թուման 200 դիան փող, Աթոռահաս գումարներից պարտք են մնացել եւ դեռ չեն հաւաքել 1788 թուի նուիրակութիւնները, որ «ի գալ նուիրակ եղբարցն իմոյ իմասցին զհաշիւին»:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

1. 1ա եղեւ [ի] ՌՄԼԷ (1788) թուին եւ օգոստոսի ԺԳ (13)ին գրեալ:

2. Տէ՛ս Բովանդակութեան սկզբում:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (սե թանափով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ/ՅԱԿՈՒՎԱՐԳԱՊԵՏ/1227 (1778)»:

246

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ


թղթայ. 6, վաւ. 8ա

[ՀԱՇՏԱՐԻՆԱՆ]


ԺԸ դար

ԳՐԱԳԻՐ՝ գրագիր Յովհաննէս սրկ. Ծատուրեան (1788 թ.): Հեղինակ՝ Աւետիս վրդ.: ԹԱՐԳՄԱՆԻԶ՝ Նիկիտա Բոգդանով, Ալեքսանդր Խոտորբաշեւ:

ԹԵՐԹ՝ 8 էջ. չգրուած՝ 6-8: ՊՐԱԿ՝ Ա.Վ.4: ՆԻԻԹ՝ թուրք. վերին աջ մասում թագակիր հնշադրոշմ՝ «H»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35,6x21,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրաման բոլորգիր (նմուշ՝ 1), ուստեղն (նմուշ՝ 3): ՏՈՂ՝ 33:



Նմուշ 1



Նմուշ 3

ՎԻՃԱԿ՝ բաւարա՝

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, քարգմանութիւն հայերէնից ռուսերէն, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1-2 «ՅԱտրախան սահմանեալ վասն բոլոր բնակչացն ի Ռուսաստան հայոց կրօնի հոգեւոր կօնսիստօրէն՝ առ Սանկտ Պետրբուրգու Սրբունայ Կատարինէ հայոց եկեղեցոյ ֆահանայսն: Հրաման – Ընդ յառաջագրութեան իւրոյ բարձր սրբազնութեան Յովսէփայ արքեպիսկոպոսին հայոց, Ատրախանու հայոց հոգեւոր կօնսիստօրն լուաւ գտուեալ խնդիրն կողենային խորհրդական Յովհաննէս Աղազարեան եղիազարեանին իւրոյ բարձր սրբազնութեան, յորում պարզաբանէ...»: Ատրախանի հայոց հոգեւոր կոնսիստորիայի № 98 հրամանը Սանկտ Պետերբուրգի Սբ. Կատարինէ հայոց եկեղեցու ֆահանաներին եւ եկեղեցու երէցփոխին, որ Յովհաննէս Աղազարեան եղիազարեանը (Լազարեան) ցանկանում է սկսել Մոսկուայի եւ Սանկտ Պետերբուրգի եկեղեցիների կառուցումը, բացի դրանից «ի Սանկտ Պետրբուրգ մեծ պողոտային, անուանեալ Նեվսկօի պրեշպեկտ, ի վերայ եկեղեցական գետնոյ, որպէս առ ուղղութեամբ պողոտային այնմիկ, նոյնպէս եւ գաւթի նորին, ի վերայ կիսոյ սեղանուոյն վասն բնակութեան իւրոյ շինեալ է նա գտուն քարեղէն»: Նաեւ ցանկանում է եկեղեցու բակում իր միջոցներով շինութիւն անել, «եւ որքան որ սակս նոյն շինուածոյն ծախս լինիցի վասն մուծանելոյ գորքանութիւնն ի յեկեղեցական դաֆտարն»՝ պայմանով. նախ՝ որպէսզի նա եւ իր ժառանգները բոլոր շինութիւններով «արդիւնատրիցին սեպհական բնակութեամբ իւրեանց», ինչ-

պէս նաեւ ուրիշներին վարձով տալու, մինչեւ որ եկեղեցին վնասի նրան կամ նրա ժառանգներին շինութեան ամբողջ ծախսերը, ապա շինութիւնը կմնայ եկեղեցուն: Երկրորդ՝ նա եւ իր ժառանգները պարտաւորում են իւրաքանչիւր տարի, նոյն եկեղեցու ծախսերի համար, տալ 5 հարիւր ռուբլի: Երրորդ՝ նա եւ իր ժառանգները պարտաւորում են յիշեալ բոլոր շինութիւնները երբէք չվանաւել կամ գրաւ դնել: Չորրորդ՝ պրն եղիազարեանը ցանկանում է, որ եկեղեցու դրամները ստանան իր ստորագրութեամբ «մինչեւ զբոլոր գումարսն դրամոց վասն շինութեանցն այնց նմա հասանելին վճարեալ լցուցի», եւ խնդրում է սրբազնութիւնից օրինաւոր հաստատութիւն: Հետեալպէս, Ատրախանի հայոց հոգեւոր կոնսիստորը արդիւնատր համարելով այդ պայմանները՝ հրամայում է, որ երբ Յովհաննէս Աղազարեան եղիազարեանը ցանկանայ սկսել Մոսկուայի եւ Սանկտ Պետերբուրգի եկեղեցիների կառուցումը, ոչ ոք հակառակուելու պատճառ չդառնայ:

2. 3-5 «Копія. Переводъ съ Армянскаго ЯЗЫКА...»: Նոյն՝ Ատրախանի հայոց հոգեւոր կոնսիստորիայի № 98 հրամանի քարգմանութիւնն է հայերէնից ռուսերէն (տե՛ս Բովանդակութիւն 1):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1. 2 Ի 1788 թուին եւ ի նոյեմբերի 20, ի Հաշտարխան: Աւետիս վարդապետ:

2. 2 Գրագիր՝ սարկաւազ Յովհաննէս Ծատուրեան:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

- 1. 2 Դատաւոր՝ Մինաս քահանայ Ղօրղանեան:
- 2. 2 Դատաւոր՝ Մարտիրոս քահանայ Պողոսեան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

1. 5 Переводить съ Армянскаго на Россійскій діалектъ Астраханскаго губернскаго магистрата въ должности переводчика Никита Богдановъ:

2. 5 Съ подлиннымъ свѣрлял Государственной коллегіи иностранныхъ дѣлъ переводчикъ Александръ Хыдабашевъ:

ՆՇՈՒՄ՝ 1. 1 «№ 1.^ս»: 2. 1, 3 «№ 98»:

247
ՀՐԱՄԱՆԱԳԻՐ


թղթպ. 6, վա. 8բ

[ՀԱՇՏԱՐԽԱՆ]

ԺԸ դար

ԳրիՉ՝ գրագիր Յովհաննէս արկ. Ծատուրեան (1788 թ.):

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 3-4: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵ-ԾՈՒԹԻԻՆ՝ 35,8x22,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտարանման բոլորգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 35:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ստորին եզրերը ծալուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

Ծնթ. Նախորդ՝ № 246 վաւերագրի մէկ այլ օրինակն է, պարունակում է միայն հայերէն տեքստը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1-2 Տես ա՛ստ № 246, Բովանդակութիւն 1:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

2 Տես ա՛ստ № 246, Յիշատակարան:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՆ

2 Տես ա՛ստ № 246, Ստորագրութիւն 1, 2 (այստեղ՝ Պօղոսեան):

ՆՇՈՒՄ՝ 1 «պատճէն», «№ 98»:

ՃՆՇԱԴՐՈՇՄ՝ թերթերի վերին աջ մասերում՝ «ФАБРИК[А] М и А ВЪ ПЕНЗѢ»:

248
ՀԱԻԱՏԱՐՄԱԳԻՐ


թղթպ. 6, վա. 9

ՂԶԼԱՐ

ՌՄԼԷ-1789

ԳրիՉ՝ Յովսէփ արեւպա. Արղութեան: ՍՏԱՅՈՂ՝ Գրիգոր արկ., պրն Ստեփան Հատուպարեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 3-4: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «//81», լուսապատկերով՝ պատուանդան, վրան արջ՝ ուսին տապար, վերետու՛թ թագ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 21,6x16,6: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 25:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1-2 «Զայս հաւատարմական գիրս գրեմ առ հաւրազատ որդիսդ իմ Գրիգոր սարկաւազդ եւ ազնիւ

պարոն Ստեփանդ Հատուպարեան... Ճարս հատաւ ինչ արարից, առ ազգ ամենայնի կորոյս եւ եւս կամի կորուսանել»: Յովսէփ արեւպա. Արղութեանի հաւատարմագիրը Գրիգոր արկ-ին եւ պրն Ստեփան Հատուպարեանին, որտեղ նշում է, որ 15 տարուայ ընթացքում ժողովրդից հաւաքած անօրօններն Աւետիք վրդ-ի հետ ուղարկել է Մոզզոկ, որ Մայր Աթոռ տանի, սակայն նա չի գնացել եւ «զգանազան հայհրչական բանս խօսելով առ հաւատն սուրբ եւ առ մեզ եւ զանոտի պատճառս առաջ ածելով»՝ կրկին ցանկանում է վերադառնալ Հաշտարխան, որտեղից արտաքսուել է: Պատուիրում է նրանից առնել բոլոր իրերը, ուրիշի միջոցով ուղարկել Մայր Աթոռ, իսկ նրան ուղարկել Վրաց արեւային, որ նա էջմիածին ուղարկի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2 1789, փետրվարի 25, ի Ղզլար: Յովսէփ ար-քեպիսկոպոս:

ՆՇՈՒՄ՝ 4 «№ 2»:

249
ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վա. 10ա

ՍՈՒՐԱԹ (ՀՆԴԿԱՍՏԱՆ)

ՌՄԼԸ-1789

ԳԻԻԶ՝ Ստեփաննոս ֆիյ Տէր-Յարութիւնեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ բաց կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ երկիցս ոճատր զարդանախշ, ներսում «FGGI» մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 31,7x22,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 37-38:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերին եւ ստորին եզրերն անհարթ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-3 «Գերապատուելի եւ գերապայծառ իշխանացոյ հայոց, իմ ողորմած եւ բարեբար տեսցոյ գիւ խոնարհ ողջոյնս մատուցանեմ, եւ բարեյաջող կենաց հանդիպիլ ձեզ միշտ ցանկամ. ո՞ղջ լեռով – Բարեպաշտ եւ մեծահաւատ լինիլն ձեր յայտնի է ամենայն ազգիս մեր... Կարձեղով զգիրս իմ մնամ ձեզ պատրաստական ծառայ եւ աղօթարար, ամենախոնարհ Ստեփաննոս քահանայ Տէր-Յարութիւնեան՝ սպասաւոր նախիջեւանու աղքատացն»։ [Նոր] նախիջեւանի «աղքատաց սպասաւոր» Ստեփաննոս ֆիյ Տէր-Յարութիւնեանը գրութեամբ դի-

մում է հնդկահայ իշխաններին նշելով, որ կարիք ունեն նրանց օգնութեանը եւ դիմում են նրանց «որպէս պասքեալ ոք առ աղբիւրս ջուրոց»։ Սակայն զգում է նրանց թերահաւատութիւնը եւ խնդրում է «լսողութիւն տալ աղաշանացս՝ ներելով անզգամութեանս իմում»։ Նշում է, որ Յովսէփ արքեպիսկոպոսը 15 տարի է, ինչ համապագ տփնում եւ աշխատում է ինչպէս առաքիւնի այր եւ բարի հովիւ, «որում աշխատանաց նշանն եւ պտուղն (թէեւ ինքն աղքատ է ի մարմնաւոր յեկամտից) աւելեօք երեւի քան զայլոց հարուստ անձանցն՝ շնորհիւն Աստուծոյ», ապա պէտք չէ թերահաւատօրէն նրան գործ յանձնարարել, քանի որ, եթէ առանց ձեր օգնութեան այսֆան բան է արել, «ապա ո՞րքան առաւել, եթէ օգնիցէք, կթելոց էք զպտուղս» եւ այլն եւ այլն։ Հետեւապէս կոչ է անում համախմբուել առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոսը «եւ շինեսցո՛ւք մեզ աշտարակ իմաստութեան, զի ի հեղեղաց տգիտութեան ապրեալ՝ ստասցո՛ւք մեզ անուն եւ թողցո՛ւք մեզ յիշատակ քաջութեան եւ ազգասիրութեան յազգաց յազգս»։ Եւ սիրով յանձն է առնում, «եթէ հաւատարիմ համարիցէք եւ կամիցիք զմեզ մշակ կարգել ի կողմանէ ձերմէ առ այս գործ, առանց երկբայութեան սիրով օգնելոց էք»։

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 258, 261:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

- 1. 3 1789, ի Թիրայ 25, ի Սուրաբումս:
- 2. Տե՛ս Բովանդակութեան վերջում:


250
ՆԱՄԱԿ

թղթայ. 6, վա. 10բ

ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Յովսէփ արքեպիսկոպոս. Արղութեան: ՄՏԱՅՈՂ՝ պրն Մարտիրոս:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23,3x19,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 27:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշար գունափոխուած, տեղ-տեղ այրուածքի անցներով:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1աբ «Գերապատուելի պարոն Մարտիրոս – Տէր Ստեփանն ասագ քահանայն մեր գրեալ էր մեզ գհաւատարմութիւն սիրոյ քոյ, որ առ մեզ... որ եղեւ տառապեալ ազգի մերոյ միսիթարութիւն եւ պարծանք մեծ ի յերկրի աստ եւ յամենայն ուրեք: Տէր Ստեփաննի ուր գալն այժմ//»: [Յովսէփ արեւելա. Արղուիթեանի] գրութիւնը [Սուրաթի] հնդկահայ մեծահարուստ պրն Մարտիրոսին, որով յայտնում է, որ Նոր Նախիջեւանի միաբան Ստեփանն ասագ քահայի գրութեամբ տեղեկացել է նրա բարեպաշ-

տութեան եւ առաքինութեան մասին եւ յորդորում է 50 000 ռուբլի գումար նուիրաբերել Նոր Նախիջեւանի տպարանին, դպրանոցին եւ, մանաւանդ, հիւանդանոցին ծնողների, եղբայրների, եղբորորդի հնգյ Միքայէլի, դուստր Շուշանի եւ այլոց յիշատակին, քանի որ «գիրք տպեսցի, եւ յիշատակ յաւիտենական ի յամենայն ազգս մեր տարածեսցի: Երբ գրեանքն վաճառցի, վաստակն նոցա տացի ի կառավարութիւն դպրոցի որբ մանկանցն եւ հիւանդանոցին»: Յանձն է առնում նաեւ նրա պայմանը կատարել. «եւ ի գրունս դպրատանցն եւ հիւանդանոցին զիշատակ քոյ եւ քոյոցն գրել»: Աւելացնում է նաեւ, որ եղբորորդու թոռ պրն Յարութիւնին էլ նախանձատր դարձնի այս առաքինութեանը:

Ծնթ. Նամակն անաւարտ է:

251

ՆԱՄԱԿ

թղթպ. 6, վաւ. 11


ԱՍՊԱՀԱՆ-ՆՈՐ ԶՈՒՂԱ

ՌՄԼԸ-1789

ԳԻԻԶ՝ Կարապետ Գալստանեան: ԱՍՍՅՈՂ՝ Յովսէփ արեւելա. Արղութեան:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «FC»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23,8x17: ԳԻՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 39:

պարծանս մեր Աստուծով, Աստուծով»: Կարապետ Գալստանեանը Նոր Զուղայից գրում է Յովսէփ արեւելա. [Արղուիթեանին], որ տարբեր ժամանակ ուղարկուած գրքերը միասին են հասել, իսկ մի արկղը «վասն երկիւղի ճանապարհին մնացեալ է ի Գիլան» պրն Գաբրիէլի մօտ, քանի որ պատերազմի պատճառով հանապարհները փակ են: Տեղեկացնում է, որ ստացուած ամբողջ գրքերը յանձնել է առաջնորդ Յակոբ վրդին «իւրն եւ Պասրունն կամ Հնդկաստանն Սուրաթինն»՝ հրամանի համաձայն: Յայտնում է, որ Վենետիկի միաբան Միքայէլ վրդը ինդրել է «հին Պասրկայ թագաւորութեան համարն եւ պատմութիւնն, որ ի գրոց պարսից» իրեն տրամադրել, որը հնգյլ ծաշատուր վրդը եւ Յարութիւն Իսահակեանը քաղելով՝ ուղարկեցին նրան. դրա գաղափար օրինակը կարող է ուղարկել սրբազանին, եթէ նա կամենայ:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Է: Վեհասմանչ, հանճարունակ եւ բարձրափառ հօրդ իմոյ տեառնդ Յովսէփ արեւելայիսկոպոսիդ եւ ուղղաշարիդ առաջնորդիդ – Կորագլուխ եղեալ՝ գարշապարացոյ տամ պագս, երկնաշու ներբանցդ... Ողջ լէ՛ր պատուական գլուխդ մեր ի Քրիստոս, հանդերձ յերկարակեաց երանութեամբ, ի

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Ասպահան Նոր Զուղայ, յունիսի Ի (20)ին 1789 17- թուոյն. հնազանդագունեղ ծառայ՝ Կարապետ Գալստանեան:


252
ՈՒԽՏԱԳԻՐ

թղթա. 6, վա. 12

ԺԹ դար

ՕՐԻՆԱԿՈՂ՝ Սիմէոն ֆիյ Տէր-Յովսէփեան:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «ORΦ» «1817», լուսապատկերով՝ ձուածեւ շրջանակի մէջ պատկերուած է նիզակով նժոյգ, իսկ շրջանակի ձախ եւ աջ մասերում գրուած է «E B»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 33,8x22: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 32+3:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ արտագրութիւն, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Զօրութիւն գրոյս այս է, որ մեք՝ Մօղնու բնիկ միաբան քահանայքս զայս գիրս ետուք մեր յոգնեցախտ աւագ քահանայ մահտեսի տէր Աբրահամիդ... Ո՛վ ոք ի յետագայից մերոց չրել եւ քակել կամեցի զայս մերս ուխտ, որ առ քեզ, շրեցի եւ ինքն ի հաւատայ իւրմէ, եւ հաստատօղքն օրհնեալ լիցին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց նորա»: Մողնու եկեղեցու ֆահանաները տալիս են այս ուխտագիրը տեղի աւագ ֆիյ միս. տէր Աբրահամին առ այն, որ նա եկեղեցու շինութեան համար, «վասն ընդարձակ լինելոյ գաւթին», գնել էր պղնձագործ Գրիգորի տունը եւ իր տան փոխարէն Գրիգորին էր տուել Շահրիմանեանց Յովսէփից գնած տունը: «Սակայն վասն ո՛չ գողոյն դաբալայի» (կալուածագիր), որ թողել էր յետոյ գրելու, Յովսէփի կինն ու որդին դատի են տալիս, մինչեւ իսկ բողոքում են

թագուհուն: Վերջիններն էլ տունը եւ են վերցնում: Իսկ Գրիգորի որդիներն անտուն մնալով՝ իրենց տունն են պահանջում: Եւ, ֆանի որ եկեղեցին միջոցներ չունեւ, նրանց են տալիս տէր Աբրահամի տունը, եւ եկեղեցին մնում է պարտական: Այդ իսկ պատճառով ֆահանաները երդում են ամէն կիրակի պատարագ մատուցել նրա հոգու եւ իր բոլոր ննջեցեալների համար:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1. 1ա Գրեցաւ զայս ուխտագիրս ի ՌՄԼԸ (1789) թուին եւ ի մայիսի Դ (4)ին:
2. 1ա Գրեցելոյս հեղինակն տեսանելով՝ համեմատ նմին օրինակեցի. նուաստ մահտեսի տէր Սիմէօն Տէր-Յովսէփեան Մօղնու եկեղեցւոյ:
3. 1ա Համեմատ գաղափարին գտեալ զսոյն ստորագրեմ վասն իմ նոյն գրոյն՝ արքեպիսկոպոս հայոց Վրաստանու Ներսէս:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1. 1ա Մայրքաղաքիս առաջնորդ Մարտիրոս արքեպիսկոպոս կնքեցի (կնքատեղին օղակ):
2. 1ա Հախապատայ սրբոյ վանից առաջնորդ Դավիթ արքեպիսկոպոս վկայ գոլով՝ կնքեցի (կնքատեղին օղակ):
3. 1ա Սուրբ Էջմիածնայ վաքիլ եւ գործակալ եւ վանքի Սուրբ Աստուածածնայ ըսպասաւոր տէր Ղազարս վկայ գոլով՝ կնքեցի (կնքատեղին օղակ):

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ թանաֆով, ծաղկաթերթերի նման) «ՔՐԻՍՏՈՍԻ / ԾԱՌԱՅ / ՏԵՐ ՄԻՔԱԷԼ»: 2. 1ա կնիքների տեղերի նշումներով՝ ա. «տէր Եսայի», բ. «տէր Գէորգ», գ. «տէր Նիկողոս», դ. «տէր Գրիգոր», ե. «տէր Գաբրիէլ»:

253
ՄԱՏԵԱՆ


թղթա. 6, վա. 13

ՌՄԼԸ-ՌՄԽԴ-1789-1795

ՀԵՂԻՆԱԿ՝ Յովսէփ արքեպ. Արդութեան:

ԹԵՐԹ՝ 10 (Էջակալուած 1-9՝ հաշուի չառնելով չգրուած թերթերը). չգրուած՝ 1բ, 6բ-10բ: ՊՐԱԿ՝ Աx10: ՆԻԻԹ՝ թուղթ (եզրերը ոսկեգօծ). լուսա-

գծերով, լուսապատկերով՝ թագակիր ռնատր զինանշան, ներսում՝ եղջերագաւաթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 38,4x11,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ նուարգիր (նմուշ՝ 2ա): ՏՈՂ՝ 62:



Նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերեւում եւ ներքեւում գրա-
դաշարը գունափոխուած, վնասուած մասերը հին
նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

Յովսէփ արքեպ. Արղութեանի նուիրակու-
թիւնների մատեանն է: Պարունակում է՝

1. 2ա-3բ թիւն 1789 եւ ի Հայոց ՌՄԼԸ, զկնի ///
րելոյ զարդինս նուիրակութեան եւ առաջնորդա-
կան ի սուրբ գահոյ եւ աւարտելոյ զհաշիւն մեր,
սկիզբն կալաք վերստին զմուտս Սրբոյ Աթոռոյն
գրել եւ նշանել, որպէս ի ներքոյ բացայայտի կար-
գաւ, մինչեւ զսոյն թիւ, որ է 1795 եւ յապրիլի – Ե
(5) յ(թուման). Թիլֆիզեցի եւ ի Հաշտարխան բնա-
կեալ Մարտիրոսի որդի պարոն Աւրանդիլն ետ Սր-
բոյ Աթոռոյն հինգ թուման... ԱճՂԸ (178) յ(թուման)
ԳՌ (3000) ԶՃ (600). Յիշեալ մաբլաղիցն գնաց,
մնաց մեզ մօտ աւելի ի նուիրակական եւ առաջնոր-
դական արդեանց, որ ի 1789 թուոյ եւ ի մայիսի 3
սկսեալ էաք մինչեւ ի 1795 եւ յապրիլի 30, զոր այժմ
տեսաք վերստին զհաշիւ մեր, եւ ուղեւորեցաք ի
Սուրբ Աթոռն մէկ հարիւր եօթանասունութ թուման

երեք հազար եւ վեց հարիւր դիան:

2. 4աբ Աստանօր ցուցանէ զհաշիւն դրամոց եւ
առաքեալ իրաց ի Սուրբ Աթոռն ի զանազան
ժամանակս եւ ի թիւս, որպէս յայտ է սրբազնա-
սուրբ վեհապետիդ – ԾԲ (52) յ(թուման) ԶՌԹՃԻԵ
(6925). Զեռամբ պարոն Մկրտումին Գալստեան
ԲՃԾԲ (252) Գ (3) շարէք գազէթ հասուցեալ եմք ի
Սուրբ Աթոռն... ԱՌԲՃԺԵ (1215) յ(թուման) ԵՌԱՃ
(5100) դիան. վերոյ վեց դալամի ջամն է մէկ հազար
երկու հարիւր տասն եւ հինգ թուման հինգ հազար եւ
մէկ հարիւր դիան:

3. 5աբ Աստանօր գրեմք զյիշատակիսն Սրբոյ
Աթոռոյն – Մէկ սպիտակ զար ըշտօֆ շուրջառ Թիլ-
ֆիզեցի Փիթոյենց Ստեփանի դիւզարդն... Բ (2)
յ(թուման) ԶՌԹՃԻԵ (6925). Զ...:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Դէֆթէր Սրբոյ Աթոռոյ ի մտիցն եւ ելիցն՝
սկսեալ ի 1789 եւ ի մայիսի 3էն մինչեւ ի 1795 եւ ի
մայիսի մուտն:

2. Տէս Բովանդակութիւն 1 (սկզբում եւ վերջում):


ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ

1. 3բ Վերոյ գրեալ պարտականութիւնն մեր, որ
է մէկ հարիւր եօթանասուն եւ ութ թուման երեք հա-
զար վեց հարիւր դիան, ի ներկայումս ո՛չ եղեւ առա-
քելն, այլ պատուիրեցի Գրիգոր վարդապետին սոյն
չափն ամանաթ շինել, ընդ բարձրագոյն հրամանիդ,
եւ առաքել առ սրբազնութիւն ձեր: Յովսէփ արքե-
պիսկոպոս:

2. 4բ, 5բ Յովսէփ արքեպիսկոպոս:

ԳԻԻԶ՝ Մովսէս Խ. Առաքելեան: Հեղինակ՝ Խա-
չիկ Առաքելեան եւ որդին՝ Մովսէս Խ. Առաքելեան
(գրիչը): ՄՍԱՅՈՂ՝ Ղուկաս Ա. Կարնեցի կթղկա:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծե-
րով, լուսագրով՝ «GTAYLOR», լուսապատկերով՝
թագակիր ռեսուր զինանշան, ներսում՝ եղջերա-
գաւաթ, ներքեւում՝ «GR»: ՄԵԾՈՒԹԻՆ՝ 37x22,9:
ԳՐՈՒԹԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր նոտրան-
ման (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 35:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նոր նորոգմամբ:
ԻՍԿՈՒԹԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «Գերագարդ եւ գերապատի վեհափառ եւ Տեառն շնորհիւ զարդարեալ սրբազան հայրապետին մերոյ տեառն սրբազան Դուկասու կարողիկոսին – Մեծաւ խոնարհութեամբ եւ բաղձանօք սրտիս համբիւր սրբազան աշուղդ նուիրեմ ցանկալի դիմօք, տարփուոյն սիրով եւ յոյժ ուրախութեամբ... եւ հանապազ ցանգամ զառողջութենէ նազելի կենացդ հանդորութեամբ հանդերձ, զոր Տէր շնորհեսցէ հանապազ»: Խաչիկ Առաքելեանը Կալկաթայից տեղեկացնում է Դուկաս կրդկսին, որ 1786 թ. փետրուարի 5ի գրութիւնը ստացել է 1788 թ. յուլիսին նուիրակ Եփրեմ վրդ-ի միջոցով, շնորհակալութիւն է յայտնում շնորհուած պատավնարի համար եւ աւելացնում է, որ Սրբոց Հոհիսիմեանց վանքի զանգակատան գումարը, Գրիգոր նուիրակի միջոցով ստացուած, բաւարար չէ եւ պատրաստ է լրացնել մնացած ծախսերը: Նաեւ պատրաստակամութիւն է յայտնում օգնելու Եփրեմ վրդ-ին նուիրակութեան գործում, ով իրենց եկեղեցու համար բերել է կրդկսի նուիրած, նոր տպագրուած Ատենի ժամագիրքը: Հարցնում է, թէ գուցէ Սուրաբից իրենց փեսայ Յովանջան Յակոբեանը կրդկսին գրած լինի իր հանգուցեալ կնոջ եւ իրենց ֆրոջ մասին, որ որպէս հոգեբաժին կարգադրել է 25 000 ռուպի «աստ ի կուսմանումն մուզաթի պահեմ, որ տարէն հարիւրին ութօվն մու-

դաթն մշտնջենաւոր Սրբոյ Աթոռա գտանէ ձեռամբ հանդիպօղ նուիրակաց»: Նաեւ ուրախութեամբ նշում է, որ լսել է նախկին նուիրակ Գրիգոր վրդ-ի «լուսարի» կարգուելու մասին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ Ի Կալկաթայ, ի թուին ԱՌԲՃԼԸ (1789), յունվարի ԺԵ (15)ունմն, Բէկլարբէկի նավով. օրհնութեանդ կարօտ նուաստք ծառայք՝ Խաչիկ Առաքելեան, Մովսէս Խ. Առաքելեան:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2բ (բոլորգիր) Պարոն Խաչիկի Առաքելեան Կալկաթայու գրեալ թուղթն է առ տէր Դուկաս սրբազան կաթողիկոսն ի թուին մերում ՌՄԼԸ (1789) եւ ի յունվարի ԺԵ (15), յորում ընդ այլ բանից ծանուցանէ, թէ Սուրաթու պարոն Յօհանջանն Յակոբեան հրամայեալ է ինձ, որ ի հոգեբաժին իւր եւ հանգուցեալ կենակցին իւրոյ եւ քեռն իմոյ 25000 ռուպի դրամս դնեմ աստ ի կուսմանումն ինկլիզաց մուտանով յանուն Սրբոյ Աթոռոյդ, ի նորա հոգացողութեանն կամ, դեռ աւարտ չէ առեալ, երբ կատարի, ամենայն կերպն յայտնելոց եմ:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ № № 257, 382, Յիշատակագրութիւն Յետագայի:

ՆՇՈՒՄ՝ 1. 1ա «ՆՇ34, Հնդկաստանաց գրութիւնք»: 2. 2բ «Կտակագրութեամբ են ի սմին եղեալքն»:

255

ՀԱՇՈՒԹԵՐՈՒՂԹ

թղթայ. 6, վաւ. 15


ՌՄԼԴ-ՌՄԼԵ-1785-1786

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աշտարակի եկեղեցու հաշուեթուղթն է, այսպէս՝

- 1ա Աստուծով: Այս է ի ՌՄԼ եւ Դ (1785) թվոջրս եւ ի ամսեն փետրվարի Ժ եւ Ե (15)ն յԱշտարակու եկեղեցու եղեալ ինչք թէ՛ նաղա, եւ թէ՛ արծաթեղէն, թէ՛ խաչ, եւ թէ՛ աւետարան, եւ թէ՛ զկի լէ յուրիշ ինչք՝ ձեռամբ մեր հոգէոր հայր, արթոակալ Գալուատ արքեպիսկոպոսին, որ ի ներոյ – Ա (1) վակաս եւ մէկ սաղավարդ արծաթի յիշատակ է Դունկիանոս վարդապետին... նաեւ մէկ ժամարարի յամէն հանդերձ եւ Բ (2) հատ յուրար, Ա (1) կարմիր լուրկաս:
2. 1բ Նաղա դրամն է այս, որ ի ներոյ – Ե (5)

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33,7x22: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 43:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը մասամբ գունափոխուած: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

հաստ հին Հստապօլու ոսկի... Ի ՌՄՂ եւ Ե (1786) թուէն մնացեալն ժողովեալ՝ եկն էհաս կրկին էլ ինձ, աթոռակալ Գալուստ վարդապետիս ձեռամբ, տիրացու Զօրումին երկու թուման եւ եօթն Ռ (1000) դիան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տե՛ս Բովանդակութիւն 1, 2:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 1բ Ի ՌՄԽԲ (1793) թվին եղեւ ԺԴՌ (14000)

դիան, ետու Բարսեղ վարդապետին՝ ձեռամբ տիրացու Խաչատուրին:

2. 1բ Թվին ՌՄԽԳ (1794)ին եղեւ ԻԶՌ (26000) դիան, զայն եւս ետու Բարսեղ վարդապետին:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՆՏԱԳԱՅԻ

1բ (ժԸ դ., նոտագիր) ՅԱշտարակու եկեղեցոյ թաղթարն է:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ 1բ «ցտէր ա ա տէր գրոյ»:


**256
ՄԱՏԵԱՆ**

թղթ. 6, վա. 16

[ՀԱՇՏԱՐԻՆԱՆ]

[ՌՄՂԴ-1785]

ԹԵՐԹ՝ 12 (էջակալուած 1-16՝ հաշուի շառնելով չգրուած թերթերը). չգրուած՝ 1աբ, 10ա-12բ: ՊՐԱԿ՝ Ա.Ճ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «MCЯ», լուսապատկերով՝ տապարով արջ, վերետա՛ թագ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35x11: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 2ա): ՏՈՂ՝ տարբեր:



Նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթ 7ի աջ անկիւնը պոկուած-ընկած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հաշտարխանում Սուրբ Էջմիածնի նուիրակութիւնների մատեանն է՝ բաղկացած 12 «նումբա»-ներից, ուր ֆահանաների ծխերն են ներկայացուած:

1. 2աբ Նումրա մին: Տէր Աստուածատուրի եւ տէր Պետրոսի ծուխն են – Գ (3) յ(=թուման) աղայ Մինասն... ԺԵ (15) յ(=թուման) ԶՃ՝ (600). վերոյ գրեցեալ դրամոց ջամնայ:

2. 2բ-3ա Նումրա երկու: Տէր Սիմէօնի ծուխնայ – Ա (1) յ(=թուման) Պօղոս Ագուլեցի... ԺԳ (13) յ(=թուման) ԲՌ (2000) ԶՃ՝ (600). վերոյ գրեցեալ դրամոց ջամնայ:

3. 3բ Նումրա երեք: Տէր Ստեփանի ծուխն է – Բ

(2) յ(=թուման) ԵՌ (5000) պարոն Յակոբոսն Զուղայեցի... Զ (6) յ(=թուման) ԷՌ (7000) ԳՃ՝ (300). վերոյ գրեցեալ դրամոց ջամնայ:

4. 4ա Նումրա չորս: Տէր Յարութիւնի ծուխն է մեծ – Բ (2) յ(=թուման) ԵՌ (5000) աղայ Գրիգոր Կանպանեան... ԺԲ (12) յ(=թուման) ԵՌ (5000) ԵՃ՝ (500). վերոյ գրեցեալ դրամոց ջամնայ:

5. 4բ-5ա Նումրա հինգ: Տէր Յովհաննէսի ծուխնայ – Ե (5) յ(=թուման) պարոն Մկրտումն... ԺԶ (16) յ(=թուման) ԲՌ (2000) ԼՃԾ՝ (850). վերոյ գրեցեալ դրամոց ջամնայ:

6. 5բ Նումրա վեց: Տէր Յակոբի ծուխն է – Ա (1) յ(=թուման) Շամախեցի Մարոսի որդի Գրիգորն... Գ (3) յ(=թուման) ԷՌ (7000) Ծ՝ (50). վերոյ գրեցեալ դրամոց ջամնայ:

7. 5բ-6ա Նումրա եօթն: Տէր Յակոբի ծուխն է – Ա (1) յ(=թուման) Հաշտարխանեցի Մելիքսեթի որդի Պօղոսն... ԺԸ (10) յ(=թուման) ԲՌ (2000) ԶՃ՝ (600). վերոյ գրեցեալ դրամոց ջամնայ:

8. 6բ-7ա Նումրա ութն: Տէր Եղ[ի]ազարի ծուխն է – Ա (1) յ(=թուման) ԵՌ (5000) Յովսէփի դին Թումանն Ագուլեցի... ԺԴ (14) յ(=թուման) ԹՌ (9000) ԷՃ՝ (700). վերոյ գրեցեալ դրամոց ջամնայ:

9. 7բ Նումրա ինն: Տէր Միխայէլի ծուխն է – Ա (1) յ(=թուման) պարոն Միրզէն Թիֆլիզեցի... Գ (3) յ(=թուման) ԹՌ (9000) ԳՃԾ՝ (350). վերոյ գրեցեալ դրամոց ջամնայ:

10. 8աբ Նումրա տասն: Տէր Մինասի ծուխն է – Բ (2) յ(=թուման) ԵՌ (5000) Հանգուլեալ Մուրատի որդի Գասպարն... Թ (9) յ(=թուման) ԶՌ (6000) ԱՃԾ՝ (150). վերոյ գրեցեալ դրամոց ջամնայ:

11. 8բ-9ա Նումրա տասն եւ մին: Տէր Աւետի-

սի ծուխն է – 20 (6000) Մովսէսն ջուլհակ... Դ (4) Ղ(=թուման) ԴԻ (4000) ԳՃ (300). վերոյ գրեցեալ դրամոց ջամնայ:

12. 2ր նումրա տասն եւ երկու: Տէր Յարութիւնի ծուխն է փոքր – Ա (1) Ղ(=թուման) ԲԻ (2000) Աւաքի որդի Սիմոնն երեւանցի... Ե (5) Ղ(=թուման) ԵԻ

(5000) ԹՃԾ (950). վերոյ գրեցեալ դրամոց ջամնայ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (ԺԸ դ., նոտագիր) 1785 թուէն նուիրակութեան դաւթարն է Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, Հաշտարխանու:

257

ՆԱՄԱԿ


թղթայ. 6, վաւ. 17

ՍՈՒՐԱԹ (ՀՆԴԿԱՍՏԱՆ)

ՌՄԽԲ-1793

ԳՐԻԶ՝ աղայ Յոհաննջան Յակոբեան Գէորգեանց: ՍՏԱՅՈՂ՝ Դուկաս Ա Կարնեցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած 1բ-2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «JWHATMAN»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23x18,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 45:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Իմ՝ Յոհաննջան Յակոբիս կտակ հաստատուածիս բաննն են, որ առգ Սուրբ էջմիածնայ համար գրած եմ, այս է – Համար Տումն գրածում, թէ ԻԵ (25) հազար ուսիս արկթի՞ Սուրբ էջմիածնայ Սուրբ Աթոռին տվի մեզ յիշատակի... լինի, թէ տէրն Քրիստոս մեզ իւր սուրբ ք[ա]ղցր ձայնին լսելն արժ[ան]ա[յ]ցուցէ»: Սուրաթի բնակիչ աղայ Յոհաննջան Յակոբեան Գէորգեանցի նամակը [Դուկաս Ա Կարնեցի] կթղկսին, որով յայտնում է, որ 1790 թուին Մայր Աթոռի օգտին կտակել է 25 000 ուսիս գումար (մէջբերում է կտակի համապատասխան՝ Տրդ մասը), որը 50 տարի անգրիական բանկում պահելուց յետոյ միայն կարող են մայր

գումարը վերցնել:

Ծնթ. Մանրամասն տե՛ս Յիշատակագրութիւն Յետագայի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա նու[ա]ստ փոքր ծառայից ծառայ՝ Յոհաննջան Յակոբեան Գէորգեանց:
2. 1ա ¹²⁴²/₁₇₈ (1793) ապրիլի 1, Սուրաթում: շամս 13

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2բ (ԺԸ դ., նոտագիր) Ի Սուրաթ բնակեալ աղայ Յոհաննջանի Յակոբեան Գէորգեանց կտակի ութերորդ բանն է, յաղագս ի Կալկաթա, ձեռամբ վէքիլացն իւրոց պարոն Խաչիկին եւ պարոն Գրիգորին Առաքելեան եւ որդոց նոցա պարոն Մովսէսին, Յովանէսին եւ Աստուածատուրին, ի կուժբանումն ինկլիզաց յանուն Սրբոյ Աթոռոյս վախճ եղեալ դրամոցն ի թուի Փրկչին 1790 պայմանաւ յիսուն ամաց, որոյ օգուտն ի տարին 2000 ուսիս արկաթի՞ յիշեալ վէքիլքն ժողովեալ ի Սուրբ Աթոռս հասուցանեն. եւ զայլ միտս բանիցն ի մէջ թղթոյս է տեսանել: Զայս ինքն Յոհաննջան աղայն ի կտակէն իւրմէ իւր ձեռագրովն օրինակեալ ի յայս թուղթ՝ յղեալ էր տեսուն Դուկասու սրբազան կաթողիկոսին պահել ի Սուրբ Աթոռոջ ի յիշատակ ար[ա]րողութեան նորա եւ ի հաստատութիւն բանիցն:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 254, 382, Յիշատակագրութիւն Յետագայի:

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթյ. 6, վա. 18

ԵԱՇ ՔԱՂԱՔ (ՄՈՂԴՈՎԱ)

ՌՄԼԹ-1790

ՀԵՂԻՆԱԿ՝ Յովսէփ արքեպ. Արղութեան:

ԹԵՐԹ՝ 16 էջ. չգրուած՝ 12-16: ՊՐԱԿ՝ ԱՄՃ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «JEAN FELINE & ZOON», լուսապատկերով՝ թագակիր ռեաուր զինանշան, ներսում՝ եղջերագաւաթ: ՄԵՆՏՈՒԹԻՒՆ՝ 23,3x19,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 30-32: ԿԱԶՄ՝ սպիտակ թուղթ:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. խոնատութեան հետեւ: ԻՍՎՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

Ծնթ. Մասն է կազմել ամբողջական տետրակի. պահպանուել է հին թերթակալումը (137-142):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1-11 «Մերոյ եւ մեծի Արթոյն էջմիածնի ծայրագոյն նուիրակ Ռուսաց երկրի ամենայն Հայոց ազգին առաջնորդ, Նոր Նախիջեւանայ հիմնադիր եւ այցելու Բէգարապիու եւ Մարդավու հայոց նոր առեցեալ տեղեացն՝ Յովսէփ արքեպիսկոպոս — Յորմէ ժամանեացի թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան ի վերայ ընդհանուր հայկականաց սեռից... եւ առհասարակ լի առնել զձեզ՝ զարսզ եւ զկանայսդ, զբնիկսդ եւ զվաճառականսդ անանց գթութեամբ եւ ողորմութեամբ իւրով, աղօթիւք սուրբ Լուսաւորչին. ամէն»: Յովսէփ արքեպ. [Արղութեանի] գրութիւնը Հնդկաստանի հայերին, որով յայտնում է, որ զանազան գործերի հետ կապուած Դուկաս կթղկսի կոնդակով եւ իր աղաչական թղթով ուղարկել է Նոր Նախիջեւանի Սբ. Լուսաւորիչ Աւագ եկեղեցու ֆիյ Ստեփաննոսին, ով հասել է Մաղրաս: Ներկայացնում է իրավիճակը «պարզ եւ ստոյգ բանիւք»: Նախ՝ շնայած Արարատեան երկիրը խաղաղ է «ըստ չափու իւրում», սակայն արեւմտեան ֆաղաֆներն ու ժողովուրդը մեծ վշտի ու նեղութեան մէջ են «յանիրաւ հագարական զօրացն իւմայէլացոց վասն մեծի պատերազմիս»: Երկրորդ՝ 19 - ՅՈՒՑԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՒԱՆԻ

Ղարաբաղի մելիք Մէջլումը եւ մելիք Աբովը Շուշիի խան կոչուածից վտարանդի են. «մէլիք Մէջլումն ի թիլֆիզ դեգերի եւ մէլիք Ապովն՝ ի Գէնջայ», իսկ մնացած երկիրը եւ նրանց ժողովուրդը ցրուած են եւ օգնութեան կարիք ունեն: Երրորդ՝ Վրաց երկիրն էլ միջակ խաղաղութիւն ունի, բայց լեզգիները հանգիստ չեն տալիս: Չորրորդ՝ Հոռոմի եւ Ռուսաց կայսերը միատրուելով՝ «յուժգին հարուածս, սպանութիւնս եւ գերութիւնս հասուցանեն հագարացոցն»: Այնուհետեւ նկարագրում է ռուս-տանկական պատերազմը, թէ ինչպէս ինքը Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտէօմկինի բանակի հետ գնում է Քիշինյով, Քովչան, Բենդեր ֆաղաֆներ: Բենդերում հայեր կային պաշարուած, «ԱձԾ (150) տունք եւ եօթն հարիւր անձինք», եւ իշխան Պոտէօմկինի գրութեամբ Բենդերի մի մզկիթ վերածել են եկեղեցու սբ. Լուսաւորչի անունով: Ապա բացատրում է, թէ ինչու է Ստեփանոս աւագ ֆիյին նուիրակ ուղարկել՝ ա. քանի որ Նոր Նախիջեւանում շինել է տուել ֆառէ եւ փայտէ եկեղեցիներ, իսկ Սբ. Լուսաւորիչ եկեղեցին էլ կիսատ է մնացել, բ. Նոր Նախիջեւանում աղքատանոց եւ որբանոց է հիմնել խեղճերի համար, այժմ էլ դպրոց է հիմնում: Չնայած տպարան է գնել 1200 թումանով, սակայն «նա բազում ինչ թերի ունէր պատկեր կամ գիր եւ ծաղիկ, այլ մեք գայն ամենայն դրամով լցուցաք եւ զբազում գեղեցիկ պատկերս քանդակել ետուք» եւ կարիք ունի 2000 թումանի, որից 1000-ը վճարել է, իսկ 1000 թուման պարտք է մնացել: Պատճառաբանում է, թէ ինչու է Նոր Նախիջեւանում հիմնել տպարան եւ ոչ Հաշտարխանում. «զի Հաշտարխան խառն են զանազան ազգք, կարելի էր ի դէպ ժամու հակառակութիւն ինչ յառաջանայր տպարանին ի խոռվարար արանց, իսկ ի Նախիջեւան ոչ երբէք կարէ այնպիսի ինչ յառաջանալ, ըստ որում զուտ եւ մաքուր հայ ազգ են ի նմա եւ ոչ գոյ հրաման այլ ազգ բնակիլ անդ եւ կամ այլակրօն ոք»: Յայտնում է, որ օտարազգի ֆարոզիներ կան, դրանց դէմ գործելու համար տպել է տուել սուրբ Ներսէս Շնորհալու Ընդհանրականը եւ այս մասին առաջաբանում խօսել է:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 249, 261:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 11 վասն ձեր աղօթարար խոնարհ Յովսէփ արքեպիսկոպոս հայոց, որք են ենթ իշխանութեան երկուց կայսերացն:

2. 11 Գրեցաւ յամի Կենարարին 1790 եւ ի մերս

թուականի ՌՄԼԹ, յունվարի, ի յերկիրս Մալդա-վանու, ի քաղաքս Եաշ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Լուսաւորչին:

ՆՇՈՒՄ՝ 1. կազմ Աա «1790, յունվարի»: 2. կազմ Բբ «Առ[ա]ջին յ[ա]տոր գրվածկնայ»:

259


ՀԱՇՈՒԵԹՈՒՂԹ

թրթպ. 6, վաւ. 19

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՄԼԹ-ՌՄԽԱ-1790-1792

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 31x10,9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսր-գիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 37:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. վերին եւ ստորին եզրերն անհարթ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

Արձանագրուած են Սբ. Հռիփսիմէ վանքի զանգակատան շինարարութեան համար խառատներին եւ մշակներին տրուած գումարների հաշիւները եւ վանքի պարտքի վերադարձը.

1. 1ա Ի ՌՄԼԹ (1790) թուոչս, ի յունիսի 13 կիրակէ. խառատաց կոչեաց սրբազան (վեհապետ)ըս մեր եւ պատուիրեաց, որ յերեմ շաբաթ օրն գնացեալ Սուրբ Հռիփսիմէի զանգակատան իսկէլեն կապեն, որ շինեսցի, որոց ետու այսինչ,

եւ զկնի եթէ այլ խարն լինիցի՝ ի ներոյ գրեցից – 5000 դ[րա]ն ետու Պետրոսին ... 10700:

2. 1ա Ի ՌՄԽ (1791) թուին – 3000 վասն զանգակատան գլխին մէկ խաշ շինեցուցաք մեր դարբնաց... 214000 դ[րա]ն:

3. 1ա Արեին գնաց – 1 դալիպ... 2 եւս:

4. 1բ Ի ՌՄԽԱ. (1792) թուին, ի փետրվարի 18 – Սուրբ Հռիփսիմէի վանից պարտքն ետուք, որ էր Թ (9) ՚(=թուման) էՌ (7000) դ[րա]ն. որոյ 2 (6) ՚(=թուման) յառաջագոյն Գէորգ վարդապետին տուեալ էաք, Գ (3) ՚(=թուման) էՌ (7000) դ[րա]նն ի վերոյ թուին ետուք:

5. 1բ Խօյեցի խառատ Նազարին այսինչ ետով – ԵՌ (5000) դ[րա]ն յանցեալ թուին... ի մարտի 3 (գրած-ջնջած):

6. 1բ 200000 Աթոռակալին ետու յի փետրվարի է (7):

7. 1բ Խառատ Նազարին – 5000 դ[րա]ն. յանցեալ թուոչն ԵՌ (5000) դ[րա]ն... 60000 դ[րա]ն. 2 (6) ՚(=թուման)ընն էհաս նոցա (գրած-ջնջած):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տէ՛ս Բովանդակութիւն 1, 2, 4 (սկզբում):

ԳՐՉԱՓՈՐՉ՝ 1բ «2500 200»:

260


ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

թրթպ. 6, վաւ. 20


ՌՄԼԹ-1790

ՀԵՂԻՆԱԿ՝ իշխան Պոտէօմկին:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 3: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով, լուսապատկերով՝ երեք լայնեզր գլխարկ կախագարդերով, մարդաղէմ երկու մահիկ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 30,7x21,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1), նոսրգիր (նմուշ՝ 4): ՏՈՂ՝ 24:



նմուշ 1



Նմուշ 4

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-2 «Копія. Екатеринославской казенной палатѣ. Предложеніе – Гайнанскому архиепископу Іосифу назначено мною... отъ меня помянутому господину генераль майору Бегулину предписано»: Իշխան Պոսէօմկիւնի № 219 հրամանագիրը եկատերինոսլաւի պետական պալատին Յովսէփ արքեպս-ին նշանակուած տարեկան 1200 ռուբլի պետական ռոնիկը տալ

Նախիջեանի մօտ գտնուող գանձարանից, ինչպէս նաև նոյն տեղից տարեկան 300 ռուբլի ռոնիկ տալ Կարապետ վրդ-ին՝ երկուսն էլ ի հաշիւ արքանական գումարի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2 На подлинномъ подписано Князь Потемкинъ Таврическойй. 26 февраля 1790 году:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1 1 (Յովսէփ Արղուբեան) № 219: 2. 4 1790, փետրվարի 26. պայծառափայլ քնեազն գրեաց Եւկատարինէլավո կազօննի պալատն վասն իմ եւ Կարապետ վարդապետի տօնլուղին ստանալոյ ի Նախիջեանու մօտ եղեալ ուեզդիցն: Կարապետ վարդապետի վեց տարին ծառայեալ տքնլուզն տալ եւ յայսմհետէ հոգացեալ տարենն երեք հարիւր ռուպլի եւս տալ նմա:

261

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 6, վա. 21

[ԲԵՆԴԵՐ ՔԱՂԱՔ] (ՄՈՂԴՈՎԱ)

ՌՄԼԹ-1790

ՀԵՂԻՆԱԿ՝ Յովսէփ արքեպս. Արղուբեան: ՍՍԱՅՈՂ՝ Ստեփանոս ֆնյ:

ԹԵՐԹ՝ 12 էջ: ՊՐԱԿ՝ Աx6: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «СНРОУИГ»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22,8x18,8: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 41:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ջնշումներով, վերջին թերթը վնասուած, վերականգնուած, հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-11 «Սիրեցեալ որդի տէր Ստեփանոս համեսազարդ ֆահանայս – Ի 1787, դեկտեմբերի 30 թուղթքն քոյ, որ ի վերայ Բաղդադու ընկալայս, որով գողջութիւն քո ի Մատրաս սիրով ընկալնուլդ... Չունէի ես ժամանակ այսքան երկարել զգրիչս, այլ մինչ հարկն ստիպեաց, նեղեալ զիս՝ գրե-

ցի, զի դու մխիթարեալ՝ յառաջին սէրն քոյ արիասցիս. եւ ես մնամ վասն սիրելի որդուդ իմ միշտ//»: Յովսէփ արքեպս. Արղուբեանի գրութիւնը [Նոր Նախիջեանի Սբ. Լուսաւորիչ Աւագ եկեղեցու] ֆնյ Ստեփանոսին, ում ուղարկել էր Հնդկաստանի հաշերի մօտ որպէս ժողովարար ազգի փրկութեան համար: Նշում է, որ ստացել է 1787 թ. դեկտեմբերի 30ին ուղարկած նամակը եւ ուրախ է, որ Հնդկաստանում նրան սիրով են ընդունել: Սակայն նախատում է, որ երկար ժամանակ նրանից որեւէ լուր չի ստացել՝ ասելով. «...իսպառ մաշեցեր զիս՝ թղթոյդ կարօտ պահելովդ»: Յուսադրում է շքնկնուել, քանի որ «տացես զսիրտ քոյ ալէկոծութեան մրրկաց, զի այն ամենայն ի սատանայէ յարուցեալ գիտասացես», ինչպէս իրեն է փորձութեան ենթարկել. «զի եւ ի վերայ իմ յարուցանէ սատանայ մրրկիս»: Առաջին «մրրիկն» այն է, որ վախճանուեց Գրիգոր «սափարն, որ էր այր իմաստուն, յոյժ խորհրդական եւ պիտանի ինձ ի խորհուրդս»: Երկրորդ՝ որ խափանուեց կայսրուհու գալը Նոր Նախիջեան, «որոյ գալն թէ ո՞րքան օգնութիւն եւ մխիթարութիւն եւ բարութիւն էր քաղաքիս», եւ նկարագրում է, թէ ինչ փառատր հանդէս էր կազմակերպել եւ կայսերական պալատի կառուց-

ման հիմքը դրել էպիսկոպոսական գալիթի մօտ, ինչպէս նաեւ մարմարէ արձան ֆանդակել տունէ 4 աւետարանիչների պատկերներով (որոնց մի ձեռքում սբ. Աւետարան, միւսում՝ կայսերական հրովարտակ) եւ հետեւեալ արձանագրութեամբ. «Մեզ՝ շորից աւետարանչացս յանձնեցաւ այս Նոր Նախիջեան քաղաք, եւ ի մեր յանուն հիմնադրեցաւ օծեալ քարամ[բ]ք եւ հիմնարկութեամբք՝ ի տէր Յովսէփ արքեպիսկոպոսէն հայոց, որ է յազգէ Երկայնաբազկեան» եւ այլն: Երրորդ «մրրիկն» այն է, որ վախճանուեց Խալդարեան Գրիգոր Խոջամալը եւ տպարանը թողեց 1200 թուման պարտքի տակ: Չորրորդ «մրրիկն քոյ այդպէս ցրտանալդ եւ սրտաբեկ գիր գրելդ եղեւ», որից երեւում է Ստեփանոսի յուսահատ լինելը, եւ յանդիմանում է. «Նոքա, որք ազգասէրք են եւ ազատութեան ազգին ցանկան, պարտին եւ նեղութեանցն համբերել»: Տեղեկացնում է, որ մինչ «ի Մատրասու արդիւնք ըստանալդ», գրել է պրն Յովհաննէս Աղազարին նոր Նախիջեան ուղարկել մի լաւ նարտարապետ թղթաշինութեան գործարան հիմնելու համար, իսկ ֆաղափից դուրս գալուց առաջ «տպարանն, դուքաններն, մաղազէքն, ջաղացն, այգին... թղթոյ քարխանէն մագիստրաթի կնիքով եւ դատաւորաց ձեռագրով թուղթ հաստատեալ»՝ յանձնել է կառավարիչներին: Քաղաքի աղֆատների համար գումար է հաւաքագրել, երկիւղած անձանցից գանձապետ նշանակել մինչեւ աղֆատանոց կառուցելը: Աւելացնում է, որ ֆաղափի պարտքի 10 տարին լրացել է, իսկ ժողովուրդն աղֆատութեան մէջ լինելով՝ չի կարողանում վճարել, նաեւ մի շարք այլ խնդիրների կապակցութեամբ իշխաններ խնդրում են գնալ կայսեր մօտ, այդ ընթացքում գրութիւն է ստանում պայծառափայլից (Պո-

տէօմկինից) ներկայանալու, որ պատերազմում էր Բանդարում (Բենդեր): Եւ հարմար պահ գտնելով՝ ներկայացրել է ստեղծուած իրավիճակը: Այնուհետեւ Պոտէօմկինը հրամայում է. «Արմէն անուանեալսն շկողոպտել, այլ հանգստութեամբ ածել ի մեծ բանակն եւ կամ առաքել ի Նախիջեան»: Եւ հայերը միանում են ռուսական զորքերին: Զմուռն սկսելուն պէս Պոտէօմկինի զորքերի հետ գնում է Եաշ ֆաղափ: Նշում է, որ թուրքերը հայերից, յոյներից ու հրէաներից բազում արծաթեղէն են պահանջել եւ զարդերից գրեթէ մերկացրել են Կ. Պոլսի եկեղեցիները. հայ ողորմելի մէլիքները Շուշիի խանից փախել են (մէլիք Աբովը՝ Գանձակ, իսկ մէլիք Մէջլումը՝ Թիֆլիս), իսկ Վրաստանը լեզգիների հարուածներից չֆաւորութեան մէջ է յայտնուել: Յորդորում է. «Բայց փութացիր, որդեակ, օգնութիւն հասուցանել», իսկ այն պարոններին, որոնց անուններն յիշատակել էր, որպէս օրհնութիւն փոխանցել [Ն. Շնորհալու] Ընդհանրականը կամ այլ գրէր: Այնուհետեւ թուարկում է տպուելիք գրքերի անունները, յիշատակում է ռուսաց Պետրոս քգրի, Կոստանդնուպոլսի եւ Մակեդոնացու պատմութիւնները եւ այլն (վերջից վնասուած է):

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 249, 258:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

11 1790, յունվար 4: Ի մեծ բանակին/// այս առաքեմ ի/// բրիտան/// երկ///:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

12 (նոարգիր) Նամակ Յովսէփ արքեպս. Երկայնաբազուկ-Արդութեանցի՝ գրեալ ի Նոր-Նախիջեանէն: Նուիրեաց ինձ Գալուստ սրկ. Տէր-Մկրտչեան ի ս. էջմիածին, 1900 նոյ. 25: Կ. Յ. Բասմաջեան:


ՀԱՇՈՒՆԵՄՍՏԵԱՆ

թղթպ. 6, վա. 22

ՌՄԽ-1791

ԳԻԻԶ՝ Դալիթ Սեւաուր:

ԹԵՐԹ՝ 8 (էջակալուած 1-11՝ հաշուի շաննելով չգրուած թերթերը). չգրուած՝ 7ա-8բ: ՊՐԱԿ՝ Աx8: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «GNW», երկու լայնեզր գլխարկ կախազարդերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,4x15,8: ԳՐՈՒԹԻՒՆ՝ եռասիւն: ԳԻՐ՝ նոարգիր (նմուշ՝ 1բ): ՏՈՂ՝ 31:



Նմուշ 1բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 7-Տրդ թերթերի վերին աջ անկիւնը պոկուած-ընկած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1բ-6բ «Աստուծով: Ի ՌՄԽ (1791) թուղս, ի յունիս ամսոյ ժե (15) ես՝ Դաւիթ Սեւաւորս, հրամանաւ արքայան վեհապետին, կարգեցայ նուիրակ վիճակին Դիարբաբու, եւ գոր ինչ ծախեցի ի գնալս ի յերկրոջ եւ ի դառնալս իմում՝ է՝ ստորեւ

գրեալդ — 60 (զուռուշ). ետու տիրացու Նահապետին՝ հրամանաւ վեհապետին... 215 (զուռուշ) 25 (փարայ)»: Դիարբեքիրի (Տիգրանակերտ) նուիրակ Դաւիթ Սեւաւորի հաշուեմատեանն է, որտեղ արտայայտուած են նրա երթ ու դարձի հաշիւները:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տե՛ս Բովանդակութեան սկզբում:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (ԺԸ դ., նոտրգիր) Մասրաֆին դաւթարն է:

263


ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ

թղթայ. 6, վա. 23

ՌՄԾ-1801

ԳՐԱԳԻՐ՝ Սարգսի որդի Օվանէս: Հեղինակ՝ Յակոբ:

Թե՛րթ՝ 1. չգրուած՝ 1բ: Նիիթ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «17//»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 15,1x12,: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 13:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ստորին եւ ձախ եզրերն անհարթ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Պատճառ կրուս այս է, որ ես՝ Չարայպեցի

Պալովի որթի Ակօփըս... լինի այսելով իմ Ակօփիս իրզարն»: Չարայպեցի Պալովի որդի Յակոբի գրութիւնն իր հօր տունը 2 թումանով Չարայպեցի Օհանի որդի Մօսայէլին ծախելու մասին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Կրվեցաւ թվին ՌՄԾ (1801)ին, յունիսի մէկումն:

2. Տե՛ս Վկայութիւն 1:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1. 1ա ես՝ ստուով Սարքիս որթի Օվանէսըս կրեցիմ, վկայեմ:

2. 1ա ես՝ դարգի Ավանըս վկայ:

3. 1ա ես՝ դարգի Օսէփըս վկայեմ:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (սեւ թանափով, ձուածեւ) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԱՎԱՆ»:

ԳՐՉԱՓՈՐՉ՝ 1բ «տաւրնունատըն»:

Ծնթ. Մանրամասն տե՛ս 3. Աբրահամեան, № 123, էջ 153:

264

ՆԱՄԱԿ


թղթայ. 6, վա. 24

ՀԱՇՏԱՐԻՆԱՆ

ՌՄԽ-1791

ԳՐԻՉ՝ Մկրտում դի Գալստեան: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արեւկա. Արղութեան:

Թե՛րթ՝ 2. չգրուած՝ 2բ: Նիիթ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «4WΓ», լուսապատկերով՝ թագակիր ռհատր զինանշան, ներսում՝ եղջերագաւարթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23,3x19: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 21, 23:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ դժուար ընթեռնելի. թանափի թթուայնությամբ բարձր, գրադաշտը գունափոխուած, տեղ-տեղ այրուածքի հետեւերով:

ԻՄԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա-2ա «Սրբազայն տեառն իմոյ ի Յովսէփըն ար[ֆ]եպիսկոպոսիտ – Ամսի 7ումն... կ[ա]մենտաթի կուրերովն տեղիս ամենայն լուրըն գրեած բաց հասարակութեան գիրն տվի ուրէից կարդացին, շնորհ[ճ]ակալութեամբըն ընդունեցին... մնամ միշտ սրբազանիս բարի կամեցող...»: Մկրտում դի Գալստեանի նամակը Յովսէփ արքեպս. Արղութեանին, որով տեղեկացնում է, որ հաղորդել է տեղի լուրերը «բաց» հասարակութեանն ուղղուած, որ

կարդացին եւ շնորհակալութեամբ ընդունեցին: Խոստանում են ուղարկել 200 թուման եւ շնորհակալագիր: Գրում է նաեւ, որ Մուրթզայ Դուլի խանին «էն Ղզլարու գիրն էլ ուղարկեցինն»՝ օգնելու հարկատրութեան մասին: Հասարակութեան խնդրանքից յետոյ խնդրում է կատարել նաեւ իր խնդրանքը, մի բարձրադիր շինովնիկի էլ յիշեցնել իր ծառայութեան մասին:

Ծնթ. Մնացեալը չի կարդացում, համարեայ անկարելի է: Տես նաեւ ա՛ստ № 265:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2ա Իմ խոնայր փոքր ծառայ՝ Մկրտուն դի Գ[ա]լստեան: 1791, մարտի 11ումն, Հ[ա]լա[ա]րխ[ա]ն...:

265

ՆԱՄԱԿ


թղթպ. 6, վա. 25

ՀԱՇՏԱՐԻՒՄ

ՌՄԽ-1791

ԳԻԻԶ՝ Մկրտում դի Գալստեան: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպս. Արղութեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «IKM»,: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23,5x19,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 12-15:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ դժուար ընթեռնելի. թանափի թթուայնությամբ բարձր, գրադաշտը գունափոխուած, տեղ-տեղ այրուածքի հետեւերով:

ԻՄԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-3 «Սրբազայն հոգեւոր հայր ի Յովսէփընս

աջտը իւր մաքուրընյն յ[ա]մբուրեմ – Օրընութիւն նամակիտ ապրելի 25էն գիր մայիսի 12սն աւետելի՞ կարդալով... մնամ միշտ յավատարիմ պատրաստական իբրեւ թարեկամ սրբազանիտ եւ բարի կամեցող»: Մկրտում դի Գալստեանի նամակը Յովսէփ արքեպս. Արղութեանին, որտեղ նշում է, որ կատարել է իրեն տրուած բոլոր յանձնարարութիւնները, սակայն Մուրթզայ Դուլի խանի գլխին եկածից յետոյ, որ փախել է, ինքն իր «վնաս տալու խնդիրքն» չգիտի: Այնուհետեւ մանրամասն ներկայացնում է, որ տարբեր գործերի հետ կապուած գրութիւններ է ուղարկել զանազան մարդկանց:

Ծնթ. Չի կարդացում, համարեայ անկարելի է: Տես նաեւ № 264:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

3 Խոնայր ծառայ՝ Մկրտում դի Գ[ա]լստ[եա]նի, 1791, մայիս 19ն, Հ[ա]լա[ա]րխ[ա]ն:

266

ՊԱՐՏԱՄՈՒԻ ՀԱԿ


թղթպ. 6, վա. 26

ՌՄԽԱ.-1792

ԳԻԻԶ՝ Գէորգ: ՍՏԱՅՈՂ՝ Ղուկաս Ա. Կարնեցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսա-

պատկերով՝ թագ (կիսատ): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 14,7x11: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 12+5:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաարար. հին նորոգմամբ:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Տ[ե]առն սրբազան Ղուկաս կաթ[ող] իկոսին — Զօրութիւն գրոյս այս է, որ ես՝ Ղարսեցի Աբր[ա]համի որդի Գեվորքըս... վեր[ո]յ գրեալ երկու հարուր քսան ղուռուշն հարսացանեմ եւ այս թամասուկըս առնեմ»: Պարտամուրհակում Ղարսեցի Աբրահամի որդի Գեորգը նշում է, որ Ղուկաս կթղկսից վերցրել է 220 ղուռուշ եւեմ տարի ժամանակով եւ պարտատուում է վճարել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա ես՝ Գեվորքըս գրեցի եւ մօհրեցի ի ներքոյ գրեալ վկայից վկայութեամբըն, ինձ ընդունակ է եւ տեսողաց հաղ[ո]յ թվեցի: Թիվն ՌՄԽԱ (1792)ին, փետրվարի մէկին:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1. 1ա Վկ[ա]յ՝ Մանուկ աղան:
2. 1ա Վկ[ա]յ՝ պ[ա]ր[ո]ն Միխայելըն:
3. 1ա Վկ[ա]յ՝ Կօրյեց մ[ա]հտ[ե]սի Խաչատուրըն:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2բ (ԺԸ դ., նտարգիր) Ղարսեցի Աբրահամի որդի Գեորգի թէմէսուկն է. ի զուր տեղ տուեալ են զղրամն: Ի Կարին. ձեռամբ Զուղայեցի Գարուստ վարդապետին:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (սեւ թանաքով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ/ԳԷՈՐԳ/ՌՄԻԴ (1775)»:


ՀԱՇՈՒԵՄԱՏԵԱՆ

թղթ. 6, վա. 27

ՌՄԼԸ-ՌՄԽԹ-1789-1800

ԳԻԻԶ՝ Յովսէփ արքեպս. Արղութեան (հիմնականում):

ԹԵՐԹ՝ 143 (էջակալուած 1-176՝ հաշուի շանելով չգրուած թերթերը). չգրուած՝ 7աբ, 8բ, 30բ-44ա, 46ա-53ա, 106ա-24ա, 126բ, 127բ-30ա, 133ա, 134ա, 137ա-8ա, 139ա-40ա: ՊՐԱԿ՝ Ա-Ի (Ա, Գ, Զ, Է, Թ, ԺԱ, ԺԳ, ԺԵ, ԺԷ՝ 6, Բ, Դ, Ը, Ժ, ԺԲ, ԺԴ, ԺԶ, ԺԸ՝ 10, Ե, ԺԹ՝ 4, Ի՝ 1): ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «KΦHM», լուսապատկերով՝ պատուանդանի վրայ սիւն, որի աջ և ձախ կողմերում մէկական աստղ՝ «1789» մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 31,8x21: ԳՐՈՒԹԻԻՆ՝ փառասիւն (հիմնականում): ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ՝ 2ա): ՏՈՂ՝ տարբեր: ԿԱԶՄ՝ լաթապատ ստուարաթուղթ, մէջքը՝ կաշի:



Նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ բաարար. 1ին եւ 142րդ թերթերը կպցուած են կազմին աստառի փոխարէն, թերթերի վերեւներում խոնաւութեան հետեւ, 143 թերթն առանձին թուղթ է:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Պարունակում է 1789-1800 թթ. ընթացքում կատարուած (Յովսէփ արքեպս. Արղութեանի անձնական հաշուեմատեանը՝ 1793-1800 թթ.) ել ու մուտի ծախսերը, ինչպէս նաեւ զանազան գրութիւնների արտագրութիւններ.

1. 1բ Փոքրիկ ճանապարհի սանդուղն... 5. գղալ կերակրի ստօլօօջի:
2. 4աբ 1789, մայիսի 9. ստացայ կավալեր Անինցկի յառաջիլ աստիհան ի մեծ կայսերէն Պապ Պետրովիչէ — 1 ալ կավալեր... 3. աստղ մեք առաք փողով: Ե.Կ.:
3. 1բ Սեթէոս վարդապետի սպասաւոր Բարսեղ վարդապետի հայր մահտեսի Մարտիրոսն Դիարբեքիւրու ընդ մեր Սիմյ[ո]նին աստքեալ էր մեզ... 1789 յօգոստոսի 2 ընկալաք:

4. 2ա Ղոխմու Սուրբ Խաչ վանից արձանագիրն է ի վերայ կաթողիկեին – 1. Փառաց տաճարս աստուածային, երկրի դրախտ կենաց փայտին... 6. Եւ հարագատ եղբարց նորին, եւ ըստ հոգւոց որդւոց բնաւին:

5. 2բ 1792, սեպտեմբերի 6. ի Հաշտարխան թողեալ սանդուղին, զի քաղաք ի Սուրբ Աստուածածին եկեղեցոյ կանանց զիրն տանն – 1. մէկ մեծ սանդուղ Իրբիթու կնքեալ... 2. սանդուղ մուշամեացուս կապած Սանահնու Առաքել վարդապետին:

6. 3ա Օրինակ գրութեան առ Գօրօտնիչն: Գրիգորուպօլու քաղաքի բանի կառավարութեան մատրոնաւորաբն յառաջադրէ: Նո 1. պարոն Գեօրօտնիչ Մարտրոպիղ – Որ ըստ կարգադրութեան մաղիստրաթիս ի սոյն ամսոյս, այսինքն՝ Կիրակոսի որդի Մարկոսն, որ ըմբռնեցաւ ի փախչիլն... եւ յամենայն օր ի ծառայութիւն քաղաքիս հասարակութեան առաքեսցես, ուր հարկն իցէ:

7. 3բ Նո 2. Օրինակ գրութեան առ հասարակութիւնն Գրիգորուպօլու քաղաքի բանի կառավարութեանն յառաջադրէ հասարակութեանն սոյնոյ քաղաքի – Որ բանի կառավարութեանն կարգաւորեաց վասն Գէորգիանցն այսպէս, նախ՝ ընտրեսցին զիշերապաէք ի քաղաքի աստ... որ հրապարակաւ յայտնեսցէ ամենայնից հասարակութեան քաղաքիս:

8. 3բ-4ա Այլ օրինակ: Գրիգորուպօլու բանի կառավարութեան մատրոնաւորաբն հրամայէ լանթրաթ, այսինքն՝ սահման նայեօղ մանուկ Յովսէփեանիղ – Որ, ըստ հրամանի նորին բարձր սրբազնութեանն, դառնայ մերոյ Յովսէփայ արքեպիսկոպոսին՝ Ռուսաց երկրի Հայոց ազգին... եւ ըմբռնել եւ ածել առ Գօրօտնիչն: 1792, հոգտեմբերի 5:

9. 9ա-13բ 1793, յունվարի մուտն ի Պետրպօլ: Յանցեալ թուոյն, յաղագս Նախիջեանու եւ Գրիգորիուպօլու հասարակութեան բանին, գնացաք ի Պետրպօլ, մտաք անդ ի սկիզբն նոր տարուոյ, որ է 1793, Հայոց ՌՄԽԲ, յունվարի մուտն, նշանեմք աստ որքան դրամ եղեալ է ընդ մեզ, որքան աօնլուղ, այսինքն՝ ուղիկ ստացեալ եմ թագաւորական եւ որքան պարտք յայոց ստացեալ եմ զայն եւ մուտք հաշուելով ի վերայ իմ, ընդ նուիրաց ժողովրդեանն աստէն գրեմ, բայց զպարտսն մեր ունիմ յայլ տեղիս նշանել ի սոյն դէֆթերոցս վասն տեղեկութեան մերոյ – ԳՃԻ (320) (թուման) Ե (5) (հազար դրան). Երեք հազար երկու հարիւր յիսուն ռուպլի... ԳՌ (3000) ԱՃԺԳ (113) ԱՌ (1000) ԹՃ (900) դ[իւ]ն յետ կուսի. ջամն կալա[յ]:

10. 54ա-62բ Թիւն 1793, յաղագս Նախիջեանու եւ Գրիգորիուպօլու հասարակութեանն բանին գնացաք ի Պետրպօլ եւ ի յունվար ամսոյն մտաք անդ, եւ սկսաք զամենայն խարջս, տան եւ նանապարհի պրօգօնի եւ այլոց ի ներոյ գրել յանուանէ վասն տեղեկութեան – ԱՃԿօ (160) Վ(թուման). Ի Գրիգորիուպօլու միւնչեւ ի Նախիջեան, եւ անդի ի Պետրպօլ կարէթիս եւ վեց արապայի պրօգօն, եւ վասն ուտելեաց... ԲՌ (2000) ԳՃՀԸ (378) Վ(թուման) ԵՌ (5000) ԴՃ (400) դ[իւ]ն. Վերոյ ջամն եղեւ ԲՌ (2000) ԳՃՀԸ (378) Վ(թուման) ԵՌ (5000) ԴՃ (400) դ[իւ]ն:

11. 63ա-7ա 1793, յօգոստոսի 15. Կարապետ վարդապետն, որ առաքեցաք ի մեծն Պօլիս, նորա հասեալ դրամն եւ արարեալ խարջն ի ներոյ գրեմք յանուանէ վասն տեղեկութեան – ԺԱ (11) Վ(թուման) ԲՌ (2000) ԳՃԾ (350). Նախ՝ ի սրբազանէն էհաս մեզ 30 բաշաղլու ոսկի, որ է գինն 187 դուռուշ 20 փարայ... Ե (5) Վ(թուման) ԲՌ (2000). 2 փասպայ մահուտ առի վասն տղայոցն:

12. 13բ-4բ 1794, նոյեմբերի 6. մտաք ի Հաշտարխան մեծ հանդիսի – 2 (6) Վ(թուման). Յամսոյս 12 ժամ արարաք ի Պօղոս-Պետրոս... ԳՃԻ (320) Վ(թուման). Յետ կուսի ջամն բերի աստ:

13. 14բ-5բ 1795, փետրվարի Գ (3). մտաք ի Ղզլար – ԺԱ (11) Վ(թուման). Ի Սուրբ Աստուածածին ժամ արարաք փետրվարի 14... Ե (5) Վ(թուման). Պօղպօլիկովնիցայ Թամար Իվանով Շերիովն:

14. 15բ-8ա 1795, մարտի 26. դարձաք ի Ղզլարու ի Հաշտարխան յաղագս զանագան հարկաւորութեանց – ԺԵ (15) Վ(թուման). Ժամ արարաք ի Զատիկին [ի] Սուրբ Պետրոս-Պօղոս ապրելի 1... զոր ընկալաք ի Ղզլար 1796 մարտի 19:

15. 4բ Թիւն 1795, մայիսի 2. մինչ ի Հաշտարխանու ի Գրիգորիուպօլ գնացաք, գներոյ գրեալ իսն եղաք ի փոքրիկ կարմիր սնդուղն եւ կնքեցաք, որ զկնի մահու մերոյ եղիցի բացեալ. եւ գոր ինչ եղաք ի նմա, միլսամիոջէ գրեմ եւս կտակեմ սիրելի որդի Գրիգոր վարդապետիղ եւ այլոց, որք հանդիպին. եւ սոյն սնդուղի բանալիքն ընդ իս տարայ եւ ունիմ ուրոյն. եւ սոյն թղթոց օրինակն եղի ի սնդուղն, յորում նշանեալ եմ, զկնի մահուս, ում ինչ ինիլն – հազար եալդու ոսկի... Կտակելի է վասն այսմ 2՞ Ռ՞ (1000) պարտուցս եւ այլ քարոցս, որոց դեֆթերն գոյ առ իս:

16. 2ա Որ է 437 ամ մինչեւ ի 1795 թիւն Փրկչի: Ազնի աղայ Յովակիմ եղիագարեանէն – Աթոռն հազիւ ազանց Հայկայ... զի կայսերէն զշնորհս գտեալ, եւ գեալներէն նոցա հեղեալ: Ե.Կ.:

17. 18ա-9ա Ի Հաշտարխան յուլիսի 20 – ԼԸ (38) Վ(=թուման). *Ձատիկ Տեառն պատարաճի՞ նորաշէն եկեղեցիս ժամասացաք՞... ԱՌ (1000) ԳՃԶԲ (382) Վ(=թուման) ԸՌ (8000) ԸՃԶ (806) դի[ա]ն եղեց շամն:*

18. 19ա-21ա Ի Ղզլար – ԺԲ (12) Վ(=թուման). *Յունիսի 29 ժամ արարաք ի յԱստուածածին եկեղեցին, եղեւ Ժ (10) Վ(=թուման)... մէկ արծաթէ ազայ թաս եւս:*

19. 67ա-9բ Ում ինչ ընծայեցի ի յելանելս Հաշտարխանու մինչեւ ի Գրիգորիուպոլ, աստ նշանեցի վասն ապագային զիտելոյ: 1795, մայիսի 13 մտաք ի Նախիջեան – Կարապետ վարդապետին մէկ եօրդան... Զ (6) Վ(=թուման). *պարոն Նուրի[չա]նիցն առի մէկ կապուտ կերմեսուտ մեծն եւ շորս հաս ցած ալաշայ՝ գինն Կ (60) զուռուշ:*

20. 132բ Թիւն 1795, յապ[ր]իլի 9 – ԸՃ (800) Վ(=թուման). *Յաղագս շինութեան Հաշտարխանու մերոյ եւ գնելոյ գտունս... մինչեւ 1796, մայիսն Ծ (50) թուման:*

21. 70ա-4ա 1796, յունվարի մուտն – Նոր գուբեռնաթ քնեազ Պետր Նիկողայիչին եղաք ի յեկատրինալա[ւ] մէկ կարմիր թիրմայ շալ... Ի (20) Վ(=թուման). *Մէկ կարովի ստտանի՞ եւ մէկ կարովի խալիչայի ետուք քսան թուման:*

22. 74բ-80ա 1797, Հայոց ՌՄԽԶ, յունվարի մուտն, ի Թիլֆիզ. սկսաք վերստին զամենայն ծախս մեր գրել աստ ընդ ընծայիցն. զայս ընծայեցաք զանազան անձանց՝ որպէս ի ստորեւ երեւի – Արքային մատուցաք մէկ ոսկէ մինայով եւ բալի անթով թաբաքէրք... Ա (1) Վ(=թուման) թագիս ֆիթլար շինելոյ:

23. 53բ Իմ թագն, որ ի Ստամպոլ շինեալ եղն, լայն էր եւ անյարմար. թիւն 1797, յամսեանն դեկտեմբերին, ձեռամբ Սիմ[ո]ն Սերգեիչին, շինել եղաք նորապէս Յուկեանէ Ալեքսեովնին. որ ինչ ի վերայ նորա խառջ եղել ի ներոյն նշանեմք – ԾԵ (55) Վ(=թուման) ԴԻ (4000). 32 մսխալ մարգարիտ առի. մէկ մսխալն 17 ոռպլի... Բուկեանթ հանեցաւ ի թագէն 56 դառատ, այլ փոքրիկ թագն եւ խաչն մնաց, ի վերայ նոցա գոյ 8 դառատ համրեալ լինի 64 դառաթ, այլ պակասն է 13 դառաթ:

24. 21բ 1798, յունվար – ԽԴ (44) Վ(=թուման). *Կապուտ եաղութ մատանիս, որ սուրբ Երուսաղէմայ պատրիարզն էր առաքեալ... ԺԸ (18) Վ(=թուման). Մէկ կապուտ թիրմայ շալ ծախեցի:*

25. 22ա-3ա 1798, յունվար ծննու[ն]դ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի – ԺԵ (15) Վ(=թուման). *Ի Ծն[ն]դեանն ժամ արարաք... եւ աս լուաք 11 (7)99 ամին եւ յունվարի 17:*

26. 80բ-6ա 1798, հունվարի մուտն սկսաք տարույս խառջն մեր գրել ի Պետրպոլ – Ա (1) Վ(=թուման). *Ի Ծննդեանն եղաք աղայ Յովհաննէսի ալչոյն... Է (7) Վ(=թուման). Նիկոլայ Վասիլիչ Եատլիցկուն առաքեցի մէկ հնդկաց ալաշայ՝ գինն Գ (3) Վ(=թուման), մէկ սպիտակ մարմաս՝ մանր ծաղկով գինն Զ (6) Վ թուման:*

27. 124բ-6ա Յաղագս տէր Գալիթի պարտքն հաստուցանելոյ՝ առի մեր փեսայ պարոն Մարտիրոս Մատինովից՝ տասն եւ հինգ հազար ոռպլու (մէկ բառ անհասկանալի) դրամ, որ է մէկ հազար հինգ հարիւր թուման ի 1798 թուին եւ ի դեկտեմբերի 15... ԸՌ (8000). *մուրապայն, որ տէր Ստեփանն առաքեալ էր, նորին քիրահն եղաք նաւաարին:*

28. 23բ-5ա 1799, յունվարի 6 – Ը (8) Վ(=թուման). *Ի Ս[ա]նկթ Պետերբուրդ ծնունդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ժամ արարաք... գրաւ ետուք աղայ Յովհաննէսին:*

29. 1բ 1799, յունիսի 9. Կ. Պոլիս առաւելցաք զներոյն գրեցեալ գրեանսն – 50 թէլամաք... Ի (20) գերաքէնի պատկերն:

30. 86բ-94ա 1799, յունվար, ի Սանկթ Պետերբուրդ. աստէն նոր սկսանիմ գրել զամենայն ծախս տան իմում եւ այլ պատահեալ իրաց – Գ (3) Վ(=թուման) ԵՌ (5000). *Ի Ծննդեանն եղաք քահանայիցն, մեր տղայոցն եւ աշոյն աղայ Յովհաննէսի... Ը (8) Վ(=թուման) ԵՌ (5000). 41 գազ աղ գոնեցոց առի, գազն ԽԱ (41) դ[ի]ալն:*

31. 5ա Յամիս երեք սկսեալ ամենայն պարտքն մեր, զորս ի Պետրպոլ ընկալայ ի զանազան անձանց՝ յազգս (մէկ բառ անհասկանալի) արվելելոյն եւ յազգիս յօգնեալ՝ գերի բաց ի Գրիգորիպոլց[ո]ցն – ԱՌԶ (1006) թուման Գրիգորիպոլու վանքի եւ աւագ եկեղեցոց... զոր Եփրեմ վարդապետն պարտի հաստուցանել 1801 ամին յունվարի ամսեանն: Ե.Կ.:

32. 5բ Աւետիս վարդապետի ձեռանէ – Ալբանացի՞ Յարութիւնի ձեռ[ա]մբն ստացաք նոյնի բազկագրի կանթա ԲՃԼԶ (236) ոսկի... երկու վեղար:

33. 94բ-105ա 1800 յունվար, Սանկթ Պետերբուրդ, ի խառջն մեր գրեց[ա]ք աստ – Բ (2) Վ(=թուման) ԵՌ (5000). *Մեր գրագիր Իվան Պետրովիչին յունվարի մուտն եղաք... ԶԱ (81) Վ(=թուման) ԵՌ (5000). Առաքեցի պարոն Աղալոյին ԶԱ (71) թուման երկու սրբակար՝ խալիչայից եւ 7 խաչի՝ գինն Է (7), պարոն Մարտիրոս Գալստեանին պարտի հաստուցանել. մնացեալն յինքենէ առեցեալ մանր իրաց՝ գինն Ե (5). երիցփոխի եղբայր Խաչատուրի հետ զրկեցի, դեկտեմբերի 28:*

34. 25աբ 1800, յունվար – ժԳ (13) Ն(թուման), Յունվարի 6 ժամ արարաք... ժ (10) Ն(թուման), Կատարինէ Իվանովնայն տասն թուման, չորս աստղ, երեք խաչ մայիսի 30:

35. 26ա-30ա Ի Մօսկով – ԼԳ (33) Ն(թուման) ԴՌ (4000), Ի յունիսի 5 երեալ Ի Պետրպօրու ժԱ (11) ումն մտի Ի Մօսկով... 1 փոտալոյ մատանի Ղեւոնդի կինն:

36. 6աբ Առեալ Գլայիչէն. 1800 յուլիսի – ԲՃԺԸ (218) նահապետիցն... ժՁ (16), 2 նարինջի շարղաթ ԻԴ (24) Ն(թուման):

37. 30ա 1800, դեկտեմբերի 17 մտի Ի Ղզար – Բ (2) Ն(թուման) ԵՌ (5000), Աղամի որդի Յովհաննէսն... Ա (1) Ն(թուման) Թամարն:

38. 44բ Այլոց տամեցեալն վասն ապրանցն – Ծ (50) Ն(թուման), Լաշկարովին՝ եղաք Ծ (50) թուման նաղդ... Լ (30) Ն(թուման), Տամօժնի հասարակ ափիցերին եւ պաշտօնէիցն նաղդ եղաք Լ (30) թուման՝ բաց Ի վեճեղէն[ի]ց:

39. 45ա-6ա Տէր Ստեփանի դրկած ապրանացն ուրբան ինչ ծախեցա՞ Ի ներքոյ նշանեմք – ԲՃՂ (278) Ն(թուման) ԸՌ (8000), 34 տամբուռլի սպիտակ ծաղկով ծախեցի Ի վերայ վաճառակ[անա]յ... ժԵ (15) Ն(թուման) ԲՌ (2000), 15 հատ մեծ լաշակ:

40. 105բ Ի Ղզար գաղէթ առի բաց կապուտ... ժ (10) Ն(թուման), Մեր ճորդ վիզի՞ Վարդանի որդին, որ գրեալ էրն՞, տասն թուման տուեալ՝ ազատեցի:

41. 127ա Տէր Ստեփանի գիրեայ գին – Խ (40) Ն(թուման), Կինն ազատեցի մի Գանջայու... Տէր Առաքելն խարջ է արարեալ Ի վերայ նորա:

42. 130բ-2ա ժօ (10) Ն(թուման), Թիլֆիզեցի տէր Ստեփանին Տէր-Յարութիւնեան, որ յղեցաք Ի Հնդիկս, ետուք տասն թուման, 1784 եւ մայիսի 14... ԸՃ (800) Ն(թուման), Պարտական եմ թագաւորի կազնին՝ ձեռամբ պարոն Մկրտումին:

43. 133բ ժԱ (11) Ն(թուման) ԴՌ (4000) ԶՃԻ (620) դ[իա]ն տալացուք եմ գՔրիստափոր՝ Իվանիչ Միրզախանովին... երկրորդն՝ Ի սմա է (գրած-չնշած):

44. 134բ Զ (80) Ն(թուման), Ութսուն թուման ստացեալ եմք Ի Շամիրամ աղայ Սուլթանեանէն Ի Մատրասու... 1796, յօգոստոսին:

45. 135ա Աստէն նշանեմք Ի Հնդիկս առաքեալ տէր Ստեփանի գրեցեալ դաւթարոջն, զառսու եւ զողորմութիւնս հնդկաց ժողովրդեանն՝ հանդերձ իրաւանչիւր քաղաքան եւ անուամբ տուղացն, որք գրեցեալք են Ի գրեցեալս մեր: Մատրասու տուրքն. դրամն ոսկիի հաշով – ԲՌ (2000), Շամիրամ աղայն Սուլթանու-Շամիրամեան՝ երկու հազար ոսկի... ԳՌ (3000) ԱՃ (100) ԼԴ (34) եւս

պայմանաւ յանձնեալ են որբոց վերակացուացն վասն դպրոցին եւ տպարանին:

46. 135ա Սուրաթու տուրքն – ԻԵՌ (25000) ոսկիի աղայ Յօհաննջանն քալանթար Յակօբ Գլեաքեան մէկ մեծ խաչ... ԳՌ (3000) ոսկիի Ի Բումբայի:

47. 135բ Զինու տուրքն – ԱՌ (1000) ոսկիի աղայ Մատթէոսն Յովհաննիսի... Վերոյ աղայ Մատթէոսն Յովհաննէսի վիճեալ՝ ԲՌ (2000) ոսկիի մեզ խոստացեալ է:

48. 135բ Բթափու տուրքն – ԱՌ (1000) էՃ (700) ոսկիի պարոն Յովհաննէս Մանուկն Շարիմանեան... էՃ (700) պարոն Աղլբէգն Համատանցի, որ է Ի կրօնս վալէնդիզայ:

49. 135բ Սէյաբաաու տուրքն – ժ (10), Տէր Մովսէսն ժ (10) ոսկիի, Իւրաքանչիւր ամի տալոց է... զգեստ եւ այլ ինչ առաքեալ է. գիրն կայ մեզ մօտ:

50. 136ա Մուշիբէնդէրու տուրքն – ԴՃ (400) ոսկիի Խօջամալ Պառամն... ԹՃ (900), Պարոն Բարդամ Սարգիս Քալանթարի, գրեալ է Վարդան եղբորն հասուցանել մեզ ԹՃ (900) ոսկիի:

51. 136ա Դաֆայու տուրքն – ԾՌ (50000), Պարոն Մարտիրոսն Տէր-Ստեփանի, յաղագս դպրոցացն եւ հիւանդանոցին, ԾՌ (50000) ոսկիի խոստացեալ է... ժ (10) պարոն Աստուածատու Մարգար:

52. 136բ Կալկաթու տուրքն: 1794, յունվարի 28 – ԴՌ (4000), Չորս հազար քանի մի հարիւր ոսկիի պարոն Սարգիսն դի Յովհաննէսի... Կալկաթու վէքիլն ընդունին Սէյտապատ, Դաֆայ, Զիչրայ եւ այլքն:

53. 138բ-9ա Թաղէոս վարդապետի ստացեալ արդիւմն Ի Նախիջեան [ի] 1792 դեկտեմբերի մտէն մինչեւ Ի 1794 եւ Ի հոգտեմբերին – 577 (ոսկալի) Ի պսակէ... չորս հարիւր ոսկալի եւս, որ էր ԲՃ (200) թ[ու]մ[ա]ն:

54. 140բ ԽԵ (45) Ն(թուման) մատան[ո]յս գինն... եւս առի դեկտեմբերի 30:

55. 141ա Թիլֆիզու պարտք – Դիվան պարոն Աւետիկին ԵՃՆԵ (575) ԲՃԶ (206) թ[ուման]... եւ մեր փեսայ պարոն Մարտիր[ո]սէն եւս առք, որ էր Սիմոն Սերգեիչի տալիքն, որ էր պարտականք՝ դի՞ տէր՞ Մարտիրոսին, զոր առաքեցի առ Սելենցկին յօգ[ոս]տ[ո]սի 26:

56. 142ա 1770ին հրաման ընկալեալ եղեւ շինութեան Պետրպօրու եկեղեցայն... 1793, յունիսի 12 օծեցի զնա:

57. 143ա 1800. սրբազանին հաս[ա]պն[ա]յ Ի ներքոյ գրե[ա]լն – Մարտի: Խինխսէպիցս թարթիմայ մնաց 8 67... եւս էլ Ի զոշիկի համար առիք փող, որ է ջ[ա]մն[ա]յ 296 92: Ե.Կ.:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 2ա Յիշատակարան բանիցն Գրիգորուպօլու քաղաքի՝ բանիւ կառավարութեան մաղիստրաթին: Յամի Տեառն 1792 եւ ի Հայոցս թուին ՌՄԽԱ, ի հ[ո] գտեմբերի մուտն:

2. Տա Իմ յանձնական դէֆթէր մտիցն եւ ելիցն ի 1793 եւ [ի] յունվարի մէկէն սկսեալ. յորում ցուցանի եւ որքան պարտաւորութիւնն մեր՝ վանօրէից եւ այլ անձանց: Յուցանի եւ հնդկաց քաղաքաց եւ ժողովրդեանն որքանութիւնն եւ պարտքն մերացնէից, որ ի թղթոց տէր Ստեփան Տէր-Յարութիւնեանի հանեալ՝ աստ նշանեալ եմք վասն տեղեկութեան մերոյ: Ի սմա ցուցանի եւ որքանութիւն դրամոցն, զորս ընդ ժամանակս-ժամանակս առաքեալ եմք ի տուն տէր Ստեփանին:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

- 1. 2ա, 3ա, 4ա, 5ա, 143ա ե.Կ.:
- 2. 4բ Յովսէփ արքեպիսկոպոս:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 19բ 1796, հոգտեմբերի 2 ի Ղոխմու գրաֆ Պուպովը գրով խնդրեալ էր յինէն ընդ եներալ Կուրսիկովին գնալ ի Վրաց տուն, վասն որոյ հրամայեալ էր գրով նոյն Կուրսակովին Ծ (50) թուման ճանապարհական խ[ա]րջի տալ մեզ, եւ իւրաքանչիւր ամսոջ տասն թուման՝ սկսեալ ի նոյեմբերի մէկէն:

2. 102բ (1800 թ.) Սեպտեմբերի 11 մտաք ի Հաշտարխան:

3. 141ա Դաւթարիս սկզբէն մինչ սոյն երեսս վերջին, հարիւր ութսուն (180) երեսն գրեցեալքն, բայ ի անգիր սատայ թղթոցն. 1815, յունվարի 12, յղեցաք ի Թիլֆիզ առ Ներսէս արքեպիսկոպոսն վասն հարկաւորութեան իրիք ըստ խնդրոյ իւրոյ, բայց պարտի յետ դարձուցանել առ Սուրբ Աթոռս կաթողիկէն էջմիածին: Եփրեմ կաթողիկոս:

268

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 6, վաւ. 28

ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈՂ


ՌՄԽԱ-1792

ԳՐԻԳ՝ Յովսէփ արքեպ. Արղութեան (միայն Յրդ էջի երկրորդ կէտ): ՀԵՂԻՆԱԿ՝ Յովսէփ արքեպ. Արղութեան: ՍՏԱՅՈՂ՝ Գրիգոր վրդ.:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. յուսագծերով, յուսագրով՝ «J M»: ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 23,7x19,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1, 3): ՏՈՂ՝ 28, 31:



Նմուշ 1



Նմուշ 3

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1-3 «Սիրեցեալ որդի Գրիգոր աստուածիմաստ

վարդապետ – Յորմէ հետէ հասեալ ես ի Հաշտարխան, մինչեւ ցայժմ ոչ ունիմ զգիր ի քէն... յուսամ, որ մեր բանն այսուհետեւ յաջողի, թագուհին մեծ շնորհ ունի ի վերայ մեր. յետոյ գրեցից»։ Յովսէփ արքեպ. Արղութեանը Գրիգորիուպօլից գրում է Գրիգոր վրդ-ին, որ մարտի 14ին եաշ քաղաքից գնացել է Դուպասար՝ ժողովրդի համար քաղաքի տեղն ընտրելու, սակայն կայսերական ուկազ է ստացել «տասն վերստ ցած ի քաղաքէս, դէպ ի կողմն Բէնդէրու, ի վերայ Նէստրայ գետոյն, յանուն սրբոյն Գրիգորի քաղաք շինել, մերով օգնականութեամբ, եւ անուանել զայն Գրիգորապօլ»։ Եւ ժողովուրդը ցնծութեան մէջ է, քանզի աղքատների համար տուն են կառուցում, իւրաքանչիւր անձի 10 ուրվի փող են տալիս ձի եւ սայլ գնելու համար, այրի կանանց ծնած կով են տալիս իրենց կարիքները հոգալու համար, եկեղեցիներ, առաջնորդարան, խանութներ, քարվանսարայ, հիւանդանոց, դպրատուն եւ այլն թագաւորական միջոցներով են շինում եւ նոր քաղաքին շնորհում: Հետեւապէս ինքը որոշ ժամանակ մնալու է այնտեղ, ուստի պատուիրում է. «սիրով եւ համեստութեամբ լինիցիս ընդ ամենեսեան», Ասլանով Գրիգորին տալ երեսունհինգ թուման եւ երկու թուման փող, որ ինքն այնտեղ ստացել է նրանից,

ինչպես նաև այլ յանձնարարականներ: Ուղարկում է նաև կոնցիստորին ներկայացուելիք գրութեան պատասխանը «վասն չիք իրիցին այնմիկ»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

3 Վասն քոյ աղօթարար՝ Յովսէփ արքեպիսկո-

պոս, 1792, ապրիլի 16, ի Գրիգորուպօլ՝ նոր քաղաք հայոց:

ՆՇՈՒՄ՝ 4 «ՆՁ 9»:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 272, 276, 393, 396:

269

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վա. 29

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ


ՌՄԽԱ.-1792

ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպ. Արղուքեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ ներսից բուսազարդ բլորակ, ներսում՝ թագ, «GR» մակագրութիւն: ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 31,8x20,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ խոշոր բլորագիր (նմուշ՝ 2), նոսրգիր (նմուշ՝ 3): ՏՈՂ՝ 32, 33:



Նմուշ 2



Նմուշ 3

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-2 «Սրբազնագունեղ տէր եւ մեր ամենապատուական հայր — Ապրիլ յամսոյն 16էն ի Գրիգորապօլ նոր քաղաքէն հայոց գրեցեալ գիրդ, ընդ քորիային իւրոհոյ կայսերական մեծութեան գրեցեալ ուքագի, սոյն յամսոյս 26ին ընկալաք... Նաեւ ձեր պարոն ազնիւ Թորոսին Բ (2) օր առեալ՝ մնացաք վասն ըռուտեվար գրեանց, մինչ զի պատրաստեցաք, եւ ապա ճանապարհորդեցաւ, վասն այս խնդրեմք ներել եւ այլ նորագուտ բան ինչ ոչ գոյ

գրել»: Նոր Նախիջեւանի մի խումբ հայեր գրում են Յովսէփ արքեպ. Արղուքեանին, որ ստացել են ապրիլի 16ի գրութիւնը (տես ա՛ստ № 268) եւ շատ ուրախացել: Տեղեկացնում են, որ ինչպէս նախկինում, այժմ եւս կայսրուհուն եւ նահանգապետին խնդիր են ուղարկել, որը պատեհների հետ միասին տուել են պրն Թորոսին հասցնելու սրբազանին, որ վերջինս յանձնի նահանգապետին, քանի որ գիւղացիները նեղութեան մէջ են, զանգատում են մագիստրատին, թէ՛ ցանֆի, խտի տեղ չունեն, դազախներն էլ թոյլ չեն տալիս իրենց հողերից օգտուել: Հետեւապէս խնդրում են սրբազանին միջնորդութիւն այդ առթիւ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2 եւ մնամք վասն ձերոյ բարձր սրբազնութեան միշտ պատրաստական ամենախոնարհ ծառայքս: Ապրիլի 29ին, 1792, ի Նոր Նախիջեւան:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 2 ՕՀան Ապրամըվ (կից՝ ստորագրութիւն):
2. 2 Մկրտիչ Պետրոսով:
3. 2 Պողոս Թումանեանց:
4. 2 Մարդին Շահինով:
5. 3 Յակոբ Կեազէյով:
6. 3 Ավաք Մարդիրոսով:
7. 3 ՀՍտեբան Չալըյիսաշով:
8. 3 ՀՍտեփան Տէր-Ոսկանով:
9. 3 Մանուէլ Շահեանով:
10. 3 Մահտեսի Միքայէլ Առաքելով:
11. 3 Մահտեսի Խաչերես մահտեսի Պողոսեան:
12. 3 Կարապետ Օվանեսով:
13. 3 Գասպար Բօթով:
14. 3 Վարդան Բօտով:

270
ՆԱՄԱԿ


թղթա. 6, վա. 30

ԿԱՐԻՆ

ՌՄԽԱ.-1792

ԳՐԻԶ՝ Նիկողայոս արդյ: ՍՏԱՅՈՂ՝ Յակոբ վրդ.:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, սնկանման լուսապատկերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,1x16: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 30+4:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ձախ եզրն անհարթ: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Է: Շնորհապալ է հանճարունակ, բաղջրաբարոյ եւ գերազնի եղբօրդ մերոյ սիրելոյ Յակոբ իմաստնաճոխ վարդապետիդ ողջոյն սրտակար տի՛ր փափաքանօք ընծայի կաթոգին տենչիւ – Սիրազրոշմ գիր նագեհուոյդ, զոր ի յուլիսի հնգուան գրեցեալ էր, ի յօգոստոսի ամսուան հասեալ

եղեւ առ մեզ... վերջապէս պաղատիմ, զի յիշեսցես զմեզ ի մաքուր մաղթանս, եւ այսու ամենայնիւ լե՛ր ողջ ի Տէր»: Կարինի նուիրակ Նիկողայոս արեղան գրում է Յակոբ վրդ-ին, որ նամակներն անպակաս անի, որ ինքը Կարինի նուիրակութիւնը չի վերջացրել «վասն սղութեանն, հարկապահանջութեանն եւ մանկակոտոր ցաւոյն եւ յայլ պատճառէ աղքատութեան ժողովրդականացն»: Պատարաստում է թեմն այցելելու՝ «ըստ հրամանի սրբազան վեհին»:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

1ա Ի սիրելութիւն Նակողայոս եւեթ աբեղայ, որ գրեցի ի ՌՄԽԱ (1792) թուոջս եւ [ի] սեպտեմբերի ԻԱ (21), ի քաղաքս Կարին:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻԻՆ

1ա Սիրելեացն մերոյ տիրացու Փիլիպպոսին, տիրացու Ներսիսին եւ տիրացու Գալուստին ողջոյն տացես յինէն:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1բ (սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԽԻԿՈՂԱՅՈՍ /ՎԱՐԴԱՊԵՏ /1225 (1776)»:

271
ՆԱՄԱԿ


թղթա. 6, վա. 31

ԹԻՖԼԻԶ

ՌՄԽԱ.-1792

ԳՐԻԶ՝ Սողոմոն Տէր-Շմատնեան: ՍՏԱՅՈՂ՝

Յակոբ վրդ.: ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ նժոյգ՞ (կիսաստ): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 24,2x17,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 26+4:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Գերապատի եւ սրբազան Յակոբ լիաշնորհ եւ խոհեմազարդ վարդապետ: Իմ հոգւոյս հատոր, սիրելի եւ ողորմած տէր – Յնժութեամբ մեծաւ առ ընկալայ ի 26-ըն յունվարի գերկուսին թուղթ քում սիրելութեան՝ ծրարեալ ի դեգտեմբերի ԻԳ (23) ին... Խնդրեմ ի սիրոյդ օրհնութեանդ թուղթ շնորհեսցես երբեմնապէս, եւ զոր ինչ մեզավայել ծառայութիւն ունիցես թարց խնայելոյ հրամայեսցես, որոց միշտ ցանկամ»: Սողոմոն Տէր-Շմատնեանը Թիֆլիզից գրում է Յակոբ վրդ-ին, որ յունվարի 26ի գրութիւնը ստացել է դեկտեմբերի 23ին: Նշում է, որ Գէորգ աղայի գրութիւնը եւ «սուճուխն» նոյնպէս ստացել է, բայց չի կարողացել Հաշտարխան ուղարկել, չնայած «մինչեւ ի Հաշտարխան եՄ (5000) դիան եւս խոստացայ, սակայն չառին յանձն»: Յու-

սադրում է, որ կողարկի, սակայն վստահ չէ, որ ամբողջապես տեղ կհասնի, «մանաւանդ ի Սօգ-դօկ անկարելի է, որ չբանան ի մէջ գումրուկին, եւ ի բանայն, իհարկէ, ըստ որում ուտելիք է ամենայնքն, մին-մին վեր առնելով մնալոց է ոչինչ»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա եւ մնամ տէրովեան քում միշտ բարեկամ եւ

մշտապատրաստ ծառայ՝ Սաղօմն Ստեփանի Տէր-Շմատնեան (կից՝ ստորագրութիւն): Ի ՌՄՆԱ (1792) թուիս եւ ի 22 փետրվարի, ի Թիֆլիզ:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

1ա Մեր տէր Գրիգորն եւ հայրս իմ՝ սիրալի եւ խոնարհ ողջոյն եւ սրբոյ աշոյղ համբոյր:

272

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վաւ. 32

ԵԱՇ (ՄՈՂԴՈՎԱ)

ՌՄՆԱ-1792

Հեղինակ՝ Յովսէփ արքեպս. Արղուսեան: ՍՏԱՅՈՂ՝ Գրիգոր վրդ.:

Թերթ՝ 4 էջ: Նիւթ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «Ը», «1789»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22,8x19,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 27, 25:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բոլոր էջերին այրուածքի հետքեր, հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-3 «Սիրելի որդի Գրիգոր աստուածիմաստ վարդապետ – Դեկտեմբերի (տեղը բաց)էն գիրդ, ընդ հաչերեսին ընկալայ ի Նախիջեւանու, եւ գիտացի զամենայն գրեցեալսդ... Տեղույս անցքն ի վարդան Պետրովիչն իմասցիս, սպասեմք գալստեան Անդրէասին եւ զորպիսածանոց թղթոյդ»: Յովսէփ արքեպս. Արղուսեանը գրութեամբ յայտնում է Գրիգոր վրդ-ին, որ կայսրուհուց դեռ տեղեկութիւն չի ստացել, ինքն ամսուայ (յունվարի) վերջին գնում է Մոսկուայ («զգիր քո ի Մօսկով առ պարոն Զաբար Իվանիչն յղեսցես»), ապա՝ Պետերբուրգ: Յաւ է յայտնում, որ իր տուած գումարը Սիմէոն Սերգեյիչից չի ստացել եւ չի կարողացել գի-

ղը գնել, իսկ «եթէ ի ձեռս մեր լինիցէր յաւիտեանս յաւիտենից, նոքա ոչինչ իրաց կարօտութիւն ունելոց չէին»: Յանձնարարում է գումարը վերցնել եւ շուսափոյթ հասցնել՝ պրն Մկրտումի իմացութեամբ: Վարդան Պետրովիչ Կարմիկովը եկել է «ի վերայ զալմուխացն, զոր կարգաւորեաց Պալ Սէրգէիչն ըստ խնդրոյ մերոյ», քանի որ խարջի պակասութիւն ունէր, «տասն թուման ասիգնացի ի մէնչ էառ»: Նշում է, որ այդ գումարը հատուցելուց յետոյ գրանցել, նոյնպէս եւ Փրիպպոսի տասն ոսկին եւ պրն Յովսէփի մօտ եղածը ստանալ եւ «յանուանէ գրեսցես ի դաւթարս քոյ»: Ճոթեղէնները, որ Գրիգորն իր հետ տարել էր, կարգադրում է իր ասած գներով վաճառել: Նշում է, որ միայն 500 գազ «գոնէտուր»ը, 200 գազ լաւ արխար եւ «գազէթքն» բաւական են Մայր Աթոռ առաքելու, որ իր վրայ պարտք չկուտակուի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

3 Զօրհնութիւն մեր առաքելով առ քեզ մնամ՝ Յովսէփ արքեպիսկոպոս: 1792, յունվարի 20, ի յեալ:

ՅԻՇՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

4 (Գրիգոր վրդ.) Պարոն Յոսէփիցն ստացայ Փիլիպպոսի ոսկին, որ էր քսան մին ոսկոյ գումար թէ՛ ծախսն, թէ՛ շահն, լեալ էր իննսունութն հազար երեսունհինգ դիան: 1792, յունիսի 12, ի Հաշտարխան:

ՆՇՈՒՄ՝ 4 «Ո՞ջ 7»:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 268, 276, 393, 396:


273
ԳՐՈՒԹԻՒՆ

թղթ. 6, վա. 33

ՌՄԽԱ.-1792

ԹԱՐԳՄԱՆԻՉ՝ Սիմեոն Տէր-Յովսէփեան: Հեղինակ՝ մհա. Եթար եւ Թինաթին Բոյրեր: ՍՏԱՅՈՂ՝ տէր Գրիգոր:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,8x17,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (մմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 23:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ թարգմանութիւն վրացերէնից, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Սոյն գրուիլինն ետուք տէր Շմաւոնէնց Զօհրապի դատերք՝ մահտեսի Եթարս եւ Թինաթինս... ոչ ոք ժամանակի չհիակվի, ոչ ոք անձանցէն, որ մեր կամաւ եմք տուեալ»: Տէր Շմաւոնէնց Զօհրապի դատարեւ մհա. Եթարը եւ Թինաթինը սոյն գրութիւնը տալիս են իրենց եղբայր տէր Գրիգորին եւ նրա բոլոր ժառանգներին առ այն, որ իրենց կամով թոյլ են տուել իրենց տան կողմից

դուռ բանալու, քանի որ «տունն եկեղեցւոյ գալաւանի կողմն դուռն չունէր»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ յուլիսի 1ին, 1792 թուին:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

- 1ա եւ՝ մահտեսի Եթարս սոյն գրութեանս հաճեալ եմ. Աստուած ուրախութեամբ վայելումն տացէ:
- 1ա եւ՝ Թինաթինս ղաբուլ եմ:
- 1ա Վերոյ իմ եղբոր որդւոց մահտեսի Եթարի եւ Թինաթինի խօսկօլն վկայեմ՝ տէր Շմաւոնի որդի Ստեփան:
- 1ա Իմ հօրեղբոր դատերց հաճութեամբն այս բանիս վկայեմ՝ տէր Շմաւոնէնց Յօհանի որդի Շմաւոն:
- 1ա Իմ քերց՝ մահտեսի Եթարի եւ Թինաթինի հաճութեամբն վկայեմ՝ Յօհանի որդի Աբէլ:
- 1ա Իմ մօրեղբոր դատերց ղաբուլութեամբն վկայեմ՝ աղայ Փիթոյեանին:
- 1ա Վերոյիշեալ մահտեսի Եթարի եւ Թինաթինի խնդրանօք գրեցի եւ վկայեմ՝ նուաստ տիրացու Գրիգոր Տէր-Ստեփանեան:
- 1ա Վրացերէն գրեալ հեղինակէն հայերէն օրինակեցի՝ նուաստ մահտեսի տէր Սիմեոն Տէր-Յովսէփեան Մօղնու եկեղեցւոյ:

274


ՅՈՒՅԱԿ

թղթ. 6, վա. 34

ՌՄԽԱ.-1792

[ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ]

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «P'E»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16,8x11: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրանման բոլորգիր (մմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 11:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Ի Հաշտարխանու եկե[ա]լ սնտուկին դու[ր]սեկեալ իրեն, ի ՌՄԽԱ (1792) թուին, ի նոյեմբերի Ե (5). այս է, որ ի յարտաճոյ դարբարին է – Ա (1) դիպայ շուրջառ... Զ (6) հրայ գմուս՝ տէր Ստեփանի յղածն»: Պարունակում է Հաշտարխանից ստացուած իրերի ցուցակը (շուրջառ, փորուրար, վակաս, թուլում սնչապ եւ այլն):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տէ՛ս Բովանդակութեան սկզբում:

275

ԳՐՈՒԹԻՒՆ

թղթ. 6, վա. 35

ԵԱՍԻ (ՄԱԼԴՈՎԱ)

ՌՄԽԱ.-1792

Հեղինակ՝ Միխայիլո Կախով: ՍՏԱՅՈՂ՝ [Յովսէփ արքեպս. Արղուսթեան]:

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԹԵՐԹ՝ 2 (էջակալուած 1՝ հաշուի շառնելով չգրուած էջերը). չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «D&GBLAUW», լուսապատկերով՝ թագակիր ռճաւոր զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22,8x18,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 16:

1ա «Преосвященнейший владыко, милостивый государь мой – Находящагося при ва-шем преосвященстве подпоручика Якова Аврамова... милостивый государь мой ва-шего преосвященства»: Միխայիլո Կախովը տեղեկացնում է [Յովսէփ Արղուսթեանին], որ «պառպորտաչիկ» Յակով Ավրամովին պահել է իր մօտ, քանի որ նրան վերաբերող գործ կայ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Пакорнейший слуга Михаилo Кахов. 12²⁰ генваря, 1792 года, Яссы.



Նմուշ 1ա

276

ԳՐՈՒԹԻՒՆ

թղթ. 6, վա. 36


ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՌՄԽԲ.-1793

ԳԻԻԶ՝ Յովսէփ արքեպիս. Արղուսթեան: ՍՏԱՅՈՂ՝ Գրիգոր վրդ.:

ցայ... Ա՛խ, ի՞նչ գրեմ քեզ, ուր ղրկեցէր Յովհաննէսն զի՛նչ արարից, ո՛ւմ խնդրեցից, միթէ այժմ քնեալ կայ»: Յովսէփ արքեպս. Արղուսթեանը գրում է Գրիգոր վրդ-ին, որ իրեն նշանակել են 200 թուման ռոնիկ եւ 160 հանապարհածախս. թագուհին հրամայել է գնալ Գրիգորիուպօլ տնաշինութեան կարգ անելու: Նշում է, որ ամսի 30ին դուրս է գալու Մոսկուայի վրայով դեպի նոր Նախիջեան, ուստի կարգադրում է «կուշր Մօսէն իր որդւովն եւ ձիանցովն առաքեալ շուտով ի Նախիջեան»: Յաւ է յայտնում ողորմելի տէր Յովհանի համար եւ կարգադրում է. «պատուիրեսցես քահանայիցն զհասն նորա եւ զբաժին, ըստ օրինի, տացեն նմա առանց զրկանաց»: Տեղեկացնում է, որ Ռուշանի որդու գրութիւնը ցոյց է տուել նրանց «մայեցուն»՝ Թաթիղովին, եւ նրա խնդրանքով հաստատել եւ վկայական է տուել: Աւելացնում է. «Ի սոյն յառաջակայ յունվարին աստաֆ լինելոց է հաւաստի. ենարալ Բաբառիկին կայր, նորա ձեռովն էի խնդրեալ, միջնորդութեամբ Կատարինէ Իվանով-

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2աբ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «GR», լուսապատկերով՝ թագակիր ռճաւոր զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22,8x19: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 29, 21:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Սիրելի որդի Գրիգոր վարդապետ – Յապրիլի 26էն գիրդ ընկալեալ՝ զիտացի զուրախութիւն սրտի քոյ եւ հասարակութեանն, եւ շնորհակալե-

նին»: Իսկ սանահայր Մարգարի գործով նշում է, որ դժուար է. «թէեւ հազար թուման տան, լինելոց բան չէ, հոգիս ելանէ... չգիտեմ ուր խնդրելն, զի քնեազ չկայ ի միջի»: Խնդրում է Սիմօն Սերգեյիչից վերցնել իր կարմիր թեւանոցը եւ Յովհաննէսի հետ ուղարկել: Կարգադրում է. «Կիրք Սիմօնի յաղագս գիտացի որքան դրամ խնդրելն յայս նեղ ժամանակի, միանգամ տուր եւ զերծիր»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ Յովսէփ արքեպիսկոպոս: 1793, մայիսի 17, ի Պետրպօլ:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

1բ Սիրելոյդ իմոյ Գրիգոր խոհեմ վարդապետիդ ողջոյն սիրով տամ, գոհ եմ զԱստուծոյ, մինչ լսեմ գոլ յառողջութեան պահեսցէ Տէր միշտ յայդպիսում: Ներես չգրութեանս առ սէրդ, ըստ որում կուտեալ երեւին ի վերայ իմ գրութիւնք սրբազան հօրս մերոյ եւ այլն: Խաչիկ Առաքելեանի թուղթն ի յինքն հատուցես ուր եւ իցէ: Աբրահամ վարդապետ:

ՆՇՈՒՄ՝ 2բ «№ 14»:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 268, 272, 393, 396:

277

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 6, վա. 37

ՀԱՇՏԱՐԻԱՆ

ՌՄԻԲ-1793

Գրիգ՝ Գրիգոր արք: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպ. Արղուսեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 3-4: ՆԻԻԹ՝ բաց կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «5 ծ», «1 6», «Ծ»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23x19,4: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նտրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 23, 25:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-2 «Սրբազնագունեղ հայր եւ իմ խնամածու բարեբար աէր – Մարտի 18էն գրեցեալ տիրական թուղթդ ընկալեալ սոյն ամսոյ 11ին՝ ուրախ եղէ տեղեկացեալ զառ ողջութենէ զտէրունական եւ աշխարհօգուտ անձինդ... Քանի պաքս մտեալ եմ քոյին սուրբ աղօթիւքն առողջ եմ եւ տինջ»: Հաշտարխանից Գրիգոր արքեղան Յովսէփ արքեպ. Արղութեանին յայտնում է Մաթէոս Գալստեանի

գալուստի մասին, «որ լաւ միջոցի է հասեալ, որ ձուկն եւ խայվարն յարգմամբ ընդունի, զի լինի առ մեծամեծ իշխանսն, որովհետեւ ի մսոյ հրածարեալքն՝ զայն ճաշակէն»: Աւելացնում է նաեւ, որ Ղզլարից սանահայր Մարգարից ստացուած «շահմայիքն» նոյնութեամբ ուղարկել է սրբազանին, իսկ Մարգարին գրել է պակասի մասին եւ խնդրել տիրացու Յովհաննէսի միջոցով ուղարկել: Ոսկին Մոսկուայից հասել է իրեն, երբ ինքը փետրուարի 7ին դրամն ուղարկել էր Աւետ Գալուստիչին. «Յի մէկն՝ 4 հազար երկու հարիւր երեսուն դիանով. մեք այդ վնասն Աստուծով Սիմօն Սերկէյիչէն ըստանամք», ուստի պատրաստում է մօտակայ օրերին այն ուղարկել կրղկսին: Տեղեկացնում է նաեւ, որ Սիմօն Սերգեյիչն արդարացուելով՝ «կարգեցաւ կուպեռնաթին իւր տեղն»: Շնորհատրում է Քրիստոսի սուրբ Յարութեան տօնը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2 Մեզ հարցանօղաց սիրով ողջոյնս առաքելով մնամ վասն ձերոյ բարձր սրբազնութեանն պատրաստական ծառայ եւ յետին յաւել[ա]ծու՝ Գրիգոր արքեղայ: 1793, ապրիլի 12, ի Հաշտարխան:

Ծնթ. Տես նաեւ ա՛ստ №№ 290, 292:

278
ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 6, վա. 38

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ

ՌՄԽԲ-1793

ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպ. Արղութեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «JAMWSIA», լուսապատկերով՝ շրջանաձև ցանկապատ, ներսում զինուորական հանդերձով միապետը՝ գաազանը ձեռքին, դիմացն առիժ՝ թուրը ձեռքին: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 32,6x120,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 41, 37, 38:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաարար. հին նորոգմամբ:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1-3 «Աստուածաբեալ սրբազան հայր եւ մեր ողորմածագունեղ տէր — Զառ ի բարձր սրբազնութենէդ ի յապրիլի երեքին զգրեցեալն զբարտեյ ուրախութեան եւ զպարէտն աւետեաց մեծաւ գործնակութեամբ ի Տէր ընկալաք ի նոյն ամսոյ քսան եւ հնգին... զոր ինչ պատուիրեալ էր բարձր սրբազնութիւնդ վասն չորից կնիշկայից, Աստուծով ըստ հրամանիդ պատրաստ արարեալ՝ յըղեցից առ Եկեօր Գարիլի իսարսէվանովն»: Նոր նախիջեալնի մի խումբ հայեր շնորհատրում են Յովսէփ արքեպ. Արղութեանին, որ կայսրունին նրան «պսակեալ» է նոր պարգետով, եւ շատ են ուրախացել: Նկարագրում են յաջորդ օրը, ապրիլի 26ին, նոր

նախիջեալնի Սուրբ Լուսաւորիչ Աագ եկեղեցում կատարած հանդիսութիւնը, «որով ամենեքեան փառս փառաւորչին ամենայնի Աստուծոյ լիաբերան մատուցաք, եւ միմեանց աւետաւորեցմամբ զպսակաւորելդ եւ զբարձր իշխանութիւն վեհաստիճան սրբազնութեանդ շնորհաւորեցաք»: Այնուհետեւ նշում են հրապարակի հանդիսութեան, առաջնորդարանում նաշկերոյթի, քննանօթների համագարկի մասի:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

3 Մնամք ամենապատրաստ խոնարհ ծառայք բարձր սրբազնութեանդ: 1793, մայիսի 3ին, ի նոր նախիջեալն:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 3 ԸՍտէբան Զալշխուշօլ:
2. 3 ԸՍտեփան Տէր-Ոսկանօլ:
3. 3 Դանիէլ Խօհաեան:
4. 3 Գասպար Տէր-Մարտիրոսեան:
5. 3 Գասպար Բամօսօլ:
6. 3 Մահտեսի Խաչերես մահտեսի Պողոսեան:
7. 3 Մկրտիչ Պետրոսեան:
8. 3 Մարդին Շահինօլ:
9. 3 Յակոբ Կիզէլեան:
10. 3 Ավաք Մարտիրոսեան:
11. 3 Եղիազար Պապասինօլ:

ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

4 (նուագիր) Շնորհաւորութիւն զՍուրբ Խաչին եւ մանթիին ի հասարակութեանն Նախիջեալնու ի Պետրպօլք, ընկալաք 1793, յունիսի 20:

279
ԳՐՈՒԹԻՒՆ

թղթ. 6, վա. 39


ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՌՄԽԲ-1793

ԳՐԻԶ՝ կնեազ Դաւիթ Ղօվրանով: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպ. Արղութեան:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր ոճատր զի-

նանշան (կիսատ): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,8x18,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուարանման բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 23:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Բարձր արագնագունեղ հովիւ. ողորմած տէր – Աղօտացեալ փառք հայկազանց այժմ կրկին նոր փայլմամբ ի ձեռն իմաստնագոյն հովուապետութեան ձերոյ հիացոյց յընթացս ներկայ ժամակիս... Ընկալ բարձր սրբազնութեան ձեր, թէ երգեցի տկար ոտիւք, այլ մեծ է ազգն ձեր, մեծ է փոփո-

խութիւնն հայկազանց, եւ մեծ են գործառնութիւնք եւ աշխատանք ձեր»: Կնեազ Դաւիթ Ղօվբանովը գովարանում է Յովսէփ արՖեպս. Արղուժեանին, որ Հայ ազգը նրա շնորհիւ բարգաւաճում է: Ուղարկում է նրան իր նուիրած ռուսերէն գրած երգը՝ ասելով. «այժմ համարձակեցայ լցուցանել զիմս իղձ, եւ տկար շափաբանութեամբ վճարել զպարտաւորութիւն ի բարբառս ռուստաց, զոր ոչ միայն զձեզ որդիացելւոյդ, այլեւ զարժանաւոր որդի անուանակոչէ»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Ձերոյ բարձր սրբազնութեանն, ողորմածի տեսանդ մտերիմ ծառայ՝ Կնեազ Դաւիթ Ղօվբանով (Ղօվբանով բառին թոյլ զի՞մ քաշած, այլ ձեռնով գրած՝ Չօլազով):

ՕՐԻՆԱԿՔ ԳՐՈՒԹԵԱՆՑ

(բաղկացած է երկու վաւերագրից)


ՎԱԻԵՐԱԳԻՐ Ա

թղթայ. 6, վաւ. 40 I

ՌՄԽԲ-ՌՄԽԵ-1793-1796

ՀԵՂԻՆԱԿ՝ Ղուկաս Ա Կարնեցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 50 (մասն է կազմել մի ամբողջական գործի, առաջին եւ վերջին թերթերին ունի Բ պրակահամարը: Սկսում է գրչի նշանակած ՂԷ (97) էջակալումից, աւարտում ճՂԲ (192) էջակալմամբ). չգրուած՝ 1աք, 50աք: ՊՐԱԿ՝ Ա.Ճ.50: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «TRE IVNE», «LG», լուսապատկերով՝ եռամանիկ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 30x21: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուարգիր (նմուշ 2ա): ՏՈՂ՝ տարբեր:



Նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերի եզրերը վնասուած, անկազմ, ամբողջը մէկ թելակարով:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Պարունակում է Ղուկաս Ա Կարնեցի կթղկսի 1793-1796 թթ. թղթերի եւ կոնդակների սեւագրութիւնները.

1. 2ա Թուղթ օրհնութեան ի վերայ Աստապատու ժողովրդեանն, զորս ի զուր բանադրեալ էր Սրբոյ Երուսաղէմի նուիրակ Պօղոս [վարդա]-պետն. ուստի եւ նոքա բողոքեալ էին առ սրբազանն – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ հոգեզուարճ շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղույս... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ ի յունիսի (տեղը բաց):

2. 2բ-3ա Թուղթ ի մեծն Պօլիս առ մահտեսի Նիկողոյոս ամիրայն մահտեսի Եղիազարեան. ի պատասխանի երկուց թղթոցն, եւ ի շնորհակալութիւն վասն յղեալ նուիրացն ընդ եղբօր որդույն, եւ վասն այլ իրաց եւս բան – Յորմէ ժամանեցէ թուղթ քրիստոսաւանդ սուրբ ողջունի եւ նոյնապատուէր սիրոյ՝ հանդերձ հոգետած շնորհիւ սրբոյ իջման տեղույս նորին... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ ի յունիսի ժԲ (12), ի յերկնահանգէտ Աթոռս Սուրբ էջմիածին:

3. 3ա Սիրով եւ օրհնութեամբ, եւ պահպանողական շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղույս ողջոյն տամբ բարետոհմիկ որդույն քո եւ մերոյ, Տէրամբ

զօրացեալ Գրիգոր Աղազատէին եւ դստերաց քոյ՝ Մարիամին եւ Կատարինէին, եւ այլ ընտանեացդ ամենեցուն: Որք հանդերձ քեւ լիցին յանձնեցեալք ի բարեգթութիւնս տեան Աստուծոյ. ամէն:

4. 3աբ Թուղթ ի յևուուղջուղ առ մահտեսի Նագարն. վասն Փիլիպպոսի կին Ռամեցի հանգուցեալ Շէհրիբարի կայիցն, որոյ աղագաւ ի յազգայնոյ նորին վէժիլլամայ էին խնդրեալ, եւ յղեցաւ. եւ վասն հոգեբաժնի նորին, զոր տալոց էին Սրբոյ Աթոռոյս – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ հոգեպարար շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղույս... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ ի յուլիսի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

5. 4ա Թուղթ առ Պրուսայու առաջնորդ Պօղոս վարդապետն. ի պատասխանի թղթոյն, եւ ի շնորհակալութիւն վասն ընծային յղելոյ – Յորմէ հայրական սիրով եւ օրհնութեամբ, քրիստոսաձիր ողջունիւ խաղաղականաւ, եւ Միածնաէջ սրբոյ տեղույս առատածաւալ եւ զօրացուցիչ շնորհիւն գիտասջի՛ր... Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԲ (1793) եւ ի յուլիսի ժԲ (12), ի բարձրագահ Աթոռս Սուրբ էջմիածին:

6. 4բ Թուղթ առ Մշու Սուրբ Յովհաննու վանացն առաջնորդ Աստուածատուր վարդապետն. ի պատասխանի թղթոյն, եւ յաղագս նուիրակին մերոյ թալանեցմանն ի վիճակին սորա, եւ այլ ինչ իրաց – Յորմէ հայրական սիրով եւ օրհնութեամբ, եւ քրիստոսաձիր սուրբ ողջունիւ ծանի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ ի յուլիսի ժԳ (13), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

7. 5աբ Թուղթ առ Սրբոյն Թովմայի առաքելոյ վանիցն առաջնորդ Թովմաս վարդապետն. ի պատասխանի թղթոյ նորին, առ եւ ի յուղարկել զկիսն Մկրտչին գնալ ի Պօլիս առ այրն – Յորմէ քրիստոսաձիր սուրբ ողջունիւ, ճշմարիտ սիրով եւ հոգեւոր օրհնութեամբ, եւ Միածնաէջ սրբոյ տեղույս առատածաւալ շնորհիւն գիտասջի՛ր... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ ի յուլիսի ժԸ (18), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

8. 5բ-6ա Թուղթ ի Գօրի առ տէր Ղազարն. հարկ, զի զկոնդակն, զոր ի ՌՄԼԳ (1784) թուոյ մարտի ամսոջն գրեալ էաք վասն Սուրբ Ստեփաննոս եկեղեցոյն, առեալ եկեցէ ընդ Հաղբատայ առաջնորդ Դափթ վարդապետին, մինչնա եւս գալոց էր – Յորմէ սիրով եւ օրհնութեամբ ծանի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր եւ հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս տէր Ղազար խոհեմամիտ քահանայ... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ յօ-

գոստոսի (տեղը բաց), ի բարձրագահ Աթոռս Սուրբ էջմիածին:

9. 6աբ Թուղթ ի Կարին առ Գօգօրեան մահտեսի Կարապետի հանգուցելոյ որդին. վասն հոգեբաժնի հօրն շնորհակալութիւն եւ միամտութիւն – Յորմէ ժամանեցէ թուղթ ճշմարիտ սիրոյ, խաղաղարար ողջունի եւ բազմարդիւն օրհնութեան՝ հանդերձ հոգեպարար շնորհօք եւ զօրութեամբք Միածնաէջ սրբոյ տեղույս... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ ի օգոստոսի (տեղը բաց), ի յերկնաքատակ Աթոռս Սուրբ էջմիածին:

10. 6բ-7ա Դարձեալ ի Կարին առ տէր Մկրտիչն եւ Բաղտեանց Կարապետն, որք ըզգապանի հանգուցեալ Այտինօղլի Կարապետի կտակն տուեալ էին գործակալին Սրբոյ Աթոռոյս պարոն Հայրապետին – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ հոգեզուարճ շնորհիւ սրբոյ իջման տեղույս Քրիստոսի... Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԲ (1793) եւ յօգոստոսի (տեղը բաց), ի յերկնաքատակ Աթոռս Սուրբ էջմիածին:

11. 7աբ Թուղթ ի Սպարթա առ Յովաննէս աղայն եւ առ նորին որդի Պետրոս աղայն, որ գանձապետ էր կարգեցեալ Սրբոյ Աթոռոյս. շնորհակալութիւն վասն նուիրակին, եւ հաստատութիւն գանձապետութեանն – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց ի վերայ սիրելույդ մերոյ եւ հարազատ որդույդ Սրբոյ Աթոռոյս, բարեպաշտ եւ մեծահաւատ Յովաննէս աղայիդ... Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԲ (1793) եւ յօգոստոսի (տեղը բաց), ի բարձրագահ Աթոռս Սուրբ էջմիածին:

12. 7բ-8ա Թուղթ ի Բաղէշ առ Ամրուօլու վանաց առաջնորդ Զաֆարիա վարդապետն. ի պատասխանի թղթոյն, որ վասն Բաղիշու խանի վանառականի ի Թալին կողոպտեցեալ ընչիցն – Յորմէ սիրով, եւ օրհնութեամբ, եւ ողջունիւ սրբով ծանի՛ր, սիրելիդ մեր Զաֆարիա ձերունազարդ վարդապետ... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ ի սեպտեմբերի ժէ (17), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

13. 8բ-9բ Թուղթ առ Թիֆլիզու առաջնորդ Մարտիրոս վարդապետն եւ առ տէր Ղազարն. ի պատասխանի Բ (2) թղթոց նոցա – Յորմէ սիրով, եւ օրհնութեամբ, եւ քրիստոսական ողջունիւ ծաներո՛ւք, սիրելի եւ հոգեւոր որդիք մեր եւ հարազատ զաւակք Սրբոյ Աթոռոյս Մարտիրոս հանճարափայլ վարդապետ եւ տէր Ղազար խոհեմամիտ քահանայ... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ ի սեպտեմբերի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

14. 9բ-10ա Թուղթ ի Զմիրունիա առ Կեօրտէզցի

պարոն Գէորգն. շնորհակալութիւն եւ միամտութիւն վասն արդեանց գանձանակին Սուրբ Գեղարդայ եւ Խորվիրապայ, զոր յանձնեալ էր Իսահակ վարդապետին – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց ի վերայ իսկապէս սիրելոյդ մերոյ եւ հարազատ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս, հաւատարիմ գանձապետ, բարեպաշտ եւ մեծահաւատ պարոն Գէորգիդ... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ ի հոկտեմբերի Ժ (10), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

15. 10ա Թուոյթ ի Դրխաղան առ պարոն Պետրոսն. միամտութիւն վասն Սուրբ Խորվիրապայ գանձանակի արդեանցն, զոր հասուցեալ էր նուիրակ եւ առաջնորդ Իսահակ վարդապետին – Յորմէ ”(ի վերին թղթոյդ) որդւոյդ Սրբոյ Աթոռոյս, բարեպաշտ եւ մեծահաւատ եւ խոհական պարոն Պետրոսիդ... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ ի հոկտեմբերի Ժ (10), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

16. 10բ-1ա Թուոյթ առ Ախիջան աղայն ի Վան. ի պատասխանի թղթոյն ի սեպտեմբերի ԻԸ (28) գրեցելոյ, ընդ Սիմէօն վարդապետին [(Որ զմատաղացու ոչխարսն երեւ) վասն ոմանց իրաց – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան հանդերձ երկնածիր մխիթարութեամբ եւ տրտմափարար շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ ի հոկտեմբերի ԺԷ (17), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

17. 11աբ Թուոյթ առ արքայն Վրաց Հերակլէս. շնորհակալութիւն վասն յղեալ գինւոյն՝ միջնորդութեամբ մէլիք Աւետիքին (թէեւ ո՛չ թարց պատնառի) – Յորմէ ժամանեցէ թուղթ ճշմարիտ սիրոյ եւ կարօտի, քրիստոսածիր սուրբ ողջունի եւ հոգեւոր օրհնութեան՝ հանդերձ հոգեզուարճ շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս... Գրեցաւ յամի Փրկչին 1793 եւ ի հոկտեմբերի (տեղը բաց), ի լուսանկար Աթոռս Սուրբ էջմիածին:

18. 12աբ Թուոյթ առ մասրաֆ խոջայ Յակոբն, եւ Հանիբաբայն, եւ պարոն Հայրապետն ի Կարին. ի պատասխանի թղթոցն նոցա վասն ի Սեւան առաքեցեալ Սարգիս վարդապետին սարտուցելոյ – Յորմէ սիրով եւ օրհնութեամբ, քրիստոսածիր սուրբ ողջունի, եւ սրբոյ իջման տեղւոյս Նորին մշտածաւալ շնորհիւ ծանուցումն լիցի՝ ազնիւ սիրելեացդ մերոց եւ հարազատ որդւոցդ Սրբոյ Աթոռոյս, Տեարբ օրհնեցելոց եւ խոհականաց, պերճապատուից եւ հանճարեղաց մասրաֆ Յակոբ ամիրայիդ, Հանիբաբայ կոչեցեալ մահտեսի Յակոբ աղայիդ եւ գործակալիդ մերոյ պարոն Հայրապետիդ... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս մերում եւ ի հոկտեմբերի

րի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

19. 12բ-3ա Թուոյթ առ Չէլիկեան մահուտսի Կարապետն յիգմիր. ի պատասխանի երկուց թղթոցն վասն մահուան Իսահակ վարդապետին, եւ զնոր առաջնորդ խնդրել – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ աստուածապարգեւ մխիթարութեամբ եւ սփոփանօք, եւ պահպանողական շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս... Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԲ (1793) եւ ի նոյեմբերի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

20. 13ա Միրով բազմաւ եւ օրհնութեամբ ողջո՛յն տամբ հոգեւոր որդւոց մերոց սիրեցելոց, բարեպաշտից եւ խոհեմից, հաւատարիմ որդւոյն քո մահտեսի Սարգսին, եւ մահտեսի Գէորգին, եւ պարոն Կիրակոսին, եւ տիրացու Պօղոսին եւ այլոց ամենեցուն, որք քո են՝ յանձնելով զամենեսեան ի պահպանութիւն հանրակեցոյց աջոյ Տեառն տէրանց:

21. 13բ-4ա Կոնդակ նուիրակութեան ի վերայ Ջուղայու ընդ (տեղը բաց) վարդապետին, որ զընծայս տանէր ի Թարվէզ եկեալ Սուլէյման խան սարաարին առաքելոյ ի շահ կոչեցեալ աղայ Մահմատ խանէն – Հաւատացելոցդ ի Քրիստոս, որք բնակեալ կայք յաստուածախնամ քաղաքդ Նոր Ջուղա եւ ի շրջակայ գաւառոց ի Հերի, ի Կեանտիման, ի Բուրվարի, ի Լընջան, ի Համատան, եւ ի Քաշան, նաեւ ի Ղում, ի Ղազպին... Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԲ (1793) եւ ի նոյեմբերի, առ դրան լուսակառոյց եւ երկնահանգէտ մեծի Աթոռոյս Սրբոյ էջմիածնի:

22. 14բ Թուոյթ առ Մարգար աղայն ի Բաղդաս. մխիթարութիւն վասն հիւանդութեանն, եւ յիշումն գործավնար նուիրակ եփրեմ վարդապետի եղմանն ի Բասրա – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ պահպանողական շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս... Գրեցաւ ի ՌՄԽԲ (1793) թուոջս եւ ի նոյեմբերի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

23. 15ա Թուոյթ ի Խօյ առ առաջնորդն եւ ժողովրդեանսն. վասն բանի սրբոյ վանիցն – Յորմէ սիրով, եւ օրհնութեամբ, եւ քրիստոսական սուրբ ողջունի, եւ պահպանողական շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս Նորին ծանուցո՛ւմն լիցի... Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԲ (1793) եւ ի դեկտեմբերի ամսոյս (տեղը բաց), ի լուսակառոյց Աթոռս Սուրբ էջմիածին:

24. 15բ Թուոյթ ի Շուպավէր առ Թաղէոս վարդապետն. վասն Ուլուխանի բեռն, որ ի Կարին առ տանիկ ոմն գերի էր – Յորմէ սիրով, եւ օրհնութեամբ, եւ քրիստոսական սուրբ ողջունի ծանի՛ր,

սիրելի եւ հոգեւոր որդի մեր եւ հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս Թաղէտ խորհեմամիտ վարդապետ... Գրեցաւ ի ՌՄԽԳ (1793) թուոջս եւ ի դեկտեմբերի ԺԳ (13), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

25. 16ա Թուղթ ի Վան առ Ախիջան աղայն. վասն բանադրանաց Մահմուտանու շառաջնորդին, եւ յիշումն յառաջ խնդրեցեալ քանկնելոյն – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց ի վերայ ազնիւ սիրելւոյդ մերոյ եւ հաւատարիմ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս, քրիստոսասէր եւ բարեպաշտ, ազնուական եւ ճոխապատիւ Ախիջան աղայիդ... զի ի տարակուսանաց աստի զերծ գտանիցեմք եւ զբարեջան սիրելւոյդ շնորհակալ լիցուք օրհնութեամբ:

26. 16բ-7ա Թուղթ ի Հալէպ առ Փառակեցի պարոն Յարութինն Տրդատեան. ի պատասխանի երկու թղթոց նորա, որոց ընդ յետոյն յղեալ էր զԲասրայու Յովաննէի յղեալ թուղթսն – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ հոգեզուարճ շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս... Գրեցաւ ի ՌՄԽԳ (1794) թուոջս եւ ի յունվարի (տեղը բաց), ի լուսակառոյց Աթոռս Սուրբ էջմիածին:

27. 17ա-8ա Թուղթ ի յԱդրիանուպոլիս առ հանգուցեալ մահտեսի Յովաննէս ամիրայի որդիսն մահտեսի Գրիգոր եւ մահտեսի Մկրտիչ ամիրայսն. վասն հոգեբաժնի հօրն իւրեանց, ԵՃ (500) դուռուշին եւ արծաթեալ խաչին, այլեւ վասն արդեանց գանձանակին, զոր փեսայն իւրեանց վատնեալ գոլով՝ ինճեանճ էին վճարեալ ի կայից իւրեանց – Յորմէ ժամանեցէ թուղթ քրիստոսաձիր ողջունի եւ սիրոյ եւ հոգեւոր օրհնութեան՝ հանդերձ պահպանողական շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս... Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԳ (1794) եւ ի (տեղը բաց), ի բարձրագահ Աթոռս Սուրբ էջմիածին:

28. 18աբ Կոնդակ ի վերայ Դումդափով ժողովրդեանն. վասն արդեանց գանձանակին՝ ձեռամբ Մինաս վարդապետի – (սկիզբն է՝ ի փոքր տետրն, յերեսն 413, իսկ մէջն է՝ ի Փիլիպպոսի տետրն, յերեսն 102) որք բնակեալ կայք ի յաստուածակեցոյց եւ ի հռչակածաւալ մայրաքաղաքդ մեծ՝ ի Կոստանդինուպոլիս... Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԳ (1794) եւ ի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

29. 18բ Կոնդակ վասն արդեանց գանձանակի ի վերայ Դալաթիոյ ժողովրդեանն – ի Կոստանդինուպոլիս, ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչի հրաշագարդ եկեղեցւոյդ... ՌՄԽԳ (1794) եւ ի (տեղը բաց):

30. 18բ-9ա Կոնդակ ի վերայ Պալաթու Սուրբ

Հրեշտակապետ եկեղեցւոյ ժողովրդեանն – [ի] Կոստանդինուպոլիս, ընդ հովանեաւ Սրբոց Հրեշտակապետաց հրաշագարդ եկեղեցւոյդ, որ ի Պալաթ... ի ՌՄԽԳ (1794) եւ ի (տեղը բաց):

31. 19ա Կոնդակ ի վերայ Խաագեղու. վասն արդեանց գանձանակին – Բնակեալ կայք ի Խաագեղ, որ հուպ ի Կոստանդինուպոլիս... ի ՌՄԽԳ (1794) եւ ի (տեղը բաց):

32. 19ա-20բ Թուղթ ի յԵարէնէ առ Բենկանցի մահտեսի Ստեփաննոս ամիրայն. ի պատասխանի թղթոյն, եւ ի շնորհակալութիւն վասն յղեալ ժամացացն յանուն Սրբոյ Աթոռոյս եւ վանորէիցն, եւ սրբագան [վեհապետ]ին եւ ոմանց վարդապետաց – Յորմէ ժամանեցէ թուղթ ճշմարիտ սիրոյ, խաղաղարար սուրբ ողջունի եւ հոգեւոր օրհնութեան՝ հանդերձ պահպանողական շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս... Գրեցաւ ի ՌՄԽԳ (1794) թուոջս եւ ի յունիսի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

33. 20բ Սիրով մեծաւ ողջոյն եւ օրհնութիւնս առաքեմք բարեպաշտ եւ օրհնեալ մահտեսի Խաչատուրին... զորս եւ յանձն առնեմք շնորհաց ողորմութեանն Աստուծոյ, կալ մնալ խաղաղութեամբ եւ բարեյաջողութեամբ:

34. 20բ-1ա Թուղթ յԵարէնէ առ մահտեսի Գրիգոր եւ մահտեսի Մկրտիչ ամիրայսն. ի պատասխանի թղթոյն նոցա, եւ շնորհակալութիւն վասն յղեալ առոցն – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ հոգեզուարճ շնորհիւ սրբոյ տեղւոյս իջման բանին Միածնի... Գրեցաւ ի ՌՄԽԳ (1794) թուոջս եւ ի յունիսի էլն, ի Սուրբ Աթոռս էջմիածին:

35. 21բ-2ա Թուղթ առ Պրոսայու առաջնորդ Պօղոս վարդապետն՝ ընդ ուխտատուացն եկելոց անտի. մխիթարութիւն վասն դիպուածոյն, զոր անցուցեալ էին սրիկայ՛ տեղոյն ընդ եկեղեցին մեր, եւ վասն հիւանդութեանն իւրոյ – Յորմէ հայրական սիրով եւ օրհնութեամբ, քրիստոսաձիր սուրբ ողջունիւ, եւ Նոյնաէջ սրբոյ տեղւոյս սփոփարար եւ զօրացուցիչ շնորհիւ գիտասջի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր եւ հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս, Պօղոս առաքինագարդ եւ զգաստամիտ վարդապետ... Գրեցաւ ի ՌՄԽԳ (1794) թուոջս եւ ի յունիսի էլն, ի Սուրբ Աթոռս էջմիածին:

36. 22ա Սիրով մեծաւ եւ կարօտիւ, աստուածային երկնառատ մխիթարութեամբն, եւ վշտափարար շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի, ողջոյն եւ օրհնութիւնս տամք... յանձնեցեալք ի խնամս եւ յողորմութիւնս ամենաբարերարին Աստուծոյ,

կալ մնալ խաղաղութեամբ եւ յաջողութեամբ գործոց բարեաց. ամէն:

37. 22աբ Թուղթ մխիթարութեան ի Պետրպօլ ան տիրացու պարոն Ստեփաննոսն. վասն մահուան Իսահակ վարդապետին առաջնորդին Զմիւռնիայու – Յորմէ ժամանեցէ թուղթ ճշմարիտ սիրոյ, քրիստոսաձիր սուրբ ողջունի եւ հոգեւոր օրհնութեան հանդերձ երկնաձիր մխիթարութեամբ եւ սփոփանօք, եւ տրտմափարար շնորհի Միածնաէջ սրբոյ տեղույս... Գրեցաւ յամի Տեառն 1794 եւ ի յուլիսի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

38. 23աբ Օրինակ վկայականի եպիսկոպոսութեան, որ առեալ եղև Կեսարացի Պետրոս վարդապետին մինչ ի Պօլսոյ պատրիարք Զաֆարիայ վարդապետէն առաջեցեալ, ձեռնադրեցաւ եպիսկոպոս ընդ խնդրոյ նորին – Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Դուկաս կաթողիկոս ամենայն Հայոց, եւ ծայրագոյն պատրիարքս առաքելականի եկեղեցույս Քրիստոսի... Գրեցաւ վկայական նամակս ի լուսանկար Աթոռս Սուրբ էջմիածին:

39. 23բ-4ա Կոնդակ ժողովարարութեան վասն հապաղ Գէորգ սարկաւազին, որ եկեալ յայս կողմունս յովսա, եւ ի դառնալն ի հեռաւոր երկիրն իւրեանց՝ կարօտէ՛ր հանապարհական թոշակի – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան հանդերձ պահպանողական շնորհի Միածնաէջ սրբոյ տեղույս... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1794) թուոջս եւ ի յօգոստոսի Գ (3), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

40. 24աբ Թուղթ ի Զմիւռնիա ան տէր Գալուստն. շնորհակալութիւն վասն աշխատելոյն ի հաշուագրութիւնս իրաց հանգուցեալ Իսահակ վարդապետին – Յորմէ հայրական սիրով, եւ օրհնութեամբ, եւ քրիստոսաձիր սուրբ ողջունի, եւ առատաձաւալ շնորհի սրբոյ իջման տեղույս նորին գիտասջի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր եւ հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս, տէր Գալուստ շնորհապետն եւ գիտնական քահանայ... Գրեցաւ ի թուոջս Փրկչին 1794 եւ յօգոստոսի ԻԱ (21), ի լուսակազմ Աթոռս Սուրբ էջմիածին:

41. 24բ-5ա Թուղթ յԱխցիսա ան Վաչիանցի Այվազն ընդ նոր նուիրակ եւ առաջնորդ Յովաննէս վարդապետին. յանձնարարութիւն վասն նորին – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան հանդերձ հոգեգուարձ շնորհի Միածնաէջ սրբոյ տեղույս... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1794) թուոջս եւ ի յօգոստոսի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

42. 25աբ Թուղթ յէտրէնէ ան Ռամեցի մահտեսի պարոն Գէորգն. վասն Թովմայի գրեցուցեալ դատքիլախայի թղթոյն յաղագս Ա.Ռէճ (1700)

դուռուշին, զոր յիշեալ Թովմայի եղբորորդի մահտեսի Նազարն ի կողմանէ նորին քոյր եւ իւր հօրաքոյր հանգուցեալ Շէրիբարին միտս հասոյց նմա՝ ձեռամբ արբազանին: Որ եւ զայն թուղթ յղէ այժմ ան այս մահտեսի Գէորգս հասուցանել մահտեսի Նազարին ի միամտութիւն նմին – Յորմէ ճշմարտի սիրով եւ հոգեւոր օրհնութեամբ, քրիստոսաձիր ողջունի, եւ սրբոյ իջման տեղույս նորին պահպանողական շնորհի ծանուցումն լիցի... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1794) թուոջս եւ ի սեպտեմբեր Բ (2), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

43. 25բ Ողջոյն եւ օրհնութիւն տամք աստուածապարգեւ զաւակին քո եւ հոգեւոր որդույ մերում սիրեցելոյ Տէրամբ զօրացեալ մահտեսի Ալէքսանին եւ խոհեմաշատ խոջայ Գալ[ու]ստին եւ այլ ամենայն ձերայնոցն՝ յանձնելով զամենեսին ի խնամս եւ յողորմութիւնս Տեառն:

44. 25բ-6բ Թուղթ ի յԱրդնումատէնն (բառի վերեւում գրչի ձեռնով գրուած՝ Կապնա) ան Փիլիպպոս ամիրայն. շնորհակալութիւն վասն յղեալ աջնամբոյր դրամոցն՝ ընդ մահտեսի Միրզային, եւ օժանդակութեանցն ան նուիրակն մեր – Յորմէ ժամանեցէ թուղթ ճշմարիտ սիրոյ, քրիստոսաձիր սուրբ ողջունի եւ արդիւնարար օրհնութեան հանդերձ հոգեւոր շնորհօք եւ զօրութեամբք Միածնաէջ սրբոյ տեղույս... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1794) թուոջս եւ ի սեպտեմբերի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

45. 26բ Սիրով հայրականաւ, եւ պահպանողական շնորհի սրբոյ իջման տեղույս Քրիստոսի ողջոյն եւ օրհնութիւն տամ աստուածապարգեւ զաւակաց քոց եւ հոգեւոր որդւոց մերոց սիրեցելոց, բարեզարմից եւ համեստաբարոյցից խոջայ Սկրաշին, պարոն Ալփիետարին, Մանուկին, Զաֆարիային, եւ Գասպարին եւ այլ հարազատ ընտանեաց քոց եւ ազգայնոցդ օրհնեցելոց. զորս եւ յանձնեմք ի խնամս եւ յողորմութիւնս Տեառն՝ կալ մնալ խաղաղութեամբ եւ բարօրութեամբ. ամէն:

46. 26բ Վկայական եպիսկոպոսութեան սրբոյ Երուսաղէմի միաբան Գրիգոր վարդապետին. որոյ օրինակն է ի վերոյ յերեսն ՃԼԹ (135) (տես ա՛ստ թերթ 23ա), իսկ փոխեալ բանն են աստ – Բազմաժողով հանդէս արարի յամի Տեառն ՌՉՂԳ եւ ի թուականիս Հայոց ՌՄՆԳ (1794) ի սեպտեմբերի Ժէ (17)... Երբորդ՝ ի պատահիլն իւր ի վիճակ մի՛:

47. 27աբ Թուղթ ի յԱմիդ ան Սուրբ Կիրակոս եկեղեցույ զանձապետն մեր մահտեսի Մարտիրոսն. ի պատասխանի թղթոյն, որ ի կողմանէ Սուրբ Սարգիս եկեղեցույ բանին, եւ այլ իրաց ծանուցմանց – Յորմէ ժամանեցէ թուղթ ճշմարիտ

սիրոյ, խաղաղարար սուրբ ողջունի եւ հոգեւոր օրհնութեան՝ հանդերձ պահպանողական շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս Քրիստոսի... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1794) թուոջս եւ ի սեպտեմբերի ԻԱ (21), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

48. 27բ Ողջոյն եւ օրհնութիւն տամք պատուականի եղբօր քո եւ ազնիւ սիրելոյ մերոյ, բարեպաշտ եւ մեծահաւատ մահտեսի Գասպար աղային, եւ աստուածապարգեւ որդւոյ նորին, խոհեմառատ եւ յառաջադէմ խօջայ Կարապետին, եւ բարեզարմ որդւոյն քո պարոն Յովաննէսին (որում եւ ի Տեառնէ ժամանեցէ այցելութիւն ի փարատումն վշտալի դիպուածոյն) եւ այլ ամենայն ձերայնոցն. զորս եւ յանձնեմք ի գթութիւն եւ յողորմութիւն Աստուծոյ ամենաբարեբարին՝ կալ մնալ խաղաղութեամբ եւ բարօրութեամբ. ամէն:

49. 27բ Թուղթ ի մեծն Պօլիս առ Պալաթո Ստեփաննոս ամիրայն՝ ընդ նոր նուիրակ (տեղբ բաց) վարդապետին. յանձնարարութիւն վասն նորին – (Սկիզբն յօրինակէն) ազնուամիտ եւ խոհական Ստեփաննոս ամիրայիդ՝ [յ]որմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ աստուածապարգեւ մխիթարութեամբ եւ սիոփանօք, եւ պահպանողական շնորհիւ Միածնախէջ սրբոյ տեղւոյս... Ի ՌՄՆԳ (1794) եւ ի (տեղբ բաց):

50. 27բ-Տա Դարձեալ ի Պօլիս առ Պետրոս ամիրայի որդի Մկրտիչ ամիրայն – (ի նոյն օրինակէն) օրհնեցեալ ազնուական եւ բարեծնունդ Մկրտիչ ամիրայիդ՝ ... Ի ՌՄՆԳ (1794) եւ ի (տեղբ բաց):

51. 28ա Թուղթ ի մեծն Պօլիս առ Ապրան ամիրայն Վանցի՝ ըստ այնմ օրինակի – Պերճապատիւ Ապրան ամիրայիդ... Ի ՌՄՆԳ (1794) եւ ի (տեղբ բաց):

52. 28աբ Թուղթ առ մահտեսի Գալստանն Ջուղայեցի, որ ի Պօլիս. յաղագս փօլիցային առ նա հասելոյ ի Բասրայու, եւ վասն նուիրակին յանձնարարութիւն – ~ազնուամիտ եւ խոհական մահտեսի Գալստան աղայիդ... Ի ՌՄՆԳ (1794) եւ ի (տեղբ բաց):

53. 28բ Գիտասաջի՛ր եւ զայս, սիրելի՛դ մեր, զի մինչ թուղթս եւ նուիրակն յամեցաւ յաղագս կրկին վրդովմանց երկրիս եւ նեղութեանց մերոց, թուղթն քո, զոր յօգոստոսի ԻԸ (28) գրեալ էիր, էհաս առ մեզ ի հոկտեմբերի ԻԵ (25). եւ ծանուցեալ զբանսդ՝ շնորհակալ եղաք զքէն օրհնութեամբ: Իսկ պատասխանին բանիցդ ա՛յն է, որ ի կարգի բանից թղթոյս գրեցեալ գոյ: Ապա ասեմք վերստին, ո՛ղջ լեր Տէրամբ: Այսչափս գրեցաւ ի հոկտեմբերի վերջնում աւուր:

54. 28բ-Չա Թուղթ ի մեծն Պօլիս առ Ղարտաշեան պարոն Թաղէոսն. ի պատասխանի թղթոյն,

շնորհակալութիւն վասն Ոտումէլու նուիրակ Գրիգոր վարդապետին արարեալ լաւութեանն, եւ յանձնարարութիւն վասն նոր նուիրակին Պօլսոյ – Յորմէ ժամանեցէ թուղթ ճշմարիտ սիրոյ, քրիստոսաձիր սուրբ ողջունի եւ հոգեւոր օրհնութեան՝ հանդերձ հոգեզուարճ շնորհիւ՝ ... Ի ՌՄՆԳ (1794) եւ ի սեպտեմբերի ԻԷ (27):

55. 29ա Մեծաւ սիրով եւ կարօտիւ ողջոյն եւ օրհնութիւն տամք աւագապատիւ եղբօրն քոյ եւ ազնիւ սիրելոյն մերոյ, աստուածասէր եւ իմաստնախոհ եւ բարեշուք Յովաննէս աղային... յանձնեցեալ միշտ ի պաշտպանութիւն հզօր ձեռին Տեառն ամենակալի. ամէն:

56. 29աբ Թուղթ ի Թիֆլիզ առ տէր Դաւիթն. ի պատասխանի թղթոյն նորա՝ ընդ արձայի թղթոյն գրեցելոյ – Յորմէ հայրական սիրով եւ օրհնութեամբ, եւ սուրբ ողջունի ծանի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր եւ հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս, տէր Դաւիթ շնորհունակ աւագ քահանայ... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1794) թուոջս եւ ի հոկտեմբերի ԺԿ (14), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

57. 29բ-30ա Թուղթ ի Քեօթանիա առ գանձապետն մահտեսի Խաչատուրն. պատուէր վասն ապակի աղիւսաց շինեցուցանելոյ յաղագս ներքին կողմանցն որմոց սրբոյ տանարիս – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ հոգեզուարճ շնորհիւ քրիստոսախէջ սրբոյ տեղւոյս... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1794) թուոջս եւ ի հոկտեմբերի ԷԼն, ի Սուրբ էջմիածին:

58. 30աբ Դարձեալ ի Քեօթանիա առ մահտեսի Կարապետն եւ առ նորին եղբայր Եղուպն. վասն նուիրակին, եւ վասն շինեացն շինման – Յորմէ ժամանեցէ թուղթ քրիստոսաձիր սուրբ ողջունի եւ հոգեւոր օրհնութեան եւ ճշմարիտ սիրոյ՝ հանդերձ պահպանողական շնորհօք եւ զօրութեամբ սրբոյ տեղւոյս Միածնախիջի... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1794) թուոջս եւ ի հոկտեմբերի ԷԼն, ի Սուրբ Աթոռս էջմիածին:

59. 30բ-1ա Թուղթ առ Հաղբատայ առաջնորդ Դաւիթ վարդապետն. ի պատասխանի Բ (2) թղթոց նորա, եւ շնորհակալութիւն վասն յղեալ փայտելիմացն – Յորմէ սիրով եւ օրհնութեամբ եւ ողջունի սրբով գիտասաջի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդիդ մեր եւ հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս, Դաւիթ հանճարունակ վարդապետ... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1794) թուոջս եւ ի նոյեմբերի Բ (2):

60. 31աբ Թուղթ առ Էտրէնէլու առաջնորդ Միֆայել վարդապետն՝ ընդ նոր նուիրակ Գալուսա վարդապետին – Յորմէ քրիստոսաձիր սուրբ ող-

ջունիւ եւ սիրով, եւ օրհնութեամբ բազմաւ, եւ մշտածաւալ շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս գիտասաշի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր եւ հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս, Միբայել աստուածիմաստ վարդապետ... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1794) թուոջս եւ ի հոկտեմբերի ելն, ի Սուրբ Աթոռս էջմիածին:

61. 31բ Թուղթ առ Գիօրկի խանն. ի պատասխանի թղթոյն, եւ ի մխիթարութիւն վասն մահուան աներձագին, եւ միոյ որդւոյն – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ երկնածիր մխիթարութեամբ եւ տրտմափարատ շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս... Գրեցաւ յամի Փրկչին 1795 եւ ի յունվարի 1, ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի Սուրբ էջմիածին:

62. 32ա Առ տէր Պօղոսն ի մեծն Պօլիս՝ ընդ ծեր տէր Գրիգորին – Յորմէ սիրով եւ օրհնութեամբ, եւ քրիստոսածիր ողջունի, եւ սրբոյ իջման տեղւոյս նորին զօրացուցիչ շնորհիւ գիտասաշի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր եւ հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս, տէր Պօղոս խոհեամմիտ քահանայ... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1795) թուոջս եւ ի փետրվարի ԺԹ (19), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

63. 32աբ Թուղթ ի Հնդկիս ի Բաղաբն Կալկաթա առ պարոն Փանոսն Բարաղամեան եւ որդին իւր Սիմօնն. շնորհակալութիւն վասն յիշատակացն եւ նուիրակին, եւ յաղագս նոր նուիրակին յանձնարարութիւն – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ պահպանողական շնորհիւ աստուածաէջ սրբոյ տեղւոյս... Գրեցաւ յամի Կենարարին 1795 եւ ի յունվարի (տեղը բաց), ի գերափառ Աթոռս Սուրբ էջմիածին:

64. 32բ Ողջոյն տամբ հայրական սիրով եւ օրհնութեամբ ի Քրիստոս զարգացեալ բարետոհմիկ որդւոց քոց պարոն Գալստանին եւ պարոն Գէորգին, եւ համեստուհի դասերացդ, եւ երկիւղազարդ հարսինդ, եւ ծաղկափթիթ թոռանցդ, եւ համայն ընտանեաց ձերոց եւ բարեկամաց: Որք եւ լիցի՛ն խնամեալք եւ պ[ա]հպ[ա]նեցեալք շնորհիւ ողորմութեանն Աստուծոյ. ամէն:

65. 33ա Դարձեալ ի Կալկաթա առ պարոն Ստեփանն Միրզայեան. յանձնարարութիւն վասն նոր նուիրակին, եւ վասն առաջնոյն շնորհակալութիւն – (Օրինակն է ի մեծ տետրն նոր յերեսն 2229). Բանին Միածնի, ի վերայ սիրելւոյդ մերոյ ի Տէր, եւ լուսածնունդ զաւակիդ Սրբոյ Աթոռոյս բարեպաշտօն եւ մեծահաւատ, իմաստնախոհ եւ ազնուաբարոյ պարոն Ստեփաննոսիդ Միրզայեան... Գրեցաւ ի թուականի Փրկչին 1795 եւ ի (տեղը բաց), յերկնաբատակ Աթոռս Սուրբ էջմիածին:

66. 33ա Ողջոյն եւ օրհնութիւն տամ սիրով հայրականաւ աստուածապարգեւ զաւակաց քոց բարեզարմից, եւ հոգեւոր որդւոց մերոց, Տէրամբ զօրացելոց եւ խոհականաց պարոն Յօհաննջանին եւ պարոն Յովակիմ միրզին, եւ համեստուհի Աննա դասերդ, եւ այլ ընտանեաց եւ ազգայնացդ բնաւից՝ յանձնելով զամենեսեան ի խնամս Արարչին:

67. 33բ Թուղթ ի Մատրաս առ պարոն Յակոբն Սիմէօնեան. վասն քանի շապիկ յիշատակացն, եւ վասն Ա (1) եղջերեայ թաս ընծային – (Օրինակն է ի նոր մեծ տետրն յերեսն 2229, բայց աստ համառօտութեամբ գրի). Շնորհիւ քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս, ի վերայ սիրելւոյդ մերոյ եւ լուսածնունդ զաւակիդ Սրբոյ Աթոռոյս բարեպաշտօն, մեծահաւատ եւ հանճարամիտ պարոն Յակոբիդ Սիմէօնեան եւ աստուածապահ՝ ... Որովք եւ եւս կացուցեալ զմեզ շնորհակալու զբարեպաշտ՝:

68. 33բ Ողջոյն եւ օրհնութիւն տամբ սիրով աստուածապարգեւ որդւոց քոց ուղիմամիտ եւ բարեջան պարոն Սիմէօնին, (զորմէ եւ յատկապէս շնորհակալ եմք վասն աշխատութեանցն ի բանս իրաց նուիրակին մերոյ), եւ Տէրամբ օրհնեցեալ պարոն Աղէսանդրին, որոց ամենայն բարի գործառնութեանցն յաջողումն լիցի ի շնորհացն Աստուծոյ, եւ ինքեանք ի խնամս նորին եղիցին յանձնեցեալք. ամէն:

69. 34ա Թուղթ ի Խոյ առ մէլիք Մայիլի որդի պարոն Մարգարն. վասն Սուրբ Նախավկայի վանից բանին, եւ հարկ վասն գալոյ ի խորհրդակցութիւն յաղագս առաջնորդ կարգելոյ զոք այնմ սրբոյ վանից – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց ի վերայ սիրելւոյդ մերոյ եւ հարազատ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս, Քրիստոսիւ զօրացեալ բարեպաշտ եւ խոհական պարոն Մարգարիդ... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1795) թուոջս եւ ի մարտի ԻԳ (23), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

70. 34բ Թուղթ ի Թիֆլիզ առ մէլիք Մինասն. ի պատասխանի թղթոյն վասն բանին, զոր ասացեալ էր նա պարոնին ի մերս կողմանէ, եւ նա այլ ընդ այլոյ էր պատասխանեալ – Յորմէ սիրով եւ օրհնութեամբ, եւ քրիստոսածիր սուրբ ողջունիւ ծանի՛ր, սիրելիդ մեր եւ հարազատ որդի Սրբոյ Աթոռոյս, Տէրամբ զօրացեալ բարեպաշտ եւ խոհական մէլիք պարոն Մինաս... Գրեցաւ ի ՌՄՆԳ (1795) թուոջս եւ ի յապրիլի ԻԸ (28), ի Սուրբ էջմիածին:

71. 34բ Յետ աւարտման գրուածոյ թղթոյս էհաս առ մեզ եւ յամսոյս 20 գրեցեալ թուղթդ, զոր ինչ որպիսութիւնս էիր ծանուցեալ, իմացաք եւ շնորհակալութեամբ օրհնեցաք զքեզ, զոր Տէր օրհնեցէ եւ զօրացուցէ: Բայց համբան, զոր զմէնջ ասացեալ

են <զմէնջ> յայդկոյս գալոյ, դատարկ է ամենեւին, որպէս եւ դու քաջ կարես գիտել: Զայլափ ինչ եւս ազդ արարեալ կրկին ասեմք՝ ո՛ղջ լեր:

72. 35ա Թուղթ ի Բաղդատ առ աղայ Ալէֆսանն՝ ընդ նոր նուիրակին – Յորմէ ժամանեացէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ հոգեւած շնորհիւ աստուածաէջ սրբոյ տեղւոյս, ի վերայ յատկեղ սիրելոյդ մերոյ եւ հարազատ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս բարեպաշտ եւ մեծահաւատ, ծերունազարդ եւ ճոխապատիւ աղայ Ալէֆսանիդ Մուրափխանեան... Գրեցաւ յամի Փրկչին 1795 եւ ի յունիսի ելն, ի Սուրբ Աթոռս էջմիածին:

73. 35ա Հայրական սիրով ողջոյն եւ օրհնութիւն տամք աստուածապարգեւ որդւոց քոց ազնուագարմից Դուկաս եւ Մարկոս աղայիցն, եւ երկիւղագարդ կենակցին քո, Տէրամբ օրհնեցեալ բարեպաշտուհի Խուցի խաթունին, եւ համեստուհի դատերաց ձերոց, եւ այլ ամենեցուն ձերայնոց՝ յանձնելով զամենեսեան ի խնամս եւ ի գթութիւնս Աստուծոյ:

74. 35բ Դարձեալ ի Բաղդատ առ մահուեսի Թումիկի որդի տիրացու Յակոբն. մխիթարութիւն վասն հօրն, եւ օրհնութիւն – Յորմէ ժամանեացէ թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց ի վերայ սիրելի եւ հոգեւոր որդւոյդ մերոյ եւ հարազատ զաւակիդ Սրբոյ Աթոռոյս, տէրամբ Յիսուսիւ զօրացեալ բարեպաշտազուն եւ ուշիմամիտ տիրացու Յակոբիդ... Գրեցաւ յամի Փրկչին 1795 եւ ի (տեղը բաց), ի Սուրբ էջմիածին:

75. 36աբ Թուղթ յիզմիր առ մահուեսի Կարապետն Զէլիկեան. ի պատասխանի թղթոյն՝ գրեցելոյ ի ՌՄԽԴ (1795) թուոյ մարտի Զ (6) – Յորմէ ժամանեացէ թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց ի վերայ բնիկ սիրելոյդ մերոյ եւ հարազատ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս, բարեպաշտօն, մեծահաւատ եւ խոհական մահուեսի Կարապետիդ... Գրեցաւ ի ՌՄԽԴ (1795) թուոցս եւ ի մայիսի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

76. 36բ-7ա Թուղթ ի Մարդամ առ Յովաննէս վարդապետն. ի պատասխանի թղթոյն, որ վասն վախճանման Բարաղամին – Յորմէ հայրական սիրով եւ օրհնութեամբ, եւ քրիստոսածիր ողջունիւ, եւ սրբոյ իջման տեղւոյս Նորին մեծագոր շնորհիւ գիտասաշի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր եւ շնորհնկալ զաւակ Սրբոյ Աթոռոյս, Յովաննէս հանճարունակ վարդապետ... Գրեցաւ յամի Փրկչին 1795 եւ ի մայիսի (տեղը բաց), ի լուսանկար Աթոռս Սուրբ էջմիածին:

77. 37աբ Թուղթ ի Բասրա առ հանգուցեալ մահուեսի Խաչիկի դուստր Յօղիտայն. ի պատասխանի թղթոյն նորա յամի Տեառն 1790, յ[ն]

ւնիսի 21 գրեցելոյ, վասն հօր կաակին եւ խնդրոյն – Յորմէ ժամանեացէ թուղթ հայրական օրհնութեան եւ սիրոյ՝ հանդերձ քրիստոսածիր սուրբ ողջունիւ քրիստոսականաւ եւ նոյնաէջ սրբոյ տեղւոյս մեծագոր շնորհիւ ի վերայ հոգեւոր դատերդ մերոյ եւ լուսածնունդ զաւակիդ Սրբոյ Աթոռոյս բարեպաշտուհի, երկիւղագարդ եւ զգաստամիտ Յօղիտայ խաթունիդ... Գրեցաւ ի թուոց Փրկչին 1795 եւ ի յունիսի ելն, ի Սուրբ Աթոռս էջմիածին:

78. 37բ Ողջոյն եւ օրհնութիւն տամք առն քոյ եւ սիրելոյն մերոյ բարեպաշտօն պարոն Սարգսին Կիրակոսեան եւ դեռաբողբոջ դատերդ Տէրամբ օրհնեցեալ Աննային, եւ այլ ձերայնոցն՝ յանձնելով զամենեսին ի բարեգթութիւնս Աստուծոյ մնալ խաղաղութեամբ եւ բարօրութեամբ:

79. 38ա Թուղթ առ Պօլսոյ պատրիարքի երբեմն վէլի Կեսարացի Պետրոս վարդապետն. ի շնորհակալութիւն յաղագս ընծայիցն – Յորմէ հայրական սիրով, եւ օրհնութեամբ, եւ քրիստոսածիր սուրբ ողջունիւ, եւ մեծագոր շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս գիտասաշի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր, հարազատ եւ շնորհնկալ զաւակ Սրբոյ Աթոռոյս Պետրոս աստուածիմաստ եւ համեստակենցաղ վարդապետ... Գրեցաւ ի ՌՄԽԴ (1795) թուոցս եւ ի յունիսի Ի (20), ի Սուրբ էջմիածին:

80. 38ա Սիրով մեծաւ ողջոյն եւ օրհնութիւն տամք սիրելի եւ հոգեւոր որդւոյն մերոյ եւ եղբօր քոյ հոգեկցի վէքիլ Յովաննէս իմաստնափայլ վարդապետին եւ հանճարառատ եպիսկոպոսին, որոյ սիրածիր թուղթն ժամանեաց առ մեզ, եւ մխիթարեցաք ողջութեամբ անձինն եւ առատութեամբ սիրոյն, բայց յաղագս նեղութեանց մերոց եւ սղութեան ժամուս չկարացաք զպատասխանին գրել կացութիւն մեր մինչ կերպ իմն գտցէ, գրելոց եմք. այժմ այսու միամտեալ՝ կացցէ՛ ողջ ի Տէր բարեզուարձ կենօք:

81. 38բ-9ա Թուղթ ի Հնդիկս առ Զուղայեցի տէր Յովսէփն. ի պատասխանի թղթոյն, եւ ի շնորհակալութիւն վասն յղեալ ընծայիցն ի Բասրայու – Յորմէ հայրական սիրով եւ օրհնութեամբ, եւ քրիստոսածիր սուրբ ողջունիւ, եւ նոյնաէջ սրբոյ տեղւոյս մեծագոր շնորհիւ գիտասաշի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր եւ հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս, տէր Յովսէփ հեզաբարոյ եւ խոհեմամիտ քահանայ... Գրեցաւ յամի Փրկչին 1795 եւ ի <ի> յունիսի ելն, ի հրաշագան Աթոռս Սուրբ էջմիածին:

82. 39ա-40ա Թուղթ ի Բալու առ նուիրակ, հանգուցեալ Յօհան վարդապետի եղբօրորդի Մկրտիչ վարդապետն. ի պատասխանի թղթոյն, մխիթարութիւն վասն մահուան հօրեղբօրն, եւ

պատուէր, զի ինքն արասցէ զնուիրակութիւնն, կշռեալ զինքն, եթէ կարօղ իցէ. որոյ աղագաւ եւ փոքր կոնդակ մի եւս գրեալ յղեցաք, զի ընդ մեծի կոնդակին շրջեցուցէ ի հաստատութիւն նուիրակութեանն իւրոյ – *Յորմէ հայրական սիրով եւ օրհնութեամբ, եւ քրիստոսական սուրբ ողջունիւ, եւ պահպանողական շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս Նորին գիտեա՛յ, սիրելի եւ հոգեւոր որդեակ մեր, հարազատ եւ կաթնասուն զաւակ Սրբոյ Աթոռոյս Մկրտիչ շնորհապերճ վարդապետ... Գրեցաւ ի ՌՄԽԴ (1795) թուոջս եւ ի յուլիսի (տեղը բաց), ի լուսակազմ Աթոռս Սուրբ էջմիածին:*

83. 40աբ Թուղթ առ Մշու Սուրբ Կարապետի վանից առաջնորդ Յակոբ վարդապետն. ի պատասխանի քննեաց թղթոցն, եւ մանաւանդ վերջնոյն, որ ի յունիսի ժէ (17) էր գրեցեալ – *Յորմէ սիրով եւ օրհնութեամբ հայրականաւ, խաղաղարար սուրբ ողջունիւ, եւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս մեծագոր շնորհիւ գիտասաջի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր, հարազատ եւ շնորհընկալ զաւակ Սրբոյ Աթոռոյս Յակոբ հանճարապերճ վարդապետ... Գրեցաւ ի ՌՄԽԴ (1795) թուոջս եւ ի յուլիսի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:*

84. 40բ Սիրով ողջոյն եւ օրհնութիւն տամք հոգեւոր որդւոց մերոց սիրեցելոց Յովաննէս հեզահամբոյր եպիսկոպոսին եւ Կարապետ շնորհառատ վարդապետին, որոյ թուղթն գրեալ առ մեզ վաղապէս էհաս, բայց զպատասխանին ի բարեաւ գալն իւր աստանօր ասասցուք: Եւ զնոսա եւ զհամայն իսկ սիրախումբ միաբանսն սրբոյ վանացդ յանձն առնեմք ի շնորհս խնամոց եւ մարդասիրութեան Տեառն ամենակալի:

85. 41ա Թուղթ ի Զուղայ առ հանգուցեալ մահաւետի խաչիկի կին Փէրինազ խաթունն. ի պատասխանի թղթոյն, որ գրեալ էր զաներէ եղբօրորդոյն, թէ զամուսինն եղբօրորդոյն (որ է տէր Աւետն) փախատեամք ընդ ինքեանց առեալ տարեալ են ի Բուշէտ, եւ քանակայն մնացեալ է իբրեւ այրի – *Յորմէ ժամանեցէ թուղթ հայրական սիրոյ եւ օրհնութեան, եւ քրիստոսաձիր սուրբ ողջունի՛ հանդերձ պահպանողական շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս, ի վերայ հոգեւոր դատերդ մերոյ եւ լուսածնունդ զաւակիդ Սրբոյ Աթոռոյս բարեպաշտունի, մեծահաւատ եւ զգաստամիտ Փէրինազ խաթունիդ... Գրեցաւ յամի Փրկչին 1795 եւ ի յունիսի ելն, ի լուսակառոյց Աթոռս Սուրբ էջմիածին:*

86. 41ա Ողջոյն եւ օրհնութիւն տամ հարազատ եղբօրորդոյն քոյ եւ հոգեւոր որդւոց մերոսմ տէր Աւետիք շնորհունակ քահանային Տէր-Միմասեան եւ այլ հա-

մայն ձերայնոցն, զորս եւ յանձնեմք ի բարեգթութիւնս Տեառն կալ մնալ խաղաղութեամբ եւ բարօրութեամբ:

87. 41բ Թուղթ ի Վան առ տէր Յակոբն Սամուէլեան եւ առ եղբարսն՝ Յարութիւնն եւ Աւանն. շնորհակալութիւն վասն լատրեանցն առ նուիրակն, եւ մխիթարութիւն վասն մահուան հօրն իւրեանց – *Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան հանդերձ մեծագոր շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս, ի վերայ սիրելի եւ հոգեւոր որդւոցդ մերոյ եւ բարեջան զաւակիդ Սրբոյ Աթոռոյս տէր Յակոբ շնորհապերճ եւ խոհեմամիտ քահանայիդ... Գրեցաւ ի ՌՄԽԴ (1795) թուոջս եւ ի յուլիսի ժԲ (12), ի բարձրագահ Աթոռս Սուրբ էջմիածին:*

88. 42ա (գրած-ընթած) Կոնդակ ի վերայ Սրբոյ Նախավկայի վանաց թեմիցն. վասն վէթի Անանիա վարդապետին – *Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան հանդերձ հոգեգուարճ շնորհիւ աստուածաէջ սրբոյ տեղւոյս, ի վերայ սիրելի եւ հոգեւոր որդւոցդ մերոց եւ լուսածնունդ զաւակացդ Սրբոյ Աթոռոյս, վիճակեցելոցդ սրբոյն Ստեփաննոսին Նախավկայի հրաշագարդ վանիցն... Գրեցաւ ի ՌՄԽԴ (1795) թուոջս եւ ի սեպտեմբերի ժ (10), ի Սուրբ Աթոռս էջմիածին (աջ լուսանցքով գրուած է՝ ո՛չ տրեցաւ թուղթս):*

89. 42աբ Թուղթ առ սրբոյ Երուսաղէմի միաբան Աբրահամ վարդապետն. ի պատասխանի թղթոյն, եւ ի շնորհակալութիւն վասն աջահամբուրին – *Յորմէ սիրով եւ օրհնութեամբ, եւ քրիստոսաձիր ողջունիւ, եւ սրբոյ իջման տեղւոյս Նորին առատածաւալ շնորհիւ ծանի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր եւ հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս Աբրահամ հեզաբարոյ վարդապետ... Գրեցաւ ի ՌՄԽԴ (1795) թուոջս եւ ի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:*

90. 42բ-Յա Թուղթ առ սրբոյ Երուսաղէմի դարպասնի Թէոդորոս վարդապետն. ի պատասխանի թղթոյն, եւ ի շնորհակալութիւն վասն յղեալ աջահամբուրին – *Յորմէ սիրով եւ օրհնութեամբ բազմաւ, խաղաղարար ողջունիւ սրբով, եւ քրիստոսաէջ սրբոյ տեղւոյս հոգեգուարճ շնորհիւ գիտասաջի՛ր, սիրելի եւ հոգեւոր որդի մեր եւ հարազատ զաւակ Սրբոյ Աթոռոյս Թէոդորոս գերբզօն եւ հանճարապերճ վարդապետ... Գրեցաւ ի ՌՄԽԴ (1795) թուոջս եւ ի հոկտեմբերի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:*

91. 43բ Թուղթ մխիթարութեան առ Կարնոյ գործակալն մեր պարոն Հայրապետն. մխիթարութիւն վասն մահուան որդւոյն իւրոյ Աւետիքին – *(Օրինակն է ի նոր մեծ տետրն, յերեսն 2044) Ի վերայ ընտիր սիրելւոյդ մերոյ եւ հաւատարիմ որդւոյդ Սր-*

բոյ Աթոռոյս, եւ բազմաշխատ գործակալիդ սորին բարեպաշտ եւ մեծահաւատ եւ խորհեմառատ պարոն Հայրապետիդ... Գրեցաւ ի ՌՄՆԴ (1795) թուոջս եւ ի նոյեմբերի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս (էջմիածին):

92. 43բ-4ա Թուղթ ի Հաշտարխան առ պարոն Մկրտումն. վասն թղթոյն, որ հասանելի էր առ Յովսէփի վարդապետն – Յորմէ սիրով եւ օրհնութեամբ բազմաւ, սուրբ ողջունիւ քրիստոսականաւ, եւ սրբոյ իջման տեղուոյս նորին մեծագոր շնորհիւ ծանուցումն լիցի, յատկեղ սիրելուոյդ մերում եւ հարազատ որդուոյդ Սրբոյ Աթոռոյս բարեպաշտօն, իմաստնախոս՝ եւ պերճապատիւ աղայ Մկրտումիդ... Գրեցաւ յամի Փրկչին 1795 եւ ի նոյեմբերի 24, ի Սուրբ Աթոռս էջմիածին:

93. 44ա-5ա Թուղթ ի Գեանջա առ տանուտէր Աւետիքն. ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր վասն անդանօր ի յայտ եկեալ ոմանց իրացն Սրբոյ Աթոռոյս՝ աւարելոցն ի Թիֆլիզու – Յորմէ ժամանեացէ թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց ի վերայ սիրելուոյդ մերոյ եւ հարազատ որդուոյդ Սրբոյ Աթոռոյս քրիստոսասէր, բարեպաշտ եւ մեծահաւատ տանուտէր պարոն Աւետիքիդ... Գրեցաւ ի ՌՄՆԴ (1795) թուոջս եւ ի դեկտեմբերի]:

94. 45աբ Թուղթ առ մէլիք Մէժլումն. վասն ի Գեանջա երեւեցեալ իրացն Սրբոյ Աթոռոյս – Յորմէ ժամանեացէ թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան եւ շնորհաց ի վերայ ազնիւ սիրելուոյդ մերոյ եւ հարազատ որդուոյդ Սրբոյ Աթոռոյս քրիստոսասէր, քաջատոհմիկ, շքեղաշուք եւ պերճապատիւ մէլիք Մէժլում աղայիդ... Գրեցաւ ի ՌՄՆԴ (1795) թուոջս եւ ի դեկտեմբերի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

95. 45բ (Ի թուղթն տանուտէր Աւետիքին) – Դարձեալ ծանիր եւ զայս, զի Աւետիք վարդապետն մեր, զոր յուղարկեցաք ի ժողովումն գանձանակ դրամից... եւ կրկին ասեմք ո՛ղջ լիցիս Տէրամբ:

96. 46ա Թուղթ ի Կարին առ Հանիբաբայն. ի պատասխանի թղթոյն ընդ Մանուէլ վարդապետին՝ առաջնորդի եզնկայոյ Սուրբ Յակոբայ վանիցն Կայիփուսի – Յորմէ ժամանեացէ թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան՝ հանդերձ պահպանողական շնորհիւ աստուածաձէջ սրբոյ տեղուոյս, ի վերայ ազնիւ սիրելուոյդ մերոյ եւ բարեպաշտ եւ ազնուական մահտեսի Յակոբ աղայիդ... Գրեցաւ ի ՌՄՆԵ (1796) թուոջս եւ ի յունվարի ելն, ի Սուրբ Աթոռս էջմիածին:

97. 46բ Թուղթ ի Կարին առ Գօրօյեան մահտեսի Սեօրն. ի պատասխանի թղթոյն, եւ վասն յղելոյ զմնացեալն ի գնոյ բամբակին – Յորմէ սիրով եւ օրհնութեամբ, եւ քրիստոսաձիր սուրբ ողջունիւ, եւ նոյնաձէջ սրբոյ տեղուոյս ծանիր, սիրելիդ

մեր եւ հարազատ որդի Սրբոյ Աթոռոյս, բարեպաշտ եւ մեծահաւատ մահտեսի Սեօր... Գրեցաւ ի ՌՄՆԵ (1796) թուոջս եւ ի փետրվարի ԺԲ (12), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

98. 47ա Թուղթ ի Ղարս առ մահտեսի Գրիգորն, որ զՄինաս տղայի վախճանելոյ զպարտան Սրբոյ Աթոռոյս յանձն առեալ՝ ամ ըստ ամէ, սակաւ առ սակաւ հատուցանէր – Յորմէ ժամանեացէ թուղթ սիրոյ, ողջունի, օրհնութեան՝ հանդերձ հոգեզուարճ շնորհիւ Միածնաձէջ սրբոյ տեղուոյս, ի վերայ բարեպաշտ սիրելուոյդ մերոյ եւ հարազատ որդուոյդ Սրբոյ Աթոռոյս քրիստոսասէր եւ մեծահաւատ, ծերունափայլ մահտեսի Գրիգորիդ... Գրեցաւ ի ՌՄՆԵ (1796) թուոջս եւ ի փետրվարի ԺԷ (17), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

99. 47բ-8ա Թուղթ ժողովարարութեան. վասն Ղարսեցի Աբրահամի որդի Գէորգին ի վերայ Թօխաթու եւ Ամդայ եւ շրջակայիցն՝ ըստ խնդրոյ Կարնոյ Բահանայից եւ իշխանցն – Յորմէ ժամանեացէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ հոգեպարար շնորհիւ Միածնաձէջ սրբոյ տեղուոյս, ի վերայ սիրելի եւ հոգեւոր որդուոյդ մերոյ եւ լուսածնունդ զաւակացդ Սրբոյ Աթոռոյս հայկազնեայ, լուսաւորչակրօն, միաբնադաւան հատապետոյդ ի Քրիստոս, որք բնակեալ կայք ի յաստուածախնամ եւ ի բարեճոխ քաղաքսդ ի Թօխաթ, ի Սեբաստիա, ի Կեսարիա, ի Ակն, ի Արապկեր, ի Մաաթններ եւ ի յԱմիդ... Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄՆԵ (1796) եւ ի փետրվարի ԻԶ (26), ի յերկնահանգէտ Աթոռս Սուրբ էջմիածին:

100. 48աբ Թուղթ մխիթարութեան ի վիճակն Զմիւռնոյ առ Բէրդամայոյ պարոն Ծատուրն. վասն Դընըղոյ մահտեսի Պաշարաթին հանգուցելոյ, եւ շնորհակալութիւն, զի նա սորին բարեկամ եւ բանակատար գոյով՝ ի կողմանէ սորա ձ (100) մուշալ՝ էր տուեալ Դանիէլ վարդապետին թէ՛ հոգեբաժին եւ թէ՛ այլ արդիւնք երկուց ամաց գործակալութեանն՝ ըստ գրեցելոյ Դանիէլ վարդապետին – Յորմէ ժամանեացէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ երկնաձիր մխիթարութեամբ եւ հոգեզուարճ շնորհիւ Միածնաձէջ սրբոյ տեղուոյս, ի վերայ սիրելուոյդ մերոյ եւ հարազատ որդուոյդ Սրբոյ Աթոռոյս քրիստոսասէր, բարեպաշտ եւ մեծահաւատ պարոն Աստուածատուրիդ... Գրեցաւ ի ՌՄՆԵ (1796) թուոջս եւ ի մարտի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջմիածին:

101. 48բ Թուղթ ի Դընըղ առ հանգուցեալ մահտեսի Թաղէտսի որդի մահտեսի Յակոբն. մխիթարութիւն վասն մահուան հօրն, եւ շնորհակալութիւն

վասն հոգեբաժնին – (Սկիզբն ի վերնոյ թղթոյդ) ի վերայ սիրելի եւ հոգեւոր որդւոյդ մերոյ եւ լուսածնունդ զաւակիդ Սրբոյ Աթոռոյս, Տէրամբ զօրացեալ բարեպաշտազուն եւ մեծահաւատ մահտեսի Յակոբիդ... Գրեցաւ ի ՌՄԽն (1796) թուոջս եւ ի մարտի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջ(միաձին)։

102. 49բ Թուղթ ի Զմիւնիա առ հանգուցեալ տէր Յովաննէսի կին Մարիամն. ազդարարութիւն եւ մխիթարութիւն վասն մահուան որդւոյն իւրոյ Գալուստ սարկաւազին, որ ի վայելուչ հասակի երիտասարդութեան վախճանեցաւ ի Սուրբ Աթոռոջս – Յորմէ ժամանեցէ թուղթ հայրական սիրոյ եւ օրհնութեան եւ խաղաղարար սուրբ ողջունի հանդերձ երկնածիր մխիթարութեամբ եւ հոգեզուարճ շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս, ի վերայ հոգեւոր դատերդ մերոյ եւ լուսածնունդ զաւակիդ Սրբոյ Աթոռոյս բարեպաշտունի եւ երկիւղազարդ Մարիամիդ... Գրեցաւ ի ՌՄԽն (1796) թուոջս եւ ի մարտի (տեղը բաց), ի Սուրբ Աթոռս էջ(միաձին)։

103. 49բ Թուղթ ի Բասրա առ պարոն Գեորգն Տէր-Դաւթեան. վասն Զուղայեցի նորազարձ Յովաննէս կրօնատրի տուեալ դրամոցն, զոր սա հասուցեալ էր ի մեծն Պօլիս առ նուիրակ Գալուստ վարդապետն – Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան հանդերձ հոգեզուարճ շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս, ի վերայ սիրելուդ մերոյ ի Տէր եւ հարազատ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս բարեպաշտօն, մեծահաւատ եւ խոհական պարոն Գեորգիդ Տէր-Դաւթեան... Գրեցաւ յամի Տեառն 1796 եւ ի

թուականիս Հայոց ՌՄԽն (1796), յապրիլի ամսոյ Ը (8), ի հրաշագօր Աթոռս Սուրբ էջ(միաձին)։


ՎԱԻԵՐԱԳԻՐ Բ

թղթպ. 6, վաւ. 40 II

Ի դար

Հեղինակ՝ Դուկաս Ա Կարնեցի կթղկս։

ԹԵՐԹ՝ 150-1 (Տբ-ն հաշուառել են 6րդ). չգրուած բոլոր 2րդ երեսները (բացառութեամբ Տբ-ի)։ ՊՐԱԿ՝ Ա-է (Ա՝ 23, Բ-Զ՝ 24, է՝ 6)։ ՆԻԻԹ՝ դպրոցական վանդակատր թուղթ՝ կարմիր գոյնի լուսանցազձերով։ ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 27,8x22,2։ ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին։ ԳԻՐ՝ շղագիր (նմուշ՝ 1ա)։ ՏՈՂ՝ 26։



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բասարաւ. թերթերի եզրերը ծալուած, անկազմ, մամուլներն առանձին-առանձին։

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ արտագրութիւն, ձեռագիր։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Տես ա՛ստ № 280. Վավերագիր Ա, Բովանդակութիւն 1-18, 20-57, 59-87, 89-103։

Ծնբ. Պարունակում է Դուկաս Ա Կարնեցի կթղկսի 1793-1796 թթ. գրուած թղթերը եւ կոնդակները՝ արտագրուած թղթպ. 6, վաւ 40 II-ից (որոշ սխալներով եւ բացթողումներով)։ № 280ի Բովանդակութիւն 58ը ձուլուած է 57ին։


281

ԺՈՂՈՎԱԾՈՅ


թղթպ. 6, վաւ. 41

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 27 (1ին թերթը համարուել էր տխրոսաթերթ, այնինչ մամուլի մաս է կազմում). չգրուած՝ 1աբ։ ՊՐԱԿ՝ Ա-Գ (Ա, Բ՝ 12, Գ՝ 3)։ ՆԻԻԹ՝ թուղթ։ ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35x22,2։ ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն, միասին։ ԳԻՐ՝ նուագիր (նմուշ՝ 2ա), շղագիր (նմուշ՝ 18ա)։ ՏՈՂ՝ տարբեր։



Նմուշ 2ա



Նմուշ 18ա

ՎԻՃԱԿ՝ բասարաւ։

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ սեւագիր արտագրութիւն, ձեռագիր։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Պարունակում է Դուկաս, Դաւիթ, Եփրեմ կա-

թողիկոսների գրութիւններից, Գր. *Տաթևացոյ* Հարցմանց գրից, Որոգայթ փառացից եւ այլ նիւթերից փաղաճներ՝ արտագրողի մեկնաբանութիւններով.

1. 2ա (գրած-ընջած) Շահխաթունեանցի կենսագրութեան համար ի նկատի ունենալ Դիւան պատմութեան հայոց, ձաւագութեան՝ եր. Ը (8) սոյն եւ դիւանի եր. 248 եւ 283:

2. 2ա Սահակ եպիսկոպոս Փառակեցու մասին նոյն գրուած, եր. 4-5:

3. 2ա Յովհաննէս եպիսկոպոս Գառնակեանցի 1813 թուի «եղեալ թղթոց» մէջ գտնուած ենք եւ մի նամակ... Իսկ 1816 թուին նամակների բովանդակութեանց մէջ՝ «Առ ազնիւ Յարութիւն Արարատվն»:

4. 2ա 1818, նոյեմբերի 12. առ Սերովբէ. «Ի մասին ոչ գրելոյն ցայդ Ներսէս սրբազանին զարմանամք, թէ ընդէ՞ր այդչափ նեղիք, որովհետեւ ոչ գոյ ինչ առիթ ատելութեան»: (լուսանցում՝ Սերովբէ):

5. 2ա 1817, ապրիլի 27. «Առ նոյն կնեազն (Գոլիցին), թէ գիր ընկալաք ի նորին վեհ սրբութենէ... Հստ այսմ առաքեցան եւ երկոքին գրութիւնքն ի նորին սրբութենէ՝ եկեալ մինն իւրոյ յանուն պայծառափայլութեան եւ միւսն յանուն պարոն Դուրկինովին» (լուսանցում՝ Սերովբէ):

6. 2ա 1818, օգոստոսի 18. «Թուղթ առ Ներսէս սրբազան եղբայրն... եւ վասն Սերովբէ վարդապետին, թէ հարկաւոր է վերստին շահիլն զնա» (լուսանցում՝ Սերովբէ):

7. 2ա նոյն թուի օգոստոսի 18. գրում է Սերովբէին. «Ներսէս սրբազանն ծանուցեալ էր մեզ, թէ ունեւոյ է ընդ ձեզ հաղորդութիւն սիրոյ գրաւորականաւ այսուհետեւ»:

8. 2բ «Պարտիք ի միաբնադաւան եւ յուղղափառ հաւատս ձեր... հաստատուն եւ անշարժ լինել»: Յակոբ Յ. Շամախեցի. տե՛ս նորա անդրանիկ կոնդակը: Ձեռագիր Սուրբ Էջմիածնի մատենադարանի թ. 747 (լուսանցում՝ Հայերին միաբնադաւան ասող կաթողիկոս):

9. 2բ եւ Սիմէոն կաթողիկոս. տե՛ս նորա կոնդակը նոյն ձեռագրում:

10. 2բ «Իսկ դուք, ժողովուրդդ, մեծաւ երկիւղի եւ ամօթխածութեամբ հնազանդ լեռուք... եւ զչարեաց հնազանդոսն դատապարտելոց է Տէր, որպէս ասեն Գիւրք Սուրբ»: Յակոբ Յ. Շամախեցի. նոյն կոնդակ (լուսանցում՝ Հնազանդութիւն ասալնորաց):

11. 2բ (գրած-ընջած) «Եւ որ անձամբ եւ գլխով են հրեղէն գետի մէջ թաղեալ՝ նոքա են, որ ի սուրբ Խաչ եւ եկեղեցին երդնուն սուտ»... ձեռագիր Սուրբ Էջմիածնի գրատան № 91:

12. 2բ 1818 թուին Աստրախանի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսը յունվարի 12ի նամակով ուղարկել է «եւ զգրութիւնք Քապուլ եղեալ ժողովրդոց մերոց, որ խնդր են փահանայի»:

13. Յա-4ա [Գրիգորի Տաթևացոյ Գիւրք հարցմանց] – Չորրորդ՝ մեծ եւ արժանատւ ժողով եղեւ ի Մանագլերտ ի ՃՀԴ (715) թուականին՝ հրամանաւ եւ արդեամբ գիտնաւոր եւ մեծ իմաստասիրին սրբոյն Յոհաննու կաթողիկոսին Հայոց Օձնեցոյ... որ գթով ողորմութեամբ տիրապէս փաւեսցին եւ ողորմութեան արժանացին: Նոյն, եր. 688:

14. 4աբ (գրած-ընջած) Յարուցեալ Աստուածածին, մայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ել ի լեռն Չիթենեաց... Հրամայեաց հրեշտակապետն, բացան դժոխսն եւ երեւեցան ամենեքեան, որք էին ի սոսկալի եւ ի դժնդակ տանջանս»: Պատմութիւն շարչարանացն ոգոց ի դժոխս, թէ որպէս են: Ձեռագիր մ. էջ. № 91:

15. 4բ «Արդէնի կաթողիկոսն լիակատար իշխանութիւն ունի՝ մինչեւ անգամ եկեղեցու դէմ ընթանալու... Իսկ աշխարհական իշխանութիւն չունի եւ կամ բռնութեամբ պետք է ունենայ, եթէ կամենայ ապօրինաբար իշխելու»։ Արարատ, 1894, նոյեմբեր, կրօնական, Հայաստանեայց եկեղեցու ս. կարգը:

16. 4բ Հրամանաւ Տ.Տ. Մկրտչի Ա. վեհափառ եւ սրբազնագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց (այսֆանը):

17. 4բ (գրած-ընջած) 1837ին Շահխաթունեանց Յ. եպիսկոպոսը Սիմոնի հրամանով կազմել է Մայր Աթոռի գրատան ցուցակը... Շահխաթունեանցը վախճանում է 1849 թ. (լուսանցում՝ Շահխաթ.):

18. 5ա Սուրբ Հովսէփի վանքի գանգակատունը Դուկաս կաթողիկոսը շինել է տուել Սուրաբեցի Խաչիկ աղայ Առաքելեանի խնդրանօք... կոնդակ գրեալ յամին ՌՄԽ (1791):

19. 5աբ Դուկաս կաթողիկոսի կոնդակների պատճենների մէջ կարդում ենք մինը՝ գրուած 1795 թուին – Ի Թիֆլիզ առ Դարաղաղցի Յոհաննէսի որդի պարոն Եսային... Վասնորոյ գամենայն հորտական տուսն ձեր թէ՛ հարկ եւ թէ՛ մաքս բոլորապէս պարտիք Սրբոյ Աթոռոյս հասուցանել (լուսանցում՝ Ճորտութիւն):

20. 5բ Կարապետ Արապկերցին ոչ թէ վարդապետ է եղել Մօզնու վանքի հայր եւ գիւղերի առաջնորդ կարգուելիս (1792 թ.), այլ արքեպիսկոպոս... այդ միջոցին Ղուկասի (կաթողիկոս) հրամանով ձեռնարկում է վանքի վերանորոգութեան եւ ժողովրդի իրանց տեղը վերադարձնելուն (լուսանցում՝ Կ. Վ. Արապկերցի):

21. Ճար 1802 թուին Դաւիթը գրում է Հաշտարխան Յակոբոս Աղաբաբեանին... (այնուհետեւ խնդրում է Աղաբաբեանին թէ ֆահանսաներին եւ թէ ժողովրդին յորդորել, որ հաստարիւմ լինեն դէպի ինքը), (լուսանցում՝ Դաւիթ կաթողիկոս առ Աղաբաբեանն):

22. 7ա-8ա Ղարահիսարի առաջնորդ Յակոբ վարդապետ 1819 թուին, յունիսի 7ին «ի բարձրագոյն խորհրդարանի սրբոյ կաթողիկէ էջմիածնի, երդումն ընդունել եպիսկոպոս ձեռնադրուելու համար»... դիմեցեն ուղղակի ի գիրկս մօռն լուսոյ սրբոյ կաթողիկէ էջմիածնի եւ պաշտպանեցեն (պաշտեցեն, անդէն զկարգ միաբանութեան.....), (լուսանցում՝ Եփրեմ կաթողիկոսի ժամանակ եպիսկոպոսացուների համար սահմանած երդման օրինակից):

23. Ճար Առ պատրիարքն Կ. Պօլսոյ Յովհաննէս արքեպիսկոպոս – Հրամայէ ի խրատ իմաստունն՝ զերախտիս բարեւարի ֆո մոռանար... ոչ ըստ ձերդ դիտման, այլ ըստ վայելչութեան ազգի մերոյ (1806, սեպտ. 10 ի Գրիգորիոսոյ), (լուսանցում՝ Առ Մանուէլ վարդապետի Կիւմուշխանցոյ սեպտ. 10, 1806 թ., ի Գրիգորիոսոյ):

24. Ճր-9ա ...Քաջայայտ ծանօթ է մերս նուաստութեան, որ ի ձէնջ յայսկոյս առաք(եց)եալ ի կերպ վանառականի Գրիգոր Սարգիսով ծպտեալ Բոլենց Աբրահամ վարդապետի կամ եպիսկոպոսի... զի գրեալ է, թէ զուր կարես անձամբ անձին, մի յանձնեցիս մերձատրին.... 1805, հոկտեմբերի 8, ի Գրիգորիոսոյ (լուսանցում՝ Մանուէլ վարդապետի):

25. 9ա-10 (գրած-ջնջած) 1834ի յուլիսի 21ին գրում է Աստրախանի առաջնորդ Սերովբէ արքեպիսկոպոսը Զաֆարիայ արքեպիսկոպոսին – Հագիս ուրեմն ընկալայ յամսեան ապրիլի անցելոյ, մինչդեռ էի ի Ս.Պ.Բուրգ... ըստ որոյ, եթէ հարկ իցէ, տուր նմա անցագիր գնալ ի վիճակս Նախիջեանայ կամ Թիֆլիզու... (լուսանցում՝ Սերովբէ արքեպիսկոպոս Աստրախանի):

26. 10ա Եփրեմ կաթողիկոսի 1815 թ. մարտի 16ին գրած կոնդակ – Հիսուսի Քրիստոսի... ի Թիֆլիս բնակեալ Վանցի Երեմիա Թումայեանն, զոյով հորտացեալ Արարատեան զերագան Սր-

բոյ Աթոռոյս ի ժամանակս հոգելոյս սրբազան Ղուկաս կաթողիկոսին... իսկ այլ ոք ի հոգետրականաց կամ ի մարմնատրականաց չունիցի պահանջել ինչ ի նմանէ կամ յորոցոց իւրոց ի կողմանէ հորտութեանն (լուսանցում՝ Մայր Աթոռի հորտեր):

27. 10աբ Եփրեմ կաթողիկոսը 1817ին գրում է աղա[յ] Յովակիմ Լազարեանին – Նաեւ վասն հաստատութեան բարեհիմն ուսումնարանի ձերում գրեալ էր մեզ ազնուական պարոն Գէորգն Արծրունի... եթէ ունիցիք արդարեւ զյօժարամտութիւն, յայտնեցէ մեզ, ըստ որոյ եւ մեք բունն հարցոմ զայնմանէ (լուսանցում՝ Լազարեան եւմարան):

28. 10բ-1բ Յիսուսի Քրիստոսի... ողջոյն ֆրիստոսական նուիրեմք սիրով եւ օրհնութեամբ բազմաւ պայծառափայլ կնեազ մէլիք Դաւոյի Բեհբուդով... յաղագս պայծառագարդութեան եւ պէսպէս բարութեան կողմանցդ եղեալ ազգի եւ եկեղեցոյ մերում գեղեցիկ բարեկարգութեամբ (լուսանցում՝ Եփրեմ կաթողիկոս):

29. 11բ Եփրեմ կաթողիկոսի Կարին գրուած մի կոնդակի պատեհէնը այս վերնագիրն ունի. «Ի Կարին առ նորին առաջնորդն եւ Սինօթականսն»... եւ առաջադրութեանն աստուածահաստատ Սինօթի մայրաքաղաքի Կարնոյ... (Համար գրատանն Սրբոյ էջմիածնի 766, թիւ կոնդակին 67):

30. 12աբ Եփրեմ կաթողիկոսը 1815 թ. կոնդակ ուղղելով Կարնոյ ֆաղափի եւ վիճակի հոգետրականաց եւ ժողովրդոց՝ պատուիրում է խափանել եւ թոյլ չտալ զանազան ժողովարարներին շրջելու եւ տուրք ու օգնութիւն խնդրելու... Երրորդ՝ գոն եւ բազումք յաշխարհական ժողովարարաց յազգէ Հայոց, որք ստութեամբ զերիս կամ պարտս ունիչ պատահաւելով՝ շրջեն եւ կեղեքեն զազգն մեր...: 1815, փետրվար:

31. 12բ-4բ Եփրեմ կաթողիկոսը գրում է կոնդակ «ի Թիֆլիս առ կնեազ Յովսէփի եւ կնեազ մէլիք Դաւոյի Բեհբուդեանսն. համոզումն ի խաղաղութիւն ընդ առաջնորդին»... Թէեւ այս պատեհէնի ներքեւ թուական չի դրուած, բայց յետագայ միեւնոյն մտքով գրուած կոնդակի թուականն է 1816, սեպտեմբեր:

32. 14բ Յետագայ կոնդակը Թիֆլիզի հասարակութեան վերայ է... Հայրապետը կրկնում է այն ամենը, ինչ գրել էր Բեհբուդեանին, ուստի եւ պատեհէնը առաջ չենք բերում:

33. 15ա-8ա Գիրք անուանեալ Որոգայթ փառաց... – Նախերգանքի մէջ հեղինակն ասում է. «Եւ ես կատարեալապէս սիրոյս յազգին իմոյ եւ

յաշխարհին Հայոց»... Այնուհետև կանոնագիրը սահմանում է կանոններ ժողովրդական երեսփոխանների ընտրության, զանազան պաշտօնեաների պարտաւորութեանց (տէրութեան գլխաւոր պաշտօնները տալիս է բացառապէս հայակրօն հայերին), դատաւարութեան, զինուորական ծառայութեան, տէրութեան գանձատանի հասոյթների եւ այլ[նի] մասին (յուսանցում՝ Ռոզայթ փառաց):

34. 18ա Վրաց Գեօրգի արքայն խնդրած է եղել Ղուկաս կաթողիկոսից ուղարկել սուրբ գեղարդը Թիֆլիս... ի միախարութիւն յաղագս զանազան փորձութեանցն ի վերայ նոցա հասելոց, որոց յետիս էր ժանտախտն:

35. 18ա 1799 թուին Ղուկաս կաթողիկոսը գրում է Կարինի քահանայներին եւ իշխաններին «Թուղթ օրհնութեան. ի պատասխանի բազմակնիք թղթոյն նոցա... զի գնոր Տօնացոյցն, զտպեցեալն ի Սուրբ Աթոս վերստին ջերմեանդ սիրով, եղեալ ձրի ի սուրբ եկեղեցիս ձեր արկանել ի գործ»:

36. 18ա-9բ 1798 թ. նոյն կաթողիկոսը Ռուսաստանի հայերին գրած կոնդակում ասում է ի միջի այլոց. «Ի թուղ Փրկչին 1794, յորում ներհինի բռնատրն (աղա[յ] Մահմատ խանի մասին է իստում) զմն ի յազգայնոց իւրոց ոստիկան էր յղեալ ի Թարեզ հնազանդեցուցանել զիշխողսն կողմանցս... ոչ եղև հնար, վասնորոյ զմեծ մասն զնաց եւ վասն մնացելոյն անհարացեալ մուհակ մատուցալ»:

37. 19բ Դաւիթը գրում է Հնդկաց նուիրակ Յակոբ վարդապետին 1803 թուին Դանիէլի համար. «Չեղև հնար սիրով եւ քաղցրութեամբ դարձուցանել զնա ի վատթար եւ յաթոռաբակ կամացն իւրոց... բայց այլես ունիւք պահել զնա խնամով եւ դիրութեամբ, թէև ըստ առաջնոյն ի կապանս»:

38. 19բ Դաւիթը բանադրում է Մշոյ Սուրբ Կարապետի միաբան Մկրտիչ եւ Մարտիրոս վարդապետներին իբրև Դանիէլի կուսակիցներ:

39. 19բ-20ա 1783 թուի մայիսի 22ին կաթողիկոսը գրում է Պօլսի Մինաս եւ Սահակ եպիսկոպոս նուիրակներին. «Ազնուագոյն սիրելին մեր եւ ցանկալին հոգոյս... եւ յանձնել օրհնեցելոյ արքայի մարդոյն»:

40. 20ա Ռուսիոյ հայոց արքեպիսկոպոս Եփրեմը (յ(ետագայում) կաթ(ողիկոս)) 1818ի մարտի 18ին գրում է աղա[յ] Յովհաննէն Շամիրեա-

նին եւ աղա[յ] Նազար Յակոբջանեանին... դիմելոյ ի հայրենիս եւ մտանելոյ ընդ ամենացանկալի հովանատրութեամբ հզօր թեոց ձերոց:

41. 20բ Ղուկաս կաթողիկոսի կոնդակների բովանդակութեան տետրներից քաղում ենք յետագաները – 1. ՌՄԻԹ (1780), հոկտեմբեր. «Թուղթ սիրոյ առ Իսաղ փաշայն, որում եւ ընծայ յղեաց զնոթեղէնս... 37. ՌՄԼԷ (1788). Թուղթ առ նորոգ օձեցեալ կաթողիկոսն Վրաց Անտօն... եւ պատասխանատրութիւն յառաջագոյն գրեալ սիրոյ թղթոյ նորին»:

42. 25ա-6բ Դաւիթ կաթողիկոսն գրում է – «Ի Պետրբուրգ, առ ենարալ պրկօրօր Ալէքսանդր Անդրէիչ Բէլէշովն»... եւ կամ մեզ հրամայեցէ զմանս առաքել՝ հանդերձ համահաճական թղթով ազգին ի բացատրել զնշմարտութիւնն (յուսանցում՝ թ. 1802, յուլիսի):

43. 26բ-7ա Թուղթ ի միաբանից առ սուրբ Սինօթն Ռուսաց – Պատկեր ինքնայօժար կամօք հրաժարման կաթողիկոսին ամենայն Հայոց տէր Եփրեմայ... զՇահխաթունեան Յովհաննէն վարդապետն:

44. 27ա Եփրեմ կաթողիկոսը 1828ին, փետրվարի 18ին մասնատրութիւն (մասն(ատր) վարդապետութիւն) է տալիս Յովհաննէն վարդապետ Շահրիարդուն: Մի ձեռագիր աշխատութիւն, որ համարում է Սահակ վարդապետի... ոչ ժամանեալ այնմ՝ փոխեցաւ առ Աստուած յամի Տեառն 1780, ի 20 յուլիսի:

45. 27ա Ի նկատի ունենալ՝ 1. Երիցեանցի՝ ամենայն Հայոց կաթողիկոս եւ Յովհաննէն Հայի՝ ԺԹ դ. ա եւ բ մասերը, 2. Գալուստ Շիրմ.՝ Նիսթեր ազգ. պատմ.:

46. 27ա Արդութեանցի մասին՝ 1. Յիշեալ գրքերը, 2. համասայի մէլիֆութիւնը, 3. ձեռագր[ի]րները:

47. 27ա 3. Արարատեանի մասին՝ 1. Երիցեանի աշխատութեան 1[ին] մասն... 4. Մուրեմ, 1898, № 9-10. Թիֆլիսի աւերման հարիւրամեակի մասին:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

15ա (նորագիր) Այս գրքի տպագրուած օրինակը գտնուում է Աստրախանի հոգեւոր դպրոցի գրատանը, իսկ ձեռագիր մի օրինակը Սուրբ Էջմիածնի գրատանն է եւ կրում է 605 համարը:

ՆՇՈՒՄ՝ Տբ «(Յետագայ նամակը պիտի նախընթացից առաջ դնել)»:

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթպ. 6, վառ. 42

ՀԱՇՏԱՐԻԱՆ

ՌՄԽԲ-1793

ԳՐԻԶ՝ Գրիգոր արքյ: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ ար-
բեպա. Արղուրեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսա-
գրով՝ «ГЕРКОУВ», լուսապատկերով՝ թագակիր
ոճաւոր զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵ-
ԾՈՒԹԻՒՆ՝ 38,1x23,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝
նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 34, 39, 40:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նոտագրամբ:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-4 «Արբագնագունեղ գ(հ)ոգեծին ծ(հ)այր եւ
իմ խնամաձու եւ բարեւար տէր — Յանցելում փոս-
տին շունէաթ թուղթ ի սրբագնութենէ ձերմէ, միայն
առաջին փոստովն գիտացաք յուսով լինիլն սրբա-
զան հօրդ իմոյ, վասն բազմանալոյ ոռճկին ձեր...
եւ մեր ետուք երեք ամսով գնալ եւ արգիւնաւորիլ
անդ»: Գրիգոր սեւակիր արեղան շնորհաւորում
է Յովսէփ արբեպա-ին նրա ոռճիկի բարձրացման
կապակցութեամբ, որ նա բազում շնորհ է վայե-
լում Ռուսաց կայսրուհոյ: Աղաչում է տեղի այ-
լատարագ ժողովրդից չվրդովուել եւ չվիրաւո-
րուել, «զի սոքա ո՛չ գիտեան զինչ գործեն», քանի
որ «բոլոր գրեցեալն ձեր ժողովրդեանն ծանուցաք,
ամենեքեան մեղայիւ առ մեզ եկին»: Տեղեկացնում
է, որ «կուպեռնաթն եգորցկու դարձաւ, նամէսնիկն

անարգանօք է ընկալեալ գնա», որն անպիտան եւ
կաշառառու անձ է եւ ոչ մի բարեկան շունի, բա-
ցի մեր պրն Մկրտումից «եւ այն վասն գրութեան
ձեր»: Իսկ «կուպեռնաթն» տան համար քանիցս
խոստացած գումարը խափեց, «Տումիցն ըռիպնի
կանթոռիցն հարիւր թուման խնդրեցաք»: Տէր Աս-
տուածատուրի բակի տունը ծախել է 45 թուման,
նրա մէկ՝ «բաղանիսի տունն»՝ 10 թուման եւ այլն:
Քանի որ բակում տեղ է բացուել, առաջարկում
է փայտէ տուն կառուցել առաջնորդարանի հա-
մար: Աւելացնում է, որ Ծովինարը մի տղայով եւ
իր որդով գնացել էր, մեզ էլ կոչում էր հետեւել
իրեն, «եւ բոլորքն գիտացին, որ արքերէցն գա-
նիւք վարեցէ, վասն այնմ այսուհետեւ ո՛վ հա-
մարձակի գանելն»: Նահանգապետից դժգոհ են
առհասարակ. Ռուսաց հովուապետն էլ է դժգոհ,
նրա մի գրութիւնը պատուել է բոլոր իշխանների
ներկայութեամբ: Իրենմ հովուապետի հետ լաւ
յարաբերութիւններ ունեն, «կամենդաթի հետ եւս
շատ սիրով» են, եւ խնդրում է շնորհակալութեան
թուղթ գրել նրան: Կթղկսի ոսկիները ուղարկել
է «ամանաթ շինեալ ընդ շինի ղութոց», սակայն
ծրարը բացելով՝ չորսի փոխարէն ետեմ հաա «սեւ
ղութին» է եղել, որի մասին տեղեկացրել է վեհա-
պետին: Տէր Մինասին էլ տուել է 5 թուման Մակա-
րիայ գնալու համար: Գրում է նաեւ այլ ապրանք-
ների եւ գների մասին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

4 եւ մնամ վասն ձերոյ բարձր սրբագնութեան
պարտական ծառայ եւ յետին սպասաւոր եւ աւելա-
ծու Գրիգոր սեւակիր արեղայ: 1793, մայիսի 17, ի
Հաշտարխան:

ԱՌԱՋԱՐԿ

թղթպ. 6, վառ. 43ա


[ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐՔՈՒՐԳ]

ՌՄԽԲ-1793


ՀԵՂԻՆԱԿ՝ Ալեքսանդր Սամոյլով:

ԹԵՐԹ՝ 2 (թերթակալուած 1՝ հաշուի շաննելով
չգրուած էջերը). չգրուած՝ 1բ-2ա: ՆԻԻԹ՝ կապոյտ
թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «AMBCA», լու-

սապատկերով՝ տապարն ոսին թագակիր արչ:
ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 34x22,4: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն:
ԳԻՐ՝ ուսուերէն (նմուշ՝ 1ա), նոտագիր (նմուշ՝ 2բ):
ՏՈՂ՝ 20:



Նմուշ 1ա



Նմուշ 2բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. աշակողմեան եւ ներքեպ եզրերն անհարթ, ծալուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Санктъ Петербургскому для остаточныхъ въ Г///стве суммъ казначейству. Отъ правящаго должность генерала прокурора генерала порутчика двора ея императорскаго величества действительнаго камеръгера и кавалера. Предложеніе — Во исполнение именнаго ея императорскаго величества указа в 5^и день генваря 1792^{го} года предлагаю Санктъ Петербургскому для остаточныхъ суммъ казначейству... А Екатеринославской казен-

ной палатѣ предло жено отъ мене означенныя 100 р причислить къ суммамъ московскаго для остаточныхъ суммъ казначейства о чемъ и тому казначейству отъ меня знать дано»: Սանկտ Պետերբուրգի գանձատան գեներալ պրոկուրորի պաշտօնակատար Ալեքսանդր Սամոյլովի 1793 թ. մայիսի 14ի առաջարկն առ այն, որ ի կատարումն 1792 թ. յունվարի 5ի հրամանի, Կարապետ վրդ-ի հասանելի 300 ռուբլի գումարից հաստարմագրով տալ 100 ռուբլի, տարեկան աշխատավարձի մէկ երրորդը, Սանկտ Պետերբուրգի պետական գանձատանից, այլ ոչ թէ փոխարեկ Եկատերինսուլաի պետական գանձարանից, քանի որ նա գտնուում է Սանկտ Պետերբուրգում: Իսկ Եկատերինսուլաի գանձարանը պէտք է նշուած գումարը յատկացնի Մոսկուայի գանձարանին:

Ծնք. Տես ա՛ստ №№ 284, 285:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՅՐԻՆԱԿԻ

1ա Подлинное подписаль Александр Самойлов. Маія 14^{го} дня 1793^{го} года.

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2բ (նոտրգիր) 1793, մայիսի 16, ի Պետրպուրգ: Յաղագս իմ տօնլուխին, ենարալ պրոքորօր Սամուլի-ի տր[ո]ւեցեալ ժալովնիս թխտի կոպիէն է:

284

Ա.Ռ.Ա.ՋԱՐԿ


թղթ. 6, վա. 43բ

[ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ]

ՌՄԽԲ-1793

ՀԵՂԻՆԱԿ՝ Ալեքսանդր Սամոյլով:

ԹԵՐԹ՝ 2 (թերթակալուած 1՝ հաշուի շտնելով չգրուած էջերը). չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «HT», լուսապատկերով՝ շրջանաձեւ ցանկապատ, ներսում զինուորական հանդերձով միապետը՝ գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր առիւծ, աչ ձեռքին սուր, ձախին՝ հրովարտակ. պատկերագրութեան վերեւում կա «PROPATRIA», ներքեւում՝ «TH» մակագրութիւն: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 32,2x19,8: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 34:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Санктъ Петербургскому для оста-

точных сумм казначейству. Отъ правящаго должность генерала прокурора генерала порутчика двора ея императорскаго величества дѣйствительнаго камеръ-гѣбра и кавалера. Предложеніе — *Во исполненіе имяннаго ея императорскаго величества указа въ 5^ю дѣнь генваря 1792^{го} года предлагаю Санкт Петербургскому для остаточных сумм казначейству... А Екатеринославской казенной палатѣ предложено отъ меня означенные денги 200 р. причислить къ суммамъ московскаго для остаточных суммъ казначейству о чемъ и тому казначейству отъ меня знать дано*»: Սանկտ Պետերբուրգի գանձատան զեներալ պրոկուրորի պաշտօնակա-

տաւր Ալեքսանդր Սամոյլովի 1793 թ. փետրուարի 26ի առաջարկն առ այն, որ ի կատարումն 1792 թ. յունվարի 5ի հրամանի, Կարապետ վրդ-ի հասանելի 300 ռուբլի գումարից հաւատարմագրով տալ 200 ռուբլի, անցեալ՝ 1792 թ. աշխատավարձի երկու երրորդը, Սանկտ Պետերբուրգի պետական գանձատանից, այլ ոչ թէ փոխադրել եկատերինսուլաի պետական գանձարանից, քանի որ նա գտնուում է Սանկտ Պետերբուրգում: Իսկ եկատերինսուլաի գանձարանը պէտք է նշուած գումարը յատկացնի Մոսկուայի գանձարանին:

Ծնթ. Տես ա՛ստ № 283, 285:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

1ա А. Самойлов. Февраля 26^{го} дня 1793году.

285

ԱՌԱՋԱՐԿ


թիւր. 6, վա. 44

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՌՄԻԲ-1793

ՍՏԱՅՈՂ՝ Ալեքսանդր Սամոյլով:

ԹԵՐԹ՝ 2 (էջակալուած 1՝ հաշուի շտնելով չգրուած էջերը). չգրուած՝ 1բ-2ա: ՆԻԻԹ՝ թուրք (եգրերը ոսկեգօծ). լուսագծերով, լուսագրով՝ «ТН» լուսապատկերով՝ շրջանաձև ցանկապատ, ներսում զինուորական հանդերձով միապետը՝ գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր առիւծ, աջ ձեռքին՝ սուր, ձախին՝ հրովարտակ. պատկերագրութեան վերևում՝ «PROPATRIA», ներքևում՝ «ТН» մակագրութիւն: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 32,2x19,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 35:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1ա «Екатеринославской Казенной палате: Отъ правящаго должность генерала прокурора генерала порутчика двора Ея императорскаго величества действительнаго кам-

меръ-гера и кавалера. Предложение — *По поводу поданнаго въ экспедицію о государственныхъ доходахъ отъ армянскаго архимандрита Карапеть... причислять къ сумме московскаго для остаточных суммъ казначейства*»: Գեներալ պրոկուրորի պաշտօնատար գեներալ պորուտչիկի առաջարկ-գրութիւնը եկատէրինսուլաի գանձապետարանին այն մասին, որ հնգյց իշխան Պոտյոմկինի կողմից Կարապետ վրդ-ին 300 ռուբլի թոշակ է նշանակուել: 1792 թ. մայիսեան եւ սեպտեմբերեան եռամսեակներին 200 ռուբլի թոշակը երաշխատագրով ստացել է «պորուտչիկ» իշխան Վասիլի Արղուիթեան երկայնաբազուկը: Առ այս պաշտօնեան առաջարկում է մնացորդը փոխանցել մոսկովեան գանձապետարանին՝ ստացումը լուսագրոյն կազմակերպելու համար:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա А. Самойлову. Февраля 26 дня, 1793 года.

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2բ (նտարգիր) Վասն Կարապետ վարդապետի տօնկուղին ի Սենաթեն, 1793 փետրվարի:

Ծնթ. Տես ա՛ստ №№ 283, 284:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ԱԶԳԱԲԱՆՈՒԹԵԱՆ


թղթա. 6, վա. 45

ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈԼ

ՌՄԽԲ-1797

ԳՐԻԶ՝ Յօհաննէս Ենկիպարեանց-Ատիպէկեանց:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2ա: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «1793», լուսապատկերով՝ թագակիր խաչով գահ՝ «M Y» մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35x22: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միապիւն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 36:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Իւրոյ կայսերական մեծութեամբ նախկին Պավլ Պետրովիչ ինֆնակալի ամենայն ընդունաց հրովարտաբաւ Առաջին դատաւոր մաղխատրաթի քաղաքի Գրիգորիուպօլու, դէսպան հայոց եւ ըռուսաց պատերազմական պօսապօլկովնիկ Ստեփաննոսի Գեղամացոյ-Դաւիթովի ազգաբանութիւնն վկայութիւնք – Թէպէտ հաւատարի գիտէաք ուստի գորն եւ լսէաք ի նշանաւոր յազգէ լինիլն վերոյ գրեալ բարձրբարեծնունդ պարոն Ստեփաննոսին... եւ վախճանի ի վիճակի իւրում յիտուն ամեայ կենաց իւրոյ, 1793, սեպտեմբերի 17»: Կայսր Պաւել Պետրովիչի ուկազ-պահանջին ի պատասխան՝ Գրիգորիպօլի մագիստրատը վկայում է, որ պոդպօլկովնիկ Ստեփանոս Գեղամացի-Դաւիթովը ազնուական է՝ սերած սիւսական ցեղից, ապա՝ Դաւիթ Բէկից: Հայրն է Իսահակ Բա-

հանան, որդին՝ Դաւիթը, կրտսեր եղբայրը՝ Էջմիածնի բնիկ միաբան Իսահակ արքեպս-ը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա 1797, նոյեմբերի 15, ի մաղխատրաթին Գրիգորիուպօլու:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

1. 1ա Ազգաբանութեան մեծ պատմագիրք ընթեռն[ե]լով ստորագրեալ քահանայ, եւ տեղեկացեալ անդուստ ստո[յ]գիւ յազգս պայազատ եւ ազնուազարմ պարոն Ստեփանիս, վասնորոյ գրով ձեռամբ նուաստիս վկայեմ գոլ արժանի պատուոյ, զոր ինչ եւ կայսերական տօլվաթէն շնորհեսցի, իբր տէր Մելքոն աւագ քահանայ եւ աւագ եկեղեցոյ, որ կառուցեալ է անուն սուրբ կուսին Կատարիւնէի:

2. 1ա Աւագ քահանայ տէր Յօհաննէս յենկիպարեանց-Ատիպէկե[ա]նց, որ իմ նարդենիս նօտար հայոց մաղխատրաթին Գրիգորիուպօլու, մինչ ընթերցայ զտետրակ պարոն պօսապօլկովնիկի ազգաբանութիւնն եւ համառօտ գրեցի աստ, վասնորոյ ստորագրեցի եւ կնքեցի ի հաստատութիւն վերոյ գրեցեալցս:

ՆՇՈՒՄ՝ 1. 1ա «տեղի կնքոյ մաղխատրաթին»: 2. 1ա (ԺԹ դ.) «Օղանազ՝ Աստուածատուեանի. Դաւիթ բեգն Թիլֆիզեցի է Ամիրեանեանի, որք կոչին այժմ Ղասպ՝, որք եւ այժմ կան ծնունդք ազգի նորա, զոր Շա[հ]նաւազեանն առաքեաց ի Սիսիան՝ օգնական լինիլ հայոց՝ յաւուրս Մեծին Պետրոսի. ԺԳ (14) ամ զօրացաւ յոյժ ընդդէմ պարսից եւ թուրքաց, ժողովեաց զգօրն հայոց մինչեւ ցվառսուն հազար անձինս. յետ յաղթութեանն ինքն մահուամբ փոխեցաւ եւ իւր երեւելիքն անմիաբան լեալ՝ ցրուեցան»:

ԱՆՅԱԳԻՐ

թղթա. 6, վա. 46

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ


ՌՄԽԲ- 1793

ՀԵՂԻՆԱԿ՝ կոմս Զիովաննի:


ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ (ուկեգօծ եզրերով). լուսագծերով, լուսապատկերով՝ շրջանաձև գանկապատ, ներսում միապետը՝ զինու-

րական հանդերձով, գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր առիւժ՝ աչ ձեռքին սուր, ձախիմ՝ հրովարտակ, վերետում՝ «PROPATRIA» մակագրութեամբ, նաեւ՝ ներսից բուսազարդ բոլորակ, ներ-

սում՝ թագ, «GR» մակագրությւն: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 30,6x19,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1ա), իտալերէն (նմուշ՝ 2ա): ՏՈՂ՝ 14, 6:



Նմուշ 1ա



Նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ բասարաբ. գնուսի տեղը պատռուած, նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Ա. 1ա «Божією милостію мы Екатерина Вторая императрица и самодержица всерос- сійская, и прочая, и прочая, и прочая – Объявляется чрезъ сіе всемъ и каждому кому о томъ ведать надлежитъ... Во свидетельство того данъ сей паспортъ съ прилиженіемъ нашея государственныя печати»: Նորին մեծութիւն կայսերուհու անունից գրուած է կոմս Զիրովանիի ձեռով ստորագրուած անցա-

թուղթ՝ ուղղուած ռուս ռազմական ու ֆաղափա- ցիական ենթակառուցումներին առ այն, որ Յովսէփ արեւաք-ի կողմից հոգեւոր եւ այլ հար- ցերով կոստանդնուպոլիս գործուղուած կարապետ վրդ-ի ու նրան ուղեկցող սարկաւազ Աբէլ Յով- հաննէսի եւ երկու այլ հոգեւորականների՝ կարա- պետ եղիազարովի ու Ծատուս Գրիգորովի ազատ եղումուտը ռուսական սահմանին ոչ միայն շխ- չընդրուել, այլեւ հնարատրինս օգնել: Վաւերագրի յաջորդ էջին նոյն անցագրի իտալերէն թարգմա- նութիւնն է:

Բ. 2ա Բովանդակութիւն Աի իտալերէն թարգ- մանութիւնը:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

1ա Въ Санкт Петербурге 18^о июня, 1793^о года. По Ея императорскаго величества указу: графъ Дажованни.

ՅԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2բ Сей паспортъ въ Евпаторійскомъ ка- рантинъ явленъ и означенный армянскій архимандритъ Карапетъ съ находящимся при немъ людьми по выдержаніи определен- наго карантина по освидетельствованіи и покореніи докторскомъ оказались благопо- лучный и чрезъ оной пропущены. Маія 10^о дня 1794^о года. Секундъ-маіоръ Сергей Багаевъ.

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (վնասուած կարմիր գնուս՝ ստանց կնխարոյշի):

288


ՕՐԻՆԱԿԳ ԳՐՈՒԹԵԱՆՅ ՈՏԱՆԱՌՐ

թղթ. 6, վա. 47 ա-գ

ԺԹ դար

ԳՐԱԳԻՐ՝ Զուղայեցի Յօհաննէս Աստուածա- տուրեան (Բ): ՀԵՂԻՆԱԿ՝ Գալուստ դպր (Ա), Պետ- րոս դպր (Բ): ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արեւաք. Արդու- րեան (Ա), Գալուստ դպր (Բ):

ԹԵՐԹ՝ 8 էջ. չգրուած՝ 8: ՊՐԱԿ՝ Աx4: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «AO», լուսա- պատկերով՝ բուսական ռնատրմամբ ուղղան- կիւն, ներսում թագապսակ գաւար: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 33,9x22: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին, երկսիւն, եռա- սիւն: ԳԻՐ՝ նստրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 41-48:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բասարաբ. 1ին էջի հիւմֆի մօտ անցք, թերթերը թելով իրար կարուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ա. (№ 47ա) 1 «Ի նուստ անձնէս Գալուստ անուն մեղապարտ դպրէ համբոյր տիրանուէր աշոյ մեծապատիւ Յովսէփայ արքեպիսկոպոսիդ – Առեալ զլուր բարելի համբաւոյ ձեռամբդ վեհութեան՝ ուրախ եղէ ընդ շքեղութիւն փառացդ... եւ ահաբէկ արարին, յորմէ կամելով իմ զգուշացուցանել ձեզ՝ գայս համառօտութիւն ընծա[յ]եցի բարձրութեանդ, ո՛ղջ լեր: Հայոց թուին ՌՄԽԲ (1793) եւ Արացի Դ (4)»: Գալուստ դպիրը գրութեամբ դիմում է Յովսէփայ արքեպ. Արղութեանին. «Ընթերցայ զթուղթ ձեր, տպագրեալ ի Մատրաս յամի 1791 եւ ի Հայոց ՌՄԽ, եւ տեսի ի նմա գրեալ ինչ-ինչ ընդդէմ պատմութեան հայոց եւ նախատինս ծանուս յոյժ-յոյժ ընդդէմ յօրինողի նորին» (նկատի ունի Միքայէլ Չամչեանի «Հայոց պատմութիւն»ը): Նշում է, որ ինքն էլ է վրիպակ գտել երրորդ հատորի վերջում. «զմականուն նախընթացին յաջորդիդ տալով» եւ այլն:

Բ. (№ 47բ) 2-3 «Պատասխան վերոյ գրեալ թղթոյն – Ի յետեալ անձնէ Պետրոս անուն դպրէ՝ մեծանուն Գալուստ դպրի զգալի տեսութեամբ անծանօթ եղելոյ խնդալ. յառաջ քան զանձին եւ զգիտութեան զհանգամանս արդեանց համբաւոյ առնուն իմ ախտակիր գբացման անբարի բարուցդ ի գիտութեանէ անտի... Ի թուին Հայոցս ՌՄԽԴ (1795), Մարերի ԺԴ (14), ի Յաշտարխան»: Աստրախանից Պետրոս դպիրը պատասխան թուղթ է գրում Գալուստ դպրին՝ նկատելով, «զի այր ի նամակէ իւրմէ ճանաչի» եւ «դու վասն անձին քոյ վկայես եւ վկայութիւն քո[յ] չէ ճշմարիտ»: Մեղադրում է նրան Յովսէփայ արքեպ. Արղութեանին ֆինադատելու համար՝ ասելով. «Վեհն իմ սրբազան զմեծագոյն աշխատանսն առն երեվելոյ բանասիրին Չամչեանի ո՛ղ միայն գովէ, այլեւ ի դպրատան իւրում զնորին Քերականութիւնն իբրու անստերիւր շաւիղ եւ անպակաս կատարելութիւն այնր արհեստի բնաւից աշակերտելոցն պատուիրանաւ յառաջարկէ»: Այ-

նունեաւ անդրադառնում է Յովսէփայ Արղութեանի մեծաձայն գործունեութեանը, հակադարձում գրածներին եւ զարմանում նրա տղայամիտ իմաստակութեան վրայ՝ աւելացնելով. «Ապաքէն որ ի բարձունս զքար ձգէ՝ ի վերայ գլխոյ իւրոյ անկցի» եւ այլն:

Գ. (№ 47գ) Պարունակում է յանգատը հինգ ռոսանաւոր՝ նուիրուած Մխիթար արքային, Յարութիւն րաբունուն, Սիմէոն կրթկսին, Մարդ արարածին, Թադէոս վրդ-ին.

1. 4 Պատեմն ռոսանաւորին ֆանդակելոյ ի կափարիչն դամբարանի Մխիթարայ արքային – Քնար քերօք հոգետաւիղ՝ ներկուռ մատին աստուածաճիղ, աստեալ Սեբաստ մարզէն խաւիղ՝ րակերտ արբայ լուսաշաւիղ... յասպեան Հայոց արժանի տօն, նուազ ոսկի ընծայի ձօն:

2. 5 Տերունեան կոչման եղեալ զուգակիր, Յարութիւն անուն՝ մեծ խորհրդակիր... մահ եւ յարութիւն ի մի լծակիր: Յամի Տեառն 1796, ի մարտի 14:

3. 5 Քրիստոս Աստուածդ իմ Տէր բարի, լուր աղետից քոյս ծառայի... վասն խաշիղ զոր պաշտեցի եւ սուրբ անունդ զոր կրեցի, Սիմէոն կաթուղիկոս Երեւանցի: Ի ՌՄԽԹ (1780), յուլիսի 24:

4. 6 Անցք ստուերի՝ է փառք մարդոյ, հոլովի յար՝ որպէս անուոյ... արդարութիւնն հաւասարօղ, ողջախոհ կեանն աւել մաքրօղ:


5. 7 Թագուն բնութեան երկնի երկնի ողջասահման, Աստուած աստուծոյնց - րոտմամբ սրտի սիրագոչ ձայն... Թաղէսու որ սովեստ ես սքանչելի, երկնագէտ հրաշաբան վարդապետ, ոսկեբարձ նաւ եկեալ ի Թարսսայ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐՉԻ

3 Գրեցաւ Զուղայեցի Աստուածատուեան ի Յօհաննէս դպրէ. խնդրեմ ի քէն, զի ըստ այսմ եւ դու յայտնապէս գրեսցես զտեղիդ ընդ անուանդ:

ԳՐԻՉ՝ տէր Յակոբ (տե՛ս 1բ-ում):
 ԹԵՐԹ՝ 2: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «BUDGEN»: ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 22,7x17,9:

ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ մանր բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 35:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բարարա՛:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա-2բ «Յամի Տեառն հազար եօթն հարիւր իննսուն երեք, մայիս ամսունմն աստ՝ Կալկաթայ քաղաքի Սուրբ Նազարէթ հայոց եկեղեցում պատկառելի խոռովութիւն էր պատահել՝ զրպարտութեամբ մութավալի Յօհաննէս տէր Աւէտին առ տէր Կարապետ քահանայն յիշեալ եկեղեցոյ... Ապա եւ Ներսէս Յօհաննէսն տեսանելով կուժիսար պարոնաց միտքն միշտ ի խրովութեան //» (թերի): Նոր Զուղայից տէր Յակոբ քահանան, որ յետոյ ուղարկուում է Կալկաթայ, գրում է, որ 1793 թ. Կալկաթայի Սբ. Նազարէթ հայկական եկեղեցու ֆիյ տէր Կարապետի եւ «մութավալի» Յօհաննէս Տէր-Աւետի միջեւ վեճ է տեղի ունենում: Եկեղեցու քահանաները դիմում են հասարակ ժողովրդին, Նոր Նախիջեւանի տէր Ստեփաննոս աւագ ֆիյին եւ Թիֆլիզի տէր Դաւիթ ֆիյին գալ, հաւաքուել եւ մասնակցել ժողովին: Ներկայանում են նաեւ պարոնայք Սարգիս Տէր-Յօհաննէսն, Ստեփան միրզան, Մօսէս Խաչիկ Առաքելն, իլիւզ Մինասն եւ Ներսէս Յօհաննէսն: Ներկայ պարոններն առանձնանալով եւ ծածուկ ֆննարկելով, «առանց քննութեան եւ յանցանք ինչ հաստատել վկայիւք», հասարակ ժողովրդի կամֆին հակառակ, վճիռ են կայացնում տէր Կարապետին եւ միւս քահանայ տէր Բաղդասարին «վիճակիցն եւ եկեղեցուցն ելանել»: Նրանց

պաշտպան է կանգնում հասարակ ժողովուրդը: Պարոնայք ունան գաղտնի նամակ են գրում Նոր Զուղայի արքեպս-ին եւ պահանջում յիշեալ 2 քահանաներին «հանել ի վիճակէն եւ այլ քահանայս առաքել», որ եւ վերջինս, առանց ֆննելու եւ հարուստ անձանց շահելու համար տէր Գալուստ եւ տէր Յակոբ քահանաներին հրամանագրով ուղարկում է Կալկաթայ: Տէր Կարապետին, Յօհաննէսի գանգատից յետոյ, բանտարկում են: «Եւ ականատես տեսողքն ասացին, թէ Սարգիսն յիսուն գուլ մօճր էրես մութավալի Յօհաննէսին, թէ գնայ գանգատիր եւ բանտ դնել տուր»: Տէր Կարապետը բանտից ազատում է եւ գանգատում այդ պարոնների դէմ: Եւ «պարոնայքն բազում աղաչանօք եւ միջնորդ արկանելով եկին տէր Կարապետի ոտն անկան եւ մեղայ գոչելով ներողութիւն խնդրեցին»: Տէր Կարապետը «իբրեւ հայր զթացաւ եւ ներեաց. եւ եկաւ վերստին վիճակի քահանայ դարձաւ»: Նոր Զուղայի արքեպս-ի՝ Մարգարոսն մահանալուց յետոյ, որպէսզի ժողովուրդը չհաւաքուի եկեղեցում է գանգատ անի, պարոնայք որոշում են «ժողովրդեան միջումն հինգ անձինք կուժիսար կարգենք, որ մասեհի գանգատին եւ կամ այլ ինչ մասնաւոր բան, որ լինի եկեղեցուն, նոյն հինգ անձինք խորհուրդ առնեն, նոքա ինչ հարկաւոր տեսնուն, մութավալոցն հրամայեն, եւ մութավալին կուժիսարաց հրամանն հրամայէ քահանայիցն», որ ամէն մի հասարակ բանի համար ժողովուրդը չհաւաքուի: Պարզամիտ ժողովուրդը չհասկացաւ պարոնների գաղտնի մտադրութիւնը: Ունենալով ժողովրդի վստահութիւնը եւ ստորագրութիւնները՝ «կուժիսարները» կարգադրում են եկեղեցու բոլոր քահանաներին հեռանալ եկեղեցուց եւ լ՛ի վիճակը եւ այլն:

290

ԳՐՈՒԹԻՒՆ

թղթ. 6, վա. 49


ՀԱՇՏԱՐԻՍԱՆ

ՌՄԽԲ-1793

ԳԻԹՉ՝ Գրիգոր արքյ: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպս. Արդուքեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 4: ՆԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «Ճ Մ» (առանձին), լու-

սապատկերով՝ երկիցս ոճատր զարդանախշ՝ ներսում «Ճ Մ» մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35,5x22: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻԹ՝ նուրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 34-35:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:
ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1-3 «Սրբազնագունեղ հայր եւ իմ խնամածութեամբ տէր — Փետրվարի 11էն գրեցեալ գիրն սրբազնութեանդ ի սոյն կէտ ընկալայ, եւ հարկաւոր վարկայ սակաւ գրութեամբս յայտ առնել սրբազնութեանդ, զ[պ]ատասխան թղթոյն ձերոյ բարձր սրբազնութեանն... Կարապետ վարդապետ հօրս՝ զսուրբ աջն համբուրեմ եւ Աբրահամ վարդապետին եղբայրական սիրով ողջոյն տամ՝ ընդ քնեազ Բարսեղին, տիրացու Խաչատուրին եւ այլոց ծառ[ա]յ յակցացս»: Հաշտարխանից Գրիգոր արեղան Յովսէփ արեղայս. Արղութեանին տեղեկացնում է, որ յոյս ունի «Սիմօն Սէրկէիչն իւր տեղն նստի, եւ

մեզ բաւականութիւն ինքնին տայ», եւ ասրբեր տեղերից հաւաքած դրամներն ուղարկել է Մուկուայ Աւետ Գալուստիչին, որ ոսկի առնելով՝ շատ հասցնի իրեն, որ ինքն էլ ուղարկի վեհապետին: Նշում է, թէ ինչ հոթեղէն է վաճառել: Նաեւ տէր Կոստանտին չի կարող «պաշտպոռբ(տ)» առաքել, որովհետեւ պրն Մկրտումը նրան տէր է կանգնել, իսկ թէ այդ հրամանը կատարի՝ պիտի ֆաղափից փախչի, քանի որ «տէր Կոստանդն այնպէս օյինէր խաղաց ընդ յիս, զի մարդ չէր, որ կարողանայր գայն տանիր»: Ձկները փոստով է ուղարկել, Թագէտս վարդապետի խնդրածներն էլ է առաքել: Օրացոյցից հազիւ 200 հատ է վաճառուել, «որն հինգ շահով, եւ որն մին ապաստով, եւ որն երեք շահով» եւ այլն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2 Եւ մնամ վասն ձերոյ բարձր սրբազնութեանն պատրաստական ծառայ եւ յետին սպասաւոր եւ յաւելածո՛ւ Գրիգոր արեղայ: 1793, մարտի 3, ի Հաշտարխան:
Ծնթ. Տես նաեւ ա՛ստ №№ 277, 292:


291
ՕՐԻՆԱԿ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

թղթ. 6, վա. 50-51

ԺԹ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ պրն Շամիր Սուլթանեան: ՍՏԱՅՈՂ՝ բժիշկ Ջեյմս Անդերսեն:

ԹԵՐԹ՝ 4 (էջակալուած 1-5՝ հաշուի շառնելով չգրուած թերթերը). չգրուած՝ 1աբ, 4բ: ՊՐԱԿ՝ Աx4: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 21x18,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միաթիւն: ԳԻՐ՝ մանր նոտագիր (նմուշ՝ 2ա): ՏՈՂ՝ 22-23:



Նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ անգլերէնից հայերէն թարգմանութեան, ձեռագիր:
ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

Թարգմանութիւնն է Շամիր Սուլթանի՝ Մարդաս

ֆաղափ անգլիացի բժիշկ պրն Ջեյմս Անդերսոնին գրած նամակի, որով աշխատում է փաստերով ապացուցել, որ Աղամի լեզուն հայերէնն է եղել, Յարեթից սերուած ժողովուրդը հայերն են եւ կիրը Արարատեան.

1 (№ 50). 2ա-3բ «Թարգմանութիւն գրոյ միոյ պարոն Շամիր Սուլթանեանէ առ մեծ բժիշկն ֆաղափս պարոն Ջեյմս Անդրսանն: Բժիշկ Ջիմս Անդրան. արժանատր պարոն — Ոչ թէ միայն ունիմ ուրախութիւն եւ մխիթարութիւն պատասխանել քոյին հարցմանց վասն ծանօթութեան քոյ յաղագս լեզուի եւ հեղինակի ազգին իմոյ Հայոց... եւ ես գոլով տրուպ մի յայնմ յազգէ՛ խնդալոց եմ յոյժ լսել զ[յ]աջողութիւն բանին, մնալով բազում խոնարհութեամբ եւ պատուով»: Վերջում նշում է, որ ինքը նրան մի խոյ է ուղարկել Անգլիայում բազմացնելու համար, որի «գեղմը» պատուական է:

2 (№ 51). 4ա «Ա.Գ. Այլեւ ունիմ մխիթարութիւն այսմիկ յուղարկել քեզ յօդուած մի ի յապա-

նիացոց յաշխարհագրոյ պատմութենէ, հանդերձ որոյ թարգմանութեամբն ի անգլիացոց բարբառ, վերաբերող լեզուին Հայոց, զոր եւ զայս հաստատէ լինիլ զլեզուն նախահօրն մերոյ Ադամայ: Թարգմանութիւն յօդուածոյ միոյ ի սպանիացոց յաշխարհագրոյ պատմութենէ՝ արարեցելոյ ի հեղինակ սրբակրօն Պէտր Մուլիլօն, Մէքսիկօ, եւ տպագրեալ ի Մադրիտ յամի 1752 – Հայ՝ է՝ բնիկն Հայաստանի, զոր այժմ ժամանակիս է զբառն... հրամանան Աստուծոյ յաղագս գործոյ բազմանալոյն սեռն մարդկային՝ նորբա, որդիք նոցա եւ թոռունք նոցա. եւ ամ[ենայն] սերունդք նոցա խօսէին

ի նոյն բարբառ»: Մադրիդում 1752 թ. տպուած Պետր Մուլիլօյի յօդուածը Շահամիր Սուլթանն ուղարկում է Ջեմս Անդերսենին, որտեղ նշում է, որ Ադամը, նոյք հայերէն են խօսել, եւ բոլոր ցեղերն այդ տեղից՝ նախիջեւանից են սերունդ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

Յա Ի Մադրաս, 29 նոյեմբերի: 1793: Արժանատր պարօն քոյդ առակել հնազանդ խոնարհ ծառայ (ձեռնագրեալ) Շամիր Սուլթան:

Ծնթ. Տես նաեւ ա՛ստ № 62:

292

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթա. 6, վա. 52

ՀԱՇՏԱՐԻՆԱՆ

ՌՄԽԲ-1793

ԳՐԻՉ՝ Գրիգոր արքյ: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպս. Արղուբեան:

ԹԵՆԹ՝ 4 էջ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսապակեով՝ ռեառ զարդանախշ՝ ներսում «Ը Մ» մակագրութեամբ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35,4x22,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 34-35:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-4 «Մրբագնագունեղ հայր եւ իմ խնամածու բարերար տէր – Ի բարձր սրբազնութենէդ գրեցեալ մարտի 10էն ախորժ թուղթն նոյն ամսոյ երեսնին էհաս առ մեզ, որոյ ընկալեալ մեր՝ գիտացաք նախ զցանկալի առողջութենէդ եւ առաջումն ազգաօգուտ գործոյդ... միռւքն, որ եւ իշխանք կոչին, մեկ փողի հարկաւորութիւն չունին, սա բոլորեցունց բերնի սանձն է. եւ այլն»: Գրիգոր արքեղան Յովսէփ արքեպս. Արղութեանին տեղեկացնում է պրն Մկրտում Գալստեանի մասին, որ «առ ձեզ անկարելի

լինի ի պատճառս ընծայից, զոր տեղուոյտ վայել իրք այժմ աստ ոչ գտանի»: Եւ մինչ ուղարկել էր կանչելու մի քանի իշխանների եւ «զֆապրիկանդս», նոյն օրը վախճանում է պրն Յովհաննէս Կուլասպեանը, ով կտակ չունէր, այլ միայն պրն Մկրտումի հոգաբարձութեամբ, նրա մահուանից յետոյ եւ հնգցի կնոջ խնդրանքով, «միջնորդեցաք եւ յանձն առնել ետուք»: Եւ եթէ պրն Մկրտումը հայրութիւն չանի, «բոլորն փշք կերդայ. պատճառ հինգ հազար հինգ հարիւր թուման պարտք է դու[ր]ս եկած»: Լսել է նաեւ, որ պրն Մաթէոս Բարեկենդանին 5 օր Մոսկուայում է մնացել եւ հանապարհին մեծ նեղութիւն կրել, ու խոնարհաբար խնդրում է սրբազանին վարձահատոյց լինել նրան: «Գուշր» Ալեքսէի մասին էլ գրում, որ եկել է իր մօտ եւ ոչինչ չի անում, խնդրում է սրբազնութեանը գրել, թէ ինչպէս վարուի նրա հետ, թէպէտ ինքը Մօսէյին եւ որդուն բերել է տուն: Միմօն Սերգէյիչն էլ արդարացուել է, «իսկ կուպեռնաթն այսօր վաղն ձգէ. չգիտէ՞ք պատճառն, թէ ի՛նչ է»: Ուն Մինաս միշտ շարախօսում է սրբազանից, չնայած սրբազանը նրան լաւ է վերաբերում եւ այլն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

4 Մնամ վասն ձերոյ բարձր սրբազնութեանն պատրաստական յետին սպասաւոր եւ [յ]աւելածո՛ւ Գրիգոր արքեղայ: 1793, ապրելի 5, ի Հաշտարխան: Ծնթ. Տես նաեւ ա՛ստ №№ 277, 290:

293
ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ


թղթպ. 6, վառ. 53

ԹԱԴԵՆՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՎԱՆՔ

ՌՄԽԲ-1793

ՀԵՂԻՆԱԿ՝ ԳԷՈՐԳ ԱՐԲԵԱԿԱՆ:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «GF», երկու լուսապատկերով (անընկալելի): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 70,8x34,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 77:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. տառերը տեղ-տեղ վնասուած, հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Ի գեղեցկագաց գրանէ, եւ ի սքանչելագործ սուրբ եւ ամենամաքուր շիրմէ, եւ գերահրաշ սուրբ գերեզմանէ, եւ այլ ամենայն սրբոց մասանց եւ պատուական սուրբ նշխարաց. եւ ի սոցին յետնեալ ծառայէ, ի տէր Գէորգ վարդապետէ եւ ար-

հիեպիսկոպոսէ եւ առաջնորդէ, յորմէ հասցէ գիր սիրոյ, նամակ ողջունի եւ կոնդակ օրհնութեան... որ ասէ. «Եկայք, օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի» (Մատթ. ԻԵ 34): Ամէն: Հայր մեր, որ յեր՝»: Պարսկաստանի առաջնորդ Գէորգ արքեպս-ի օրհնութեան գիրն է Թարիզի ազգաբնակչութեանը ցուցաբերած սիրալիք ընդունելութեան եւ առատ նուէրների առթիւ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրուեցաւ նամակս օրհնութեան ի ՌՄԽԲ (1793)ին առ դրանն սրբազան առաքելոյն Թաղէտսի:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ (ժԸ դ., նոտրգիր) Ի Թարվիզու օրհնեալ քաղաքի օրհնութեան գիրն է, որ ի մէջ սրբոյ եկեղեցւոյն ընթեռնանի յաւուր կիրակէի:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (սե բանաճով, բոլորակ) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒԱՅ /ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ /1234 (1785)»:


294
ԿՏԱԿ

թղթպ. 6, վառ. 54աբ

ԺԹ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Մասեն (1794, 1795 թթ.):

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ մոխրագոյն թուղթ. լուսագրով՝ «HARRIS & M^cMURDO», «1814»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 41,6x26,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 62, 65, 69:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերն անհարթ: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ կրկնօրինակ, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1 (№ 54ա). 1-2 «Ամենայսուրբ Երրորդութիւնն եւ միա[ստուա]ծութիւնն՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի – Կեցո՛ զիս՝ ներքոյ ըստորագրող Բաբաջանի (եւ կամ հասարակ կոչմամբ՝ Մարտիրոսի) որդի Մասենս, որ եմ հաւատով ուղ[ղ]ափառ քրիստոնիեայ, ազգաւ Հայ, քաղաքաւ եւ ծննդեամբ Համնադացի, գործով վաճառական, բնակիչ Կալկաթայ քաղաքիս, որ ի Հնդկիս, ընդ տէրութեամբ անկլիացոց. ամէն... Արդ՝ վերջաւորութիւնն տալով բանից իմոց՝ հ(յ)ա[յ]տնեմ, զի այս է իմ վերջին կամք եւ պատվէրն, որպէս ահա՛ վասն հաստատութեան եւ հաւաստութե[ա]ն չորք թուղթ մին օրինակ գրեցի եւ ի ներկայութիւնն վկայիցն ստորագրեցի

եւ կնքեցի ի փառս ամէնօրհնեալ Հօր եւ Որդ[ւ]ոյն եւ Հոգ[ւ]ոյն Սրբոյ միոյն Աստուծոյ, որում փառք եւ երկրպագութիւն մատուցցի անզրաւ յաւիտենից. ամէն»։ Համադանցի Մասեհ Բաբաջանը Կալկաթայում 1794 թ. մայիսի 30ին իր բոլոր անշարժ եւ շարժական կայքը կտակում է եւ իր կտակակատարներին պատուիրում. առաջին՝ իրեն թաղել եկեղեցու գալիքում մօր գերեզմանի մօտ, իսկ եթէ չհամաձայնուեն եւ գումար պահանջեն, ապա շարադրում է, թէ ինչ պէտք է անել։ Երկրորդ՝ Ստեփաննոս Յարութիւնի տան սահմանակից իր երկրորդ տունը յանձնեն իր աղախին Աննային, եւ իր մահուանից յետոյ որքան կենդանի մնայ՝ «Ֆի ամսէն երեսուն եւ մին ռուֆի սքայ խարջի տացեն նմայ» եւ այլ մանրամասնութիւններ։ Երրորդ՝ ամբողջ ունեցուածքը 16 մասի բաժանել. 8-ը՝ Նոր Նախիջեանի Յազաֆ գաւառի բարեկարգութեանը (այսինքն՝ 2-ական մաս դպրատանը, աղբատանոցին, հիւանդանոցին, որբանոցին), 6 մասը՝ Կալկաթայի «Կօրտաֆոնիկէշտի» բանտարկեալներին համար, 2-ը՝ Կալկաթայ եկող «ազգ-դարիբականաց», այսինքն՝ Հայաստան աշխարհից եկող պանդուխտների համար եւ այլ մանրամասնութիւններ։ Չորրորդ՝ թէպէտ հաւաստի գիտի, որ ազգական չունի, սակայն եթէ յայտնուեն, «Իւրաքանչիւրոցն հինգ ռուֆի սքայ սլամաթի եւ մասն տացեն միանգամ յամենայն կայից»։ Հինգերորդ՝ «ի լրովիւն եւ ի կատարումն վեր յիշատակեալ բանից»՝ բանակատարներ կամ վեֆիւներ է կարգում պրն Ներսէս Յովհաննէսին եւ պրն Դիոնիսիոս Հայրապետին։ Իսկ երրորդ վեֆիւ է կարգում «Կօրտաֆոնէկուիշտի դատաւորաց»։

2 (№ 54բ). 3 «Յայտնի լիցի ամենեցուն, զի ես՝ ներքոյ ստորագրող Համանդացի Բաբաջանի որդի Մասեհս (որ հասարակ կոչմամբ՝ Աբդիմետն Մարտիրոս կոչիմ), յամի Տեառն 1794, մայիսի 30: Չոք դանայ ի մին օրինակ կտակ ունիմ գրեալ... Եւ ահա՛ առ այս զերկուս թուղաս գրել ի մի օրինակ ի ներկայութեան վկայիցն ըստորագրեցի, կնքեցի եւ հ(յ) անձնեցի յիշեալ տէր Ստեփաննոս Տէր-Յարութիւնին: Այսու ամենայնիւ զայստսիկ ինձ պարգեւողին

Աստուծոյ մատուցանեմ փառս եւ երկրպագութիւնս անզրաւ յաւիտենիւ. ամէն»։ Մասեհ Բաբաջանը 1794 թ. մայիսի 30ին արած կտակում 1795 թ. ապրիլին փոփոխութիւն է կատարում։ Կտակում յիշատակուած, իրենց եկեղեցուն սահմանակից իր նորաշէն տունը հանում եւ կտակում է Նոր Նախիջեանի Սուրբ Լուսաւորիչ Աւագ եկեղեցուն, որ նրա եկամտաով պահեն եկեղեցում գործող սուրբ Մասակ եւ սուրբ Մեսրոպ դպրատունը՝ նշելով, որ «զփոխարէն տանս այս ըստացայ եւ հաստատեցի ինձ յիշատակ...», որ իմ յիշատակն մնասցեն ի Նոր Նախիջեան եւ տպեալ գրեանս յիշատակեցին»։ Կտակը յանձնում է Նոր Նախիջեանից եկած Ստեփաննոս Բեյին։ Յիշատակուած է նաեւ տան վաճառքի եւ այլ գումարների մանրամասնութիւններ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

- 1. 2 եղեւ հ(յ)ամի Տեառն հազար եօթն հարիւր իննսուն եւ չորք, ի մայիսի ամսոյն յերեսնոջն, ի Կալկաթայ։ Մասեհ Բաբաջան կամ Մարտիրոս (կողմին՝ ստորագրութեան օղակ)։
- 2. 3 եղեւ յամի Տեառն հազար եօթն հարիւր իննսուն եւ հինգ, ապրելի ամսոյն մին, ի Կալկաթայ։ Մասեհ Պապաջան կամ Մարտիրոս (կողմին՝ ստորագրութեան օղակ)։

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

- 1. 2 Վկայեմք, որ ստորագրեաց եւ կնքեաց հառչակեաց եւ հաւանեաց վերն յիշեալ Մասեհ Բաբաջան (կամ հասարակ կոչմամբ՝ Մասեհ Մարտիրոսն), թէ՛ Այս իմ կտակնայ, եւ իմ վերջին կամքնայ. եւ իւր խնդրանօքն մեր անունն գրեցինք աստ որպէս վկայ վերն գրածն չորք մին օրինակ գոլով համեմատ միմեանց մի եւ նոյն ժամ[ա]նակումն ձեռնադրեաց առաջին մեր՝ տէր Ստեփաննոս քահանայ Տէր-Յարութիւն, Մարգար Ռհաննէսիան Բաբումիանց, Յովանջան Պետրոսեան։
- 2. 3 Վկայեմք, որ ստորագրեաց, կնքեաց եւ յանձնեաց էլիազ Մինասին, Մուրադ էլիազին։

ՆՇՈՒՄ՝ 4 (ԺԷ դ.) «Նումրայ 2. ծախելագիրն»։


**295
ԿՏԱԿ**

թղթայ. 6, վաւ. 54գ

ԺԹ դար

Հեղինակ՝ Մասեհ Բաբաջան (1794, 1795 թթ.)։ Թեթթ՝ 8 էջ։ Նիւթ՝ թուղթ. լուսագրով՝ «Π Γ»,

«1841»։ Մեծնիւթիւն՝ 34,7x22,5։ Գրնիւթիւն՝ մի-ասիւն։ Գիր՝ նոտրգիր (նմուշ՝ 1)։ ՏՈՂ՝ 33։



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ կրկնօրինակ, ձեռագիր:


Ծնթ. Կրկնօրինակն է ՆՁ 294 Կտակի՝ գրուած այլ բոլորի վրայ, այլ ձեռագրով, սրբագրումներով:

296
ԿՏԱԿ

թղթայ. 6, վաւ. 54դ-է

ԺԹ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Մասեն Բարաջան (1794, 1795 թթ.):
ԹԵՐԹ՝ 12 էջ. չգրուած՝ 8, 12: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 27,8x22,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 28-29:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ կրկնօրինակ, ձեռագիր:

Ծնթ. 1. Նախկինում 54 դ-ն եւ 54 ե-ն համարել են որպէս առանձին վաւերագրեր, այնինչ սրանք նոյն փաստաթղթի երկու մասերն են՝ գրուած միեւնոյն ձեռագրով, միեւ-

297
ԿՏԱԿ

թղթայ. 6, վաւ. 55

ԺԹ դար

ԳՐԱԳԻՐ՝ Զուգեպէ Սօգի (1794 թ.), դպր Սիւսէօն Այլվազեան (ԺԹ դ.): ՀԵՂԻՆԱԿ՝ Մարէտս Ոհաննէս (1794 թ.):

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2աբ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «BUDGEN & WILMOTT. 1808», լուսապատկերով՝ զարդատր ետէ բոլորակ, վրան կրկնակի խաչակիր թագ, ներսում՝ եռաժանին ձեռքին առիւծ: ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 32x19,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրանման բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 40, 32:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Տես ա՛ստ ՆՁ 294, Բովանդակութիւն 1 (ՆՁ 54ա), 2 (ՆՁ 54բ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
Տես ա՛ստ ՆՁ 294, Յիշատակարան 1, 2:
ՎԿԱՅՈՒԹԻՒՆ
Տես ա՛ստ ՆՁ 294, Վկայութիւն 1, 2:
ՀՆՇԱԳՐՈՇՄ՝ 1-8 թերթերի վերին անկիւններում (անընթեռնելի):

նոյն թղթի վրայ: Ըստ այդմ՝ փաստաթուղթը միացրեցինք, թերթակալումը փոփոխեցինք՝ զոյգահամարները թողնելով նոյնութեամբ:

2. Կրկնօրինակն է ՆՁՆՁ 294 եւ 295 Կտակի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Տես ա՛ստ ՆՁ 294, Բովանդակութիւն 1 (ՆՁ 54ա), 2 (ՆՁ 54բ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տես ա՛ստ ՆՁ 294, Յիշատակարան 1, 2:
ՎԿԱՅՈՒԹԻՒՆ
Տես ա՛ստ ՆՁ 294, Վկայութիւն 1, 2:
ՀՆՇԱԳՐՈՇՄ՝ 1-12 թերթերի վերին անկիւններում (անընթեռնելի):

Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ստորին մասերում խոնաւութեան հետեւեւ, գրադաշտը գունաւիոխուած:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ կրկնօրինակ, ձեռագիր:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «[Յ]անուն Հօր եւ Որդ[ւ]ոյ եւ Հոգ[ւ]ոյն Սրբոյ. ամէն: Որպէս ասէ սրբազան առաքեալն Պողոս. Կտակ յետ մահուան հաստատուն է (Եբր. Թ 17): Կամ/իվն Ամենակալին – ես՝ Ոհաննէսի որդի Մաթէոսըս իմ կենդանութեամբն եւ խելքս բոլոր, ինձ կտակակատարք հաստատեցի ապագահ(յ) էն համար էսպէս... Ի Գանթօմհամիրայ, 8 թիւն 1794ումն, ձեռամբս իմով գրեցի. սորա են իմ վէքիլք եւ կտակակատարք՝ մաքաւի սինօր Վիսպն, սինօր Մանուէլ Վիսէնթն, պարոն Պողոս Աթամն, Վարդենիւն, եւ Յովհաննէսն, եւ պարոն Ղազար Յովհաննէսն: (ձեռնագրեալ) Մաթէոս Ոհաննէս»: Զուպայեցի Օհաննէսի որդի Մատթէոսի 1794 թ. կազմած կտակն է, որտեղ մանրամասն ներկայացնելով իր ունեցումով՝ մի մասը կտակում է Սուրբ Երուսաղէմին, մի մասը՝ Սուրբ Էջմիածնին, մի մասը՝ նոր Նախիջեւանի սուրբ եկեղեցուն եւ դպրատանը, մի մասը՝ նոր Զուղայի Ամենափրկիչ վանքին եւ կուսանաց անապատին եւ եկեղեցու քահանաներին, մնացածը՝ իր որդի Յովհաննէսին

եւ նրա մայր Վարդինին եւ այլն: Կտակակատարներ է նշանակում 2 անգլիացու եւ 4 հայի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

Տէ՛ս Բովանդակութեան վերջում:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

1. 1բ Սովադոս ասլին համեմատ գրեցի՝ (ձեռնագրեալ) Աստուածատուր Աղէֆսանդր Մինասեանց:
2. 1բ Սովադոս ասլին համեմատ տեսինք՝ (ձեռնագրեալ) Կարապետ մահտեսի Խաչատուրեան, (ձեռնագրեալ)՝ Յակոբ Մինասեան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ (ԺԹ դ., նոտրգիր) Սաւատոս, ասլ սաւատին համեմատ տեսի եւ գրեցի՝ Սիմէօն Այիվազեան, որբոց դպիր:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ


2բ (ԺԹ դ., նոտրգիր) № 70. Մաթէոսի կտակին կոպիւնայ:

ԳՐՈՒԹԻՒՆ

թղթ. 6, վաւ. 56

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակարգած 1-3՝ հաշուի չառնելով չգրուած էջը). չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ բաց կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «А ГОИ-ЧАРОВЪ», «1832»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35,4x22: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 24, 26:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 1 «Правитель Таврической области генерль майоръ и кавалеръ Жигулинъ представляет мнѣ, что армянскій архиепископъ Іосифъ требоваль... къ церкви армян-

ской отдать и изъ числа оброчныхъ статѣй исключить»: Համաձայն Յովսէփ արքեպս. Արղութեանի խնդրի, որ Թեոդոսիայում եղած հայ եկեղեցու մօտի խանը (իջեւանը) տրուի հայ եկեղեցուն եւ հարկ չառնուի, կոմս Զուբովը գրութեամբ յայտնում է, որ կայսրուհին համաձայնել է:

Բ. 2-3 «Преосвященнейший владико милостивый государь – Почтеннейшие вашего преосвященства письма отъ 3-его сентяб-ря изъ Тавриды пуценные, я имель честь получить... засимъ съ совершеннейшимъ почтениемъ и всегдашнею преданностию имею честь быть вашего преосвященства милостиваго государя покорнейшій слуга Петръ Ковалевскій»: Պետր Կովալեւսկին յայտնում է Յովսէփ արքեպս. Արղութեանին, որ վերջինիս նամակը իջեւանատունը իրենց տալու խնդրի մասին, ստացել է եւ զեկուցել Պրատոն Զուբովին: Տավրիկիայի նահանգապետի՝ սեպտեմբերի 12ի գրութեամբ վերոյիշեալ իջեւանատունը տրում է հայ եկեղեցուն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1. 1 На подлинномъ подписано собственною Ея императорскаго величества рукою тако: Быть по сему. В. С. Петербурге сентября 12²⁰ 1794 года.

2. 3 Տէս Բովանդակութիւն Բ (վերջում):

3. 3 Исправляющий должность писмоводитель Шульгинъ. 22 октября 1794 года, въ С. Петербургѣ.

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

1 Подлинной подписаль графъ Платонъ Зубовъ, засвидѣтельствовалъ канцелярской калужской ассесор Петр ///. Съ подлинными.

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1 (ԺԹ դ.) Օրինակ գրաֆ Պլատոն Զուբովի գրութեանն վասն աճէմխանին:

ՆՇՈՒՄ՝ 1. 1 «Съкопіи копя»: 2. 2 «Съкопіи копя»:

299

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 6, վաւ. 57

[ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ]


ՌՄԿԱ- 1812

ՀԵՂԻՆԱԿ՝ Պլատոն Ալեքսանդրովիչ Զուբով (Ա, 1794 թ.), Ունտիկով՝ (Բ, 1812 թ.): ՍՍՍՌԿ՝ Կախովսկի:

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակարած 1-3՝ հաշուի շանելով չգրուած էջը). չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ (նսկեգօծ եզրերով). լուսագծերով, լուսագրով՝ «1810», «VANDERLEY» լուսապատկերով՝ շրջանաձև ցանկապատ, ներսում զինուորական հանդերձով միապետը՝ գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր առիւծ, աջ ձեռքին՝ սուր, ձախին՝ հրովարտակ. պատկերագրութեան վերևում՝ «PROPATRIA» մակագրութիւն: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 32,4x20,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1, 3): ՏՈՂ՝ 20-30:



Նմուշ 1



Նմուշ 3

ՎԻՃԱԿ՝ բնատուր:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան (Ա), բնագիր (Բ), ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 1-2 «Копія повеленія его сиятельства

господина генерала фелдцейгмейстера Екатеринославского и Таврического генераль губернатора и разныхъ орденовъ кавалера Платона Александровича Зубова, правителю Екатеринославскаго намесничества генераль маиору и кавалеру Коховскому отъ 4^{го} числа июня 1794 года, подь 310^м – На поданные отъ меня Ея императорскому величеству всеподданныише донесеній... которые ему и будутъ непременно отданы. На подлинномъ подписано тако: Графъ: Платонъ Зубовъ»: Վաւերագրի առաջին հատուածում Պլատոն Զուբովի 1794 թ. յունիսի 4ի հրամանի օրինակն է՝ ուղղուած Կախովսկոն առ այն, թէ կայսեր հրամանով Գրիգորիուպօլի Բաղաբապետ կարգել պորուաչիկ Պաւել Թումանովին՝ շնորհելով նրան կապիտանի կոչում եւ նշանակելով տարեկան 300 ռուբլի աշխատավարձ Եկատերինսկաւ նահանգի եկամտուներից: Հայագրի ազնուական Իւան Սաթովին դարձնել կայսերահպատակ՝ շնորհելով «տիտուլյարնի սովեանիկի» կոչում, իսկ իր երեք որդիներին ընդունել «կապրալների լեյբ-գվարդիար»: Նաեւ յանձնարարում է ընդառաջել վերջինիս խնդրանքին եւ նոր ձեռք բերուած տարածքներում 6000 դեսետսին հող յատկացնել ֆարբիկաներ կառուցելու թոյլտութեամբ, ապա այս ամենի մասին իրեն զեկուցել:

Բ. 2-3 «№ 1642»: Что сия копія оповеленія его сиятельства господина генерала фелдцейгейместера Екатеринославского и Таврического генераль губернатора и кавалера графа Платона Александровича Зубова... въ томъ Херсонскій губерніи Туресеполскій Нижній земскій судъ подписомъ и прило-

жениемъ казеной печати свидетелствует марта 15^{го}, 1812 года. Дворянскій заседа- тель Унтиковъ»: 1812 թ. մարտի 15ի գրութեամբ ու կնիքով պալատական ատենակալ Ունտիկովը հաստատում է վերոյնշեալ գրութեան իսկութիւնը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ
Տե՛ս Բովանդակութիւն 1 (վերջ):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տե՛ս Բովանդակութիւն 2 (վերջ):

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 3 (սև թանաֆով, բոլորակ, դրոշմի ներ- սում պատկերուած է ռուսական երկգլխանի թագակիր ար- ծիւ, վերևում՝ միապետի խաչակիր թագը, գրութիւնն անըն- թեռնելի):

Ծնթ. Տես աս՛տ նաև № 302 :

ՆՇՈՒՄ՝ 3 «14 класса Новиков»:


300

ԳՐՈՒԹԻՒՆ

թղթայ. 6, վաւ. 58

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 12 էջ. չգրուած՝ 11, 12: **ՊՐԱԿ՝ Աx6:** ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագ- րով՝ «1788», «BCM» «СФР», լուսապատկերով՝ ձգուած նետ ու աղեղ: **ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33,4x22,5:** **ԳՐՈՒԹԻՒՆ՝** երկսիւն: **ԳԻՐ՝** նոսրգիր (նմուշ՝ 1): **ՏՈՂ՝** տարբեր, հիմնականում՝ 34-42:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. աջ եզրերն անհարթ: **ԻՍԿՈՒԹԻՒՆ՝** թարգմանութիւն ռուսերէնից, ձե- ռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-10 «Նիւթ խնդրոյ ի Գրիգորիապօլ քաղաքի բնակեալ հայոց – Նախ՝ հրամայել ի Գրիգորիա- ւոյ քաղաքի, ըստ բարձրագոյն հաստատեալ ձե- ւոցն, անդառնալի ծախիւք գանձարանին շինել հազար քարաշէն տունս վասն չքաւոր վերաբնակե- ցելոց՝ հաշուելով իւրաքանչիւր սենեակ ընդ գաւ- թին հարիւր ըսուելոյ, բոլորն... ըսուելոյս: Միտ կամ դիտումն գլխաւոր գաւառապետ գրաֆ Զու- բովին – Կառաւարիչ Սենաթն ըստ ձերոյ կայսե- րական մեծութեան մատուցեալ ծանուցմանն, ընդ դիտմանն իմոյ համաձայն, համարէր ծախիւք գան- ձարանին շինել 600 տունս դիւրագինս... եւ վկնի յայնր ամաց հարկատուս առնել, եւ ի յայնմ ժամա- նակէ սահմանել զպահանջողութիւն բոլորից ի վե- րայ նոցա ծախեցեալ եւ ծախելի քանակացն ի 10 ամս՝ հետեւեցեալս. այսպիսի այցելութիւն առ յայսմ բաւական լիցի վասն նոցա»: Գրիգորիուպօլ քաղա-

քի հայ եւ այլազգի բնակչութեան մի շարք խնդիր- ների բարձրաձայնումը կայսրուհուն, որոնց լուծման համար ներկայացուած է հետեւեալը՝ պետութեան հաշուին կառուցել 502 քարաշէն տուն, միայն 325 տան համար գանձարանը պի- տի վնարի 46781 ռուբլի 72 կոպեկ, եկեղեցիներ շինելու համար՝ 37000, արհեստատրական խա- նութների եւ պանդոկների համար՝ 10000 ռուբլի, ինչպէս նաեւ պէտք է կառուցուեն եպիսկոպոսա- կան տուն եւ հոգեւորական դատարան, դպրոց (15000 ռուբլի), մագիստրատ (4000 ռուբլի), ջրմուղ. 1793 թ. ապրիլի 4ի հրամանով՝ չփառ- ներին մի տարի ձրի կերակրել. թոյլատրել զբա- դուելու հողագործութեամբ, ձեռագործութեամբ, անասնապահութեամբ եւ այլն. վաճառական- ներին թոյլատրել ծովի վրայ վաճառականութիւն անելու իրաւունք: Այն հայերը, որոնք 4. Պոլսից կգան, 5000 ռուբլու իր առանց մաքսի ներս բե- րելու իրաւունք ունեն: Տասը տարի հարկ չտալ. զինուոր չպահել. ունենալ սեփական դատարան- մագիստրատ եւ խղճի դատարան. ցորենի ցամփը վաճառել առանց իջարի. քաղաք կնիք ունենայ. հայ ազնուականներից ստեղծուի մի հանձնաժո- դով. բոլոր նորեկներն ազատ լինեն հարկատու- թիւնից եւ այլն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1. 1 Գաղափարն ստորագրեցեալ է յիւրոյ կայ- սերական մեծութեան յատկական ձեռամբն այսպէս, եղիցի ըստ այսմ. ի Ս. Պ.Բուրգ ի 12ըն հոգտեմբերի 1794 թուոյ:
2. 10 Գաղափարն ստորագրեաց գրաֆ Պլատօն Զուբովն: ի Ս. Պ.Բուրգ, սեպտեմբերի 6 աւուրն 1794 ամի:

301

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթւ. 6, վառ. 59

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՌՄԽԳ-1794

ՀԵՂԻՆԱԿ՝ Անդրեյ Նարոտով: ՍՏԱՅՈՂ՝ [Յովսէփ արքեպս. Արդուբեան]:

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակարուած 1-3՝ հաշուի շառնէլով չգրուած էջը). չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ թուղթ, եզրերը ոսկեգօծ, լուսագծերով, լուսագրով՝ «МГОБЛ// Аои»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22,3x18,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 15-16:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. մովի հետեւերով:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-3 «Преосвященнейший архиепископъ,

милостивый государ мой – Полученное отъ вашего высокопреосвященства писмо имель я честь... милостивый государ мой»: Սանկտ Պետերբուրգի «էկոնոմիչեսկոյ» ընկերութեան նամակը [Յովսէփ արքեպս. Արդուբեանին], որով խնդրում են ժամանակ առ ժամանակ տեղեկութիւն տալ Նոր Նախիջեւանի եւ Գրիգորիուպօլի տնտեսական յաջողութիւնների մասին: Առաջարկում են անեցնել բունջութ եւ բամբակ, որը առեւտրի զարգացող ճիւղ է: Իրենի գրքեր են հրատարակելու, որոնք կողարկեն սրբազանին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

3 Вашего высокопреосвященства покорнейший усерднейший слуга Андрей Нартовъ. Изъ собранія апреля 22 дня 1794 года С. Петербург.

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1 Получено 17 маія 1794 года.

302

ԳՐՈՒԹԻՒՆ

թղթւ. 6, վառ. 60

ԶԵՆԶԻԼԻ (Ա)


ՌՄԽԳ-1794

ՍԱՐԱՅ ԿՂԶԻ (Բ)

ՌՄԽԳ-1795

ՀԵՂԻՆԱԿ՝ Միխայելոյ Կիրիլեւսկի(Բ): ՍՏԱՅՈՂ՝ արկ. Յովսէփ Գրիգորեւ (Բ):

ԹԵՐԹ՝ 2 (էջակարուած 1՝ հաշուի շառնէլով չգրուած էջերը). չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «Ф», «93»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33,2x21,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 28:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ թարգմանութիւն (Ա), բնագիր (Բ), ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 1ա «Зензили, 1794^{го} года, марта 1^{го} дня. Вексель на 10000 рублей – По объявлению сего одинакаго векселя... векселядатель астраханской купецъ армянинъ Иванесь Татусовъ подписался армянскимъ письмомъ»: Աստրախանցի վաճառական Յովհաննէս Թաթուսովը 10 հազար ռուբլու պարտամուտհակ է տալիս եղուարդեցի Աւետիս վրդին:

Բ. 1ա «Островъ Сары, 1795^{го} года, маія 1^{го} дня попрозьбѣ присланнаго сюда отъ архимандрита Авета... и сей протестъ съ подленнымъ векселемъ вами упоминаемому диякону отданъ»: Աւետիս վրդը արկ. Յովսէփ Գրիգորեւին ուղարկում է Սարայ կղզի՝ Յովհաննէս Թաթուսովի առած պարտամուտհակի համաձայն գումարը ստանալու: Յովսէփ Գրիգորեւն իր յետ ունեցել է Յովհաննէս Թաթուսովի գրուած պարտա-

մուսուլմանական բնույթի մասին: Հասարակական նստարից տեղեկացրել են, որ *Յովհաննէս Թաթևադուր* տեղում չէ: «Կապրալ» Յակովլեւը եւ եւս 2 զինուոր փնտրել են *Յովհաննէս Թաթևադուր* Սարայ կղզում, *Լենքորանում եւ Ղզլարի* նաահանգստում, բայց այդպէս էլ չեն գտել: Սրկ. *Գրիգորեւի* ինդրամբով, վերոյնշեալ պարտամուսուլմանական համայնքի, վնասումը չտանալու համար բողոքարկում է: Բողոքը բնույթի պարտամուսուլմանական հետ միասին տրուում է սրկ. *Յովսէփ Գրիգորեւին*:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

1ա Տէ՛ս Բովանդակութիւն Ա (սկզբում):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա *Каллежеский асессор Михайло Киби-НЕВСКИЙ.*

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ *1ա* (սե քանաքով, բոլորակ, դրոշմի մէջտեղում պատկերուած է ռուսական երկգլխանի թագակիր արծիւ, վերետում միապետի խաչակիր թագը՝ շուրջ բոլորածե մակագրութիւն) «*ЕЯ ИМПЕР[АТОРС] КАГО ВЕЛИЧЕ[С]ТВА КОНС[УЛ] ЕПС[КО]*»:

Ծնթ. Տես ա՛ստ նաեւ № 299:

ՆՇՈՒՄ՝ *1ա* «*Переводъ съ армянскаго*»:

303

ՀԱԻԱՍՏԱԳԻՐ

թղթ. 6, վաւ. 61


ԶՄԻՒՆՆԻԱ

ՌՄԽԳ-1794


ԳՐԻԶ՞, ԹԱՐԳՄԱՆԻԶ՞ Մարգար Ապրոյեան: ՍՍԱՅՈՂ՝ գրագիր Գրիգոր:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «VANDERLEY», լուսապատկերով՝ թագակիր ռեատուր զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 38x23,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միապիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1), իտալերէն (նմուշ՝ 3): ՏՈՂ՝ 33, 44, 21:

դաւան քրիստոնէիցդ հայոց, որ կայք բնակեալ ի տիրախնամ եւ յարքայանիստ հռչակաւոր քաղաքն Պետրպոլս... եւ այլ ներքոյ գրեալքն, որք են քաղաքիս Զմիւռնոյ նախապատիւ իշխանքն եւ պատուաւոր անձինքն, վկայեն առաջի Աստուծոյ եւ ամենայն սրբոց. տեսողաց հաշոյ»: 1794 թ. Զմիւռնիայում Մարգար Ապրոյեանը հաւաստագիր է տալիս գրագիր Գրիգորին առ այն, որ նա իրոք Պետրբուրգում հնգգլ վաճառական Պետրոսի եղբայրն է եւ գնում է իր բաժինը ստանալու նրա ժառանգութիւնից: Նրանց հայրն է Սիմէօն Զելէպին, որն ունէր չորս որդի: Նշում են Գրիգորի միւս եղբայրների եւ ընտանիքի այլ անդամների անունները ի հաւաստումն նրանց ազգականութեան:



Նմուշ 1



Նմուշ 3

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, թարգմանութիւն հայերէնից իտալերէն, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳՐՈՒԹԻՆ

1. 1 «Գիտութիւն լիցի բարեպաշտօն եւ աստուածասէր, գերազնիւ եւ երկիւղածագարդ իշխանապետիդ եւ իշխանաց մեծաց եւ փոքունց, լուսաւորչա-

2. 1-3 «*Traduzione del di sopra atto: Anno Domine 1794 ed il settimo giugno in Smirne*» («Թարգմանութիւն վերեւում գրուած փաստաթղթի: Տիրոջ 1794 թուականին եւ յունիսի 7ին Զմիւռնիայում») սկզբնագրով յաջորդում է նոյն հաւաստագրի իտալերէն թարգմանութիւնը, որի բովանդակութիւնն ամբողջութեամբ համապատասխանում է հայերէն փաստաթղթին: Ստորագրած անձանց մէջ իտալերէն տարբերակում յիշատակում է նաեւ Զմիւռնիայի Դանիէլ աբեպիսկոպոսը: Հաւաստագրի թարգմանութիւնն արել է Մարգար Ապրոյեանը: Գրութիւնը նոյն օրով վաւերացրել է Զմիւռնիայում ռուսական դեսպանութեան գրագիր կամ նոտար Ա. Մարրաչին, որի գրութիւնն առանձին գրութեամբ եւ կարմիր

զմուռսէ կնիքով հաստատել է կոմս Դանիէլ Ջիոն՝ Չմիւռնիայում համայն Ռուսիոյ կայսրոնու ժամանակատր ներկայացուցիչը:

Ծնթ. Իտալերէն տեխտի նկարագրութիւնը կատարել է Մատենադարանի աշխատակից Խաչիկ Յարութիւնեանը, որի համար յայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

- 1. 1 Թվին Հայոց 1243 (1794), յունիսի 7ին յիգմիր:
- 2. 1 Marcar Abro:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

- 1. 1 Մարգար Ապրօեան՝ վկայեմ:
- 2. 1 Դանիէլ արքեպիսկոպոս Չմիւռնոյ:
- 3. 1 Սրբոյ Երուսաղէմի նուիրակ ի Չմիւռնոյ վիճակին՝ Կարապետ վարդապետ:
- 4. 1 Աւաք երէց տէր Աւէախս վկայեմ:

5. 1 Ես՝ Փիլիպպոս վարդապետս զայս բանիս վկայեմ:

- 6. 1 Տէր Եղիաս վկայեմ սոյն իրակիս:
- 7. 1 Տէր Յարութիւն վկայեմ սոյն իրակիս:
- 8. 1 Երէմիայ տի Վիրապ՝ վկայեմ:
- 9. 1 Մըսըր տի Գրիգոր՝ վկայեմ:
- 10. 1 Յակոբ Սահակ Շահումեան:
- 11. 1 Մահտեսի Գրիգոր Ոսկանեա[ն]ց՝ վկայեմ:
- 12. 1 Կարապետ տի հաճի Յարութի[ւն]ս վկայեմ:
- 13. 1 Կարապետ Շաֆեան՝ վկայեմ:
- 14. 1 Խանապպեան Խաչատուրս վկայեմ:
- 15. 1 Առաֆէլ Ապրօ[յեան]՝ վկայեմ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. Ա (սեւ քանակով, ուքանկիւն) 1 «ՔրիՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԴԱՆԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ /1224 (1775)», 2. Բ 3 (կարմիր զմուռի վրայ, զինանշանային գեղեցիկ պատկերագրութեամբ):


ԳՐՈՒԹԻՒՆ

թղթայ. 6, վաւ. 62

ԺԹ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Չեխօրեցի Յովհաննէս (1794 թ.): ՍՏԱՅՈՂ՝ տէր Սարգիս (1794 թ.):

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ հաստ թուղթ. լուսագրով՝ «1825»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22,7x17,5,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 20:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերն անհարթ: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Սոյն գիրս ետու ես՝ Չեխօրեցի Յօհաննէս եւ իմ որդիք՝ Սիմօն, Գրիգոր եւ Գլախէն քեզ՝ Կախէթու գործակալ եւ աւագ քահանայ տէր Սարգսիդ այս-

պէս... Ունիցես եւ վայելեսցես եւ որպէս կամիցես վասն պիտոյից եկեղեցոյ ի գործ արկցես»: Չեխօրեցի Յովհաննէսը եւ իր որդիները, Կախէթի գործակալ եւ աւագ քահանայ տէր Սարգսին 1794 թ. յուլիսի 12ին տուած գրութեամբ իրենց «տուքանն, տունն, գոմն եւ օթախն» վաճառում են Սուրբ Գէորգ եկեղեցուն, եւ որպէս զին ստանում 4 թուման եւ եկեղեցու բակում գերեզմանատեղի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԵԱԽՈՐԻՆԱԿԻ

1ա Գրեցաւ ի Թէլաւ, 1794, յուլիսի 12:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

- 1. 1ա Յօհաննէսին եւ իւր որդւոցն հաճութեամբ գրեալ եմ եւ վկայեմ ես՝ Երապախանանց Բէժանի որդի Օհանս:
- 2. 1ա Ես՝ Աւելի որդի Պետրոսս սոյն գրոյս վկայեմ Յօհաննէսի հաճութեամբն:

Ծնթ. Մանրամասն տե՛ս 3. Աբրահամեան, № 122, էջ 152-153:


305
ԳՐՈՒԹԻՒՆ

թղթայ. 6, վա. 63

ՌՄԽԳ-1794

Հեղինակ՝ արց. Պողոս Ստեփանեան: ՍՏԱ-
ՅՈՂ՝ Միքայել:

Թեթև՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: Նիւթ՝ թուղթ. լու-
սագծերով, լուսագրով՝ «D&GBLAUW»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝
23,4x18,8: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝
նոտարանման բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 18:



Նմուշ 1ա

Վիճակ՝ բարար. 1ին թերթի ստորին աջ եզ-
րը վնասուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Առիթ գրութեանս իմոյ այս է, որ ես՝ ներքոյ
անուանեալս, հանգուցեալ Նազարէթի որդի Միգա-
լէն գնալոց էր ի Բեդրբուրք իւր երկիրն... այս պայ-

մանաւ զայս ձեռագիրն ետու վերոյ յիշեալ Միքայէ-
լին առ ի հաստատութիւն բանիս տեսողաց եւ լսո-
ղաց հաճոյ թուեսցի, բաւ է»: Տրց. Պողոս Ստեփա-
նեանը հնգցլ Նազարէթի որդի Միքայէլին առուած
գրութեամբ հաստատում է, որ վաճառելու նպա-
տակով նրանից ստացել է 762 ձառու ատտարան՝
թղթով կազմուած եւ 269 «Յիսուս Որդի»՝ կաշուով
կազմուած, «որոց երկու տեսակ վերոյ գրեանց
գնի գումարն է շորս հազար շորս հարիւր տասն եւ
հինգ դուռուշ տասն փարայ, այսու պայմանաւ եւ
դաշամբ վաճառեմ. որչափ որ ծախվի մին տարի,
սոյն ծախուած փողն ինչ ապրանք եւ կամ փող լինի՝
ուղարկեմ իւրն»: Ինչպէս նաեւ նոյն նպատակով
ստացել է «մէկ ֆշի լեղակ, որոյ քաշն է իննսուն
հօխայ»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 1ա Աստուծով ի թիւն 1794, մարտի մէկին:
2. 1ա Ծառայ Տեառն Ստեփանեան իբր տիրա-
ցու Պողոսս կնքեցի:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (սեւ թանափով, ձուածեւ) «ՔՐԻՍ-
ՏՈՍԻ {Ծ}ԱՌԱՅ/ՊՕՂՈՍ»:

306

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վա. 64

ՌՄԽԳ-1794

ԹԻՖԼԻԶ

Գրիշ՝ Սողոմոն Տէր-Շմաւոնեան: ՍՏԱՅՈՂ՝
Յակոբ արքեպս.:

Թեթև՝ 1. չգրուած՝ 1բ: Նիւթ՝ թուղթ. լուսա-
պատկերով՝ նժոյգ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23,7x17,3:
ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտարգիր (նմուշ՝ 1ա):
ՏՈՂ՝ 31+2+3:



Նմուշ 1ա

Վիճակ՝ բարար. վերին ձախ մասը վնաս-
ուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Գերիմաստ եւ սրբազան Յակոբ արքե-
պիսկոպոս եւ աստուածաբան վարդապետ, իմ
շնորհունակ տէր – ի յուլիսի 7ին թուղթս գրեցի առ
տէրդ իմ եւ ընդ Նօնի տղային մատուցի ի սպասդ՝
հանդերձ սակաւ բօննօթիւ... որ եւ խնդրեմ ի տեսո-
նէդ զշնորհդ անպակաս արասցես յինէն՝ գրելով
բարի որպիսութիւնդ, հանդերձ մեղավայել ծառա-
յութիւնս հրամայելով»: Սողոմոն Տէր-Շմաւոնեանը
գրում է Յակոբ արքեպս-ին տէր Ստեփան վատա-
բախտ վրդ-ի հետ պատահածի մասին՝ նշելով.
«Թէպէտ ուղիղ պատճառն ոչ գիտեմ, բայց բազումը
զբազումս բարբաճեցէն»: Յայտնում է, որ նորին
սրբազնութիւնն իր հօրը գրութիւն էր ուղարկել,
«որոյ զպատասխանն գրեալ՝ ընդ Յովհաննէս ար-
քեպիսկոպոսին մատուցար»: Հաշտարխանից Գրի-

գոր վրդ-ի գրած յունիսի 22ի գրութիւնը ստացել է, որի հետ եկել է Հնդկաստանից ճահամիր աղայի ուղարկած պահաւանը, «նաեւ գրեալ էր Յովսէփ պետըն այս յունիսի վերջն գայ ի Հաշտարխան, եւ զԱբրահամ վարդապետն եւս բերէ ընդ իւր, զի

յղեսցէ ի Սուրբ Աթոռն»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Որ եմ եւ մնամ պատրաստական ծառայ Սաղօմոն Ստեփանի Տէր-Շմատունեան: 17⁸₁₉ 94, ի Թիֆլիզ:

307

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վաւ. 65

ԵԿԱՏԵՐԻՆԷՍԱԿ


ՌՄԻԳ-1794

ԳԻԹՉ՝ Յովսէփ արեպա. Արդուքեան (էջ 1-3), Յոհաննէս սել. (էջ 1, 3): ՍՏԱՅՈՂ՝ Գրիգոր վրդ., պրն Մկրտում Գալստեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր ոճատր զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23,3x19,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1), ոռսերէն (նմուշ՝ 4): ՏՈՂ՝ 24, 32:



Նմուշ 1



Նմուշ՝ 4

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը տեղ-տեղ գունափոխուած, զմուռը վնասուած: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-3 «Սիրելի որդի Գրիգոր աստուածիմաստ վարդապետ եւ գերապատուելի ազնիւ պարոն Մկրտում – Մեք ի յունիսի 20 ելեալ ի Գրիգորիուպօլո՛ւ եկաք ի յէկատարինէլաւ տեսանել զգուբեռնաթն... եւ մեք գուբեռնաթին ետուք, շատ լաւն էր ինքն եւ ունջն իւր եւ ցանկալի ամենից»: Յովսէփ արեպա. Արդութեանը յայտնում է Գրիգոր վրդ-ին եւ Մկրտում Գալստեանին, որ Գրիգորիուպօլից եկել է Եկատերինոսլաւ հանդիպելու գուբեռնատորին, ապա գնայ Ղրիմ եւ այնտեղից գայ ձեզ մօտ: Սակայն գուբեռնատորը մահացել է, «զոր եղել խափանումն եւ յամեցումն բանից մերոց եւ հարկաւոր

յառաջադրութեանց», քանի որ պիտանի անձ էր եւ ի սրտէ բարեկամ: Ուտաի մեկնում է Ղրիմ՝ գրաֆ Զուբովի հրամանին սպասելու, եւ յոյս ունի, որ կգայ իր ժողովրդին այցի: Քանի որ չգիտի, թէ երբ կայցելի, «վասն այն զՅովհաննէս սարկաւազն մեր առաքելոց եմ անտի յայդր եւ ընդ նմա գրելոց առ ձեզ ամենայն ինչ»: Նաեւ գրել է գրաֆին կատարումն տալ վաղեմի ձեռ ցանկութեանը: «Կաֆայի կէսն եւ ըստառի Ղոբիմու կէսն գրաֆն մեզ է շնորհեալ գետնովն վասն Հայոց ազգին, զոր պարտիմ ընկալնուլ»: Նշում է, որ եգոր Գաբրիէլիչ Գարսեւանովը, որի տանն են գուբեռնատորի մահուան կապակցութեամբ, խնդրել է կապոյտ թիրմայ շալ, կարգադրում է առնել «թեթեւագին երեք եւ կամ չորս թումանով» եւ ուղարկել համապատասխան գրութեամբ. աւելացնում է, թէ ում որքան գումար է տուել եւ ումից որքան գումար պէտք է վերցնել: Գրաֆ Զուբովի մասին գրում է, որ մեծ շնորհ ունի մեր վրայ. «ապա ինչ օգուտ՝ ի պարտուց աչք ոչ բանամ»: Եթէ հնդկահայերի օգնութիւնը շիինի, դժուար կլինի իր դրութիւնը, քանի որ տարեկան ծախսը 700 թուման է, իսկ մուտքը՝ 300 թուման: Իսկ թիրմայ շալ խնդրողները շատ են, ոչ բարեկամ, եւ կարգադրում է գնել ու ուղարկել Եկատերինոսլաւ եգոր Գարսեւանովի անունով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 2 Տրտում Յովսէփ արքեպիսկոպոս, 1794, յունիսի 29, յեկ[ա]տրինէլաւ:
2. 3 Յովսէփ արքեպիսկոպոս:
3. 3 Զարբանեալ աչ հոգեւոր հօրդ իմոյ մեծափափկանօք համբուրեմ բազմատեսչ կարօտիւ եւ խնդրեմ ներ գրոյս եղեալ թուղթն յանձնել մեր Գալուատին, զոր վասն միամտութեան մերայնոցն գրեցի՝ լինել միամիտ եւ անհոգ, զի մաքուր աղօթիւք ձերովք կամ առողջ, այլն(եւ) մնամ խոնարհ եւ պատրաստական ծառայ՝ նուաստ Յոհաննէս սարկաւազ:

ՀԱՍՅՔ

1. 4 Սիրելի որդի Գրիգոր վարդապետին եւ գերապատուելի ազնիւ պարոն Մկրտաւին Գալստեան ի Հաշտարխան:

2. 4 *Ego высокопреподобию всепочтеннейшему отцу архимандриту армянскому*

Григорию милостивому господину? моему или Никитѣ Калустовичу его благородію Калустову въ Астраханѣ:

3. 4 № 19:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 4 (կարմիր զմուտի վրայ, վնասուած, սահասկանալի):

308


ԳՐՈՒԹԻՒՆ

թղթայ. 6, վառ. 66

ԺԸ դար

ՍՏԱՅՈՂ՝ կսենչ Օնօֆրիոս Օհանջանով:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսապակերով՝ շրջանաձև ցանկապատ, ներսում զինուորական հանդերձով միապետը՝ գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր առիժ, աջ ձեռքին՝ սուր, ձախին՝ հրովարտակ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 28,5x20: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 37:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Ի Մագիրովայ հոգետոբ կօնսիստօրէ եւ Հոսմայ կաթօլիկաց կսենչ Օնօֆրիայ Օհանջանովին – Ի պատասխանի գրոյն կսենչ Օնօֆրիայ Օհանջանովի՝ բնակելոյն առ եկեղեցին Աստրախանայ առ նորին բարձր սրբազնութիւն տեսոն արքեպիսկոպոսի եւ կավալերի, ի 27է յունիսի գրեցելոյն, սահմանեցաւ... զայնս ոչինչ եղանակաւ ընկալնուլ չէ մարթ, ընդ կասկածանօք խստօրէն

պահանջողութեան սակս պատուիրանազանցութեան արքայական կանոնադրութեանց յոգունց եւ զանազան ի սոյն հանդիպմունս հետեւելոց»: Մօզիլէի կոնսիստորիատը, ի պատասխան «կսենչ» Օնօֆրիոս Օհանջանովի յունիսի 27ի գրութեան, սահմանում է հետեւեալը՝ 1. եթէ հասարակութիւնը կարիք ունի 2 ֆիյի, ապա «առաջնոյն կուրատօր կարգի վարդապետն, իսկ միւսոյն՝ Օնօֆրիոս Օհանջանովն, եւ եթէ ցանկան ունիլ միոյ քահանայի, յայնժամ յիշեալ Օնօֆրիոս Օհանջանովն հրամայէ մնալ ըստ առաջնոյն վասն անդանօր տեղւոյն եկողին»: 2. «Վարդապետին, որ խնդրէ զբիլէթ», շմերժել: 3. «Միջայել Թարուզովն, եթէ է կամ լինիցի սենդիկ անդամ եկեղեցւոյ, որքան զայնմանէ հոգ տանիլ կարէ, որքան եւ այլ սենդիկքն առհասարակ անձամբ անձին»: 4. Շարադրել եկեղեցւո մուտք ու ելքի հաշիւները: 5. Պատկան են կամատրապէս ցանկացող բոլոր անձանց ընդունել կաթօլիկ հաւաքի, «այլ արգելեալ է բռնաբարել բանիք եւ քարշել»: 6. «Վերաբերելին՝ մահմետականաց նմանապէս, յանուանէ հրամայեալ է կրտել ըստ զօրութեան ուկազու»: 7. Յունադաւան ռուսաց ամենին արգելում է կրօնափոխ լինել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1ա Ի Մօզիլէ, 1794, յուլիսի 18. զնախագաղափարն ստորագրեցաք՝ Կազամիր Շիշկօ, կանօնիկ սասեօր պու սեկրետար՝ Լեւ Վասիլակի:

309

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վառ. 67

ՂԶԱՐ

ՌՄԽԳ-1794

ԳՐԻՉ՝ Սահակ ֆիյ Աբրահամեան (1): ԳՐԱԳԻՐ՝ Սահակ ֆիյ Աբրահամեան (2): ՀԵՂԻՆԱԿ՝ Միմաս ֆիյ (2): ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպ. Արդութեան: ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ.

լուսագծերով, լուսագրով՝ «JMWSL», «17[93]»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23,6x19,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 35, 39:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ քնազիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1. 1-2 «Բարձ[ր] սրբազնագունեղ հայր իմ, ողորմած տէր եւ բարերար – Սրբազնու ձերոյ քանիցս գիր եմք գրեալ, ահայ երեք փօշտէ գիր շունիմք... եթէ նու<վ> իրակի կողմանէն կամիս իմանալն ամենայն կողմանց պրծաւ եւ ամսոյս 12ին անկածիք ելանելոց է, միամիտ լէ՛ր վասն սորայ»: Սահակ Բնյ Աբրահամեանը գրում է [Յովսէփ արեւելաւ Արդութեանին], որ «ցարեվիչի» տեղը չափել են, մնացել է այգիների տեղերը, սակայն «պաղ շատ կայ, չափելն կարելի չէ, մինչեւ քառասուն պաղ կայ... թէ՛ հայոց, թէ՛ վրացոյց, միըստմիոջէ գրելն կարելի չէր», իսկ ժողովուրդն ընդդիմանում է, թոյլ չի տալիս, «շատ մեծ խռովութիւնն կու լինի»,

իրեն եւ տէր Մինասին չեն հրաւիրում, «պարոն Մարգարին կանչում էն, թէ մեր պաղերն մի չափի», պառնում են մինչեւ թգր գնալ: Կուսանոցի համար Կիսելովը տեղ չի տալիս, նա շատ վատ է վարում:

2. 2-3 «Ձայս եւ յայտ առնեմ ձերին սրբազնութեանդ, ինչպէս հրամանոցդ հրաման էր, այնպէս եղաւ վասն նու<վ> իրակի գործն... միայ թէ շատ ընկելայ կամենդա[ն]տի յետ եւ մեր խալիսի յետ Կիսելովն, Աստուած վերջն բարի առնէ»: Մինաս Բահանան գրում է, որ նուիրակին են յանձնել ամբողջ արդիւնքը «երեք նոխսով միայն»: Տեղեկացնում է, որ կնեազը պրն Բէժանին ասել է, թէ կամենում է մեր «պրդապօպին» տեսնել, Բանի որ Կիսելովը գանգատ է գրել: Այդ կապակցութեամբ ինքը գրաֆին է գրել, սակայն դեռ պատասխան չի ստացել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. 2 եւ ես մնամ ձերին բարձ[ր] սրբազնութեանդ չնչին ծառայ՝ Սահակ քահանայ Աբրահամեան: 1794ին, յունիսի 11ումն, ի Ղզլար:

2. 3 Մինաս նուաստագունեղ քահանայ:


310
ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

թղթպ. 6, վա. 68

ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Եկատերինայ Բ կայսրուհի:

ԹԵՐԹ՝ 12 էջ (էջակարում 1-10՝ հաշուի չառնելով չգրում էջերը). չգրում՝ 11, 12: ՊՐԱԿ՝ ԱՋԵ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «JMWSI» «1793», լուսապատկերով՝ շրջանաձև ցանկապատ, ներսում զինուորական հանդերձով միապետը՝ գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր առիւծ, այ ձեռքին՝ սուր, ձախին՝ հրովարտակ. պատկերագրութեան վերևում կայ «PRO PATRIA» մակագրութիւն: ՄԵԾՈՒԹԻՆ՝ 32,8x 20,2: ԳՐՈՒԹԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 24-28:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. մամուլը կարում չէ:

ԻՍԿՈՒԹԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1-10 «Копия съ имяннаго ея императорскаго величества высочайшаго указа даннаго правительствующему Сенату въ 27 день генваря 1795 года въ С. Петербургѣ – Изъ указа нашего отъ 13 апреля 1793 года Сенату извѣстно есть, что по присоединеніи отъ Польши подь державу нашу издревле ей принадлежавшихъ областей, повелѣли мы изъ оныхъ нѣкоторыя части отдѣлить по способности къ сопредѣльнымъ губерніямъ, а изъ оставшихся затѣмъ устроить губерніи: Минскую, Изьяславскую и Брацлавскую... въ теченіи десяти лѣтъ сколько за удовлетвореніемъ положенныхъ по штатамъ и прочимъ нужнымъ по губерніямъ тѣмъ расходамъ собратся можетъ, предоставляя всѣ тѣ

доходы Единственному Его распоряжению, и предписать въ началѣ каждаго года представлять на утверждение наше предполагаемое имъ росписание суммъ натовъ текущій годъ; а при окончаніи подавать намъ обстоятельныя отчеты о употребленіи оныхъ и о успѣхахъ оными произведенныхъ»: Եկատերինայ Երկրորդ կայսրուհու հրամանագիրը կառավարիչ Սենատին Լեհաստանից գրատած երկրամասից նոր փոխարխայութիւններ կազմելու մասին: Յիշատակում է 1793 թ. ապրիլի 13ի հրամանագիրը, որտեղ ասուած է, որ Լեհաստանից վերադարձուած տարածքի մի մասը միացնել սահմանակից շրջաններին, իսկ մնացածից ձևատրել երեք նոր գաւառներ՝ Մինսկի, Բոսցլաւի և Իզեասլաւի՝ հա-

շով առնելով բնակչութեան քանակը, որը չափւթ է անցնի որոշ թուաբանակից: Ինչ վերաբերում է Եկատերինոսլաւսկայայ գաւառին, այդ հարցը, ներկայացուած քառաէզների եւ վիճակագրական տուեալների հիման վրայ, բննարկուել է մանրամասն՝ 10 կէտից բաղկացած:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՅՈՒՆԱԿԻ

10 На подлинномъ подписано собственною Ея императарскаго Величества рукою тако: Екатерина. съ подлиннымъ свидѣтельствомъ полковникъ Адриян Грибовскій:

ՆՇՈՒՄ՝ 1 (ժէ դ., նոտրգիր) «Հրովարտակ սենաթի ի 27 յունվարի 1795 ամի վասն քաղաքական կարգադրութեանց»:



311

ԳՐՈՒԹԻՒՆ

բրթյ. 6, վաւ. 69

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2ա: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «NO 1», «ММЕП», «1817», լուսապատկերով՝ թեւատր շրջանակ պատուանդանով, խաչակիր թագով: ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 35,2x22: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա), վրացերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 46+5:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բարարա:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «է: Ըստ ընթացից հողովման շրջանին ժամանակաց պահեալ մեր ի կողմն ձախողակի, եւ ի յարդար իրաւանցն Աստուծոյ դատեալ խրատապատժեցաք ըստ յանցանս մերոց... եւ ըստ իւրում ժամանակի վայելեցցեն ի պաշտօնս եւ ի հանդէսս եկեղեցոյն»: Մի խումբ հոգեւորականներ, մանաւանդ Մօղնու եկեղեցու քահանաները, գրում են, որ աղայ Մահմադ խանը 1795 թ. սեպտեմբեր-

րի 13ին տիրելով Թիֆլիզին՝ աւերեց ամէն բան, նաեւ Մօղնու եկեղեցին: Եւ քանի որ եկեղեցին շուրհի այլեւս նախկին կարողութիւնը, հետեւապէս «կարգեցաք սրբոյ եկեղեցոյս զմասն բաժնի. յամենայնէ ելիցն եւ մտիցն իբրեւ զմի բնիկ քահանայ, հանելով բաժին ի ժամէ եթէ ի՛ տէրունական աուրց եւ եթէ՛ ի հասարակաց, զի զոր ինչ եկեղեցոյն բաժին անկցի, զայնս համայն քահանայք եկեղեցոյս պարտին կարգաւ առնել զժամն՝ ի հասարակէ յերից մասանց զմի մասն առնելով ինքեանց վարձ... եւ ի տէրունականէ՛ ի հինգերորդ մասնէ զմի մասն, եւ զմնացեալն՝ տալով եկեղեցոյն», որի հոգաբարձու, կառավարիչ եւ երեցփոխան են կարգում պրնեսայի Ֆիթօյեանին, ով պարտատու է յանձնուած արդիւնները հաւատարիմ պահպանութեամբ պահել: Յիշատակում է, որ անիծեալ Մահմադ խանի քաղաքին տիրանալու ժամանակ տէր Գրիգոր Տէր-Շմաւոնեան աւագ քահանան ինչպիսի ծանր տանջանքների է ենթարկուել («արբամբ սաստիկ գանից եւ խարամբ բոլոր անդամոց»), սակայն ցոյց չի տուել եկեղեցու անօթների տեղը, որ միայն իմբ գիտէ: Յետագայում այդ անօթները հանում եւ եկեղեցում գործածելու նպատակով յանձնում են տէր Գրիգոր աւագ քահանային:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՅՈՒՆԱԿԻ

1ա Գրեցաւ եւ եդաւ այս թուղթք ի ՌՄԽԵ (1796) թուոջս, ի մարտի ամսոյ ԻԵ (25): Վերջ:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

1. 1ա Կարգադրութիւնս այս հաճոյ է ինձ, վասն որոյ եւ իմով ձեռամբ հաստատեմ՝ Յովսէփ արքեպիսկոպոս Ռուսաց երկրի հայոց եւ այցելու աշխարհիս Վրաց:

2. 1ա Հախպատայ սրբոյ վանից առաջնորդ Դաւիթ արքեպիսկոպոսս վերահասու գոլով, վասն որոյ կնքեցի:

3. 2բ Սոյն կանոնիս համաձայն եւ համակամ գոլով կնքեմ՝ Սրբոյ էջմիածնի գործակալ եւ վանքի եկեղեցւոյ աւագ քահանայ տէր Ղազար:

4. 2բ Ընդ սոյն կանոնիս համակամ գոլով կնքեմ՝ կաթողիկէ եկեղեցւոյ սպասաւոր տէր Առաքել:

5. 2բ Ընդ սոյն կանոնիս համակամ գոլով կնքեմ՝ Նորաշէնու սուրբ եկեղեցւոյ անարժան սպասաւոր տէր Յակոբ:

6. 2բ Ընդ սոյն կանոնիս համակամ գոլով կնքեմ՝ Բերլէնէնու սուրբ եկեղեցւոյ սպասաւոր տէր Ստեփան:

7. 2բ Ստեփան Տէր-Շմաւոնեան:

8-15. 1ա, 2բ (վրացերէն 8 վկայութիւն):

312

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 6, վա. 70

ՀԱՇՏԱՐԻՍԱՆ

ՌՄԻԴ-1795

Հեղինակ՝ Յովսէփ արքեպ. Արղուբեան:

ԹԻՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ շրջանաձև ցանկապատ, ներսում զինուորական հանդերձով միապետը՝ գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր առիծ, աջ ձեռքին՝ սուր, ձախիճ՝ հրովարտակ. պատկերագրութեան վերևում՝ «PROPATRIA», ներքևում՝ «B» մակագրութիւն: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 41,6x29,8: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 50:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Ողորմութեամբն Աստուծոյ Յովսէփ՝ արքեպիսկոպոս Ռուսաց երկրի Հայոց ազգին, ծայրագոյն նուիրակ Սուրբ էջմիածնի, եւ հիմնադիր երկուց քաղաքացն՝ Նոր Նախիջեւանու եւ Գրիգորուպոլու, յորմէ սիրով Սուրբ Հոգւոյն, քրիստոսական ողջունիւ եւ աստուածային զօրացուցիչ բազմապատիկ օրհնութեամբ ծանուցո՛ւմն լիցի... Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի լինիցի յամենայն բանս եւ ի գործս ձեր օգնական. ամէն»: Հաշտարխանից Յովսէփ արքեպ. Արղուբեանն օրհնութեան օրհնութեան զիր

է ուղարկում Սանահնի թեմի, այլեւ «ի Թիֆլիզ, ի Սումխէթ, ի Լոռի, ի Բամբակունձոր, ի Վրաց Տուն, ի Կախէթ եւ ի Ղազախպօրչալու» բահանաներին, ազնուականներին, մեխիներին եւ իշխաններին, վաճառականներին, արհեստատրներին, հողագործներին եւ առհասարակ ամենայն ժողովրդին առ այն, որ ինքը նպատակ ունի վերանորոգել Սանահնի վանքը, որն այժմ ամայի է, եւ վերականգնել թեմը: Այդ նպատակով Թիֆլիզ է կանչել Սանահնում ծնուած Առաքել ֆեյիւն, «եսու նմա զվարդապետական իշխանութիւն եւ զծայրագոյն աստիճան, եւ կացուցի զնա առաջնորդ, դէտ, հովիւ հոգեւոր եւ վանահայր նոյն հրաշակերտ սուրբ վանիցն»: Խնդրել է Վրաց արքային եւ արքայորդուն, «զի օգնական եւ պաշտպան լինիցին», եւ այս մասին յայտնել է կթղկսին՝ խնդրելով «ի սուրբ նամական վերահաստատել եւ խարսխեալ հիմնաւորել»: Պատուիրում է Առաքել վրդ-ին ընդունել որպէս իրենց հոգեւոր հայր եւ առաջնորդ «եւ իբրեւ պատկեր իմ եւ յաջորդ», նրան օգնական եւ օժանդակ լինել, շրնդդիմանալ, նրան հանձնել սուրբ վանքի հասանելիքը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Յովսէփ արքեպիսկոպոս: 1795, յունվարի 31, ի Հաշտարխան:

ԿՆԻՔ՝ 1ա (արքեպիսկոպոսական կնիքապատկերագրութեան շուրջ կայ հետեւեալ մակագրութիւնը)՝ «Կնիք Յովսէփայ արքեպիսկոպոսի Հայոց ընկալեալ զպարգեւ ի կայսերուհոյն ամենայն Ռուսաց. 1793»:

313


ԳԻՐ ՕՐ ՀՆՈՒԹԵԱՆ

թղթայ. 6, վառ. 71

Կ. ՊՈՒԽՍ

ՌՄԽԴ-1795

ՀԵՂԻՆԱԿ՝ Զաֆարիա վրդ. Կ. Պոլսի պատրիարք: ԹԵՐԹ՝ 1 չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 54, 1x34: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ խոշոր բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 40:



նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻԻՆ – ԹՆՀՆԱԳԻՐ՝ 1ա: Գոյներ՝ կարմիր, ոսկեգոյն: ՎԻՃԱԿ՝ բաւարար: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Յիսուսի Քրիստոսի ծառայ Զաֆարիա պատրիարք մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսոյ – Յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան և նամակ խրատու և պատուիրանաց ի տիրախնամ քաղաքն Զմիտին բնակեալ խոհամազարդ քահանայից, բարեպաշտօն իշխանապետաց, քրիստոսասէր իշխանաց և համայն օրհնեալ գլխաւոր անձանց... գի ի պատուի և ի սիրելութեան ունիշիք զնա և զմիմեանս ևս, որ և Աստուած սիրոյ և խաղաղութեան եղիցի ի ձեզ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Կ. Պոլսի Զաֆարիա պատրիարքի օրհնութեան գիրը Զմիտնիայի քահանաներին, իշխանապետներին, իշխաններին և գլխատու անձանց առ այն, որ խաղաղ լինեն, քանի որ Զմիտնիայում եկեղեցի շինելու համար «մէրամաթ եւ թամիր անելոյ յատկապէս ֆերման մի շինեցուցանել եղև», բայց եկեղեցաշինութեան գործը «ոչ ի գլուխ ելանէ վարկպարագի գործադրութեամբ և անխոհեմ արարողութեամբ և կողմնական շարժեցողութեամբ»: Հետեւապէս պատուիրում է խաղաղ եւ միաբան լինել, տեղի այլագրի իշխանատուներին խոնարհ լինել, «զկամս ձեռք առնուլ պարտիք, զի քաղցրացին ի վերայ ձեր և ի վերայ այդր իրագործութեան», որ կարողանան եկեղեցին կառուցել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Գրեցաւ խրատու և պատուիրանաց գիրս ի ՌՄԽԴ (1795) թուին Հայոց և յունվարի ամսոյ ԻԴ (24)ին, ի պատրիարքարանս ամենայն հայոց, որ ի Կոստանդնուպոլիս:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանաֆով, հաճանչատու բոլորակի մէջ) «է: ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՏՐԻԱՐՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՏԻ, ՌՄԻԲ (1773)», (բոլորակի ներսում, Յիսուսի պատկերագրութեան ձախ եւ աջ մասերում) «ՅԻՍՈՒՄ /ՔՐԻՍՏՈՍ», զրֆին՝ անընթեռնելի: 2. 1ա (սեւ քանաֆով, ձուածեւ) «ԶԱՔԱՐԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ /ՌՄԻԲ (1773)»:


314

ՀԱՇՈՒԹԻՈՒԴԹ

թղթայ. 6, վառ. 72

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 2 չգրուած՝ 1ա, 2բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «NO 2», «ММЕП», «1813», լուսապատկերով՝ թեւատու շրջանակ պատուանդանով, խաչակիր թագով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 36x22,4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1բ): ՏՈՂ՝ 16, 53:



նմուշ 1բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերն անհարթ, խոնաւութեան հետքեր:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Պարունակում է Թիֆլիսի Նորաշէնի եկեղեցու ել եւ մտի հաշիւներ.

1. 1բ Նորաշինու եկեղեցոյ թէվթերն – 1795 թուոյ ապրիլիցն սկսեալ մինչեւ ցաւերումն քաղաքին եւ զկնի այնր եւս մինչեւ 1797, նոյեմբերի 6... զոր զկնի պարտ է քննել ըստ արժանաւորութեանն եւ որոնել նաեւ զթէվթերն ծախուց:

- 2. 1բ 1797, նոյեմբերի 6 սկսեալ մինչ 1807 իր-բեւ ժԱ. (11) տարի տէր Յակոբն եւ տէր Մովսէսն ունելով զկառավարութիւնն՝ ո՛չ արդեանց եւ ո՛չ ծախուց ոչ ունին զթէվթէր:
- 3. 2ա Յունվար – Զրօրհնեաց ժողովք 4400...

Գանձանակն 98480:

ՅԱԻԵԱԳՐՈՒԹԻՒՆ

1բ Սոյն արդեանց հանդէպ առանց թէվթէրի ծախս ցուցանեն 5756500 դրան:

315

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 6, վա. 73

Խ03

ՌՄԽԴ-1795

ԳՐԻԶ՝ Իսայազան աղայ: ՍՏԱՅՈՂ՝ Դուկաս Ա. Կարնեցի կրղկս:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լու-սագծերով, լուսագրով՝ «GFAA», լուսապատ-կերով՝ վերետմ թագակիր, թեատարած արծիւ եւ թագակիր ռեատր զինանշան: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 34,6x24,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 38+7:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւար. խոնատրեան հետեւեւ, հին նորոզմամբ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Արւայայզան վեհայաւտին սուրբ կարշայ-պարն կու հանփուրեմք եւ օրհնութիւնըտ միշտ կու խնդրեմք տէրութենէտ, զի անպակաս արաս-ցես ծառայիտ քոյ – Արդ ազանեմ տէրութեանըտ, որ թարեղէս է (7) օր յառ(ս)աջ տեղեցըս Ա. (1) սա-յի աղարկեցենք Պայազեա, որ Աստուծով հասացէ հընուցըտ դուրուղըն եւ ումետ ունիք... որ այս աղա-քավ երկու հազար 2ձ՝ (600) թու[մա]ն ինձ՝ Վանեցի մահտեսի Գասպարի որդի Իսայազանիս հասավ եւ մենք էլ անցեցինք յուրաքան[չ]ուրոջ: Իսայազանիս

մօհրն է»: Խոյից Իսաչան աղան գրուքեամբ տե-ղեկացնում է [Դուկաս] կրղկսին, որ իւրաքանչիւր ժամանակս ուղարկած 2600 թումանը ստացել է եւ ըստ կարգադրութեան բաժանել (տուել է Զա-ֆար Դուլի խանին, շահի «Վեշկազին») եւ դրա-մական այլ գործարքների մասին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

- 1. 1ա Գրվեցավ Խոյ, թիվն ՌՄԽԴ (1795), հոկ-տեմբերի ԻԲ (22)ուն:
- 2. 1ա Տե՛ս Բովանդակութեան վերջում:

ՀԱՍՅԷ

2բ Աստուծով: Հասցէ գիրըս ի Սուրբ Աթոռըն էջմիածին ի ձեռն սրբապազան վեհապետին առցէ ի պարին. ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

- 1. 2բ (ԺԸ դ., բորգիր) Վանցի Իսաչան աղա-յի դաւզն, որ սակս ԲԻ (2000) 2ձ՝ (600) թումանի աղազաւ է գրեալ, թէ ինձ եհաս այսու կերպիւ, որ-պէս յայտ է ի թղթոջս, որ ի ՌՄԽԴ (1795) թուոջս եւ ի հոկտեմբերի ամսոյ 25ին էհաս: Ընդ որում է պարոն Նաւասարդի թուղթն:
- 2. 2բ (ԺԹ դ., նոտրգիր) Ի Խոյայ: 1795, հոկտեմ-բերի] 22, առ Դուկաս սրբազանն Իսաչան աղայն գրէ զղավզ, թէ 2600 թումանն էհաս յուրաքանչիւր ժամանակս:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1ա (սե թանաքով, ութանկին) «արա-բատառ /ԻՍԱՃԱՆ»:

316


ՀԱՇՈՒԹԵՐԹ

թղթ. 6, վա. 74

ԺԸ դար

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ հաստ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33,7x23,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին:

ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 15:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերում խոնաւութեան հետեւեր, նորոգում:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Պարունակում է մի եկեղեցու (հաւանաբար

Թիֆլիսի Նորաշէնի) մանր հաշիւները, այսպէս.

1. 1ա Յամի 1795, ապրելի 9. մեր եկեղեցին քակել տուաք, եւ ի մայեւի յամսոյ աւագ քահանայ տէր Յակոբն եւ ես՝ տէր Գրիգորս հալել տուաք զանօթն եկեղեցոյ... յամի 1796, փետրվարի 6, զոր ինչ եկեղեցոց արդիւնքն են, ի ներքոյ սորա գրեալ է:

2. 1ա Յամին 1795, ապրելի 9. մեր եկեղեցոյն ձեռն տուաք, զոր ինչ արդիւնք եւ ծախս էր՝ Յովհաննէսս գրէր... յամի 1795, նոյեմբերի 14, զոր ինչ ծախս է եղեալ, ի ներքոյ այսորիկ գրեալ է:

**317
ԿՏԱԿ**


թղթայ. 6, վաւ. 75ա

ՍՈՒՐԱԹ (ՀՆԴԿԱՍՏԱՆ)

ՌՄԽԴ-1795

ՀԵՂԻՆԱԿ՝ Յոհաննջան:

ԹԵՐԹ՝ 1. չգրում՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր առիւծ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23,5x20,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 6:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ կրկնօրինակ, ձեռագիր:

Ծնթ. № 318 կտակի մէկ այլ կրկնօրինակն է՝ գրում միեւնոյն ձեռնով տարբեր շափի թղթերի վրայ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. ամէն: Կտակ յեա մահուն հաստատուն է, որպէս

ասէ սրբազան առաքեալն Պողոս (Եբր. Թ 17) – ես՝ Գէորգեանց Յակոբի որդի Յոհաննջանս, յօժար կամօքս կտակս գրեցի եւ յաստատեցի, որ յեփ ինձ մահ հասանի, կտակաչգիրս հաստատուն լինի... ի իւրեանց նմա խոստացէլ, որ դիմացն գրեցի»: Գէորգեանց Յակոբի որդի Յոհաննջանի կտակն է, ուր նախ՝ նշում է իր կտակակատարներին, ապա՝ Յովսէփ արքեպս. Արղութեանի ուղարկած տէր Ստեփաննոսի խօսքով կտակում է ԼՁՌ (36000) [ռուբլի] գումար Ղրիմից Նոր Նախիջեան բնակուող մանկանց 2 դպրատան համար:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1ա Գրվեցավ թիվն Փրկչին 1795, թիվն Փոքր 179, նիրհան 8, Սուրաթումս:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1ա Խոստովան[ա]յգրին < > ոչ ձեռ գրածիս հաստ[ատ], որո[ւ] էլ համեմատ տեսի՝ Աղայրաբի որդի ըՍտ[ե]փանոս (ստորագրոյքին):

**318
ԿՏԱԿ**

թղթայ. 6, վաւ. 75բ


ՍՈՒՐԱԹ (ՀՆԴԿԱՍՏԱՆ)

ՌՄԽԴ-1795

ՀԵՂԻՆԱԿ՝ Յոհաննջան:

ԹԵՐԹ՝ 1. չգրում՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր առիւծ (կիսաս):

ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23,4x17: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 6:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ կրկնօրինակ, ձեռագիր:

Ծնթ. № 317 կաակի մէկ այլ կրկնօրինակն է՝ գրուած միեւնոյն ձեւով տարբեր չափի թղթերի վրայ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա Տես ա՛ստ № 317. Բովանդակութիւն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

1ա Տես ա՛ստ № 317. Յիշատակարան նախօրինակի:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

1ա Խոստովանայգրին <ւ> ոչ՞ ձեռ գրածինս հաստ[ատ], որո[ւ] էլ համեմատ տեսի՛ Աղայբաբի որդի ըՍտեփաննո (ստորագրութիւն):

319


ԿՈՆԴԱԿ

թղթ. 6, վաւ. 76

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ]

ՀԵՂԻՆԱԿ՝ Դուկաս Ա. Կարնեցի կթղկա:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով (կիսատ, անընկալելի): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,3x11,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 26:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ սեւագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Կոնդակ վասն մումի ի վերայ Թիֆլիզու –

ՌՄԽԴ-1795

Յորմէ ժամանեցէ թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան՝ հանդերձ հոգեզուարճ շնորհիւ Միածնաէջ սրբոյ տեղւոյս ի վերայ՝... եւ որպէս դուք առատապէս տալով՝»: [Դուկաս Ա. Կարնեցի] կթղկար կոնդակով դիմում է Թիֆլիսի աւագ ֆահանաներին եւ առհասարակ ժողովրդին, որ ծանրութիւն չլինելու նպատակով Մայր Աթոռի հասանելիք մումի համար յատուկ ժողովարար չի ուզում, այլ այս կոնդակն ուղարկում է առաջնորդ եւ նուիրակ Մարտիրոս վրդին, հաւատարիմ գործակալ տէր Դազար եւ Սուրբ Աթոռի նորտերի վերակացու տէր Դաւիթ աւագ ֆահանաներին, որ նրանք հաւաքեն մումը եւ յղեն Սուրբ Աթոռ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա ՌՄԽԴ (1795) եւ յապրիլի (տեղը բաց):

320


ՅՈՒՅԱԿ

թղթ. 6, վաւ. 77

[ԹԻՖԼԻՍ]

ՌՄԽԴ-1795

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 19x9,75: ԳՐՈՒԹԻՒՆ՝ եռասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 37+1:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Տեանն ներսէս վարդապետի եղբօր մերոյ խնդրեցեալ ինչքն են, զոր գրի աստ միբատմիոջէ – 1. Ալմաստ մատանի, որոյ գինն է... մահտեսի Նիկողայոս ամիրայիս ձեռամբն»: Ներսէս վրդի համար գնուած զանազան իրերի (ալմաստ մատանի, շուխայ, հողաթափ եւ այլն) ցուցակը, նշանակուած գներով, որ [Թիֆլիսից] գնել եւ ուղարկել են Կարին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա ՌՄԽԴ (1795) թուոյն մերոյ եւ ի յունիսի 14:


ՆՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ

թղթւ. 6, վա. 78

ՌՄԽԴ-ՌՄԽԶ-1795-1797

ԳԻԻԶ՝ Բարսեղ արքյ:

ԹԵՐԹ՝ 28 (էջակալուած 1-53՝ հաշուի շառնելով չգրուած թղթերը և մասնույի մաս կազմող առաջին թերթը). չգրուած՝ 1բ, 28բ, Աբ փեղկ, Բա փեղկ: ՊՐԱԿ՝ Ա.Ճ.28: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «I R», լուսապատկերով՝ իրար վրայ դասաւորուած 8 փոքրիկ օղակներ: ՄԵՏՈՒԹԻԻՆ՝ 34,5x23,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ ֆառասիւն: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 2ա): ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 40-54: ԿԱԶՄ՝ հաստ թուղթ:



Նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ բարար. նորոգուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

Նուիրակ Բարսեղ արքյի եւղոկիայի, Սեբաստիայի, Ակնի, Կեսարիայի, Ամասիայի եւ գիւղորէից նուիրակութեանց մատեանն է՝ ըստ ֆահանաների ծխերի, հոգեբաժինների:

1. 2ա Կաման Աստուծոյ եւ հրամանա գերջանիկ տեանն մերոյ արբազան վեհապետի եւ հոգեւոր ծնողի իմոյ, Բարսեղ սեակիր արեղայս կարգեցայ նուիրակ տիր[ա]լպան ֆաղափին Եղոկիոյ եւ համայն վիճակաց նորին, ի ՌՄԽԳ (1794) թուոջս մերում եւ ի նոյեմբերի է (7)ըն, յորում ատու եւ ի հանապարհ ելաք: Իսկ ի լրանալ թուոջն վերջիցելոյ, ի մտանել մեր ի ՌՄԽԴ (1795) թիւն եւ ի յունվարի ԻԸ (28), սկսբնատուեցաք զգործս մեր, որ ի Կապնէմատան: Աստուծով – 10000 (փարայ). Կապնէմատանն նուիրակութիւն կատարուածք եղեւ... 920 (փարայ). Սուրբ Կարապետ եկեղեցւոյ գանձանակն եղեւ:

2. 2ա-6ա Ի յԱրապկեր, փետրուարի ԺԳ (14), սկ[ի]սբն եղեւ: Տէր Սահակի ծովաբն – ..140 (փարայ). Դըշիկ Սարգիս... 52.. (փարայ). գանձանակազորամ եղեւ:

3. 6աբ Գուղորայքն Ար[ա]լպկերու – .8.. (փարայ).

րայ). Շէփիչ գիւղն կատարուածք... 36.. (փարայ). Անջրդի կատարուածք:

4. 6բ-7բ Ի յԱկըն ֆաղափն, մայիսի ԺԳ (13) սկիսբն եղեւ: Աստուածամօր ժամի հոգեբաժինն – .8.. (փարայ). Ափրկենց Գէորգն... .8.. (փարայ). Զ (6) մարդոյ հոգեբաժին ետուն:

5. 7բ Գիւղորայքն Սեբաստիոյ. կատարուածք է – 14.. (փարայ). Իշխանի... որ արար զուռուշ 742:

6. 7բ-10բ Ի ՌՄԽԴ (1795) թուոջ, ի հոգտեմբերի ամսոյ ԺԷ (17) սկիսբն արարաք գործոյ ի Սուրբ Աստուածամայր եկեղեցին Սեբաստիոյ ֆաղափս: Աաք տէր Նիկո[ռ]ղոսի ծովաբն – 22 (փարայ). մահտեսի Ահարօն... 5.. (փարայ). ԺԶ (16) տան վասն առի տէրտէրէն:

7. 10բ-2բ Սեբաստիոյ Սուրբ Սարգիս ժամն ձեռնարկաք ի ՌՄԽԵ (1796) թուոջ, ի յունուարի ԺԲ (12)ըն. Աստուծով: Տէր Յակոբի ծովաբն – 48 (փարայ). Տէր Պապեան մահտեսի Յարութիւնըն... որ արար զուռուշ 995, 5 փարայ:

8. 12բ-3ա Ի ՌՄԽԵ (1796) թուոջ, ապրելի ԻԳ (24), սկիզբն արարաք գործոյ Կեսարիոյ Աստուածամայր ժամն. Աստուծով – 12000 (փարայ). նուիրակութիւնն կատարուածքն... 6. Միւրգան:

9. 13աբ Ի սեպտեմբերի Զ (6)ըն սկսաք Կեսարիոյ Սուրբ Սարգիս ժամն. Աստուծով – 12000 (փարայ). նուիրակութիւն կատարուածք է... որ արար զուռուշ 1092:

10. 13բ-5ա Աստուծով. ձեռնարկաք գործոյն մեր ի յԱմասիոյ ի Սուրբ Աստուածածին եկեղեցին ի ՌՄԽԵ (1796) թուոջս, ի հոգտեմբեր ամսոյ ելն: Տէր Սուփեասի ծովաբն – 22 (փարայ). Գաբր[ի]լի Յովակիմ... 14.. Իսկ ԻԸ (28) անձանց հոգեբաժինք գանձապետէն յանձնեցաւ:

11. 15ա-6ա Սուրբ Նիկողոս ժամն եւ ժողովորդն: Տէր Կարապետի ծովաբն – 16 (փարայ). մահտեսի Կարապետ, գանձապետ... որ արար զուռուշ 99, 20 փարայ:

12. 16ա-7ա Սուրբ Յակոբ սկսաք ի ՌՄԽԶ (1797) թուոջս, ի յունվարի ԺԳ (14). Աստուծով: Տէր Գաբր[ի]լի – 22 (փարայ). մահտեսի Մարտիրոս... 4... (փարայ). Մարտվանու վանից Գէորգ վարդապետէն առաք:

13. 17ա-20ա Արդ՝ ի ՌՄԽԶ (1797) թուոջս, ի

փետուարի ԺԸ (18)ըն ձեռնարկաբ գործոյ ի Մարտական քաղաքն: Աստուծով: Տէր Խաչատուրի ծովսփն – 22 (փարայ). մահտեսի եզեկիէլ... 292 (փարայ). գանձանակ եւ հոգեբաժին առաք:

14. 20աբ Վէգիր Քեօփրուի ժողովուրդն – 24 (փարայ). Մահարի Աստուածատուր մահտեսի... 46 (փարայ). հիգ տուն բողայք:

15. 20բ Պաֆուայու ժողովուրդն – 22 (փարայ). մահտեսի Խաչատուրն... 8 (փարայ). ի Սամսո[ւ]ն պարոն Պօղոսն միայն:

16. 20բ-1ա Չարչամպայու ժողովուրդն – 28 (փարայ). դարա[յ] մահտեսի Մարտիրոս... 21.. (փարայ). գանձանակադրամ առաք:

17. 21ա Ունիայու ժողովուրդն – 22. (փարայ). սառաֆ պարոն Գրիգոր... 16 (փարայ). գանձապետէն առաք գանձանակադրամ:

18. 21ա Ֆատսայու ժողովուրդն – .1.. (փարայ). պարոն Պետրոս... 8... (փարայ). բողոր Խամշէցոց նուիրակութիւն կատարուածք եղեւ:

19. 21աբ Ի Հիկիսար: Տէր Մեսօփի ծովսփն ժողովուրդն – .12. (փարայ). մահտեսի Գեորգի Մանուկ... 16.. (փարայ). գանձանակ առաք գանձապետէն:

20. 21բ-2ա Հէրակու ժողովուրդն – 22. (փարայ). կորեկ Գրիգոր[ր]ն... 32.. (փարայ). գանձանակ ետուն:

21. 22աբ Զիլա: Տէր Մանուկի ծովսփն – 16. (փարայ). մահտեսի Կարապետ... 44 (փարայ). գանձանակադրամ առաք պարոն գանձապետէն:

22. 22բ-4ա Իսկ ի ՌՄԽԶ (1797) թուոջ մերում, ի մայիսի ինն ձեռնարկաբ գործոյ մերում ի յեղովիոյ տէչնարտիւան կոչեցեալ Սուրբ Ստեփաննոս ժամն: Աստուծով: Տէր Գրիգորի ծովսփն – .44. (փարայ). վէքիլ խօճա[յ] Գասպար... 2.. (փարայ). ԺԱ (11) տան առաք տէրտէրէն:

23. 24ա-5ա Թախարղալա Սուրբ Սարգիս ժամն: Տէր Արամի ծովսփն – .6. (փարայ). մահտեսի Յօհանն... որ արար ղուռուշ 48, 35 փարայ:

24. 25ա-6ա Սուրբ Մինաս ժամի ժողովուրդն: Տէր Սահակի ծովսփն – .32. (փարայ). դարա[յ] Ախատեան մահտեսի Պետրոս... ..2.. (փարայ). աշխ Գեորգ:

25. 26աբ Սուրբ Պարսամ ժամն իսաչառաղ կոչեցեալ: Տէր Ստեփանի ծովսփն – .44. (փարայ). Անտոն աղայն... .6. (փարայ). ե (5) տան առի տէրտէրէն:

26. 26բ-7ա Պազարեճուլա Սուրբ Սարգիս ժամն: Տէր Յօհանի ծովսփն – 12 (փարայ). երեցփոխան

Բարսեղ... 36 (փարայ). Մէնէնդ կին մի կտակ:

27. 27ա-8ա Քառասուն Մանուկ սուրբ ժամն: Տէր Յարութիւնի ծովսփն – 44 (փարայ). Իփակեան Յօհան աղայն... 2200 (55 ղուռուշ):

28. 28ա [Աստուածաշնչային մէջբերումներ] – Եսայի 49:16 Ահաւասիկ ի վերայ ձեռաց իմոց նկարեցի զպարիսպ քո, եւ առաջի իմ ես դու յամենայն ժամ... Երեմ' 31:3 Բացէ ի բաց Տէր երեւեցաւ նմա. ի սէր յափտենական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ձգեցի զքեզ ի գթութիւն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տէւ Բովանդակութիւն 1, 6, 7, 8, 10, 12, 13, 22 (սկզբում):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 1ա Թուղթ մէկ յԱրաբկերու առ ամիրայն վասն անվնաս հասանելոյն մերոյ անդր, ի 1247 (1798) եւ յունիսի 16:

2. 1ա Թուղթ երկրորդ յԱրաբկերու վասն ժողովեալ դրամին, թէ ո՛ւր յղել կամիս, յուլիսի ԺԳ (13):

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա փեղկ (ԺԸ դ., նոտարանման բոլորգիր) Ամենաբարեպաշտ Փիլիպպոս Բրիտանացոյ ամիրային, տէրապահ եւ ծաղկափթիթ եւ բարեբողոքոց որդոց եւ ընտանեաց բոց, յիսուսաւանդ ողջոյն եւ օրհնութիւն առ ընծայեմ ի նոյն խնդալ – Ի բարեճոխ գիւղաքաղաքն Ապուշեխ ի բարի լինելուն մեծահամբաւ եւ քրիստոսագօր Փիլիպպոս ամիրայապետին առ ի բարին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

Ա փեղկ (ԺԸ դ., նոտարանման բոլորգիր) Յաւուրս Դուկասու նախկին սրբազան կաթողիկոսին՝ Մօրս լուսոց եւ Զաւարիա ազգասէր պատրիարքի մեծին Պօլտոյ շինեցաւ հրաշակերտ գոգնոցս՝ արդեամբ Ուռումիլու եւ Թօխաթու թէմից ժողովրդեանն, հոգածութեամբ Խամսեցի Գրիգոր արքեպիսկոպոսին ծառայի Սուրբ Էջմիածնի, մատակարարութեամբ մահտեսի Դարտաշեան Թաղէսու աղայի ի Պօլիս բնակելոյ, թուին 1248 (1799) եւ ամսոյ 25:

ՆՇՈՒՄ՝ Աա փեղկ՝ 1. «յԱթոռէ 100, ի մատանոյ 700»: 2. «Եւ բարեկօզակ գերա»: 3. (Երկիցս) «Գրիգոր խոնարհ եպիսկոպոս», «Գրիգոր հեզ եպիսկոպոս»: 4. «Աստուածատուր վարդապետին համար 1օ թօփ մօթ ճհակ, 1օ թօփ սեաւ»: 5. «յԱթոռն»: 6. «այս եւս անցանի»: 7. «խոստովանութիւն ի մէջ

այլազգորէն վէսվահալ, վ.սվահալ»: 8. «տքնութիւն հասանեցի»: 9. «ճգման»: 10. «ելից 32.10, Թուոց 14.12»: 11. թուաբանական հաշուարկներ: Բք փեղկ՝ 12. «յուշ»: 13. «տէր Նիկողայոս 78..78 ... տէր Յոհաննէս 76 18»: 14. «Ով է մերկ ի հանդերձից քան զմեր իմաստից»: 15. «Պախջացի չիք Գաբր[ի]

է Սիւլէյման»: 16. «Պայրախտար Մուրաա աղի տղա»: 17. «Ստամպոլու եկող Յակոբ տէրտէրի եղբորորդին, Պախջացի Դիմին Սաֆուն»: 18. «Տէկէջմանճի Յարութիւն»: 19. «Բարսեղ, Գրիգոր»: 20. թուաբանական հաշուարկներ:

ԳՐՉԱՓՈՐՉ Աս, Բք փեղկ՝ բազում:

322

ՀԱՇՈՒԵՄԱՏԵԱՆ

թղթ. 6, վա. 79

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 10. չգրուած՝ 1ա, 8բ-10բ: ՊՐԱԿ՝ Աx10: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «МОФЕБ», «1816»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,5x22,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ եօթնասիւն, հնգասիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1բ): ՏՈՂ՝ տարբեր:

1796	4870	15560	3670	174
------	------	-------	------	-----

Նմուշ 1բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Պարունակում է Մօղնու Սուրբ Աստուածածին եկեղեցու 1796-1818 թթ. եկեղեցական և դուֆանների եկամուտների և ծախսերի հաշիւները.

1. 1բ 1796 սկսեալ մինչ 1818 թիւ: Մօղնի անուանեալ Սուրբ Աստուածածին եկեղեցոյ եկեղեցական և դուֆանաց արդեանց հաշիւն յամենայն ժամանակս, Էրեգիոխանութեամբ աղայ Եսայի Ստեփանեան Փիթոյեանց, զամս 22 և կէս: Դուֆանաց ֆիրայֆն – 1796 մարտ... (1799) դեկտեմբեր:

2. 2ա Նոյնպէս 1796 սկսեալ մինչ 1818: Մօղնի անուանեալ Սուրբ Աստուածածին եկեղեցոյ ամենայն ծախսն – (1796 մարտ... (1799) դեկտեմբեր):

3. 2բ-8ա Արդիւնք: Ծախսն – 1800 յունվար... (1817(8)) ապրիլ:

Ծնթ. Հաշիւների աղիսակածե գրանցումները սկսում են Բ երեսներից (7 սիւնակ) և շարունակում Ա երեսներին (5 սիւնակ), որտեղ ստացուած արդիւնքները ներկայացուած են ըստ տարիների և ծախսերի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տէ՛ս Բովանդակութիւն 1, 2:

Ծնթ. Տես նաեւ ա՛ստ № 323, հմմտ. ա՛ստ № 333:

323

ՀԱՇՈՒԵՄԱՏԵԱՆ

թղթ. 6, վա. 80

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 10. չգրուած՝ 8բ-10բ: ՊՐԱԿ՝ Աx10: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «МОФЕБ», «1816»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,5x22,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ եօթնասիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1բ): ՏՈՂ՝ տարբեր:

1796	4870	15560	3670	174
------	------	-------	------	-----

Նմուշ 1բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

Ծնթ. № 322 Հաշուեմատեանի մէկ այլ օրինակն է՝ սրբագրումներով և ջնշումներով, որը կատարել է [Ն. Աշտարակեցի]:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Պարունակում է Մօղնու Սուրբ Աստուածածին եկեղեցու 1796-1817 թթ. եկեղեցական եկամուտների և ծախսերի հաշիւները.

1. 1բ Մօղնոյ Սուրբ Աստուածածին եկեղեցոյ ամենայն արդեանց հաշիւն ի բոլոր ժամանակս,

Էրէցփոխանութեան աղայ Եսայեայ Ստեփանեանց՝ սկսեալ ի 1796 մինչ ի 1818 – 1796 մարտ... (1799) դեկտեմբեր:

2. 2ա Մօղնայ եկեղեցայ հաշիւն ծախսոց – (1796 մարտ... (1799) դեկտեմբեր):

3. 2բ-Ցա Արդիւնքն: Ծախսն –1800 յունվար... (1817) դեկտեմբեր:

Ծնթ. 1. Հաշիւների աղիսակաձե գրանցումները սկսում են Բ երեսների սինակներից եւ շարունակում Ա երեսների սինակներին, որտեղ ստացուած արդիւնքները ներկայացուած են ըստ տարիների եւ ծախսերի: Այստեղ

արտայայտուած չեն 1818 թուականի հունվար-ապրիլ ամիսների արդիւնքները (տես ա՛ստ № 322):
2. Հմմտ. ա՛ստ № 333:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տե՛ս Բովանդակութիւն 1, 2:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՆՏԱԳԱՅԻ


1ա (ԺԹ դ., նոտրգիր) Մխալեալ հեղինակն, զոր յետոյ ուղղեցաք յայլ սոյնանման տետրակի: Մարտ ամիս:

**324
ՀԱՇՈՒՆՄԱՏԵԱՆ**

թղթ. 6, վա. 81

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 44 էջ. չգրուած՝ 35-44, կազմ Աբ, Բար: ՊՐԱԿ՝ Աx12, Բx10: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «МОФЕБ», «1816»: ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 34,5x22,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ եօթնասիւն: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1), վրացերէն (հիմնականում՝ թուականները): ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 40-47: ԿԱԶՄ՝ գորշազոյն թուղթ:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 19, 25րդ էջերը վնասուած: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ № 334:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Պարունակում է Մօղնու Սուրբ Գէորգ եկեղեցու 1796-1818 թթ. եկեղեցական եւ դուֆանների եկամուտների հաշիւները.

1. 1-2 1796: Տումար արդեանց Սուրբ Գէորգ եկեղեցայն Մօղնի անուանեցելոյ – Մարտ 20: Աստուծով: Ի թուին (վրացերէն), որ է 1796, մարտի 20: Մօղնի եկեղեցույ հոգեւորականք եւ մարմնաւորականք տօնապէս կարգադրեցին, որ եկեղեցական ամենայն տեսակ արդիւնքն ժամուց, գանձանակ, լուսագին, գերեզմանատեղույ գին, ձիթոյ, մոմոյ, խնկոյ գին, եւ քիրայի դուքանաց կամ այլ տեղեաց ինձ հասանիցի, եւ ես իւրաքանչիւր յատկութեամբ գրեցից մի առ մի որպէս զարդիւնսն, նոյնպէս եւ գծախսն: Եսայի Ստեփանեան Փիթոյեանց...

Աւագ տօնի աւուրցն տէր Յօհաննէսին ժամ անել ետուք, երլուքն բաժանեցաք, եկեղեցույն անկաւ հազար չորս հարիւր եւ [յ]իսուն դիան:

2. 2-4 Վրաց թիւ (վրացերէն), որ է թիւ փրկչական 1797 – 4 Յունվարի, գանձանակ՝ հարիւր եւ ութսուն դիան... (Նոյեմբերի) 15. գանձանակ՝ հարիւր եւ քսան դիան:

3. 5-7 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1799 – Մարտի 10. տէր Միխայլէն տուաւ գերեզմանագին վեց հարիւր դիան... (Յունվար) 6. մոմի փող ժողովեաց տէր Եսային հինգ հազար հարիւր եւ վաթսուն դիան:

4. 7-10 Վրաց թիւ (վրացերէն), որ է թիւ փրկչական 1800 – (Յունվար) 6. ով որ խաշահանէք են բերեալ, ի յայսմ կշարադրի տէր Եսայու ձեռամբ... (Դեկտեմբերի) 30. գանձանակ՝ հարիւր եւ հինգ դիան:

5. 10-2 Յունվարի 6: Մոմի ժողովք, տէր Սիմէօն ժողովեաց հինգ հազար հինգ հարիւր եւ տասն դիան Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1801... (Դեկտեմբերի) 30. գանձանակ՝ հարիւր եւ քսան դիան:

6. 12-5 Յունվարի 5: Գանձանակ՝ հարիւր եւ տասն դիան: Մոմի ժողովքն, տէր Միխայլէն ժողովեաց երեք հազար եւ երկու հարիւր դիան... (Դեկտեմբեր) 28. գանձանակ՝ հարիւր դիան:

7. 15-6 Յունվար 4. 1803: Ժամն հասարակ էր, տէր Աւէլիփին ժամ անել ետուք, բաժին արարաք, եկեղեցուն անկաւ հազար եօթն հարիւր եւ յիսուն դիան... (Յուլիսի) 5. տէր Ստէփանի ժողովուրդ՝ երկու գերեզմանագին, տէր Միխայլի ձեռամբ՝ երկու հազար եւ չորս հարիւր դիան:

8. 17 Աստուծով: Վրաց թիւ (վրացերէն), որ է

փրկչական թիւ 1804, յունվարի 14ին քաղաք եկաւ, եւ եկեղեցոյ կարգերն հասարակ եղաւ, եւ տէր Սիմէօնին պահ ետու, որ եկեղեցոյ արդիւնքն եւ խարջն նորա ձեռացն լինի – Խառնին տուաւ մոմի փող հազար եօթն հարիւր եւ տասն դիան... Ամիրջանի որդի Դաւիթն բերաւ, Հոռոմի գերեզմանագին՝ երկու հազար դիան:

9. 17 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1805 – Յունվար 6: Մոմի փող ժողովեաց տէր Միքայէն երեք հազար եւ չորս հարիւր դիան... Բագման Առաքելի գերեզմանագին, տէր Խէչաառարի ձեռամբ, հազար եւ երկու հարիւր դիան:

10. 18 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1806 – Յունվար 6: Մոմի փող ժողովեցին երեք հազար դիան... Ինձ ետ տասն եւ երկու հազար դիան, ի վերայ իմ գումարեալ է քառասուն եւ եօթն հազար եւ ինն հարիւր դիան:

11. 18 Աստուծով: Վրաց թիւ (վրացերէն), որ է թիւ փրկչական 1807: Ի սոյն թուոյն մինչեւ 1808ի յունվարն, տէր Խէչաառարի ձեռին ունէի պահ տուեալ մին տարուայ արդիւնքն, պատարագներու բաժինն, բաժանելի փողն գողացեալ էին տասն եւ ութ հազար դիան, ինձ ետ փող տասն եւ չորս հազար եւ հինգ հարիւր դիան, սիային եւս գողացեալ էին – Զրօրհնէքի աւուրն մոմի փող՝ երեք հազար եւ երկու հարիւր դիան... Ուրբուրի գերեզմանագին՝ երկու հազար դիան:

12. 19 Վրաց թիւ (վրացերէն), որ է թիւ փրկչական 1808 – Յունվար 6: Մոմի փող ժողովեաց տէր Միքայէն չորս հազար եօթն հարիւր եւ երեսուն դիան... (Դեկտեմբերի 6): Եկեղեցոյ գանձանակ բերաւ խարազն վեց հազար եւ երկու հարիւր դիան:

13. 19-20 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1809 – Յունվար 6: Մոմի փող ժողովեաց տէր Միքայէն չորս հազար հինգ հարիւր եւ քսան դիան... (Դեկտեմբերի 26): Եկեղեցոյ գանձանակ բերաւ խարազն չորս հազար եւ ութ հարիւր դիան:

14. 20 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1810 – Զիթոյ փող ժողովեաց տէր Միքայէն երեք հազար հինգ հարիւր եւ յիսուն դիան... Նոյեմբերի 26: Տէր Առաքելն ժամ արար, եկեղեցոյն անկաւ չորս հազար եւ հինգ հարիւր դիան:

15. 20-1 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1811 – Յունվար 6: Մոմի փող ժողովեաց տէր Միքայէն հինգ հազար երեսուն եւ հինգ դիան... Յուլիսին: Քաղաքն չուեցաւ:

16. 21 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1812 – Յունվար 6: Մոմի փող ժողովեաց տէր Միքայէն երկու հազար եւ հինգ հարիւր դիան...

Մէկ տարուոյ իջարայ ընկալայ ի յոսկերիչ Գէորգէն տասն հազար դիան:

17. 21-2 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1813 – Յունվար 6: Մոմի փող ժողովեաց տէր Սիմէօնն չորս հազար եւ հինգ հարիւր դիան... Դեկտեմբերի 1: Կարգի ժամին տէր Եսային ժամ արար, եկեղեցոն անկաւ չորս հազար հարիւր եւ յիսուն դիան:

18. 22 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1814 – Յունվարի 6: Զիթոյ փող ժողովեաց տէր Միքայէն երեք հազար վեց հարիւր եւ յիսուն դիան... Դեկտեմբերի 20: Եկեղեցոյ կարգին, տէր Դաւիթն ժամ անել ետու, եկեղեցոն անկաւ չորս հազար եւ ինն հարիւր դիան:

19. 22-3 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1815 – Յունվարի 6: Մոմի փող ժողովեաց տէր Միքայէն չորս հազար երեք հարիւր եւ յիսուն դիան... Ապրիլի 5: Ի սոյն թուոյն գանձանակ կարգեցի տէր Առաքելին, եւ ինն ամսոյ գանձանակն՝ չորս հազար եւ հինգ հարիւր դիան:

20. 23 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1816 – Յունվարի: Զրօրհնեաց նաւակատկին տէր Շմովանն ժամ արար, եւ բաժին ո՛չ ընկալաւ իւր համար, ժամոցն էր ինն հազար... 1816, օգոստոսի 10, էյնալիցն ընկալայ տէր Խէչաառարի եղբօր կտակի՝ քառասուն թումանի սեւ փողի համար ինն թուման եւ կէս:

21. 24 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1817 – Յունվարի 6: Նաւակատեաց բաժինն անկաւ եկեղեցոն վեց հազար եւ եօթն հարիւր դիան... Սոյն մի տարուոյ գանձանակն ժողովեալ է, որովհետեւ եկեղեցոն ոչ էաք, բազում անգամ ոչ են ժողովեալ չորս հազար եւ երկու հարիւր դիան:

22. 25 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1799 – Յունվարի քիրայն ընկալայ չորս հազար եւ ութ հարիւր դիան... Դեկտեմբերի քիրայն՝ չորս հազար եւ ութ հարիւր [դիան]:

23. 25 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1800 – Յունվարի քիրայն՝ չորս հազար եւ ութ հարիւր [դիան]... Դեկտեմբերի քիրայն՝ չորս հազար եւ ութ հարիւր [դիան]:

24. 25 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1801 – Յունվարի քիրայն՝ չորս հազար եւ ութ հարիւր [դիան]... Դեկտեմբերի քիրայն՝ չորս հազար եւ ութ հարիւր [դիան]:

25. 25 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1802 – Յունվարի քիրայն՝ չորս հազար եւ ութ հարիւր դիան... Դեկտեմբերի քիրայն՝ չորս հազար եւ ութ հարիւր [դիան]:

26. 25 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1803 – Յունվարի քիրայն՝ չորս հազար եւ ութ հարիւր [գիւան]... Յունիսի քիրայն ետ վեց հազար եւ ութ հարիւր [գիւան]:

27. 25-6 Յունվարի: Ի 1804 ամի քիրայն՝ 6800... Դեկտեմբերի քիրայն վեց հազար եւ ութ հարիւր գիւան:

28. 26 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1805 – Յունվարի քիրայն՝ վեց հազար եւ ութ հարիւր գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ վեց հազար եւ ութ հարիւր գիւան:

29. 26 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1806 – Յունվարի քիրայն՝ վեց հազար եւ ութ հարիւր գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ վեց հազար եւ ութ հարիւր [գիւան]:

30. 26 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1807 – Յունվարի ամսոյն աւելացուցի եւ մէկ թուման շինեցի... Դեկտեմբերի քիրայն՝ ութ հազար եւ ութ հարիւր գիւան:

31. 26 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1808 – Յունվարի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]... Դեկտեմբերի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]:

32. 26 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1809 – Յունվարի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]... Դեկտեմբերի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]:

33. 27 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1810 – Յունվարի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]... Դեկտեմբերի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]:

34. 27 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1811 – Յունվարի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]... Դեկտեմբերի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]:

35. 27 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1812 – Յունվարի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]... Դեկտեմբերի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]:

36. 27 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1813 – Յունվարի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]... Դեկտեմբերի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]:

37. 27 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1814 – Յունվարի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]... Դեկտեմբերի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]:

38. 27 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1815 – Յունվարի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]... Դեկտեմբերի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]:

ան]... Դեկտեմբերի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր [գիւան]:

39. 28 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1816 – Յունվարի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր գիւան:

40. 28 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1817 – Յունվարի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ ութ հազար ութ հարիւր գիւան:

41. 28 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1803: Երկրորդ միջոցի եկեղեցոյ դռմանն Շաֆարօյիցն ընկալայ եւ տէր Նիկողայոսի որդոցն ետու ֆիւրայիւ, ամսէնն ուր հազար դիւանով, ինչ որ ֆիւրայ կընկալնուով, ստրա ներֆոյ կգրի – Մարտի կիսին քիրայ՝ չորս հազար գիւան... Յունիսին շուեցաք, մինչ ի յունվարն դուքանն բաթլ էր, քիրայ չեմ ընկալեալ:

42. 28 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1804 – Յունվարի քիրայն՝ ութ հազար գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ եօթն հազար գիւան:

43. 28-9 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1805 – Յունվարի քիրայն՝ եօթն հազար գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ եօթն հազար գիւան:

44. 29 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1806 – Յունվարի քիրայն՝ եօթն հազար գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ եօթն հազար գիւան:

45. 29 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1807 – Յունվարի քիրայն՝ աւելացուցի ինն հազար գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ ինն հազար գիւան:

46. 29 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1808 – Յունվարի քիրայն՝ աւելացուցի տասն հազար գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն հազար գիւան:

47. 29 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1809 – Յունվարի քիրայն՝ տասն հազար գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն հազար գիւան:

48. 29 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1810 – Յունվարի քիրայն՝ տասն հազար գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն հազար գիւան:

49. 29 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1811 – Յունվարի քիրայն՝ տասն հազար գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն հազար գիւան:

50. 30 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1812 – Յունվարի քիրայն՝ տասն հազար գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն հազար գիւան:

51. 30 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1813 – Յունվարի քիրայն՝ տասն հազար գիւան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն հազար գիւան:

52. 30 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1814 – Յունվարի քիրայն՝ տասն հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ ինն հազար դիան:

53. 30 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1815 – Յունվարի քիրայն՝ ինն հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ ինն հազար դիան:

54. 30 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1816 – Յունվարի քիրայն՝ ինն հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ ինն հազար դիան:

55. 30 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1817 – Յունվարի քիրայն՝ ինն հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ ութն հազար դիան:

56. 31 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1807: Օգոստոսի 1: Շադիմե[ա]նց Շաբարօն դոմանն դատարկեաց եկեղեցոյն, եւ Բրջեանց Սաեփանին նստեցուցի, ամսէն մէկ թուման. ինչ որ փրայ կընկալնում, առա ներոյ գրի – Օգոստոսի քիրայն՝ տասն հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ յաւելացուցի տասն եւ երկու հազար դիան:

57. 31 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1808 – Յունվարի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան:

58. 31 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1809 – Յունվարի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան:

59. 31 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1810 – Յունվարի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան:

60. 31 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1811 – Յունվարի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան:

61. 31 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1812 – Յունվարի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան:

62. 31-2 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1813 – Յունվարի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան:

63. 32 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1814 – Յունվարի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն եւ մէկ հազար դիան:

64. 32 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1815 – Յունվարի քիրայն՝ տասն եւ մէկ հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն եւ մէկ հազար դիան:

65. 32 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1816 – Յունվարին այլեւ տասն եւ երկու հազար շինեցի... Դեկտեմբերի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան:

66. 32 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1817 – Յունվարի քիրայն՝ տասն եւ երկու հազար դիան... Դեկտեմբերի քիրայն՝ տասն հազար դիան:

67. 32 Բրոսի դոմանն: Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1799 – Մինչեւ ի Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1809, յունվարի 1, ընկալեալ եմ մանրաբար դուքանի քիրայն... վերու դուքան քիրայն՝ տասն թուման ութ հազար եւ երկու հարիւր դիան:

68. 32-3 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1809 – Ի սոյն թուոջէ մինչեւ ի Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1810, յունվարի 1, ընկալեալ եմ վերու դուքանի քիրայն... ի վերայ իմ մնացեալ է երեսուն եւ երկու հազար եւ եօթն հարիւր դիան:

69. 33 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1810 – Ի սոյն թուոջէ մինչեւ ի Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1811, յունվարի 1, վերու դուքանի քիրայն ընկալեալ եմ... Աստի Փոֆր Մողնոյ ժամուց տուեալ եմ տասն եւ հինգ հազար եւ վեց հարիւր դիան, մնացեալն է ի վերայ իմ երեսուն հազար դիան:

70. 33 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական 1811 – Ի յունվարի մէկէն մինչեւ ի Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1813 յունվարն, ցաւի կողմանէ քաղաքն շուեալ էր, եւ դուքանն ոչ սակաւ ժամանակ բաթլ մնաց, քիրայն պակասեցաւ... մնացեալ է ի վերայ իմ երեք հարիւր դիան:

71. 33 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1813 – Մինչեւ ի Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1816, յունվարն, երից ամաց քիրայն ընկալեալ եմ... կմնայ ի վերայ իմ եօթն հազար եւ ինն հարիւր դիան:

72. 33 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1816, յունվարի 1 – Սոյն թուոջ վերու բրտի դուքանի քիրայն մէկ տարուոյ՝ երկու թուման ութ հազար եւ ութ հարիւր դիան... մնայ ութ հազար եւ հինգ հարիւր դիան:

73. 33 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1817, յունվարի 1 – Սոյն ամի վերու բրտի դուքանի քիրայն մէկ տարուոյ՝ քսան եւ ութ հազար եւ ութ հարիւր դիան... մնայ ի վերայ իմ տասն եւ մէկ հազար եւ ութ հարիւր դիան:

74. 34 1818 թիւ, յունվարի 1, սոյն ամի եկեղեցոյ արդիւնքն գրի – Յունվար 6: Մոմի դրամ ժողովեաց տէր Միքայէլն չորս հազար վեց հարիւր դիան... Բաց ի յայնքան ամենայն արդեանց եկեղեցոյ ստացեալ եմ նաեւ կարաիդինի գանձանակադրամն հինգ թուման:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տե՛ս Բովանդակութիւն 1 (սկիզբ):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 5 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1798, ի նոյեմբերի 13էն մինչեւ ի մարտի 10 արդիւնք ցոյց տուաւ տէր Եսայիմ եւ իւր ձեռամբ գրեալ սիայն եւս ետ ինձ. ինչ որ եկեալ է՝ գումարն է հինգ հազար հարիւր երեսուն եւ հինգ դիան:

2. 24 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1798, յուլիսի 1: Եկեղեցւոյ վերին բրտի դուքանն եւ օթախն Շաղինեանց Շաֆարօն շինեալ էր, տասն եւ երկու թուման էր խարջեալ: Օրհնեալ տէր Գրիգորն բէշարթով տուեալ էր Շաֆարօյի, որ դուքանի, օթախի քիրայն իւր փողի շահումն ընկալնոյ: Եւ սոյն վերու թարիղին, ներքոյ եզերեալ մին դուքանի վաղայն եւս վերջացաւ, եւ Շաֆարօն մեզ յանձնեաց սոյն եզերեալ դուքանն եւս: Շաղինեանց Սկրաումի որդւոցն՝ Կօնիմիմ եւ Բաբէլիմ ետու քիրայիւ, եւ սոյն վերու Շաֆարօյի տուեալ տասն եւ երկու թումանն ի սոցանէ վեր առայ. դուքանն եւ օթախն ետու սոցա քիրայիւ, ամսէնն վեց հազար դիանով, իւրեանց տասն եւ երկու թումանի շահն,

ամսէնն վեց արասի, դուքանի քիրայիցն պարտին վեր առնուլ, եւ մնացեալն ամիս առ ամիս պարտին տալ ինձ եկեղեցւոյ համար: Իմ տուեալ գիրն ձեռին ունի, ի Գօրի էաք չուեալ եւ անդ ետու:

3. 24 Վրաց թիւ (վրացերէն), որ է փրկչական թիւ 1799, յունվարի 1: Մինչեւ ի սոյն թիւ քաղաքն չուեալ էր, եւ բաթլի համար հինգ հազար դիան եւս ընկալայ, եւ փողի շահն եւս անցուցաք:

4. 25 Վրաց թիւ (վրացերէն), փրկչական թիւ 1804: Մինչ ի յունվարն քաղաքն չուեալ էր ցաւի պատճուաւ, մինչեւ սոյն թիւ քիրայն պակասէ, վեց ամսոյ, գումարն է մնացելոյն քսան եւ վեց հազար եօթն հարիւր եւ յիսուն դիան:

5. Տե՛ս նաեւ Բովանդակութիւն 8, 11, 41, 56 (սկիզբ):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

Կազմ Աա (ԺԹ դ., նոարգիր) 1796 թիւ սկսեալ մինչ 1818 թիւ յունվարի մուտն: Հաշիւ քսան եւ երկու ամաց եկեղեցական արդեանց Սուրբ Գէորգ Մօղնի անուանեալ եկեղեցւոյն Հայոց: Իրիցփոխական աշխատասիրութեամբ աղայ Եսայի Ստեփանեան Փիթոյեանց կառավարեալ:


**325
ԿՏԱԿ**

թղթ. 6, վաւ. 82

ԺԸ դար

ԳՐԱԳԻՐ՝ մանուկ Գալստան Ղազարու (1796):
Հեղինակ՝ պրն Մարտիրոս (1796):

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ սպիտակ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 25,2x19: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 31, 30:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «[3]անուն Հօր եւ Որդ[ւ]ոյ եւ Հոգուն Սրբոյ. ամեն: — Արդ ես՝ տէր Ստեփաննոսի որդի Մարտիրոսըս անձամբ, առողջ եւ կատարեալ մտօք / (մէկ բառ անընթեռնելի) մարդէ մահկանացու եւ ան-

հաստատութիւնն կենացն իմ, յօժար կամօքս իմ վերջի կտակս այս գրեցի եւ հաստատեցի... Այս է իմ վերջի յօժար կամքն, որ կտակս արարի»: Քաղաքի «սահայ» պրն Մարտիրոսի կտակն է, որով նախ՝ իրեն կտակակատար է կարգում եղբօր թոռանը, «որ է հանգուցեալ Միքայէլ Սարգսի որդի պարոն Յարուսիւն Միքայէլն», ապա՝ իր ժառանգորդ է նանաչում Յարութիւն Միքայէլին, քանի որ, նշում է՝ «իմ եղբայր Սարգսի որդի Միքայէլ Սարգսիս դա ճանաչելայ առանց կտակի, եւ ի վերայ աշխարհիս թողելայ միմիայն արու զավակ անամուսնութեան, որ է վերն յիշեալ իմ կտակակատար պարոն Յարութիւն Միքայէլի հասանելիք սահմանելուց յետոյ դրամական գումարներ է յատկացնում Սուրբ էջմիածնին, Երուսաղէմին, Ջուղայի Սուրբ Ամենափրկչին, կուսանաց վանքին, Դաքայի Սուրբ Յարութիւնին, իր եղբայր Կիրակոսի դուստր Շուշան Գալուցին, «նորին թոռն, որ է Ավետի դուստր Յանայի Գալս-

տանին», իր կին Գեամամանին, նրա որդի ԸՍտեփաննոսին եւ այլոց:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1. 1բ եղեւ ի Դաբայ, թիվն Փրկչին մերոյ 1796 եւ թիվն Փոքր 181, նախայ Լօ (30)ումն, վերջ:

2. Տես ա՛ստ Վկայութիւն 5:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

1. 1բ Վկայեմ՝ Սէր Աղասե[ա]ն:

2. 1բ Մարտիրոս տէր ԼՍտեփ[ա]ննոսին եղրարովն վկայեմ՝ Մարգար Հէրայետ:

3. 1բ Մարտիրոս տէր ԼՍտեփաննոսին եղրարովն վկայեմ՝ Խաչիկ Յովանէս Մինասե[ա]ն:

4. 1բ Բաբի պարոն Մարտիրոս տէր ԼՍտեփաննոսին եղրարովն Կիրակոսի դուստր Շուշան Գալուցիւն վկայեմ, եւ այս իմ՝ մարքնայ:

5. 1բ Սահապ Մարտիրոս տէր ԼՍտեփաննոսին ընդունելութեամբն վերն գրեցի եւ ուր եղրարովն վկայեմ՝ մանուկ Գալստան Դազարոս:

326


ԳՐՈՒԹԻՒՆ

թղթայ. 6, վա. 83


ԺԸ դար

ՍՏԱՅՈՂ՝ ներսէս վրդ. (1796 թ.):


ԹԵՐԹ՝ 4 էջ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «AG»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,2x16: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուագիր (նմուշ՝ 1, 2, 3): ՏՈՂ՝ տարբեր:



Նմուշ 1



Նմուշ 2



Նմուշ 3

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

Ծնթ. Պարունակում է երեք առանձին գրոթիւններ տարբեր ձեռագրերով: Երկուսն աւելացուած են Ներսէս վրդին ուղղուած գրութեան դատարկ մասերում, 2-3րդ էջերի վրայ, հաւանաբար Պօլսում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ա. 1 «է»: Տէր Նէրսէս շնօրհալի վարդապետ

տիտ սուրբ աշուն համբույր – Յայտ լիցի ի Պօլսայ եկեալ տէր Պօղոս բաբախն խօսք տվին 6 հոգի, Հոգոյ Գալստեան Բ (2)շտի կալ ի Պօլիս... հայր սուրբին աջն համբ[ո]ւրիմ, Մարքար աղա[յ]ին ողջուն լաւ սկաւտ՝ կէնայ, շատ որոքաւք՝ արտասարէն կայ»: Նամակով անյայտ մէկը յայտնում է Ներսէս վրդին, որ Պոլսից եկած տէր Պօղոսը շուտով կվերադառնայ 6 անձանց հետ, «ուզէրէ երթանք Կուզէհիսար Դարօսման Օղլուին, մինչեւ մէկ շաբաթ կուկանք, ետոյ գերթանք ի Պօլիս»:

բ. 1. 2 Ի մահլըն – Այս է տապան գիր հանգստի Հայրապետ եպիսկոպոսի (վերետմ աւելացրած Հէրապ սկապոսի), գործակալ էջմիածնի, որ փոխեցաւ առ Քրիստոսի թուին ՌՃԿԸ (1719)ին, յուլիսի 5 (5), աւուրն ուրբաթ:

2. 2 Յիշատակ է սուրբ խաչս Կեսարացի տաշճի Մարտիրոսին, ի դուռն Սուրբ Մարգարին, ի թվ[ին] ՌՃԾԻ (1705)ին:

գ. 2-3 «Պարտիս գնովընիհարի գիծն աջակողմն բերել եւ զաֆաղին վեր պահեալ՝ գիծքն ծրել ըստ դիպ[ո]ւածոյ... Դարձեալ. մի ծրելն դարպի շէմալի երեսն»: Ուսուցանում է, թէ «ի մինհարիֆէ ծրելն որմոյ սէմթն ի նովընիհարի գծէն» ինչպէս պէտք է անցկացնել դէպի հիսախ, հարաւ, արեւմուտք, արեւելք: Նկարուած են 2 շրջանագծեր՝ չորս ուղղութիւնների բաժանուած:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1 Գրեցաւ ի 1245 (1796), յունիսի 10:

ՀԱՍՅԷ

4 (1796 թ.) Աստուծով: Հասցէ ի Պօլիս ի վէզիր խանը ներսէս վարդապետին ձեռն ի բարին:

327
ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 6, վա. 84

ԱՍՏՐԱԽԱՆ

ՌՄԽԶ-1796

ՀԵՂԻՆԱԿ՝ Յովսէփ արքեպ. Արղութեան:

ԹԵՐԹ՝ 3 (էջակալուած 1-4՝ հաշուի շառնելով չգրուած էջերը). չգրուած՝ 2բ, 3բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «WSI», լուսապատկերով՝ թագակիր ռևատր զինանշան, ներսում՝ եղբերագաւար: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23,3x19,1 (թ. 1-2), 21,5x18,9 (թ. 3): ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ տարբեր, հիմնակաւնում՝ 4-21:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա-2ա «Ваше превосходительство, милостивый государь – Что я чрезъ столь долгое время немогъ о себѣ донести вашему превосходительству, всепокорнѣйше про-

шу извинить меня... имею честь быть с со-
вершенным высокопочитанием и таковою
же преданностию»: Յովսէփ արքեպ. Արղու-
թեանը դիմում է նորին գերագանցութեանը եւ
յայտնում, որ առողջութեան հետ կապուած ու-
շացրել է իր հաղորդումը: Իշխան Պլատոն Ալեք-
սանդրովիչի որոշումով պէտք է որոշ ժամանակ
գտնուի Պարսկաստանում: Գրիգորիպօլ Բաղաբի
առանձնաշնորհումների համար Պետերբուրգ է
ուղարկում թեմական փոխանորդ Գրիգոր վրդ-
ին տեղի երկու երեսփոխանների հետ միասին:
Խնդրում է չմերժել այլ տալ երաշխաւորագիր այդ
գործի կատարման համար:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2ա Милостивый государь вашего превос-
ходительства всенижайший слуга Иосифъ ар-
хиепископ армянский, Յովսէփ արքեպիսկոպոս
հայոց. Въ 17 д[ен] июня 1796 года, Астрахань:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

3ա P.S. Любезнѣйшему вашему брату
– Алексѣю Алексѣевичу свидетельствую
усердное мое почтение.


328
ՏԵՂԵԿԱՆՔ

թղթ. 6, վա. 85

ԺԸ դար

ԳՐԱԳԻՐ՝ Պաւել Ատկարսկի:

ԹԵՐԹ՝ 2: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով,
լուսագրով՝ «РФЯЯ», «1791», լուսապատկերով՝
պատուանդանին կանգնած եղջերու: ՄԵԾՈՒ-
ԹԻՒՆ՝ 33,6x21: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռու-
սերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 30, 21:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 1ին թերթի աչ միջնամասը
պատռուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «В тысяча семь сотъ девяносто
шестяго марта во второй надесять день
кизлярской житель армянинъ Абель Пар-
саяновъ.... дал сию купчуѣ его высокопрео-
священству армянскому архиепископу Ио-
сифу... занеименіемъ четырехъ рублеваго
клейма взыскано деньгами три рубли шез-
десять копеекъ»: Տեղեկանք այն մասին, որ Դգ-
լարի բնակիչ Աբել Փարսադանովը 1796 թ. մար-
տի 12ին վաճառել է իր այգին Յովսէփ արքեպ. Արղութեանին 95 ռուբլով: Հողատարածը գրաւ

դրուած չի եղել, վիճայարոյց չի կարող լինել, վկայ՝ երեք մարդ (նշուած են անունները, պաշտօնները): Գործարքը կատարուել է *Գլխարի* գաւառական վարչութիւնում, գրանցուել գրանցամատեանում 8 համարի ներքոյ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1բ-2ա (երկայնքով) *Кавказскаго наместничества Кизлярской нижней расправы сек-*

ретарь городской, секретарь Иванъ Дембровский:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ (ԺԸ դ.) *Принялъ и совершилъ наделео <тр>трехъ подь канцелярищикъ Павелъ Аткарский:*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2բ (ԺԸ դ., նոտրգիր) Ապելի *այգույ կուպչի կօպիէն է:*

329

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 6, վաւ. 86

ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈՒ

ՌՄԽԶ-1796

ԳՐԻԶ՝ տէր Յօհաննէս Յենկիբարեան: ՀԵՂԻՆԱԿ՝ տէր Յօհաննէս Յենկիբարեան, Մատթէոս Փօփօվ: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպս. Արղուսեան:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2աբ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «MR&AB», լուսապատկերով՝ շրջանաձև ցանկապատ, ներսում զինուորական հանդերձով միապետը՝ գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր աղիւծ, որի աջ ձեռքին՝ սուր, ձախին՝ հրովարտակ. պատկերագրութեան վերևում՝ «PROPATRIA» մակագրութիւն: ՄԵՏՈՒԹԻՒՆ՝ 32,8x20,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 32, 30:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:
ԲՈՎԱՆԳՐՈՒԹԻՒՆ

1աբ «Աստուածարեալ եւ պսակազգեաց սրբազան հ[ով]ուապետ եւ մեր քաղաքի պսակ եւ այցելու տէր – Ի վաղուց հետէ ցանկացանք զխորին սրտէ մերմէ ծառայական հպատակութիւնս յայտ առնել, բազմավաստակ հ[ով]ուապետիդ մերոյ, բայց զանազան խառնիխառն բանիւք ջապաղեալ՝ յետս մնացաք յայն ծառայութենէ... Սակս պարոն Ստեփաննին լուաք, որ գնացեալ է ի Պարսիկս եւ ուրախ եղաք, Աստուած բարի ճանապարհ տացէ եւ հեռագոյնս գնալ»: Գրիգորիուպօլի մագիստրատի մի խումբ անդամներ շնորհակալութիւն

են յայտնում *Յովսէփ արքեպս. Արղուսեանին*, որ կայսրուհու հանութեամբ պետական գանձարանից վաճառականների համար ստացել են 50 հազար ուրլի: «Իսկ այժմ քանի մի ոլոգամերկ, գոեհիկ, փուշ անձինք կարծելով, թէ սոյն անկեալ վաճառականաց փողն նոյն առաջին հասարակութեան տուեալ տասն-տասն ընուպլու նման հասարակ բաժին լինելոց է», խոսվութիւն են բարձրացել: Սակայն Գրիգոր վրդ-ը եկել է իրենց քաղաք, «խրատական ողիւ, սաստելով, անարգելով, եւ դարձեալ մխիթարելով» բոլորին հանդարտեցրել է: Տեղեկացնում են նաեւ, որ պատրաստութիւն են տեսնում «տէֆութաթաց» ուղարկել կայսրուհու մօտ «վասն մերոյ ազատութեան պրիվէլէյին», եւ խնդրում են իրենց ձայնը շանտեսել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ Մնամք քոյին բարձր սրբազնութեան պատրաստական ծառայք՝ տէր Յօհաննէս Յենկիբարեան եւ Մատթէոս Փօփօվ որդի տեառնդ, խնդրեմք խոնարհաբար ի արժանաւորս զմեզ համարեցես ի յաղօթս: 1796, հոգտեմբերի 24, ի մաղիստրաթն Գրիգորիուպօլու:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 1բ Մնացայկան Թեվանեան:
2. 1բ Յարութիւն Տէր-Մկրտչեան:
3. 1բ Յարութիւն Պետրոսով:
4. 1բ Լուսիկ Յարութի[ւ]նով:
5. 1բ Գրիկոր Թեվանով:
6. 1բ Գրիգոր Սանվէօվ:
7. 1բ Օհան Սարգիսով:
8. 1բ Գլխարի Նարին Գրիգորեան:

- 9. 1բ Պուրղամիստր՝ Սարգիս Պինեաթով:
- 10. 1բ Ռաթման՝ Գալուսթ Արզումանով:
- 11. 1բ Ռաթման՝ Միրզայ Աբրահամով:
- 12. 1բ Ռաթման՝ Մալխաս Աստուած[ա]տրեան:
- 13. 1բ Ռաթման՝ մահտեսի Մանուկ Սիմոնեան:

- 14. 1բ Հօրօղովի ըստյրըսդայ՝ Պինե[ա]թ Ապովեն:
- 15. 1բ Պօլեան սուտեյ՝ Ակօբ Կարապետեան:
- 16. 1բ Պաղ[տ]ասար Մէլիֆով:
- 17. 1բ Մօսէս Եղ[ի]ազարեան:
- 18. 1բ Պէրէվօտճիք՝ Քասպար Բօթով:

330

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վաւ. 87

ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈՒ

ՌՄԽԶ-1796

ԳՐԻԶ՝ տէր Յօհաննէս Յենկիբարեան: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արեւայս. Արդուբեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «MR&AB», լուսապատկերով՝ շրջանաձև ցանկապատ, ներսում զինուորական հանդերձով միապետը՝ գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր առիւծ՝ աչ ձեռքին սուր, ձախին՝ հրովարտակ. պատկերագրութեան վերեւում՝ «PROPATRIA» մակագրութիւն: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 32,8x20,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրաման բոլորգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 32, 37:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 4րդ էջի կարմիր, կլոր կնիքը վնասուած, տեղը՝ անցֆ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-3 «Գերերջանիկ հովվապետ, սրբազնագունեղ հայր եւ մեաւս Գրիգորիոսայօլու ազատ ֆաղաֆիս յատուկ ողորմաձագունեղ տէր եւ բարեար: Քոյին բարձր սրբազնութեան խոնարհաբար: Յայտարարութիւն – Ի հասանիլ երկնաէջ ցօղոյց օրհնութեան շնորհագեղ նամակիդ՝ լըցան սիրտք մեր անպատմելի ցնծութեամբ, սակայն վասն գերեացն անտանելի տրտմութեամբ լցաք... եւ այլ հարկաւորութեանց կարգն սահմանի, եւ ապա թէ՛ խաղաղութիւն եւ սէր քարոզեսցէ մեզ, զի նովաւ ցնծասցուք եւ ուրախ լիցուք»: Գրիգորիոսայօլի մագիստրատի մի խումբ անդամներ յայտնում են Յովսէփ արեւայս. Արդուբեանին, որ ցատում են գերիների հա-

մար, ամենաողորմած կայսրուհուն ցանկանում են կարօղութիւն եւ զօրութիւն, «որ խնամածու լեալ է, եւ զօրք առաքեալ է առ ի օգնութիւն վշտակիր թագաւորին Հէրակլեայ»: «Իէֆութատաց» եւ դառնալու եւ Գրիգոր վրդ-ի մասին նշում են, որ դեռեւս տեղեկութիւն չունեն: Ինչպէս նախապէս գրել էր «վասն բարերարութեան եւ ողորմածութեան մեծ բարերարին մերոյ նորոգ կուպեռնաթօրին», իրաւի իրենք էլ են համոզուել դրանում, չնայած ֆաղաֆի մի ֆանի խառնակիչների գրած գանգատների, նա «հրաման արար, որ տասն հազար շէրթվէրտ ցորեան առանց խարճի դիմացն տաճկի հողն տամք, շահն աղքատաց լինի»: Սակայն դժգոհութիւնն օրըստօրէ աւելանում է, «եւ քաղաքս խառնակեալ եւ կռիւ շարժել կամին»: Մագիստրատը եկել եւ բոլոր գործերը ֆննդութեան է առել, իսկ 4 վրդովող անձինք դեռ չեն հանդարտուել, «դեռեւս կամին, որ երթան ի կուպեռնայն եւ կրկին խառնակութիւն անեն»: Լսել են, որ սրբազանը Աճամասան (այժմ՝ Տաշիկիստան) է մեկնում, բարի ճանապարհ են մաղթում եւ խնդրում են շուտ ուղարկել իրենց արթուն հովուին՝ [Գրիգոր վրդ-ին], «զի սաստեսցէ ալեաց մրրկաց ծովոյս, զի հանդարտեսցին ի շար ծփանց իւրեանց»: Տեղեկացնում են, որ եկեղեցիներ եւ տներ չեն շինում, պատճառն անյայտ է, իսկ ֆաղաֆում բազմաթիւ աղֆատներ անտուն եւ անտեղ են, ֆաղաֆը զուրկ է բոլոր հարկատրութիւններից:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2 1796, յունիսի 23, ի մաղիստրաթին Գրիգորիոսայօլու:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

3 Մնամք քոյին բարձր սրբազնութեան խոնարհ ծառայք մաղիստրաթի գօլովայ եւ դատաւո[ր].

1. 3 Գորովայ՝ Նարին Գրիգորեան:
2. 3 Պուրղամիստր՝ Սարգիս Պնեաթով:
3. 3 Պրղում[ի]ստր՝ Աստուածայտուր Աւլաթով:
4. 3 Ռաթման՝ Գալուսթ Արզումանով:
5. 3 Ռաթման՝ Մալխաս Ասվատուրով:
6. 3 Ռաթման՝ Մանուկ Սիմօնով:
7. 3 Ռաթման՝ Մ[ի]րզայ Աբր[ա]համով:
8. 3 Զօրօտովի ստարստայ՝ Պինէաթ Ապովեան:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

3 Ի Նախիջեանու աղքիրմանցի քանի մի ան-
ձինք եկին խնդրումէն, որ ի հպատակութեամբն

կայսերուհունյն ամենեքեան երդմամբ գրվեն ի Գրի-
գորիուայօլ քաղաքս, եթէ հաճոյ իցէ սրբազնու-
թեանդ, հրաման գրես ի Նախիջեան, որ ազատ-
վեն, շատ ազաղակ են անում. կամք տեառնդ է:

Ամենախոնարհ ծառայ՝ տէր Յօհաննէս Յենկի-
բարեան:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

4 (նոտրգիր) Ի հասարակութեանն Գրիգորիուայօ-
լու ի հին Շամախի ընկալաք. 1796, յօգոստոսի 25:

331

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վա. 88

ԹԻՖԼԻԶ


ՌՄԽԶ-1796

ՀԵՂԻՆԱԿ՝ Դարչի Բէրբուդ, Ստեփան Տէր-Շմա-
տնեան, Իսայի դի Մկրտում Թաղօեան: ՍՏԱՅՈՂ՝
Յովսէփ արեպա. Արդուբեան:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսա-
գծերով, լուսագրով՝ «ATL», լուսապատկերով
(անընկալելի): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 37x34,6: ԳՐՈՒԹԻՒՆ՝
միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա), վրացերէն
(նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ ՅՅ:



Նմուշ 1ա



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերը ծալծրուած, հին նո-
րոգմամբ:

ԻՍՎՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

Մնբ. Թերթը ծալուած է 2 մասի, անհասասար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «է: Գերեջանիկ եւ պսակազարդեալ սրբա-
զան հայր Յովսէփ արեպիսկոպոս: Գթածագու-
նեղ տէր եւ բարերար – Ի շնչասպառ եւ ի վշտակ-
րեալ ժամանակիս այսմիկ աշխարհիս զգօրացուցիչ

ազգուիմն հոտ բուրեալ ի քիմս մեր, իբր զարթուցիչս
եւ յուղաբերս առօղ զմեզ ի նուաղեցմանէ, զկարգե-
ցումն ասեմք զթաշատի հօրդ մերոյ առ գերազանց
գրաֆ Վէլարիոն Զուպովն... զոր ահա՛ մատուցեալ
եւ ակնադէտ եղեալ սպասեմք հրամանի տեառնդ եւ
հօրդ մերոյ»: Թիֆլիզից Դարչի Բէրբուդովը, Ստե-
փան Տէր-Շմատնեանը եւ այլք յայտնում են Յով-
սէփ արեպա. Արդուբեանին, որ Թիֆլիզն աւերուել
է: Իրենք շատ ուրախ են, որ սրբազանը գրաֆ Վե-
լարիոն Զուբովի մօտ խորհրդատուութեան է կան-
չուած: Նրա միջոցով, այրուած ու կողոպտուած
աների եւ խանութների համար, խնդրում են թա-
գաւորական գանձարանից դրամական օգնու-
թիւն: Եւ խնդրում են պատնէկնր տալ «եւ ցուցանել
մեզ զմուտն այսր դրան, որով կարիցուք ստանալ
զողորմութիւնս զայս» մինչեւ սրբազանի եղբօր
որդի կնեազ Վասիլ Բէժանիչի այնտեղ գնալը:

ՅԻՇԱՏԱԿԱՐՍՆ

1ա 1796, ի մայիսի 24, ի յաւերեալ Թիֆլիզում:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

1ա Ի բոլոր սրտէ վասն սրբազնութեանդ, յԱ-
տուծոյ միշտ զբարիս հայցօղ, ծառայք եւ որդիք
սրբազնութեանդ մնացորդք ժողովրդեանս աւե-
րեալ Թիֆլիզու՝

1. 1ա Փուրր ծառա[յ]՝ Դարչի Բէրբուդ:
2. 1ա Խոնար[հ] ծառայ՝ ԸՍտեփան Տէր-Շմա-
տնեան (ստորագրութիւն):
3. 1ա Նվաստ Յիսայի դի Մկրտում Թաղօեան
(ստորագրութիւն):
- 4-6. (վրացերէն 3 ստորագրութիւն):

332

ՆԱՄԱԿ


թղթայ. 6, վառ. 89

Կ. ՊՈԼԻՍ

ՌՄԽԶ-1796

ՀԵՂԻՆԱԿ՝ Զաֆարիայ պատրիարք Պոլսոյ:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր երկգիծ բուրակ, ներսում՝ անընկալելի պատկերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 32,1x20,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 42:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաարար. հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1-3 «Յիսուսի Քրիստոսի ծառայ Զաֆարիայ պատրիարք մեծի արքայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպոլոյ – Յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան, շնորհք առաքելական եւ աստուածային բազմապատիկ օրհնութիւնն եւ նախախնամական գթութիւնն ի վերայ յԻզմիր քաղաքն բնակեալ մաքրանուէր քահանայից, խորհմամիտ իշխանաց եւ համայն բարեսէր ժողովրդականացդ...»: Զաքարիայ պատրիարքը յայտնում է Զմիւռնիոյ հասարակութեանը, որ երկու կողմերի վէճի հետեւանում պատրիարքարան են եկել՝ «ի նոցա կողմանէ վեքեալէթէն եւ յիւրեանց կողմանէ ասալէթէն՝ ընդ տէր Պօղոս մեր քահանային»: Հրաւիրուել են նաեւ 15 երեսելի իշխաններ, դատաւորներ եւ արդարամիտներ՝ «քննել նոքօք

զիրաւունս եւ առնել զարդարութիւն ի մէջ պարոն Մարգարին եւ ի մէջ ձեր ամենեցուն»: Եւ քանի որ «եկեղեցական պատգանաւոր ֆերմանի մասարուֆ ունէր պարոն Մարգարն», վնասեց, «զի եկեղեցին վճարեցցէ եւ հատուցէ զնոյն ֆերմանից մասրաֆն պարոն Մարգարին, նոյնպէս եւ սենեակն, որ ի վերայ պարոն Մարգարին էր»: Երկու կողմերն էլ հաշտեցուել են՝ պայմանով, որ այսուհետեւ միմեանց վնաս չաան, միմեանց մատնողութիւն չանեն, եւ ատելութիւն չունենան թէ՛ յայտնի եւ թէ՛ ծածուկ, այլ պարտաւոր են ըստ ամենայնի հլու եւ հնազանդ լինել: Նաեւ տեղեկացնում է, որ իւր Մարգար Ապրօեան ամիրայի լուսահոգի նախնիներն ի բնէ աշխատաւորներ են եղել «յոյժ ի վերայ ազգին մերոյ»: Հետեւապէս պատուիրում է «սիրել, պատուել, մեծարել, հանապազ բարեկամութիւնս առնել ընդ օրհնեալ Ապրօեան խօճալ Մարգար ամիրային», քանի որ նա բարեար է, որովհետեւ մի քանի հաշուառութիւններից ելնելով, «որք վերաբերին առ եկեղեցիսն եւ ի հոգեւոր խարճագնացութիւնս, որոց հարկաւոր ֆերմանսն արքունական հանելովն, երեք հազար ինն հարիւր յիսուն դուռուշ առ ֆերմանսն հոգալով տուեալ է յինքենէ խօճալ Մարգար ամիրային»: Եւ վնիւ է կայացուել այդ գումարը փոխհատուցել սուրբ եկեղեցու դրամներից:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

3 Գրեցաւ օրհնութեան եւ յորդորանաց նամակս ի ՌՄԽԵ (1796) թուին Հայոց եւ յօգոստոսի Գ (3)ին ի պատրիարքարանում:

ՆՇՈՒՄ՝ 1 (վերետւմ) «Թագաւոր», «կաթողիկոս»:

333

ՀԱՇՈՒԵԹՈՒՂԹ

թղթայ. 6, վառ. 90

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 11. չգրուած՝ 4բ, 10բ, 11բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «ՄՕՓԵԵ», «1816»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ տարբեր. հիմնականում՝ 34,3x22,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ վեցասիւն, հնգասիւն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 2ա): ՏՈՂ՝ տարբեր:

1796	Հիւրեանց	52660	52660
1797	Հիւրեանց	71925	71925
1798	Հիւրեանց	5135	10135
	Հիւրեանց	5000	
	Հիւրեանց	72580	
	Հիւրեանց	34600	141000

Նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 4-5րդ, 9-10րդ թերթերի եզրերը ծալծրած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարունակում է Մօղնու [Մուրբ Աստուածածին] եկեղեցու 1796-1818 թթ. եկեղեցական եւ դուֆանների եկամուտների եւ ծախսերի հաշիւները.

1. 1աբ (Արդիւնք, ծախք, աւելի արդիւնք, աւելի ծախք) – 1796 - 52700 / 59240 / 6540... (1818) - 6638340 / 7080550 / 1807715 / 2251915:

2. 2աբ Մօղնոյ հաշիւն, արդիւնքն – 1796, եկեղեցական - 52660 / 52660... (1817) Բրջենցն – 123600 / 6155860 = 6422875:

3. 3աբ (Արդիւնք, ծախք, աւելի արդիւնք, աւելի ծախք) – 1796 - 52700 / 59240 / 6540... (1818) աղքատաց գանձանակն.. 50000 = 6638340:

4. 4աբ 1711, յունվար - 68495... (1813) դեկտեմբեր 4150 = 111465 - 41930:

5. 5աբ (Արդիւնք, ծախս) – 1796, մարտ – 4890

.. 28830... 1807, յունվար մինչեւ Զատիկ – 55420 ..41310 աղքատաց գանձանակն.. 50000 = 6638340:

6. 6ա Մօղնոյ հաշիւն, եկեղեցական արդիւնքն եւ դուֆանաց Շատինեանց, բրտինն եւ տէր Նիկողոսենցն, բրջենցն – 1796 - 52700... 1818 4 ամիս – 53150 / 35200 / 4500 / 32000 / 40000:

7. 6ա՝ նաեւ թուային հաշուարկներ:

8. 6բ 1796 սկսեալ մինչ ի լրումն 1808 ամին – 1089950 դիան եկեղեցական ծախսն... 1818 4 ամիս – աստ [180]8 թուի 50 թումանի շահն աւելի է գրի:

9. 7ա-9բ՝ թուային հաշուարկներ:

10. 10ա Բրտի դուֆանի ֆիրայն եւ ի նմանէ ի գործ արկեալն – 203200 / 96400 / 108200... [18]17- 11800 = 199400:

11. 11ա Գումարն ծախուց – 7082550 դեան, բացի դուքանի 12 թուման պարտուց... արդեանց 7295690 դեան մնայ պարտական եկեղեցին նմանապէս. 442210 դեան:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 322, 323:

**334
ՀԱՇՈՒՆՄԱՏԵԱՆ**


թղթպ. 6, վաւ. 91

ԺԹ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Եսայի Փիթոյեան:

ԹԵՐԹ՝ 28 էջ. չգրուած՝ 23-28: ՊՐԱԿ՝ ԱX14:

ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «ՄՕՓԵԵ», «1816»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 34,5x22,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ եօրնասիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 40-49: ԿԱԶՄ՝ գորշագոյն թուղթ:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. 13րդ էջի վերին աջ մասում անցք, 17, 19րդ էջերի վերին անկիւնը պոկած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ № 324:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարունակում է Մօղնու եկեղեցիների եւ դուֆանների 1796-1818 թթ. ծախսերի հաշիւները՝

կատարուած Եսայի Փիթոնուզի (Փիթոյեանի) կողմից.

1. 1-2 Աստուծով: 1796, մարտի 20 – Մօղնի եկեղեցոյ հոգեւորականքն եւ մարմնաւորականք այսպէս սահմանեցին, զի եկեղեցոյն որ ինչ արդիւնք լինիցի՝ թէ՛ ժամուց, թէ՛ գանձանակ, թէ՛ լուսագին, եթէ՛ գերեզմանատեղագին, թէ՛ ձիթոյ, թէ՛ մոմոց եւ թէ՛ խնկագին, թէ՛ դուքանի քիրայ, որ ինչ եւ լինիցի, յանձնեցեն ինձ՝ Եսայի Փիթոնուզիս... Սեպտեմբեր 25: Մէկ բեռն գործլի առի շորս հարիւր դիան:

2. 2-4 18(7)97, նոյեմբերի 13 սկսեալ մինչեւ 910 մարտի – Ի վերայ եկեղեցոյ ծախս արարեալ եցոյց ինձ տէր Եսային եւ իւր ձեռագիր նուխայն եւս ետ ինձ, որ ինչ ծախս եղեալ է... որ է գումարն մէկ թուման մէկ հազար վեց հարիւր քսան եւ հինգ դիան:

3. 4-6 1799 թիւ – Մարտ: Գրկու բեռն գործլի եօթն հարիւր եօթանասու եւ հինգ դիան... վարձն, զոր եւս ետու նմա, մէկ թուման շորս հազար երկու հարիւր յիսուն դիան:

4. 7 1800 թիւ – Մարտ: Հինգ լիտր մեղրամոմ թափել ետուք երկու ջուխտ իւզաբերից... վեց գազ սպիտակ կտաւ՝ մէկ հազար հինգ հարիւր [դիան]:

5. 8 1801 թիւ – Մարտ: Չորս Աստուածածնի պատկերք առի երեք հազար երկու հարիւր դիան... երկու զարբաբ շապիկ կարել ետու, եղեւ երկու թուման:

6. 8-9 1802 թիւ – Մարտ: Հինգ լիտր եւ կէս կոշտ մոմ առի, լիտր երկու հազար ութ հարիւր դիան... (Օգոստոս): Հրաման եղեւ ի վերայ եկեղեցեաց մատաղ առնել, որոյ ծախսն եղեւ, Ավիրջանի ձեռամբ, վեց հազար դիան:

7. 9 1803 թիւ – Յունվար: Հինգ թունգի ձէթ առի վեց հազար դիան... մէկ արծաթապատ մեծ Աւետարան առի ի քահանայէն երեք թուման հինգ հարիւր դիան:

8. 9-10 1806 թիւ – Յունվար: Չորս լիտր թափեալ մեղրամոմ՝ մէկ թուման վեց հազար դիան... եւս գործլի՝ չորս հարիւր յիսուն դիան: Յետին կողմանն՝ 19650:

9. 10 1807 [թիւ] – Յունվար: Մէկ բեռն գործլի առի եօթն հարիւր դիան... եւ կամ դրան շինելոյ վարձ՝ ինն հարիւր յիսուն դիան:

10. 10-1 1808 թիւ – Յունվար: Գործլի առի եօթն հարիւր դիան... մէկ բեռն գործլի չորս հարիւր դիան:

11. 12 1809 թիւ – Յունվար: Մէկ բեռն գործլի առի վեց հարիւր դիան... ետու սպիտակ մոմ եւ մոմածողի թափելոյ վարձ՝ հինգ հազար երկու հարիւր դիան:

12. 13 1810 թիւ – Յունվար: Հինգ թունգի ձէթ վեց հազար հինգ հարիւր դիան... մէկ բեռն եւս գործլի վեց հարիւր դիան:

13. 13-4 1811 թիւ – Յունվար: Չորս թունջի ձէթ չորս հազար չորս հարիւր դի[ա]ն... Քաղաքն որ քօչէլաւ՝ 29500:

14. 14-5 1812 թիւ – Յունվար: Գործլի առի չորս հազար դիան (կողմն աւելացրած՝ սխալ)... թուղթ վասն փանջարայից՝ երեք հարիւր յիսուն դիան:

15. 15-6 1813 թիւ – Յունվար: Գործլի առի չորս հարիւր ութսուն դի[ա]ն... եւս գործլի չորս հարիւր [դիան]:

16. 16-7 1814 թիւ – Յունվար: Մէկ մեծ Դաղստանոյ դում առի ի Քէփիմեան Բաղդասարէն մէկ թուման չորս հազար դիան... Սուրբ Գեղարդի վար-

դապետի եւ սուրբ Երուսաղէմի նուիրակի ծախուց վերայ աւելի ծախեալ ունէին, ետու ինքեանց տէր Միխայելին երեք հազար վեց հարիւր դիան:

17. 17 1815 թիւ – Յունվար: Երկու թունկի ձէթ երկու հազար դիան... Ի սոյն տարին եօթն բեռն գործլի առի երկու հազար չորս հարիւր յիսուն դիան:

18. 17 1816 [թիւ] – Յունվար: Մօղնու այգույ թէ՛ գերեզմանաքարերն հանելոյ եւ թէ՛ մասալայի շոկելոյ եւ թէ՛ այն ամենայնի բերելոյ ծախսն եղեւ հինգ թուման չորս հազար վեց հարիւր յիսուն դիան... եւ գետնի քարաղար հաւասարելոյ ամենայն ծախուց գումարն եղեւ ինն թուման հինգ հազար չորս հարիւր եօթանասունհինգ դիան:

19. 17 1817 [թիւ] – Ի սոյն ամի՝ ոչինչ գոյ:

20. 18 1818 թիւ – Յունվար: Հինգ ֆունթ սպիտակ մոմ առի երեք հազար երկու հարիւր հիսուն դիան... չորս ամսոյ շահն ետու տասն եւ երկու հազար դիան:

21. 18 1818 թիւ – Յունվար: Հինգ ֆունթ սպիտակ մոմ առի երեք հազար երկու հարիւր հիսուն դիան... չորս ամսոյ շահն ետու տասն եւ երկու հազար դիան:

22. 18-22 1799 թիւ: Ապրիլ 25: Ի նոր կիւրակէ ի Մօղնի փոքր եկեղեցէն ժամուց սահմանեցաւ, եւ ի վերոյ դումանի ֆիւրայէն, գոր ինչ եւ տամ, գրի այն ի ներոյ – Ի վերոյ թուոյն սկսեալ մինչեւ ց1803, յուլիսի 2 տուեալ եմ... 1818: Չորս ամսոյ երեսուն թումանի շահն՝ տասն եւ երկու հազար դիան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Տե՛ս Բովանդակութիւն 1, 22 (սկիզբ):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

18 Որովհետեւ յետ ամենայն հաշուագրութեանց՝ տրեալ եղեւ մեզ մէկ այլ եւս նուիրաց ի Փիթոյեան աղայ Նապեմ, վասնորոյ աստ ի վերջոյ գրեցաք, եւ չեղեւ կարելի ի կարգի թուոց ամացն գրել:


ՆՇՈՒՄ՝ կազմ Բբ (ԺԹ դ.) «777000 դիան քուչի պատի ծախսն»:

ՀԱՇՏԱՐԵԱՆ

ԳրիՉ՝ Թաղէոս վրդ.: ՍՍԱՅՈՂ՝ Յովսէփ արեւա. Արդուրեան:

Թե՛րթ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆիԻԹ՝ թուղթ. լուսա-

գծերով, լուսապատկերով՝ թագակիր առիւծ: ՄԵ՛ՐՈՒԹԻՒՆ՝ 24,4x18,4: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻ՛Ր՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 41:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. խոնատութեան հետեւեր:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Աստուածարեալ պսակագգեաց արբազան հայր, իմ ամենողորմ տէր – Յանցեալ փօշտին պարոն Մանուկն առաքեալ էր առ իս, ըստ գրութեան սրբազնութեանդ, տասն եւ մին թուման արծաթ մանէթ եւ յիսուն հատ բաշախու ոսկի... Թաւիտար պարոն Ստեփանն, ի կողմանէ ժԲ (12) թուման պարտուցն Յակոբ Թարխանիչին, պատասխանեաց ինձ, թէ ես յայնժամ յիւրաքանչիւր պարտուց տեղի՝ վճարեալ եմ զայն դրամ, երբ յանձնեաց ինձ սրբազանն՝ զայն գործ. որպէս եւ այժմ ան՝ գրեցի նորին սրբազնութեանն զայնմանէ»: Հաշտարխանից Թաղէոս վրդ-ը յայտնում է Յովսէփ

արեալս. Արղութեանին, որ պրն Մանուկի ուղարկած 11 թումանը եւ 50 հատ «բաշախու» ոսկին ստացել է: Տեղեկացնում է, որ, ինչպէս սրբազանն էր յանձնարարել, ասել է «պարոն Յօսէփ Թօմանովին, ի սակի պարոն Մարտիրոսին», տալ 17 թուման, սակայն պատասխանել է, որ թէպէտ ուղարկուածները չի վանառել, բայց կվճարի իր դրամներից: Նշում է, որ բոլորն էլ գոն եւ ուրախ են, որ կայսրը սրբազանին ընդունել է եւ խօսել «ամենայն ազգօգուտ գործոց», որ Աւետիք վրդ-ը եւ տէր Մելիքսէթը համբուրում են սրբազանի աջը, որ Ղզլարի եւ Մոզդոկի գրութիւններն առաջիկայ փոստով կուղարկի: Տեղեկացնում է նաեւ, որ կթղկար «Թիֆլիզու առաջնորդ Կարապետ վարդապետի սարկաւազ Մարտիրոսն ծայրագոյն արքեպիսկոպոս արարեալ՝ առաքեաց նուիրակ եւ առաջնորդ մեծահոշակ քաղաքն Իզմիրու»: Յիշատակում է, որ երեկ թաղումն էր «փրգորօր» Թառամովի, որ իր տանը յանկարծ հազաց եւ մեռաւ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Մնամ ամենողորմ տեառնդ եւ գթառատ հօր ամենախոնարհ ծառայ՝ Թաղդէոս վարդապետ: 1797, դեկտեմբերի 8, Յ(Հ)աժտարխան:

336

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վաւ. 93

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇԻՆ

ՌՄԽԶ -1797

ԳԻՒԶ՝ եփրեմ արեալս.: ՍՍԱՅՈՂ՝ աղայ Վարդան Յօհաննիսեան, աղայ Մարտիրոս Սարգսեան:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17,3x12,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 20+3:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «Է: Մահտեսի աղայ Յօհ[ա]ննիսե[ա]ն աղայ Վարդան եւ մահտեսի աղայ Սարգսեան

աղայ Մարտիրոսի սիրելեցւոյդ այս ինչ յանձնեցի առ ի ծախել – Բ (2) թախայ սպիտակ ծաղկեայ ջամդանի անուանեալ. մէկն՝ Կ (60) դուռուշ, ջամն է 120... զորս ուրախ ընդ երկայն ամօք վայելեցիք, զմեզ ի մտի ունելով, որ եւ մեք ի կեանս մեր աղօթաւորեմք վասն կենաց եւ բարեյաջողութեան ձորոյ. ողջ լերուք»: Եփրեմ արեալս-ը մնաւ. աղայ Վարդան Յօհաննիսեանին եւ մնաւ. աղայ Մարտիրոս Սարգսեանին տալիս է կտորեղէն՝ էրզրումում վանառելու համար: Նշում է, թէ էջմիածնի վէրի պրն Հայրապետին ինչ պէտք է տան, իսկ Դանիէլ արեալս-ի համար ուղարկուած շինեղէնի համար էլ՝ «գիր բերել տայք շուտով»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

- 1. 1ա եփրեմ անարժան արքեպիսկոպոս:
- 2. 1բ Ի ՌՄԽԶ (1797), ի յուլիսի ԻԴ (24), իմով ձեռամբ գրեցի ի Սուրբ Աթոռոջս էջմիածնի յոյժ շեշտիւ:

337

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վա. 94

ԳՐԻԳՈՐԻՈՒԳՈՒ

ՌՄԽԶ -1797

Հեղինակ՝ Յարութին Տէր-Մկրտիչեան: ՄՍԱ-ՅՈՂ՝ Յովսէփ արքեպս. Արղութեան:

Թերթ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: Նիւթ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «JMWSL», «17[93]»: ՄեծՈւթԻւն՝ 23,5x19,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: Գիր՝ նոտրամման բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 24+1:



Նմուշ 1ա

Վիճակ՝ բաւարար. 2րդ թղթի վերին մասում պոկուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Աստուածաբեալ եւ պսակազգեաց արբազան հ[ով]ուսապետ եւ մերս քաղաքի պսակ եւ այցելու տէր – Ի վաղուց հետէ ցանկայի խոր սրտէ իմմէ զճառայակն հպատակութիւնս յայտ առնել բազմերախտ հօրդ իմոյ, բայց զանազան խառնի-

խոռն բանիւք ջապաղեալ՝ յետս մնացի... եւ վասն դէՖուլթաց արգելառիթ պատճառն այն եւս արժանապատիւ Գրիգոր աստուածաբան հօրէն մերմէ գիտելոցս, որ կայսերական հրամանաւ արգելեալ է եւ այլն»: Գրիգորիուպօլից Յարութին Տէր-Մկրտիչեանը յայտնում է Յովսէփ արքեպս. Արղութեանին, որ ինքը խառնակոտրիւններին մասնակից չէ, որ իրեն ծաղրում են իր ստացած աստիճանի եւ շինի համար՝ հաղորդելով. «այսմ միջոցի ոչ գոյ խառնակութիւն ինչ, այլ միմիայն սալտատաց ցան, որ վեր է քան զամենայն»: Խնդրում է օգնել, իսկ մանրամասնութիւնները կփոխանցի Գրիգոր վրդ-ի միջոցով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Մնամ քոյին բարձր սրբազնութեան ամենախոնարհ եւ հրամանակատար ծառայ տեառնդ իմոյ՝ Յարութին Տէր-Մկրտիչեան: Սեպտեմբերի Յունմն, 1797, ի Գրիգորիուպօլ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (ԺԸ դ., նոտրգիր) «Ընդ Գրիգոր վարդապետին ընկալաք, սեպտեմբերի 25»:

338

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վա. 95

ԳՐԻԳՈՐԻՈՒԳՈՒ

ՌՄԽԶ -1797

Գրիգ՝ Աւետ Սերեբրովեան: ՄՍԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպս. Արղութեան:

Թերթ՝ 4 էջ. չգրուած՝ 4: Նիւթ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր, ռճատր զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄեծՈւթԻւն՝ 22,3x19,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: Գիր՝ նոտրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 21-22:



Նմուշ 1

Վիճակ՝ բաւարար. 2րդ էջի ներքեւում վնասուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Բա[r]ցր սրբազնապառնէղ տէր իմ – Ի հետ արգելմանն գործոցն մերոց գրաֆիվն ի միասին եկաք Հաշտ[ա]րխ[ա]ն, եւ անդէն հղեաց Իվան Վասիլիչին, եւ նայ արձակեաց ամենեցուն գնալ ուրենց պօլիերն... Հավել քանզ զայս հանձնեմ զիս ի ար[հ]նութիւնն սրբութեաննաւ եւ հայցեմ արժանանալ սուրբ աշտ համբուրելուն»: Գրիգորիուպօլից Աւետ Սերեբրովեանը յայտնում է Յովսէփ արքեպս.

Արդութեանին, որ գործի արգելումից յետոյ գրաֆի հետ միասին գնացել է Հաշտարխան, այնտեղից յղել է Իւան Վասիլեւիչն: Վերջինս առաջարկել է իրեն մնալ իր գնդում, սակայն, «նվաստէս գիտելով զնենի խորհուրդն նորին», ինքը հրաժարուել է, իսկ նա վերադարձել է իր հին գունդը: Տեղեկացնում է, որ Յովսէփ արեւալստիսն նուէր է ուղարկում շալ կտոր, իսկ մանրամասնութիւնների

մասին, ասում է, կպատմի Գրիգոր վրդ-ը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

3 Մնամ բա[ր]ցր սրբազնութեանա ամենայխոնար[հ] ծառայ՝ Աւետ ի Գրիգոր Սերեբրովեան: 17-⁹/₅-97, ի Գրիգորիոյալ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1 (ԺԸ դ., նոտրգիր) «Հնկալաք ի սեպտեմբերի 28»:

339

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթ. 6, վա. 96

ՀԱՇՏԱՐԻՆԱՆ

ՌՄԽԶ -1797

ԳԻԻԶ՝ Թաղէս վրդ.: ՀԵՂԻՆԱԿ՝ Աւետիս վրդ., Թաղէս վրդ. (գրիչը): ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արեւալստիսն:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր առիւծ: ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 24,6x18,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 44+3:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. խոնատրեան հետեւեր: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Աստուածարեալ պսակազգեաց սրբազան հայր, իմ ամենողորմ տէր — Ի գթած հօրդ, ի հոկտեմբերի մին գրեցեալ զօրհնութեան զնամակդ ի մետասաներորդ օրն ընկալայ. եւ յաշողութեամբ տեառն Աստուծոյ առողջ անձամբ ժամանելդ ի Մօսկով... Գրիգոր աստուածիմաստ վարդապետ՝ գեր-

յարգոյ եղբօրս մերոյ, ընդ շնորհափայլ սարկաւագաց սրբութեանդ զողջոյն կարօտանաց ձօնեմք»: Հաշտարխանից Թաղէս եւ Աւետիս վարդապետներն ուրախութեամբ նշում են Յովսէփ արեւալստիսն Արդութեանին Մոսկուայ հասնելը, այնուհետեւ Սանկտ Պետերբուրգ մեկնելը: Ապա յայտնում են, որ Ղզարցի մհա. եղիային են յանձնել «զմի մեծ փակէթ» սրբազանին հասցնելու համար: Ուղարկում են 10 հատ Սաղմոսի մեկնութիւն՝ անկազմ, 6 հատ նորատիպ ժամագիրք՝ կիսակազմ, «սուրբ Երուսաղէմայ քսան եւ հինգ հատ արախճին», 100 հատ զանազան տեսակի Տէր ողորմեայք, որոնք յանձնել են տէր Պօղոսին: Նշում է, որ Աւետիս վրդ-ի մասին մանրամասն կիմանայ գրաբեր մհա. Եսայուց, եւ թախանձանքով խնդրում են «զյատկական օգնութիւնդ առ այս ժամանեցուցես»: Տպարանի մասին տեղեկացնում են, որ տպում են «զէֆիմէրտէն ընդ Տօմարին»:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 346, 348, 370:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Ամենողորմ տեառնդ եւ գթած հօր ամենայխոնարհ ծառայք՝ Թաղէս վարդապետ, Աւետիս վարդապետ: 1797, հոկտեմբերի 13, 3(Հ)աժտարխան:

340

ԳՐՈՒԹԻՒՆ

թղթ. 6, վա. 97


ԳՐԻԳՈՐԻՈՒԹՅՈՒՆ

ՌՄԽԶ -1797

ԳԻԻԶ՝ Ստեփաննոս Դավիթով: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արեւալստիսն: Արդութեան:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագանման զարդա-

նախը երկու մարդադէմ մահիկով: ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 21,6x15,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 30:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բասարար. եզրերը տեղ-տեղ պոկուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Առաքելաշաւիղ սրբազան Յովսէփի արքեպիսկոպոս, ողորմած եւ բարեւար տէր — Յուսամ ողջ եւ զուարճ ժամանիլդ ի կայսերանիստ քաղաքդ Պետրբուրգ... որդոց մերոց եւ ծառայից տեսնող յու[ս]ադրօղ լինիջիբ»: Ստեփաննոս Դաւիթովը Գրիգորիպօլից գրում է Յովսէփի արքեպս-ին (Պե-

տերբուրգ), որ միջնորդի Գրիգորիպօլի արածուն-թիւնների համար: Յայտնում է, որ Աֆֆերմանցի Կոստանտն եւ Սուքիասն ասել են, որ Աքքերմանից եւս 12 արու անձինք են գալու, որը հաստատուած է 2 ֆահանաների ստորագրութիւններով: Խնդրում է «անդուռ բերանաց» շլտել, «այլ զաշխատանս եւ զկրեցեալ նեղութիւնն ձեր մտածելով մի թողո՛ւր ի բաց: Կայսերն ողորմած է, գիտեմ, անտես ո՛չ առնէ զխնդրուածս ձեր»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Ամենախոնարհ ծառայ՝ Ստեփաննոս Դաւիթով: 1797 թ. հոգտեմբերի էլն, ի Գրիգորիպօլ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԿԱՅԻ

1ա (Յովսէփ Արղուբեան) 1797, նոյեմբերի 20 ընկ-[ա]լ[ա]ք, պատասխանեցի յամսոյս 24:

341

ԳՐՈՒԹԻԻՆ


թրթյ. 6, վաւ. 98

ԵՐԵՒԱՆ-ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄԻՆ

ՌՄԽԶ -1797

ԳԻՒԶ՝ Թաղէս եպս.: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպս. Արղուբեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր առիւծ: ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 24,3x18: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միապիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 3): ՏՈՂ՝ 28-35:



Նմուշ 3

ՎԻՃԱԿ՝ բասարար: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

Մնթ. Բնագիրը գրուած է միեւնոյն ձեռքով: Յոդ էջում նշուած է. «Ձայս թուղթ քանի աւուրք են ի ձեռս ունիմ, երբ ժամ գտանեմ, գրելով: Ի յերեւան սկսայ եւ դարձեալ ի Սուրբ Աթոս՝ ա՛ստ աւարտեմ»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1-3 «Է: Ամենապատուելի երանաշնորհ եւ երջանկափառ հոգեւոր հօր իմոյ յարացանկալոյ տեսնոն Յովսէփայ առաքելաշաւիղ արքեպիսկոպոսի սրբանուէր աշոյն համբոյր մատուցի յոյժ սիրով եւ կարօտիւ — Ձառ ի սրբութենէ ձերմէ

սիրաշարուն բանիցն զնամակս յիւրաքանչիւր ժամանակի ընկալեալ պատուով, եւ մանաւանդ զվերջինն՝ զպատասխանի թղթոյն իմոյ զգրեցեալն ի յունիսի 26, ի Դուշէթու առըստացեալ, ի յուլիսի 14... Աստուած բարի լուրս տացէ, զայնս գրեցից»: Թաղէս եպս-ը Յովսէփ արքեպս. Արղուբեանին տեղեկացնում է, որ յունիսի 26ին Դուշէթից գրուած նամակը ստացել է յուլիսի 14ին եւ շնորհակալութիւն է յայտնում «վասն մեծի սիրոյդ առ փանաքի փոքրս»: Ութրութի եւ Շաքարօյի հետ կապուած յայտնում է, որ վեհի գրութեանը «զսակաւատող թուղթ ինչ հապճեպով հազիւ կարացի շաղակրատել»: Եւ ամօթով է մնացել. շուտափոյոյք երեւան է գնացել «ի տեսութիւն նորոյ բռնաւորիս», սակայն կասկածում է նրա ասածներին: Իսկ Ջիմշիտի համար եւ «ընդ կապանն ճօրայ» գրել է վէզիբին եւ աղայ Յովհաննէսին: Նկատում է, որ, թէեւ սրբազանի «զաշխատայոյր» ճամփորդութիւնը Թիֆլիզի ժողովրդի պահպանութեան եւ ոչ ցրման պատճառով է, «բայց կացութիւն տեղւոյն յաղագս կառավարչին զառամութեան եւ այլոցն անփոյթ գողով միշտ ի վտանգի կայ»: Լեռնականներն անընդհատ յարձակում են եւ աւարտութեան ենթարկում: Եւ չնայած պայմանատրուել են մնացած գերիների համար 2 թուման գումար վճարել, սակայն դժուար դա գլուխ

գայ: Իսկ Մաշտոցի տպագրութեան մասին ցանկութիւն է արտայայտում այն կատարեալ տեսնելու: Սրբազանի խնդրանքին, թէ Մայր Աթոռում կան բազմաթիւ պիտանի գրուածքներ, նշում է, որ իր կարծիքով այնքան էլ շատ չեն, «եւ գտանեցեալքն եւս ոչ անսխալք»: Կարեւորում է Գանձարանի տպագրութիւնն առանց խազերի, «մանաւանդ մեկնութիւնքն Աստուածաշունչ սուրբ գրոց, այսինքն՝ Պօղոսի առաքելոյ թղթոց մեկնութիւնքն յոսկեբերանէն, երկոտասանց մարգարէիցն մեկ-

նութիւնք ի ներսիս է Լամբրօնացոյն եւ Յօբայն ի Վանական վարդապետէն» եւ այլ ընտիր գործեր, որ Նոր Նախիջեանում կան: Վերջում անելացնում է, որ չի ցանկանում գրել «զկողմանցս խառնիխառն եւ ստալիր համբաւոց»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

3 Սրբոյ հայրութեանդ սիրոյն եւ օրհնութեանն ցանկալով մնամ սիրառատ որդի՝ նուաստ Թաղէոս իբր եպիսկոպոս: 1797, օգոստոսի 13:

342
ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վա. 99

ՀԱՇՏԱՐԻՒԱՆ

ՌՄԽԶ-1797

ԳՐԻԶ՝ Մկրտում դի Գալստեան: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպս. Արղութեան:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. ոսկեգոյն եզրերով, լուսագծերով, լուսագրով՝ «D&G-BLAUW»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22,7x19: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 21+2:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. թերթերի եզրերը եւ զմուտը վնասուած, գրադաշար թանաքոտուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

Ծնթ. Գրուած է բարբառային խօսուածքով, համառոտուած եւ լրոգուած տատերով:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Սրբազայն եւ սրբայկրօն յօրգետր հայայրի Յովսէփայ պսակայգարթ եպիսկոպոսիտ այտի ասկայսէր առաջնորդիտ – Անցեալ փոստումն գիր գրէլամ, յուսամ խասէլ լինի սրբազայնիս,

նոյեմբերի 20էն շնորարարութեան նամակն դեկտեմբերի 7ումն ... եւ մերայիբըն մաքուր աշտ կու համբուրեն սրբազայտէրն //»: Մկրտում դի Գալստեանը յայտնում է Յովսէփ արքեպս. Արղութեան, որ Գրիգորիպօլի համար կայսեր առանձնաշնորհումների գիրը ստացել է, թարգմանել տուել «եւ քանի օրինակ ըոռաստեվար գրել» տուել: Նշում է, որ փոստով չի ուղարկել Աւետիս վրդ-ի խնդրանքը, այլ գրել է Աւետ Դաւիթովին եւ այլն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Մնամ միշտ բարի կամեցող խոնայր ի Տէր՝ Մկրտում դի Գ[ա]լստ[ե]անի: 1797, դեկտեմբերի 8, 3(Հ)[ա]ժտ[ա]րխ[ան]:

ՀԱՍՑԷ

2բ Աստուծով: Սրբայգան եւ սրբայկրօն յօգեւօր հայայր պսակայգարթի Յովսէփ ազգայտէր առաջնորդ պսակայգարթ //:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

2բ (Յովսէփ Արղութեան) 1797, դեկտեմբեր 27, պատասխանեցի յունվարի 1:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 2բ (կարմիր զմուտի վրայ, մակագրութեամբ, վնասուած):

343
ԳՐՈՒԹԻՒՆ

թղթայ. 6, վա. 100


ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈՒԹՅՈՒՆ

ՌՄԽԶ-1797

ԳՐԻԶ՝ Ստեփաննոս Դաւիթով: ՍՏԱՅՈՂ՝ Գրիգոր վրդ.:

ԹԵՐԹ՝ 4 էջ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր ոճատր զինանշան, ներ-

սում՝ եղջերագալաթ, վերետում՝ «KI» «KB» մա-
կագրութիւն: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23,1x19,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝
միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 32-41:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1-4 «Բարձր արժանապատիւ Գրիգոր բանի-
բուն վարդապետ, հոգեկից բարեկամ եւ ողոր-
մած աէր – Յաջողմամբ ժամանիլն ձեր ի կայսերա-
նիստդ քաղաք հոգեմբերի 15-էն շնորհալի թղթոյ
ձերոյ իմացեալ փառս մատուցաք յաջողողին ամե-
նայնի... թերեւս այսու յուսով ջանասցեն շիջուցա-
նել զհրդեհումն հրոյս յայսմիկ, որպէս այժմ ջանան
սրտի մտօք»: Ստեփան Դաւիթովն առաջարկում է
Գրիգոր վրդին, որ 39 թումանին աւելացնի եւս
21ը, որ լինի 60 թուման եւ հաշիւը իր տղայի հետ
Պետերբուրգում վերջացնի, նաեւ նշում է դրամա-
կան այլ գործարքների մասին: Յայտնում է, որ
հաղաքը փոքր-ինչ հանդարտ է, առեւտուրը յաջող
է եւ էժանութիւն կայ. «կիրակի աւուրքն լաւ բանա-
յիր լինի երկու եւ ԳՃ՝ (300) արապայ մտանէ աստ
փայտ, դօռա, խոտ, ալիւր, գործելի, գարի, վէտ-
րայք, չիպուխք, դազուխք, դամիշք, դաւար, ոշխար,
մորթեալ ոշխարք լցեալ արապայք, խոզ, դազ, հաւ
եւ ամենայն տեսակ բարութիւնս անբաւա»: Նշում
է, որ Աղիբումանցի Մալէշի որդին, «որ բնաւ Աղ-
փիւմանու եկած չէր», լսելով իր այնտեղ գտնուե-

լու մասին՝ եկել բնակուել է, որի կինն վաղուց էր
եկել Նախիջեւանից: Իսկ բերբեր Ազարիային, որ
փախել էր, համոզելով եւ թղթով է բերել: «Եւ այլք
բազումք խոստանան գալ, յոյս ի Տէր ունիմ ժողովել
զամենեսին»: Սակայն նկատում է, որ դեռեւս կան
մարդիկ, որ փախչում են, այս ու այն կողմերից
հաաւել են 300 հոգի, 500 դուռոջ դրամ առել
Կոստանդին եւ ուղարկել՝ «հանդերձ փաշայի քեա-
հիւն»: Սակայն գոհութիւն է յայտնում Աստուծոյ
«արդար իրաւանցն», քանի որ «իսմայիլեցի լուսա-
րարի որդի պիղծ Ալիքաէն մինչ Ե (5) տնորի պատ-
ճառ եղեալ՝ փախոյց, ի հասանիլն Իսմայիլ զկնի Բ
(2) աւուրց շարաշար սատակեալ է ի ժանդախտէն:
Միոյ տան ժառանգն, որ իւր աներձագն էր, այ-
սինքն՝ տէր Գրիգորի որդին, այն եւս է մեռեալ» եւ
այլն: Տեղեկացնում է, որ կրկին «ուկազ» է ստա-
ցել «ուպրաւկենիցն...», զի եւ մեք յայտնեսցուք,
վասնորոյ ազգաբանութեան տետրակն մեր ետուր
ընթեռնուլ ի մաղիսդրաթոջն»: Եւ յոյս է յայտնում
«շիջուցանել զհրդեհումն հրոյս յայսմիկ»:

Ծնթ. Տէս Ն. Մարտիրոսեան, Արարատեան դեսպանի
կեսանի վերջին տարիները, «Էջմիածին» ամսագիր, ԺԱ,
2021, էջ 105-125:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

4 Համառօտեմ աստէն զեղծագրութիւնս մեր՝
մնալով ձերդ բարձր արժանապատուութեան խո-
նարհ ծառայ եւ մտերիմ բարեկամ՝ Ստեփաննոս
Դաւիթով: 1797, նոյեմբերի 29, ի Գ[րիգորիտայօլ]:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻԻՆ


1. 4 Ազնիւ պարոն Անդրէասն իւրայնովքն ողջ
եւ ուրախ են, առաջըրորդնն եւ տղայքն՝ անսասան:
2. 4 Մեր իշխանքն համայնիւք համախոհիւք մա-
քուր եւ սուրբ աջդ կարօտիւ համբուրեն եւ զօրհ-
նութիւնս հայցեն:

ՄՕԶԴԹԿ

ՌՄԽԶ-1797

ԳՐԻԶ՝ Թաղէսու եպս.: ՍՍԱՅՈՂ՝ Յովսէփ ար-
փեպս. Արդուրեան:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2ա: ՆԻԻԹ՝ կապոյտ
թուղթ. ոսկեգոյն եզրերով, լուսագծերով, լուսա-
գրով՝ «JMWSL», «17[93]»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,8x-
19,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝
1ա): ՏՈՂ՝ 25+3:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաարար. 2րդ թղթի կէսը միայն, հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Բարձր արժանապատիւ սրբազան հայր եւ ամենադուրմ տէր – Կարօտեալ սրտիւ սրբոյ աշոյղ համբոյր, հայցելով ի տեառնէ Աստուծոյ կեանս երկարս եւ խաղաղականս տալ բարձր սրբազնութեան քոյին... եւ ի պահոցն Աստուծով գնալ ի Սարաֆխան եւ անտի ի Ղզլար»: Երուսաղէմի նուիրակ Թաղէոս եպս-ը յայտնում է Յովսէփ արքեպս. Արղութեանին, որ սրբազանի ընծաները ստացել է հոկտեմբերի 10ին եւ 15ին գնացել Եագօրցկի, ուր, մինչ իր գնալը, սեպտեմբերի վերջին հոգեհ երբունկուել, եկեղեցին, խանութներ, դուխաններ այ-

րել: Իր գնալուց նորոգում էին այրուածները, նաեւ եկեղեցու տեղն էին փոխել՝ «ի հիմանց նորոգ շինէին»: Ինքը նոյեմբերի 5ին նորից Մոզդոկ է վերադարձել նուիրակութիւնն աւարտելու համար: Տեղեկացնում է նաեւ, որ Վանական վրդ-ը «սեպտեմբերի էլն զմահու վախճան ընկալեալ է ի Թիփլիզ»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Մնամ ամէնողորմ տեառնդ իմոյ ամենախոնարհ ծառայ՝ Թաղէոս եպիսկոպոս սուրբ Երուսաղէմի յետնորդ նուիրակ: 1797, նոյեմբերի 23, ի Մօզդոկ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅՅՏԱԳԱՅԻ

2բ (նտարգիր) Նուիրակ՝ Թաղէոս վարդապետ, 1797, դեկտեմբերի 20 ընկալաբ:

345


ԳՐՈՒԹԻԻՆ

թղթայ. 6, վաւ. 102

ԺԹ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Ղուկաս դի Ալէքսան: ՍՏԱՅՈՂ՝ [Ղուկաս Ա Կարնեցի] կթղկս:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած 2աբ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «ՄՕ//», «1809»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,2x21,9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 47:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1աբ «Անխտառ շալօփ ունողիդ զղեկն հաւատոյ ընդ նախորդի հատոյն մերոյ սրբոյն Գրիգորի՝ վարելով գնան սրբոյ եկեղեցոյ հողմով Հոգոյն Սրբոյ ի նաւահանգիստն կենաց. տեառն իմոյ սրբազանի մաքուր աշոյն համբոյր ընծայեմ – Արդարեւ ըստ ստուերի են կեանք մեր, եւ այն լիով փորձութեամբք, որք գետօրէն լցեալք զկնի արշաւեն մեր եւ ո՛չ թոյլատրեն զմեզ գո՛ննէ ի քթթեւական մնալ ի նոյնութեան... եւ զմեզ յիշելով

յաղօթս քո սուրբ. ողջ լէր ի պարծանս մեր»: Ղուկաս դի Ալէքսանը 1797 թ. մարտի 30ի գրութեամբ դիմում է [Ղուկաս Ա Կարնեցի] կթղկսին, որ հայրը մահացել է եւ ինքը շատ է տրամել, սակայն վեհից ստացած սիրոյ եւ մխիթարութեան գիրը, որ սեպտեմբերի 22ին էր գրել, իր եւ բոլոր համախաղաղացիների համար անպատմելի ուրախութիւն է եղել: Խնդրում եւ աղաչում է վեհին, որ ինչպէս գրել է տէր Մրապիոնի մասին, կատարել: Նշում է, որ հնգգլ նուիրակ հայրը 900 դուրուշ է տուել պահելու, սպասում է կարգադրութեան, որ Մարգար աղայի կտակի համաձայն դրամ պիտի ուղարկեր էջմիածին, բայց չի ուղարկել, որովհետեւ քաղաքում խառը դրութիւն է եղել: Եւ քանի որ Մարգար աղան կտակել է, «որ շտայցեմ զդուստրն իւր այլազգ քրիստոնէի», այսինքն՝ նեստորական աղանդատրի, խնդրում է կթղկսին գրել «գիր բացասական սաստկութեամբ», իսկ աղայի կնոջը՝ Կատարինէ խաթունին յանդիմանել, որը «այժմ յարի յաղանդս Ֆռանկոզին»: Այդ պատճառով ժողովրդի մէջ խիստ շփոթութիւն է առաջացել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1բ Որ եմ Բաղդատ, թիվնս ¹⁷⁹⁷/₁₂₄₆, մարտի 30ունն գրվեցաւ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1բ Արզիս օրինակն վերոյ թարեղին աղարկեալ
ամ, Աստուծով Քուրդուստանայ վերայ հասել կլի-
նի: Եւ այս էլ աղարկեցի Դիա[ր]պա[ր]ի մեր պարոն

Մաթիկին, որ էնտեղաց ղասիդ բունի, աղարկէ եւ
բերօղ ղասիդով պատասխան շուտով հասուցանէք.
Աստուծով խէր: Միշտ խոնարհ ծառայ՝ Ղուկաս դի
Ալէքսան: Ապրիլի 9, Բաղդաստ:

346

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վաւ. 103

ՀԱՇՏԱՐԻՍԱՆ

ՌՄԽԶ -1797

ԳԻԻԶ՝ Թաղէոս վրդ.: ՍՍԱՅՈՂ՝ Յովսէփ ար-
բեպա. Արղուքեան:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսա-
գծերով, լուսագրով՝ «V G»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23,6x-
18,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝
1ա): ՏՈՂ՝ 38:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. խոնաւութեան հետեւ:
ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Աստուածարեալ պսակագգեաց սրբա-
զան հայր, իմ ամենողորմ տէր — Ի սոյն ամսոյ
ըննին եկն այսր ի Թիֆլիզու տէր Փիլիպպոսի
որդի տէր Դաւիթն, որ նոր եկեալ է ի կողմանցն
Հնդկաց... Աւելիս աստուածիմաստ վարդապետն
եւ տէր Մելքիսէդէկ շնորհափայլ քահանայն սրբոյ
շնորհաբաշխ աջոյդ զհամբոյր նուիրեն»: Թաղէոս

վրդ-ը գրում է Յովսէփ արբեպա. Արղուքեանին, որ
Թիֆլիզից եկել է տէր Դաւիթ Բահանան, որը Հնդ-
կաստանում է եղել: Ձեռքին ունի «երկու ֆարա
բարաթագիր», որ տուել է սրբազանի փոխանորդ
տէր Ստեփանը, որպէսզի գումարն այստեղ փոխ-
հատուցի սրբազնութիւնը: Տէր Ստեփանը 2 տարի
6 ամիս առաջ վերցրել է 2000 եւլտուզ ոսկի, որ
այժմ «իւր մուտադովն» կազմում է 2700 ոսկի: Ին-
քը յուսադրել է նրան եւ 20 թուման ծախսի փող
տուել, երաշխաւոր եղել «տալ պարոն Աղալօյին,
որպէսզի այնու... միամիտ կացցէ մինչեւ ցգալուստ
սրբազնութեանդ»: Յայտնում է՝ տպարանը չի
գործում թղթի պակասութեան պատճառով, նո-
րովի թափել է տուել «արճճեայ գրեանսն», Ստե-
փան Գրիգորիչը յանձնարարական գիր է խնդրում
նահանգապետի համար, Բաղդաստ անդորրու-
թիւն է տիրում:

Մնթ. Հմմտ. ա՛ստ №№ 339, 348, 370:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Մնամ գթած հօրդ եւ ամենողորմ տեառնդ
ամենախոնարհ ծառայ՝ Թաղդէոս վարդապետ:
1797, ի դեկտեմբերի 15, Յաժդարխան:

347

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթայ. 6, վաւ. 104

ԱՍՏՐԱԽԱՆ

ՌՄԽԶ -1797

ԳԻԻԶ՝ Աւետիք Դաւիթով: ՍՍԱՅՈՂ՝ Յովսէփ
արբեպա. Արղուքեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ.
լուսագծերով, լուսագրով՝ «J M», «17//»: ՄԵԾՈՒ-
ԹԻՒՆ՝ 22,8x19,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝
նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 31, 35:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1-3 «Աստուածայգարդ եւ ազնիւայծին տեառն Յովսէփայ արիապա[ն]ծ եպիսկոպոսիդ ամենայն Հայոց աստուածաշօշափ սուրբ աշոյտ համբուր մատուցանեմ մեծաւ խոնարհութեամբ – Մէգտէնբէրի 22էն մին արգայ եւս գրած իմ պարոն Գրիգոր Պէտրովիչի փակէթովն, յուսամ, որ ժամանակին իւրն տիրացե[ա]լ լինիս... եւ միշտ պայծառ լինիս ի պատիւ ազգին մերոյ ի Տիառնէ. ամէն»: Աւետիբ Դաւիթովը գանգատում է Յովսէփ արքեպս. Արղութեանին, որ «թարեղէս առաջ ուքազ եկաւ սէնսթից, որ բաներն աղարկին տեղտ»,

այսինքն՝ Մայր Աթոռի հասանելիք դրամը, որ վերահասու լինեն, քանի որ «Յովանէս Թաթոսովն եւ խէզատորն ախպէրացել են, որ էս փողն բանդեցս առնեն»: Յովանէս Թաթոսովն էլ խոստանում է «արգայ» տալ եւ պատնէնն էլ Գրիգոր Պետրովիչին ուղարկել, որով ուզում են խաբել, խնդրում է «էս բանին հէտէվողութիւնն անիս, որ վերջն վատի կու գնայ»: Նշում է, որ տարբեր գրութիւններով կարող են իրեն մեղադրել, ուստի խնդրում է ուրիշներին չհաւատալ, ճշմարտութիւնն ինքն է ասում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

3 1797, հոգտէնբէրի 20ումն, Աստր[ա]խ[ա]ն: Մնամ օրհնութեանա կարաւտ ի նուաստ խօնայր ծառայ՝ Ավետիկ Դավիթով:

348

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթպ. 6, վաւ. 105

ՀԱՇՏԱՐԻՍԱՆ

ՌՄԽԶ -1797

ԳՐԻԶ՝ Թաղէոս վրդ.: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպս. Արղութեան:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 24x17,9: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նուագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 39:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Աստուածարեալ պսակազգեաց սրբազան հայր, իմ ամենողորմ տէր – Երկու փօշոք է ի բարձր սրբազնութենէդ զգիր շունի, բայց յուսամ, որ յաջողութեամբ տեսուն Աստուծոյ ժամանեալ իցէ սրբազնութիւնդ ի Սանկտ Պետրբուրգ... այլ

զի մի զգրամ հատուցից փօշտին, սակս կնքեալ գորչն, եւ ահա՛ ընդ գրոյս եղեալ յղեցի առ սրբազան հայրդ իմ»: Հաշտարխանից Թաղէոս վրդը ուրախութեամբ նշում է Յովսէփ արքեպս. Արղութեանի Սանկտ Պետրբուրգ հասնելը եւ կայսրի կողմից ընդունելութիւնը: Նշում է, որ իրենց ֆաղաֆում խոր խաղաղութիւն է տիրում, եւ իւրաքանչիւրն իր գործով ու առեւտրով է զբաղուած, իսկ Աւետիս վրդի հետ կապուած ոչ մի փոփոխութիւն չկայ: Տեղեկացնում է, որ սեպտեմբերի 28ին սկսել են «զէֆիմէրտէ»ի տպագրութիւնը եւ մի ամսում 12 տետր տպելու փոխարէն միայն 4ն են տպել, որովհետեւ աշխատողները հարբեցողութեամբ են զբաղուած, «թէ՛ Մկրտումն եւ թէ՛ Աստուծոյ ատելի ոռու տպօղն», եւ փողն անիմաստ մսխում է:

Ծնթ. Հմմտ. ւստ № 339, 346, 370:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Ամենողորմ տեառնդ եւ գթած հօրդ ամենախոնարհ ծառայ՝ Թաղէոս վարդապետ: 1797, հոկտեմբերի 27, Յաժդարխան:

349
ՆԱՄԱԿ


թղթա. 6, վա. 106

ԱՍՏՐԱԽԱՆ

ՌՄԽԶ-1797

ԳՐԱԳԻՐ՝ Ղազար ֆիյ: ՀԵՂԻՆԱԿ՝ Ստեփան Տէր-Շմաւոնեան, Աղալօ Լազարօվ: ՄՏԱՅՈՂ՝ [Յովսէփ արեւալս. Արղութեան]:

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակալուած 1-2՝ հաշուի շառնելով չգրուած թերթերը). չգրուած՝ 3-4: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «JMWSL»: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 21,8x19,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 24+5:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերն անհարթ, 2րդ թերթի վրայ անցֆ:

ԻՄԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1-2 «Արբագնագունեղ հայր, ողորմաձագունեղ տէր եւ բարեւար — Մեծաւ խոնարհութեամբ եւ շերմ կարօտիւ սրբոյ աջոյդ համբոյր... Մեծաւ խոնարհութեամբ եւ խանդակաթ կարօտիւ զմաքուր գարշապարդ համբուրեմ»: Աստրախանից Աղալօ Լազարովի եւ Ստեփան Տէր-Շմաւոնեանի նամակը [Յովսէփ արեւալս. Արղութեանին], որով չմեղանում են ասելով, որ աղայ Յովհաննէսն իրենց շէր տեղեկացնել, որ գումարի մասին պէտք է յայտնել սրբա-

զանին: Ապա յաւելում են, որ մինչեւ սրբագանի գիրը ստանալն իրենք Սողոմօն Տէր-Շմաւոնեանի միջոցով գումարն արդէն ուղարկել էին աւագ ֆիյ տէր Գրիգորին, տէր Յովհաննէսին եւ տէր Առաքելին: Իսկ գիրն ստանալուց անմիջապէս յետոյ մի նոր թուղթ են գրել՝ բացատրելով, թէ սրբագանը ինչպէս է հրամայել բաժանել գումարը: Գրում են, որ պատասխան շնորհակալական գիրը ստանալուն պէս կներկայացնեն աղայ Յովհաննէսին: Յաւելում են, որ միշտ ուրախ են կատարել սրբագանի ցանկացած յանձնարարութիւն:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

1. 1 Մնամ[ք] ձերոյ բարձր սրբագնութեան մշտապատրաստ ծառայք՝ Ստեփան Տէր-Շմաւոնեան, Աղալօ Լազարօվ: 1797 թվին հոգտեմբերի 20ումն, Աստարխան:

2. 2 Ամենախոնարհ ծառայ ձեր՝ տէր Ղազար ցաւալի քահանայ:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՆ

1 (լուսանցքով, այլ գրով) Կրկին ծառայութիւնս մատուցանելով խնդրեմ, որ նոյն Ստանբոլայ երկրորդ բարաթագիրն էլ տեղիցդ փօշտով առաքիս. եւս մօյր անիս շուտով իմացումն տան, մեծապէս շնորհակալ գննեմք (այսինքն՝ կլինեմք) սրբութիւնէս: Կրկին յատկապէս խոնարհ ծառայ՝ Ստեփան Տէր-Շմաւոնեան:

350

ԽՆԴՐԱԳԻՐ


թղթա. 6, վա. 107

ԹԻՖԼԻԶ

ՌՄԽԶ-1797

ԳՐԻԶ՝ Յարութիւն Ստեփանեան Նօնենց:

ԹԵՐԹ՝ 4 էջ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրերով՝ «WSL», «92», լուսապատկերով՝ թագակիր ոճաւոր զինանշան, ներսում՝ եղջերազաւար: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 23,4x19,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 14-21:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԻՒԿՈՒԹԻՒՆ

1-4 «Արժանապատիւ հայր, ողորմած եւ բարե-
րար տէր իմ — Մ՛հ ցաւոյս, ո՛ր լեզու կարէ ճառել զա-
ղէտ ծառայիս քոյ... որում Տէր արժանի արասցէ առ
ի փարատել ի մէնչ զսուզ եւ զտրտմութիւն»: Թիֆ-
լիզից Յարութիւն Ստեփանեան Նօնենցի նամակը
ումն արժանապատիւ հօր, որտեղ սրտի անսահման
դառնութեամբ նկարագրում է, թէ ինչպէս են
պարսիկները յարձակուել Թիֆլիզի վրայ. արքան
լքել է հաղաքը, որովհետեւ բաւարար զօրք չի ու-
նեցել դիմարդելու, ժողովրդի մեծ մասն էլ փախել
են լեռները: Ինքը հապաղել է, որ ապրանքով լի
սայլերը հասնեն, սակայն պարսիկները ներխու-
ժել են, ատերել ամէն ինչ ու գերելարել բազմաթիւ
մարդկանց, այդ թում եւ իր ընտանիքին: Տեղե-
կացել է, որ հոյրը գերի է Գանջալում, եւ Մոզդոկից
սրբազանի եղբորորդի իշխան Սօլոմոնը «եօթանաս-
սուն եւ չորս բաշալի» է փոխանցել, որով մէկ ու կէս
տարի առաջ ազատել է նրան: Ապա գրում է, որ
Համարանցի տէր Յովհաննէսը Թաւրիզում ազա-
տել է Աստուածատուրին, նաեւ ասել, որ կինն ու
մի դուստրն էլ են այնտեղ. այս մասին իրեն տե-

ղեկացրել է պրն Ստեփան Տէր-Շմաւոնեանը: Ռու-
սական զօրքի օգնութեամբ անցնելով Դարբանդն
ու Նրուանը՝ սրբազանը եկել է իրենց հաղաք, որ-
տեղից գրել եւ յանձնարարել է տէր Յովհաննէսին
Աստուածատուրին ուղարկել՝ խօստանալով «զգին
դորս՝ զհինգ հարիւր ռեալս» յատուցել: Իսկ Շուշա-
նի մասին նոյն տէր Յովհաննէսը գրել է սրբազա-
նին, որ Քաշանում է, եւ խոստացել է նրան էլ ազա-
տել ու վերադարձնել, եթէ գումարն ուղարկեն:
Ապա սրտի ցաւով յաւելում է, որ այս երկուսի հա-
մար մինչև երկու հարիւր թուման են պահանջում,
ինչն իր համար անհնարին է: Իսկ իր ութամեայ
որդուց ոչ մի լուր չունի: Սիրտը ցատում է նաեւ տա-
րաբախտ Մաթօյի համար, ում ամուսնուն սպանել
են եւ իրեն գերելարել Կարս: Վերջում յաւելում է, որ
«զկնի կործանման քաղաքիս եւ մերոյս թշուառանա-
լոյ» չորիցս գրել է, սակայն վստահ չէ՝ արդէօ՛ք նո-
րին արժանապատուութեանը հասել է գիրը: Յոյսով
սպասում է վերջինիս գալստեանը:

ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

4 Ողորմած բարերար տէր իմ, արժանապատու-
ութեան քում ամենախոնարհ ծառայ՝ Յարութիւն
Ստեփանեան Նօնէնց: 1797 ի փետրվարի 25, ի
յաւերակացեալս Թիֆլիզ:

351

ՆԱՄԱԿ


թղթայ. 6, վաւ. 108

ԿԱԼԿԱԹՍ

ՌՄԽԶ-1797

ԳԻՒԶ՝ Յակոբ Տէր-Պետրոսեան: ՍՏԱՅՈՂ՝ Յով-
սէփ արքեպիսկոպոստ: Արդուքեան:

ԹԵՐԹ՝ 2 (էջակալուած 1՝ հաշուի չառնելով
չգրուած թերթը). չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ.
լուսագծերով, լուսագրով՝ «BUDGEN»: ՄԵԾՈՒ-
ԹԻՒՆ՝ 22,7x17,9: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ բո-
լորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ ՅՑ:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԻՒԿՈՒԹԻՒՆ

1ա «Երջանկաշնորհ եւ առաքելաշալիղ սրբա-

զան արքեպիսկոպոսին Նոր Նախիջեւանու սրբոյ
աշոյն խոնարհութեամբ համբոյր — Ներումն խնդ-
րեմ համարձակութեանս, որ սրբազանիդ ծանօթու-
թիւն շունենալով ես թուղթս մատուցանեմ... մինչի
Աստուած ինձ ողորմելով ազատէ էս միաբանութիւ-
նից»: Կալկաթայից Յակոբ Տէր-Պետրոսեանի նա-
մակը [Յովսէփ արքեպիս. Արդուքեանին], որտեղ
ներողութիւն է խնդրում սրբազանին անձամբ
նամակ գրելու համարձակութեան համար, սա-
կայն նաեւ արդարանում է՝ «որովհետեւ Սուրաբ
իմ մեծ եղբայր տէր Զաբարէին վերայ շնոր ու-
նես»: Բողոքում է, որ 1793 թ. յուլիսից Նոր Զուղա-
յի առաջնորդ Յակոբ վրդ-ի հրամանով Կալկաթայ
տեղափոխուելուց ի վեր «ստեղիս եկեղեցին եւ քա-
հանայքն եւ ժողովուրդքն ալէկոծութեան միջումն
են... պատճառն, որ ո՛չ ունեմք իշխան, ո՛չ առաջնորդ,
ո՛չ քարոզիչ, ո՛չ դատաւոր եւ ո՛չ դատաստանատուն
մեր ազգին»: Ապա նեղւտում է, որ սրբազանի
ուղարկած աւագ քիչ տէր Ստեփաննոսը զանգա-

տուել է իրենից, նաեւ՝ [Ղուկաս] կրթկսին, սակայն իր արարմունքների պատճառը «կումիսար եւ մութավալի պարոնաց եւ տէր Յօսէփ աւաթ քահանայի հրամաննայ»։ Եւ թէպէտ ինքը բազմիցս նրանից ներողութիւն է խնդրել, բայց նա պահանջում է հրապարակային մեղայականով հանդէս գալ, ինչն անհնարին է։ Սրբազանին խնդրում է իր

անունով մի «ներողութեան գիր» ուղարկել, որպէսզի ինքն առժամանակ հանգիստ լինի։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Մնամ սրբազան տեառնդ միշտ խոնկար հնազանդ ծառայ՝ տէր Յակոբ Տէր-Պետրոսեան։ 1797 յունվարի վերջ, ի Կալկաթայ։

352

ՆԱՄԱԿ


թղթպ. 6, վառ. 109

ՀԱՇՏԱՐԻՍԱՆ

ՌՄԽԶ-1797

ԳՐԻԶ՝ Մկրտում դի Գալստ[ե]անի։ ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արեւպա. Արդութեան։

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակալուած 1-3՝ հաշուի շառնելով չգրուած էջը). չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «D&GBlauw», լուսապատկերով՝ թագակիր ոճատր զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,8x19: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նտորգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 14-23:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ դժուար ընթեռնելի. թանաքի թթուայնութիւնը բարձր, գրադաշտը գունափոխուած, զմուտսի տեղը պատռուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1-3 «Սրբազայն եւ սրբայկրօն հոգեւոր հայր եւ պատկազարթ ի Յօվսէփ առեպիսկոպոսիտ աչն հ[ա]մբուր[ե]մ — Սրբազանիս հոկտեմբերի 29 գրած նամակն նոյեմբերի 26ումն ուխտեցի... եւ էլ բարի ախբէրս աղայխինէտ բօլորովին օրընութեանտ կարօտեմ»: Մկրտում դի Գալստանի նամակը Յովսէփ արեւպա. [Արդութեանին], որով խոստանում է նախիթեանցիների գիրը նոյն օրը ուղարկել թաղէոս վրդ-ին: Յատելով է, որ Գրիգոր վրդ-ը նորութիւնները գրել է, եւ յոյս է յայտնում, որ սրբազանն արդէն կայսերը հանդիպել ու իր խնդրանքների հաստատումը ստացել է: Ասում է, որ Գիլանից հոկտեմբերի 26ին դուրս եկած նաւը նոյեմբերի 26ին հասել է իրենց մօտ, սակայն դեռ մամսատանն է. ապրանքն ստանալուն պէս Մատէթօվի միջոցով սրբազանին կուղարկի «շամայի» եւ 2 «թրմայ շայլ եւ Գիլանու եկած շոր

եմիշ»: Նախ ուշանալը պատճառաբանում է Բաբախան սարդարի իշխանութեան անհաստատութեամբ եւ յատելով լուրեր այն մասին, որ «Շիրազ էլ Ջաբիխի խանի որդին առեւայ»: Խնդրում է Ալեքսանդր Բեզբորոզկուն հանդիպելիս փոխանցել, թէ՛ «ինկիզն մին տարվայ ճանապ[ա]ր[հ]՝ Հնդկաստան տիրելայ, դուք էս Յ օրվայ ծօվն չէք տիրում»: Առաջարկում է ստեղծել «կունպանութիւն» եւ իրեն յանձնել դրա կառավարումը, քանի որ «ախոսս էս պօրտ եւ էս Կասպեցկի ծօվն, որ էսպէս խառնութունը կառայվարութիւն է» եւ տիրում է «ղզելպաշն եւ մօլթան խանը»: Խոստանում է կարգ ու կանոն հաստատել, տարին 3 հազար թուման շահոյթ ապահովել, 2 տարի անց էլ՝ 5 հազար թուման: Խօսում է նաեւ իշխան Բեզբորոզկուն ունեցած ջրերի մասին, որոնք վարձակալուել են տարին 2500 թումանով, իսկ այս տարի առաջարկում է ընդամէնը 2000 թուման: Սրբազանին խնդրում է իշխանին տեղեակ պահել, որ կոմս Իւան Վասիլիչը Մարքելեանդիշ Մոլիցկուն գրել է, թէ իր մի ռուս ընկերը պատրաստ է 2500 թուման վճարել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

3 Մնամ միշտ սրբազանիս բարի կամեցող բարեկամ, նվաստ ծառայ՝ Մկրտում դի Գալստ[ե]անի։ 1797, նոյեմբերի 27ումն, Հաշտարխան։

ՀԱՍՅԷ

4 Աստուծով: Սրբազան եւ սրբայկրօն հոգեւոր հայր պատկազարթ եւ առգայսէր երախտաշորի վերոյ ասկին ի Յօվսէփ առքեպիսկոպոսիտ ըսպասըն Սանդ Պետրօսք:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

4 (նտորգիր) 1797, դեկտեմբերի 6 ընկալաք ի պարոն Մկրտումէն: Պատասխանեցի 11:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 4 (վնասուած կարմիր զմուտս, անհասկանալի):

353
ՆԱՄԱԿ


թղթւ. 6, վառ. 110

ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈՒԹՅՈՒՆ

ՌՄԽԶ-1797

Հեղինակ՝ Աւետիք Բնյ: ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արքեպս. Արղութեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակալուած 1-3՝ հաշուի շառնէրով չգրուած էջը). չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ կապտաւուն թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «K K», լուսապատկերով՝ քաղաքի քարտէսը զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 21,9x19,4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 22-25:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բարարար. զմուտի պատուած տեղը նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՆ

1-2 «Բարձր սրբազնագունեղ տեառնդ իմոյ բարերարի եւ կողմանցս հիւսիսոյ բնակեալ Հայոց ազգի առաքելաւոր առաջնորդի տեառնդ Յովսէփայ արհիապանձ եւ քրոնաշան դիմապետի... զի իմաստից տրկար եւ մշտօք մոլար չեմ հասեալ կատար, այլ անկեան մի անկեալ – Առ տէրդ իմ գրառատաւ եւ բարերար. անցեալ ամսոյ տիրաց[ո]ւ Յակոբի յետ այլեւ հոգտեմբերի մէկին գրեալ թուղթն ըստացա[յ] նոյե[մ]բերի 13... եւ աջ ամենագոր թագաւորին թագաւորաց ի վերա[յ] թագաւորութեան նորին եղիցի. ամէն»: Աւետիք Բնյի նամակը Յովսէփ արքեպս. [Արղութեանին], որով յայտնում է, որ Գրիգոր վրդ-ի ձեռքով կնքած տունն այդպէս էլ անխախտ մնացել է: Տեղեկաց-

նում է, որ եզոր Գալուստիչը «իւր դաշն» վաճառել է եւ ձմռանը կապրի այգու կողքի փոքր սենեակում: «Տղայքն» մնում են սրբազանի սենեակում, տէր Յովհաննէսն էլ ցերեկներն այնտեղ է լինում եւ դաս է տալիս նրանց: Իսկ արձաթեղէնը հիմալ դժուար է բերել, քանի որ Մալխասը 2 ամիս առաջ գնացել է դեռ չի վերադարձել, բայց հնարատու է իր փեսայի միջոցով ուղարկի: Յատելում է, որ այս մասին խօսել է նաեւ պրն Ստեփան Դաւիթովի հետ, որը խոստացել է իր փեսայի միջոցով բերել տալ: Սրբազանի հրամանով իմքն այն կվերցնի ու կպահի իր մօտ: Փրկիպոսենց կողմից խոնարհ ողջոյն է յղում եւ փոխանցում նրանց անհանգստութիւնը՝ ծախսի գումարի հետ կապուած: Գրում է, որ փահանաներն ու ժողովուրդը մշտապէս աղօթում ու սպասում են կայսեր կողմից իրենց խնդրի դրական լուծմանը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

- 1. 2 Վասն տեառնդ իմոյ պատրաստական խոնարհ ծառայ՝ Աւետիկ հայոց քահանայէ:
- 2. 2 1797, նոյեմբերի 23, ի Գրիգորիուպոլ (գիրք տարբեր է):

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՆ

2 Այլեւ հանջարեղ եւ գիտնական համեստարարոյ հայր մեր Գրիգոր աստուածաբան վարդապետին աջն համբուրեմ խոնարհաբար:

ՀԱՍՅԷ

3 Գերագունեղ տեառնդ իմոյ եւ բօլոր երկրիս Ռուսաց եղեալ Հայոց ազգի առաքելաւոր առաջնորդի պսակազարդեալ տեառն Յովսէփայ արքեպիսկոպոսի սրբազնասուրբ աջն:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 3 (կարմիր զմուտի վրայ՝ առագաստանաւի պատկերով):

354
ԽՆԴՐԱԳԻՐ

թղթւ. 6, վառ. 111


ՌՄԽԶ-1797

ԳՐԻԶ՝ Զափարեայ Բնյ խորովեան: ՍՏԱՅՈՂ՝ [Յովսէփ արքեպս. Արղութեան]:

ԹԵՐԹ՝ 2 (էջակալուած 1՝ հաշուի շառնէրով

չգրուած թերթը). չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրերով՝ «R M», «Д М», (երկիցս) «1793», լուսապատկերով՝ երկիցս

թագանման զարդանախը: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35,8x-21,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 37:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաարար. եզրերը եւ ծալքերը մաշուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Բարձր սրբազնագունեղ հօրն իմոյ եւ ողորմած տեառն իմոյ եւ բարերարի. ի խորոց սրտէ աղերս — Զի թէպէտ երկիւղ եւ սարսափ մէծ է

ինձ համարձակիլ առ տեառն եւ ձանձրացուցանել ի ձեռն գրութեանս զամենապատուական զգլուխ... քան թէ հոգեկորուստ շրփօթիւք միշտ ի խրախճանս լինիլ»: Զաքարեայ քնյ հոսորովեանի նամակը [Յովսէփ արեւպ. Արղութեանին], որտեղ իր վիրատրանքն ու սրտնեղութիւնն է արտայայտում իր մասին տարածած զրպարտութիւնների համար եւ յաւելում, որ այլեւս անհնար է «իմ միաբան մնալ ընդ սոսա»: Սրբազանին խնդրում է «բժշկել լրացմամբ աղտեղեալ անունս վրկայական գրով» եւ իրեն ծառայութեան տեղափոխել մէկ այլ վայր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Որ եւ մնամ ըսպատեալ ձերին ողորմածութեան դատաստանին եւ բաւականութեան, ոտացրտ մոխիր ցաւալից քահանայ՝ տէր Զաքարեայ հօսրովեան (կից՝ ստորագրութիւն):

355

ՆԱՄԱԿ

թղթապ. 6, վաւ. 112


ԹԻՖԼԻԶ

ՌՄԽԶ-1797

ԳՐԻԶ՝ Դաւիթ քնյ Տէր-Յոհաննեան: ՍՍԱՅՈՂ՝ Յովսէփ արեւպ. Արղութեան:

Դաւիթ Տէր-Յոհաննեանի նամակը Յովսէփ արեւպ. [Արղութեանին], որով յայտնում է, որ արեւան դեռ հիւանդ է եւ Թէլաւում է գտնուում, իսկ «անիծեալ բարբարոսապետ Օմար» ուր հազար զօրով «այս քանի ժամանակք են իջեալ» գետեզր՝ Քեզեխի դիմաց, ինչի պատճառով երկիրը ցնցումների մէջ է: Թէպէտ Զաքարիայ մովրովի եւ Ֆառնաւազ արեւայորդու հրամանի տակ կուտակուած զօրկայ, սակայն նրանք դեռ ոչինչ չեն ձեռնարկում: Յայտնում է, որ իրենց եւ օսմանցիների սուրհանդակները յանախակի գնում-գալիս են, նոյնիսկ խաղաղութեան առաջարկով Օմարի մօտ միացեալ դեսպան են ուղարկել: Տեղեկացնում է, որ հացի լիարը երեք շահի արժէ, եւ ընդհանրապէս սնունդը դեռեւս մատչելի է:

ԹԵՐԹ՝ 2 (էջակարուած 1՝ հաշուի շառնելով չգրուած թերթը). չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով, լուսագրով՝ «GR», լուսապատկերով՝ թագակիր ռեատուր զինանշան, ներսում՝ եղեւրագաւաթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23,8x19,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 31+5:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաարար. գրադաշտը գունափոխուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1բ «Սրբազան Յովսէփ արեւպիսկոպոս, գերեջանիկ հայր եւ տէր ողորմած — Զշնորհալին սրբազնութեադ, զցանկալին իմ ասեմ, յարգմամբ ընկալայ ես ի մուտն սեպտեմբերի... Խնդրեմ ո՛չ արկանել զմեզ ի մօռացընս, այլ ունելով ի լուսաւոր միտսդ՝ մերթ ընդ մերթ զշնորհացնձուղ նամակդ պարգեւելով մխիթարեսցես զհէ՛հս»: Թիֆլիզից տէր

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ Որ կամ եւ մնամ ի մտերմութեան եւ ի հարազատութեան բարձր սրբազնութեան ողորմածի տեառնդ իմոյ եւ թագաւորի ամենախոնարհ ծառայ՝ տէր Դաւիթ Տէր-Յոհաննեան (կից՝ ստորագրութիւն): 1797, 10/7, ի Թիֆլիզ:

ՅԱԽԵԼԱԳՐՈՒԹԻԻՆ

1բ Զթողթա գրեալ մնաց ի յետս, եւ այժմ ժամ գտեալ մատուցի հանդէրձ ուխտադրականն թղ-

թով, եւ այժմ հրամանաւ օրհնեալ արքային եւ գնամ ի թէլան ի գրագրութիւն. եւ թէ ի վերայ թղթոյս ուխտադրականի քանի՞ եւ որպիսի՞ անցք անցին,

կն՝> եազ Սաղօսօնն եւ Եսայի աղայն յուսամ գրեալ իցեն: Այլ ի նոյն ամիսն եւ ի 24 օրն, Կարիշեշտ՝:

356

ՆԱՄԱԿ


թղթպ. 6, վա. 113

ՂԶԼԱՐ

ՌՄԽԶ-1797

ՍՏԱՅՈՂ՝ Յովսէփ արեւպ. Արղուրեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակալուած 1-2՝ հաշուի շտնելով չգրուած թերթերը). չգրուած՝ 3-4: ՆԻԻԹ՝ կապտաւուն թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «JMWSI»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,7x19,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 28-31:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ներքեի աջ եզրը գունափոխուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1-2 «Սրբազնագունեղ տեսունդ մերոյ կայսերապսակ եւ ազգասեր առաքելաշա/իղ Յովսէփայ արհի եպիսկոպոսիս եւ սրբազնատուր աշոյղ եւ երկնաշու գարշապարանացս խ[ո]-նար[ե]եալ առաջի հայրութեանդ համբոյր մատուցանել – Չկնի ծառայական խոնարհութեան եւ մեծավ պատկառանք յոյժ կարոտովս լցեալ յայտառնեմ... Մէր բարեբարութիւնն սրանց չարութիւնն այժմուս փոշմ[ա]նէն»: Ոմն անձի նամակը

Յովսէփ արեւպ. [Արղուրեանին], որտեղ տեղեկացնում է, որ իրենցից պահանջել են ազնուականութեան փաստաթղթի պատճենները յանձնել դատարան, ինքն էլ նամակի հետ ուղարկում է Հերակլ արքայից ստացած «գրամոտի» պատճենը, Վարդանի մայրութեան պատճենը, Զաքարի կապիտանութեան պատճենը՝ իր խնդրագրով հանդերձ: Ապա խնդրում է սրբազանին յետեղական լինել այս խնդրին եւ «լավ շ[ի]նէլ տաս»: Յանելում է, որ մի գիր էլ «ինոստրանի կողէգումն» կարթլիկ Դաւիթ Օսէփովին է գրել, որ հարկ եղած դէպքում օգնի, ինչպէս նաեւ Ալեքսանդր Ստեփանիշ Օսիպովին, ով «Հաշտարխան պրավլէնումն սէկլէտար էր, այժմոյս կարծեմ տէրտ Կուրեակիինի մոտնայ»: Գրում է, որ երբ Ալաբուլն իրենց մօտ էր, յայտարարել է, որ ցանկացած պահի կարող են իրեն դիմել, որպէս սենատորի, սակայն ինքն անձամբ չի համարձակուում գրել եւ խնդրում է սրբազանին իր անունից դիմել նրան օգնութեան համար: Այս հարցով յիշատակում է նաեւ Իւան Լազարիչի եւ «քնիեազ» Գարսեւանի անունները:

ՅԻՇՏԱՍԱԿԱՐԱՆ

2 Մնամ խիստ ծառայ հարազարդ եւ հնազանդ (վրացերէն, կից՝ ստորագրութիւն): 1797, նոյե[մ]բէրի 12էն, Ղզլար:

357

ՆԱՄԱԿ

թղթպ. 6, վա. 114


ԱՍՏԻԱԽԱՆ

ՌՄԽԶ-1797

ԳՐԻՉ՝ Յովաննէն Նամբրուեան: ՍՏԱՅՈՂ՝ [Յովսէփ արեւպ. Արղուրեան]:

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակալուած 1-3՝ հաշուի շտնելով չգրուած էջը). չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ թուղթ. լու-

սագծերով, լուսագրով՝ «GR», լուսապատկերով՝ թագակիր ռճատր զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,9x19,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 20-22:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եղբերը եւ ծախերը մաշտուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ՔՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-3 «Վեհափառ հովիւ եւ սրբազնագունեղ հայր, իմ ողորմածագույն տէր – Ընկալայ զանցիեալ ամսոյ 20էն զնամակ օրհնութեան սրբազնութեանդ... որում եւ մնամ միշտ վերապատուիթեամբ»: Աստրախանից Յովաննէս Նամբրօսեանի նամակը [Յովսէփ արեւես. Արղութեանին], որով իր ուրախութիւնն է արտայայտում սրբազանի միջնորդութեամբ գրիգորիուպօլցիներին «ի պօստօյեաց» ազատելու կայսեր հրամանի առիթով: Յայտնում է, որ ամսի 7ին Թառումովը վախճանուել է, հետեւաբար կարիք չկայ վերջինիս համար իր կողմից ներկայացուած խնդրանքի վրայ աշխատել: Գրում է, որ որոշ ժամանակ առաջ «նախարարքն տեղիս մեծամեծօք, այսինքն՝ ինժի-

ներնի եւ արխիդեգատրուլն» հնգրդ աղայ Մինասի տան համար զին են սահմանել տասներկու հազար եօթ հարիւր ֆանի թուման, եւ հիմայ «Նիկօլայի Եակովլիին՝ տեղույն պարոն գուբերնաթօրն» եւ սենատոր պրն Ալաբովը դիմել են Սենատ, որ տունը ութ հազար երեք հարիւր թուման պետական պարտքի դիմաց «արքունական վերանին»: Նեղարտում է, որ գոնէ պարտքն առանց տոկոսի հաշուեն եւ մնացեալը բաժանեն միւս պարտապաններին: Սրբազանին էլ խնդրում է դիմել իշխան Ալէքսեյ Բորիսիչ Կուրակինին եւ նրա միջոցով թոյլտուութիւն ստանալ, որ «բոլոր ինչք այս տան կողմանէ կապեալ... արձակվի», ու իրենց էլ մի բան հասնի: Վերջում գրում է, որ Աննայ Գրիգորեանային յանձնարարել է «վասն հանգուցելոյ տեղտեղիեալ քուրացն» գոհունակութիւն մատուցի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

3 Բարձր սրբազնութեան ձեր ամենայխոնար[հ] ծառայ՝ Յովաննէս Նամբրօսեան: Աստրախան, դեկտեմբերի 8, թիւն 1797:

ՅԱԻՆԼԱԳՐՈՒԹԻՒՆ

3 Խնդրեմ միմիայն իմանալ այս խնդրածս:

358

ՆԱՄԱԿ


թղթպ. 6, վա. 115

ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈԼ

ՌՄԻԶ-1797

ԳՐԻԶ՝ Ստեփաննոս Դաւիթով: ՄՏԱՅՈՂ՝ Գրիգոր վրդ.:

Թե՛րթ՝ 4 էջ (էջակալուած 1-3՝ հաշուի շառնելով չգրուած էջը). չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրերով «ՔԼ» «ՔԵ», լուսապատկերով՝ թագակիր ռնատր զինանշան, ներսում՝ եղջերագաւաթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23x19,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 31-38:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխուած: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ՔՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-3 «Բարձր արժանապատիւ Գրիգոր գերա-

հանճար վարդապետ, իսկական բարեկամ եւ վշտակից տէր – Նախընթաց ամսոյ մէկէն գրեալ շնորհալին ձեր ի սոյն ամսոյ 11 ընկալաք... եւ այլ որպիսութիւն միւս փօշտին, եթէ կենդանի եղէց, գրելոց եմ լիովին»: Գրիգորիուպօլցից Ստեփաննոս Դաւիթովի նամակը Գրիգոր վրդ-ին, որով յայտնում է, որ Եկատերինսկաւի ճանապարհից վրդ-ի բոլոր գրածների հետ համաձայն է, վերջին մանրամասնօրէն գրած նամակի հետ էլ ուղարկել է վրդ-ի իրերը, պահանջուած թղթերի պատեղնները, Իւան Լազարիչի ու այլոց թղթերը: Ափսոսանք է յայտնում իր որդի Դաւթի հետ չհանդիպելու հանգամանքի համար: Յատում եւ ամաչում է Աւետ Գալստեանի եւ Քե՛ւ ալանթարովի հետ կապուած իրադարձութիւնների համար: Գրում է, որ անհարմար է զգում աստրախանցիների սխալ արարքից եւ լիովին հասկանում է վրդ-ին, ով հրաժարում է Աստրախան մեկնելուց: Յայտնում է, որ պրն

Անդրէասն ու իր ընտանիքը լաւ են, «նմանապէս տիրացու Սիմէօնն, Կարապետն եւ Ալէքսէն ի բարի կացութիւնս եւ ի յընթերմունս պարապին»: Յայտնում է, որ Քիշինեւ փախած Գասպարին եւ իր աներձագին բռնել, ուղարկել են «ի կարանթին, բայց ասել ետուք մի առ մի զարարսն Բէլիկովի»: Եւ հիմայ պահապաններից բացի գիշերները հսկում են նաեւ 2 դատաւորներ՝ մի քանի տղաների ու ծառաների հետ: Պատմում է, թէ քաղաքի ու բնակչութեան համար ինչպիսի բարելաւումներ է արել, թէպէտ միեւնոյնն է բողոքողներ կան: Նեղստում է ֆինանսական դժուարութիւններից ու խնդրում կապիտան Ալէքսանդր Ալէքսէեւիչ Դենիսովից եւ իր որդի Աստուածատուրից ճշտել, թէ իր զինուորական թոշակի հարցը ինչ լուծում ստացաւ: Յայտնում է, որ այն ավիին բնակւողները գումար են հաւաքել եւ տուել «աղքերմանցի Կոստանդին եւ առաքեալ ի նախադուռն՝ հանդերձ Բէնդէրու մօլպետի թղթովն եւ մարդովն»: Իրենք էլ տեղում երեք ստորագրահաւաք են կազմակերպել՝ «մինն կուբեռնաթին, մէկն՝ սրբազանին եւ միւսն մնասցէ ի մայիստրաթոջն» առ այն, որ իրենք չեն մասնակցել այս ամենին, այլ ոռւսա-

կան կայսրութեան հաւատարիմ հպատակներ են:

Ծնթ. Տե՛ս ն. Մարտիրոսեան, Արարատեան դէսպանի կեանքի վերջին տարիները, «Էջմիածին» ամսագիր, ԺԱ, 2021, էջ 105-125:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

3 Խոնարհ ծառայ եւ մտերիմ բարեկամ՝ Ստեփաննոս Դաւիթով: 1797, նոյեմբ[ե]րի 15, ի Գրիգորիուպօլ:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 1 (լուսանցում) Կաշկինուն եւ իւրոցն լաւ եմ ժողովեալ մինչեւ ոչ կարէ գրել ինչ եւ խօսիլ ոչ հաճիմ, Պէլէշովն եւ վից կուբէռնաթն փութով գալոյ են աստ:

2. 2 (լուսանցում) Կապիտան Սպրաւնիկն եւ Փանթալէ Իլիչ սուտիաչքն առ մեզ օթեցան Բ (2) գիշեր, լաւ բարեկամ եղեն եւ խնդրեցին զծառայութիւնս իւրեանց սրբազանին եւ ձեզ մատուցանել:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

4 (նոտրգիր) 1797, դեկտեմբերի 1 ընկալաք ի Գրիգորիուպօլու հասարակութեան եւ պարոն Ստեփանէն:

359

ԽՆԴՐԱԳԻՐ


թղթա. 6, վաւ. 116

ԱՍՏՐԱՆԱՆ

ՌՄԽԶ-1797

Հեղինակ՝ Աւետիս վրդ.:

Թե՛րթ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրերով՝ «95», «Ա», լուսապատկերով՝ բուսական ռեաւորմամբ պատուանդան, վրան երկրաչափական պատկեր, ներում՝ ծաղիկ եւ թուր: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35,7x22,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 46:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաարար. եզրերը նորոգուած: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Աժդարխանու հայոց հոգեւոր կանցիստորէն ի հայոց կարգաւոր Աւետիք վարդապետէ խնդիր — Յայտ է կապակցութիւն իմ ընդ Արարատեան պատրիարքական Սուրբ Աթոռոյն... եւ խնդրեմ, զի շնորհ արասցէ կանցիստորն՝ այնր գրոյ զսաւատն առնուլ եւ զիսկն առ իս դարձուցանելը»: Աւետիք վրդ-ի խնդրագիրը Աստրախանի Հայոց հոգեւոր կոնցիստորին, որտեղ պատմում է, որ 1793 թ. սեպտեմբերին Մայր Աթոռի համար հանձնակալուած գումարից 7724 ռուբլի 20 կոպեկ տուել է Գիլանցի հայ վաճառական Յոհաննէս Թադոսովին, որպէսզի վերջինս մետաքս գնի, ուղարկի Աստրախան Աւետիք Դաւիթովին՝ վաճառելու կամ փոխանակելու, ապա եկամուտը փոխանցի իրեն: Սակայն յետոյ իմացել է, որ հայազգի Խաչատուր Գալուստովի պահանջով Աստրախանում ապրանքը առգրաւել են՝ «պատճառաւ»

Յօհաննէս Թադոս[ո]վին ընդ յիշեալ Գալուստովին եղեալ վաճառականութեան հաշուացն»: Երբ 1794 թ. մայիսին Բաքուում ինքն անձամբ հանդիպել է Գալուստովին՝ «ընդ փրկաշիկին իւրոյ Յօհաննէս Պապիչին», նա հաւատացրել է, որ ինքն իմանալով, որ ապրանքը Մայր Աթոռին է պատկանում, վերադարձնելու հրաման է տուել: Սակայն մինչեւ 1797 թ. ապրիլը սպասելով ու հասկանալով, որ խաբուած է, ինքը Յօհաննէս Պապիչին գրել ու մի ստորագրուած ու վկաներով հաստատուած վկա-

յական է խնդրել, ինչն էլ ուղարկում է իր խնդրագրի հետ, որպէսզի ընդօրինակեն, իսկ բնօրինակը նորից հետ վերադարձնեն: Հիմայ թողել է իր գործերը, եկել Աստրախան՝ իր հետ բերելով Յոհաննէս Թադոսովին որպէս վկայ: Հոգեւոր կոնցիստորին խնդրում է այս հարցին լուծում տալ՝ «տալով ազդումն տեղւոյս կառավարութեան նախարարացն»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Աւետիս վարդապետս ձեռք եղի, 1797, յունիսի 3:

**360
ՆԱՄԱԿ**


թղթպ. 6, վաւ. 117

ԱՍՏՐԱԽԱՆ

ՌՄԽԶ-1797

ԳԻԻԶ՝ Սահակ Աբրահ[ամով]: ՍՏԱՅՈՂ՝ [Յովսէփ արքեպս. Արդուբեան]:

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակարուած 1-2՝ հաշուի շառնէլով չգրուած էջերը). չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրերով՝ «K Փ», «H M», «1791»: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 34,8x21,4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 21-30:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բարարար. գրադաշարը գունափոխուած, ծալփերը եւ վերեփ եզրերը նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1-2 «Մերագնայգունեղ հայր եւ ողորմած տէր – Գրեալ թուղթք սրբնագնութեամբդ ըսդ ժաման[ա]լ կին իւրաքանչիւրքն ստացեալ եմ... Սուրբագնութեանք խոնհար դուստր Վարայ Աբելօվնեն սուրբու աշուղ համբուր մադուցանէ եւ օրհնութան ցանկայ»: Սահակ Աբրահ[ամովի] նամակը [Յովսէփ արքեպս. Արդուբեանին], որտեղ յոյս է յայտնում, որ սրբագանը շուտով շնորհներ կստանայ կայսեր կողմից, եւ անհնազանդութիւն դրսետորոզնե-

րը խորապէս կզղջան: Գրում է, որ յատակագծի համար խնդրել է «պարոն գուբեռնաթօրեն եւ պարոն Մալեցկուցըն» եւ կարծում է, որ շուտով պատրաստ կլինի: Խնդրում է նամակի հետ ուղարկած գիրը փոխանցել Սիմէոն Սերգեյիչին եւ խրատել, որ վերցրած պարսփը ժամանակին վերադարձնի, այլապէս ինքը կդիմի օրէնքին եւ ուժով կստանայ իր գումարը, սակայն հարաբերութիւնները կխաթարուեն, «զի ոչ եմք այն պայմանաւ տուեալ, որ վիրաւորութեամբ յետ առցուրք»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2 Մնամք սուրբագնութանը բաղբրատուն եւ խօնար[հ] ծայրեայ՝ Սահակ Աբրահ[ամով]: 1797, տեֆդեհպերի 15, Ասդրախան:

ՀԱՍՅԷ

1. 3 Առ Ռուստաց երկրի ամենայն հայոց ազգին արժանաւոր ասաջնօրդ տեառն Յովսէփայ պսակազարդ արքեպիսկոպոսին, ի Սան[կ]տ Պետրբուրդ:

2. 3 Ego высокопреосвещенстве Иосифу архиепископу армянскому в доме его высококородия Ивана Лазаревского, С[анкт] Петербурге.

ԿՆՔԱԴՐՈՇՄ 3 (կարմիր գմուտի վրայ) «Գ Ս Ա»: ՆՇՈՒՄ՝ 3 (սեւ քանակով) «Астрахань»:

361

ԽՆԴՐԱԳԻՐ


թղթպ. 6, վառ. 118

ԱՍՏՐԱԽԱՆ

ՌՄԽԶ-1797

ԳՐԱԳԻՐ՝ Պետրոս ֆհյ: Հեղինակ՝ Աւետիք Պապօեան: ՍՍԱՅՈՂ՝ [Յովսէփ արեւպա. Արդուքեան]:

ԹԵՐԹ՝ 2 (էջակալուած 1՝ հաշուի շառնելով չգրուած էջերը). չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուրք. լուսագծերով, լուսագրով՝ «JMWSI», լուսապատկերով՝ շրջանաձեւ ցանկապատ, ներսում միապետը՝ զինուորական հանդերձով, գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր աղիւժ՝ աջ ձեռքին ստր, վերետում՝ «PROPATRIA» մակագրութիւն: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 34,1x21: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 32:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերը մաշուած, ներքեփ հատուածը եւ 2բ էջի գրութիւնը խոնասութիւնից հապաղուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր: ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Երջանկապարդ եւ ողորմած տեսողնդ իմոյ սրբազնագունեղ եւ արհիապանձ եպեսկոպոսիդ եւ առաջնորդի ամենայն հայոց – Յայտ իսկ է և

իսկ է սրբութեանդ ողորմածաբար խոստմունքդ, զոր անսուտ բերանօղ խոստացար... Խոնարհ ծառայ սրբութեանդ՝ Աւետիք Պա<օ>պօհան»: Պետրոս ֆհյն Աւետիք Պապօեանի անունից խնդրագիր է գրում [Յովսէփ արեւպա. Արդուքեանին], որտեղ հաստատում է, որ հողատարածքի սեփականաշնորհման համար տեղում տրուած դիմումի կրկնօրինակը ուղարկել է սրբազանին: Ապա խնդրում է յետամուտ լինել այս հարցի դրական լուծմանը, որովհետեւ իրենք եղբայրներով շատ ջանք ու աշխատանք են ներդրել այդ հողի վրայ, հակառակ դէպքում իսպառ աղքատութեան կհասնեն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

- 1. Տե՛ս Բովանդակութիւն (վերջը):
- 2. Տե՛ս Յանկագրութիւն (վերջը):

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻԻՆ

1ա Եւ ես՝ յետնեալ ծառայ տեսողնդ իմոյ, ի ծունր իջեալ խոնարհեալ երկրբագութիւն մատուցանեմ երկնագնաց ոտից քոց: Ըստ խնդրոյ Պապօյի որդի Աւետին գրեցի որպէս ի ծածուկ, զի յոյժ աղերսէ: Տեղոյս եղել վարդապետքն եւ ժողովո[ւ]րդքն կան ի խաղաղութեան: Յետնեալ ծառայ սրբութեանդ՝ Պետրոս քահանայ: 1797, սեպտեմբերի 27, Աստրախան:

362

ՆԱՄԱԿ


թղթպ. 6, վառ. 119

ՍԻՄՅԵՐՈՊՈԼ

ՌՄԽԶ-1797

ԳՐԻԶ՝ Պօղոս Թումանեանց: ՍՍԱՅՈՂ՝ [Յովսէփ արեւպա. Արդուքեան]:

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակալուած 1-3՝ հաշուի շառնելով չգրուած էջը). չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով, լուսագրով՝ «96», լուսապատկերով՝ թագակիր ռնատը զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 23,2x19: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորանման նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 13-22:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-3 «Բարձր արբազնագունեղ հայր եւ իմ ողորմածագունեղ տէր եւ բարեւար – Տիրացու Ակօբին հետն գրած գիրէս պաշխայ քոյին սրբազնութենէ, այլ գիր ստացած չիմ... Բարձր ազնիւ աղա[յ] Օվանէսին իմ խօնարութիւնս մատուցանեմ»: Պօղոս Թումանեանցի նամակը [Յովսէփ արֆէպս. Արղութեանին], որտեղ գրում է, որ բացի արց. Յակոբի միջոցով ուղարկած գրից, ինքն ուրիշ գիր չի ստացել ո՛չ սրբազանից, ո՛չ Գրիգոր վրդ-ից: Յայտնում է, որ ինքը հոկտեմբերի 5ին Գրիգորիուպօլից եկել է Ղրիմ իր գործերի համար, ինչին խառնուել է «պարոն կնկահա[յ]րն»՝ Նախիջեւանից ուղարկելով «եագիծի Ըստէբանըն, որ ինծի հետ կտրըվելու», սակայն գործերը հարթ չեն, եւ ինքը շտառով կվերադառնայ: Տեղեկացնում է, որ նահանգապետ Սելեցկուց 2 ամսով գաղտնի հրաման է վերցրել եւ եկել Ղրիմ, որտեղ Նախիջեւանի օրինակով խռովութիւն էր հասունացել վրդ-ի դէմ:

Հանդարտեցրել են ժողովրդին, վրդ-ի հետ հաշտեցրել, եւ այս ամենի մէջ իրեն «Օվանեսն ալ օհնական եղաւ»: Ապա վրդ-ը գնացել է վանք, իսկ ինքը եկել է Աքմէշիդ: Յայտնում է, որ տեղ հասնելուն պէս գրել է Գրիգոր վրդ-ին, սակայն պատասխան չի ստացել, խնդրում է իր գրածներին յետևողական լինել: Գրում է, որ 5 օրից կուղևորուի Եկատէրինսկաւ, ապա՝ Գրիգորիուպօլ եւ յոյս ունի այնտեղ հանդիպել սրբազանին: Խնդրում է իր եղբօրը փոխանցել, որ անպայման գնայ ու յետեի իր ունեցուածքին, քանի դեռ ամէն ինչ չի ոչնչացել, իսկ եթէ պարտ ունի, ինքը կուղարկի, բայց աղայ Յովանէսի անունից, որպէսզի եղբայրը չիմանայ:

Ծնթ. Տես նաեւ ա՛ստ № 363:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

3 Եւ այլ շունենալօվ ինչ գրելու՝ կու մնամ քոյին բարձր սրբազնութեանս պատրաստական ծառայ ամենայն ժամ՝ Պօղոս Թումանեանց: Նոյ՛ւ ան՝ եմբերի 10ին, 1797ին, Խրիմ, ի Սիմֆերօքօլն:

363

ՆԱՄԱԿ


թղթպ. 6, վաւ. 120

ԳԻՒԳՈՐԻՈՒՊՈՂ

ՌՄԵԶ-1797

ՀԵՂԻՆԱԿ՝ Պօղոս Թումանեանց: ՍՍԱՅՈՂ՝ [Յովսէփ արֆէպս. Արղութեանին]:

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակարում 1-3՝ հաշուի շառնելով չգրուած էջը). չգրուած՝ 4: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրերով՝ «17» «JMWSL»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23,3x19,1: ԳԻՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրաման բոլորգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 25-27:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխուած: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-2 «Բարձր սրբազնագունեղ եւ սրօքէակեցաղ հայր, իմ ողորմած տէր եւ բարեւար – Թէ-

պէտ բազում ժամանակք էր ոչ էիք տեսալ թուղթ առ սրբազանագունեղ տեանէ իմմէ, վասնորոյ էինք ի մէջ տարակուսանաց... Եւ այլն յանձնիմ գիս ի յաղօթս ձեր, սրօքէակեցաղ եւ սրբազան հայր»: Գրիգորիուպօլից Պօղոս Թումանեանցի նամակը [Յովսէփ արֆէպս. Արղութեանին], որով յայտնում է, որ սրբազանից երկար ժամանակ լուր չունենալուց յետոյ, հիմայ արց. Յակոբի ձեռքով վերջապէս գիր է ստացել: Կարծում է Գրիգոր վրդ-ի նամակից սրբազանը տեղեակ է, որ տեղում խռովութիւն է բարձրացել իր դէմ, ժողովուրդը նրան մեղադրում է անգամ քաղաքին յատկացուած գումարով գիւղեր շինելու մէջ: Աւելի մանրամասն կտեղեկանայ իր մօտ մեկնող Գրիգոր վրդ-ից: Գրում է, որ իրենց Անտոնը մահացել է, եւ Իւան Աբրահամիչը մեկնել է նրա ընտանիքը Նախիջեւան տեղափոխելու: Յաւելում է, որ պարտականութիւնների պատճառով ինքը չի կարողացել գնալ ու ապրանքին տիրութիւն անել, բայց ուղարկել է իր եղբայր պրն Սարգսին, ինքն էլ սպասում է «ըստ հրամանի

գուբէննաթօր Սելենիցկիին»: Լսել է, որ *Ղրիմում Աբրահամ վրդը* իր ցանկացածը վերցրել է հնգցյ *Անտոնի* ինչֆից: Խոնարհ ողջոյն է յղում աղայ *Յովհաննէսին*, նրա կնոջը՝ *Կատարինայ Իւանովնային* եւ միւս ազնուականներին: Աւելացնում է՝ «մեր Թօթայն եւ սանիկ Անդրուշդ եւ Եղիսաբեթն» մեկնել են *Մոզիլէն՝ Եղիսաբեթ հրիստաֆորովնայի մօտ*, «որ է կողակից Բանետանին»՝ մինչ *Ղրիմից* իր վերադարձը:

Ծնթ. Տես նաեւ *ա՛ստ* № 362:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2 *Մնամ քոյին ողորմած բարերարութեանդ ամե-*

նայխոնարհ ծառայ՝ Պողոս Թումանեանց: Սեպտեմբերի 5, 1797 թիւն, ի Գրիգորիուպօլ:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻՒՆ

3 *Իմ ողորմած եւ սրբազան հա՛յր, եթէ պատահի մեր Պետրոսին կատէթեցքի քօռբունն եւ կամ սուխուփուլթնի քօռպունն, խնդրեմ հետեւես, զոր ինչ որ խարճն երդայ, ես հատուցանողն եմ: Գրիգոր վարդապետին եւս խնդրած եմ:*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1 (1797 թ., նոտրգիր) «*Ընդ Գրիգոր վարդապետին ընկալաք սեպտեմբերի 25, ի պարոն Պօղոսէն*»:

364

ՆԱՄԱԿ


թղթպ. 6, վաւ. 121

ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈՒ

ՌՄԻԶ-1797

Հեղինակ՝ Մովսէս Եղիազարեան: ՍՏԱՅՈՂ՝ [Յովսէփ արքեպ. Արղուբեան]:

ԹԵՐԹ՝ 2 (էջակարում 1՝ հաշուի չառնելով չգրուած էջերը). չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր առիւծ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 24x17,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրանման բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 21:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բասարա:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Աստուածարեալ եւ պսակազգեաց սրբա-

զան հո[վ]ապետ եւ կորացելոյ գլխոյս իմոյ ալանակուռ պսակ եւ այցելու տէր – *Զիարդն տառապեցելոյ անձինս, եթէ հարցման արժանի համարես ... որ եմ յար եւ միշտ պատրաստական ծառայողորմած տեսունդ իմոյ*»: Գրիգորիուպօլից Մովսէս Եղիազարեանի նամակը [Յովսէփ արքեպ. Արղուբեանին], որտեղ խորապէս նեղստում է իր անյոյս վիճակի համար՝ սպասելով սրբազանի նամակին, որպէս կեանքի միակ մխիթարութեան:

Ծնթ. Գրութիւնը հմմտ. *ա՛ստ* № 365:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա *Ծառայ՝ Մովսէս Եղեայզարեան: Սեպտեմբերի 3, 1797, ի Գրիգորիուպօլ:*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (1797թ., նոտրգիր) *Սեպտեմբերի 28 ընկալաք ընդ Գրիգոր վարդապետին:*

365

ՆԱՄԱԿ

թղթպ. 6, վաւ. 122


ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈՒ

ՌՄԻԶ-1797

Հեղինակ՝ Պիմէաթ Ապովեան: ՍՏԱՅՈՂ՝ [Յովսէփ արքեպ. Արղուբեան]:

ԹԵՐԹ՝ 2 (էջակարում 1՝ հաշուի չառնելով չգրուած էջերը). չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. 25 - ՅՈՒՑԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՒԱՆԻ

լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր առիւծ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 23,2x17,6: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրանման բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 20:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Գերերջանիկ հով/ապետ, սրբազնագունեղ հայր, ողորմածագունեղ տէր եւ այցելու փրկիչ մեր – Ի քում սրբութիւնէ գրեցեալ օրհնութեան նամակդ առ ընկալայ, իբրեւ մանանայ երկնաէջ... Մնամ քոյին բարձր սրբազնութեան ամենախոնարհ ծառայ»: Գրիգորիուպօլից Պինէաթ

Արովեանի նամակը [Յովսէփ արեւպա. Արղութեանին], որով իր ուրախութիւնն է արտայայտում սրբազանից ստացած սպասուած նամակի համար եւ վստահեցնում, որ ամէն ինչ կկատարուի ըստ նրա պահանջի, քանի որ «եմ միշտ պատրաստական ծառայ մեծի բարերարիդ իմոյ եւ եմ հրամանակատար որդի քոյ»:

Ծնթ. Գրութիւնը հմմտ. ա՛ստ № 364:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Մահտեսի Պինէաթ Ապօվեան: Սեպտեմբերի 3, 1797, ի Գրիգորիուպօլ:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻԻՆ

1ա Սակս քիւրքին, որ գրում էս, ամբողջն մնում է. ըստակ տուող չի կայ, ումմէ ստանամ փողն:

366

ՆԱՄԱԿ


թղթպ. 6, վաւ. 123

ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈԼ

ՌՄԵԶ-1797

ՀԵՂԻՆԱԿ՝ Գալուստ Արզումանով: ՍՏԱՅՈՂ՝ [Յովսէփ արեւպա. Արղութեան]:

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակարում 1-2՝ հաշուի շառնէլով չգրուած էջերը). չգրուած՝ 3-4: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «JHONIG&ZOONEN» լուսապատկերով՝ շրջանաձեւ ցանկապատ, ներսում միապետը՝ զինուորական հանդերձով, գաւազանը ձեռքին, դիմացը թագակիր առիւժ՝ այդ ձեռքին սուր, ձախին՝ հրովարտակ, վերետու՝ «PROPATRIA» մակագրութիւն: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 32,5x20,4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորանման նուագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 31:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ներքեի եզրը, ծալերը եւ

զմուտսի տեղը նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1-2 «Բարձր սրբազնագունեղ հայրըն մեր ողորմածագունեղ տէր եւ բարերար – Ոչ կարեմք զամենայն որպէսութիւն մեր քոյ բարցր սրբազնութեանը աւարտուըն տալ սակավ ինչ գրքով... բարով փութով սուրբ հօրըթ տեսութեանն արժանա-

վօրիլ եւ մեզ օրհնութիւնէդ շնորհանալ»: Գրիգորիուպօլից Գալուստ Արզումանովի նամակը [Յովսէփ արեւպա. Արղութեանին] առ այն, որ օգոստոսի 30ին ստացել են իրենց ուղղուած նամակը: Յայտնում է, որ գիւղի որպիսութեան մասին կգրի տեղի առաջնորդը, ապա յաւելում, որ այս տարի երաշտ է եղել, սերմի կէսը այրուել է, ընտանի կենդանիներից 11ը ձմռանը հիւանդութիւնից սատկել են: Սակայն խոստանում է ամէն կէս պահանջուող գումարը հաւաքել ու ուղարկել սրբազանին, միայն թէ իր «աստիճանի» հարցը լուծուի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2 Որ եմ խօնար[ճ] քոյ ծառայ՝ Գալուսթ Արզումանով (կից՝ ստորագրութիւն): 1797, սեպտեմբերի 3ին, գրեցավ գիրըս ի քաղաքըն Գրիգօրիպօլ:

ՀԱՍՅԷ

3 Նօրին բարձր սրբազնութեանն տեանն Յօվսէփայ աստուածարեալ պըսակասկեաց սրբազան արհի եպիսկոպոսի եւ բօլօր երկրին Րուստանեաց ազգին Հայոց յատուկ առաջնօրդին տացի պարութեանըն, ի մայրաքաղաքըն Սանքթ Պէտրիպօլք:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1 (1797թ., նոտրգիր) Ընկալաք Գալուստ Արզումանովէն սեպտեմբերի 25:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 3 (միայն կարմիր զմուտ՝ առանց գրի ու պատկերի):

367
ՆԱՄԱԿ


թղթայ. 6, վառ. 124

[ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈՒԼ]

ՌՄԽԶ-1797

ԳՐԻԶ՝ Ստեփան Դավիթով: ՄՏԱՅՈՂ՝ Գրիգոր վրդ.:

ԹԵՐԹ՝ 4 էջ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «KFEB»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23x19,4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միապիւն: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 29-41:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերը նորոգուած, գրադաշտը գունափոխուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1-4 «Բարձր արժանապատիւ արքնասարաւ Գրիգոր գերահամբաւ վարդապետ, իմ բարերար եւ յատուկ ողորմած տէր – Նոյեմբերի 12էն բերկրեցուցիչ թուղթ ձեր յարգանք ընկալեալ փառս մատուցաք տնօրինողին համայնից... Գալուստին ասացի սակս քարահատութեան: Ասէ. «Այժմ սաստիկ ստուել է գետինն, Մեծի պահոցն կարելի է»»: [Գրիգորիուպօղից] Ստեփան Դաւիթովի նամակը Գրիգոր վրդ-ին առ այն, որ 15ի երեկոյեան ստացել են նրա նամակն ու անմիջապէս 16ին միջոցառումը կազմակերպել: Նոյն օրը, մինչ իրենց ֆաղափ հասնելը, «ինիսպէքտուր եներալ ազիուզանթ Նիկօլա[յ] Յովսէփիչ Կոալիպօնցկին» Դուպասարում բարկացել է տեղի կոմիսարի վրայ եւ բանտ նետել: Սրանից վախենալով՝ Կաշկիրը բողոքել է, թէ ինքը զինուորներին վառելիք չի տալիս: Բայց փողոցում պատահաբար հանդիպելով՝ պաշտօնեան ճանաչել է իրեն ու Կաշկիրին սաստել, ապա հարցրել, թէ ի՞նչ է պատահել: Ինքն էլ ցոյց է տուել նահանգապետից «ի նոյն ժամու ստացեալ օրդերն», որտեղ գրուած է, թէ՛ «ժանեայ ոչ ընկալնուլդ ուեզզէն զայրելիս, արդէն կրկին հրամայեցի կապիտան սպարանիկին հասուցանել զայրելիս»: Այժմ իրենք զինուորներին վառելիք կտան միայն այն դէպքում, երբ վատ եղանակի պատճառով չհասցնեն նրանց մատակարարել: Յայտնում է,

որ նահանգապետարանի գրած Պէրլէշովի (Բեգլեշով) գրութիւնը փոստով են ուղարկել, քանի որ «ի Լէհն, Եակոյիկն եւ Պալթայն գարանթին է» ժանտախտի պատճառով, ճանապարհները փակ են, Բենդերի փաշայի մարդիկ հիւանդացել են, միայն ինքն է մնացել: Մի կտորավաճառ ծերունի 2500 պատան է վաճառել: Քիլեցի Գրիգորն էլ թողնելով կանանց ու երեխաներին՝ իր 4 որդիների հետ փախել է. որդիները մահացել են, ինքը՝ խելագարուել: Գրում է, որ մաքսատու Իւան Վասիլիչը մի քանի ընտանիքներ է անցկացրել այն կողմ՝ շանսալով իրենց յորդորներին: Իրենք էլ ստիպուած դիմել են նահանգապետին, ով նրան յանձնել է արդարադատութեանը: 4 ծառայակից ղազախները նրա դէմ ցուցմունք են տուել, որից յետոյ նրան ուղարկել են Եկատէրինսկաւ, ղազախներին՝ Թերեսպօլ: Եւ թէպէտ ոմանք փորձել են նրան արդարացնել, բայց չի ստացուել, ու հիմայ նրա փոխարէն ուրիշին են նշանակել: Ապա պատմում է սրբազանի ուղարկած Վարդան անունով մի տղայի մասին, ով եզոր Գալուստիչից գողութիւն անելուց յետոյ էլ պրն Անդրէասի տանից անհետացել է մի տանիկի աղջկայ հետ: Գրում է, որ իրենց մօտ եղած ժամանակ փոխնահանգապետը Պրուքովին կանչել ու նախատել է, վերջինս էլ պատասխանել է, որ իրեն դրդել են խոտվութեան: Յայտնում է, որ պրն Պողոսը վերադարձել է, սակայն ոչ մի գործով չի զբաղում, քանի որ «կուպեռնաթն պրիստաւիթ է արար վասն Փանթալեօն Ալէքսէյիչին, որ նա լինիցի, ասէ, ի տեղի իմ»: Վերջինիս այս մասին գրել է Մասեհ Միխայէլիչը, իսկ ինքն այս մասին չիմանալով գրել է նահանգապետին ու առաջարկել՝ «մայիստրաթին հայի բարուք է նման Նախիջեւանու լինիլն», քանի որ տեղի ոստիկանութիւնը ո՛չ եկամտա ունի, ո՛չ հաստիք: Ուրախութեամբ տեղեկացնում է, որ Թերեսպօլից Կոստանդին անունով մի վաճառական որդու եւ կնոջ հետ ինքնակամ տեղափոխուել ու գրանցուել է իրենց մօտ: Խնդրում է պրն Յարութիւնի, պրն Մնացականի եւ տէր Օվաննէսի որդու ազնուականութեան հարցերով զբաղուել: Գրում է, որ մարդկանց մի ստուար մաս դեռեւս ցանկանում է վերադառնալ Եզիպտոս, ինչի համար

սրբազանին խնդրում է յետամուտ լինել տեղում պայմանների բարեկամանը: Ողջոյններ է յղում իր ծանօթ բարեկամներին ու իր որդու մասին սրբազանից ստոյգ լուրի սպասում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

4 Բարձր արժանապատուութեան ձերոյ ի սրտէ գբարիս բազումս կամեցօղ խոնարհ ծառայ եւ մտերիմ բարեկամ՝ Ստեփան Դաւիթով: 1797, դեկտեմբերի 31:

368

ՆԱՄԱԿ


թղթ. 6, վա. 125

[ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈՒ]

ՌՄԽԶ-1797

ԳՐԻԶ՝ Ստեփան Դաւիթով: ՍՏԱՅՈՂ՝ [Յովսէփ արեւա. Արղութեան]:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,9x19,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 35+4:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխուած: ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա (սկզբից թերի) «//Չայս եւս յայտ լիցի Ձերդ բարձր արժանապատուութեան, որ մեք կարի նեղիմք աստ... Վասն Կաշկիին գրեցելոցս կօպիայքն ահա՛ ուղեւորեմ առ ձեզ»: [Գրիգորիուպօլից] Ստեփան Դաւիթովի նամակը [Յովսէփ արեւա. Արղութեանին] առ այն, որ սրբազանի խորհրդով իր թոշակի համար գրել է «ի Մօսկով ի պարտատեարց մերոց՝ Կազէնսկուն», սակայն դեռ պատասխան չի ստացել: Խնդրում է դիմել կապիտան պրն Ալեքսանդր Ալեքսէեւիչ Դենիսովին՝ զինուորական կոլեգիայից եւ Սիմոն Սերգեյիչին՝ Սենատից գրութիւնները վերցնելու համար:

Ինքն գրել է *Իւան Անդրէիչ Ստաւրիցկուն*, որ իր ու որդու՝ *Դաւիթի* վկայականների պատճէնները, որ յունվարի Յին Մոսկուայում են ստացել, թղթի հետ միասին յանձնի: Ապա յայտնում է, որ մի երիտասարդ, ով 4 տարի *Իսմայիլում* էր ապրում, իմանալով իր այստեղ լինելը, յետ է վերադարձել, ինչպէս նաեւ այլ 42 անձինք՝ «*Թէ՛ ապրանօք եւ թէ՛ սոսկ*». այժմ շուկայում ակտիւ առեւտուր կայ: Ողջոյններ է յղում *Իւան Լազարիչին* եւ *Կատարինէ Իւանովնային*, Ստեփաննոս աագ ֆնյին ու *Գրիգոր ֆնյին*, «*հոգեւոր քոյր Կատարինէ Չախարովնա*] պատուելուհոյն եւ Սօփիայ խանուհին», յատուկ ողջոյններ իր հոգեւորդի պրն *Կարապետին* եւ *Ագրապինայ Միխայելովնային*: Սրբազանին խոնարհ համբոյրներ է փոխանցում առաջնորդարանի ծառայակիցների եւ եզոր *Գալուստիչի* անունից՝ յաւելելով, որ վերջինս «*ԺԲ (12) երիվարք եղեալ է ի ձիանոցի ձերում*»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Խ[ոնարհ] ծ[առայ]՝ Ս[տեփաննոս] Դ[աւիթով], 1797, նոյեմբերի 29:

ՅԱԻԵԼԱԳՐՈՒԹԻԻՆ

1ա Ներես առ ամենայն յանձնարարական գրութեանս: Գիտելով զձեզ բարերարօղ մեզ, ըստ այնմ վստահացեալ ի ձեռն Սրբոյ խաչին եւ Աւետարանի Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, անլոյծ երդմամբն մնամ ապաստարն՝ ձեզ մինչեւ յել շնչոյս:

369

ԳԻՐ ՀՊԱՏԱԿՈՒԹԵԱՆ

թղթ. 6, վա. 126


ԹԻՖԼԻԶ

ՌՄԽԶ-1797

ԳՐԱԳԻՐ՝ Մեկփսեղեկ Տէր-Մեկփսեթեան: ՀԵՂԻՆԱԿ՝ Բարդասար: ՍՏԱՅՈՂ՝ Բարսեղ Բէժանիչ Երկայնաբազուկ Արղութեանց:

ԹԵՐԹ՝ 2 (էջակալուած 1՝ հաշուի չառնելով չգրուած էջերը). չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «*Ю Ф С Т*», (երկիցս)

«1796», լուսապատկերով՝ հանանչաւոր արեւ, ներսում՝ երկու խաչ, վերեւում թագ, թագի շուրջ «С Е Г», իսկ արեւի ներքեւում «X III II» մակագրութիւն: ՄեծՈՒԹԻԻՆ՝ 34,7x21,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտրաման բոլորգիր (նմուշ՝ 1ա), վրացերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 18+16+3:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Զօրութիւն գրոյս այս է, որ ես՝ Դանիէլի որդի Բաղդասարս ի թիւն ներքոյ յիշեալ... խնդրեմք խոնարհաբար ամեն իշխանաւոր անձանց զգիրս զայս մեր հպատակական կնքել եւ հաստատել, զի մեր են կամք եւ հաճութիւն ընդ այս եւ ընկալնուկ կանոնաւորապէս ուր եւ արժանն է»: Դանիէլի որդի Բաղդասարը սովի պատճառով իր եւ իր յետագայ սերունդների անունից հպատակութեան գիր է տալիս Բարսեղ Արղուիթեանին եւ նրա յետագայ սերունդներին՝ խնդրելով. «սպրեցուցանել զկեանս իմ ի սովու»: Յաւելում է, որ եթէ իմէր կամ իր սերունդները հակառակ Բարսեղ Արղուիթեանի հրամանի կամ նրա սերունդների որեւէ բան անեն, թող որ դատաստանի առաջ կանգնեն:

370

ԳՐՈՒԹԻԻՆ


թղթ. 6, վա. 127

ՀԱՇՏԱՐԻՍԱՆ

ՌՄԻԶ-1797

ԳՐԻԶ՝ Թաղէոս վրդ.: ՍՏԱՅՈՂ՝ [Յովսէփ արեւելայ. Արղութեան]:

ԹԵՐԹ՝ 4 էջ. չգրուած՝ 3-4 (էջակալուած 1-2՝ հաշուի շառնելով չգրուած էջերը): ՆԻԻԹ՝ թուրք. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր առիւծ: ՄեծՈՒԹԻԻՆ՝ 24,2x18: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 28-46:



Նմուշ 1

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Ի 1797 յամի, յունվարի 1, ի Թիլֆիզ:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

- 1ա Սրբոյ վանիցն Սանահնու առաջնորդ Առաքել վարդապետս հաճութեամբ Բաղդասարին ձեռագրեցի:
- 1ա Վերոյ գրեալ Բաղդասարի հաճութեամբ վկայ գոլով ձեռագրեցի սակս հալախստութեան բանիս՝ Նոր[աշէ]նի աւագ քահանայ տէր Յակոբ:
- 1ա Խնդրանօք յիշեալ Բաղդասարին ձեռագրեալ կնքեցի՝ Կաթողիկէ եկեղեցւոյ աւագ քահանայ, ամենախոնարհ տէր Առաքեւ[ա]:
- 1ա Հաճութեամբ Պաղտասարին ստորագրեալ վկայեմ՝ տէր Դավիթ Տէր-Յոհաննէան (կից՝ ստորագրութիւն):
- 1ա Հաճութեամբ Բաղդասարին գոլով կնքեցի՝ Բեթլէնէմու աւագ քահանայ տէր Ստեփան:
- 1ա Արուքին բժիշկս վկա[յ] եմ:
- 1ա Խնդրանօք եւ հաճութեամբ վերոյ յիշեալ Բաղդասար խոստովանաորդույն իմոյ գրեցի ի տեղի, որոյ եւ ձեռագրեմ՝ ամենանուաստ տէր Մելքիսեդէկս Տեառն առաքելոյ Տէր-Մելքիսեթեան (կից՝ անուան կցագրութիւնը՝ Տէր-Մելքիսեթեան):
- 8-11. 1ա վրացերէն:

- ԿՆՔԱԿՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ թանաֆով, ռճաւոր փառակոսի) «ՔՐԻՍՏՈՍԻ /ԾԱՌԱՅ /ՏէՐ ԱՌԱՔԵԼ 1769»:
2. 1ա (սեւ թանաֆով, ռճաւոր փառակոսի) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏէՐ ՍՏԵՓԱՆ /1786»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշտը գունափոխուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1-2 «Աստուածարեալ պսակագգեաց սրբազան հայր, իմ ամենաողորմ տէր – Ի Յարիցիմու ի սեպտեմբերի 15էն գրեցեալ հայրական օրհնութեան զգիրդ ի նոյն ամսոյ 21 ընկալայ... կրկին մաղթեմ, արա՛ որ ողորմութիւն նմա, որ արժանի է, քանզի զբազում հարազատութիւն առ սրբազան տէրդ մեր՝ տեսեալ եմք ի նմանէ»: Թաղէոս վրդ-ը տեղեկացնում է, որ «զմեծ գիրն», որ սրբազանը 9 հոգու գրել է, իմէր որդիաբար կարդացել է եւ մի գիրը հասցէա-

տիրոջը չի տուել, քանի որ այն ընտանեկան խոնվուրթան պատճառ կարող է լինել: Ներողութիւն է խնդրում նման համարձակութեան համար: Յայտնում է, որ Սաղմոսի տպումն աւարտել են եւ, ըստ սրբագանի պատուէրի, սկսել են տպել «էֆիմէրտէն ընդ Տօմարին եւ Երազահանին», բայց եթէ աղայ Յօհաննէսի գործարանից նոյն թղթից չուղարկեն, տպարանը պարապ կմնայ, քանի որ չունեն այն թղթից, որով սկսել են: Տեղեկացնում է, որ Աստրախանի հայ հասարակութեան գիրն աղայ Յօվհաննէսին ուղղուած պարզ գրել է տուել եւ մատուցել պրն Մկրտումին, որ «ձեռն դնել տայցէ»: Ասում է, որ տէր Սուբխասի կինը մահացել է եւ որդին պրն Տրդատի մօտ է: «Կիսասարկաւագ» Յակօբն առողջացել է, բայց դեռ վախենում է տանից դուրս գալ: Տեղեկացնում է, որ պատրաստի

ունի 10 հատ Սաղմոսի մեկնութիւն՝ անկազմ, Երուսաղէմի «արախջինք եւ տէրողորմեայք», որոնք տէր Պօղոսի կամ Ղզլարցի մհա. Եսայու հետ կողարկի: Փոխանցում է մելիֆների, Աւետիս վրդ-ի համբոյրները: Վերջում յայտնում է, որ տէր Գրիգորը եւ «սրբութեանդ» փեսայ պրն Մարտիրոսը հաշտուել են:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 339, 346, 348:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2 Մնամ գթած հօրդ եւ ամենողորմ տեառնդ իմոյ ամենախոնարհ ծառայ՝ Թաղէս վարդապետ: 1797 սեպտեմբերի 29, Յաժդարխան:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԿԱՅԻ

4 (նոտգիր) 1797, հ[ո]գտեմբերի 21, ի Պ[ե]տ[ե]րպօլի:

371

ԳՐՈՒԹԻՒՆ


թղթպ. 6, վաւ. 128

ԱՍՏՐԱԽԱՆ

ՌՄԽԶ-1797

ԳՐԻԶ՝ Յովհաննէս Նամբրուեան: ՍՏԱՅՈՂ՝ [Յովսէփ արքեպս. Արղուրեան]:

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակարուած 1-2՝ հաշուի չառնելով չգրուած էջերը). չգրուած՝ 3-4: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «HR»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 22,9x19: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 20:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բարարար. գրադաշտը գունափոխուած: ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1-2 «Վեհափառ բարձր սրբազնագունէղ

հայր, ողորմաձագույն տէր — Ակնարկեալ սպասեմ ստանալ Աստծով զլուր ամբողջ ժամանման բարձր սրբազնութեան ձեր ի Ս. Պետերբուրգ... մեծ վնաս է լինելէոց որպէսն յայտնի իսկ է սրբազնութեանդ»: Յոհաննէս Նամբրուեանը յաջողութիւն է մաղթում [Յովսէփ Արղուրեանին] ազգօգուտ գործում, խնդրում է շնորհալ Անդրէյ Միխայելիչ Թառումովին առած խոստումը: Յայտնում է նաեւ Աւետիս Պապաեւի աղերսագիրն խնդրանք՝ կապուած իր հողերի հետ, որոնց դարբանդցիներն ուզում են բռնի տիրել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2 Որ եւ մնամ միշտ վերապատութեամբ բարձր սրբազնութեան ձերոյ եւ ողորմածի տեառնդ իմոյ ամենախոնարհ եւ մտերիմ ծառայ՝ Յովհաննէս Նամբրուեան: Աստրախան, հոգտեմբերի 20^{<20>}, թիվն 1797^{<22>}:

372

ԳՐՈՒԹԻՒՆ

թղթպ. 6, վաւ. 129


ԳՐԻԳՈՐԻՈՒՊՈՂ

ՌՄԽԶ-1797

ՍՏԱՅՈՂ՝ աղայ Յօհաննէս Աղազարեան: ԹԵՐԹ՝ 2 (էջակարուած 1՝ հաշուի չառնելով

չգրուած էջերը). չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ կապտաւուն թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «93», լու-

սապատկերով՝ թագակիր ռեաուր զինանշան, ներսում՝ եղբերագաւարք: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23,4x-19,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 33:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Վեհագնեայ իշխան աղայ Յօհաննէս Աղազարեան ինամաշատ տէր եւ մերս վշտալի քաղաքիս Գրիգորիոսայօլու հասարակութեան յատուկ բարերարու – Ի յամսեանն օգոստոսի 1ին գրեցեալ գիրն ի վեհագնութենէ քունմէ ի յելն սոյն ամսոյս ամբողջ կնքով էհաս առ մեզ... լէր ողջ տեղութեամբ ի պարծանս մեր եւ ի պատիւ բոլոր ազգիս Հայոց, որ եմք պատրաստական վշտալի ծառայողորմած տեառնդ մերոյ»: Գրիգորիոսայօլի հայ հասարակութիւնը շնորհակալութիւն է յայտնում

Յօհաննէս Աղազարեանին գրի համար: Յայտնում են, որ յուլիսի 7ին 2 պատգամաւոր են ուղարկել գուբերնատորի մօտ՝ քաղաքում գտնուող զինուորների հետ կապուած: Այդ ժամանակ առաջին դատաւոր «պօստպօլիօլնիկ» Ստեփան Իսակիչ Դաւիթովը եկատերինէսլաւուս հանդիպել է գուբերնատորին: Վերջինս խոստացել է գրել կնեագ Կուրակինին, բայց դեռ լուր չունեն: Դժգոհում են քաղաքի պլանից՝ ասելով. «զձեւն մի միայն ունի», ակելի լաւ է մի գիւղ կամ մի ագարակ լինէր, որ «ունի խնամածու տէր»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա 1797, սեպտեմբերի 5, ի մաղիստրաթն Գրիգ[ո]րիոսայօլու:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻԻՆ

1. 1ա Գլավայ՝ Միգայ Աբրահամով:
2. 1ա Պրղօմիստր՝ Յարոսթին Փօփօլ:
3. 1ա Պրղօմիստր՝ Առաքել Երախօվ:
4. 1ա Ռաթման՝ Հայրապէտ Խաչատուրով:
5. 1ա Ռաթման՝ Գալուստ Էմինով:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (1797 թ., նոտրգիր) Սեպտեմբերի 25 ընկալաբ ընդ Գրիգոր վարդապետին:

373

ԳՐՈՒԹԻԻՆ


թղթ. 6, վաւ. 130

ԿԱԼԿԱԹԱ

ՌՄԽԶ-1797

ԳՐԻԶ՝ Յակոբ քնյ Տէր-Պետրոսեան:

ԹԵՐԹ՝ 4 էջ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «BUDGEN»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,6x17,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ բոլորամամն նոտրգիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 24-37:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1-4 (սկզբից թերի) «//Ի խոսվութենէ աշխատի

հրաժարվեց կումիսարութիւնէն, էլ ժողովքի մէջ չեկաւ, վասն որոյ նորայ փոխանորդ Սարգսի քուեր որդի Սահակ Մալխասին կարգեցին կումիսար... եւ միջնորդ լինիս, որ տէր Ստեփանոսն ինձ ներողութիւն տայ թէ հոգւոր կողմանէ եւ թէ մարմնաւոր կողմանէ՝ գանգ[ա]տելով վրէժխնդիր չլինի ինձ եւ ալլն»: Յակոբ քնյ Տէր-Պետրոսեանի նամակը սրբագանին, ուր պատմում է, որ 1795 թ. յուլիսին Սարգիս Տէր-Յօհաննէսի եւ Նոր Նախիջեւանի աւագ քնյ Ստեփաննոսի միջեւ վէճ է եղել. «վասն Չին վախճանեալ Մաթէոս Յօհաննիսի կալքի, եւ տէր Ստեփաննոսն կօրտումն իրաւունք ստացաւ»: Սա նախանձ է յարուցել Սարգիս Տէր-Յօհաննէսի մօտ: Նա եւ պատարագիչ տէր Յօսէփը սկսել են անարգել Ստեփաննոսին եւ պարտադրել են ժողովրդին արհամարել նրան: Ասել են, որ «տէր Ստեփաննոսն պարոնաց սիրտն վիրաւորելայ եւ պարոնքն

նորա ատում են եւ չեն կամեման, որ նորա պատուենք եւ քահանայ ընդունենք»: Յակոբ Տէր-Պետրոսեանը յայտնում է, որ տէր Յօսէփն իրեն հրահանգել է տէր Դաւիթին թոյլ շտալ կանգնել ֆահանաների շարքում, քանի որ վերջինս դատարանում խօսել է տէր Ստեփաննոսի օգտին: Ինքը հրաժարուել է: Այս գործը գլուխ է բերել տէր Յօսէփը: Տէր Դաւիթը դիմել է անգլիական դատարան: Յօսէփին զգուշացրել են խաղաղութիւն հաստատել, այլապէս կդատեն: Յօսէփը ներողութիւն է խնդրել Դաւիթից եւ թոյլ տուել կանգնել իր տեղում: Սա դուր չի եկել պարոններին: Յակոբ Տէր-Պետրոսեանը պատմում է, որ տէր Յօսէփն իրեն եւ տէր Գալուստին յանձնարարել է մի «չիթի» գրել տէր Ստեփաննոսին եւ տէր Դաւիթին այսպէս. «որ դու եւ տէր Դաւիթն ոչ ունիք իշխանութիւն ի շարս մեր դասիլ ի մէջ սուրբ եկեղեցոյս, այլ յետին դասոջն մնալով աղօթեցեք»: Տէր Ստեփաննոսն այս «չիթի» պատասխանը միայն իրենց չի գրել, նախ՝ կոմիսարի անունն է գրել, յետոյ՝ «մովթավարոցն»: Ասել է, որ եթէ իրեն խոչընդոտեն՝ կբողոքի որտեղ

որ հարկն է: 1796 թ. ապրիլի 24ին, Ծաղկազարդի կիրակի օրը, տէր Յօսէփը տէր Ստեփաննոսի ձեռքից բռնելով դուրս է ֆաշել՝ ասելով, որ կոմիսարն ու պարոնները չեն ուզում նրան տեսնել եկեղեցում: Քաշիչուքը շարունակուել է, միջամտել է դատարանի թարգմանիչ Յովանջան Պետրոսեանը: Ամբողջ պատմութիւնն աւարտուել է նրանով, որ տէր Ստեփաննոսը դիմել է դատարան: Յօսէփին տուգանել են հազար ռուբլիով: Տէր Ստեփաննոսը գանգատուել է նաեւ ֆահանաներից: Յակոբ Տէր-Պետրոսեանն ասում է, որ ինքը ծածուկ ներողութիւն է խնդրել, բայց տէր Ստեփաննոսը չի ընդունում, ուզում է «յայտնի եւ գրով խնդրի»: Ինքը վախենում է կոմիսարից: Այդ իսկ պատճառով է այս նամակը գրում եւ խնդրում սբազանին միջամտել, որ տէր Ստեփաննոսն իրեն ների:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

4 Մնամ սրբազան տեառնդ միշտ խոնհար, հնազանդ ծառայ տէր Յակոբ Տէր-Պետրոսեան: 1797, յունվար[ի] վերջ, ի Կալկաթայ:


374
ԿՈՆԴԱԿ

թղթա. 6, վա. 131

ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Ղուկաս Ա. Կարնեցի կրղկս:

ԹԵՐԹ՝ 2 էջ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35,7x22: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուագիր (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 28:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1-2 «Յիսուսի քրիստոսի ծառայ տէր Ղուկաս կաթողիկոս եւ ծայրագոյն պատրիարք ամենայն Հայոց առաքելական եկեղեցւոյս Քրիստոսի, նաեւ լուսակերտի Մեծի Աթոռոյս Սրբոյ էջմիածնի... կատարողըդ հրամանաց մերոց եղիջիք օրհնեալք յԱստուծոյ եւ ի մէնջ եւ շնորհք սրբոյ իշման տեղւոյս Քրիստոսի ընդ ձեզ լիցի միշտ: Ամէն»: Ղուկաս կրղկսի 1797 թ. օգոստոսի 2ի կոնդակը Թիֆլիզի

Բեթղեհէմ կոչուող եկեղեցու հոգեւորականներին առ այն, որ Միսիթար ֆիյն, ով երկար տարիներ եղել է վերոյնշեալ եկեղեցու աւագերէցն ու տեսուչը, պարսից գորախմբի յարձակման ժամանակ եկեղեցու հարստութիւնների տեղը շասելու համար սպանուել է: Այժմ նրա փոխարէն աւագ երէց է կարգում վերջինիս որդուն՝ Ստեփաննոս ֆիյն: Պարսից խոտվութիւնների պատճառով կրղկս Ղուկասի փոխարէն Ստեփաննոս ֆիյն ընտրութեան հաստատման գիր է տուել տեղի առաջնորդ Դաւիթ վրդ-ը: Այժմ Ստեփաննոս ֆահանան, հասարակութեան եւ այլ եկեղեցիների աւագ ֆահանաների բազմակնիք «մահսերով», եկել է Սուրբ էջմիածին եւ ստացել կրղկսի կոնդակը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

2 Գրեցաւ ի թուականիս մերում ՌՄԽԶ (1797) եւ յօգոստոսի ԺԸ (18), ի բարձրագահ Աթոռ Սուրբ էջմիածին:

ՆՇՈՒՄ՝ 1 «Պատճէն»:

ՃՆՇԱԴՐՈՇՄ՝ 1 «ՓԱԲՐԻԿԱ ՇԵՐԴԵՅԱ № 4»:

375
ԳԻՐ ԱԶԱՏԱԿԱՆ
ԳԻՐ ՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ


թղթպ. 6, վաւ. 132աբ

[ՎՐԱՍՏԱՆ]

ԺԸ դար

ԹԱՐԳՄԱՆԻՉ՝ Ստեփան Բնյ Տէր-Սարգսեան (Ա, Բ, ԺԸ դ.): ՀԵՂԻՆԱԿ՝ իւզբաշի Դաւիթ (Ա, 1797 թ.), Գօգի (Բ, 1785 թ.): ՄՏԱՅՈՂ՝ Թամազ (Ա, 1797 թ.), Փարէմուզի որդի Դաւիթ (Բ, 1785 թ.):

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուրք: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35,6x-22,9: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 16+3 (Ա), 21(Բ):



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 1ա «Ես՝ Թաղի որդի Թէմուրազի որդի ուզբաշի Դաւիթս սոյն ազատական եւ անձնազերծական գիր ետու քեզ իմ գնեալ ճորդիթ Թամազիդ... Աստուած ձեռնատու լիցի ձեզ, ում մօտ կամէամք առ նմա երթայցէք»: Իւզբաշի Դաւիթն ազատման գիր է տալիս իր նորա Թամազին եւ նրա որդիներին՝ Պապին եւ Ստեփանին, ըստ որի վերջիններս լիովին ազատ են եւ ո՛չ ինքը, ո՛չ նրա որդիները «ձեզ մօտ պարոն եւ ճորտութեամբ բան ոչ ինչ ունեմք»:

Բ. 1բ «Կամաւ եւ [յ]օժարութեամբն Աստծոյ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, հրեշտակապետօք, երկոտասան առաքելոց բերանովք եւ օժանդակութեան այս վաճառութեան գիր գրեցի... եւ թէ այլ ոք դաւ արասցէ, դէմ յանդիման, պատասխանատուն ես՝ Գօգիս լինիմ»: Թաղի որդի Գօգին իր սեփա-

կան նորտերին՝ Ջանօյի որդի Թամազին, նրա որդի Գօգիին, Պապային եւ Պէպանին վաճառում է իր ֆեոտորի Փարէմուզի որդի Դաւիթին: Գրում է, որ գինն ամբողջութեամբ ստացել է:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

- 1. 1ա Յապրիլի 1, թուին 1797 (կնիքի տեղի նշումով, փակագծում գրուած՝ բարդ):
- 2. 1բ Գրեցաւ յապրիլի 24, թուին 1785 (կնիքի տեղի նշումով՝ կնիք):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա, 1բ (ԺԸ դ., կրկնուած,) Ի վրաց բարբառ գրութենէ ի հայ բարբառ համաձայն թարգմանեցի՝ տէր Ստեփան Տէր-Սարգսեան:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Ա. 1. 1ա ես՝ թաւիլդար Փարսադանս գրեալ եմ Դաւթի խօսքով եւ ընդունելութեամբ:

2. 1ա ես՝ Թէմուրս Թախդի որդի Դաւթի խօսքով վկայ եմ (փակագծում գրուած՝ բարդ):

3. 1ա Քաւթարի որդի նազիր Գօգի Դաւթի խօսքով այսու վկայեմ (կնիքի տեղի նշումով՝ կնիք):

Բ. 3. 1բ է սորա վկայն նախ՝ Աստուած եւ ի մարդկանէ՝ Քաւթարի որդի Նիկօլօզն (կնիքի տեղի նշումով՝ կնիք), եւ Դաւիթ՝ Նամզլէի որդին (կնիքի տեղի նշումով՝ կնիք), եւ մեր ազգական Թէմուր եւ Դաւիթն, Ասրէանն իւր փեսայ, եւ Ագաթօյի որդի Դիմետարին, եւ Դապախմէլէցի Յարութիւնի որդի Գաբրիէն, եւ ես՝ Աղասի Դօրդանի որդիս գրեալ եմ Գօգիին իւր մօր խօսքով եւ վկայ եւս եմ:

ՆՇՈՒՄ՝ 1ա, 1բ «Օրինակ»:

376
ՀՐԱՄԱՆԱԳԻՐ


թղթպ. 6, վաւ. 133

ԺԹ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ կայսր Պաւել Ա (1797 թ.):

ԹԵՐԹ՝ 4 էջ (էջակալուած՝ 1-2՝ հաշուի շաւնէրով չգրուած էջերը). չգրուած՝ 3-4: ՆԻԻԹ՝ կապոյտ թուրք. լուսագծերով, լուսագրերով՝ «Я М В С Я»,

«1800» լուսապատկերով՝ թագապսակ զինանշան, ներսում՝ տապարն ուսին արջ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 34,5x21,4: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1): ՏՈՂ՝ 42:



Նմուշ 1

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ներքեի եզրերը մաշուած եւ գունաւորուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1-2 «Указъ его императорскаго величества, самодержца всероссійскаго изъ астраханскаго губернскаго правленія... дать знать и правительствующему сенату отъ

рапортовать»: Աստրախանի նահանգային կառավարութիւնը 1797 թ. մարտի 28ին տեղեկացնում է, որ կայսեր հրամանով Աստրախանի հայերին առեսարային արտօնութիւններ է տրուել: Ըստ այդ արտօնութիւնների՝ հայերին թոյլատրուում է հարկերը վճարել ըստ հարկային կանոնադրութեան, ի տարբերութիւն այլազգիների, չպէտք է հայերին պարտադրել գրանցուել ռուս առեսարականների դասին, հայերին տրուում են նաեւ որոշակի դատական արտօնութիւններ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

2 Марта 28²⁰ дня 1797²⁰ года. Подлинной подписалъ Марко Малинскій, сверилъ секретарь Александръ Осиповъ.

377


ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

թղթպ. 6, վաւ. 134

ԺԸ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ կայսր Պաւել Ա. (1797 թ.): ՍՏԱՅՈՂ՝ բարոն Վասիլեւ (1797 թ.):

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ կապտատուն թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «Н X», «I III»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33,9x22,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 21:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «Господинъ тайный советникъ и госу-

дарственный казначей баронъ Васильевъ – Согласно съ требаваніемъ армянскаго архимандрита... пребываемъ въ прочемъ вамъ благосклонный»: Կայսր Պաւելի 1797 թ. նոյեմբերի 28ի հրահանգը գանձապահ Վասիլեւին, Գրիգոր վրդ-ի խնդրանքի համաձայն, տալ 25 հազար ռուբլի գումար՝ Գրիգորի աջակցութեամբ եկեղեցի կառուցելու նպատակով: Գումարի պատասխանատուն Գրիգոր վրդ-ն է, նա պարտատրուում է այդ գումարով իրականացնել եկեղեցու կառուցումը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1ա На подлинномъ подписано собственномъ его императорскаго величества рукой тако: Павелъ. В Санктъ Петербург, ноября 28²⁰ дня, 1797 года.

ՆՇՈՒՄ՝ 1ա «Копія»:

378

ԽՆԴՐԱԳԻՐ


թղթպ. 6, վաւ. 135

ՌՄԽԲ-1797

ՀԵՂԻՆԱԿ՝ եգոր Մելիքով: ՍՏԱՅՈՂ՝ Պաւել Ա. կայսր:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսա-

գծերով, լուսագրով՝ «К Ф», «LJ»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 32,2x21,2: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ ռուսերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 22:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. գրադաշար տեղ-տեղ գու-նափոխուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Всемиловитвѣишій государь – Все-подданнѣише, дерзаю припасть къ стопамъ вашего императорскаго высочества... же-

лаю продолжать службу и въ коей до изхода дней моихъ пребыть потягусь»: եգոր Մելիքովի խնդրագիրը կայսերն ուղղուած, որով յայտնում է, որ ինքն օտարերկրացի է, սերում է հայկական ազնուական ընտանիքից եւ ունի դա հաստատող վկայական: Խնդրում է իրեն թոյլ տալ մինչեւ կեանքի վերջը ծառայել լեյբ-գուսարական գնդում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա *Всемиловитвѣишій государь! Вашего императорскаго высочества! Всенижаншій и всеусерднѣишій: дворянинъ Егоръ Меликовъ. Июля дня 1797.²⁰ года.*

379

ՊԱՐՏԱԻՈՐԱԳԻՐ


թղթւ. 6, վաւ. 136

ՇԻՐԱԶ (ՊԱՐՍԿԱՍՏԱՆ)

ՌՄԼԷ-1788

ՀԵՂԻՆԱԿ՝ Փարսադան: ՍՍԱՅՈՂ՝ Գաբրիէլ:

ԹԵՐԹ՝ 2 (էջակարուած 1՝ հաշուի շտանդով չգրուած էջերը). չգրուած 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «ԱԳ», լուսապատկերով՝ երեք սնկանման պատկեր: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 30,5x-21,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր, վրագերէն (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 31:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նորոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Զօրութիւն գրոյս այս է, որ ես՝ Գօրեցի Մեծուղենի հօսուրովի որդի Փարսադանս սարմայեայ վեռի Յիսիվանէցի Մուրադէնց որդորմած հոգի Յարութիւնի որդի սահապ աղայ Գաբր[ի]էիցն ջամնայ... էս գիրս ես՝ Փարսադանս գրել տվի, ներքոյ ձեռ գրի, տվի իմ սահապ աղայ Գաբրէլ Յարութիւնին. վերոյ գրեալն ինձ՝ Փարսադանս հօսուրովիս ընդունելիայ»: Գօրեցի հոսորովի որդի Փարսադանը սահապ աղայ Գաբրիէլից վերցնում է 2933

«դանայ ըռուփի եւ մին թուղթ ըռուփի», որ գնայ «Հնդստան՝ Մադրաս եւ Մուլիբանդար թուշարաթ» առնի, ապա վերադառնայ Բուշեռ: Փարսադանը պարտատուում է ստացած եկամտուներից մասնաբաժին տալ Գաբրիէլին: Երբ սահապ աղայ Գաբրիէլը «օրդնի» գրի Հնդկաստանի երկրներ Բուշեռ կամ Շիրազ, որ էլ ինքը լինի. «իմ սահապ աղայ Գաբրէլի օրդնայ գիրն գոյ»: Յատկում է, որ միայն Բուշեռ եւ Շիրազ, Մադրաս եւ Մուլիբանդար կարող է գնալ. այս 4 տեղից բացի ուրիշ ոչ մի տեղ գնալու «օրդնի» չունի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա եղեւ Շիրազ, թիվն ԱՌԲՃԼԷ (1788), նոյեմբերի մէկումն:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

- 1ա Շիրազու ք[ա]հանայ Ոհանի որդի տէր ԸՍտէփանս պարոն Փարսադանս հօսուրովի յեղրարովն գրեցի, վկայեմ:
- 1ա Վերոյ պարոն Փարսադանի եղրարովն գրեցի եւ վկայեմ՝ Ղազար Բաղդասարեանս:
- 1ա Պարոն Փարսադանս հօսուրովի եղրարովն Ղազար Գորգինս վկայեմ:
- 1ա Պարոն Փարսադանս հօսուրովի եղրարովն՝ Յակոբ Յարութիւնս գրեցի եւ վկայեմ:
- 1ա Պարոն Փարսադանի եղրարովն վկայեմ՝ Բաղդասար գի Ուսէբ:
- 1ա ես՝ Թիֆլիզեցի Մօզնու միաբան տէր Գէ-

վորքս Փարսադանի ղաբուլութեամբն վկայ[յ]եմ.
մոհր շունէի խաշ քաշեցի (կողբին խաշ):

7-9. 1ա վրացերէն:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՏԷՐ ՍՏԵՓ/ԱՆՈՍ ԹԻԻ/Ն ՌՄԺԸ (1770)»: 2. 1ա (սեւ քանաֆով, ֆառնկին) «ՔՐԻՍՏՈՍ-

ՍԻ ԾԱՌԱՅ /ՂԱԶԱՐ /ԹԻՎ 7՝63»: 3. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /Յ///»: 4. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ԲԱՂԳԱՍԱՐ»: 5. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին՝ ներսում զարդապատկեր): 6. 1ա (սեւ քանաֆով, ֆառանկին, արաբատառ): 7. 1ա (սեւ քանաֆով, ձուածեւ, վրացերէն): 8. 1ա (սեւ քանաֆով, ուրանկին՝ ներսում ձի):

380

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ

թղթպ. 6, վաւ. 137


ԿԱՐՍ

ՌՄԽԵ-1796

ԳՐԻՉ՝ Գրիգոր ճօրօղ:

ԹԵՐԹ՝ 2 (առանց էջակալման). չգրուած՝ 1ա, 2ա: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսադրոշմով՝ «FC», լուսապատկերով՝ եռամահիկ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 46x31: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ նոսր-գիր (նմուշ՝ 1բ): ՏՈՂ՝ 52-55:

նվաստ Գրիգորս գրեցի,
որ մականվամբ ճօրօղ ասի,
վասն սիրոյ քահանայ[յ]ի.
իւր հարազատ որդիեակի,
որ տէր Խաչատուր ասացի,
վարձս մեկ հոգոց հայցեցի:



նմուշ 1բ

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ծալֆեր մաշուած, հին նո-րոգմամբ:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1բ «Հրոտից ի ԺԹ (19) եւ յո[ւ]լիսի ԻԵ (25) նահատակութեան երանելոյն տէր Սարգիս ֆահանայ[յ]ին, որ է Յօհան Վարդապետեան – երանելի մարտիրոսս այս տէր Սարգիս էր ի քաղաքէն Կարսայ[յ] եւ էր ի դամբ քահանայ[յ]իցն մի որդի կարգաւ[ւ]որի, որ կոչի Օհան վարդապետ... Յիշատակն օրհնութեամբ եղիցի եւ Քրիստոսի փառք յավիտեանս. ամէն»: Սարգիս ֆհյի 1796 թ. տանիկների կողմից տանջուելու եւ նահատակուելու պատմութիւնն է: Ըստ պատմութեան՝ նրա մահուան տեղում անմիջապէս աստուածային լոյս է իջել, իսկ թափուած արիւնով հաշմանդամներ են բուժուել: Քրիստոնեաները նրա մարմինը տանիկներից կաշառով առնում եւ տանում թաղում են Սուրբ Աստուածածին եկեղեցում:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1. 1բ Կատարեցաւ սուրբ վկայն քրիստոսի տէր Սարգիսս ի թվոշս Հայկազունոցս ՌՄԽԵ (1796) ին, ամս<ա> եանն յո[ւ]լիսի ԻԵ (25)ին, Պայճառակերպութեան պահոց ուրբաթի օրն: Աղաչեմ զձեզ, եղբայրք, շինի թէ երկմտիք ասէք, թէ վերադիր է ճշմարիտ եղեալ բանէ եւ չէ շատ առ գթութիւն եւ ողորմութիւն մարդասէր կամացն Աստուծոյ... Քրիստոս Աստված, բարեխօսութեամբ սրբո[ւ]լ քահանայ[յ]իս, ողորմեայ ամենայն հավատացեալ քրիստոնէից եւ մանավանդ մեղապարտ գրչիս. եւ Քրիստոսի փառք յավիտեանս. ամէն:

2. 1բ Ի հայրապետութեան մեծի եւ գերագահ Միածնաէջ եւ լուսանկար Սրբոյ Արտոյն էջմիածնայ[յ] տեառն տեառն Ղուկասայ[յ] սրվափայլ եւ կենդանի նահատակ սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց... եւ ի պատրիարքութեան սրբոց տնօրինականաց տեղեացն ամենապայծառ սրբոյն Սաղիմայ[յ] տեառն Պետրոս աստուածաբան եւ զգօնազարդ վարդապետի, իսկ ի պատրիարքութեան մեծի Պօլտոյ եւ մայրաքաղաքի Բուզանդիոյ տեառն Զաֆարիայ ազգասէր գոշեալ վարդապետի եւ մերոյս Կարսայ[յ] առաջնորդ Ամլորոյ (այսինքն՝ Ամրոյ) վանիս տեառն տեառն Յօվհաննէս աս[տ]վածաբան, խոհեմազարդ եւ հանճարեղ քաշաքարոզ վարդապետի, սոցա աւուրս եղեւ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2ա Գիրս յիշատակ ասացի,

ՆՇՈՒՄ՝ 2ա «նվաստ Գրիգորս» (գրած-ջնջուած):


381
ՊԱՐՏԱՄՈՒՐ ՀԱԿ

թղթպ. 6, վառ. 138

ՌՄԽԶ-1797

ԳՐԱԳԻՐ՝ բազազ Աւետիս: ՀԵՂԻՆԱԿ՝ Յարու-
թիւն, Գեորգ: ՍՏԱՅՈՂ՝ տրց. Խաչատուր:

ԹԵՐԹ՝ 2 (Էջակարուած 1՝ հաշուի շառնելով
չգրուած էջերը). չգրուած՝ 1ա-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ.
լուսագծերով, լուսապատկերով՝ թագապսակ
ոճաւոր պատկեր՝ ներսում եռամանիկ: ՄԵԾՈՒ-
ԹԻԻՆ՝ 16,2x11,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝
նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 18:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1ա «է: Զօրութիւնն գրոյս այս է, որ եւ ի ՌՄԽԶ
(1797) թվին եւ ի մարդի քսաներկուսին... եւ թէ չը-
տամք մուգաղայ ածեմք, դիվանի ձըբեմք, դիւանին
բէշար լինիմք, համ հախն տէրն հասուցանիմք. այս
եղեւ մեր իրզարն»: Աբովի որդի Յարութիւնի եւ Մա-
թոսի որդի Գէորգի պարտամուտհակն է, ըստ որի՝
լուսարար Գրիգոր վրդ-ի ձեռնով, 10 թուման «գէ-
շար փող» են վերցրել բազարբաշի տրց. Խաչատու-
րից, 10ին 2 շահով, եւ պարտաւորում են մինչեւ
տարին լրանալը վերադարձնել:

ՎԿԱՅՈՒԹԻՆ

1ա ես՝ Յարութիւնի որդի բազազ Աւետիսըս
սոցին խօսիւքն գրեցի, վկայեմ Աստուծով:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. 1ա (երկիցս, սեւ թանափով, ուրան-
կին) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԱՊՈՎ»: 2. 1ա (սեւ թա-
նափով, ձուածեւ, արաբատառ): 3-4. 1ա մատնադրով:

382

ԳՐՈՒԹԻՆ


թղթպ. 6, վառ. 139

ՌՄԽ-1791

ԿԱԼԿԱԹԱ

ՀԵՂԻՆԱԿ՝ պրն Գրիգոր Առաքել[եան], պրն
Մովսէս Խ. Առաքելեան: ՍՏԱՅՈՂ՝ Դուկաս Ա. Կար-
նեցի կթղկս:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսա-
գրով՝ «VI»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 36,7x24,7: ԳՐՈՒԹԻԻՆ՝
միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 40:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. հին նոսրգմամբ:
ԻՍԿՈՒԹԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1աբ (սկզբից թերի) «//Ընդ յետ կնոջն, որ հրամա-
յեալ էիր եւէթ հնար ինչ լիցի... եւ հանապազ ցան-

կամք զառողջութենէ նազելի կենացդ հանդորրու-
թեամբ հանդերձ, զոր Տէր շնորհեսցէ հանապազ»:
Կալկաթայից պրն Գրիգոր Առաքելեանը եւ պրն
Մովսէս Խ. Առաքելեանը մի ամուսնական զոյգի
հաշտեցման մասին գրում են Դուկաս կթղկսին:
Տեղեկացնում են, որ այս հարցով դիմել են նաեւ
Եփրէմ վրդ-ին, Խաչիկ աղային եւ սահապ Գրիգո-
րին, որպէսզի իրենց վամֆի նուիրակ Յարութիւն
վրդ-ի հետ գրութիւն «տարեալ տայցեն զիւրն
եւ ջանայցեն գուցէ հնարիւք աղերսանօք, կամ
մի կամ միուս կերպիւ հաշտոյացուցանեն զերկու-
սեանն եւ ձգեսցեն հաշտութիւն ընդ մէջ առն եւ
ամուսին»: Գրութիւնները նախ՝ տուել են Խաչիկ
աղային, ապա՝ կնոջը, բայց նրանց հաշտեցնել
չի յաջողուել: Տեղեկացնում է, որ Եփրէմ վրդ-ը
տեղի գործերն աւարտելով՝ մեկնել է Մադրաս,
ապա՝ Սուրաթ եւ յետոյ՝ Սուրբ Աթոռ: Յայտնում
են նաեւ, որ, ինչպէս ասել էր վեհափառը, պրն
Ոհանէսը մնացել է Բասրայում եւ իրենց ուղարկել

1 Խորհրդատեար եւ 7 Ժամագիրք, ինչի համար շնորհակալ են:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. *1բ Ի Կալկաթայ, թուին ԱռէճՂԱ (1791), յուն-վարի ԺԲ (12)ումն: Սրբազ[ա]ն հեվիտ (այսինքն՝ վեհիտ) փոքր ծառայից ծառայ, տրտում՝ Գրիգոր Առաքել:*

2. *1բ Վեհափառութեանա խոնհար տրտմալից ծառայ՝ Մօսէս Խ. Առաքելեան:*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1բ (ԺԲ դ., նոտրգիր) Կալկաթայու Առաքելեան պարոն Գրիգորի եւ Խաչիկեան պարոն Մովսէսի ա[ռ] (Ղուկաս սրբազան կաթողիկոսն) գրեալ թուղթն է ի թուին Փրկչի 1791, յունվարի 12, յո-

րում ընդ այլեայլ բա[նա] գոյ նաեւ երկարապէս ծանուցումն վասն Սուրաթու աղայ Յօհանջանի Յակոբ[եան] յիշատակ դրամոցն յանուն Սրբոյ Աթոռոյս, զոր յիշեալ պարոն Խաչիկն, որ է եղբայր Գրիգորին եւ հայր Մովսէսին, ընդ խնդրոյ աղայ Յօհանջանին զայն դրամսն եղեալ է ի Կալկաթա յինկլիզաց կունբանումն վախմ Սրբոյ Աթոռոյս եւ սանատ առեալ ի կունբանիցն, եւ ինքեանք հինգ անձինք վաքիլ են կարգեցեալ, որք մինչեւ ի յիսուն տարի ամ ըստ ամէ զայն դրամոց մուտաթն առեալ՝ հասուցանեն Սրբոյ Աթոռոյս. եւ այլն ի միջոց թղթոյս է իմանալի: Եւ վասն այս բանիս՝ պահելի է թուղթս ընդ աղայ Յօհանջանի ձեռագիր կտակին:

Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 254, 257, Յիշատակագրութիւն Յետագայի:

383

ԿՈՆԴԱԿ


թղթպ. 6, վա. 140

ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՌՄԼԵ-1786

Հեղինակ՝ Յովակիմ պատրիարք: ՍՍԱՅՈՂ՝ Կարապետ:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 32,2x21,7: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին: ԳԻՐ՝ տպագիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 31:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ – ԹՆՆԱԳԻՐ՝ 1ա: Գոյնե՛ր՝ մոխրագոյն, դեղին, կանաչ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, տպագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա «է: Ի սուրբ եւ փառաւորեալ, աստուածազարդ եւ մեծապայծառ սրբոյ քաղաքէս Երուսա-

ղէմէ... Եւ որքան ժամք եւ պատարագք մատչին ի Սուրբ Աթոռս Քրիստոսի, յայնմ ամենայնէ քեզ եւ քո ննջեցելոցն մասն եւ բաժին եղիցի՛. ամէն»: Երուսաղէմի Յովակիմ պատրիարքի կոնդակը՝ ուղղուած Կարապետին (ջնջած-գրած՝ Խաչոյ)՝ 1 ղուտուշ լուսագին նուիրաբերելու համար, որն իրենց է հասել տէր Յակոբի ձեռքով:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Ընծայեցաւ օրհնութեան կոնտակս ի սրբոյ քաղաքէս Երուսաղէմէ եւ Սրբոց Յակոբեանց գերագահ աթոռոյս ամենայն Հայոց, ի թուին ՌՄԼԵ (1786), յապրիլի ԺԲ (12)ին:

ՀԱՍՅԷ

1բ Բարեպաշտօն Կարապետին (ջնջած-գրած՝ Խաչօի) հասցէ օրհնութեան կոնտակս. ձ[եռ]ս Շատ[ա] խ[ե]ցի տէր Յակոբին:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (կարմիր քանաֆով, բոլորձեւ) «ԿՆԻՔՍ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՈՉ ՊԱՐՏՈՒՅ ԱՅԼ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ»:

384

ՔԱՐՈՉ

թղթպ. 6, վա. 141


[ՆՈՐ] ՆԱԽԻՋԵՒԱՆ

ՌՄԼԹ-1790

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրերով՝ «ЯМБСЯ», «1789»,

լուսապատկերով՝ պատուանդանին կանգնած արջ, ուսին՝ տապար, գլխավերեում՝ թագ: ՄԵ-

ԾՈՒԹԻՒՆ՝ 31,7x20,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսին: ԳԻՐ՝ հայերէն, ռուսերէն (նմուշ 2ա): ՏՈՂ՝ 20-24:



Նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ծալփերը նորոգուած:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, տպագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. 2աբ «Յիշատակութիւն պանծալի անուանն պայծառափայլ ֆնեազ յասկեղ բարերարին մերոյ: Քրիստոսական եկեղեցին այժմ բարեհաշ կամօք ընկալաւ յիշել զանուն ձերոյ պայծառափայլութեան՝ դարձուցանելով փրկողիդ իւրոյ զարժանատւ պարտաւ – Քարոզ: Սարկաւազն ասասցէ... Ընդ հովանեաւ երկնահանգէտ վանիցն, որ յանունն

սրբոյն Գրիգորի Լուսաւորչին կառուցեալ»: Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինի յաջողութիւններին ու յաղթութիւններին նուիրուած կրօնական փարոզ-բարեմաղթանքի տպագիր օրինակն է:

Բ. 2աբ Բովանդակութիւն Ա.ի ռուսերէն թարգմանութիւնն է:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2բ Յամի Տեառն 1790, յունիսի 12: Ի Նախիջեւան:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 1. 2ա (սեւ թանափով, տպագիր. վերետւմ՝ Ռուսական կայսրութեան զինանշան երկգլխանի արծիւը, ներքեւում՝ իսաչակիր թագ, ձախ կողմում՝ բանալին ձեռքին առիւծ, աջում՝ թուրը ճիւղաներում արծիւ): 2. 2բ (սեւ թանափով, տպագիր. երկու կողմերից վահանը բռնած առիւծներ, որի վրայ՝ Հայոց թագաւորական զինանշանները, վերետւմ՝ մակագրութեամբ) «ՆՇ(Ա)ՆՔ ԹԱԳԱՒՐԱՅՆ ՀԱՅՈՅ»:

ՆՇՈՒՄ՝ 1ա «1781, ապրել 21: ՌՄԻէ (1778)»:

385

ԳՈՅՔԱՅՈՒՑԱԿ

թղթա. 6, վաւ. 142

ՄՕՂՆՈՒ ՍՈՒՐԲԻ ԳԷՈՐԳ

ՌՄԻԱ.-1792


ԳՐԻԶ՝ Դանիել վրդ.: ՄՍԱՅՈՂ՝ Կարապետ վրդ. Արաբկիրցի:

վրդ.-ի հաշուառած Մօղնու Սբ. Գէորգ վանքի ունեցուածքի ցուցակն է, որն ընդունում է նոր վանա-հայր նշանակուած Կարապետ վրդ. Արաբկիրցին:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2աբ: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «OLANDA», լուսապատկերով՝ թագակիր ռնատր զինանշան, ներսում՝ եղջերափառք, վերետւմ վեցաթեւ աստղ, ներքեւում «GB» մակագրութիւն: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 36x23,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսին: ԳԻՐ՝ նոտրաման բոլորգիր (նմուշ 1ա): ՏՈՂ՝ 58+8:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Ի ՌՄԻԱ (1792) թուին եւ յամսեանն հոգատեմբերի ԻԶ (26)ին գերընտիր տէրն մեր սրբազան վեհապետըն կարգեաց առաջնորդ Մօղնու Սուրբ Գէորգայ վանիցն զԿարապետ վարդապետն Արապկերցի, եւ զբոլոր ինչքն սրբոյ վանից թէ՛ եկեղեցական եւ թէ՛ արտաքսական, գրեցաք աստէն եւ յանձնեցաք, հրամանաւ սրբազան վեհապետին, վերոյ յիշեալ առաջնորդ Կարապետ վարդապետին:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերը եւ ծալփերը նորոգուած, խոնաւութեան հետքեր:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1աբ «Եկեղեցական անօթքն են սոքա... Ա (1) խուրճին մազէ»: 1792 թ. հոկտեմբերի 26ին Դանիել

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

1բ Հրամանաւ մեծի տեառն մերոյ սրբազան վեհապետին ի վերոյ գրեալ թուոջն եւ՝ Սրբոյ էջմիածնի միաբան Արապկերցի Կարապետ վարդապետս մինչ կարգեցայ առաջնորդ Սրբոյն Գէորգայ վանիցն, ի մէջ դաւթարիս ինչքն մի ըստ միողէ յանձնեցաւ ինձ ձեռամբ Դանիել վարդապետին, վասնորոյ զայս դավթարս կնքեցի եւ յանձնեցի սրբազան

վեհապետին, եւ զսորին օրինակն Դանիէլ վարդապետն կնքեաց եւ ետ ինձ, զի պահեցից վասն աւուր հաշուառութեան պիտոյանալոյն:

ԿՆՔԱԴՐՈՇՄ 1բ (սե քանափով, ռճատր քառակոսի) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ /1224(1775)»:


386
ՊԱՐՏԱՄՈՒՐ ՀԱԿ

թղթայ. 6, վա. 143

[ՀԱՂՊԱՏ]

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 2 (էջակալուած 1՝ հաշուի շառնելով չգրուած էջերը). չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «ՄՕՓԵԵ», «1816»: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,3x22,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ 1ա): ՏՈՂ՝ 25:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Վերառի ես՝ Հաղբատայ առաջնորդ Դաւիթ վարդապետս ի յՈւմիկանց Յօհաննի որդի Յարութիւնէդ... Այս թամասուքի գլխուն եւ շահն լման էհաս ինձ՝ Ումիկեան Թարսուլիս»: 1792 թ. հոկտեմբերին գրուած ստացականի օրինակն է այն մասին, որ Հաղպատի առաջնորդ Դաւիթ վրդը Ումիկեան Յօհաննի որդի Յարութիւնից 17 թուման պարտ է վերցնում եւ պարտատուում է որպէս տոկոս պարտատիրոջը ամսական յանձնել 8 արսախ՝ «Հախբատայ դուքաներիցն... լէհնչի եղիգարի» երկու «դուքանների» ամսավճարն այնքան ժամանակ, քանի դեռ պարտքը չի վերադարձել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՕՐԻՆԱԿԻ

1ա Գրեցաւ հոգտեմբերի մուտն ԹՄԽԵ (1792) թուին:

ՎԿԱՅՈՒԹԻԻՆ

1. 1ա Ձայս ձեռամբ իմով գրեալ եմ եւ վերառնողն եւս եմ (կնքատեղին օղակ):
2. 1ա Հախբատայ միաբան Յարութիւն վարդապետս վկայ կնքեցի (կնքատեղին օղակ):
3. 1ա Բեթլէհէմու աւագ քահանայ տէր Մխիթարս վկայ գոլով կնքեցի (կնքատեղին օղակ):
4. 1ա Վարդապետի բանին սոյն գրիս վկայ եմ: Բերդի մեծ եկեղեցոյ սպասաւոր՝ տէր Առաքել (կնքատեղին օղակ):

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1. 1ա (նտարգիր) Այս թամասուքիս գլխուն մէկ թուման ետու թուին ԹՄԽԵ (1796)ին ի մայիսի Ը (8)ին:
2. 1ա (նտարգիր) Այս թամասուքիս գլխուն Յարութիւնին տասն թուման ետու, որոյ կէսն կանէ հինգ թուման, որ մնայ Յարութիւնինն սոյն թամասուքիս վեց թուման զայս տասն թումանն նորին բարձր սրբազնութիւն Սարգիս առաջնորդն ի Կախէթու ինձ մօտ էր ուղարկել եւ զայն դրամն ետու յունիսի մուտն ԹՄԽԹ (1800) թուին: Աղայ որդի Եսայաց Փիթոյեան:
3. 1ա (ԺԹ դ., նտարգիր) Այս թամասուքիս գլխուն եւ շահն լման էհաս ինձ՝ Ումիկեան Թարսուլիս:

387

ՕՐԻՆԱԿԲ ԳՐՈՒԹԵԱՆՅ

ՎԿԱՅԱԿԱՆ

թղթայ. 6, վա. 144-162


ՎԱԻԵՐԱԳԻՐ Ա

ՕՐԻՆԱԿԲ ԳՐՈՒԹԵԱՆՅ

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ]

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 18: ՆԻԻԹ՝ թուղթ: ՊՐԱԿ՝ Ա-Բ (Ա՝ 4, Բ՝ 14): ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 35,9x22,9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ 2ա): ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 32-37:



Նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

Մնթ. Նախնական հաշտառման ժամանակ իւրաքանչիւր օրինակին տրուած է եղել առանձին գոյհահամար: Այդ համարները Բովանդակութիւնում արտայայտել ենք փակագծերի մէջ:

ԲՈՎԱՆԻ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարունակում է 1797-1801 թթ. *Ղուկաս Կարնեցի* կրթկտի եւ այլ գրութիւններ.

1. *1ա* (գրած-ընշած) *///գաւորաց ձերոց աթոռակալաց շնորհ ունիցիք յատկապէս ի վերայ քահանայապետական աթոռոյս ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնի, որ յԱրարատ... Խոնարհ ծառայք եւ աղօթարարք արքեպիսկոպոսք սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի Սրբոյ Էջմիածնի՝ Բարսեղ արքեպիսկոպոս, Յովակիմ արքեպիսկոպոս, Սիմէօն արքեպիսկոպոս, Անդրէաս արքեպիսկոպոս, Ալէքսան արքեպիսկոպոս, Յովհաննէս արքեպիսկոպոս, Ներսէս արքեպիսկոպոս: 1809 ապրիլի 25, ի Սուրբ Էջմիածին:*

2. (№ 144) *ա. 1աբ Մեծի կայսերն Պաւել Պետրովիչի: Թուղթ ի Մոսկով առ Պլատոն արեպիսկոպոսն. վասն սիրոյ՝ հանդերձ ազդարարութեամբ աղէտիցն մերոց եւ յանձնարարութեամբ Յովսէփ արեպիսկոպոսին – Յիսուսի Քրիստոսի ծառայտէր Ղուկաս կաթողիկոս ամենայն Հայոց քրիստոսական եւ առաքելահաստատ եկեղեցւոյս Քրիստոսի եւ ծայրագոյն պատրիարզ լուսանկար Աթոռոյս Սուրբ Էջմիածնի... Գրեցաւ յամի Տեառն 1797 եւ ի յուլիսի (տեղը բաց), ի լուսանկար Աթոռն Սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան:*

բ. 1բ Սիրով մեծաւ ողջոյն տամք համայնից ընդ ձեռամբ քով եղելոց սրբազան մետրապօլտաց, շնորհազարդ եպիսկոպոսաց, իմաստապետք վարդապետաց եւ առաքինազարդ կարգաւորաց, որք ամենեքեան [հան]դերձ գերապատ[ո]ւելութեանդ կացցին ողջ եւ բարեզուարճ յանձնեցեալք ի պահպանութիւն աշոյն Տեառն ամենակալի:

3. (№ 145) *2ա Թուղթ ի Պետրպօլք առ Գաբրիէլ արեպիսկոպոսն. նման վերին թղթոյդ, սակաւ ինչ զանազան: Տեառնդ Գաբրիէլի – Յորմէ քրիստոսապատուէր սիրով հոգեկանաւ եւ սրտատրոփ կարօտիւ սրտի եւ ջերմեռանդն փափագանօք եղբայրութեան նուիրեսցի փրկչաւանդ միարարն ողջոյն գերապատ[ո]ւելի եղբօր իմոյ հոգւոյս ցանկալւոյ... Ի դռն կայսերական ի ներկայանալն ի հանդիսի վեհանձնութեան ձերոյ առաջնով խնամովդ ընկալցիս:*

4. (№ 146) *2աբ Մեծի արեպիսկոպոս Էրեակլայ: Թուղթ առ Հերակլ արեպիսկոպոսն. ի պատասխանի թղթոյն 26 - ՅՈՒՑԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՒԱՆԻ*

վասն բարձման աշխարհաւեր ներքինի աղա[յ] Մաննատ խանին – *Յորմէ սիրով եւ կարօտիւ սրտի եւ անձկութեամբ հոգւոյ ժամանիսցէ քրիստոսածիր ողջոյն եւ օրհնութիւն բարձրապատիւ սիրելւոյդ մերոյ գերաբաղձալւոյ... Գրեցաւ յամի Տեառն 1797 եւ ի յունիսի 30, ի Սուրբ Աթոռս Էջմիածին:*

5. (№ 147) *2բ-3ա Թուղթ առ կաթողիկոսն Սաայ, որ յաշխարհին Կիլիկիոյ. ի պատասխանի թղթոյն, գոր ձեռամբ Կեսարիոյ Սուրբ Կարապետի վանացն միաբանից Ստեփաննոս եւ Կարապետ վարդապետացն գրեալ էր սրբազանն՝ սէր եւ յարգութիւն ընծայելով Սրբոյ Աթոռոյս եւ սրբազան հայրապետին եւ զաջահամբոյրս յղեալ: Ուստի եւ ընդ թղթոյս առաւեցաւ նմա փիլոն եւ մատանի, եւ գրեցան բանք սիրայորդորք, որպէս տեսանին ի ստորեւ – *Յորմէ ճշմարիտ սիրով եւ հոգեբաղձ կարօտիւ ժամանիսցէ քրիստոսածիր ողջոյնն միարար պատ[ո]ւականի եւ հարազատի սիրելւոյդ մերուն եւ սրբոյ զահիս հաւատարիմ բարեկամի՝ իմաստիւք աճեցելոյ եւ շնորհօք ճոխացելոյ տեսնող Կիրակոսի վսեմամիտ եւ սրբասէր կաթողիկոսի աստուածախնամ աշխարհիդ Կիլիկիոյ... Գրեցաւ յամի Տեառն 1798 եւ ի փետրուարի 24, ի Սուրբ Աթոռս Էջմիածին:**

6. (№ 148) *3բ-4ա Գիօրկի նորապետն արեպիսկոպոսն: Թուղթ առ նոր արեպիսկոպոս վրաց Գիօրկի. միաբարութիւն վասն մահուան հօրն իւրոյ՝ Հերակլ արեպիսկոպոսն եւ շնորհակալութիւնք իւրոյ տիրապետութեան: Եւ բանն առ այն, որ յաղագս հիւանդութեանց երկրին զսուրբ գեղարդն խնդրեալ էր, այլ զսրբոյն Յակովբայ հայրապետի աջն առաւեցաւ՝ ձեռամբ Ալէքսիանոս եպիսկոպոսին – *Յորմէ ժամանիսցէ թուղթ քրիստոսածիր ողջունի եւ սիրոյ եւ մխիթարութեան՝ հանդերձ հոգեզուարճ շնորհիւ սրբոյ իջման տեղոյս Նորին... Գրեցաւ յամի Տեառն 1798 եւ յապրիլի 21, ի Սուրբ Աթոռս Էջմիածին:**

7. (№ 149) *ա. 4ա-6բ Թուղթ ի Հնդկիկա առ ն[ո]վիբակն մեր Յակովբ վարդապետն. յիշատակութիւն անցիձն երկրիս եւ կրիցն մերոց եւ համառօտ պատասխանատուութիւնք բանից թղթոց նորա ի Բասրայու եւ ի Բուսբայու գրելոց – *Յորմէ հայրական սիրով առատագունիւ եւ լիալիր օրհնութեամբ եւ խաղաղաւէտ ողջունիւն քրիստոսեան եւ Սրբոյ իջման տեղոյս Նորին մեծազօր եւ պահպանողական շնորհիւ գիտաստիքի սիրելի եւ հոգեւոր որդիդ մեր՝ հարազատ եւ աշխատակիր զաւակ Սրբոյ Աթոռոյս Յակովբոս աստուածիմաստ վարդապետ... Գրեցաւ յամի Տեառն 1798 եւ ի մայիսի 14, ի Սուրբ Աթոռս Էջմիածին:**

բ. 7ա Ողջոյն եւ օրհնութիւն տամք հոգեւոր որդ-

ւոյն մերոյ եւ քոյ՝ Վրթանէս խոհեմամիտ վարդապետին եւ Յովնաննէս դպրին եւ այլոց, որք առ ձեզ իցեն՝ յանձն առնելով խնամոցն Աստուծոյ:

Թուղթս երկու գրեցաւ. առաջինս այս ի վերա[յ] Վանայ յղեցաւ եւ երկրորդն ի վերա[յ] Կոստանդնուպօլսոյ՝ հանդերձ Բոսրայու թղթովքն շնորհակալութեանց:

(Ի լուսանցն) Սիրելեաց մերոց եւ հարազատ որդւոց Սրբոյ Աթոռոյս սրբանուէր քահանայից, ազնուամիտ իշխանաց եւ համայն օրհնեալ ժողովրդեան աստուածապահ քաղաքիդ սիրով մեծաողջոյն եւ օրհնութիւն առաքիմք՝ յանձնելով զամենեսեան ի խնամս եւ ի բարեգթութիւնս Տեառն ամենակալի, մնալ խաղաղութեամբ ի բարօրութեան:

8. (№ 150) 7աբ Մեծագօր կայսրն հանդերձ կայսերունիսն եւ կայսերածին որդւովքն եւ համայն թագազարդ ժառանգօքն – Թուղթ սիրոյ եւ բարեկամութեան առ Հաշարխանու Պլատօն եպիսկոպոսն Ռուստաց, շնորհակալութիւն վասն սիրոյն առ Յովսէփ եպիսկոպոսն մեր եւ առ ազգս, եւ յանձնարարութիւն վասն նոցա եւ նոր նուիրակին, որ առաքեցաւ... Գրեցաւ յամի Տեառն 1798 եւ ի լուսանկար Աթոռս ամենայն Հայոց ի Սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան:

9. (№ 151) ա. 7բ-8բ Թուղթ ի Հնդկիս ի Կալկաթա առ աղայ Մովսէսն հաշիկեան. յիշումն վասն յառաջագոյն քան իցա գրեալ թղթոցն մերոց, եւ յինքննէ գիր ինչ ոչ ընկալնլոյն, եւ շնորհակալութիւն վասն բարեկատրեանցն ցուցելոց առ Յակովբ վարդապետն, եւ բան յաղագս անկարգութեանց Ստեփան զերիցուն Թիֆլիզեցոյ – Յորմէ ժամանեցէ թուղթ ճշմարիտ սիրոյ քրիստոսաւանդ սուրբ ողջունի եւ հոգեւոր օրհնութեան հանդերձ առատածաւալ շնորհիւ սրբոյ տեղւոյս իշման բանին Միածնի, ի վերա[յ] իսկապէս սիրելոյդ մերոյ եւ հաւատարիմ որդւոյդ Սրբոյ Աթոռոյս՝ Քրիստոսիւ զօրացեալ բարեպաշտօն ազնուական եւ ճոխապատիւ աղայ Մովսէսիդ հաշիկեան... Գրեցաւ ի թուականի Փրկչին 1799 եւ յապրիլի (տեղը բաց), ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին:

բ. 8բ Բազմաւ սիրով եւ սրբոյ իշման տեղւոյս Քրիստոսի շնորհիւն ողջոյն եւ օրհնութիւն տամք հօրեղբօր քոյ եւ սիրելոյն մերոյ քրիստոսասէր աղայ Գրիգորին եւ բարեպաշտուհի մօր քոյ՝ զգաստամիտ Բէկում խաթունին, եւ եղբօր քոյ՝ բարեշառաւիղ Յովնաննէս աղային, եւ կողակցին քոյ՝ համեստազարդ Հովսէփով տիկնոջն, եւ նորաբողբոջ որդւոյն ձեռոյ՝ ծաղկափթիթ Թաղիկ աղագատէին, եւ փեսային ձեռոյ՝ օրհնեալ պարոն Գասպարին եւ

կենակցին նորայ եւ որդւոց նոցին, եւ միւս քերցդ, եւ Ովսաննայ խաթունին լուսահոգի հօրեղբօրդ, եւ այլ ամենայն ձեռայնոցն, զորս եւ յանձնեմք ի պահպանութիւն հզօր աջոյ Տեառն ամենակալի:

Դարձեալ ողջոյն եւ օրհնութիւն առաքիմք սրբանուէր քահանայից, բարեպաշտօն իշխանաց եւ այլ համայն մեր ազնեայ աստուածասէր օրհնեալ ժողովրդոց՝ մեծաց եւ փոքունց, որք լիցին յանձնեցեալք ի խնամս եւ ի բարեգթութիւնս Արարչին, կալ մնալ խաղաղութեամբ եւ բարօրութեամբ յարածամ: Ամէն:

10. (№ 152) 8բ-9ա Կոնդակ ի վերայ Հաղբատայ վանաց թեմիցն վասն առաջնորդութեան Սարգիս եպիսկոպոսին, որ ի Գանձասարու վտարանդեալ ի Գանձակ եւ անտի ի Վիրս, այժմ թղթով արքային Գեօրկիայ եւ մասէրիւ մերոյին ժողովրդեանն եկեալ էր կարգիլ առաջնորդ Հաղբատայ... Գրեցաւ ի ՌՄՆԸ (1799) թուոչս եւ յօգոստոսի ժԸ (18), ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

11. (№ 153) ա. 9բ-10ա Քրիստոսապապկեալ օգոստափառ մեծի կայսերն Պալ Պետրովիչի, մեծի թագունի եւ կայսերունի Մարիա Ֆէտօրովնին – Թուղթ առ նախապատիւ իշխանն թագաւորութեան Ռուստաց քնէպզ ենարալ պրզօրօր Պիտր Վասիլիչ Լօպուխինն շնորհակալութեան՝ վասն բարերարութեացն արարելոց առ անդանօր եղեալ մերազնեայսն... Գրեցաւ յամի Տեառն 1799 եւ ի հոկտեմբերի 15, ի Սուրբ Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան:

բ. 10ա Զեռագիրն այսպէս գրեցաւ: Ինքնին ձեռամբ իմով գրեմ զայսքանս աստանօր ի նշան ճշմարիտ սիրոյ իմոյ առ պատ[ո]ւականութեան ձեռ եւ ի հաւաստութուն բնաւից վերոգրեալ բանիցն:

12. (№ 154) 10ա-1ա Թուղթ առ ենարալ պօսօչիկ եւ կաալեր Սէրգէ Լագրիչ Լաշկարովն. վասն կայսերական հրովարտակին եւ պարգեացն, որք ձեռամբ սորա է պատրաստեցեալք – Յորմէ ժամանեցէ թուղթ... Գրեցաւ յամի Տեառն 1799 եւ ի հոկտեմբերի 15, ի սուրբ գահս Էջմիածին, որ ի դաշտս Արարատեան:

13. (№ 155) 11աբ Մահնէրական թուղթ ի միաբանից Սրբոյ Աթոռոյս եւ յերկրականացս առ կոստանդնուպօլսեցիս եւ առ այլս. վասն նոր կաթողիկոս խնդրելոյն – Ի լուսանկար եւ յաստուածահրաշ մեծի գահիս Հայաստանեայց Սրբոյ Էջմիածնի պաշտօնէից քահանայակարգ միաբան եղբարոց, այսինքն՝ յեպիսկոպոսաց, ի վարդապետաց եւ յարեղայից եւ յայլոց վանականաց ամենեցունց... Գրեցաւ յամի Տեառն 1800 եւ ի յունվարի ամսոյ 16, ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

14. (№ 156) 12աբ Թուղթ ի միաբանից Սրբոյ Աթոռոյս առ պատրիարզն Պօլսոյ Դանիէլ արհի եպիսկոպոսն. ծանուցումն վախճանման տէր Դուկասու սրբազան կաթողիկոսին եւ հրաւիրումն ինճեան գալ ի կաթողիկոսութիւն – Բարձրապատիւ բարեհամբաւ եւ մեծարգոյ հօրդ մերում տեառնդ Դանիէլի արհիպպոսակ եպիսկոպոսի եւ աստուածարեալ պատրիարգի տիեզերահռչակ մեծի մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ, մատուցանեմք ջերմեռանդ սիրով եւ կարօտիւ եւ որդիական խոնարհութեամբ զողջոյն... (կնիքն, եւ ապա թուական) Գրեցաւ յամի Տեառն 1800 եւ ի մերս թուոջ ՌՄԽԹ (1800), ի յունվարի 16, ի յերկնահանգէտ Աթոռս Սուրբ Էջմիածին:

15. (№ 157) 12բ-4ա Թուղթ ի միաբանից Սրբոյ Աթոռոյս առ Յովսէփ արեւեպիսկոպոսն կողմանն հիւսիսոյ, որ յետ վախճանման տեառն Դուկասու սրբազան կաթողիկոսին ի սինհոդոսին ընտրութեան արժանի համարեցաւ եւ սա կաթողիկոսութեան, սակայն վասն կասկածանաց ոմանց ոչ եղեւ համարձակութիւն գրել զանունն ի մանսէրին, որ առաւեցաւ ի Կոստանդնուպօլիս – Մեծահամբաւ բարձրապատիւ եւ գերարգոյ հօրդ մերում հոգեւորի՝ տեառնդ Յովսէփայ սրբազնասուրբ արքեպիսկոպոսի... Գրեցաւ յամի Տեառն 1800 եւ ի թուականութիւնս հայոց ՌՄԽԹ (1800), ի յունվարի ամսոյ 29, ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին:

16. (№ 158) 14ա-5ա Թուղթ մահաւերական առ Դանիէլ պատրիարզն Կոստանդնուպօլսոյ եւ համենայն իշխանսն եւ արուեստապատսն. ի պատասխանի բազմակնիք թղթոյն նոցա. վասն տեղապահութեան Մինաս արեւեպիսկոպոսին, յանձնառութիւն հնազանդ գոլ նմա յամենայնի եւ շնորհակալութիւն յաղագս խոստման նոցա ի բաց ցրել զանաստուած խորհուրդս՝ վնասակար անձն ընծայից ի գահաւորութիւն, եւ խնդիր դարձեալ վերստին, զի վերոյգրեալ պատրիարզն եկեացէ ի կաթողիկոս – Երիցս երջանիկ հոգեզգօն եւ իմաստապերճ հօր մերում գերացանկալոյ՝ տեառնդ Դանիէլի շնորհազարդ արքեպիսկոպոսի եւ սրբազան պատրիարգի տիեզերական մեծի մայրաքաղաքէ Կոստանդնուպօլի պատկառ խոնարհութեամբ զողջոյն սիրոյ եւ յարգանաց մատուցանեմք համբուրի Սրբոյ աշոյղ... Գրեցաւ յամի Փրկչին 1800 եւ յապրիլի 23, ի լուսանկար Աթոռս ամենայն

Հայոց ի Սուրբ Էջմիածին:

17. (№ 159) 15ա-6ա Թուղթ ընդունելութեան եւ հրաւիրանաց առ Յովսէփ տէրակոչ սրբազան կաթողիկոսն ի Հաշտարխան. ի պատասխանի թղթոյն – Գերերջանիկ վեհափառ հայրապետի ժամանելոյ ի բարձր աստիճան փոխանորդին սուրբ Լուսաւորչին ամենապատիւ հոգեւոր հօր մերում՝ տեառն Յովսէփայ սրբազան կաթողիկոսի հանուրց հայոց՝ խոնարհեալ որդիական սիրով եւ կարօտիւ մատուցանեմք զհամբոյրս շնորհաբաշխ Սրբոյ Աշոյղ՝ փափագելով զուարթարար օրհնութիւնդ... Գրեցաւ յամի Տեառն 1800 եւ ի հոկտեմբերի ԺԱ(11), ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին:

18. (№ 160) 16ա-17ա Թուղթ երկրորդ առ Յովսէփ կաթողիկոսն ի գործակալաց Սրբոյ Աթոռոյս. յիշումն յառաջ գրեալ թղթոյն հրաւիրանաց եւ ծանուցումն զմահ[ո]ւանէ Մինաս արեւեպիսկոպոսին, եւ խնդիր ստիպաւ անյապաղ գալ ի Սուրբ Աթոռս – Ի քաղցրահայեաց ակնարկութիւնէն Աստուծոյ ընտրել յառաջագոյն ճանաչմամբ եւ շնորհագարդեալ ամենազնիւ քաջընտիր հովուապետի եւ յարարթուն դիտապետի... Գրեցաւ յամի Կենարարին 1800 եւ ի հոկտեմբերի ԼԱ(31), ի Սուրբ Էջմիածին:

19. (№ 161) 17աբ Թուղթ չորրորդ ի միաբանից Սրբոյ Աթոռոյս առ Յովսէփ նորակոչ սրբազան կաթողիկոսն. յաղագս գալոյ հասանից աստ ի Մեծէն Պօլսոյ արհունական ֆերմանին եւ բէրաթին եւ համահաճութեան մահաւերին՝ ձեռամբ Դանիք արհի եպիսկոպոսին, եւ խնդիր առ շուտով գալ – Աստուածարեալ երջանկափառ մեծի հայրապետիդ Հայաստանեաց... Գրեցաւ յամի Տեառն 1800 եւ ի դեկտեմբերի (տեղը բաց), ի լուսանկար Աթոռս Սուրբ Էջմիածին:

20. (№ 162) 17բ-8բ Թուղթ դարձեալ առ Յովսէփ նորակոչ կաթողիկոսն. ի պատասխանի թղթոց նորա ընդ Կարապետ վարդապետին յղեցելոց՝ հանդերձ յիշատակութեամբ յառաջ յղեալ թղթոցն մերոց – եւ երանեալ մեծի հայրապետի հայոց... Գրեցաւ յամի Տեառն 1800 եւ ի յունվարի (տեղը բաց), ի լուսանկար գահս ամենայն Հայոց Սուրբ Էջմիածին:


Ծնթ. Հմմտ. Մայր ցուցակ, հ. Թ, ձեռ. 2922, էջ 1500-1511, Ձեռագիր Բ, Ա՝ գ, դ, ե, ժ, ժբ, ժգ, ժթ, իէ, լե, լե, լբ, Բ՝ ա, բ, գ, դ, գ, է, Ե, ժ:

ՃՆՇԱԴԻՐՈՇՄ՝ 1ա-18բ «ФАБРИКИ СЕРГѢЕ-ВА №4»:


**ՎԱԻԵՐԱԳԻՐ Ք
ՎԿԱՅԱԿԱՆ**

[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՍԻՆ] 1919 թ.

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ, 2բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵՏՈՒԹԻԻՆ՝ 35,9x23,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին, երկ-սիւն: ԳԻՐ՝ հայերէն (նմուշ 1ա), ռուսերէն (նմուշ 2ա): ՏՈՂ՝ 20-22:



նմուշ 1ա



նմուշ 2ա

ՎԻՃԱԿ՝ եզրերը մաշուած, մանր պատուած-ներով:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ բնագիր, տպագիր:

Ծնթ. վկայականը որպէս ծրար օգտագործուած է եղել վաւերագիր Ա-ի համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջմիածնի հոգեւոր ձեմարանի սան եզնիկի առաջադիմութեան վկայականն է՝ տրուած 1919 թ. յունիսին ձեմարանի Ուսումնական խորհրդի կողմից.

1. 1ա Վկայական – Ուսումնական խորհուրդ Հոգեւոր ձեմարանի Հայոց Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի վկայէ, զի Յեզնիկ ծնեալ ի 1907 ամի ի գիւղն Ղոխազգերման, Եցոյց ի հարցաքննութեան ի բոլոր առարկայից դպրանոցական բաժնի յամսեանն յունիսի 1919 ամի յառաջադիմութիւն յսպիսի... Տեսուչ ձեմարանի՝ (անստորագիր): Քարտուղար՝ (անստորագիր):

Ծնթ. Ղոխազգերման - այժմ Հնաբերդ:

2. 2ա Аттестатъ- Педагогическiй Советъ Эчмиадзинской Армянской Духовной Академии удостоверяетъ, что... Ректоръ Академии (անստորագիր). Секретарь (անստորագիր):

388


ՕՐԻՆԱԿՔ ԳՐՈՒԹԵԱՆՅ

թղթայ. 6, վաւ. 163-172


[ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՍԻՆ]

ԺԹ դար

ԹԵՐԹ՝ 18. չգրուած՝ 18բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՊՐԱԿ՝ Աx12+6: ՄԵՏՈՒԹԻԻՆ՝ 35,8x22,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նտարգիր (նմուշ 1ա, 12ա): ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 31-39:



նմուշ 2ա



նմուշ 12ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

Ծնթ. 1. Նախնական հաշուատման ժամանակ իւրաքանչեւ

չիւր օրինակին տրուած է եղել ստանձին գոյնհամար: Այդ համարները Բովանդակութիւնում արտայայտել ենք փակագծերի մէջ:

2. 12-17րդ թերթերը ներմուծուած են աւելի ուշ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարունակում է 1791-1803 թթ. Ղուկաս Կարնեցի կրթիկսի եւ այլ գրութիւններ.

1. (№ 163) 1աբ Դարձեալ թուղթ առ պատրիարքն. վասն Փառակեցի Սահակ պետիդ յիմարական վարուցն եւ արարմանցն ի Յարութիւն ամիրայի թղթոյն, որ է յերեան 1906, բայց սկիզբն այլեւ բանն ինչ եւս աւելիք – Պատրիարք աստուածաբան վարդապետիդ այսու թղթով ծանուցումն լիցի Փառակեցի խոռվասէր եւ աղմկայոյց Սահակ ոչ վարդապետին... Գրեցաւ ի ՌՄԽ (1791) թուոջս եւ ի սեպտեմբերի ԺԱ (11):

Ծնթ. Տէս Դիւան հայոց պատմութեան, Ղուկաս Կարնեցի, հ. Բ, 1786-1792, աշխատասիրութեամբ Վ. Գրիգորեանի, Երեւան, 2003, էջ 648, 735 (այսուհետեւ՝ Դիւան հայոց պատմութեան, հ. ..., էջ ...):

2. (№ 164) *2ա-3ա* Դարձեալ առ պատրիարքն. վասն քանի հարկատր բանից – *Յարգելի եղբորդ իմոյ պատրիարք աստուածաբան վարդապետիդ... Ի մայիսի ԺԱ (11):*

Մնթ. Տէս Դիան հայոց պատմութեան, հ. Բ, էջ 708:

3. (№ 165) *3բ-4ա* Թուղթ առ Հերակլ արքայն Վրաց. ի պատասխանի թղթոյն, որ վասն Հախպատու բանադրեալ Դաւիթ պետին – *Յորմէ քրիստոսական ողջոյն եւ հոգեւոր օրհնութիւն առատ մատուցի... Գրեցաւ յամի Փրկչին 1792, ի սեպտեմբերի (տեղը բաց), ի Սուրբ գահս էջմիածին:*

Մնթ. Տէս Դիան հայոց պատմութեան, հ. Բ, էջ 735-736:

4. (№ 166) *4աբ* Ղուկաս կաթողիկոսն յամի Փրկչին 1791 եւ ի թուականիս մերում ՌՄԽ (1791), ի դեկտեմբերն ելն գրէ թուղթ ի Սուրաթ առ Յօհաննէջան աղայն, ի միջի այլոց եւ զայս. «Եւ դարձեալ խնդրեալ էիր զվարժապետ մի հասուցանել ի վանս Սրբոյն Գայիանեայ»... յորոց եւ շրջակայքն եւ մեր ոչ սակաւ կասկածանս կրէաք:

Մնթ. Տէս Դիան հայոց պատմութեան, հ. Բ, էջ 675-676:

5. (№ 167) *4բ* Ղուկաս կաթողիկոսն ի թուականիս մերում ՌՄԽԱ (1792), ի սեպտեմբերի ելն գրէ թուղթ Յովակիմ վարդապետի, ի միջի այլոց եւ զայս. «Այն զի՛նչ ունիմք առնիլ, եթէ ոչ համբերաբար տանիլ եւ գոհանալ զԱստուծոյ»... եւ բարւոք է եղեալ այնպիսոց անհամբոյր կատաղւոյ մեկնիլն յայդմ սրբոյ տանէ:

6. (№ 168) *5աբ* Թուղթ ի Թիֆլիզ առ արքայորդին Գիօ[ր]կին միրզայ Վրաց. ի պատասխանի թղթոյն գրեցելոյ ընդ Դաւիթ վարդապետին՝ վասն ներելոյ նմա եւ արձակելոյն եւ այլն – *Յորմէ ժամանիսցէ ճշմարիտ սիրով եւ օրհնութեամբ... Գրեցաւ յամի Փրկչին 1792 եւ ի հոկտեմբերի (տեղը բաց), Սուրբ Աթոռս էջմիածին:*

7. (№ 169) *6աբ* Կոնդակ առ Լիմն կզղւոյ Սուրբ Գէորգայ վանայ միաբան կրօնաւորսն. ի պատասխանի բազմակնիք թղթոյն իւրեաց, ի հաստատութիւն վանահայրութեան Միքայէ վարդապետին, զոր ընտրեալ եւ յղեալ էին առ ի հաստատել – *Յորմէ ժամանիսցէ ողջոյն քրիստոսածիր... Գրեցաւ ի թուականիս ՌՄԽԱ (1792) եւ ի դեկտեմբերի 1 (30)... ի յերկնահանգէտ եւ ի շնորհածաւալ Աթոռս Սուրբ էջմիածին:*

Մնթ. Տէս Դիան հայոց պատմութեան, հ. Բ, էջ 744-745:

8. (№ 170) *7ա* Ղուկաս կաթողիկոսն ի թուականիս մերում ՌՄԽԲ (1793), ի յունուարի գրէ թուղթ առ Պօլտոյ պատրիարք Զաւարիա վարդապետն, ի միջի այլոց եւ զայս. «Յաղագս ստահակաբարոյ Սահակին Փառնակեցոյ»... որ յապառնի վտանգէն

եւս զերծ գտանեցաք:

9. *7բ-9ա* Թուղթ Դաւիթ ի Պօլիս առ նոր դեսպան Իվան Եակովիչն. ի շնորհատրութիւն զպատեանն ի համառօտ ծանուցումն անցից եւ ի յանձնարարութիւն վասն իրաց սրբազանին – *Յորմէ ժամանեցէ աստուածային օրհնութիւն եւ նախախնամական գթութիւն... Գրեցաւ յամի Տեառն 1803 եւ յապրիլի (տեղը բաց), ի լուսանկար Աթոռս Սուրբ էջմիածին (Դաւթի անունը սրբագրուած է մատիտով):*

10. (№ 171) *9ա-10բ* Թուղթ Դաւիթ ի Մեծն Պօլիս առ Հաջի-դատ կոչեցեալ մահտեսի Առաքել ամիրայն. ծանուցումն զայլ եւ այլ անցից, եւ խնդիր վասն օգնութեան Աթոռոյս – *Յորմէ ժամանեցէ թուղթ սիրանուէր ողջունի եւ հոգեւոր օրհնութեան... Գրեցաւ ի ՌՄԾԱ (1802) թուոջս եւ ի յունիսի (տեղը բաց), ի Սուրբ էջմիածին (Դաւթի անունը սրբագրուած է մատիտով):*

11. (№ 172) *10բ-1բ* Յետ վախճանման տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին թուղթ ի դիմաց միաբանից Սրբոյ Աթոռոյս առ Դաւիթ արքայորդին ի Թիֆլիզ. ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր վասն Յովսէփայ արքեպիսկոպոսին ընտրել զնա կաթողիկոս – *Ի լուսանկար մեծի գահիս Սրբոյ էջմիածնի պաշտօնէից՝ քահանայակարգ միաբան եղբարց... Գրեցաւ յամի Տեառն 1800 եւ ի յունվարի ԻԹ (29), ի Սուրբ Աթոռս էջմիածին:*

12. *12ա* Պայծառափայլ կնիագ, ողորմած տէր – *Քաջայայտ է պայծառափայլութեան ձերում... Ծառայ եւ աղօթարար խոնարհ Գրիգոր պատրիարք Կոստանդնուպօլտոյ, խոնարհ Ներսէս վարդապետ՝ բնիկ միաբան Սուրբ էջմիածնի: 1803, յունիսի 1:*

13. *12աբ* Սրբազան հարք – *Մխիթարեցէ՛ք զկարճամիտս... Կնիագ Յիցիանով: 1803, յունիսի 2:*

14. *12բ-3ա* Գերապատիւ տեառն. տեառն Մարտիրոս վարդապետի եւ առաջնորդի Զմիւռնոյ ողջոյն սիրոյ – *Գերապատիւ հայր, ընկալայ ձեռամբ սինիօր Ֆօնցման քօնսօլի քաղաքիզ զգիր գերապատուութեանդ գրեալն ի 25 նոյեմբերի... Գերապատուութեան քում նուաստ ծառայ՝ Թամարով դեսպան: Կոստանդնուպօլիս, ի 31 դեկտեմբերի 1801:*

15. *13ա-4ա* Պատուատր մէլիք Աբրահամու, համայն բնակչաց եւ պարագայից եկեղեցական դասուց եւ աշխարհայնոց Հայոց ազգին Երեւանու – *Եհաս առ իս համբաւ... Քնէազ Պալ Յիցիանով: 1803, յապրիլի 3:*

16. *14բ-5բ* Աստուածընտիր սրբազան վեհապետ ի տանս Արամեան եւ տեառն մերոյ զսուրբ գարշապարն համբուրիմ՝ զօրհնութիւն խնդրելով – *Դնէլն արկեղ գողացելոյ ի տան իւզպաշոյն պա-*

հետ կնքովք չորս արանց գիտես լաւապէս ի մեր յառաջագոյն գրութեանց... Մեծի սրբազանութեանդ յետին ծառայի (տեղը բաց) յաբեղայի: Յամի Տեառն 1803, յունվարի 11, ի Սուրբ գահս էջմիածին:

17. 15բ-6բ Ամենապատուական գերարգոյ սրբոյ հօր մերում եւ առատախնամ տեսնն սրբազնագործ աջոյն համբուրի մաղթեմ գօրհնութիւն: 1250 Հայոց թուի (1801), ի 31 օգոստոսի, ի Պօլիս – Զերինդ սրբութեան գրուածք առ իշխանսն Պօլսոյս հասեալ ի քաղաքս... եւ մեք մնամք ծառայ եւ որդի սրբութեան ձերոյ՝ Ներսէս նուաստ աբեղայ («Ամենապատուական գերարգոյ» բառերի վերեւում մատիտով սրբագրուած՝ եփրեմի՞ն):

18. 17աբ Տեառն մերում եւ բազմերախտ հօր սուրբ գարշապարացն համբուրի մաղթեմ գօրհնութիւնն: 1801, հոկտեմբերի 31, ի Պօլիս – Տէ՛ր իմ, այսօր՝ ի հոկտեմբերի 31, ժողով արարին վասն ընտրութեան պատրիարգի եւ ընտրեցին գերկուս՝ զԳրիգոր վարդապետ նուիրակն Թօխաթու եւ զԲարդուղիմէոս առաջնորդն նիկոմեդացւոց... Ներսէս եւ Մանուէլ աբեղայից: Կասկածելով ի խարդախութեանց նշանակեալ շար Գէորգին, այս գիր եւս

այլոց ձեռամբ յղեցաք, զի գէթ այս մին ժամանիսցէ:

19. 17բ (գրած-ընչած) Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Յովհաննէս եւ շնորհիւ նորին կաթողիկոս ամենայն Հայոց եւ ծայրագոյն պատրիարգ առաքելական եկեղեցւոյ Հայաստանեալ]յց եւ Սրբոյ Աթոռոյ կաթողիկէ էջմիածնի, բարձր արժանապատիւ Յովհաննու վարդապետի Շահխաթունեանց սիրելի որդւոյ իմում... Թէ՛ յեկեղեցիս մերազանց եւ Թէ՛ առ վարդապետս:

ՆՇՈՒՄ՝ 1. 1ա «Պատճէնք»: 2. 18ա «1. Սահակ եպիսկոպոսի մասին Ղուկաս կաթողիկոսը՝ Կ. Պօլսի պատրիարքին, հաւատափոխ Սահակ քահանայի մասին, որ շղթայուած բանդարկած է էջմիածնում... 9. էջմիածնի միաբանները (Գէօրգի՞) Դաւիթ արքայորդին՝ Արղուսեանի ընտրութեան առթիւ: 1800, 29/1»:

Ծնթ. 18ա-ի ցանկն ակեղացուէ է յետագայում մատիտով (ժԹ դար):

ՃՆՇԱԴՐՈՇՄ՝ 1. 1-2, 11, 18 «ФАБРИКИ СЕРГѢЕВА № 6»: 2. 3-10 «ФАБРИКИ СЕРГѢЕВА № 7»: 3. 12-17 «№ 6»:


389 ՆԱՄԱԿ

թղթպ. 6, վաւ. 173

ՌՄՂԹ-1790

ԳԻԻԶ՝ Գէորգ Տէր-Վահանեան: ՍՍԱՅՈՂ՝ Յակոբ վրդ.:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22,2x-12,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ 1ա): ՏՈՂ՝ 31:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1ա «Աստուածայեանոյ եւ գերեջանիկ տեսնոյ մերոյ Յակոբ շնորհազարդ վարդապետի սրբազնայգործ Սուրբ Աշոյի եւ երեւանեմ գարշապարիս ի գուն խոնարհեալ ծառայական դեմօք համբուր եւ պախոթին մատուցանեմ –

Ծանիցէ հայրդ մեր՝ ի սեպտեմբերի ԻԲ (22) գրեալ թուղթդ ձեռամբ փայտեկին ընկալայ... եւ լէ՛ր ողջ ի պարծանս մեր»:
Գէորգ Տէր-Վահանեանը 1790 թ. հոկտեմբերի 5ին Յակոբ վրդ-ին գրում է, որ ստացել են վեհափառի օրհնութեան գիրը եւ 2 եկեղեցիներում ընթերցել, ինչից շատ գոհ է մնացել ամբողջ ժողովուրդը: Ուրախութեամբ գրում է, որ սուրբ մասունքը բերելուց յետոյ այլեւս ոչ մէկ չի մահացել: Յայտնում է, որ տէր Յարութիւնից վերցրել է Պատմագիրը եւ Անձեցի հայր Մարգար վրդ-ի միջոցով ուղարկել, ինչպէս նաեւ 4 մատաղացուններից երկուսը՝ մի կով եւ մի երինջ: Իսկ մնացած երկուսն ու Վարդանի ձին կուղարկի, երբ կտան: Աջահամբոյր է փոխանցում հայր Օհան վրդ-ին՝ հայցելով վերջինիս ներողամտութիւնը զիր չգրելու համար: Նաեւ խնդրում է Արծափու տէր Նիկողոսի որդի Գրիգորին հաճութեամբ ընդունել:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1բ Գրեցաւ ի ՌՄՂԹ (1790), ի հոգտեմբ[ե]րի Ե (5), ի յետնեալ ծառային քոյ՝ Տէր-Վահանեան շնչին Գէորգէ ընկալ...:


390
ՀԱՇՈՒԵԹՈՒՂԹ

թղթայ. 6, վառ. 174ա-գ


ՌՄԽԴ-1795

ժԼ դար


ԹԵՐԹ՝ 3 (առանձին-առանձին). չգրուած՝ Բ երեսները: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «PGG», լուսապատկերով՝ թռչուն (Գ): ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 24x8,8 (Ա), 23,9x9,5 (Բ), 17,3x11 (Գ): ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոսրգիր (նմուշ՝ Ա՝ 1ա, Գ՝ 1ա, ծրար Աա): ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 21-42:



նմուշ Ա՝ 1ա



նմուշ Գ՝ 1ա



նմուշ Ծրար՝ Աա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ

Հանգուցեալ Գալուստ եպս-ին վերաբերող երեք առանձին հաշուեթղթեր են՝ դրուած մէկ ծրարի մէջ.

1. (№ 174ա) 1ա Այս է Սրբոյ Աթոռոյն առաջելի ինչն, գորս գնեցի, որ գրի աստանօր – 26 հատ տուրպիւնի, որոյ 6 հատն զատիֆայով է՝ ձեռամբ եկեղեցապետ մահտեսի Աստուածատուրին եղեւ... Աստէն մինչեւ ի կարի քիրայ տուաք սապատ բերող քիրաճուն՝ ձեռամբ մահտեսի Նիկ[ո]ղայոս ամիրային եւ գիտութեամբ Կարնոյ Մանուկ աղային:

2. (№ 174բ) 1ա Ներոյ գրեալս է Կարնոյ նուիրակ Օշականցի տեառն Գրիգոր արհոյ եպիսկոպոսին հաշին, որ գրի աստ – Կարմիր մատանին,

որ ուներ լալ քար... Վերոյ 7 ղալամիս գումարն եղեւ 106 դուռուշ 27 փարայ:

3. (№ 174գ) 1ա Ննդրեմ ի սրբոյ հօրէյ մերմէ զայս ինչ, եթէ կարելի իցէ՝ հոգ տանիլ վասն հարկատրութեան մերոյ, որք են այսոքիկ – ժ (10) հատ բողայ ղուլթի բոնօթու, որոց երեսն շուշայով եւ մէջն՝ ծաղիկ... 165 դուռուշ 20 [փարայ]. սոցա մաքսն տուաք, ձեռամբ Ասլան ամիրային, եւ յղեցաք:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ

(№ 174բ) 1ա Վերոյ երկու մատանիսն եղեալ ի փոքր քսակոշ միում եւ մեր փոքր անուանակիր կնքովն կնքեալ, գիտութեամբ մահտեսի Նիկ[ո]ղայոս ամիրային եւ ձեռամբ Կարնեցի Մանուկ աղային, այժմ՝ ի ՌՄԽԴ (1795) թուոյն մերոյ եւ ի դեկտեմբերի 19 տրուեցաւ սուր[ճ]անդակին եւ նովա յղեցաւ ի Կարին՝ առ եղբայրն նորին ցՄատթէոսն, որ նա տայցէ անդ Կարնոյ վէքիլ պարոն Հայրապետին մերոյ, եւ նա եւս տայցէ տեղոյն իւրեանց նուիրակ տեառն Գրիգոր վարդապետին:

Բայց Սիրմալու մեծ ճիգտանն յանձնեցաւ վերոյ գրեալ անձամբքն Յունէյն պայրախտարին՝ առ ի կարաւանաւ տանիլ ի Կարին եւ տալ անդ եւս Մատթէոս աղային եւ նա՝ վէքիլ պարոն Հայրապետին եւ ի ձեռն նորա՝ նուիրակ Գրիգոր վարդապետին մերոյ: Որում գրեցաք 106 դուռուշ դրամն տայցէ եւ յանձնեցէ պարոն Հայրապետ վէքիլին, որ նա եւս անտի ցՍուրբ Աթոռ առ սրբազանն հասուցէ, որպէս գրեցաք ի հաշուարանոջն մերում:

ԾՐԱՐ

Վերոյնշեալ երեք թղթերը դրուած են 13,7x10,9 չափի, կարմիր գմուտսով սոսնձած մի ծրարում, թուղթը՝ լուսագծերով եւ լուսագրով՝ «Թ՝ ՌՄԵԵ (1776)», նաեւ շրջանակ՝ ներսում «ԳՄ» մակագրութիւն:

Ծրարի դիմերեսին՝

1. Հանգուցեալ Գալուստ եպիսկոպոսի ղաւզի թուղթքն են:

2. Կարելի է, թէ պիտոյասցին վասն տեղեկութեան հաշուոյն նուիրակութեան Գալուստ արքեպիսկոպոսի՝ Պօլսոյ նուիրակի:


391
ՅՈՒՑԱԿ

թղթպ. 6, վառ. 175

ԲԱՔՈՒ

ՌՄԽԴ-1795

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ շրջանաձև ցանկապատ, ներսում միապետը՝ զինուորական հանդերձով, գաւազանը ձեռքին: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34x10,6: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նուագիր (նմուշ 1ա): ՏՈՂ՝ 53:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «95, յունիսի Յումն, Բաբու. ներքոյ գրեալ

Լմայ անապատի ժողովարար Նէրսէս վարդ[ա]յպետի թող արած ֆուռն[ա]յ եւ կրկին Հաշթարխանից աղարկած եւս մասն, որ փարի սիային է – 1 հաստ Իրբիթի փոքրիկ սանդուղ, որ միջին կայ 34 հաստ պարսից սիքայ երկու շահանոց... Այսքան առայս»: Կիմ անապատի ժողովարար Ներսէս վրդ-ի թողած իրերի ու յետագայում Աստրախանից ստացուածների ցուցակն է, որ [17]95 թ. յունիսի Յին գրուել է Բաբուում: Գրիչը տեղեկացնում է, որ Դուկասից վերցրած եւ Աստրախանից ստացուած իրերը փաթեթատրել ու Յարուսթին դի Թարխանչի միջոցով ուղարկել է Թիֆլիզ՝ նրա եղբօրը, որպէսզի վերջինս փոխանցի վրդ-ին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա ՏԵ՛ս Բովանդակութեան սկիզբը:

392
ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ


թղթպ. 6, վառ. 176

ԼԻՄ ԱՆԱՊԱՏ

ԺԼ դար

ՀԵՂԻՆԱԿ՝ Յակոբ վրդ.: ՄՍԱՅՈՂ՝ մհտ. եղիագար աղայ:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ 1բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 31,5x22,5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ տպագիր (նմուշ 1ա): ՏՈՂ՝ 43:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻԻՆ – Գլխագիր, թռչնագիր՝ 1ա: Գոյներ՝ սեւ, սպիտակ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. եզրերը վնասուած:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, տպագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «Ի սուրբ եւ փառատրեալ աստուածաբնակ

ու գերահոյակ... միական եւ միեղէն համագումար աղօթական եղբարց – եւ ի նոցին սպասաւոր եւ պաշտօնեայ եւ սուրբ անապատիս անարժան աւելածու եւ միաբան հասարակ եղբարցս իբրու հովիւ կոչեցեալ ի տէր Յակօբ անարժան վարդապետէ... Հայր մեր»: Կիմ անապատի վանահայր Յակոբ վրդ-ի օրհնութեան գիրն է մհտ. եղիագար աղային: Վանահայրը գրում է, որ նրանց մօտ է ուղարկում Դազար վրդ-ին եւ յոյս է յայտնում, որ ժողովուրդն առատաձեռն կգտնուի ու կօգնի ծանր դրութեան մէջ յայտնուած վանքին:

Ծնթ. Վաւերագրում անձնանունները ձեռնով աւելացուած են համապատասխան բաց թողնուած տեղերում:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1. 1ա (սեւ քանափով, ուրանկիւն) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԱՆԱՆԻԱՅ /1812: 2. 1ա (սեւ քանափով, բոլորածեւ) «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ /ՅԱԿՈՒՎԱՐԴԱՊԵՏ /ՌՄԻԲ (1773)»:

393
ՆԱՄԱԿ


քղթպ. 6, վա. 177

[ՄՈՍԿՈՒԱ.]

ԺԸ դար

ԳԻԻԶ՝ [Յովսէփ արքեպս. Արղուրեան]: ՍՏԱ-
ՅՈՂ՝ Գրիգոր վրդ.:

ԹԵՐԹ՝ 2: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսա-
պատկերով՝ ձի հեծած զինուորական՝ աջ ձեռքին
թուր, ձախին՝ վահան: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23,1x19:
ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նստրգիր (նմուշ 1ա):
ՏՈՂ՝ 26-31:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԿԱԿՈՒԹԻՆ

1ա-2բ «Սիրական որդի Գրիգոր վարդապետ
– Ի զանազան ամիսս գրեալ թուղթսն քոյ ընկա-
լեալ եմ... Կարդալ տացես եւ գիտացես եւ շանայ-
ցես հասուցանել իւրն հաւատարիմ մարդով եւ գիր
առնուլ ի նմանէ»: [Յովսէփ Արղուրեանը] Գրիգոր
վրդ-ին արախ խոր ցատով գրում է իր հոգեզաւակ
Փիլիպպոսի մահուան մասին, որը Սբ. Աստուա-
ծածին եկեղեցու արկ. ձեռնադրուելուց անմիջա-
պէս յետոյ միւսների նման հիւանդացել ու նոյն
սեպտեմբերի 20ին իր ձեռքերի մէջ մահացել է:
Յաւելում է, որ իր խնդրանքով դին սեպտեմբե-
րի 23ին Գրիգորիուցօլից տեղափոխել են [նոր]
Նախիջեան ու հուղարկատել Սբ. Խաչ եկեղեցու
բակում: Չնայած հաղափի շինարարութեան հետ
կապուած խնդիրների, ինքը գործերի բերումով
ստիպուած է եղել մեկնել Մանկա Պետերբուրգ:
Յայտնում է, որ Յովհաննէսին թոյլատրել է վերա-
դառնալ տուն, գործերը կարգատրել, ապա միա-
նալ իրեն Մոսկուայում: Դառնութեամբ գրում է,
որ թէպէտ տարին ձեռքբերումների տարի է, եւ
կայսրունիին էլ իրենից շատ գոհ է, սակայն որ-
դեգրի մահուան վիշտը չի թողնում լիարժէք ու-
րախանալ, մանաւանդ երբ իմացաւ, որ վերջինս
երեխայ պիտի ունենար: Աւելի ուշ յաւելում է, որ
արու զաւակ է ծնուել, որին անուանակոչել են
Փիլիպպոս: Յայտնում է, որ Յովհաննէսի հետ ու-


ղարկել է Գրիգորի եղբօրը, նրա միջոցով՝ նահան-
գապետին ուղղուած մի գրութիւն եւ խնդրում է յե-
տետողական լինել դրա կատարմանը: Գրում է, որ
«վասն մեր Յակօբին ԳԻ (3000) դէսեթին» հող է
առել Գրիգորիուցօլում, որի յատակագիծն էլ է ու-
ղարկում: Տեղեկացնում է, որ հիմնադրուած երեք
գիւղերում արդէն 80 տուն կայ՝ մօտ 300 բնակչով,
եւ այստեղ կառավարիչ է նշանակել Անդրիասին
եւ Յակօբին, իսկ Գրիգորիուցօլում էլ մինչ իր վե-
րադարձը Պողոս Թումանովին է նշանակել: Պրն
Ստեփանի պատմութեան մասին խորհուրդ է տա-
լիս Յովհաննէսից տեղեկանալ: Շնորհակալու-
թիւն է յայտնում իր գրութիւններն ընդունելու եւ
դրանց ընթացք տալու, պրն Մկրտումի գումարը
վերադարձնելու, Սիմոն Սերգէյիչին յանձնելու եւ
այնի համար: Տեղեկացնում է, որ պրն Մկրտու-
մին յանձնարարել է իր հետ մի ընկեր վերցնել,
մեկնել Մանկա Պետերբուրգ եւ ազգային հար-
ցերը վերջնականապէս լուծել, քանի որ ժամա-
նակը բարենպաստ է արեւմտամերձ իշխաններ
Պոպովն ու Պուպովը յուսադրում են, կայսերու-
հին բարեացակամ է տրամադրուած իր հանդէպ,
Յովհաննէս [Լազարեանն] էլ շատ յետետողական
է այս խնդրին: Պրն Մկրտումին, երէցփոխ Եսա-
յուն եւ Գրիգոր վրդ-ին յանձնարարում է առանց
սակարկելու «հանգստի մօտի այգին» գնել, իսկ
երթ «պարոն գուբէննաթն» շինանիւթ տրամադ-
րի, պատուիրում է առաջիկայ տարում Մեսրո-
պի տան տեղը «տակն ըշխօլայ եւ վերեւն տուն եւ
քուչայի վերայ գուբանք» շինել: Եթէ իշխանները
համաձայնեն, առաջարկում է գնել նաեւ շրջակայ
տները, որպէսզի տարածքը ընդարձակ լինի, այն-
տեղ տեղափոխել նաեւ ապարանն ու դպրոցը: Իր
ուրախութիւնն է արտայայտում Մարիայ Սերգէեւ-
նայի նշանադրութեան առթիւ, գրում, որ շատ սի-
րում է նրանց երկուսին էլ ու յաւելում, որ Մարիայ
Սերգէեւնային կարգել է Սբ. Խաչ վանքին նուփ-
րակ: Գրում է, որ Եաշում եղած ժամանակ Վրաց
մետրոպոլիտ Յօհանը 30 թումանի ստացական է
տուել, որ փոխանցեն եղբօրը Թիֆլիս: Ուղարկում
է այն ու յանձնարարում մի հաւատարիմ մարդու
միջոցով տեղ հասցնել: Տալիս է նաեւ այլ յանձ-
նարարականներ:

Ծնթ. Հմմտ. ԿՄտ №№ 268, 272, 276, 396:

394
ՆԱԽԱԳԻԾ ԳԱՇՆԱԳՐԻ

թղթյ. 6, վա. 178ա

Թերթ՝ 2. չգրուած՝ Բ սիւնակները: Նիւթ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 35,5x22: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկ-սիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ 1ա): ՏՈՂ՝ 28-33:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա-2բ «Կերպ դաշնադրութեան ի մէջ երկուց ազգաց՝ ռուսաց եւ հայոց — 1. Նախքան զամենայն հաստատել զսէր եւ զմիաբանութիւն ի մէջ երկուց ազգացս... որպէս յԱթոռոյ աստուածութեան ի հրեշ-

ԺԹ դար

տակաց առ մարդիկ»: 1790 թ. մայիսին Յովսէփ արքեպ. Արղութեանի հեղինակած 19 կէտից բաղկացած հայ-ռուսական համաձայնագրի նախագծի օրինակն է:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

1ա Օրինակեցի զայս, որ գրեալ էր ի վերայ թերթ թղթոյ միոյ եւ ի ճակատի այսպէս գրեալ՝ ձեռամբ Ներսիսի արքեպիսկոպոսի. «Առանձնագրութիւն Յովսէփ պետին եւ առաջնորդին, որ ի հիւսիսակողմն գրեալ ընդ 1790 մայիս ամսոյ գրեալ թղթովն»:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԵՏԱԳԱՅԻ

1ա (ԺԹ դ., շրագիր) Նախագիծ դաշնադրութեան ի մէջ ռուսաց եւ հայոց, որ ներկայացրեց իշխան Պոտեմկինին Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը: 2 օրինակ (գրուած է մատիտով):


395
ՆԱԽԱԳԻԾ ԳԱՇՆԱԳՐԻ

թղթյ. 6, վա. 178բ

ՏՓԵԻՍ

ՌՅԺԵ-1866

Թերթ՝ 2: Նիւթ՝ մոխրագոյն թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21,4x13: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ նոտագիր (նմուշ 1ա): ՏՈՂ՝ 20-25:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻՒՆ՝ օրինակ գրութեան, ձեռագիր:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1ա-2բ ՏԵ՛ս ա՛ստ Nօ 394:

Ծնթ. Կարծում եմք, որ այս եւ նախորդ օրինակների հիմքը հանդիսացել է միեւնոյն փաստաթուղթը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽՈՐԻՆԱԿԻ

1ա Օրինակեցի զայս, որ գրեալ էր ի վերայ թերթ թղթոյ միոյ եւ ի ճակատին այսպէս գրեալ՝ ձեռամբ Ներսիսի արքեպիսկոպոսի Աշտարակեցոյ այսպէս՝ «Առանձնագրութիւն Յովսէփ պետին եւ առաջնորդին, որ ի հիւսիսակողմն գրեալ ի 1790 մայիս ամսոյ գրեալ թղթովն»:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

2բ Օրինակեցի ի գրատանէ Շիրմաղազանէ՝: Ի 1 դեկտեմբերի 1866, Տփլիսիս: Ա. Պ. Միւն՛՛:

ՆՇՈՒՄ՝ 1ա «Թարգմանութիւն»:

396
ՆԱՄԱԿ


թղթ. 6, վա. 179

ԵԳՕՐՅԿ

ՌՄԽԱ.-1792

ԳԻԻԶ՝ Յովսէփ արքեպս. Արղուքեան: ՍՏԱՅՈՂ՝ [Գրիգոր վրդ.]:

ԹԵՐԹ՝ 2: ՆԻԻԹ՝ կապոյտ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր ռեատր զինանշան, ներսում՝ եղջերագաւար: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 23x19,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ 1ա): ՏՈՂ՝ 25-29:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. տեղ-տեղ գրադաշտը գունափոխուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

1ա-2բ (սկզբից թերի) «//զի քնեազ Կուրակինն մեզ ծանօթ գոլով՝ յուսով եմ, որ նա մեր ամենայն խնդրանացն կատարունն տացէ... Կայսրն ողորմած է, յոյժ չէր միամիտ»: Յովսէփ Արղուքեանը 1792 թ. յուլիսի 30ին [Եգորսկից Գրիգոր վրդ-ին] գրում է, որ տէր Աւետիքի հետ շտապ գայ ու միանայ իրեն Մոսկուայում, որպէսզի ծանօթանայ կայսերական շրջապատին: Ասում է, որ Բարսեղը մնացել է Թիֆլիզում «վասն պերէվօտիճկութեան»: Իր ուրախութիւնն է արտայայտում պրն Պօղոսին կաւալերի կոչման արժանացնելու համար: Գոհունակութեամբ արձանագրում է, որ գրաֆ Կուսովիչն իրեն ընդունել է մեծ պատուով ու շնորհակալութեամբ՝ իր կատարած աշխատանքների համար եւ խոստացել թգրին տեղեկացնել: Յայտնում է, որ Աբրահամ վրդ-ը շտապում է հողի յատակագիծը գծել տալ, այլապէս հողն օրինական չի համարուի: Տեղեկացնում է, որ «Բէրդէովին, գուբեռնաթին եւ Կազինցկուն» ինքը գրել է, որ Գրիգոր վրդ-ը «երկու դեֆուիթաթօք» Սանկտ Պետերբուրգ գալու ճանապարհին կհանդիպի իրենց, եւ խնդրել է, որ նրանք Գրիգորիուպօլի հետ կապուած հնարատր բոլոր հարցերին ընդատաշեն, ինչպէս նաեւ Ղրիմի պլանի հետ կապուած հարցերին լուծում տան:

Նշում է, որ իրեն անհանգստացնում է Տամգաչի կոչուած վայրում՝ Ղրիմից Կաֆայ տանող ճանապարհին թագաւորական զինուորների բնակեցումը, իրենց պատկանող հողերի՝ ուրիշների կողմից ազգրատումը եւ յաւելում է, որ այդ բոլոր հողերի չափագրումն ինքն արել է իր ծախսերով, եւ «երկրաչափն էր Սամբուցկի ոմն»: Առ այս [Գրիգոր վրդ-ին] խնդրում է 10 կէտից բաղկացած խնդրագիրը վերանայել ըստ իր հրամանի, ապա միայն ներկայացնել հաստատման: Թուարկում է, թէ որ հարցին ինչպիսի լուծում է պէտք ակնկալել: Յայտնում է, որ Բերդէովին գրել է նաեւ Ստեփան Դաւիթովի խնդրագրի հետ կապուած եւ տեղեկացրել, որ վերջինիս ինքն է բերել «սկլոր դիաշօր» եւ այդ աստիճանին բարձրացրել: Եւ ուրեմն որտեղից նրան այդքան գումար, որ քաղաք կառուցէր: Չայրանում է նաեւ «չիք Մանուկի» վրայ, ով մի քանի մարդկանց խորհրդով թգրին բողոք է գրել առ այն, որ ինքն արդէն 18 տարի է քաղաքի բարեկամամբ է զբաղում, սակայն ոչ մի փոխհատուցում չի ստացել: Յաւելում է, որ անհրաժեշտութեան դէպքում հարկատր էր իրեն դիմել, այլ ոչ կայսեր: Անդրադառնում է նաեւ «չիք Աբրահամովին», ով «մաղիստրաթին» եւ իրեն արհամարհելով՝ աղայ Մահմատ խանի նման «բռնացեալ է ի վերայ քաղաքին»: [Գրիգոր վրդ-ին] խնդրում է այս երկուսին աշալուրջ յետեւել եւ Նոր Նախիջեւանի երեւելիների կողմից Մանուկին քաղաքից վտարելու պահանջի նախորդ տարուայ ստորագրաթուղթը փոխանցել փոխարխայութիւն: Յաւելում է, որ Կարապետ վրդ-ին յանձնարարել է ամէն ինչ գրել, մնացեալն էլ թող Յակոբից տեղեկանայ: Իր օրհնութիւնն է յղում տեղի հոգեւորականներին ու իր սիրելի Փիլիկի որպիսութիւնը հարցնում: Կարծում է, որ մարտին Ստեփանի մասին գրածը կարիք չկար թաքցնել: Նաեւ յայտնում է, որ հազար տուն դարբանոցիներ են եկել, որոնք պէտք է տեղում բնակութիւն հաստատեն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1ա Յովսէփ արքեպիսկոպոս: 1792 յուլիսի 30, ի Յեգօրցկի: Ծնթ. Հմմտ. ա՛ստ №№ 268, 272, 276, 393:

397
ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ


թղթա. 6, վառ. 180

[ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ]

ՌՄԽԴ-1795

Հեղինակ՝ Կարապետ վրդ.:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 30,3x20,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրաման բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 36+4:



Նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ծալքը վերանորոգուած, գրադաշտը գունափոխուած:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Ի Աստուծոյ ծառայ տէր Կարապետ վարդապետէ եւ առաջնորդէ, որ եւ յաւելայնու եւ սպասատր Սրբոյ Կարապետին եւ Սրբոյ Հագաւափրկչին – [3]որմէ ժամանեացի գիր օրհնութեան

եւ նամակ պահպանութեան... Ձեզ եւ ձեր ննջեցելոցն մասն եւ բաժին եղիցի. ամէն»: Նոր Նախիջեւանի առաջնորդ Կարապետ վրդ-ի 1795 թ. գրած օրհնութեան գիրը նոր Նախիջեւանի եւ շրջակայ գիւղերի համայն հասարակութեանը, որոնք են՝ Շիմահմուտ, Եարունջ, Այլապատ, Խալիլուջ, Ջահկ, Ածոպ, Ըզնաբերթ, Խաչիկ, Արգայ: Վարդապետը յորդորում է Մայր Աթոռի հասանելիք ամենամեայ տասանորդն ու բաժինը անտրտունջ նուիրաբերել Սբ. Էջմիածնի միաբան Մարտիրոս վրդ-ին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

- 1. 1ա Գրեցաւ թիւն ՌՄԽԴ (1795)ին:
- 2. 1ա Տէ՛ս Բովանդակութեան սկզբում:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻԻՆ ՅԵՏԱԿԱՅԻ

1բ (շղագիր) Ստացանք 1904 թ. օգ(ոստոսի) 18 խոր գիւղէն (գրուած է մատիտով):

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (սեւ թանափով, փառանկիւն, անընթեռնելի):

398
ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ


թղթա. 6, վառ. 181

ԿԵՍԱՐԻԱ

ԺԸ դար

Հեղինակ՝ Աւետիք վրդ.: ՍՏԱՅՈՂ՝ մհա. Սարգիս աղայ:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով, լուսապատկերով՝ թագակիր բուսական շրջանակ՝ մէջը մարդադէմ մահիկ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 32,2x23,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին: ԳԻՐ՝ նոտրգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ 27:



Նմուշ 1ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻԻՆ – ճակատագարդ՝ 1ա, թոչնագիր՝ 1ա: Գոյնե՛ր՝ կարմիր, կապոյտ,

կանաչ, ոսկեգոյն:

ՎԻՃԱԿ՝ բաւարար:
ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

1ա «է: Ի մերանէ Մեծի սրբոյ Յօհաննու Կարապետի հրաշալի վանից – եւ սրօբէաճեմ գերամաքուր շիրմի մկրտչին Քրիստոսի եւ յանուն սրբոյ Աստուածածնին... եւ լերուք օրհնեալք յԱստուծոյ եւ ի Սրբոյ Կարապետէ եւ ի մէնջ. ամէն»: Կեսարիայի Սբ. Յոհաննու Կարապետ վանքի վանահայր Աւետիք վրդ-ի անունից գրուած եւ կնքուած օրհնութեան գիրն է մհա. Սարգիս աղային առ այն, որ վերջինս պրն Յակոբի միջոցով վանքին է նուիրաբերել «երէք զուրուշ մոմագին ընծայ»:

ՀԱՍՅԷ

1բ Մահտեսի Սարգիս աղային հասցէ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ 1ա (մոխրագոյն քանափով, ուրանկին) «*ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ԱԽԵՏԻՔ ՎԱՐԴԱՊԵՏ /1243 (1794)*»:


**399
ՄԱՏԵԱՆ**

թղթայ. 6, վաւ. 182

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ

ժԸ դար

ԹԵՐԹ՝ 12 (էջակալուած 1-6՝ հաշուի շառնելով չգրուած թերթերը). չգրուած՝ 7ա-12բ: ՊՐԱԿ՝ Աx12: **ՆԻԻԹ՝** թուղթ. լուսագծերով, լուսագրով՝ «*OLANDA*», լուսապատկերով՝ թագակիր ռուսուր զինանշան, ներսում՝ եղջերագաւաթ, վերեւում հնգաթեւ աստղ, ներքեւում «*GB /F*» մակագրութիւն: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34x23,4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ եռասիւն: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 1ա): ՏՈՂ՝ տարբեր, հիմնականում՝ 42-44:



նմուշ 1ա

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԻՍԿՈՒԹԻԻՆ՝ բնագիր, ձեռագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

